⁹Տե՛ս Հ. Ավետիսյան. Հայկական հարցը 1918 թվականին, Երևան, 1997, էջ 330–359:

¹⁰Տե՛ս Լ. Խուրշուդյան. Հայաստանի բաժանումը 1920 թվականին, Երևան, 2002:

¹¹Տե՛ս Հայաստանի ազգային ատլաս, պատ. խմբ. Բ. Հարությունյան, Հ. Բ., Երևան, 2008, էջ 110–116:

¹²Տե՛ս Հ. Հակոբյան. Տարագիր Հայության հայրենիք վերադառնալու պահանջի պատմական ու իրավական հիմքերը, Երևան, 2002:

¹³Տե՛ս Ա. Մելքոնյան. Հայոց պատմության դասերն ու պատգամները, Երևան, 2013, նույնի՝ Ցեղասպանություն և հայրենագրկում: Ճանաչումից՝ հատուցում (Հոդվածներ և հարցազրույցներ), Երևան, 2015:

¹⁴Տե՛ս Վ. Ղազախեցյան. Հայաստանը 1920–1940 թվ., Երևան, 2006, նույնի՝ Մոսկվայի ռուս-թուրքական կոնֆերանսը: 1921 թ. մարտի 16-ի պայմանագիրը.—Հայոց պատմություն, Հ. IV, գիրք I [Նորագույն ժամանակաշրջան (1918–1945 թվ.)], Երևան, 2010, էջ 324–339:

¹⁵Տե՛ս Հ. Մ. Ղազարյան. Մոսկվայի և Կարսի 1921 թ. պայմանագրերն ու նրանց ողբերգական դերը Հայ ժողովրդի ճակատագրում, Երևան, 2010:

¹⁶Տե՛ս Ա. Մ. Հակոբյան. Խորհրդային Հայաստանը Մոսկվայի և Կարսի պայմանագրերում, Երևան, 2010, նույնի՝ Ալեքսանդրապոլի, Մոսկվայի և Կարսի պայմանագրերի պատմաիրավական գնահատականը (1920–1921 թվ.).—ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 2007, № 2, էջ 17–30:

¹⁷Տե՛ս Գ. Հ. Խաչատրյան. Հայուսական հարաբերությունները 1920–1922 թվ., Երևան, 2007, նույնի՝ ՀՍԽՀ սահմանների հարցը 1921 թ. խորհրդագիրքական հարաբերությունների ոլորտում.—ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 2010, № 1–2, էջ 36–58: Գ. Խաչատրյան, Հ. Սուքիանյան, Գ. Բագալյան. Հայկական տարածքների բռնակցումը թուրքական և Խորհրդային Աղբբեջանին 1920–1930-ական թվականներին, Երևան, 2020:

¹⁸Տե՛ս Ա. Մարտուրյան. Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրներն ու պատմաիրավական հիմնավորումները, Երևան, 2014, էջ 121–137, նույնի՝ Մոսկվայի և Կարսի պայմանագրերի միջազգա-

Հայաստանյան պատմագրությունը հարստացրին օբյեկտիվ ու անաշառ դիրքերից գրված ուսումնասիրություններով, որոնք աչքի են ընկնում հայեցակարգային նոր մոտեցումներով:

Մոսկվայի պայմանագրի նկատմամբ իրավաքաղաքական հետաքրքրությունը կտրուկ աճեց նախ 2009 թվականին՝ կապված «Հայ-Թուրքական սահմանի բացման» նպատակով անսպասելիորեն սկսված և հաջող ավարտի իրական հեռանկարից զուրկ բանակցային գործընթացի հետ, այնուհետև՝ 2016 թ. սկզբին, երբ սիրիական ճգնաժամի հետևանքով ոռուս-թուրքական հարաբերությունների սրման պայմաններում Անկարայի նկատմամբ դիվանագիտական ճնշում գործադրելու նպատակով ոռուսական կառավարող շրջանակների կողմից ոչ պաշտոնական մակարդակով հնչեցվեց Մոսկվայի պայմանագրի վերանայման հարցը²¹: Ներկայումս մեր տարածաշրջանում առկա ռազմաքաղաքական իրադրության պայմաններում այդ խնդիրը որքանո՞վ է հրատապ Հայաստանի Հանրապետության համար: Հայկական պետությունն արդյո՞ք ունի բավարար հնարավորություններ՝ հասնելու Մոսկվայի պայմանագրի վերանայմանը՝ իրեն ձեռնոտ տարբերակով, և ո՞րն է լինելու դրա էությունը:

Ոուս-թուրքական գործակցության պատճառներն ու նախադրյալները

Դեռևս 1919–1920 թթ.¹⁹ Փարիզի հաշտության միջազգային վեհաժողովում օմանյան «ժառանգությունը» Ասիական Թուրքիան, միմյանց միջև բաժանելու, Հայաստանի ազատությունն ու անկախությունը ճանաչելու Մեծ Բրիտանիայի, ԱՄՆ-ի, Ֆրանսիայի և Իտալիայի վերքորոշումն առաջ բերեց Թուրքիայում իշխանության համար պայքարող քեմալականների բուռն դիմադրությունը: Հենց այդ պատճառով վեհաժողովի աշխատանքներից մեկուսացված Խորհրդային Ռուսաստանի բոլշևիկյան կառավարությունում քեմալականներին համարում էին հուսալի դաշնակից թե՛ ընդդեմ Արևմուտքի պետությունների և թե՛ համաշխարհային սոցիալիստական հեղափոխության

յին-իրավական գնահատականը.— «Վէմ» Համահայկական հանդես (Երևան), 2011, թիվ 2, էջ 129–139:

¹⁹ Տե՛ս Պ. Կազանջյան. Կ вопросу о датировке Московского советско-турецкого договора 1921 г.– «Вестник общественных наук» НАН РА, 1999, № 1, с. 183–187; Նույնի՝ Կ вопросу об оценке Московского русско-турецкого договора 1921 г.– Страны и народы Ближнего и Среднего Востока. XX. Ереван, 2001, с. 106–124; Նույնի՝ Русско-турецкие отношения 1920–1921 гг. и вопрос Армении в свете секретных документов московских архивов.– «Современное состояние и перспективы развития арменоведения». Сборник докладов международного симпозиума. Ереван, 2004, с. 201–227.

²⁰ Տե՛ս Ա. Պապյան. Հայրենատիրություն: Հայոց պահանջատիրության իրավական հիմունքները և հարակից հարցեր (Հողվածների ժողովածու), Երևան, 2012:

²¹ Տե՛ս <http://eadaily.com/ru/news/2016/02/08/v-gosdume-predlozhili-rastorgnut-moskovskiy-dogovor-o-druzhbe-s-turcley-ot-1921-goda>; <http://newsarmenia.am/news/politics/mid-rf-izuchit-vopros-rastorzheniya-dogovora-po-kotoromu-gora-ararat-peres-hla-k-turtsii/>

Համար մղվող պայքարում։ Այդ հեղափոխության՝ իրականում աշխարհի ժողովուրդների ազատագրական ու դասակարգային պայքարի օգտագործմամբ Խորհրդային Ռուսաստանի ռազմաքաղաքական գերիշխանությունն Արևելքի երկրներում հաստատելու ուղին անցնում էր Հայաստանով ճիշտ այնպես, ինչպես համաժուրքական պետության ստեղծման ծրագրում Հայաստանով էր անցնում Բաքուն Կ. Պոլսին միացնող ճանապարհը։ Խորհրդային Ռուսաստանի դիվանագիտական փաստաթղթերում, անտեսելով 1918–1920 թթ. հայոց անկախ պետականության փաստը, Հայաստանը դիտվում էր որպես ամբողջի՝ նախկին ռուսական կայսրության և ոչ թե պատմական Հայաստանի մի մասը։ Ինչ վերաբերում է Արևմտյան Հայաստանին, ապա հաշվի առնելով, որ իմակերիալիզմի գեմ պայքարում Արևելքի ժողովուրդներին կազմակերպողն ու ղեկավարողը Թուրքիան էր՝ խորհրդային կառավարությունը ձգտում էր նախեառաջ միջազգային դիվանագիտության շրջանառությունից հանել Հայկական Հարցը և դրանով իսկ ապահովագրել Թուրքիան 1920 թ. օգոստոսի 10-ի Սկրի հաշտության միջազգային պայմանագրով ու նոյեմբերի 22-ին ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնի իրավարար վճռով «ահագնացած Հայկական վտանգից»։ Փաստորեն, խորհրդային կառավարությունը, տարածքային զիջումներ անելով ի հաշիվ Հայկական Հողերի, ձգտում էր Թուրքիան կողմնորոշել դեպի Խորհրդային Ռուսաստան և այն Հենակետ դարձնել բոլշևիզմի գաղափարներն Արևելքում տարածելու, Ռուսաստանի քաղաքական գերիշխանությունն ապահովելու համար։ Կար մեկ այլ նպատակ ևս։ Ինչպես նկատում է Հր. Սիմոնյանը, «Թուրքիային և Ադրբեյջանին տրվող զիջումները Մոսկվան դիտում էր իբրև մուսուլմանական աշխարհին տրվող զիջումներ, որի հետ բոլշևիկյան Ռուսաստանը հույս ուներ ամուր և տեսական դաշինք ունենալ՝ ընդդեմ արևմտյան գաղութատեր իմակերիալիստական տերությունների»²²։ Գաղափարաքաղաքական այս հենքի վրա էլ 1920 թվականին Անկարայում Թուրքիայի Ազգային մեծ ժողովի (ԹԱՄԺ) և Մուսուֆա Քեմալի կառավարության կազմավորումից հետո սկզբնավորվեց ռուս-թուրքական գործակցությունը։ Թեև Խորհրդային Ռուսաստանի և Թուրքիայի արտաքին քաղաքական նպատակները էապես տարբերվում էին, սակայն Անտանտի երկրների՝ Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի ու Նրանց դաշնակից ԱՄՆ-ի մրցակիցը և Հակառակորդը լինելու հանգամանքը վճռորոշ նշանակություն ունեցավ Խորհրդաբեմական դաշինքի ձևավորման համար։

Հայաստանի խորհրդայնացումից հետո քաղաքական նոր պայմաններում թվում էր, թե հնարավոր էր նոր Հարաբերություններ հաստատել Թուրքիայի հետ և հասնել Աղեքսանդրապոլի հաշտության ստորացուցիչ պայմանագրի վերանայմանը։ պայմանագիր, որը, ոչ առանց Խորհրդային Ռուսաստանի աջակցության, քենալական Թուրքիան պարտադրել էր 1920 թ. թուրք-Հայկական պատերազմում պարտություն կրած Հայաստանի Հանրա-

²² Հր. Սիմոնյան. Նախիջևանի հարցը Մոսկվայի 1921 թ. մարտի 16-ի ռուս-թուրքական պայմանագրում. – «Նախիջևանի հիմնահարցը Մոսկվայի 1921 թ. մարտի 16-ի ռուս-թուրքական պայմանագրում» (գիտաժողովի նյութեր), Երևան, 2001, էջ 9:

պետությանը²³: Գ. Գալոյանի համոզմամբ, Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից հետո փոխվել էր ոչ միայն իրադրությունն Անդրկովկասում, այլև Հայկական Հարցի լուծման մեջ շահագրգիռ տարածաշրջանային պետությունների քաղաքականությունը: Հայաստանի խորհրդայնացումից հետո Ռուսաստանը սկսեց հանդես գալ դաշնակից Հայաստանի շահերի պաշտպանությամբ այնքանով, որքանով դա թույլ չէր տա վերջնականապես «Հրել» Հայաստանն Առաջին համաշխարհային պատերազմում հաղթանակած Գլխավոր դաշնակից տերությունների²⁴ «գիրկը»²⁵: Միևնույն ժամանակ բոլշևիկյան կառավարությունը ձգտում էր չկորցնել քեմալականների հետ ձեռք բերած բարեկամությունը: Ընդ որում, հայ ժողովրդի կենսական շահերը ստորագավում էին Արևելքում տոյիալիստական հեղափոխությունը տարածելու անփառունակ գաղափարին և այդ հեղափոխության թվայացած կենտրոն Թուրքիայի Հակահայկական նկրտումներին: Քեմալական Թուրքիան իր հերթին ձգտում էր չկորցնել 1920 թ. Հայաստանի դեմ զավթողական պատերազմի արդյունքում նվաճած տարածքները և «ատամներ էր ցույց տալիս» Խորհրդային Ռուսաստանին, երբ վերջինս փորձում էր պաշտպանել Հայաստանին²⁶: Այդ առիթով Ա. Զակորյանը մասնանշում է քեմալական կառավարության կողմից 1920 թ. Ալեքսանդրապոլի հաշտության բանակցություններին Ռուսաստանի ներկայացուցչի մասնակցության մերժման փաստը՝ դա բացատրելով Ռուսաստանի միջնորդությամբ բանակցություններում նախապատերազմյան՝ 1914 թ. ռուս-թուրքական սահմանը վերականգնելու նրա պահանջի անցանկալի հավանականությամբ²⁷:

Թուրքիայի արտաքին քաղաքականության հիմքում դրված էր 1920 թ. հունվարի 28-ին Կ. Պոլսում ընդունված Ազգային ուժառ, որում կենտրոնական իրենքենտիզմի, այսինքն՝ թուրքերով բնակեցված բոլոր տարածքները թուրքական պետությանը միավորելու և վերամիավորելու համաթուրքական

²³Տե՛ս Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ. (քաղաքական պատմություն), փաստաթղթերի և նյութերի ժողովածու, կազմ՝ Գ. Գալոյան, Վ. Ղազարեցյան, Վ. Մելքոնյան, Ս. Միքոյան, Ա. Վիրաբյան, Երևան, 2000, վավ. 358, էջ 391–394, Գеноциդ արման: ответственность Турции и обязательства мирового сообщества. Документы и комментарий. Сост., отв. ред., автор пред. и comment. Ю. Г. Барсегов, т. 2, ч. 1. М., 2003, док. № 967, с. 291–293; Է. Ա. Զոհրաբյան. 1920 թ. թուրք-հայկական պատերազմը և տերությունները, Երևան, 1997, էջ 318–321, Հ. Հակոբյան. նշվ. աշխ., էջ 294–295:

²⁴Գլխավոր դաշնակից տերություններն էին՝ Բրիտանական կայսրությունը, ԱՄՆ-ը, Ֆրանսիան, Իտալիան, Ճապոնիան, իսկ Դաշնակից տերությունները՝ Պրոտուգալիան, Բելգիան, Հունաստանը, Լեհաստանը, Ռումինիան, Սերբա-խորվաթա-վենենական պետությունը, Զեխոսովիակիան, Հայաստանը, Հեղազը (տե՛ս Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828–1923), փաստ. № 338, էջ 676):

²⁵Գ. Գալոյան. Հայաստանը և մեծ տերությունները 1917–1923 թթ., էջ 402–403:

²⁶Նույն տեղում, էջ 403:

²⁷Տե՛ս Ա. Մ. Հակոբյան. Խորհրդային Հայաստանը Մոսկվայի և Կարսի պայմանագրերում, էջ 42:

գաղափարն էր: Իսկ դա նշանակում էր, որ Արևմտյան Հայաստանի, Կարսի մարզի և այլ տարածքների հայաթափումը բռնի տեղահանության ու կոտորածների միջոցով և այնտեղ մահմեղական բնակչության մեծամասնություն տեղեծելը թուրքիան օգտագործելու էր ու, ի վերջո, օգտագործեց Հայոց պահանջատիրության դեմ: Փաստորեն, քեմալականների իշխանության գալուց հետո թուրքիայում փոխվել էր միայն համաթուրքականության նպատակին համեմու դիմանագիտությունը. Ռուսաստանի դեմ պատերազմելու տակտիկային փոխարինել էր նրա հետ «բարեկամության», «համաշխարհային իմպերիալիզմի դեմ պայքարի» տակտիկան: Այդ էր վկայում ԹԱՄԾ նախագահ Մ. Քեմալի նամակն ուղղված Ռուսաստանի Սոցիալիստական Ֆեդերատիվ Սովետական Հանրապետության (ՌՍՖՌՀ) ղեկավարությանը, որում նա պարտավորվում էր Խորհրդային Ռուսական պայքարել ընդդեմ իմպերիալիստական կառավարությունների՝ «հանուն բոլոր ճնշված ժողովուրդների ազատազրության», պարտավորվում էր ազգել Աղրբեջանի վրա, որպեսզի վերջինս ամրապնդեր քաղաքական կապերը Խորհրդային Ռուսաստանի հետ՝ հուսալով ստանալ նրա աջակցությունը Թուրքիային սպառնացող իմպերիալիստական թշնամիների դեմ պայքարելու համար²⁸: «Կովկասում իմպերիալիստների դեմ» պայքարելու մասին խոսելիս Քեմալ փաշան նկատի ուներ պայքարն ընդդեմ Մերի պայմանագրի, որի նախագիծը հրապարակվեց 1920 թ. ապրիլին: Քեմալական Թուրքիայի իրական նպատակների մասին էր վկայում նաև Մ. Քեմալի ելույթն Անկարայում 1920 թ. օգոստոսի 14-ին, որում նա նշում էր. «Բոլորին հայտնի է, որ մեր տեսակետը և սկզբունքները բոլշևիկյան չեն, և առ այսօր մենք բացարձակապես ու երբեմ չենք մտածել և որեէ ջանք էլ չենք գործազրում, որպեսզի մեր ժողովրդին հարկադրենք ընդունել բոլշևիկյան սկզբունքները: Մենք համոզված ենք, որ մեր ազգի կյանքի ու ապագայի երաշխիքները կապված են իր ազգային իդեալների և սկզբունքների հետ»²⁹: Այս իրողությանը քաջատեղյակ Խորհրդային Ռուսաստանը, այնուամենայնիվ, ճանաչում էր թուրքական Ազգային ուժար՝ ելնելով իր աշխարհաքաղաքական շահերից, ինչն էլ կամխորշեց ռուս-թուրքական բանակցությունների ելքն ի վնաս հայ ազգային շահերի:

Ռուս-թուրքական հակահայկական գործակցությանը նաև նպաստում էր Արևմտաթի պետությունների նոր դիրքորոշումը Հայկական հարցում: Հարցն այն է, որ խորհրդայնացումից հետո Հայաստանն անմիջապես զրկվեց Գյուսավոր դաշնակից տերությունների թեկուզ թույլ պաշտպանությունից և հայտնվեց նրանց Հակառակորդների ճամբարում: Այս փաստն այլև ավելորդ դարձրեց քեմալական Թուրքիայի և Մեծ Բրիտանիայի ու Ֆրանսիայի միջև մերձեցման ձգտումները թաքցնելը: Ռուս-թուրքական բանակցությունների սկզբից քեմալականները սկսեցին այդ պետությունների միջոցով ճնշում գործադրել Խորհրդային Ռուսաստանի վրա՝ իրենց ցանկալի

²⁸Տե՛ս Ա. Ա. Վագյան. Թուրքիայի՝ որպես մահմեղականների հովանավորի, դիրքորոշումը Մոսկվայի կոնֆերանսի ընթացքում.—«Նախիջևանի հիմնահարցը Մոսկվայի 1921 թ. մարտի 16-ի ռուս-թուրքական պայմանագրում» (գիտաժողովի նյութեր), էջ 47–48:

²⁹Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 16. III. 1991:

զիջումները ստանալու նպատակով: Թուրքական դիվանագիտությունն իր այս հաշվարկներում չմխալվեց: Ինչ վերաբերում է Մեծ Բրիտանիային և Ֆրանսիային, Գ. Գալոյանի համոզմամբ, նրանց դիվանագիտության ռազմավարական նպատակը հանգում էր ռուս-թուրքական հարաբերությունների սրմանը՝ ընդհուպ զինված առնակատում: Եվրոպական ազգեցիկ պետությունները մըցում էին միմյանց հետ, թե ով առաջինը կհրաժարվեր Սևրի պայմանագրից, որպեսզի առավել նպաստավոր պայմաններով ամրապնդեր իր դիրքերը թուրքիայում³⁰:

1921 թ. ռուս-թուրքական երկրորդ կոնֆերանսը

Այս պայմաններում դեռևս 1920 թ. ապրիլին սկսված ռուս-թուրքական բանակցությունները 1921 թ. փետրվարին թևակողինեցին երկրորդ պարտական փուլ, որի նպատակն էր՝ կարգավորել ռուս-թուրքական հարաբերությունները, մասնավորապես՝ Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո առաջացած սահմանային հարցերը³¹: Ռուսաստանը ձգտում էր թուրքիան վերջնականորեն կտրել Անտանտի երկրներից՝ բավարարելով նրա ներկայացրած բոլոր պահանջները հայկական տարածքների վերաբերյալ: Իսկ թուրքական կառավարությունը երկակի խաղ էր խաղում՝ խուսանավելով Ռուսաստանի և Անտանտի պետությունների միջև ու ստիպելով խորհրդային կառավարությանը գնալ նորանոր զիջումների: Մասնավորապես, Անկարայի կառավարությունը կարևորում էր հատկապես Հայաստանի որպես պետության ոչնչացման խնդրում Ռուսաստանից օգնություն ստանալը: Ակնկալվում էր, որ վերջինիս կողմից Ալեքսանդրապոլի պայմանագրի ճանաչումը կարող էր լինել առաջին և կարևոր քայլն այդ գերինդրի լուծման ուղղությամբ:

Նախապես կոնֆերանսին հրավիրված էին Խորհրդային Հայաստանի և Խորհրդային Աղբբեջանի պատվիրակությունները: Հայաստանի պատվիրակության կազմում էին՝ արտգործողեղում Ալեքսանդր Բեկադյանը (նախագահ) և Մոսկվայում Հայաստանի ներկայացուցիչ Սահակ Տեր-Գաբրիելյանը: Նրանք պատրաստել էին «Հայաստանը մինչև վերջին հայ-թուրքական պատերազմի սկիզբը» վերնագրով փաստաթուղթը, որում հայկական կողմն ակնկալում էր Հայաստանի սահմանների որոշում, ըստ 1920 թ. թուրք-Հայկական պատերազմի նախօրյակի դրության, այսինքն՝ օրակարգ բերվում էր Կարսի մարզը, Ալեքսանդրապոլը և Սուրմալուի գավառը Հայաստանին վերադարձնելու հարցը:

Թուրքական պատվիրակությունն Անկարա-Մոսկվա ճանապարհն ընդմիջեց Բաքվում, որտեղ զրոյցներ ունեցավ Աղբբեջանի ղեկավարների

³⁰Գ. Գալոյան. Հայաստանը և մեծ տերությունները 1917–1923 թթ., էջ 402–403:

³¹1920 թ. ապրիլից 1921 թ. մարտն ընկած ժամանակահատվածում քեմալական թուրքիական և Խորհրդային Ռուսաստանի միջև տեղի է ունեցել միջկառավարական երկու կոնֆերանս՝ առաջինը՝ 1920 թ. հունիսի 14-ից օգոստոսի 24-ը, որում քննարկվել է երկու պետությունների միջև հարաբերությունները կարգավորող պայմանագիր կնքելու հարցը, իսկ երկրորդը՝ 1921 թ. փետրվարի 26-ից մարտի 16-ը:

Հետո: Նրանց հակահայկական ծրագրերի մասին էին վկայում Խորհրդային Ադրբեջանի հեղկոմի նախագահ Նարիման Նարիմանովի կողմից 1921 թ. փեսորվարին ՌՍՖՍՀ ժողովրդական կոմիսարների խորհրդի նախագահ Վադիմիր Լենինին հասցեագրված երկու նամակները: Դրանց հեղինակը նրբորեն հասկացնում էր, որ եթե Մոսկվան Հայկական հարցի պատճառով իրենից վաճեր թուրքերին, ապա վերջիններս կարող էին Ռուսաստանի դեմ ոտքի հաճել մահմեղական աշխարհը կամ հակախորհրդային ապատամբություն բարձրացնել ու նետվել Մեծ Բրիտանիայի գիրքը: Ադրբեջանը պահելու համար, նշում էր Ն. Նարիմանովը, Անկարայի հետ պետք էր ամուր դաշինք կնքել այսպես, որ Հայկական հարցը բանակցություններում դեր չիսաղար³²:

Հակահայկական կեցվածք էր որդեգրել նաև Ռուսաստանի ազգությունների գործերի ժողովում Խոսիֆ Ստալինը, ով երկրորդ գեմքն էր Ռուսաստանում՝ Վլ. Լենինից հետո՝ որպես պետական քաղաքականությունը մշակող և կենացգործող ղեկավար պաշտոնյա: Կոնֆերանսի նախօրեին նա Վլ. Լենինին նախազգուշացնում էր ՌՍՖՍՀ արտգործժողովը Գիչերինի գիրքությունը մասնաւոր մասն վերաբերյալ, որպեսզի վերջինս Հայկական հարցը չբարձրացներ, ինչպես արել էր 1920 թվականին. «Ընկեր Լենին, — գրում էր Ի. Ստալինը, — ես միայն երեկ իմացա, որ Գիչերինը իր ժամանակին իրոք թուրքերին է ուղարկել Վանը, Մուշը և Բիթլիսը, թուրքերի խոշոր գերակշռությամբ թուրքական այդ նահանգները Հայաստանի օգտին դատարկելու տիսմար և սաղբիչ պահանջը:

Հայկական իմպերիալիստական այդ պահանջը չի կարող մեր պահանջը լինել: Անհրաժեշտ է Գիչերինին արգելել ազգայնականորեն տրամադրված հայերի թելադրանքով հուշագրեր ուղարկել թուրքերին»³³: Դրանից մի քանի օր անց, դարձյալ մինչև կոնֆերանսի բացումը, Ի. Ստալինն ընդունեց թուրք պատվիրակներին և Հայաստանի տարածքների խնդիրն օրակարգ մտցնելու մասին նրանց հարցին պատասխանեց. «Հայաստանի հարցը դուք ինքներդ լուծել եք: Եթե դեռ չուծված ինչ-որ բան մնացել է, ապա դա ևս դուք ինքներդ լուծեք»³⁴: Փաստորեն, Խորհրդային Ռուսաստանը բանակցությունները թուրքիայի հետ վարում էր երկու «աստառով»՝ պաշտոնական և անդրկուլիսային: Խորհրդային պետության արտաքին քաղաքականության պաշտոնական՝ «ազնիվ», իսկ իրականում ձևական ձգտումներն արտահայտում էր Գ. Գիչերինը: Նա հմուտ պետական գործիչ էր, ձգտում էր ընդառաջել հայերին, բայց ստիպված էր իր քայլերը համապատասխանեցնել «վերելից» տրված հրահանգներին: Բանակցություններում որոշիչ դեր էին խաղում անդրկուլիսային հանդիպումներն ու գաղտնի գրադրությունը, որոնք անցկացնում և վարում էին Վլ. Լենինը, Ի. Ստալինը, ՌՍՖՍՀ լիազոր ներկայացուցիչներ Բորիս Լեգրանը (Հայաստան) և Բուղու Մդիկանին (Թուրքիա)³⁵: Այդ հանգամանքով և բանակցությունների ընթացքի

³²Տե՛ս Հր. Սիմոնյան. Նախիջևանի հարցը Մոսկվայի 1921 թ. մարտի 16-ի ռուս-թուրքական պայմանագրում, էջ 9, նաև «Հայաստանի Հանրապետություն», 16. III. 1991:

³³«Հայաստանի Հանրապետություն», 16. III. 1991:

³⁴Նույն տեղում:

³⁵Տե՛ս Վ. Ղազախյան. Հայաստանը 1920–1940 թթ., էջ 95:

նկատմամբ ի. Ստալինի անմիջական վերահսկողությամբ է բացատրվում Գ. Զիչերինի նահանջը՝ Հայկական հարցում ունեցած նախկին տեսակետից։ Նշենք, որ թուրքերի պահանջով վերջինիս տեղակալ հայազգի Լևոն Կարախանը, ով մասնակցել էր նշյալ անդրկուլիսային հանդիպումներին, չընդունվեց Ռուսաստանի պատվիրակության կազմում։ Կոնֆերանսի նախօրեին թուրքիայի և Ռուսաստանի պատվիրակությունները հայտարարեցին, որ նպատակահարմար չեն գտնում արդեն Մոսկվա ժամանած հայ ներկայացուցիչների մասնակցությունը կոնֆերանսի աշխատանքներին։ Դրանով Ռուսաստանն ու Թուրքիան ուսնահարեցին հայկական պետության իրավունքները, զրկեցին նրան իր կամքն արտահայտելու հնարավորությունից։ Հայկական պատվիրակության չմասնակցելը հիմնավորելու նպատակով կոնֆերանսի աշխատանքներին մասնակցություն չունեցավ նաև Ադրբեյջանի պատվիրակությունը։ Սակայն այդ հանգամանքը որևէ կերպ չէր վտանգում Ադրբեյջանի շահերը, քանի որ մոսկվյան կոնֆերանսում նրա շահերը պաշտպանելու էր թուրքական պատվիրակությունը։ Հստէության, բոլոր խնդիրները վճռված էին նախապես, և կոնֆերանսը միայն պիտի վավերացներ հայկական տարածքների բռնագավթումը Թուրքիայի կողմից ու ամրագրել Հայաստանի առկա սահմանները։

Ահա այսպիսի իրադրության պայմաններում թուրք-ադրբեյջանա-հայուսական միացյալ կոնֆերանսի փոխարեն 1921 թ. փետրվարի 26-ին Մոսկվայում բացվեց ռուս-թուրքական կոնֆերանսը։ Հարց է առաջանում. ինչո՞ւ Հայաստանին հնարավորություն չտրվեց մասնակցելու դրան։

Դեռևս 1921 թ. փետրվարի 18-ին Հայ Յեղափոխական Դաշնակցություն (ՀՅԴ) գլխավորությամբ Հայաստանում բռնկված հակախորհրդային ապատամբությունը և ՀՀ վերջին վարչապետ Ս. Վրացյանի նախաձեռնությամբ Հայրենիքի գրկության կոմիտեի (ՀՓԿ) ստեղծումը հայտնի էին դարձել Մոսկվայում։ Ավելին, մարտի 12-ին Ս. Վրացյանը Գ. Զիչերինին հեռագրեց Ալ. Բեկզադյանին լիազորություններից զրկելու մասին։ «Մարտի 12» ամսաթիվն ինքնուստինքյան վկայում է, որ Ս. Վրացյանի հեռագրերը չէր կարող օգտագործվել երկու շաբաթ առաջ սկսված բանակցություններից Հայաստանի ներկայացուցիչներին դուրս թողնելու համար։ Ինչ վերաբերում է ՀՓԿ-ին, ապա պետք է նկատել, որ նա իշխանություն էր Խորհրդային Հայաստանի մի մասում, նրա կողքին շարունակում էր գոյություն ունենալ ու գործել Խորհրդային իշխանությունը՝ ի դեմս Սարգս Կայանի և Գևորգ Աթարբեկյանի ղեկավարած Հայաստանյան ռազմահեղափոխական երկու կոմիտեների։ Այսպես, որ ցանկության դեպքում խորհրդային իշխանությունը կամ ՀՓԿ-ն կարող էին մասնակից դարձվել բանակցություններին։ Փաստորեն, Հայաստանում ստեղծված վիճակը ոչ թե պատճառ, այլ առիթ էր՝ նրան զրկելու իրեն վերաբերող հարցերի քննարկումից։ Հայաստանի բացակայությամբ՝ ի վնաս նրա, լուծվեցին հայկական տարածքների պատկանելության հարցերը։ Տեղի ունեցածը միջազգային իրավունքի պատմության մեջ աննախաղեղ փաստ էր. անկախ պետություն համարվող Հայաստանը դուրս մղվեց բանակցություններից՝ Թուրքիային ձեռնտու որոշումներ կայացնելու համար։ Չնայած միամտություն կլիներ կարծել, թե

Հայաստանի մասնակցությունը կարող էր ազգել դրանց ընթացքի վրա: Մանավանդ, որ սկզբունքային որոշումներն ընդունվել էին ոչ թե բանակցությունների միջոցով, այլ մինչ այդ՝ ՌԿ(Բ)Կ կենտրոնի ու նրա Քաղբյուրոյի կողմից:

Կոնֆերանսի ընթացքում Ռուսաստանի դիվանագիտության ջանքերն ուղղված էին Մեծ Բրիտանիայի հետ Թուրքիայի մերձեցումը կանխելուն. նույն օրերին Լոնդոնում ընթանում էին թուրք-անդիվական բանակցություններ, որոնց առիթով էլ Ռուսաստանի ազգությունների գործերի ժողկոմատի «Հայոց ազգային պաշտոնաթերթում տպագրվեց ՌՍՅԱՀ ազգությունների ժողկոմատի քարոզչության և Արևելքի ժողովուրդների գործողության խորհրդի անդամ Անաստոլի Ալեքսեյի «Հայաստանը և Թուրքիան առաջիկա կոնֆերանսում» վերնագրով հոդվածը: Այն Հայաստանի սահմանային հարցերում Խորհրդային Ռուսաստանի իրական դիրքորոշման արտացոլումն էր: Ա. Ալեքսեյն, որին ՌԿ(Բ)Կ կենտրոնի Կովկասյան բյուրոյի նախագահ Գրիգորի (Սերգո) Օրջոնիկիձեն անվանել է «Թուրքական իմպերիալիզմի դատապաշտպան»³⁶, գրում է. «Անհրաժեշտ է, որ խորհրդաժողովի մասնակից պետությունները միմյանց կատարեն այնպիսի գիջումներ, որոնք թույլ կտան վերացնելու փոխադարձ դժգոհանքի և անվաստահովանան արմատները... Այս բոլոր նկատառումները հիմնականում վերաբերում են Հայաստանին, քանի որ ոչ Ռուսաստանը, ոչ էլ Աղբբեջանը Թուրքիայի հետ վիճելի ոչ մի հարց չունեն: Խորհրդաժողովի գլխավոր հարցը հայկականն է, որիշ խոսքով՝ թուրքիայի և Հայաստանի միջև բոլոր թյուրիմացությունների հարթումը և բարեկամական հարաբերությունների հաստատումը... Հայաստանը անկասկած պիտի հարկադրվի ղեկավարվել ազգային մեծագույն գոհաբերությունների վերաբերյալ լենինյան սկզբունքով: Նա պիտի հարկադրվի հրաժարվել ոչ միայն Մեծն Հայաստանի վերաբերյալ դաշնակցականների իմպերիալիստական ծրագրերից, այլև, հնարավոր է, նույնիսկ մշտապես հայկական անվանված հողատարածքների միավորման ավելի համեստ ցանկությունից... Եվ եթե նույնիսկ Բիթլիսից ու Վանից գաղթականները մերօրյա Հայաստանում աննկարագրելի զրկանքներ են կրում, եթե նույնիսկ թուրքիայում մնացած հայերն այժմ շարունակում են հետապնդվել ու ճնշումների ենթարկվել կառավարության կողմից, Հայաստանին համենայն դեպս մինչև մի որոշ ժամանակ ուղիղ բան չի մնում անել, քան հաշտվել դրա հետ ու համաշխարհային հեղափոխության շահերին զոհաբերել և՝ իր երեսնի հողատարածքները, և՝ իր ժողովրդի այնտեղ մնացած հատվածները: Հայաստանը պիտի հարկադրվի հրաժարվել ոչ միայն հողատարածքներից, որոնք արդեն իսկ մտել էին անկախ Հայաստանի կազմի մեջ: Կարսի և Արդահանի նահանգներն այսուհետև պետք չէ կովախնձոր լինեն Հայաստանի և Թուրքիայի միջև ...»³⁷:

³⁶ «Հայաստանի Հանրապետություն», 16. III. 1991:

³⁷ «Հայոց ազգային պատմություն» (Մ.), 04. III. 1921.

1921 թ. մարտի 16-ի Մոսկվայի պայմանագիրը

Մոսկվայի ռուս-թուրքական բանակցություններն ավարտվեցին 1921 թ. մարտի 16-ին: Այդ օրն էլ Ռուսաստանի և Թուրքիայի միջև կնքվեց «Բարեկամության և եղբայրության մասին» պայմանագիրը: Նշենք, որ Հայաստանի ազգային արխիվում, փաստաթղթերի ժողովածուներում և պատմագիտական աշխատություններում շրջանառության մեջ է եղել պայմանագրի ռուսերեն տարբերակը^{38:}

Մոսկվայի պայմանագիրը բաղկացած է ներածական բաժնից՝ պրեամբուլայից, 16 հոդվածից և մեկ հավելվածից՝ 1 (A), 1 (B), 1 (C) մասերով:

Պայմանագրի պրեամբուլայում հայտարարվում էր, որ ՌՍՖՍՀ և ԹԱՄՓԿառությունները, «բաժնեկով ազգերի եղբայրության և ժողովուրդների ինքնորոշման իրավունքի սկզբունքները, նշելով իրենց միջև գոյուժյուն ունեցող համերաշխությունը իմաներիակամի դեմ մղվող պայքարում, ինչպես նաև այն իրողությունը, որ երկու ժողովուրդներից մեկի համար ստեղծված ամեն տեսակ դժվարություն վատթարացնում է մյուսի դրությունը և ամբողջովին խանդապաված միմյանց միջև մշտական սրտագին փոխարաբերությունների ու երկու կողմերի փոխադարձ շահերի վրա հիմնված անխղելի անկեղծ բարեկամություն հաստատելու ցանկությամբ, որոշեցին կնքել բարեկամության և եղբայրության պայմանագիր»^{39:}

Հստ Մոսկվայի պայմանագրի 1-ին հոդվածի, Պայմանավորվող կողմերը համաձայնում էին չճանաչել իրենցից յուրաքանչյուրին ուժով պարտադրված միջազգային-իրավական որևէ ակտ: Հստ այդմ, ՌՍՖՍՀ կառավարությունը համաձայնում էր չճանաչել Թուրքիային վերաբերող և պայմանագրի կնքման պահին նրա կառավարության կողմից չճանաչված միջազգային ակտերը: Միևնույն ժամանակ Ռուսաստանը ճանաչում էր Թուրքիայի իրավունքները թուրքաբնակ այն բոլոր տարածքներում, որոնք «մտցված են 1920 (1336) թվականի հունվարի 28-ի թուրքական Ազգային ուխտի մեջ»^{40:}

³⁸ Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 113, ց. 3, գ. 56, թ. 32–40, Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքինքաղաքականության փաստաթղթերում (1828–1923), էջ 499–507, Յավալի պայմանագրեր, կազմ. Տ. Ղ. Սահակյան, Երևան, 2007, էջ 377–383, Документы внешней политики СССР, т. III (1 июля 1920 г.– 18 марта 1921 г.). М., 1959, док. № 342, с. 597–604. Ա. Հակոբյանի գնահատմամբ, Ռ. Ղազանչյանի կողմից գիտական շրջանառության մեջ դրված նախկինում համրությանն անհայտ, գաղտնազերծված զգալի թվով արխիվային փաստաթղթերը վկայում են (Պ. Կազанджян. Կ вопросу о датировке Московского советско-турецкого договора 1921 г. с. 183–187), որ Մոսկվայի պայմանագիրը ստորագրվել է ոչ թե մարտի 16-ին՝ Լնություն անդառ-ռուսական առևտրասնտեսական համաձայնագրի կնքման օրը, այլ՝ որոշակի նկատառումներով, երկու օր ուշ՝ մարտի 18-ին, բայց պայմանագրի վրա հետին թվով պաշտոնապես նշվել է մարտի 16-ը: Ա. Հակոբյանն այդ մասին հանդամանալից պարզաբանում է ներկայացրել իր աշխատության մեջ (Ա. Մ. Հակոբյան. Խորհրդային Հայաստանը Մոսկվայի և Կարսի պայմանագրերում, էջ 174–178):

³⁹ Տե՛ս Դокументы внешней политики СССР, т. III, док. № 342, с. 597.

⁴⁰ Նույն տեղում, էջ 597–598:

Հ. Հակոբյանի և Վ. Ղազախեցյանի գնահատմամբ, ընդունելով այդ հոդվածը, Խորհրդային Ռուսաստանը հրաժարվում էր 1917 թ. դեկտեմբերի 29-ին իր իսկ ընդունած «Թուրքահայաստանի մասին» հրովարտակից և Արևմտյան Հայաստանի վեց վիլայեթները ճանաչում էր որպես թուրքական տարածքներ⁴¹: Նա նաև հրաժարվում էր ճանաչել 1920 թ. օգոստոսի 10-ի Սևրի պայմանագիրը, քանի որ այն չէր ճանաչում Թուրքիայի կառավարությունը: Այդպիսով խորհրդային իշխանությունը տարագիր հայերի առջև փակում էր Հայրենիք վերադառնալու ուղիները՝ «չքանում էր ոչ միայն Արևմտյան Հայաստանը, այլև՝ Կարսը, Արդահանը, Սուլրմալուն, այսինքն՝ Արևելյան Հայաստանի թուրքերի զավթած մասերը, որոնք ճանաչվում էին իբրև Թուրքիայի սեփականությունը»⁴²: Նշենք, որ միևնույն ժամանակ Խորհրդային Ռուսաստանը ճանաչում էր Թուրքիայի զավթողական շահերից բխող Ալեքսանդրապոլի պայմանագիրը: Հ. Հակոբյանը նշում է՝ «վերադարձի իրավունքի փոխարեն 1921 թ. Մոսկվայի պայմանագիրը 12-րդ հոդվածով լրացնում էր հայերի բռնագաղթը, շեշտելով, որ «... մինչև 1918 թվականը Ռուսաստանի կազմի մեջ մտնող այն տերիտորիաների բոլոր բնակչիները, որպիսիք սույն Պայմանագրի հիման վրա Ռուսաստանի Մոցիւլիստական Ֆենէրատիվ Սովետական կառավարությունն այսօր ընդունում է որպես Թուրքիայի սուվերենության տակ գտնվող տերիտորիաներ, ունեն իրենց ունեցվածքը կամ դրա արժեքն իրենց հետ վերցնելով Թուրքիայից ազատ հեռանալու իրավունք»⁴³: Այլ կերպ ասած՝ քեմալականների բռնագաղթած տարածքներում մնացած հատուկենտ հայերին առաջարկվում էր հեռանալ Հայրենիքից: Ոչ մի խոսք մինչ այդ բռնագաղթի ենթարկված հայերի ճակատագրի ու նրանց թողած ունեցվածքի մասին: Մինչդեռ հաջորդ՝ 13-րդ հոդվածը հավաստում էր, որ «Ռուսաստանը պարտավորում էր իր հաշվին հայրենիք վերադառնել մինչև Թուրքիայի հյուսիսարևելյան սահմանը Ռուսաստանում գտնվող բոլոր զինվորական և քաղաքացիական գերի թուրքերին»: Իսկ Թուրքիան նույն պարտավորությունը ստանձնում էր «միայն գեղուս թուրքիայում գտնվող ոռու զինվորական և քաղաքացիական գերիների վերաբերմամբ»⁴⁴:

Հաստ պայմանագրի նույն հոդվածի, Թուրքիայի հյուսիսարևելյան սահմանը որոշելիս կողմերը համաձայնեցին, որպեսզի այն անցնի Արփաչայ (Ախուրյան) և Արաքս գետերի հունով սահմանի թուրքական կողմում թողնելով Կարսի մարզը ու Սուլրմալուի գավառը⁴⁵: Փաստորեն, առանց հայ ժողովրդի կամքը հարցնելու Թուրքիային զիջվում էին նաև այն տարածքնե-

⁴¹Տե՛ս Հ. Հակոբյան. նշվ. աշխ., էջ 280, Վ. Ղազախեցյան. Հայաստանը 1920–1940 թթ., էջ 96:

⁴²Հ. Հակոբյան. նշվ. աշխ., էջ 295:

⁴³Նույն տեղում, էջ 299:

⁴⁴Նույն տեղում, էջ 299–300:

⁴⁵Տե՛ս Документы внешней политики СССР, т. III, док. № 342, с. 598. Մոսկվայի պայմանագրում թուրք-Հայկական սահմանագծի մանրամասն նկարագրությունը և դրան վերաբերող հարցերի պարզաբանումները տե՛ս պայմանագրի 1 (A) և 1 (B) հավելվածներում ու Պայմանավորվող պետությունների կողմից ստորագրված առդիր քարտեզի վրա:

ըլ, որոնց մի մասը 1920 թ. թուրք-հայկական պատերազմում նա զավթել էր Հայաստանի Հանրապետությունից, իսկ մյուս մասին էլ տիրացել ուժի սպառնալիքի միջոցով։ Նշենք, որ Սուրմալուի գավառը Մեծ և Փոքր Արարատ լեռներով անցավ Թուրքիային Բաթումը Վրաստանին հանձնելու փոխարեն։ Թուրքական պատվիրակության պնդմամբ՝ «թյուրիմացություններից խուսափելու» նպատակով պայմանագրի ձրդ հողվածում ավելացվեց հետևյալ պարբերությունը. «Համարվում է որոշված, որ սույն հողվածում հիշատակված թուրքական տարածքի անվան տակ հասկացվում է այն տարածքը, որը գտնվում է Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կառավարության գինվորական և քաղաքացիական անմիջական կառավարման ներքո»⁴⁶։ Պատմաբաններ Կարեն Խաչատրյանը, Համո Սուրբիասյանը և Գեղամ Բադայանը նշում են, որ 1918–1920 թթ. ՀՀ ստորագրած ոչ մի միջպետական պայմանագրով չէին որոշվել նրա ամբողջական տարածքներն ու սահմանագիծը։ Եվ միայն 1920 թ. նոյեմբերի 22-ին, երբ Հայաստանը պարտություն էր կրում թուրք-հայկական պատերազմում, Վ. Վիլսոնն իր իրավարար վճռով որոշեց հայ-թուրքական սահմանագիծը⁴⁷։ Պատահական չէ, որ Խորհրդային Հայաստանը ժառանգեց անորոշ պետական սահմաններ և տարածքային-սահմանային չլուծված խնդիրներ սահմանակից քեմալական թուրքիայի, Աղքաբաշանական ՍՍՀ-ի ու Վրացական Հանրապետության հետ։ Նկատի ունենալով խորհրդայնացման ազդեցությունը Հայաստանի փաստացի իրավական կարգավիճակի վրա՝ հեղինակները նշում են, որ դրա հետևանքով քեմալական թուրքիայի բռնազավթած հայկական տարածքների պատկանելության հարցը ստորադասվեց խորհրդա-թուրքական տարածքային սահմանագատման խնդրին՝ չնայած Հայաստանի խորհրդային իշխանությունների վճռականությանը հայկական տարածքների ու սահմանների խնդիրը հօգուտ հանրապետության լուծելու հարցում։ Հանգամանորեն ուսումնասիրելով Հայաստանի ու Թուրքիայի միջև սահմանագծման հնարավոր չորս տարբերակների վերաբերյալ փաստաթղթերը՝ Կ. Խաչատրյանը, Հ. Սուրբիասյանը և Գ. Բաղալյանը նշում են, որ հայկական կողմի հավակնություններն Ախուրյան և Արաքս գետերից արևմուտք, մասսամբ՝ հարավ ընկած շուրջ 60 հազ. կմ² տարածքների, այդ թվում՝ Կարսի մարզի, Արդահանի օկրուգի որոշ հատվածների, Բայազետի նկատմամբ հիմնավորված էին ոչ միայն դրանց պատկանելությամբ ՀՀ-ին թուրք-հայկական պատերազմի նախօրյակի դրությամբ, այլև՝ Հայաստանի բնականոն զարգացման շահով և Հայաստանի խորհրդայնացման վերաբերյալ 1920 թ. դեկտեմբերի 2-ին Երևանում ստորագրված համաձայնագրի 3-րդ կետի պայմաններով⁴⁸։ Մինչդեռ ուսումնական «դավադիր գործարքով» Հայաստանից խլվեց և Թուրքիային ու Աղքաբաշանին նվիրաբերվեց հայկական տարածքների մի զգալի մասը, խախտվեցին ու ուսնահարվեցին միջազգային իրավունքի

⁴⁶ Նույն տեղում, էջ 600։

⁴⁷ *Տե՛ս Arbitral Award of the President of the United States of America Woodrow Wilson. Full Report of the Committee upon the Arbitration of the Boundary Between Turkey and Armenia, Washington, November 22nd, 1920. Prepared with an introduction by A. Papian. Yerevan, 2011, pp. 1–243.*

⁴⁸ *Տե՛ս Կ. Խաչատրյան, Հ. Սուրբիասյան, Գ. Բաղալյան. նշվ. աշխ., էջ 44–45։*

Հիմնարար սկզբունքները: Ո՞չ էլ Թուրքիան առանց Հայաստանի մասնակցության որևէ իրավասություն չունեին տնօրինելու հայկական տարածքների և հայության ճակատագիրը: Հետևաբար, Հայաստանի տարածքային հարցերին վերաբերող պայմանագրի կետերը չեն կարող առաջացնել իրավական որևէ պարտավորություն Հայաստանի համար: Հարկ է նկատել, որ կ. Խաչատրյանը դեռևս 2007 թ. լույս ընծայած մենագրության մեջ Մոսկվայի պայմանագրով դրա 1-ին հոդվածի առնչությամբ իրավացիորեն գնահատել է որպես Հայաստանի բաժանում բոլշևիկյան Ռուսաստանի ու քեմալական Թուրքիայի միջև⁴⁹:

Հստ Մոսկվայի պայմանագրի Յ-րդ հոդվածի, Նախիջևանի մարզը հավելվածի 1 (C) մասում նշված սահմաններում դառնում էր ինքնավար տարածք Աղրբեջանի խնամակալության ներքո պայմանով, որ այդ խնամակալությունը չգիջիվ մի երրորդ պետության: Հասկանալի է, որ որպես «երրորդ պետություն» նկատի էր առնվում Հայաստանը: Թուրքիայի, Աղրբեջանի և Հայաստանի պատվիրականերից կազմված միացյալ հանձնաժողովը կատարելու էր շտկում Նախիջևանի ու Հայաստանի սահմանի մի հատվածում⁵⁰: Այս առնչությամբ Գ. Գալոյանը նկատում է՝ չնայած Խորհրդային կառավարության արտաքին քաղաքականության փաստաթղթերում միանշանակ ընդունվում էր Նախիջևանի՝ Հայաստանի անքակտելի մասը լինելու փաստը, սակայն 1921 թ. Փետրվարյան ապստամբության ժամանակ Հայաստանում իշխանության եկած ՀՓԿն, ունենալով հակախորհրդային կողմնորոշում, մտադիր էր հայ-թուրքական հարաբերություններում հիմք ընդունել Ակեքանդրապոլի պայմանագիրը: Դա նշանակում էր քեմալական Թուրքիային և Խորհրդային Աղրբեջանին հնարավորություն տալ անմիջականորեն կապվելու միմյանց հետ Նախիջևանի միջոցով, ինչն անցանկալի էր Խորհրդային Ռուսաստանի համար: 1921 թ. Մոսկվայի ոռուս-թուրքական պայմանագրի Յ-րդ հոդվածով Խորհրդային Ռուսաստանը հասավ Նախիջևանի նկատմամբ Թուրքիայի պետական իշխանության դադարեցմանը և վերականգնման անհնարինությանը միջազգային-իրավական տեսանկյունից⁵¹: Ավելին, չուտով Մոսկվայի կառավարության ջանքերով Կարսի պայմանագրից էլ հանգեց Նախիջևանը «մի երրորդ պետության» գիջելու պայմանը: «Այդ գիջումների դիմաց, — ինչպես հետագայում հայտարարեց Կարսի կոնֆերանսում թուրքական պատվիրակության անդամ Մուխմար բեյը, — մենք Կարսի կոնֆերանսում ստացանք մեզ համար կարևոր իրավունքներ՝ Նախիջևանի շրջանից հարավ ընկնող տարածքները Թուրքիային միացնելու և եղբայրական Աղրբեջանի հետ անմիջական կապ ունենալու համար»⁵²: Նշենք, որ թե՛ ոռուս-թուրքական բանակցություններում և թե՛ 1921 թ. մարտի 16-ի Մոսկվայի ու Հոկտեմբերի 13-ի Կարսի պայմանագրերում որևէ ձևակերպում չի արվել Աղրբեջանի կազմում Նախիջևանին ինքնավար հանրապետության կարգավիճակ տալու մասին: Երկրամասը

⁴⁹ Տե՛ս կ. Հ. Խաչատրյան. Հայ-ռուսական հարաբերությունները 1920–1922 թթ., էջ 142:

⁵⁰ Տե՛ս Դокументы внешней политики СССР, т. III, док. № 342, с. 598–599.

⁵¹ Տե՛ս Գ. Գալոյան. Հայաստանը և մեծ տերությունները 1917–1923 թթ., էջ 447:

⁵² Կ. Խաչատրյան, Հ. Սուրբիանյան, Գ. Բագալյան. նշվ. աշխ., էջ 50:

լինելու էր ինքնավար տարածք՝ Աղբբեջանի խնամակալության ներքո։ Սակայն դա երկար չտևեց. 1924 թ. փետրվարի 9-ին կուսակցական որոշումների հիման վրա Նախիջևանին տրվեց ինքնավար Հանրապետության կարգավիճակ՝ Աղբբեջանի կազմում⁵³։ Ի դեպք, Մոսկվայի ու Կարսի պայմանագրերի դրույթների բազմաթիվ խախտումներից սա ամենամեծն է, և այն գործել է Աղբբեջանում։

Պայմանագրի Ծրությունում կողմերն ընդունում էին, որ նախկինում երկու երկրների միջև կնքված բոլոր պայմանագրերը չեն համապատասխանում փոխադարձ շահերին։ Ուստի նրանք համաձայն էին այդ պայմանագրերը համարել վերացված և ուժը կորցրած։ Ավելին, ՌՍՖՌ կառավարությունը Թուրքիային համարում էր ազատ՝ նախկինում ցարական կառավարության հետ կնքած միջազգային ակտերի վրա հիմնված դրամական կամ որևէ այլ պարտավորությունից⁵⁴։ Այդպիսով՝ Թուրքիան նաև ազատում էր ապագայում Արևմտյան Հայաստանում բարենորոգումների վերաբերյալ 1914 թ. հունվարի 26-ի ուսւմնությունում համաձայնագրի վերականգնման հնարավոր սպառնալիքից։

Պայմանագրվող կողմերը պարտավորվում էին արգելել իրենց սահմաններում և Անդրկովկասի խորհրդային հանրապետություններում այնպիսի կազմակերպությունների ու խմբերի գոյությունը, որոնք կհավաքնեին կառավարության դեր ստանձնել կամ պայքար մղել մյուս երկրի դեմ։ Սա նշանակում էր ՀՅԴ և ազգային այլ կուսակցությունների գոյության ու գործունեության արգելում Հայաստանում, քանի որ վերջիններս կարող էին հանդես գալ հայ ժողովրդի ազգային շահերի պաշտպանությամբ, հողային պահանջատիրությամբ։

1921 թ. մարտի 16-ի պայմանագրիը կնքելիս թուրքական կառավարությունը կասկածում էր, որ Հայաստանի խորհրդային հանրապետությունը ուսւմնությամբ կարող էր չընդունել իրեն վերաբերող հոգվածները։ Դա կանխելու հեռահար նպատակով թուրքական կողմը պնդեց՝ պայմանագրում ավելացնել հոգված, ըստ որի Ռուսաստանի կառավարությունը պարտավորվում էր դիմել քայլերի, որպեսզի Անդրկովկասի հանրապետությունները թուրքիայի հետ կնքվելիք պայմանագրում անպատճառ ճանաչեին ուսւմնության առաջարկը պայմանագրում այն ձևակերպվեց որպես 15-րդ հոգված⁵⁵։ Այդպիսով Մոսկվայի պայմանագրով Հայաստանին պարտադրված պայմանների կատարման համար Թուրքիային տրվեց միջազգային-իրավական որոշակի երաշխիք։ Եվ սա այն դեպքում, եթե միջազգային իրավունքում «գոյություն ունի այլ պետությունների միջև կնքված իրավաչափ պայմանագրերը հարգելու և ճանաչելու պարտականություն, եթե դրանք չեն խախտում երրորդ պետությունների իրավունքները։ Եթե պետությունը համարում է, որ այլ պետությունների միջև կնքված պայմա-

⁵³ Տե՛ս Դокументы внешней политики СССР, т. III, док. № 342, с. 598–599, т. IV (19 марта – 31 декабря 1921). М., 1960, док. № 264, с. 423.

⁵⁴ Տե՛ս Դокументы внешней политики СССР, т. III, док. № 342, с. 599.

⁵⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 602:

նագիրն առնչվում է իր շահերին, ապա կարող է հայտարարել այն չճանաւ չելու մասին և այդ դեպքում իրավասու կյինի գործել այնպես, ինչպես պայմանագրի չգոյության ժամանակ»⁵⁶:

Ահա այս բովանդակությամբ մարտի 16-ի պայմանագրը ստորագրել են՝ ՈՍՖԱՀ կառավարության անունից՝ արտգործողկոմ Գեորգի Զիչերինը և Համառուսաստանյան Կենտգործկոմի անդամ Զելալ-Էլ-Դին Կորկմասովը, իսկ ԹԱՄԺ կառավարության անունից՝ տնտեսության նախարար Յուսուֆ Քեմալը, լուսավորության նախարար Ռիզա Նուր բեյն ու Ռուսաստանում Թուրքիայի լիազոր դեսպան Ալի Ֆուլադ փաշան (Զերեսոյ):

Մուկվայի պայմանագրի գործողությունը սահմանափակված չէ ժամկետով: Պայմանագրի պաշտոնական տեքստը կազմվել է ֆրանսերեն: Դրա ուստի մարդկանությունը պայմանագրի կնքումից կարճ ժամանակ անց հրատարակվել է առանձին գրքույկով:

Խորհրդային կառավարությունը վավերացրել է պայմանագրը 1921 թ. հուլիսի 20-ին, իսկ Թուրքիայի Ազգային ժողովը՝ հուլիսի 31-ին: Անդրկովկասի հանրապետությունների կառավարությունները մեծ ուշացումով՝ մարտի 31-ին Մուկվայից ստացան ոռուս-թուրքական պայմանագրով որոշված սահմանների քարտեզը: Պայմանագրի վավերացումից հետո Ռուսաստանը և Թուրքիան առանց պարզելու, թե Մուկվայի պայմանագրի ո՞ր դրույթներն են անընդունելի Անդրկովկասի հանրապետությունների համար, սեպտեմբերի 22-ին Կարսում փոխանակեցին վավերագրերը: Այնուհետև Մուկվայի պայմանագրի՝ Հայաստանին ու մյուս հանրապետություններին վերաբերող հողվածները չնշին տարբերությամբ իրենց վերահաստատումը գտան 1921 թ. Հոկտեմբերի 13-ին Թուրքիայի և անդրկովկասյան խորհրդային հանրապետությունների միջև ստորագրված կարսի պայմանագրում:

Մուկվայի պայմանագրի պատմագիտական գնահատականը

Հ. Ավետիսյանի գնահատմամբ, 1921 թ. մարտի 16-ի Մուկվայի պայմանագրը ոչ թե բոլշևիկյան Ռուսաստանի, այլ քեմալական Թուրքիայի դիվանագիտական խոշոր հաղթանակն էր: Առաջին համաշխարհային պատերազմից դուրս գալով որպես պարտված պետություն՝ Թուրքիան կարողացավ հասնել Սերի պայմանագրի սառեցմանը, տեր դարձավ նախկինում իրեն չպատկանած, բայց Հայաստանի Հանրապետությունից զավթած ընդարձակ տարածքներին՝ Կարսի մարզին, Սուլմալուի և Օլմիի գավառներին, Արդահանին, Սարդումիշին, Կաղզվանին, Իգդիրին ու այլ տարածքների: Դրանով Հայաստանին հասցվեց տնտեսական մեծ վնաս. Երկիրը գրկվեց վառելիքի, հացահատիկի, աղի և օգտակար այլ հանածոներով հարուստ կենսական շրջաններից, սպառնալիքի տակ դրվեց Հայաստանի անվտանգությունը, անհնար դարձավ հայ գաղթականության տունդարձի կազմակերպումը: Արևմտյան Հայաստանի գոյության մասին խոսք անդամ չեղավ: Ռուսաստանը հեշտորեն Թուրքիային հանձնեց հայկական տարածքները,

⁵⁶Տե՛ս Վ. Քոչարյան. Միջազգային իրավունք: Ռւսումնական ձեռնարկ, Երևան, 2002, էջ 114:

որոնք նվաճելու համար *XIX* դարում երկարատև ու դժվարին պայքար էր մղել Պարսկաստանի և Թուրքիայի դեմ՝ կրելով մարդկային ու նյութական հսկայական կորուստներ։ Հայաստանի ու հայ ժողովրդի դեմ թուրքական ռազմական ուժի և դիվանագիտության փոխկապակցված ու տրամաբանական հաջորդականությամբ իրականացրած քայլերի շարքում Մոսկվայի պայմանագիրը հերթականն էր՝ նպատակառողջված Հայկական հարցի վերջնական լուծմանը թուրքական տարրերակով, այսինքն՝ Հայաստանը, իբրև համաժուրանական պահանճերն արգելակող պատվար, վերացնելուն։ Պայմանագրով թուրքերը նաև հասան Աղբյաջանի օգտին Նախիջևանի, Շարուր-Դարձագյաղի և Արցախի բռնակցմանը՝ Հայաստանին դրկելով Զանգեզուրի հետ լիարժեք կապի հնարավորությունից։ Զուգահեռաբար շրջանառության մեջ դրվեց արևմտահայկական տարածքների ու Կարսի մարզի՝ ի սկզբանե թուրանական լինելու թեղը։ Թուրանական ցեղեր համարվեցին մինչև անգամ Հայկական լեռնաշխարհի բնիկները՝ բիանացիները, դրանով իսկ բացառվեց Հայերի իրավունքն այդ տարածքի նկատմամբ, «վերացվեց» Հայկական հարցը։ Ակիզը դրվեց բռնազավթված և դրանց կից Հայկական տարածքների վրա թուրքերի «իրավունքները» տարածելու քաղաքականությանն ու քարոզչությանը⁵⁷:

Մոսկվայի պայմանագիրը գնահատելով որպես թուրքական դիվանագիտության և, մասնավորապես, թուրքական պատվիրակության հաղթանակը՝ Վ. Ղազախեցյանը միևնույն ժամանակ նշում է, որ Մոսկվայի ոռու-թուրքական կոնֆերանսի արդյունքներում բացասական դեր են ունեցել ներքին ու արտաքին մի քանի գործոններ՝ թուրքիայի հաղթանակը Հայաստանի առաջին հանրապետության դեմ պատերազմում և 1920 թ. դեկտեմբերի 2-ի Ալեքսանդրապոլի թուրք-Հայկական հաշտության պայմանագիրը, հանրապետության վերջին վարչապետ Ս. Վրացյանի գլխավորած ՀՓԿ-ի Մոսկահորդային Հայաստանի դեմ ուղղված դիմումները, ինչպես նաև Ռուսաստանի պարտությունը Լեհաստանի դեմ պատերազմում։ Նրա կարծիքով, Մոսկվայի պայմանագրի կնքումից հետո թուրքիան հույս ուներ Հայաստանի հետ կնքել առանձին՝ ավելի ծանր պայմանագիր, որով կվերադառնար Ալեքսանդրապոլի հաշտությամբ ամրագրված պայմաններին։ Սակայն իրադարձությունները չընթացան թուրքիային ցանկալի հունով։ Նախ ՀՓԿ-ն պարտվեց Հայաստանի խորհրդային իշխանության դեմ պայքարում, ապա՝ Խորհրդային Ռուսաստանը վճռական ու հետևողական գտնվեց Ալեքսանդրապոլ քաղաքը և գավառը քեմալական զորքից 1921 թ. ապրիլի 22-ին մաքրելու հարցում։ Վ. Ղազախեցյանը հիմնավորում է, որ թուրքիայի հետ Անդրկովկասի հանրապետությունների՝ Ռուսաստանի մասնակցությամբ Կարսի կոնֆերանսին Հայաստանի մասնակցության հարցը լուծվել է ՌՍՖՍՀ համառ պայքարի արդյունքում։ Դրա չնորհիվ է ձախողվել Հայաստանը դիվանագիտորեն մեկուսացնելու և նրա հետ հարցերն առանձին լուծելու թուրքական պահնը⁵⁸:

⁵⁷ Հ. Ակետիսյան. նշվ. աշխ., էջ 358:

⁵⁸Տե՛ս Վ. Ղազախեցյան. Հայաստանը 1920–1940 թթ., էջ 102–103:

Քննական վերլուծության ենթարկելով հայ ժողովրդի՝ Հայրենիք վերադառնալու պահանջի պատմական ու իրավական հիմքերը՝ Հ. Հակոբյանը թվարկում է Հինգ պատճառ, որոնցով Մոսկվայի պայմանագիրը հակասում է միջազգային իրավունքին և, իբրև ապօրինի գործարքի արդյունք, պետք է չեղյալ հայտարարվի: Մասնավորապես, նշվում է պայմանագրի ստորագրումն առանց Հայաստանի մասնակցության այն դեպքում, երբ Խորհրդային Հայաստանի պատվիրակությունն Ա. Բեկարյանի գլխավորությամբ գտնվում էր Մոսկվայում: Սակայն նրան թույլ չտվեցին մասնակցել ո՛չ կոնֆերանսին և ո՛չ էլ բանակցություններին ու պայմանագրի ստորագրմանը, թեև տարածքային զիջումները թուրքիային կատարվում էին Հայաստանի հաշվին⁵⁹: Այնուհետև Խորհրդային Ռուսաստանի կառավարությունն ինքնակամ հրաժարվել էր Ռուսական կայսրության ազգային ծայրամասերի նկատմամբ իշխանությունից: Ավելին, Ռուսական կայսրությունն այլևս գոյություն չուներ և նախկինում նրա մասը կազմող Արևելյան Հայաստանն էլ դե յուր՝ իրավականորեն, անկախ, ինքնիշխան խորհրդային հանրապետություն էր: Հետևաբար, Խորհրդային Ռուսաստանի կառավարությունն իրավունք չուներ մեկ այլ ինքնիշխան պետության տարածքները տնօրինել՝ իբրև Ռուսական կայսրության ծայրագավառի և, առանց այդ պետության համաձայնության, հանձնել նրա իշխանության ներքո գտնվող տարածքները մեկ այլ պետության՝ թուրքիային⁶⁰: Ապա, Հ. Հակոբյանը շեշտում է, որ իր արտաքին քաղաքական առաջին փաստաթղթում «Հաշտության մասին» հրովարտակում, Ռուսաստանի խորհրդային կառավարությունը սկզբունքորեն դատապարտել էր անեքսիան՝ այն բնութագրելով ոչ միայն իբրև օտարի տարածքի զավթում, այլև որևէ ազգի՝ Հակառակ նրա ազատորեն արտահայտված կամքի, բռնությամբ այլ պետության կազմի մեջ պահում, այսինքն՝ ինքնորշման իրավունքի ոտնահարում: Հետևաբար, Մոսկվայի պայմանագրով թուրքիայի տարածք ճանաչելով Կարսն ու Արդահանը, ինչպես նաև Սուրմալուն, որը պատմականորեն երբեք չէր եղել թուրքական տիրույթ և 1828 թ. փետրվարի 10-ի թուրքմենչայի ոռուս-պարսկական հաշտության պայմանագրով Պարսկաստանից անցել էր Ռուսաստանին, խորհրդային կառավարությունը ճանաչում էր թուրքական զավթումները՝ մերժելով իր իսկ ընդունած սկզբունքը զավթումների վերաբերյալ⁶¹: Հ. Հակոբյանի գնահատմամբ ևս, Մոսկվայի պայմանագրի 15-րդ հոդվածը հակասում է միջազգային իրավունքին, քանի որ «... Ռուսաստանը պարտավորվում էր ճնշման և ահաբեկման միջոցով ստիպել Անդրկովկասի ինքնիշխան պետություններին ճանաչել ու վավերացնել թուրքիայի հետ իր ապօրինի գործարքը: Իսկ ճնշման և սպառնալիքի ներքո ընդունված պայմանագրերը միջազգային իրավունքի տեսանկյունից չեն կարող համարվել օրինական ուժ ունեցող»⁶²: Այս հիմք է՝ պայմանագիրը չեղյալ հայտարարելու համար:

Անդրադառնալով Մոսկվայի պայմանագիրը ստորագրած կողմերի իրավական կարգավիճակին՝ Ա. Պապյանը և Ա. Հակոբյանը նշում են, որ պայ-

⁵⁹Տե՛ս Հ. Հակոբյան. նշվ. աշխ., էջ 302:

⁶⁰Տե՛ս նույն տեղում:

⁶¹Տե՛ս նույն տեղում, էջ 302–303:

⁶²Տե՛ս նույն տեղում, էջ 303:

մանագրի կնքման պահին ՌՍՖՍՀ-ն միջազգայնորեն ճանաչված չէր աշխարհի որևէ պետության՝ օրինականորեն ճանաչված միջազգային իրավունքի սուբյեկտի կողմից (առաջինը Մեծ Բրիտանիան է, որը 1924 թ. փետրվարի 1-ին ճանաչել է ՌՍՖՍՀ իրավահաջորդ ՍՍՀՄ-ին): Ճանաչված չէր նաև Թուրքիայի քեմալական կառավարությունը: Բացի այն, որ վերջինս միջազգային պայմանագրերը կնքում էր ոչ թե իր, այլ ԹԱՄԺի անունից, նրան վերագրելով անօրինական իրավասություն, կառավարության ղեկավար Մ. Քեմալն էլ երկրի անօրինական իշխանության՝ սուլթանի խալիֆի դեմ ապստամբած և Մուղրոսի գինադադարը ոտնահարող, փախուստի մեջ գտնվող քրեական հանցագործ էր, որը կայարության բարձրագույն կրօնավորի՝ շեյխ-ուլ-իսլամի 1920 թ. ապրիլի 11-ի հրամանով մահվան էր դատապարտվել⁶³: Ա. Պապյանի գնահատմամբ, միջազգային իրավունքի խախտում է նաև Մոսկվայի պայմանագրի Հայաստանին վերաբերող մասը, քանի որ վերջինս չի մասնակցել դրա ստորագրմանը: Հետևաբար, Մոսկվայի պայմանագիրը որևէ պարտավորություն կամ իրավունք չի ստեղծում դրան մաս չկազմող երրորդ կողմի համար առանց նրա համաձայնության: Որպես այդպիսին, պայմանագիրն անօրինական է ու անվավեր՝ Հիմք ընդունելով վերը ներկայացված փաստերն ու հիմնավորումները պատմաբաններ Ա. Մելքոնյանը, Ա. Մարտոքյանը և Ա. Պապյանը նշում են, որ Մոսկվայի պայմանագրով որոշված Ախուզյան ու Արաքս գետերով անցնող խորհրդա-թուրքական սահմանի հայաստանյան հատվածը լոկ բաժանարար գիծ է: Այն չունի հայ-թուրքական պետական սահմանի կարգավիճակ, քանի որ չկա դրա վերաբերյալ օրինականորեն ուժի մեջ մտած և գործող միջազգային որևէ պայմանագիր: Նրանք շեշտում են, որ Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև գոյություն ունեցող միակ քայլությունը մասնաւոր է, իսկ Արեքսանդրապոլի, Մոսկվայի ու Կարսի անօրինական պայմանագրերը չեն կարող օրինական սահմանի հիմք լինել⁶⁵:

⁶³Տե՛ս Ա. Պապյան. Հայկական հարցի լուծման իրավական հիմքերն ու ուղիները. – Հայրենատիրություն, էջ 25–26, Ա. Մ. Հակոբյան. Խորհրդային Հայաստանը Մոսկվայի և Կարսի պայմանագրերում, էջ 216–217:

⁶⁴Տե՛ս Ա. Պապյան. Մոսկվայի ուղարկությունը՝ ըստ միջազգային իրավունքի (16 մարտի, 1921) փորձաքննությունը՝ ըստ միջազգային իրավունքի. – Հայրենատիրություն, էջ 39:

⁶⁵Տե՛ս Ա. Մելքոնյան. ՀՀ Ազգային ժողովում ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն Աշոտ Մելքոնյանի կույժը հայ-թուրքական արձանագրությունների կապակցությամբ (2009 թ. հոկտեմբեր). – Ցեղասպանություն և Հայրենագրկում: Ճանաչումից՝ հատուցում (Հողվածներ և հարցազրույցներ), էջ 274–278, նույնի Հայոց պատմության դասերն ու պատգամները, էջ 482, 486–487, Ա. Մարտոքյան. Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրներն ու պատմաիրավական հիմնավորումները, էջ 106–111, նույնի Թուրքիայի միջազգային-իրավական պատասխանատվության հիմնախնդիրը: Ամփոփում և առաջարկներ. – «Վէմ» համահայկական հանդես, 2010, թիվ 1, էջ 11–28, Ա. Պապյան. Հայոց պետականության գաղափարական հիմքը. – Հայրենատիրություն, էջ 157, նույնի Նախկին սովետական հանրապետությունների ճանաչման, ինքնորոշման և սահմանների մասին. – նույն տեղում, էջ 83–86:

Չնայած Հայաստանին վերաբերող հոդվածների մասով անօրինական լինելու իրողությանը՝ Մոսկվայի պայմանագիրը հիմք է հանդիսացել Լեռնային Ղարաբաղը Հայաստանից խլելու ու Աղբբեջանին բռնակցելու համար։ Հայաստանի ու Հայ ժողովրդի Նկատմամբ գործված անարդարությունը վերացնելու փոխարեն, 1921 թ. հունիսի 5-ին ՌԿ(Բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոյի հինգ անդամների վճռով «Աղեկլքում խորհրդային իշխանության առաջապահիկ» Աղբբեջանին մատուցվեց Լեռնային Ղարաբաղը⁶⁶։

Եզրակացություն

Հայաստանի ղեկավարները Մոսկվայի պայմանագրի կնքումից հետո միայն դժոխության ձայն բարձրացրին ոռուս-թուրքական կոնֆերանսում հայկական շահերի անտեսման կապակցությամբ։ 1921 թ. ապրիլի 15-ին ՀՍՍՀ պատվիրակությունը բողոքի հուշագիր ուղղեց ՌԿ(Բ)Կ Կենտկոմին ու Խորհրդային պետության ղեկավար Վլ. Լենինին։ Դրանում մասնավորապես նշված էր. «Կոնֆերանսի արձանագրություններից չի երևում, թե արվել է գոնե մի չնչին փորձ՝ պահպանելու այն հողերն ու շրջանները, որոնք կենսական նշանակություն ունեն երիտասարդ և փոքր Խորհրդային Հայաստանի համար»⁶⁷։ Սակայն Խորհրդային Հայաստանին պարտադրված փուչ ու անհեռանկար համաշխարհային հեղափոխության գաղափարախոսության պայմաններում հանրապետության ղեկավարությունը պրոլետարական ինտերնացիոնալիստականից բացի այլ կեցվածք չէր կարող որդեգրել. Հայաստանյան իշխանությունների կողմից Հայկական ազգային շահերին հետամուտ լինելը կենտրոնի՝ Խորհրդային Ռուսաստանի կառավարության կողմից կարող էր որակվել որպես ազգայնականություն՝ նացիոնալիզմ։ Հետագայում ևս Խորհրդային Հայաստանի իշխանություններն առիթը բաց չէին թողնում իրենց դժոխությունը հայտնելու համար։ Կարսի պայմանագրի տակ իր ստորագրությունը դրած ՀՍՍՀ արտգործողությունը կոմ Ասքանազ Մոսկվանը նշել է. «Մենք չենք կարող երբեկցե հրաժարվել հողային պահանջներից, որոնք մեզ համար անհրաժեշտություն են, մեր կենսունակության և ապրելու կարելիության առաջին պայմանը»⁶⁸։ Ճիշտ է, 1921 թ. «Կորցրած հողերի» վերաբարձման հարցը խորհրդային կառավարությունն առաջ քաշեց Պոտսդամի միջազգային խորհրդաժողովի օրերին՝ 1945 թ. հունիսին, սակայն 1953 թ. մայիսի 30-ին Մոսկվան Հայաստանի ու Վրաստանի անունից հրաժարվեց Թուրքիայի հանդեպ տարածքային պահանջներից՝ «բարիդրացիական հարաբերությունները պահպանելու և անվտանգությունն ու խաղաղությունը ամրապնդելու համար»⁶⁹։

Բացի այդ, որոշակի հակասություն է առկա Մոսկվայի պայմանագրում «ազգերի եղբայրության և ժողովուրդների ինքնորոշման սկզբունքներին» թուրքիայի ու Ռուսաստանի հավատարմության վերաբերյալ ձևակերպման

⁶⁶ Հ. Ավետիսյան. նշվ. աշխ., էջ 358:

⁶⁷ Նույն տեղում, էջ 355, Կ. Խաչատրյան, Հ. Սուքիասյան, Գ. Բագրայան. նշվ. աշխ., էջ 46:

⁶⁸ Կ. Խաչատրյան, Հ. Սուքիասյան, Գ. Բագրայան. նշվ. աշխ., էջ 50–51:

⁶⁹ Նույն տեղում:

և պայմանագրի 3-րդ, 15-րդ հոդվածների ու Հավելվածի 1 (A), 1 (B) մասերի միջև: Այսպես, Ռ. Ղազանչյանը, վկայակոչելով ոռոսական արտաքին քաղաքականության դիվանագիտական վավերագրերը, նշում է, որ գեուևս 1921 թ. մարտին, երբ ընթանում էին ոռություրքական բանակցությունները, խորհրդային կառավարությունում, Հայկական տարածքները թուրքիային զիջելով հանդերձ, չէին բացառում ոռոսական զորքերի հարձակման հնարավորությունն ինչպես Կարսի, այնպես էլ Օլթիի և Երգումի ուղղությամբ⁷⁰: Բայց այդ, թուրքիայի կողմից էապես խախտվել և խախտվում են Հայաստանի ու թուրքիայի միջև երկաթուղով, հեռագրով և այլ միջոցներով անխափան հաղորդակցություն, ինչպես նաև մարդկանց ու բեռների՝ առանց ձգձգման փոխադրում ապահովելու վերաբերյալ Մոսկվայի պայմանագրի Զ-րդ և Կարսի պայմանագրի 13-րդ հոդվածները: Ավելին, խնդրո առարկա պայմանագրի կնքումից հետո անցած հարյուրամյակի ընթացքում թուրքիայի կառավարությունը նաև խախտվել է Հավելվածի 1 (B) մասում ամրագրված իր պարտավորությունը թուրքական բյոկհառուցների (ամրոցների) գիծը Ալեքսանդրապոլ-Երևան երկաթուղով՝ Արփաչայի շրջանում նրա առկա ուրվագիծ ուժ և Արաքսի շրջանում վերոհիշյալ երկաթուղուց չորս վերատ (1 վերատը 1066,9 մետր է) հեռավորության վրա տեղակայելու վերաբերյալ: Դրանք աստիճանաբար մոտեցվել են թուրք-հայկական պետական սահմանագծին: Ի Հավելումն նշվածի, պատմաբաններ Ստ. Պողոսյանը և Կ. Պողոսյանը Մոսկվայի պայմանագրի խախտում են համարում նաև 1994 թ. թուրքիայի ու Աղբբեջանի միջև կնքված բարեկամության և համագործակցության ուխտը, որն ունի հակահայկական ուղղվածությունը⁷¹:

Ներկայումս թուրքիան Մերձավոր Արևելքի վերաձևման համար հետապորագրման ժամանակաշրջանում շարունակող պայքարի գլխավոր ակտորներից է: Այդ պայքարի առանցքային գործողությունը Հայաստանն իբրև պետություն վերացնելն ու այլպիսով Հայոց պահանջատիրությունից վերջնականորեն ազատվելն է: 2020 թ. Արցախի Հանրապետության տարածքի 75 %-ը բռնազավթելուց հետո թուրքիան և Աղբբեջանը նպատակադրվել ու հետևողական գործողություններով Հայկական հարցի լուծումը տեղափոխում են Հայաստանի Հանրապետության տարածք: Եվ սա այն գեպքում, երբ Արցախի չօկուպացված հատվածում տեղակայված են ոռոսական խաղաղապահները, իսկ Ռուսաստանի Դաշնությունը և Հայաստանի Հանրապետությունը ռազմավարական դաշնակիցներ են: Այս պայմաններում ՀՀ-ն նախևառաջ պարտավոր է պատրաստ լինել դիմագրավելու թուրք-աղբբեջանական վերահաս ռազմական վտանգը, պաշտպանելու իր և ողջ Հայ ժողովրդի օրինական շահերն ու իրավունքները միջազգային իրավունքի ընձեռած հնարավորություններով, կանխելու փաստացիորեն Մոսկվայի պայմանագրով կարգավորվող թուրք-հայկական բաժա-

⁷⁰ Տե՛ս Պ. Կ ա զ ա ն դ յ ա ն. Կ ա զ ա ն դ յ ա ն. Հ ա յ կ ա կ ա ն հ ա ր ց ի և հ ա յ ո ց ց ե ղ ա ս պ ա ն ո ւ թ յ ա ն պ ա տ մ ո ւ թ յ ո ւ ն . Հ . III (Հ ա յ կ ա կ ա ն հ ա ր ց ը 1920–1922 թվերին), գիրք II, Երևան, 2003, էջ 447–449:

⁷¹ Տե՛ս Ստ. Պողոսյան, Կ. Պողոսյան. Հ ա յ կ ա կ ա ն հ ա ր ց ի և հ ա յ ո ց ց ե ղ ա ս պ ա ն ո ւ թ յ ա ն պ ա տ մ ո ւ թ յ ո ւ ն . Հ . III (Հ ա յ կ ա կ ա ն հ ա ր ց ը 1920–1922 թվերին), գիրք II, Երևան, 2003, էջ 447–449:

Նարար գծի վերանայումն ի վնասս հայ ժողովրդի ու հայկական պետականության:

Լիլիթ Հովհաննիսյան – պ. գ., դոցենտ, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Հայոց ցեղասպանության և Հայկական հարցի պատմության բաժնի ավագ գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմության ու պատմագրության հարցեր: Հեղինակ է 2 մենագրության, 5 գիտամեթոդական ձեռնարկի և շուրջ 40 հոդվածի: lilithovannisian@yahoo.com

REFERENCES

- Alikhanyan S. Sovetakan Rusastani dere hay zhoghozdi azatagrman gordsum (1917–1921 tt.), Yerevan, 1966 (In Armenian).
- Arbitral Award of the President of the United States of America Woodrow Wilson. Full Report of the Committee upon the Arbitration of the Boundary Between Turkey and Armenia, Washington, November 22nd, 1920. Prepared with an introduction by A. Papian. Yerevan, 2011.
- Arzumanyan M. V. Arhavirkits veradsnund, Yerevan, 1973 (In Armenian).
- Avagyan A. Turkiayi` vorpes mahmedakanneri hovanavori, dirkoroshume Moskvayi konferansi entatskum. – “Nakhidjevani himnahartse Moskvayi 1921 t. marti 16-i rus-turkakan paymanagrum” (gitazhoghovi nyuter), Yerevan, 2001 (In Armenian).
- Avetisyan H. Haykakan hartse 1918 tvakanin, Yerevan, 1997 (In Armenian).
- Bor'yan B. A. Armeniya, mezhdunarodnaya diplomatiya i SSSR, ch. II. M.–L., 1929 (In Russian).
- Dokumenty vneshey politiki SSSR, t. III (1 iyulya 1920 g. – 18 marta 1921 g.). M., 1959; t. IV (19 marta – 31 dekabrya 1921 g.). M., 1960 (In Russian).
- Esayan A. Hayastani midjazgayin iravakan drutyune (1920–1922), Yerevan, 1967 (In Armenian).
- Galoyan G. A. Patmutyan karughinerum: Azatagrads zhoghozdi veradsnunde, Yerevan, 1982 (In Armenian).
- Galoyan G. Hayastane yev meds terutyunnere 1917–1923 tt., Yerevan, 1999 (In Armenian).
- Genotsid armyan: otvetstvennost' Turtsii i obyazatel'stva mirovogo soobshestva. Dokumenty i kommentariy. Sost., otv. red., avtor pred. i comment. Yu. G. Barsegov, t. 2, ch. 1. M., 2003 (In Russian).
- Ghazaryan H. M. Moskvayi yev Karsi 1921 t. paymanagrern u nrants voghbergakan dere hay zhoghozdi jakatagrum, Yerevan, 2010 (In Armenian).
- Ghazakhetsyan V. Hayastane 1920–1940 tt., Yerevan, 2006 (In Armenian).
- Ghazakhetsyan V. Moskvayi rus-turkakan konferanse: 1921 t. marti 16-i paymanagire. – Hayots patmutyun, h. IV, girk I [Noraguyen zhamanakashrdjan (1918–1945 tt.)], Yerevan, 2010 (In Armenian).
- Hakobyan A. M. Khorhrdayin Hayastane Moskvayi yev Karsi paymanagrerum, Yerevan, 2010 (In Armenian).
- Hakobyan H. Taragir hayutyan hayrenik veradarnalu pahandji patmakan u iravakan himkere, Yerevan, 2002 (In Armenian).
- Hayastane midjazgayin divanagitutyun yev sovetakan artakin kaghakakanutyun pastatgterum (1828–1923), khmb. J. S. Kirakosyan, Yerevan, 1972 (In Armenian).

- Hayastani azgayin atlas, pat. khmb. B. Harutyunyan, h. B, Yerevan, 2008 (In Armenian).
- Hayastani azgayin arkhiv, f. 113, ts. 3, g. 56, t. 32–40 (In Armenian).
- “Hayastani Hanrapetutyun” (Yerevan), 16. III. 1991 (In Armenian).
- Hayastani Hanrapetutyune 1918–1920 tt. (kaghakakan patmetyun), pastatgteri yev nyuteri zhoghovatsu, kazm.` G. Galoyan, V. Ghazakhetsyan, V. Melikyan, S. Mirzoyan, A. Virabyan, Yerevan, 2000 (In Armenian).
- “Hayastani komunist” (Yerevan), 11. X. 1988 (In Armenian).
- Kazandzhyan R. K voprosu o datirovke Moskovskogo sovetsko-turetskogo dogovora 1921 g.– «Vestnik obshchestvennykh nauk» NAN RA, 1999, № 1 (In Russian).
- Kazandzhyan P. K voprosu ob otsenke Moskovskogo russko-turetskogo dogovora 1921 g.– Strany i narody Blizhnego i Srednego Vostoka. XX. Yerevan, 2001 (In Russian).
- Kazandzhyan R. Russko-turetskie otnosheniya 1920–1921 gg. i vopros Armenii v svete sekretnykh dokumentov moskovskikh arkhivov.– «Sovremennoe sostoyanie i perspektivy razvitiya armenovedeniya». Sbornik dokladov mezhdunarodnogo simpoziuma. Yerevan, 2004 (In Russian).
- Khachatryan K. H. Hay-rusakan haraberutyunnere 1920–1922 tt., Yerevan, 2007 (In Armenian).
- Khachatryan K., Sukiasyan H., Badalyan G. Haykakan taratskneri brnaktsume Turkiayin yev Khorhrdayin Adrbejanin 1920–1930-akan tvakannerin, Yerevan, 2020 (In Armenian).
- Khatisyan Al. Hayastani Hanrapetutyan dsagume yev zargatsume, Beirut, 1968 (In Armenian).
- Khurshudyan L. Hayastani bazhanume 1920 tvakanin, Yerevan, 2002 (In Armenian).
- Kocharyan V. Midjazgayin iravunk: Usumnakar dzernark, Yerevan, 2002 (In Armenian).
- Lazian G. Hayastan yev hay date: Hayevrus yaraberutyunneru loysin tak, Yerevan, 1991 (In Armenian).
- Marukyan A. Hayots tseghaspanutyun hetevankneri haghtaharmen himnakhndirnern u patmairavakan himnavorumnere, Yerevan, 2014 (In Armenian).
- Marukyan A. Moskvayi yev Karsi paymanagreri midjazgayin-iravakan gnahatakane.– “Vem” hamahaykakan handes (Yerevan), 2011, tiv 2 (In Armenian).
- Marukyan A. Turkiayi midjazgayin-iravakan patasxanatvutyan himnakhndire: Ampopum yev arajarkner.– “Vem” hamahaykakan handes, Yerevan, 2010, tiv 1 (In Armenian).
- Melkonyan A. Hayots patmetyan dasern u patgammere, Yerevan, 2013 (In Armenian).
- Melkonyan A. Tseghaspanutyun yev hayrenazrkum: Janachumits` hatutsum (hodvadsner yev hartsazruysner), Yerevan, 2015 (In Armenian).
- Mserlean Z. Erek dashnagirer (Aleksandrapoli, Moskuayi yev Karsi dashnagirere, 1920–1921 tt.), Peyrut, 1979 (In Armenian).
- Natali Sh. (Ter-Yakobyan Ya.). Erek dashnagrer (Agheksandrapoli, Moskuayi yev Karsi), Peyrut, 1957 (In Armenian).
- Papyan A. Hayrenatirutyun: Hayots pahanjatirutyun iravakan himunknere yev harakits hartser (Hodvadsneri zhoghovadsu), Yerevan, 2012 (In Armenian).
- Poghosyan St., Poghosyan K. Haykakan hartsi yev hayots tseghaspanutyun patmetyun, h. III (Haykakan hartse 1920–1922 tverin), girk II, Yerevan, 2003 (In Armenian).
- Sargsyan E. Davadir gordsark: Hayastan–Rusastan–Turkia, Yerevan, 1995 (In Armenian).
- Sarkisyan E. Za kulisami, kak rozhdalsya Moskovskiy dogovor 1921 g.– “Literaturnaya Armeniya» (Yerevan), 1991, № 1 (In Russian).

- Simonyan Hr. Nakhidjevani hartse Moskvayi 1921 t. marti 16-i rus-turkakan paymanagrum.— “Nakhidjevani himnahartse Moskvayi 1921 t. marti 16-i rus-turkakan paymanagrum” (gitazhoghovi nyuter), Yerevan, 2001 (In Armenian).
- Simonyan Hr. R. Turk-haykakan haraberutyunneri patmutyunits, Yerevan, 1991 (In Armenian).
- Tsavali paymanagrer, kazm. T. Gh. Sahakyan, Yerevan, 2007 (In Armenian).
- Torikian Sh. Haykakan hartse yev midjazgayin orenke, Peyrut, 1976 (In Armenian).
- Vratsyan S. Hayastani Hanrapetutyun, Yerevan, 1993 (In Armenian).
- “Zhizn’ natsional’nostey” (M.), 04. III. 1921 (In Russian).
- Zohrabyan E. A. 1920 t. turk-haykakan paterazme yev terutyunnere, Yerevan, 1997 (In Armenian).
- Zohrabyan E. A. Nakhidjevanyan himnahartse (1920–1921), Yerevan, 2010 (In Armenian).
- Zohrabyan E. A. Sovetakan Rusastane yev hay-turkakan haraberutyunnere (1920–1922 tt.), Yerevan, 1979 (In Armenian).
- <https://eadaily.com/ru/news/2016/02/08/v-gosdume-predlozhili-rastorgnut-moskovskiy-dogovor-o-druzhbe-s-turciyot-1921-goda>.
- <https://newsarmenia.am/news/politics/mid-rf-izuchit-vopros-rastorzheniya-dogovora-po-kotoromu-gora-ararat-pereshla-k-turtsii/>.

**РУССКО-ТУРЕЦКОЕ СОТРУДНИЧЕСТВО И МОСКОВСКИЙ
ДОГОВОР ОТ 16 МАРТА 1921 Г. ПО ОЦЕНКЕ АРМЯНСКОЙ
ИСТОРИЧЕСКОЙ НАУКИ
(1991–2020 гг.)**

ЛИЛИТ ОГАНИСЯН

Р е з ю м е

Ключевые слова: Советская Россия, кемалистская Турция, Национальный обет, русско-турецкие переговоры, Московский договор, Армянский вопрос, Западная Армения, Карсская область, Сурмалинский уезд, Нахичеван, Александрополь.

В настоящее время армяно-турецкая государственная граница регулируется русско-турецким «Договором о дружбе и братстве», подписанным 16 марта 1921 г. в Москве. Если в советской армянской исторической науке он был оценен с точки зрения политico-идеологических интересов советского государства, то умозаключения ученых Армянской диаспоры были и остаются основанными на национально-государственных интересах армян.

После восстановления независимости Армении в 1991 г., армянские историки получили свободу переоценки русско-турецких переговоров 1920–1921 гг. и подписанного в их результате Московского договора. Историки Е. Саркисян, Э. Зограбян, Г. Галоян провели фундаментальные научные исследования по этим вопросам, а труды Гр. Симоняна, Г. Аветисяна, Л. Хуршудяна, А. Мелконяна, В. Казахециана, А. Акопяна, К. Хачатряна, А.

Марукяна, Р. Казанджяна, А. Папяна и других историков отличаются новыми концептуальными подходами.

Выводы армянских историков дополняют друг друга и приводят к следующему: в 1920–1921 гг., имея разные политico-идеологические и военные интересы, Советская Россия и кемалистская Турция, тем не менее, стремились к сотрудничеству во внешнеполитических отношениях, а Московский договор, подписанный в результате русско-турецких переговоров, стал новой дипломатической победой Турции на пути разрешения Армянского вопроса по турецкому варианту. По этому договору Турция укрепила свое господство над Западной Арменией. Отторгнутые от Республики Армения Карсская область и Сурмалинский уезд отходили к Турции. Отделялись от Армении и в качестве автономной территории передавались под протекторат Советского Азербайджана Нахичеванский уезд, большая часть Шарур-Даралагязского уезда и небольшая часть Ереванского уезда.

Лилит Оганисян – к. и. н., доцент, старший научный сотрудник отдела истории Армянского вопроса и Геноцида армян Института истории НАН РА. Научные интересы: вопросы истории и историографии Армянского вопроса и Геноцида армян. Автор 2 монографий, 5 научно-методических пособий и около 40 статей. lilithovannisian@yahoo.com

THE RUSSIAN-TURKISH COOPERATION AND THE MOSCOW TREATY AS OF MARCH 16, 1921, ACCORDING TO THE ASSESSMENT OF THE ARMENIAN HISTORICAL SCIENCE (1991–2020)

LILIT HOVHANNISYAN

S u m m a r y

Key words: Soviet Russia, Kemalist Turkey, National covenant, Russian-Turkish negotiations, Moscow Treaty, Armenian Question, Western Armenia, Kars province, Surmali district, Nakhichevan, Alexandropol.

At present, the Armenian-Turkish state border is regulated by the Russian-Turkish “Treaty of friendship and brotherhood” signed on March 16, 1921 in Moscow. If in the Soviet Armenian historical science it was evaluated from the perspective of the political and ideological interests of the Soviet state, then the conclusions of the scientists of the Armenian Diaspora were and remain based on the national and state interests of the Armenians.

After the restoration of Armenia’s independence in 1991, the Armenian historians received freedom of revaluation of Russian-Turkish negotiations 1920–1921 and the Moscow Treaty signed as a result of them. Historians Ye. Sargsyan, E. Zohrabyan, G. Galoyan conducted fundamental scientific researches on these

issues, and the works of Hr. Simonyan, H. Avetisyan, L. Khurshudyan, A. Melkonyan, V. Ghazakhetsyan, A. Hakobyan, K. Khachatryan, A. Marukyan, R. Kazanjyan, A. Papyan and other historians stand out with new conceptual approaches.

The conclusions of Armenian historians complement each other and lead to the following: in 1920–1921, having different political, ideological and military interests, Soviet Russia and Kemalist Turkey, nevertheless, strove for cooperation in foreign policy relations, and the Moscow Treaty, signed as a result of the Russian–Turkish negotiations, became a new diplomatic victory for Turkey on the way of the resolution of the Armenian Question according to the Turkish version. According to this Treaty, Turkey strengthened its dominance over Western Armenia. Kars province and Surmalu district, torn away from the Republic of Armenia, were passed to Turkey. Nahkichevan province, most of Sharur–Daralagyaz district and a small part of Yerevan province were separated from Armenia and transferred as an autonomous territory under the protectorate of Soviet Azerbaijan.

Lilit Hovhannisyan – Candidate of Sciences in History, Associate Professor, Senior Researcher at the Department of History of the Armenian Question and Armenian Genocide at the NAS RA Institute of History. Scientific interests: the main issues of history and historiography of the Armenian Question and Genocide of Armenians. Author of 2 monographs, 5 methodical textbooks and over 40 articles. lilithovannian@yahoo.com

**ԱՐՑԱԽՅԱՆ ՎԵՐՋԻՆ ԳՈՅԱՊԱՅՔԱՐԸ, ՎՐԱՍՏԱՆԸ,
ՏԱՐԱՆՑԻԿ ՆՈՐ ՆԱԽԱԳԾԵՐԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՇՐՋԱՓԱԿՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ***

ՎԱՀԵ ՍԱՐԳՍՅԱՆ

Բանալի բառեր՝ Վրաստան, Արցախյան գոյապայքար, չեղոքություն, օդային տարածք, բեռնաստար ինքնամբիոներ, եռակողմ հայտարարություն, տրանսպորտային ապաշրջափակում, Հաղորդակցուղիներ, Կարս-Դիգիր-Նախիջևան երկաթուղի, ըրջափակում, թուրք-ադրբեջանական մեծապետական շահեր:

Նախարարն

2020 թ. սեպտեմբերի 27-ին Արցախի դեմ Աղբեկանի կողմից ու Թուրքիայի լայն աջակցությամբ սանձազերծված արյունալի պատերազմին Վրաստանի «մասնակցությունը» (խոսքը, իհարկե, դիրքորոշման, չեղոքության պահպանման կամ կողմերից ինչոր մեղին այս կամ այն կերպ աջակցելու մասին է) տեղիք տվեց հայ և օտար շրջանակներում բազմաթիվ քենարկումների, մեկնաբանությունների, անդամ որոշ մեղադրանքների: Զուգահեռ կրկին ակտիվացան նաև հակամարտող կողմերի զինամատակարարման և զինտեխնիկայի փոխադրման տարանցիկ ուղիների վերաբերյալ պաշտոնական հայտարարությունները, որոնք ոչ միշտ էին համահունչ մասնագիտական ու հանրային շահագրգիռ շրջանակների ձեռքերում հայոնված փաստերին:

Վրաստանը տնտեսական, էներգետիկ, ռազմական, տարանցիկ և այլ ոլորտներում խորը կախվածություն ունի Հարևաններ Թուրքիայից ու Աղբեկանից: Եթե այս ամենին գումարենք նաև երեսմն ծայրահեղության հասնող արևմտամետ, դեպի ՆԱՏՕ ձգողող, միևնույն ժամանակ՝ հակառական քաղաքականությունը, ապա «Վրաստանն ինչպես կդրամորի իրեն՝ ուժերի «ուղղահայց» և «Հորիզոնական» առանցքների օղակների (ՀՀ-Արցախ, Աղբեկան) միջև ընթացող արյունալի պատերազմի օբերին, երբ Վրաստանը վաղուց ներքաշված է «Հորիզոնական» ուժային վեկտորի մեջ» հարցադրումը միանգամայն հասկանալի էր:

Պատերազմի նախօրե

Նախապատերազմական շրջանում Թուրքիայի ու Աղբեկանի ռազմաօդային ուժերի ինքնամբիոները Վրաստանի օդային տարածքով հաճախակի թռիչքներ են կատարել երկու երկրների միջև: Հայկական և միջազգային փորձագիտական շրջանակները, սակայն, պատերազմի նախօրյակին բարձրածայնել էին, որ, սկսած սեպտեմբերի 23-ից, այդ թոփչքների միջև կորուկ

* Ներկայացվել է 11. III. 2021 թ., գրախոսվել է 19. III. 2021 թ., ընդունվել է տպագրության 30. III. 2021 թ.:

ակտիվացել էր: Նշված օրերին Թուրքիայի Կայսերի, Թեքրիդաղ և այլ քաղաքների օղակայաններից Վրաստանի օղային տարածքով դեպի Աղբեջանի Գյանջա (Գանձակ), Եվլախ ու Բաքու քաղաքների օղակայաններ և Հակառակ ուղղություններով գերակտիվ թոփչքներ են իրականացրել ինչպես Թուրքիայի, այնպես էլ Աղբեջանի ռազմաօղային ուժերին պատկանող ինքնաթիռները՝ Հավանաբար, դեպի Աղբեջան տեղափոխելով մեծաքանակ զինտեխնիկա: Ավելին, ինչպես Աղբեջանի ռազմաօղային ուժերին, այնպես էլ աղբեջանական մասնավոր “Silk Way West Airlines”¹ ավիափոխադրողին պատկանող բեռնատար ինքնաթիռները նշված օրերին կրկին Վրաստանի օղային տարածքով ակտիվ թոփչքներ են իրականացրել նաև Աղբեջան-Թուրքիա-Իսրայել և Հակառակ երթուղով: Եթե հաշվի առնենք պատերազմի ողջ ընթացքում կիրառված խրայելական արտադրության անօղաչու թուչող սարքերն ու այլ տեսակի զինտեխնիկայի աշուելի քանակը, ինչպես նաև այն իրողությունը, որ Խարայելն Աղբեջանին զենք մատակարարող հիմնական երկրներից մեկն է, պարզորոշ է՝ պատերազմի նախօրյակին թոփչքների նման ակտիվացումը խոսում է զինտեխնիկայի փոխադրման քանակական աճի մասին: Հստ այդմ՝ Խարայելը ևս, Թուրքիայի հետ մեկտեղ, մասնակցել է Արցախի դեմ ակտիվ ռազմական գործողությունների նախապատրաստմանը:

Պատերազմ, քաղաքական հայտարարություններ

Պատերազմի առաջին խակ օրերին Վրաստանի նախկին նախագահ Մ. Սահակաշվիլին հայտնեց, որ «... իր դիրքորոշումը լիովին ակնհայտ է, այն չիմնված է տարածքային ամբողջականության սկզբունքի վրա, ուղեմն Լեռնային Ղարաբաղը հանդիսանում է Աղբեջանի հանրապետության ինքնիշխան տարածք և որևէ բան չի փոխի այդ հանգամանքը»²: Որևէ նորություն չպարունակող, իրերի վրա ոչ մի ազդեցություն չունեցող, այդուհանդերձ, պատերազմի զգայուն օրերին աղմուկ հանած այդ հայտարարությանը Վրաստանի պետական այրերը շտապեցին արձագանքել՝ միաժամանակ ներկայացնելով Վրաստանի պաշտոնական դիրքորոշումը, երկրի տեղն ու դերն արցախսա-աղբեջանական պատերազմում: Մ. Սահակաշվիլու հայտարարության հրապարակման հենց հաջորդ օրը (սեպտեմբերի 29-ին) նշված հայտարարությունը սաղրանք որակեց Վրաստանի խորհրդարանի առաջին փոխխոսնակ Գիա Վոլոմին: Հայտարարելով, որ Վրաստանն առավելագույնս ձեռնպահ և չեղոք պետք է լինի՝ նա ասել էր. «Ապակայունացման և վնաս

¹ “Silk Way West Airlines”-ը “Silk Way Holding”-ին պատկանող կազմակերպություն է, որի 3 սեփականատերերից մեկը Իլհամ Ալիևի դուստր Արզու Ալիևան է (սեփականատեր է դարձել դեռևս 2010 թ.: 21 տարեկան հասակում): “Silk Way West Airlines”-ն ունի ռազմական տեխնիկա տեղափոխելու թույլտվություն ու բավական հարուստ փորձ. դեռևս 2005 թ., երբ ընթանում էր աֆղանական պատերազմը, ԱՄՆ ղեկավարությունը պայմանագիր էր կնքել “Silk Way West Airlines”-ի հետ՝ Աֆղանստանում գտնվող ամերիկան և միջազգային ուժերին ռազմական սպառագինություն մատակարարելու համար:

² Լեռնային Ղարաբաղը Աղբեջանի ինքնիշխան տարածք է, և որևէ բան չի փոխի այդ հանգամանքը. Սահակաշվիլի.- <https://www.yerkir.am/news/view/214587.html>, դիտվել է 12.10.2020 թ.:

պատճառելու դրակորում է մի կողմին աջակցություն հայտնելը և դիրքորոշում արտահայտելն այն ժամանակ, երբ Վրաստանի շահն է հարեանությամբ միայն խաղաղություն ունենալը։ Սահակաշվիլիի նպատակը վրացիների հետ հարյուրավոր տարիներ խաղաղ բնակվող հայ ու աղբբեջանական էթնիկ խմբերի բախումներ առաջացնելն է։ Ու եթե Սահակաշվիլիի երազանքը կատարվի, այս ամենը կվերածվի հակամարտության։ Այս հայտարարությունն այլ բան չի կարող նշանակել»³։

Զնայած այդ հայուրարությանը՝ պատերազմի առաջին իսկ օրերին տեղեկություններ շրջանառվեցին, որ Վրաստանի օդային տարածքով Աղբբեջան են տեղափոխվում ոչ միայն թուղթական ու խրայելական զինտեխնիկա, այլև ահաբեկչական խմբեր՝ Սիրիայից և այլն։ Դրությունը Վրաստանում լրացեց հատկապես այն ժամանակ, երբ երկրի սահմանային ծառայության աշխատակիցները ժողով չտվեցին ջավախահայության մարդասիրական բեռները Նինոծմինդա-Բալքա սահմանային անցակետով տեղափոխել Երևան։ Ի պատասխան՝ սեպտեմբերի 29-ին Ախալքալաքի ու Նինոծմինդայի շրջանների բնակիչները հավաքվել էին սահմանային Կարծախ գյուղում և փակել թուրքիա-Վրաստան նորակառույց միջպետական ճանապարհը։ Ինչպես պարզվեց՝ ջավախահայության նախաձեռնած հանրահավաքի նպատակներից մեկն է եղել նաև Վրաստանի ցամաքային ճանապարհով թուրքիայից դեպի Աղբբեջան գենք ու զինամթերք տեղափոխել կանխելը։

Սեպտեմբերի 29-ին այդ ամենը փորձեց հերքել Վրաստանի խորհրդարանի անվտանգության և պաշտպանության հանձնաժողովի ղեկավար Իրավի Սեսիաշվիլին՝ հայտարարելով, որ Վրաստանը ուազմական տարանցման երկիր չի դառնա։ «Վրաստանը Ղարաբաղյան հակամարտության հարցում չեղոք է և բարիդրացիական հարաբերություններ ունի ինչպես Հայաստանի, այնպես էլ Աղբբեջանի հետ։ Երկու պետություններն էլ գնահատում են Վրաստանի դիրքորոշումը, քանի որ Հարցը երկրի տարածքով ուազմական տեխնիկայի տեղափոխմանն է վերաբերում։ Մենք կտրականապես մերժել ենք բոլորին։ Դա գիտեն մեր հարևաններն ու հարգանքով են վերաբերվում։ Մենք վերլուծում ենք իրավիճակը, հետևում գործընթացին ու պատրաստ ենք ցանկացած սցենարի»⁴, – ասել է Սեսիաշվիլին՝ ընդգծելով, որ Վրաստանը կողմէ Հակամարտության խաղաղ կարգավորմանը և կոչ արել կողմերին դադարեցնել կրակը։ Սեպտեմբերի 30-ին հայտարարություն տարածեց նաև Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիան՝ նշելով, որ իր երկիրը պատրաստ է ցանկացած ձևաչափով օգնել դուրս գալ ստեղծված իրավիճակից, այդ ժկում՝ Հակամարտող կողմերի ներկայացուցիչներին երկխոսության նպատակով ընդունել թրիլիսիում։ Հետաքրքրական է՝ Վրաստանի վարչապետն իր հայտարարության մեջ Աղբբեջանի սանձազերծած լայնածավալ

³ Վ. Սարգսյան. «Տիրանապորտային ապաշրջափակման» առասպելը կամ Այսրկովկասից ՀՀ-ի լիակատար վտարումը. – «Դրոշակ» (Երևան), 2021, փետրվար, № 2, էջ 16։

⁴ Грузия поддерживает мирное урегулирование конфликта и призывает стороны к прекращению огня, заявил глава парламентского комитета. – <https://sputnik-georgia.ru/politics/20200929/249580859/Deputat-Gruziya-otkazala-Armenii-i-Azerbaydzhanu-v-tranzite-oruzhiya.html>, դիտվել է 15. 10. 2020թ.:

պատերազմն Արցախի դեմ անվանել էր «Աղբբեջանի և Հայաստանի միջև հերթական ռազմական առճակատում», հավանաբար, Աղբբեջանին ցույց տալու համար, որ Վրաստանը չի ճանաչում Արցախի գոյովթյունն ու չի ընդունում վերջինիս ինքնորոշման փաստը։ Այսպես. «Աղբբեջանի և Հայաստանի միջև հերթական ռազմական առճակատման արդյունքում ստեղծվել է բարդ իրավիճակ, կան շատ զոհեր և, ցավոք, մինչ այժմ չի հաջողվել դադարեցնել ռազմական գործողությունները և վերական երկխոսությունը։ Բոլորս էլ լավ հասկանում ենք, որ իրավիճակի հետագա սրումը խիստ բացասական ազդեցություն կունենա տարածաշրջանի անվտանգության վրա։ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներն ու միջազգային դերակատարները պետք է առավելագույնը օգտագործեն իրենց հնարավորությունները էսկարացիայի դադարեցման և երկխոսության վերականգնման համար։ Ինչպես գիտեք, մեր երկիրը բարիդրացիական հարաբերություններ ունի երկու երկրների՝ Աղբբեջանի ու Հայաստանի հետ։ Պատմականորեն, Վրաստանում ապրող մեր աղբբեջանցի և հայ քաղաքացիները միշտ մեծ գեր են խաղացել մեր երկրի, ինչպես նաև ընդհանուր առմամբ տարածաշրջանի զարգացման գործում։ Միևնույն ժամանակ, նրանց համակեցությունը լավ օրինակ է, որ վրացիները, հայերն ու աղբբեջանցիներն ունեն ներուժ ամբողջ Հարավային Կովկասը դարձնել խաղաղության և զարգացման տարածք»⁵։

Վրաստանի օդային տարածքով թուրքական և իսրայելական զինտեխնիկայի, ինչպես նաև սիրիացի ահաբեկչական խմբերի՝ Աղբբեջան տեղափոխման մասին բավական փաստարկված հրապարակումները հոկտեմբերի 3-ին փորձեց հերքել Վրաստանի պետանվտանգության ծառայության դեկավար Գրիգոր Լիլուաշվիլին՝ հայտարարելով, թե նման տեղեկատվության տարածման նպատակը տարածաշրջանն ապահովունացնելն է⁶։ Իսկ Վրաստանի ներքին գործերի նախարար, Անվտանգության խորհրդի քարտուղար Վախթանգ Գոմելառին երկրի տարածքով զենք-զինամթերքի փոխադրման վերաբերյալ նշել էր հետևյալը. «Հայաստանի և Աղբբեջանի միջև ռազմական գործողությունների պատճառով (նա ևս կրկնում է վարչապետ Գ. Գախարիային՝ համարելով, որ պատերազմն ընթանում է ՀՀ-ի ու Աղբբեջանի միջև. – Վ. Ս.): Վրաստանի կառավարությունը ժամանակավորապես դադարեցրել է իր տարածքով՝ ցամաքային ու օդային երթուղիներով, դեպի երկու երկրներ ռազմական նշանակության բեռների փոխադրման թույլտվություն տրամադրելը։ Այդ մասին կողմերին տեղեկացվել է: Ինչ վերաբերում է քաղաքացիական բեռների փոխադրմանը, այդ ուղղությամբ Վրաստանն ամբողջությամբ կատարում է ստանձնած միջազգային պարտավորությունները»⁷։

⁵ Ղախարյան առաջնախառնության համար առաջարկությունը պատճենաբանությունում հայտնաբերվել է 2020 թ. հունվարի 15-ին։

⁶ Հայաստանի առաջնախառնության համար առաջարկությունը պատճենաբանությունում հայտնաբերվել է 2020 թ. հունվարի 20-ին։

⁷ Հայաստանի առաջնախառնության համար առաջարկությունը պատճենաբանությունում հայտնաբերվել է 2020 թ. հունվարի 21-ին։

Այդուհանդերձ, Վրաստանի օդային տարածքով դեպի Աղբբեջան ռազմական նշանակության բեռների փոխադրման վերաբերյալ փաստարկված հրապարակումները շարունակեցին երևալ նաև նշյալ հայտարարություններից հետո: Անդրադառնալով դրանց՝ Վրաստանի ԱԳ փոխնախարար Լաշա Դարսալիան հոկտեմբերի 13-ին հայտարարեց. «Մենք ցանկանում ենք կրկնել, որ Վրաստանի տարածքով ռազմական տրանզիտ չի իրականացվում: Ըստ Վրաստանում առկա փաստաթղթերի՝ Վրաստանի օդային տարածքում իրականացվող թոփչքները միայն մարդասիրական ու քաղաքացիական բնույթ ունեն և լիովին համապատասխանում են ICAO-ի չափանիշներին»⁸:

Փաստենք, որ այս հայտարարությունը ևս չփարատեց շահագրգիռ Մջանակների մոտ առկա կասկածանքները, որոնք արդեն փաստական հիմք ստացան հոկտեմբերի 22-ին: Եթե մինչ այդ տարբեր հարթակներում խոսվում էր ռազմական բեռների տեղափոխման թուլտվություն ունեցող աղբբեջանական “Silk Way West Airlines” ընկերության բեռնատար ինքնաթիռներով դեպի Աղբբեջան զինտեխնիկայի փոխադրման շարունակականության մասին (դրանք վրացի պաշտոնյաներն իրենց հայտարարություններում անվանել էին «մարդասիրական» կամ «քաղաքացիական» բնույթի թոփչքներ), ապա հոկտեմբերի 22-ին Վրաստանի երկնքում արդեն հատակորեն երևաց Աղբբեջանից դեպի Թուրքիա թռչող, Թուրքիայի ռազմաօդային ուժերին (ԻՕՌ) պատկանող TUAF512 (Airbus A400M-180) ռազմական բեռնատար ինքնաթիռը: Հայկական մամուլը փաստական հենքի վրա բարձրաձայնեց այդ մասին⁹, այդուհանդերձ, Թիֆլիսին պաշտոնական որևէ մեկնաբանով յուն չտվեց այդ առիթով:

Հայ-աղբբեջանական «Հակամարտություն» Վրաստանում՝ քաղաքական հողի վրա

Վրաստանի խորհրդարանի երկու պատգամավոր՝ «Միացյալ ազգային շարժումից» Ազեր Սուլեյմանովը և «Վրացական երազանքից» Ռուսան Գաջիկը, պատերազմի հենց հաջորդ օրն իրենց ֆեյյարդյան էջերում անդրադարձել են արցախա-աղբբեջանական պատերազմին¹⁰: Ա. Սուլեյմանովը Հայաստանին մեղադրել է Այրկովկասում անկայունություն մտցնելու և Աղբբեջանի տարածքի 20 տոկոսի օկուպացման, Վրաստանի դեմ հանցագործություն կատարելու մեջ: Նա նաև բաց նամակով դիմել է Աղբբեջանի նախագահ Իլհամ Ալիևին և նշել, որ «վերջինիս որոշիչ քայլերով իրենց հողերը

⁸ В Тбилиси опровергли причастность к транзиту военных грузов в Армению и Азербайджан.– <https://tass.ru/mezhdunarodnaya-panorama/9702715>, դիտվել է 26. 10. 2020թ.:

⁹ Ինչ կարելի է Աղբբեջանին, չի կարելի Հայաստանի¹⁰ն. Վրաստանի երկինքը փակ է միայն Հայաստանի համար. – <http://www.yerkir.am/news/view/217681.html?fbclid=IwAR0ciQ1CbjXVomUeRnqGhkUYdvd3rFECzb0kmrlnIRCfTiXarf0emnVOeB8>, դիտվել է 26. 10. 2020թ.:

¹⁰ Депутаты Парламента Грузии из числа этнических азербайджанцев выразили поддержку Баку на фоне конфликта в НК.– <https://civil.ge/tu/archives/371330>, դիտվել է 26. 10. 2020թ.:

վերջնականապես կազմատագրվեն»: Ու. Գաջիկը նույնպես իր աջակցությունն է հայտնել Աղբբեջանին և նշել՝ «Աղբբեջանի զինված ուժերի հաջող ռազմական գործողությունները՝ նրա տարածքային ամբողջականությունը հաստատելու համար, չիմք են տալիս ասելու, որ մեր տարածաշրջանում նման հակամարտությունները պետք է չուտափույթ լուծում ստանան»:

Բնականաբար, Աղբբեջանը լավագույնս է գիտակցում Վրաստանի տեղն ու դերը Հայաստանի համար՝ ռազմավարական, տարամնցիկ և այլ առումներով: Արդյունքում՝ ամեն ինչ արվել և արվում է ՀՀ-Վրաստան առանց այն էլ փիրուն հարաբերություններում առավել խոր վիճեր ստեղծելու համար, իսկ այդ քաղաքականության լավագույն գործիքը Վրաստանում ապրող աղբբեջանական զանգվածն է: Բարեբախտաբար, Վրաստանի պետական-հասարակական շրջանակները հաշվի առնելով այդ ամենը՝ հնարավորինս արագ չեղոքացրին աղբբեջանական սաղբանքները:

Այսպես, նախկին պետնախարար Պատառ Զաքարեիշվիլին Վրաստանի խորհրդարանի անդամների կողմից արված հայտարարությունն ամոթալի է որպակել և նշել, որ կուսակցությունները պարտավոր են պարզաբանել կատարվածը. «Դա բացարձակ ամոթալի փաստ է: Նրանք վրացական խորհրդարանի անդամներ են ու չգիտեն՝ ինչպես իրենց պահեն: Դա անթույլատրելի է, դա պետք է կուսակցություններում մտորումների առիթ տա: Փաստն այն է, որ այդ մարդիկ իրենց չեն ընկալում որպես Վրաստանի պատգամավորներ, նրանք իրենց պատկերացնում են իրեւ այլ երկրի պատգամավորներ, քաղաքացիներ կամ շահերի պաշտպաններ: Հայտարարություններով պետք է հանդիս գան ինչպես «Վրացական երազանք»-ից, այնպես էլ՝ «Ազգային շարժում»-ից: Այդ մարդկանցից ես ոչ մի սպասելիք չունեմ, բայց ակնկալում եմ պարզաբանող հայտարարություններ կուսակցություններից: Նրանք պետք է մեզ բացատրեն՝ ինչպես կարող են Վրաստանի քաղաքացիներն ու խորհրդարանի պատգամավորները հանդես գալ նման ամոթալի հայտարարություններով: Վրաստանում կա խոսքի ազատություն, բայց կա նաև քաղաքական գործիչների պատախանատվություն պետական քաղաքականության վարման համար: Ենոտության խնդիրն է կարգավորել հակամարտությունների հակառակն է: Չի երևում, թե նրանց հուզում է տարածաշրջանի կայունությունը: Նրանք ակներևաբար մտածում են տարածաշրջանն անկայունացնելու մասին: Սակայն որոշ պատգամավորների այդ հայտարարությունը խոսում է այն մասին, որ այդ մարդիկ ամենեկին չեն գիտակցում, թե որ երկրի քաղաքացիներ են»¹¹:

Նշյալ սաղբանքների չեղոքացման խնդրում իրենց կարևոր միջամտությունն ունեցան նաև Զավակսի հասարակական-քաղաքական շրջանակները: Սամցիսե-Զավակսի և Քվեմո Քարթլիի հայկական հասարակական կազմա-

¹¹ “Սրբազնություն և ամառնացած օրականություն” – Շեցանցած մոյմեզօ զեթյան օրականությունը – https://publika.ge/sruliad-samarckhvin-o-faqtia-shefaseba-moqmedi-deputatebis-ghia-mkhardacheraze/?fbclid=IwAR0-B0728laolQpvnDsOGCkeP0laLd_0YbRwiwX9TISooNewaEFzx9p0YGc, դիտվել է 27. 10. 2020թ.:

կերպությունների խորհուրդը, Վրաստանի խորհրդարանի՝ Զավախքից ընտրված երկու պատգամավորները, Զավախքի առանձին շրջանների տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ) ներկայացուցիչները, Վրաստանի խորհրդարանական ընտրություններին Զավախքից իրենց թեկնածությունն առաջադրած մի շարք քաղաքական այրեր իրենց հայտարարություններով անվերապահորեն աջակցեցին Արցախյան գոյապայքարին, դատապարտեցին Աղրբեջանի կողմից Արցախի դեմ սահմազերծած պատերազմը՝ միաժամանակ հայտարարելով, որ ՀՀ-Վրաստան հարաբերությունների վատացմամբ շահագրգիռ աղրբեջանական ուժերն ու անձինք որևէ կերպ հաջողության չեն հասնելու:

Հոկտեմբերի 5-ին հատուկ կոչուղերձով է հանդես եկել նաև Վրաց Ուղղափառ եկեղեցու եպիսկոպոս, Ախալքալաքի ու Գումբուրդոյի վարդապետ Նիկոլով Պաչուաշվիլին: Հայտարարելով Վրաստանի կողմից չեզոքություն դրաւորելու անհրաժեշտության մասին՝ նա կողմերին կոչ է արել դադարեցնել զինված հակամարտությունը և գտնել ընդհանուր լեզու. «Ես՝ վարդապետ Նիկոլով Պաչուաշվիլիս, ապրում եմ Ախալքալաք, Գումբուրդո, Կարս կոչվող թեմում: Իմ թեմում հայերը ճնշող մեծամասնություն են կազմում՝ ավելի քան 97%, ես ապրում եմ հայերի մեջ, շփում եմ նրանց հետ, ես հոգ եմ տանում նրանց մասին, սիրում եմ նրանց: Եվ, հետևաբար, այն, ինչ կատարվում է այժմ Հարաբաղում, ինձ համար շատ ցավոտ է: Սա բաց վերք է ոչ միայն աղրբեջանցիների ու հայերի, այլ նաև Վրաստանի, և, հուսով եմ, ամբողջ աշխարհի համար: Զավախքում, անհիշելի ժամանակներից, բոլոր հովիվները աղրբեջանցիներ են (հոգևորականը նկատի ունի Զավախքի լեռնային արտավայրերը վարձակալող անասնապահներին, ովքեր ամառներն այս վայրեր են գալիս Վրաստանի աղրբեջանաբնակ շրջաններից – Վ. Ա.), և երբեք հակամարտություն չի եղել աղրբեջանցի ու հայ բնակիչների միջև: Հետևաբար մենք, անձամբ ես, և վրացիները և վրացական պետությունը իրավունք չունենք որևէ կողմին սատարելու: Մենք պետք է ամեն ինչ անենք հաշտեցման համար: Որպես քրիստոնյա՝ ես ուզում եմ ձեզ հորդորել սիրել մարդուն և սիրել սեփական թշնամուն: Իր հայրենիքի պաշտպանը չպետք է վերածվի մարդասպանի, ես բոլորին կոչ եմ անում գտնել ընդհանուր լեզու և դադարեցնել ուազմական գործողությունները»¹²:

Վրաստանն իրանի «կարգավիճակում»

Ինչպես իրանի հյուսիսային շրջանների պարագայում, Վրաստանի՝ Աղրբեջանին սահմանակից վայրերը ևս «առնչվեցին» պատերազմին. Հոկտեմբերի 7-ին, գրեթե նույն ժամին Վրաստանի Արտակարգ իրավիճակների ծառայությունը հրժիուի ու անօդաչու թուչող սարքի մասին հաղորդագրություն է ստացել: Պարզվել է, որ Աղրբեջանի կողմից արձակված հրթիռն ընկել է Կախեթի նահանգի Ղվարելիի շրջանի (սահմանակից է ՌԴ-ին) Կուճատան

¹² Ախալքալաքի և Կումուրդոյի թեմի եպիսկոպոսը հայտարարություն է արել Հարաբաղում տիրող իրավիճակի մասին.– <https://jnews.ge/am/?p=48126>, դիտվել է 27. 10. 2020թ.:

գյուղի խաղողի այգում, իսկ կրկին աղբբեջանական անօդաչու թռչող սարքը ընկել է նույն մարզի Սագարեջոյի շրջանի՝ Աղբբեջանին սահմանամերձ Ուշաբնո գյուղում (գյուղի մոտ է գտնվում նաև Դավիթ Գարեջի հայտնի վանական համալիրը)¹³: Երկրի ներքին գործերի նախարարությունն անմիջապես հետաքննություն է սկսել:

«Տրանսպորտային ապաշխակման» քողի տակ Թուրքիան ու Ադրբեյջանն ամբողջացնում են Վրաստանով անցնող և ՀՀ-ն շրջափակող նախագծերը

Հայաստանի, Ռուսաստանի և Աղբքեջանի ղեկավարների՝ 2020 թ. նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարության Թ-րդ կետի (տարածաշրջանում տնտեսական և տրանսպորտային բոլոր կապերի ապաշրջափակում և ՀՀ-ի վրայով տրանսպորտային կապ՝ Աղբքեջանի արևմտյան շրջանների ու Նախիջևանի միջև)¹⁴ և 2021 թ. հունվարի 11-ին Մուսկվայում կրկին եռակողմ հայտարարության (նշյալ կետի իրականացման նպատակով փոխվարչապետների համատեղ նախագահությամբ եռակողմ աշխատանքային խումբ ստեղծելու մասին)¹⁵ համաձայն՝ Այսրկովկասում կտրուկ փոխվում է իրադրությունը: Մուսկվայի հանդիպումից հետո ոռուսական «Կոմմերսանց»-ը, անդրադառ-

¹⁴ Հայաստանի Հանրապետության վարչապետի, Ադրբեջանի Հանրապետության նախագահի և Ռուսաստանի Դաշնության նախագահի հայտարարությունը.—<https://www.primeminister.am/hy/press-release/item/2020/11/10/Announcement/>, դիտվել է 28. 01. 2020թ.:

¹⁵ Նիկոլ Փաշինյանի, Վարդիմիր Պուտինի և Իլհամ Ալիևի հանդիպման արդյունքներով ընդունվել է համատեղ հայտարարություն.- <https://www.Primeminst.am/hy/press-release/item/2021/01/11/Nikol-Pashinyan-Moscow-meeting-Announcement/>, դիտվել է 28. 01. 2020թ.:

նալով՝ արդյունքներին, հրապարակեց նոր տրանսպորտային հաղորդակցուղու՝ ստորև ներկայացվող քարտեզը:



Պատմագրանշանդական համբաւ 2021 № 1 Իստորико-ֆիլոլոգիական համբաւ

Քարտեզից պարզություն է, որ եռակողմ հայտարարության թրդ կետի առաջին նախադասությունը («Տարածաշրջանում տնտեսական և տրանսպորտային բոլոր կապերն ապաշրջափակվում են») տարածվում է միայն Երևան–Գուլֆա (Զուղա)–Հորադիք–Բաքու–Դերբենտ, Իգդիր–Գուլֆա (Զուղա)–Հորադիք–Բաքու–Դերբենտ երկաթուղային և ավտոմոբիլային, ինչպես նաև Իգդիր–Գուլֆա (Զուղա)–Հորադիք–Բաքու ավտոմոբիլային հաղորդակցուղիների վրա: Ի դեպ, Նախիջևանի Շարուր քաղաքի կայարանից մինչև Թուրքիայի Իգդիր քաղաք Երկաթուղի երթևէ չի անցել, և այն պլանավորվում է կառուցել առաջիկայում:

ՀՀ իշխանությունները, բնականաբար, «տրանսպորտային ապաշրջափակումը» ներկայացնում են որպես բարեկեցիկ կյանքի ու տնտեսական վերելքի գրավական՝ կամ թաքցնելով, կամ չհասկանալով «ապաշրջափակման» իրական նպատակներն ու կործանարար հետեւանքները:

Իհարկե, Աղրբեջանի և Հայաստանի հարավով հաղորդակցուղիների վերաբերյալ առաջնայնություն տալը բացատրվում է հայտարարության թրդ կետով նախատեսված դրույթներով, սակայն նույն կետի առաջին նախադասության ձևակերպումից («Տարածաշրջանում տնտեսական և տրանսպոր-

տային բոլոր կապերն ապաշրջափակվում են») հարց է առաջանում՝ ինչո՞ւ, ընդհանրապես, խոսք չի գնում, օրինակ, Երևան–Իջևան–Աղստե–Ելլախ–Բաքու–Դերբենդ երկաթուղու վերաբացման մասին։ Այս հաղորդակցուղու վերաբորձարկման ծախսերը, ի դեպ, անհամեմատ ավելի քիչ են, քանի որ վերաբորձարկման ենթակա Հրազդան–Դիլիջան–Իջևան–Ղազախ հատվածն անհամեմատ կարծ է և ավելի քիչ է վնասված (Աղբեջանի երկաթուղային քարտեզներում նշված է, որ երկաթուղու՝ Աղստե–Ղազախ–ՀՀ սահման հատվածը գործող է կամ էլեկտրաֆիկացված), քան հարավային ուղղության Հորադիդ–Ջուղա (Ջուղա) և Շարուր–Երևան հատվածները, որտեղ, տարբեր հաշվարկներով, անհրաժեշտ է շուրջ 400–500 մէն դոլար ներդրում։



Աղբեջանի երկաթուղային սխեման՝ 2018 թ. դրությամբ (ըստ աղբեջանական տեղեկագրերի):

Պարզորոշ է վերակառուցվող ու կառուցվող հաղորդակցուղիները «ապաշրջափակվում են» միայն այն ուղղություններով, որը բխում է թուրքիայի ու Աղբեջանի աշխարհաքաղաքական շահերից, և այստեղ տեղին կինքի նշել, որ վերաբացվող հաղորդակցուղիներով «փոխադրվելու են» ոչ թե բեռներ կամ մարդիկ, այլ թուրք–աղբեջանական մեծապետական շահերը։

Կանխատեսումները, որ Աղբեջանն ամենածծաղելի պատրվակներով խոչընդունելու է նշված հաղորդակցուղիով հայկական կողմի բեռնափոխադրումների իրականացմանը, իսկ հայ ուղևորները պարզապես խուսափելու են աղբեջանական կայարաններով անցնելով՝ մեկնել ՈՒ, միանգամայն փաս-

տարկված են: **Աղբբեջանի՝ եռակողմ հայտարարությունների ստորագրումից հետո Արցախի ու ՀՀ-ի հանդեպ ցուցաբերած ծայրահեղ թշնամական (նախկինում եղած) վարչապիծն ու քայլերը, ի. Ալիկի՝ ծաղրանքներով, սպառնալիքներով ու շանտաժներով լի ելույթները հազիվ թե այլ կերպ մեկնաբանվեն:**

Պատմությունը կրկնվում է ամենաճշգրիտ կերպով: Ի՞նչ նկատի ունենք: Թուրքիան Աղբբեջանի հետ ցամաքային հաղորդակցուղու միջոցով միանալու համար պայքարել է տասնամյակներ շարունակ: 1993 թվականից (Քարվաճառի ազատազրումից) ի վեր նա փակեց Գյումրի-Կարս երկաթուղին և ՀՀ-Թուրքիա սահմանը: Տասնամյակներ շարունակ փակ պահպելով այն և տնտեսական խոշոր վնաս պատճառելով ՀՀ-ին՝ փոխարենը խոշոր միջոցների ներդրմամբ կառուցվեց Հայաստանը շրջանցող Կարս-Ախալքալաք-Բաքու (ԿԱԲ) երկաթուղին (ի դեպ, այս երկաթուղու կառուցման մոլի ջատագովներից է եղել «Օրագիր» թերթի խմբագիր, ներկայումս ՀՀ վարչապետ Ն. Փաշինյանը, ով իր թերթի էջերում ժամանակին մեղադրել է ջավախահայությանը՝ ԿԱԲ երկաթուղային նախագծին դեմ դուրս գալու համար):¹⁶


27 տարի անց Քարվաճառը հանձնվեց Աղբբեջանին, սակայն Գյումրի-Կարս երկաթուղին չվերաբացվեց: Եվ համոզված կարելի է պնդել, որ այն երբեք չի վերաբացվի, իսկ ՀՀ-ն կշարունակի մնալ շրջափակման խորխորատներում, քանի որ Թուրքիայի իրական նպատակը ոչ այնքան Քարվաճառի հետ ստանալուն էր, այլ ՀՀ-ի շրջափակումը: Ավելին, Թուրքիային ու Աղբբեջանին հաջողվեց վերստին ևս մի ուղղությամբ շրջափակել Հայաստանին. Կարս-Գյումրի-Արմավիր-Երասխ-Շարուր-Նախիջևան երկաթգծի վերագործարկման փոխարեն շուտով կիսուցվի Իգդիր-Շարուր երկաթգիծը, և Թուրքիան, առանց ՀՀ-ից կախում ունենալու, ցամաքով կանցնի դեպի Աղբբեջան (Նախիջևան և Բաքու), իրան (Չուչիա կայարանից) ու Ռուսաստան (Բաքվից դեպի Ներքենտ): Մեղրիի հաստիքում ՀՀ-ն որևէ ազդեցություն չի կարող ունենալ Թուրք-աղբբեջանական հաղորդակցության վրա, քանի որ. 1. տրանսպորտային հաղորդակցության հակողությունն իրականացնում են ՌԴ Անվտանգության դաշնային ծառայության (ԱԴԾ) Սահմանապահ ծառայության մարմինները, 2. ի դեմս արևելյան հաստիքի ողջ անվտանգության համակարգի՝ ՀՀ-ն Աղբբեջանի ձեռքում պատանդ է հանձնել Արցախի բեկորները, Սյունիքի և ՀՀ արևելյան սահմանների կարևորագույն ռազմավարական այլ դիրքեր:

Շարուր (Նախիջևան)-Իգդիր երկաթուղին, որի կառուցման մասին 2012 թ. Հայտարարել էր նաև վարչապետ Ռ. Եղողանը¹⁷, Թուրքիան դիտարկում է Բաքու-Ախալքալաք-Կարս երկաթուղու շարունակությունը հանդիսացող կարս-Իգդիր-Նախիջևան (ԿիՆ) երկաթուղային խոշոր նախագծի մի մասը: ԿիՆ երկաթուղային նախագիծը քննարկվել է մշտապես՝ Կարս-Ախալքա-

¹⁶ «Օրագիր» (Երևան), № 12, հոկտեմբեր 8, 1998:

¹⁷ Турсия объявила о намерении построить железную дорогу в Азербайджан.-<https://www.rbc.ru/politics/12/11/2020/5fad07149a7947f689ccce79?fbclid=IwAR23QMcCQOLHue-7mwvrYdrvkMC9h37YRcrM4eGUJ28f7muKmc32ECYoMPQ>, դիտվել է 10. 01. 2021թ.:

լաք-Բաքու նախագծի իրականացմանը զուգահեռ: Թուրքիայի տրանսպորտի, նավագնացության և հաղորդակցության նախարար Ահմեդ Արալանը 2017 թ. հայտարարել էր¹⁸, որ Կիւ-ի միջոցով Թուրքիան դուրս կփառ ոչ միայն պարտկական շուկա, այլև կվապվի Պակստանի, Հնդկաստանի ու Չինաստանի հարավի հետ: 224 կմ երկարությամբ Կիւ երկաթուղու նախագծի վրա աշխատանքները, ըստ նույն նախարարի՝ 2018 թ. մեկ այլ հայտարարությամբ¹⁹, մեկնարկելու էին 2018 թ. վերջ-2019 թ. սկիզբ ժամանակահատվածում:



ՀՀ-ն շրջափակող թուրք-ադրբեջանական հաղորդակցուղիները ներկայացնող քարտեզ:

Միանգամայն սպասելի էր, որ, Թուրքիայի և Ադրբեյջանի համար նոր ու խիստ ցանկալի իրողությունների պայմաններում, հրատապ կարգով կրկին օրակարգ էր բերվելու Կիւ երկաթուղային նախագիծը. նոյեմբերի 9-10-ի եռակողմ հայտարարությունից տառացիորեն երկու օր անց՝ նոյեմբերի 12-ին, Թուրքիայի տրանսպորտի և ենթակառուցվածքների նախարար Աղիլ Քարահմայիլօղին հայտարարեց, որ Թուրքիան ծրագրում է երկաթուղի կառուցել դեպի Նախիջևան: Այս, վերջինիս խոսքերով, որոշվել է կառուցել տարածաշրջանում վերջին իրադարձություններից հետո²⁰:

¹⁸ Азербайджан, Иран и Турция обсуждают проект новой железной дороги.—<https://www.turantoday.com/2017/05/baku-tbilisi-kars-igdir-nakhichevan.html>, դիտվել է 12. 01. 2021 թ.:

¹⁹ Турция построит железную дорогу до границы с Азербайджаном.— <https://www.turantoday.com/2018/06/turkey-azerbaijan-railway.html>, դիտվել է 13. 01. 2021 թ.:

²⁰ Турция объявила о намерении построить железную дорогу в Азербайджан.—<https://www.rbc.ru/politics/12/11/2020/5fad07149a7947f689ccce79?fbclid=IwAR0XWzJLcOOGHgkPjDyQmC9BZGqMzvA>

Եղբակացություն

Զնայած Վրաստանի պատկան բարձրաստիճան պաշտոնյաների՝ չեղոքության մասին բազմաթիվ հայտարարություններին և վստահեցումներին, այդուհանդերձ, հավաստի փաստերի համաձայն՝ Վրաստանի օդային տարածքով դեպի Աղբյեջան զինտեխնիկայի մատակարարման գործընթացն ինտենսիվորեն շարունակվել է պատերազմի ողջ ընթացքում։ Զինամատակարարումն իրականացվել է կամ թուրքիայի և Աղբյեջանի՝ Վրաստանի հետ ունեցած ներքին պայմանավորվածությունների շրջանակներում, կամ ստիպողաբար, այն է Վրաստանի վրա ճնշումների գործադրման միջոցով։

Զնայած հրապարակված որոշ տեսանյութերին, այդուհանդերձ, թուրքիայի կողմից Վրաստանի ցամաքային ճանապարհով դեպի Աղբյեջան զինտեխնիկայի փոխադրման փաստերը չհաստատվեցին։ Կարծիք կա, որ Վրաստանը դա թույլ չի տվել՝ կանխելով ջավախահայության շրջանում հնարավոր ընդվզումները, ինչի դեպքում փիսրուն կայունությունը կարող էր վերաճել անգամ քաղաքացիական (հայ-աղբյեջանական) բախումների²¹։ Զնայած Հայաստանի Հանրապետության իշխանությունների կողմից տարիներով օտարված լինելու հանգամանքին, ինչպես նաև սեփական հողի վրա բազում ազգային-քաղաքական հիմնահարցերի առկայությանը, ջավախահայությունը, փաստորեն, թուրք-վրաց-աղբյեջանական «Հորիզոնական» առանցքի հակահայ գործողությունների գսամման գործում ունեցավ անառարկելի դեր։

Հպանցիկ հայացք նետելով Այսրկովկասի՝ արդեն գործող և նախանշված նոր ուղիներին՝ կարող ենք փաստել, որ Հրազդան-Դիլիջան-Իջևան-Ղազախ-Աղստև-Եվլախ-Բաքու և Գյումրի-Կարս երկաթուղիների չվերագործարկումը՝ մի կողմից, Կին նախագծի շուտափույթ իրականացումն ու նրա շարունակությունը հանդիսացող Նախիջևան-Իրան և Նախիջևան-Մեղրի-Հորադիշ-Բաքու-Դիլիջան-Եվլախ-Երկաթուղային հաղորդակցուղիների շուտափույթ վերակառուցումը՝ մյուս կողմից, հավելյալ անգամ շրջափակում են Հայաստանի Հանրապետությունը՝ վերջինիս վերածելով երկաթուղիներով Մծափակված յուրօրինակ կզղու։

«Տարածաշրջանում տնտեսական և տրանսպորտային բոլոր կապերի ապաշրջափակումը»՝ պայմանավորված վերջին իրողություններով, ոչ այլ ինչ է, քան Հայաստանի ու Արցախի մնացյալ բեկորների լիակատար շրջափակում։ Այս ամենի հետևանքով Հայաստանի Հանրապետությունը որպես պետություն վերջնականապես կդադարի Այսրկովկասում գործոն հանդիսանալուց, ձեռք կբերի «Վտարվածի» կամ «մեկուսացվածի» (ռուս.՝ «ИЗГОЙ»)

IwAR23QMcCQOLHue-7mwvrYdrvkMC9h37YRcrM4eGUJ28f7muKmc32ECY
oMPQ, դիտվել է 17. 01. 2021թ.:

²¹ Հիշենք, որ Վրաստանի իշխանությունները մեծ դժվարությամբ և ջավախահայության բողոքի հումկու ալիքի ներքո թույլ տվեցին մարդասիրական օժանդակության առաջին բեռնատարների երբ երկրից։ Նինոծմինդա-Բավրա սահմանային անցակետի մոտ հավաքվել էր շուրջ 3.000–5.000 ջավախահայ, ինչն աննախադեպ էր։ Վրաստանի իշխանությունները գիտակցեցին, որ լարված այդ օրերին յուրաքանչյուր քայլ կարող էր անկառավարելի իրադրության ստեղծման տեղիք տալ։

Կարգավիճակ, և աշխարհը կկորցնի իր բոլոր հետաքրքրությունները Հայաստանի հանդեպ:

Վահե Սարգսյան – պ. գ. թ., ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի ավագուռքի և հայ գաղթօջախների պատմության բաժնի գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ Վրաստանի հայության, մասնավորապես՝ շավախառ հայության խնդիրները, Հայաստան-Վրաստան հարաբերություններում առկա բազմաբնույթ հիմնահարցերը, Վրաստանի տեղաբնիկ ժողովուրդների ու ազգային փոքրամասնությունների խնդիրները: Հեղինակ է 1 մենագրության և ավելի քան 20 հոդվածի: Vsargsyan83@gmail.com

REFERENCES

- Azerbaydzhan, Iran i Turtsiya obsuzhdayut proekt novoy zheleznay dorogi. – <https://www.turantoday.com/2017/05/baku-tbilisi-kars-igdir-nakhichevan.html> (In Russian).
- Akhalkalaki yev Kumurdoyi temi episkopose haytararutyun e arel Gharabaghum tirogh iravichaki masin. – <https://jnews.ge/am/?p=48126> (In Armenian).
- Deputaty Parlamenta Grizii iz chisla etnicheskikh azerbaydzhantsev vyrazili podderzhku Baku na fone konflikta v NK. – <https://civil.ge/ru/archives/371330> (In Russian).
- Gakhariya priglasil predstaviteley Armenii i Azerbaydzhana na peregovory v Tbilisi. – <https://www.ekhokavkaza.com/a/30866383.html> (In Russian).
- Gruziya podderzhivaet mirnoe yregulirovanie konflikta i prizyvaet storony k prekrashcheniyu ognya, zayavil glava parlamentskogo komiteta. – <https://sputnik-georgia.ru/politics/20200929/249580859/Deputat-Gruziya-otkazala-Armenii-i-Azerbaydzhani-v-tranzite-oruzhiya.html> (In Russian).
- Gruziya oprovergla slukhi o dvizhenii cherez stranu v Azerbaydzhhan boevikov. – <https://www.interfax.ru/world/729806> (In Russian).
- Gruziya zapretila transportirovku gruzov voennogo naznacheniya v Armeniyu i Azerbaydzhhan. – <https://tass.ru/mezhdunarodnaya-panorama/9702715> (In Russian).
- Hayastani Hanrapetutyan varchapeti, Adrbejani Hanrapetutyan nakhagahi yev Rusastani Dashnutyen nakhagahi haytararutyune. – <https://www.primeminister.am/hy/press-release/item/2020/11/10/Announcement/> (In Armenian).
- Inch kareli e Adrbejanin, chi kareli Hayastanin?. Vrastani yerkinke pak e miayn Hayastani hamar. – <http://www.yerkir.am/news/view/217681.html?fbclid=IwAR0ciQ1CbjXVomUeRnqGhkUYdvd3rFECzb0kmrlnIRCfTiXarf0emnVOeB8> (In Armenian).
- Lernayin Gharabaghe Adrbejani inknishkhan taradsk e, yev voreve ban chi pokhi ayd hangamanke. Sahakashvili. – <https://www.yerkir.am/news/view/214587.html> (In Armenian).
- Nikol Pashinyani, Vladimir Putine yev Ilham Aliyevi handipman ardyunknerov endunvel e hamategh haytararutyun. – <https://www.Primemi nister.am/hy/press-release/item/2021/01/11/Nikol-Pashinyan-Moscow-meeting-Announcement/> (In Armenian).
- “Oragir” (Yerevan), № 12, hoktember 8, 1998 (In Armenian).
- Sargsyan V. “Transportayin apashrjapakman” araspele kam Ayrsrkovkasits HH-i liakatar vtarume. – “Droshak” (Yerevan), 2021, petrvar, № 2 (In Armenian).

Turtsiya ob''avila o namerenii postroit' zheleznyuyu dorogu v Azerbaydzhane. <https://www.rbc.ru/politics/12/11/2020/5fad07149a7947f689ccce79?fbclid=IwAR23QMccCQOLHue-7mwvrYdrvkMC9h37YRcrM4eGUJ28f7muKmc32ECYoMPQ> (In Russian).

Turtsiya postroit zheleznyu dorogu do granitsy s Azerbaydzhonom.— <https://www.turantoday.com/2018/06/turkey-azerbaijan-railway.html> (In Russian).

V Tbilisi oprovergli prichastnost' k tranzitu voyennykh gruzov v Armeniyu i Azerbaydzhan. – <https://tass.ru/mezhdunarodnaya-panorama/9702715> (In Russian).

“სრულიად სამარცხვინო ფაქტია” – შეფასება მოქმედი დეკლარაციების ღია მხარდაჭერაზე.– https://publika.ge/sruliad-samarckhvin-o-faqta-shefaseba-moqmedi-deputatebis-ghia-mkhardacheraze/?fbclid=IwAR0-B0728laoIQpvnDsO_GCkeP0la_Ld_0YbRwiwX9TISOoNewaEFzx9p0YGc
ულტრანაციონალისტური „ქართული მარში” აზერბაიჯანს ემუქრება და ულტიმატუმს უყენებს.– <https://www.radiotavisupleba.ge/a/30884797.html>

ПОСЛЕДНЯЯ АРЦАХСКАЯ ВОЙНА, ГРУЗИЯ, НОВЫЕ ТРАНЗИТНЫЕ ПРОЕКТЫ И ПРОЦЕСС БЛОКАДЫ АРМЕНИИ

ВАЭ САРКИСЯН

Резюме

Ключевые слова: Грузия, Арцахская война, нейтралитет, воздушное пространство, грузовые самолеты, трехстороннее заявление, транспортное разблокирование, коммуникации, железная дорога Карс–Игдир–Нахиджеван, блокада, турецко-азербайджанские великореческие интересы.

В течение последней Арцахской войны, которая длилась с 27 сентября по 9 ноября 2020 г., официальные круги Грузии делали заявления о сохранении нейтралитета. Отрицалась также достоверная информация, что по воздушному пространству Грузии в Азербайджан перевозятся не только турецкая и израильская военная техника, но и террористы из Сирии. Тем не менее, на разных площадках упорно говорилось об азербайджанской компании «Silk Way West Airlines», имеющей разрешение на военные перевозки, грузовыми самолетами которой в Азербайджан регулярно поставлялась военная техника (в своих заявлениях грузинские официальные лица это называли «гуманитарными» или «гражданскими» полетами). А 22 октября в небе Грузии был зафиксирован грузовой самолет BBC Турции TUAF512 (Airbus A400M-180), который летел в Азербайджан. По этому поводу никакого официального объяснения от Тбилиси не было.

9-й пункт заявления руководителей Армении, России и Азербайджана от 9 ноября 2020 г. (о разблокировании всех экономических и транспортных связей в регионе и создании через Армению транспортного коридора, связывающего западные районы Азербайджана с Нахиджеваном) и трех-

стороннее заявление от 11 января 2021 г. резко меняют ситуацию в Закавказье. «Транспортное разблокирование» не подразумевает перезапуск железных дорог Раздан–Дилижан–Иджеван–Казах–Агств–Евлах–Баку и Гюмри–Карс, вместо этого Турция и Азербайджан провернули крупный железнодорожный проект Карс–Игдир–Нахиджеван (КИН), который будет продолжением обходящей Армению железной дороги Баку–Ахалкалак–Карс. Запуск КИН и поспешное восстановление железнодорожных коммуникаций Нахиджеван–Иран и Нахиджеван–Мегри–Горадиз–Баку–Дербент довершают блокаду Армении со стороны Турции и Азербайджана.

Ваэ Саркисян – к. и. н., научный сотрудник отдела истории диаспоры и армянских колоний Института истории НАН РА. Научные интересы: проблемы армянства Грузии, в частности, Джавахка, разные вопросы отношений Армения–Грузия, проблемы коренных народов и национальных меньшинств Грузии. Автор 1 монографии и более 20 статей.

Vsargsyan83@gmail.com

THE LAST ARTSAKH WAR, GEORGIA, NEW TRANSIT PROJECTS AND THE END OF THE RA BLOCKADE PROCESS

VAHE SARGSYAN

S u m m a r y

Key words: Georgia, Artsakh war, neutrality, airspace, cargo planes, tripartite declaration, unblocking of transport, communications, Kars-Igdir-Nakhichevan railway, blockade, Turkish-Azerbaijani great-power interests.

Throughout the Artsakh war, which lasted from September 27 to November 9, 2020, Georgian official circles made statements about maintaining neutrality. The reliable tidings that not only Turkish and Israeli military equipment, but also terrorist groups from Syria were being transported to Azerbaijan through Georgian airspace were also denied. Nevertheless, various platforms persistently talked about the continuity of the transportation of military equipment to Azerbaijan by cargo planes of the Azerbaijani “Silk Way West Airlines” company, which is authorized to transport military cargo (which Georgian officials called “humanitarian” or “civilian” flights). And on October 22, the TUAF512 (Airbus A400M-180) military cargo plane belonging to the Turkish Air Force was clearly seen in the Georgian airspace flying from Azerbaijan to Turkey. Tbilisi did not make any official comment on the matter.

Point 9 of the statement of the leaders of the Republic of Armenia, Russia and Azerbaijan as of November 9, 2020 (unblocking of all economic and transport links in the region and transport corridor through the Republic of

Armenia connecting the western regions of Azerbaijan and Nakhichevan) and the trilateral declaration of January 11, 2021, drastically change the situation in the Cis-Caucasus. Under the guise of “unblocking of transport” there is no talk of reopening the Hrazdan–Dilijan–Ijevan–Kazakh–Aghstev–Yevlakh–Baku and Gyumri–Kars railways, instead Turkey and Azerbaijan are implementing the major Kars–Igdir–Nakhichan (KIN) railway project in full swing which is a continuation of the Baku–Akhalkalaki–Kars railway blocking the RA. The launch of KIN and the speedy reconstruction of the Nakhichevan–Iran and Nakhichevan–Meghri–Horadiz–Baku–Derbent railway lines complete the process of blockade of the RA by Turkey and Azerbaijan.

Vahe Sargsyan – Candidate of Sciences in History, Researcher at the Department of the History of Diaspora and Armenian Colonies of the NAS RA Institute of History. Scientific interests: the problems of Armenians of Georgia, particularly Javakhk, various issues on relations between Armenia-Georgia, issues of indigenous peoples and national minorities of Georgia. Author of 1 monograph and over 20 articles. Vsargsyan83@gmail.com

ԺԱՄԱՆԱԿԻ ՀԱՅՏԻ ԴԵՍՔԵՐԸ ԽՐԻՍՏԱՆ ՀԱՅՐԻԿԻ ՄԱՍԻՆ*

ՊԵՏՐՈՍ ԴԵՄԻՐՃՅԱՆ

Բանալի բառեր՝ Խրիմյան Հայրիկ, Եղիա Տեմիրճիպաշյան, Հայր Ղևոնդ Ալիշան, Մինսա Զերազ, Կոմիտաս, Հովհ. Թումանյան, պատրիարք, կաթողիկոս, «Սիրաք եւ Սամուչէ», «Դրախտի ընտանիք», «Վամգոյժ», «Հայգոյժ»:

Նախաբան

Ազգային-հասարակական, հոգեորմշակութային նշանավոր գործիչ, 1893 թից Ամենայն Հայոց կաթողիկոս Խրիմյան Հայրիկը (Մկրտիչ Ա. Վանեցի, 1820, Վան-1907, Վաղարշապատ) իր գործունեության հենց սկզբից անբասիր վարքով, ազգասիրական ու հայրենասիրական գործերով մեծ հեղինակություն է ձեռք բերել ժողովրդի մեջ: Նրա մասին դրվատական ու, պարզապես, հիացական շատ խոսքեր են գրել բազմաթիվ հայտնի դեմքեր, հիշատակել Հայրիկի հետ կապված հետաքրքրական դեպքեր և պատմություններ¹: Դեռևս 1874 թվականին՝ Հինգ տարվա կ. Պոլսո պատրիարքություննից հետո, թուրքական կառավարության և որոշ հայ ընդդիմադիրների հարուցած խոշընդոտների հետևանքով, նա հրաժարվել էր այդ բարձր պաշտոնից՝ ժողովրդին ավելի մոտիկից, գործնականում ծառայելու մտադրությամբ: Խրիմյան Հայրիկին նվիրած «Մշակ» բանաստեղծության մեջ, հայրենի հողի մշակի խորհրդանշական կերպարով Շաֆֆին ակնարկում էր նաև նրան հետեւյալ տողերով:

... Եվ նրա ազնիվ ճգանց փոխարեն
Տգետը փշյա պսակ է հյուսում,
Իսկ նա լի հույսերով յուր սերմն է ցանում
Եվ ապագայում հունձքի է սպասում²:

Իր վերոհիշյալ մտապրության մասին վկայում է նաև Խրիմյան Հայրիկը: «Պիտի դառնամ հայրենիքս, — մի նամակում գրել է նա, — լուեմ, բերանս հողին տամ, թուղթ ու գրիչ սիրեմ. վասն զի փորձառությամբ հասկցա, որ այս աշխարհին մեջ մարդ մեծ պաշտոնի դլուխ անցնելով կարող չէ այնպես մեծագործել, ինչպես յուր և ազգին փափագն է»³: Հատկանշական է, որ Խրիմյանի մասին նման միտք է հայտնել նաև ժամանակի հայտնի դեմ-

* Ներկայացվել է 22. I. 2021 թ., գրախոսվել է 02. II. 2021 թ., ընդունվել է տպագրության 30. II. 2021 թ.:

¹ Տե՛ս Ալիշանը ժամանակակիցների հուշերում, Երևան, 1969, 260 էջ:

² Ռաֆֆի. Երկերի ժողովածու տասներկու հատորով, հ. 1, Երևան, 1983, էջ 189:

³ Խը ի մ յ ա ն չ ա յ ր ի կ. Երկեր, Երևան, 1992, էջ 7:

Քերից մեկը՝ Շուշիում ծնված խմբագիր, հրատարակիչ, հասարակական գործիչ Տիգրան Նազարյանը: Համոզված լինելով, որ Խորիմյանն ու Ալիշանը հավասարագոր մեծություններ են ազգի համար ունեցած իրենց նշանակությամբ՝ նա գրում է, թե «... ճակատագիրը խլեց Խորիմյան Հայրիկից նրա խակական կոչումը: Բերեցին ՎեհԱՓԱՆ տիտղոսը տվին, Վեհափառի չորս պատի մեջ շղթայեցին, պահանջելով, որ Ջինջ եթերում սավառնող ԱՐԾԻՎԸ թառ լինի Աթոռի վրա»⁴: Այդուհանդեռձ, 1876 թ. Վանի մեծ հրդեհի ազդեցության տակ գրած «Վանգոյժ», ապա նաև 1877–1878 թթ. ոռություրքական պատերազմի աղետալի հետևանքների արձագանքը հանդիսացրող «Հայգոյժ» արձակ քնարերգական գործերի համար նա իրավամբ հոչակվել էր «ԺԹ գարու Խորենացին»⁵: Ուշագրավ է նաև մեծն Կոմիտասի վկայությամբ մեզ հասած պատմություններից մեկը. «Գերմանացի մի հնախույզ հետաքրքրվում է Հնագիտական արժեք ունեցող իրերով: Երբ Էջմիածնում նրան ներկայացնում են Խորիմյանին, վերջինս դիմում է թարգմանչին.

— Հսեք, որ ես թանկագին հնություն մը ունիմ. քանի՞ տարվան կենթադրե:

- Հինգերորդ դարի, — փորձում է գուշակել հնագետը:
- Անկեց ալ հին, — հուշում է կաթողիկոսը:
- Քրիստոսի ժամանակվա:
- Անկեց ալ հին:

Հնախույզի աչքերը վառվում են հետաքրքրությունից, որ աստիճանաբար փոխվում է ոգևորության.

— Տեսնեմ, Վեհափառ, ինչ է այդ թանկագին հնությունը:

— Իմ ազգս է, — կշտամբող շեշտով պատամխանում է Խորիմյան Հայրիկը, — Քրիստոսեն ալ հին, Մովսեսեն ալ. իմ թշվառ ազգը: Անտեսած այս թանկագին հնությունը հին քար մը կամ առարկա մը փնտրելու կելլեք»⁶:

Զափազանց ուշագրավ է նաև Կոմիտասի աշակերտներից Աղավնի Մեսրոպյանի հուշային մի դրվագ՝ հայոց երեք մեծերի հոգեմտավոր կապերի տեսանկյունից: «1907 թվի գարնան, երբ առաջին անգամ Փարիզի հայոց առաջնորդարանը գացինք, — պատմում է նա, — այնտեղ Կոմիտասի առանձնասենյակին պատին տեսանք Խաչատուր Աբովյանի մեծապեր լուսանկարը: ... Այդ օրերեն մեկը, Աբովյանի լուսանկարով հետաքրքրվող հյուրերուն Կոմիտաս հետևյալը ըսավ. «Այս Խաչատուր Աբովյանի լուսանկարը իմ ամենասիրած իրս է. իմ էության հետ մաս կազմելով ... Մոտ կամ հեռու՝ որ ճամփորդեմ՝ հետո կտանիմ զայն: Այս թանկագին նվեր-Հիշատակը ինձ տվավ Խորիմյան Հայրիկը՝ իր կաթողիկոսության առաջին օրերուն»⁷:

Համազգային մտածողության տեր գործիչը

Խորիմյան Հայրիկը համազգային մտածողության տեր գործիչ էր: Նրա համար ամենից կարևորն աշխարհասփյուռ հայության համախմբումն ու

⁴ Ալիշանը ժամանակակիցների հուշերում, էջ 163:

⁵ Խը ի մ յ ա ն Հ ա յ ր ի կ. նշվ. աշխ., էջ 8:

⁶ Նույն տեղում, էջ 12:

⁷ Ժամանակակիցները Կոմիտասի մասին, Երևան, 1960, էջ 236:

միասնականությունն էր՝ հանուն հայրենի ժողովրդի և հայրենիքի առջև ծառացած բարդ ու դժվարին խնդիրների լուծման։ Ահա թե ինչու, ամեն առիթով նա հրավեր էր կարդում հայրենիքը լքած բոլոր կարող ուժերին, համոզում, բարոյապես շահագրգոռում էր վերադառնալ՝ միասնաբար շենացնելու Հայոց տունը։ Մի որոշ ժամանակ Փարիզ տեղափոխված և մեկուսի կյանք վարող անվանի իմաստասեր ու բանաստեղծ Խաչատուր Միասքյանին գրած նամակում նա նշում էր «Այդ հրաշալիք մի է Փարիզի դրախտին մէջ այդպէս ճգնաւորական կեանք վարել», բայց նաև հորդորում էր վերադառնալ հայրենիք՝ վատահեցնելով, որ անհիմն են նրա կասկածները, «թե Հայր տակաւին անսիրող է իմաստութեան»։ «Սիրեմ զքեզ, վերցո՛ւր այդ կասկածը,՝ գրում է նա, – … Խրիմեան Հայրիկ իւր կերած հացէն քեզ նման իմաստասիրաց բաժին կը հանէ. նա սովոր է պատուել իմաստութիւն։

Չեմ մոռնար, կը յիշեմ տակաւին, դու Ծաղկոցաձորի սովորական երկասիրող մշակն ես։ Ես ալ քեզ նման սիրահար եմ այդ Անւոյ պարտիզին։ Արի՛, ե՛կ որ միասին մշակենք մեր հայրենի պարտէզ։ Քեզ նման ե՛ս եւս խմբագիր եմ, քան թէ Պատրիարք»⁸։

Երբ 1887 թ. հուլիսի 27-ին Զեյթունում բռնկված հրդեհի ճարակ դարձավ 1.000 տուն՝ անապաստան թողնելով 8000 զեյթունցիների, սեպտեմբերի 12-ին Հայրիկը նամակ հղեց նաև հեռավոր Սանկտ Պետերբուրգի նորաբաց «Արաքս» հանդեսի խմբագիր Սեմյոն Գուկամիրյանցին։ «Ուրախ եմ շատ որ ձեռնարկած էք մի թերթ հրատարակել և անունը «Երասմ» մկրտած էք։ Մ՛Ն, հայու տարագիր որդիքներ. Նեվա գետէն Երասմի կ'յիշեն։ Կ'օրհնեմ ձեր այդ ձեռնարկ որ յաջողիք արդիւնաշատ գործել։ … Աշխատի՛ր ուրեմն դու ևս քո անձնութրութեանդ պարտք կատարել։ «Երասմիդ» գետով ջուր հասուր ջուր, որ մաղենք Զէյթունին կրակ և վերատին կանաչեն Զէյթունին խանձողած մարդասունկ անտառներ»⁹ (ընդգծումը մերն է. – Պ. Դ.)։

Հովհ. Թումանյանը, պատմելով Խրիմյան Հայրիկի հետ Թիֆլիսում հաճախակի հանդիպումներից մեկում նրանից ստացած իր տպավորությունների մասին, վկայում է, որ նա «… շատ էր սիրում ուժ<անավոր> գրելը և իրեն նշանավոր բանաստեղծ էր համարում։ – Դիշերները քունս չի տաներ, – ասում էր, – սենյակում կշրջեմ, կծինեմ ու կդրեմ»։ Մի օր մտնելով Թիֆլիսի առաջնորդարան՝ տեսնում է այնտեղ հավաքված մի խումբ խնդիրատուների։ Ամեն մեկը՝ ծեր թե մանուկ, մի-մի խնդիրք ուներ սիրելի Հայրիկին։ Եվ վերջինս, համբերատար լսելով բոլորին, կարգադրում է լուծել նրանց խնդիրները՝ «Եվ այսպես ամբողջ օրը», զարմանքով արձանագրում է բանաստեղծը¹⁰։ Մեկ ուրիշ մանրապատումում 1896-ի կոտորածից մազապուր, Սասունի կողմերից մի խումբ փախատականների հետ էջմիածին հասած Ա. Գյուղի ծերունի տեր Սարգսի՝ քսան հոգանոց իր գերդաստանի գոհվելու մասին գույժին Խրիմյանը պատասխանում է. «Դու քսան որդի ես կորցրել, իսկ ես քսան հազար, … այդ էլ քսան՝ եղավ քսան հազար ու քսան … Ո՞ւմն է շատ, տեր Սարգս» … Եվ երբ քահանան ցնցվում է և լուսմ, Հայ-

⁸ Տե՛ս Թե ոդիկ. Ամէնուն տարեցոյցը, կ. Պոլիս, 1916–1922, էջ 14–15։

⁹ «Արաքս» (Ս. Պետերբուրգ), 1887, գիրք Ա, էջ 145–146։

¹⁰ Հովհ. Թումանյան. Երկերի լիակատար ժողովածու 10 հատորով, հ. 5, Երևան, 1994, էջ 71–74։

րիկն առաջարկում է մոտենալ իրեն, աջը դնել գլխին և օրհնել, որպեսզի այդ մեծ վշտին դիմանա: «Ասավ ու գլուխը խոնարհեց, – գրում է Թումանյանը: – Քահանան շտափեց առաջ, աջը դրավ իր Հայրապետի գլխին, սկսակ աղոթք մըմնջալ ու աչքերը լցվեցին արտասուքով ... Նա օրհնում էր հայոց կաթողիկոսին ... Նրա առջև խոնարհած էր հայոց Հայրիկը ...»¹¹:

Խրիմյանի «Երկեր»-ի կազմող և առաջաբանի հեղինակներ Ա. Մաղոյանն ու Հ. Պետրոսյանը իրավացիորեն նշում են, որ պաշտոնյաների և մտավորականության ուշադրությունը «ղեալի երկիր» ուղղելու Սրբազն Հայրիկի ջանադիր գործելակերպը հող նախապատրաստեց «հասարակական-դրական այն շարժման համար, որ 90-ական թվականներին հայտնի դարձավ «գալառական գրականություն» հորջորջումով և փոքրինչ ավելի ուշ ձևավորվեց իբրև գրական հոսանք»¹²: Հակոբ Օշականը ևս հավաստում է, «թէ իր աշակերտ Արուանձտեանցով, իրեն գործակից, իր իտեալին հաւատարիմ արուեստագէտներու որոշ խումբի մը կողմէ հրապարակ նետուած դաւառական գրականութիւն վարդապետութեան իբր թելադրիչ, այս մարդը ծառայում է հայոց գրականութեան՝ դարձյալ դուրս է տարակոյած»¹³:

Խրիմյան – Ալիշան փոխհարաբերությունը

Վերը շարադրվածի համատեքստում կարեսը է անդրադառնալ նաև Խրիմյան–Ալիշան փոխհարաբերությանը: Խրիմյան Հայրիկը բարձր էր գնահատում «Միխիթարյան գրավաստակ Հայրերի» ծառայությունները: Նա առանձնակի սիրով էր կապված իր «ծննդակից և սննդակից» Հայր Ղեռնդ Ալիշանի հետ, ու այդ վերաբերմունքը փոխադարձ էր: Ազգային գործիչ Միքայել Զալյանը «Միխիթարյան մենաստանում» վերնագրված իր տպավորություններում վկայաբերում է արդեն գրեթե ութսունամյա Ալիշանի հետ հանդիպման հետևյալ դրվագը:

«– Յոթանասունինն տարիս լրացավ, «Զեր» Խրիմյան ինձնից հարյուր օրով մեծ է, – ասաց նա հմուտ հնագետի ճշտովթյամբ:

– Ինչո՞ւ «մեր», և ոչ թե «ձեր», – նկատեցի ես:

– Ինչպես թե «մեր»:

– Զէ՞՞ որ նա էլ տաճկաստանցի է:

Այո՛, ճշշտ է, – պատասխանեց նա ծիծաղելով»¹⁴:

Վենետիկի Միխիթարյանների մոտ ուսում առած Արքիար Արքիարյանը համոզված էր, որ «... երկու եկեղեցականք կան, որոց գեմքը նայելով երբեք հայ մը չը կրնար հագենապ՝ Խրիմյան և Ալիշան»¹⁵ (ընդգծումը մերն է. – Պ. Դ.): Իսկ Տիգրան Նազարյանը յուրահասուկ համեմատական է անցկացնում հայ ազգի այդ երկու հսկաների միջև. «Եթե համայն հայության մեջ անխտիր բոլոր խավերում անկետայի ենթարկվեր թե ո՞վ է ժմ՛ դարու ամենախոշոր, ամենահեղինակավոր, ամենասիրելի, պաշտելի մարդը, որի խոսքը,

¹¹ Նույն տեղում, էջ 69–71:

¹² Խրիմյան Հայրիկ. նշվ. աշխ., էջ 15:

¹³ Յ. Օշական. Համապատկեր արեւմտահայ գրականութեան, Անթիլիաս, 1956, էջ 309:

¹⁴ Ալիշանը ժամանակակիցների հուշերում, էջ 83:

¹⁵ Նույն տեղում, էջ 9:

կամքը, տեսչանքը ու մտորումը համայն հայության բաղձանքի ամփոփումը իր սրտում-հոգում ամբարած լիներ, – գրում է նա, – անշուշտ, միաձայն երկու մարդի վրա կանգ կառնեին՝ ԽՄԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿ ... և ՀԱՅՐ ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆ: Իսկ սրանցից որի՞ն կտար առավելությունը, միաձայն ձեռնպահ կմնար և չէր կարող ձեռքը խղճին ասել, Խրիմյան Հայրի՞կ թե Հայր Ղեռնդ Ալիշան՝ մի-մի պայծառ, կենարար, բուժիչ ու սննդարար ճառագայթներ եղած են, համայն հայության սիրու-հոգի-միտք-զգացում դաստիարակող, կոռող կոփողներ: Գրագետը կարդացել է սրանց հրաբորքոք երկերը, անգրագետը լսել է աշուղի տաղերը, Խրիմյան Հայրիկին ու Հայր Ղեռնդ Ալիշանին ձոնված, և հավատում-պաշտում է նրանց իբրև իր հայրենիքի նախախնամություն»¹⁶:

Ինչ մնում է Հայր Ղեռնդ Ալիշանի նկատմամբ Խրիմյան Հայրիկի վերաբերմունքին, ապա դա լավագույնս արտացոլված է բանասեր, պատմաբան, խմբագիր Հովհաննես Թորոսյանի հուշերի մի դրվագում, որտեղ պատմվում է Թիֆլիսում 1901 թ. նոյեմբերին վախճանված, «Հավատով կաթողիկ» Հայր Ղ. Ալիշանի հոգեհանգստի կարգը կատարելու հարցի շուրջ առաջադիմականների («Աղբյուր-Տարագ», «Մշակ») և պահպանողականների («Նոր-Դար») կատաղի պայքարի ու երկարատև վիճաբանությունների մասին: Հիշյալ ժողովածուն կազմող գրականագետ Սուլեն Շտիլյանը ծանոթագրում է, որ «կոնսիստորիայի նախանդամ և ս. Սարգիս Եկեղեցու վանահայր Գարեգին Հովսեփիյանը ոչ միայն արգելում է հոգեհանգիստը կազմակերպելու համար տարփող նախապատրաստական աշխատանքները, այլև կարգադրում, որ տվյալ օրվա պատարագի ժամանակ ննջեցյալների անունները հիշատակելիս Ալիշանի անունը չհիշատակվի»: Թիֆլիսում հրավիրված մշակոյթի գործիչների ընդհանուր ժողովում որոշվում է Հարցը հասցնել կաթողիկոս Խրիմյանին, որն էլ կայացնում է վերջնական որոշումը: «Իրեն հատուկ ուղղակիությամբ Խրիմյանը, իրազբությանը ծանոթանալուց հետո, կարգադրում է Հայկական բոլոր եկեղեցիներում հոգեհանգիստ կատարել Ալիշանի հիշատակին, – գրում է Ս. Շտիլյանը, – պատճառաբանելով, որ հավատով կաթողիկ լինելը չի կարող արգելք լինել մենի համար, որն ամբողջ Հայ ժողովրդի նահապետն է»¹⁷ (ընդգծումը մերն է. – Պ. Դ.):

Խրիմյան Հայրիկը Եղիա Տեմիրճիպաշյանի գնահատմամբ

Խրիմյան Հայրիկի հետ ժամանակի մեկ այլ ինքնատիպ դեմքի՝ գրող, հրապարակագիր, իմաստասեր, մանկավարդ ու խմբագիր Եղիա Տեմիրճիպաշյանի առաջին անմիջական շփումները տեղի են ունեցել դեռ XIX դարի 60-ական թթ. սկզբներին՝ Հասպյուղի (Կ. Պոլիս) Ս. Ներսիսյան վարժարանում ուսանելու տարիներին: Ի դեպ, վարժարանում նրա դասընկերներն էին հետագայում հանրահայտ ազգային-մտավորական գործիչներ Ռեմեսոս Պերպերյանը, Մինսս Զերազը և ուրիշներ: Հիշատակելի է, օրինակ, ժողովրդի հետ նաև նրանց մեծ ոգեստությունը 1869 թ. Խրիմյան Արքազանի՝ Կ. Պոլսո պատրիարք ընտրվելու կապակցությամբ: Մ. Զերազը նույնիսկ հինգ և

¹⁶ Նույն տեղում, էջ 163:

¹⁷ Նույն տեղում, էջ 244:

Կրկներգերից բաղկացած ծավալուն բանաստեղծություն էր գրել՝ նվիրված նորընծա պատրիարքին՝ «Հայրենանուէրն Խրիմեան. Պատրիարք Պոլսոյ ՈՂջոՅն» վերնագրով.

... Քաղցր Աստուծոյ մ'անո՛յշ պատգամ,
Դո՛ւ, խաչակիր խաղաղութեան,
Շանթից փոխան՝ մեղր հոսէ՛ մեզ.
Հեղութեամբդ, ո՛հ, բարձրացո՛ զ'մեզ ...
Եւ, մութի մէջ, Հայաստանցին
Թէ կորնչի հեծեծագին՝
Հասցո՛ւր անոր՝ ջահ լուսաւոր.
Չ'ե՞ս մի լուսոյ Դու վե՛հ զինուոր ...¹⁸

Կ. Պոլսի «Մասիս» օրաթերթը տեղեկացնում էր նաև, որ «Խասպիւղի Նուպար-Շահնազարեան վարժարանի աշակերտ արգոյ Պ. Մինաս Զարագլեան պատանւոյն յօրինած եւ լրագրոյս 924 թուոյն մէջ հրատարակուած գեղեցիկ երգը՝ արգոյ Պ. Տիգրան Չուխանեանի աշխատասիրութեամբ եղանակաւորւած եւ ձայնագրութեամբ տպուած է Ամեն. Խրիմեան սրբազանի ուկեզօծ պատկերովը հանդերձ»¹⁹:

1885 թվականին «Հիւանդութիւնա» գրության մեջ՝ իր բուժող բժիշկներին՝ Սիմոն Սեղբոյսյանին ու Տիգրան Գաբամաճյանին երախտագիտության խոսքեր ուղղելուց հետո, Եղիա Տեմիրճիպաշյանն ավելացնում է՝ «Հուսկ ուրեմն յաւէտ շնորհապարտ պիտի մնամ այն անձանց՝ ոյց գլուխն ամենասիրելի Խրիմեան Հայրիկն՝ որք անձամբ կամ գրով սփոփեցին զիս հիւանդութեանս միջոցին²⁰ (ընդգծումը մերն է. – Պ. Դ.): Նույն թվականին Եղիան մեծ ափսոսանքով է նշում, որ «տկարութեան պատճառաւ» չի կարողացել մասնակցել Հասգյուղի Ս. Ներսիսյան վարժարանի («իւր բարոյական որորանին», ուր «երբեմն ուսանող եւ այժմ ուսուցիչ» էր ինքը) Սրբոց Թարգմանչաց և իր պաշտպան սուրբերին՝ Ներսես Շնորհալուն և Ներսես Լամբրոնացուն նվիրված «մեծագոյն տօնին», քանզի Կ. Պոլսի պատրիարք Ներսես Վարժապետյանի մահից հետո, այդ տարի Խրիմյան Սրբազան Հայրիկին էին հրավիրել պատարագելու, օրհնելու և ղեկավարելու հանդիսությունները։ Նա իր «Շարժում»-ի մեջ մեծ պատկառանքով է արձանագրում, որ «Հայրիկն օրհնեց եւ խրախուսեց ըզ Ներսիսեան սանունա։ Հետեւեալ օրն աղբարեհաճեցաւ Նորին Ամենապատուութիւնն՝ ներկայ գտնուիլ Ներսիսեան սանուց պատուանիշներու բաշխման, ի խրախոյս աշակերտաց, ուսուցչաց եւ պատուարժան Հոգաբարձութեան ...»²¹։ Երկու տարի անց Հայրիկը մասնակցում է նաև Եղիայի Հորեղբորորդու՝ ծանր հիվանդությունից հետո 26 տարեկանում մահացած Գալուստ Տեմիրճիպաշյանի հուղարկավորությանը՝ իր

¹⁸ «Մասիս» (Կ. Պոլիս), 1869, թիւ 924:

¹⁹ Տե՛ս «Մասիս», 1869, թիւ 927:

²⁰ «Գրական եւ Խմաստասիրական Շարժում» (այսուհետ՝ ԳիՇ) (Կ. Պոլիս), 1885, տեսդ տասներորդ եւ մետասաներորդ, էջ 178:

²¹ Նույն տեղում, էջ 178–179:

դամբանական խոսքում «սրտառուչ բանիւք» հիշատակելով նրա բոլոր «բարի բարի յատկութիւնները»²²:

Հատկանշական է յուրովի արձագանքելով իր մելամաղձոտ խառնվածքի և էության մասին տարածված կարծիքին՝ Եղիան վկայակոչում է Խրիմյան Հայրիկին, որն օրեր առաջ հարցրել էր իրեն՝ «Դո՞ւ տրտմութիւնը կը փնտուեա, թէ տրտմութի՞ւնը՝ քեզ»։ Եվ ինքը պատասխանել էր՝ «Վերջինն աւելի ճշմարիտ է, Սրբազն Հայրի՛կ», ըստ էության՝ խոստովանելով, որ իր տիրության, տրտմության թե մելամաղձության բուն աղբյուրը կամ պատճառն ազգի անմիսիթար, ցավագին վիճակն է²³։ Կարծում ենք՝ այստեղ ավելորդ չէ նշել նաև Ե. Տեմիրճիպաշյանի այն խոստովանությունը, թե Պերպերյան վարժարանի «մեծարդիւն Հիմնադիր-Տնօրիչն» Ռ. Պերպերյանը «ինձ հետ վարժապետ ունեցաւ Հայոց մեծագոյն Պատրիարքն եւ Հայոց մեծագոյն ուսուցիչն, Տ. Ներսէս Վարժապետեանն եւ Տ. Մատաթիա Գարագաշեանն. Որ ինձ հետ ներշնչող ունեցաւ Հայաստանեաց երկու հոգեշունչ վարժապետներ ու վարժապետներ, Եղիշէն եւ Խրիմեան Հայրիկին»²⁴։

Ե. Տեմիրճիպաշյանը մեծ ակնածանք էր տածում Խրիմյան Հայրիկի նկատմամբ՝ նրան գնահատելով ոչ միայն որպես ժամանակի ազգային ու կրոնական արտակարգ գործիչներից, այլև ստեղծագործական ձիրքով օժտված անհատականություններից մեկը, թեև նրա կարծիքները մինչ այժմ գրեթե չեն հիշատակվել։ Դեռ 70-ական թվականների վերջին թվարկելով խմբագիր-հրատարակիչ Ղուկաս Պալտագարյանի «Արշալոյս»-ից հետո Հրապարակ ելած պարբերականները՝ նա նշում է նաև. «Ունեցանք Արծուի Վասպուլական, ոյր սրբազն հեղինակն իբր արծիւ կը սաւառնի այսօր Հայ Հորիկոնին վրայ»²⁵։ Տարիներ անց իր կրկնակ հերոսներից մեկի՝ Կատուի բերանով Ե. Տեմիրճիպաշյանը հաստատում է. «Անտարակոյս դիրքեր կան որք գործքեր են, եւ այսպէս են Սրբազն Հայրիկի գորքերն ընդհանրապէս. սակայն Խրիմեան միայն գրիչով չէ ճարտար, այլ լեզուով ալ, այլ ձեռքով ալ ճարտար ու զօրաւոր է։ Ինք ա՛յն Սահմանադրական պատրիարքն եղաւ, որ այլ եւ համարձակեցաւ, այլ եւ կարօղացաւ նոր թուական բանալ Հայոց Պատրիարքութեան, Հայոց ազգութեան համար. . . Խրիմեան կը մնայ ժողովրդական»²⁶։ Ավածի մասին է վկայում նաև այն փաստը, որ Ե. Տեմիրճիպաշյանը Խրիմյանին արժանի էր համարում եկեղեցական ամենաբարձր դիրքերին։ «Սրբազն Հայրիկ Նար-պէյ Սրբազնի տեղ Ատենապետ ընտրուեցաւ Կրօնական ժողովոյ, — աղդաբարում է նա, և ապա ավելացնում, — Բայց ատի բարձրացո՞ւմ մ'է Հրաւիրակին համար. Էջմիածնայ գաւն, ահա հոն պարտէր բարձրամասլ Խրիմեան, Հայ եկեղեցականաց ամենէն ժողովրդականն»²⁷ (ընդգծումը մերն է.՝ Պ. Դ.): Իշարկե, ինչպես ցույց տվեց ժամանակը, նա չէր սիսալվում, ընդհանենը մի քանի տարի անց՝ 1892 թվականին,

²² Գի՛շ, 1887, տետր վեցերորդ, էջ 115։

²³ «Երկրագունտ» (Կ. Պոլիս), 1886, թիւ 4, էջ 159։

²⁴ «Երկրագունտ», 1886, թիւ 7, էջ 297։

²⁵ «Նոր կեանք» (Կ. Պոլիս) 1879, էջ 35։

²⁶ Գի՛շ, 1886, տետր իններորդ, էջ 172։

²⁷ Գի՛շ, 1886, տետր ութերորդ, էջ 159։

չնայած եղած բոլոր խոչընդոտներին, Խրիմյան Հայրիկն ընտրվեց Ամենայն Հայոց կաթողիկոս:

1886 թ. մեծ շուքով տեղի է ունենում Ազգային Սահմանադրության 26-րդ տարեղարձի հանդեսը: «Եւ թէպէտ Հայ երիտասարդութեան մեծապանծ ներկայացուցիչք բոլոր չէին գտնուէր հանդիսավայրն, – գրում է Ե. Տեմիրճիպաշյանը, – այլ բացակայց կը փոխանակէր բարձրաշնորհ Խրիմեան Սրբազն Հայրիկ, որ պատարագեց, քարոզեց ու բանախօսեց, հոգւոց ու սրտից ու մտաց վրայ այնպիսի ներդործութիւն մ’ընելով, զոր անտարակոյս ոչ մին ի Հայ եկեղեցականաց այսօր կ’ընէ»: Սրբազն Հայրիկի արտաքին ու ներքին հմայքն այնքան մեծ էր, որ Եղիան չի կարողանում զապել իր ոգևորությունն այդ պահի ազգեցությունը նկարագրելիս. «Դիմաց աննման վեհութիւն, լուսամտութիւն մը՝ որ չը տեսնուիր յԵւրոպա կրթուած Հայ եկեղեցականաց վրայ, ձայն մը՝ որ երաժշտութեան կը նմանի, խօսքեր՝ որք սրտի փափկութիւն ու մտաց նրբութիւն կը յայտնեն միանգամայն, եւ հասակ մը բարձր՝ որ արդէն կը կորանայ եւ որ պատկառանք ու միանգամայն տրոտմազին խոհանք կ’ազդէ. Այս ամենն եզական տպաւորութիւն մը, այո՛, կ’ընէ մարդուն վրայ, Հայուն վրայ, զի այդ եկեղեցականն իրաւամբ կոչուած է Հրեշտակ Հայաստանեայց»²⁸:

Այս կարծիքն ու գնահատականը երբեք չի լքել Եղիային: Երկու տարի անց՝ խոսք բացելով Կ. Պոլտ չորս նշանավոր պատրիարքների «ալեւոր այլ անձերանալի» Մկրտիչ Խրիմյանի, Ներսես Վարժապետյանի, Խորեն Աշքբյանի և Հարություն Վեհապետյանի մասին, նա դարձյալ նշում էր, որ «... ընդհանուր Հայութեան վերաբերեալ խնդրոց մէջ ոչ ոք աւելի ձեռնհասութիւն ու հեղինակութիւն ունի քան Խրիմեան: Իր ժողովրդականութիւնն իր վարդապետութեան օրերէն սկսեալ անհուն է ...»²⁹:

Ե. Տեմիրճիպաշյանի համոզմամբ, Խրիմյան Հայրիկի անհաստականության մեծությունը չափելի էր ոչ միայն ազգային, այլև համաշխարհային մասշտաբների մեջ: 1885-ին Հիշատակելով Վիկտոր Հյուգոյի ցավալի մահվան մասին՝ նա անմիջապես էլ անցում է կատարում Հայրիկի այցին Կ. Պոլիս. «Մինչդեռ Փուանսացիք ի Բարիգ աստուածավայել մեծարանօք կը շրջապատէին իրենց մեծագոյն բանաստեղծին դադաղն, – գրում է նա, – Հայք ալ ի Կոստանդնուպոլիս կ’երթային ընդ առաջ եկեղեցականի մը, որ թերեւս Հայ ազգին համար այն եղած է ինչ որ Վիկտոր Խոկո Փուանսական ազգին համար»: Այսուհետեւ նշելով Խրիմյանի բազում արժանիքները՝ խոսքն ավարտում է հետևյալ բառերով. «... համայն Հայութեան մէջ չը կայ ոք որ Հայրիկի չափ մէր ազգած ու լոյս ափուած ըլլայ իւլ շուրջ. Ամենուրեք ուր Հայ կայ, Հայրիկին հետքն հոն կայ. Համայնուրեք իբրեւ Հրեշտակ երեւցած է նա, քարոզելով լուսաւոր եւ ոգեւոր լեզուով Ավետարանի բանն, զոր ոչ է թափանցած այնքան խորին կերպիւ – եթէ ոչ մեծն Հիւկո ...»³⁰:

Ե. Տեմիրճիպաշյանի ծածկանուններից մեկը՝ Մելանիան, «Աղջկան մը օրագիր»-ում անժաքույց հիացմունքով է հիշատակում Խրիմյան Հայրիկի՝

²⁸ «Երկրագունտ», 1886, թիւ 5, էջ 240:

²⁹ «Երկրագունտ», 1888, թիւ 11, էջ 482:

³⁰ Գիշ, 1885, տեսոր եօթերորդ, էջ 132–134:

Հետագայում հանրահայտ դարձած «ինձորի ճառն», որը, ըստ էության, մի գեղեցիկ մանրապատում է ինքնին: «Խնձորի պատմութիւնն: Ո՞վ չը գիտէ զայն, – զրում է նա: – Սրբազն Հայրիկ, այն նստին մէջ ուր պիտի կատարուէր Պատրիարքական ընտրութիւնն, ի բեմ կ'ենէ եւ կը սկսի մին հոգեխանդ ու մտազուարճ միանգամայն այն ատենաբանութիւններէն, որոց գաղտնիքն ինք միայն ունի. եւ ոյց յանդգնութիւնք Հայրիկի մը միայն կրնան ներուիլ: Հայրիկ Հայ գաւառոց վիճակին վրայ խօսելով, դոցա միոյն մէջ կը կենայ, զմայելով կը զմայի իր մէկ անուանի բերքին վրայ: Եւ ահա Վասպորականի արծիւն՝ պարզելով իր փայլակնարագ թեւերն՝ ակնթարթի մը մէջ իտափա կը հասնի. այդ բերքն հոն ալ կ'արտադրի: Եւ իրիմեան կը գուգակշունէ Հայկական խնձորն եւ իտալական խնձորն: Այնքան լաւ կը նկարագրէ մին թէ՛ միւսն, որ երեսփոխան Տեարք տենչ կ'ունենան ճաշակել երկու խնձորներն ալ: Հայրիկ կ'իջնէ բեմէն: Երեսփոխանաց տենչն, ատենաբանութեան նման տարօրինակ, անիրանալի էր անշուշտ. մարդս խնձոր մը միայն կրնայ ճաշակել միանգամայն: Այս անհնարութեան առջեւ, ժողովոյն տենչն ալ փոխուեցաւ, վերածուեցաւ, վերածիւեցաւ: Եւ Ազգն նոր Պատրիարքէն գոհ է ...»³¹:

Հայտնի է, որ Ե. Տեմիրճիպաշյանը կրոնի, եկեղեցու բարեշրջության խնդիրն անջատ չէր դիտարկում կրթությունից: Նա համոզված էր՝ աշխարհականներն ու եկեղեցականներն ամենևին չէլ «զատ մարմին չեն», ավելին՝ ազգային կյանքի այդ կարևորագոյն ոլորտները (նա ավելացնում էր նաև տնտեսությունը) «անձկագոյն յարաբերութիւն ունին» միմյանց հետ, որը, սակայն, թերևս, «չերեւիր» կամ «չը թուիր» առաջին հայցքից³²: Ահա թե ինչու հայտարարելով, թե «... պատկերք, երգք, սաղարթք, ճառագայթք, ծաղկունք, բուրմունք աւելի հարկաւոր են, այո՛, մանկանց դպրատան քան Աստուծոյ տան մէջ», նա համոզված էր՝ «Արծունի քահանայն զիս չը պիտի յանդիմանէ սոյն բանիցս համար, ո՛չ ալ պիտի յանդիմանէ զիս իրիմեան Սրբազն Հայրիկ, եւ ոչ երբեք անշուշտ իորէն Նար-Պէյ Սրբազն, որ արտասանած է անուանի, անմոռանալի խօսքն. «Եկեղեցւոյն նախագաւիթն է դպրոցն». Եւ այդ երեք եկեղեցականաց հաւանութիւնն ինձ բառ է»³³ (ընդգծումը մերն է. – Պ. Դ.):

Բնորոշ է, որ իրիմյան Հայրիկը, որպես կանոն, տարվա գրեթե բոլոր կրթական հանդեսների «անհրամեշտ նախագահն» էր և շատ անգամ՝ իր ելույթներում վեր էր հանում նաև ազգային կրթության թերի կողմերը, օրինակ, փափագ հայտնելով՝ «զուտ գրական ու գիտական կրթութեան զուգընթաց ըլլար արհեստագիտական կրթութիւնն որ գոյութիւն չունի տակաւին յոյժ տարաբաղդաբար»³⁴: Սակայն նրա այդ ճառերը երբեմն միանշանակ չէին ընդունվում ժողովրդի տարբեր խավերի կողմից: Նման իրավիճակների ներկայացման համար Ե. Տեմիրճիպաշյանը դիմում էր նաև իր սիրած զրական հնարքներից՝ Ընթերցող-Խմբագիր երկխոսությանը: Դրանցից մեկում Ընթերցողը, օրինակ, իր վիրավորանքն է հայտնում այն

³¹ «Երկրագունոտ», 1888, թիւ 11, էջ 513:

³² Գիշ, 1883, տետր Ե, էջ 90:

³³ Գիշ, 1886, տետր ութերորդ, էջ 147:

³⁴ «Երկրագունոտ», 1886, թիւ 7, էջ 316:

բանի համար, որ ինչ-ինչ շրջանակներում «զրին վեցուցին Հայրիկը. Քիչ մնացել է ժողովուրդը պօռայ պիտի եղեր որ ա՛լ Խորիմեան Հայրիկը պարզեւաբաշխութեան հանդէսներուն մէջ բերանը չի բանայ», որովհետև քննադատում է դպրոցների վիճակը: Խմբագիրը նկատում է. «Բայց ես ալ քանի տարիէ ի վեր կ'ընեմ նոյն բանն օրագրաց մէջ թէ՝ պարզեւաբաշխութեան հանդէսներու մէջ. Եւ դեռ ոչ ոք համարձակեցաւ ի մասնաւորի կամ ի հրապարակի պարսաւել կամ քննադատել զիս»: Սակայն Ընթերցողը բավարարված չէ. «Զեր ետեւէն ալ շատ բան խօսող կայ, – ասում է նա, – Բայց ըսածնուուդ պէս՝ երեսնուուդ ընելու են, կամ աւելի աղէկ՝ գրելու են, որ վէճ մը բացուի ու ժողովուրդը լուսաւորուի»: Եկ առաջարկում է Խմբագրին՝ շարադրել իր տեսակետները ազգային կրթության շուրջ, որպեսզի կարողանան նրան և Խորիմյան Հայրիկին պաշտպանել³⁵:

Պետք է ասել, որ կրթության, տնտեսության և ազգային կյանքի այլ կարևորագույն հարցերի շորջ Խորիմյան Հայրիկին նման հայացքները պատահական չէին: Դրանք արդյունք էին նրա բացառիկ լայնախոհության և ազատամտության, ինչն ամենից շատ էր շահագրգոռում Ե. Տեմիրճիպաշյանին: Երբ Կ. Պոլսի՝ Ասիական ընկերության լսարանում Ուեմեոս Պերպերյանի «Կին» խորագրով բանախոսության համար, «ուր ինչ ինչ դիտողութիւններ ըրած է Ս. Գրքին դէմ», կրոնական տեսուչը պահանջում է «քննութիւն մը» անցկացնել, դա առաջ է բերում Ե. Տեմիրճիպաշյանի անկեղծ տարակուսանքն ու ընդգործմը. «Հայաստանեայց ազատ եկեղեցւոյ ծոցն, ազատամտութեամբն հոչակասոր Խորիմեան Ս. Հայրիկի (ընդգծումը մերն է. – Պ. Դ.): Ալտենապետութեան ներքեւ գտնուած կրօնական ժողովոյ մ'օրով, – բացականչում է նա, – իննեւտասաններորդ դարու վերջին քառորդին մէջ, Հայ ազգին կրօնական Տեսուչն Հաւատաքննութիւն կը խնդրէ: Եւ որո՞ւ դէմ: Ազգային փառացն ու պատույն ամենին նախանձախնդիր բազմարդիւն գործիչի մը դէմ»: Ապա նաև եզրափակում հեղնական տոնով՝ «Յառաջադիմութեան մէջ ենք ...»³⁶: «Սիրաք եւ Սամուէլ (Կրթական դասեր)» գրվածքում Խորիմյանը ներկայացնում էր քաղաքակրթության դիմավոր չափանիշները, որոնց պետք է ձգտի նաև հայ ազգը: «Ինսերորդ դասով կը ճառէ Սիրաք թէ ինչպէս ինքնաշխատութիւն, հանճար եւ ընկերական զօրութիւն, այս երեք հզօր դաշնակիցներ միանալով քաղաքակրթեցին զաշխարհ, – գրում է նա, – ինքնաշխատ հանճար ծնաւ դիմուեր, արուեստներ, այլ ընկերական զօրութիւն զարգացուց. Եւ այսպէս այս երեք անզէն դաշնակիցներ աշխարհիս տիրեցին»³⁷:

Ե. Տեմիրճիպաշյանի համար շատ գնահատելի էին նաև Խորիմյան Հայրիկի արդիական հայացքներն ազգային կյանքում ընտանիքի դէրի ու նշանակության վերաբերյալ: Նրան հատկապես հոգեհարազատ էին «Դրախտի ընտանիք (Ի պէտ Հայոց ընտանեաց)» հայտնի գրվածքի՝ Ընթերցողներին ուղղված «Նախաբան»-ում Հայրիկի արտահայտած այն մտքերը, թե «առանց մտաւոր եւ նիւթական հարստութեան» հնարավոր չէ «Եւրոպական ժողովրդոց ճոխ կեանքը վայելել»: Ուրեմն, կոչ էր անում Սրբազանը՝

³⁵ «Երկրագունատ», 1886, թիւ 8, էջ 345:

³⁶ «Երկրագունատ», 1887, թիւ 5–6, էջ 203:

³⁷ Ամբողջական երկեր Խորիմեան Հայրիկի, Նիւ Եօրք, 1929, էջ 309:

«Ծանի՛ր, այդ կեանքը, այդ յառաջաղիմութիւնը», որ գարերի ընթացքում ձեռք է բերվել «ճակատի անխոնջ քրտինքով» և բազում զոհերով: Հորդորում էր չհետևել օտարների՝ նորության անվան տակ տարածվող զեղիս ու անբարո բարքերին, այլ «ազնիւ ժողովրդոց բարի ու պարկեշտ օրինակին», որոնց «լոյս եւ առաջնորդ՝ ուսումն, դաստիարակութիւն եւ տնտեսութիւնն է», որովհետև, ըստ նրա, «ուսման լուսով հաց կը գտնեն, դաստիարակութեամբ հոգին եւ սիրտ կրթելով բարի ընտանիք կը կազմեն, իսկ տնտեսութեամբ հացին սեղան եւ այլ կեանքի պիտոյքները չափով ու կշռով կը մատակարարեն միշտ հոգալով ապագայի անստոյգ օրերն»: Քանզի, համոզված էր Խրիմյան Հայրիկը, «մարդ իւր ներկային մէջ կամ զգաստութեամբ կամ ապշութեամբ իւր ապագայ օրերն ինքնին ձեռօք կը պատրաստէ. զի ներկան ապագային հիմն է եւ ապագան ներկային յաջորդութիւն եւ շենք»³⁸: «Աղջկան մը օրագիր»-ում անդրադառնալով այդ խնդրին՝ Մելանիան գրում է. «Ընտանիքն ըստինքեան ցամաք նիւթ մը կը թուի, սակայն քանի կը յառաջանամ ընթերցմանս մէջ այնքան կը համոզուիմ, թէ նիւթոց ամենահարուստն է ընտանիքը: Խրիմեան Հայրիկ Սահմանադրութեան պահպանութեան համար ուխտին ժամանակ մեր ազգային օրինաց ծագման վրայ խօսած եւ զայն անուանած էր քրիստոնէութեան արդասիք, արդասիք Հայաստանեայց ազատ եկեղեցւոյն»³⁹:

Ե. Տեմիրճիպաշյանը հայ ազգի «մեծ արշալոյսի» ավետյալն էր համարում Խրիմյան Հայրիկին, ըստ նրա, միանգամայն հասկանալի ու բացատրելի էին «այն սրտեռանդն մեծարանքն, որք կը մատուցուին ազգովին Սրբազնն Հայրիկին ...»⁴⁰: Ուրեմն և պատահական չէ, որ «Մակրինէ» նորավեալի հերոսներից մեկը՝ Պետրոս աղան, որին Եղիան ընութագրում է որպես իր բարի հոր վաղեմի բարեկամը, խոստովանում է, թէ «Նահնապարեամէն ու Խրիմեամէն սորվեցանք որ ազգութիւնը ունինք, ու այս ազգութիւնը պահելը մեր ամենէն մեծ պարտըլիանութիւնն է: Ասանկ կամաց-կամաց արթնցանք ...»⁴¹ (ընդգծումը մերն է. – Պ. Դ.):

Յուրատեսակ համեմատական անցկացնելով ժամանակի հայտնի դեմքերից մեկի՝ աստվածաբան, խմբագլր Հովհաննես Տերոյենցի (Հովհաննես պատվելի) և Խրիմյան Հայրիկի միջև Ե. Տեմիրճիպաշյանն ընդգծում էր, որ նրանք «տրամագծօրէն ներհակ ձգտումներ» էին ներկայացնում: Եթե Տերոյենցի համար «Միշտ մեծ ուսումն էր ... ընդհանուր եկեղեցական պատմութիւնն», ապա Խրիմյանի համար «մեծագոյն ուսումն էր եւ է յաւէտ Ազգային պատմութիւնն, Հայաստանեայց եկեղեցւոյ պատմութիւնը»: Եվ ապա, եթե «Տերոյենցի տիեզերական եկեղեցին խակ իր տան չափ մեծ է միայն. մինչ Խրիմեանին համար ... եկեղեցին մեծ է տիեզերքին չափ. Խրիմեանի եկեղեցւոյն մէջ ոչ միայն Աստուած կայ, այլ կայ մարդն՝ որ կը յայտարարէ թէ անկարող է ըմբռնել զԱստուած ...»⁴²:

³⁸ Նույն տեղում, էջ 184–185:

³⁹ «Երկրագունտ», 1985, թիւ 9, էջ 462:

⁴⁰ Գիշ, 1885, տետր երկոտասաներորդ, էջ 198:

⁴¹ Գիշ, 1884, տետր հինգերորդ, էջ 91:

⁴² «Երկրագունտ», 1888, թիւ 6, էջ 285:

Ժամանակակիցների բազմաթիվ վկայություններից հայտնի է, որ Ե. Տեմիրճիպաշյանը ևս XIX դ. վերջին քառորդի ամենից անվանի, սիրված ու մեծահամբավ դեմքերից էր: Բնորոշ է, օրինակ, գրող, հրապարակախոս, խմբագիր Սուլբեն Պարթևյանի հուշային դրվագներից մելլո, ըստ որի՝ Եղիայի մահից երկու տարի անց նաև երանությամբ էր հիշում ամեն տարի Ազգային Սահմանադրության տոնի խանդավառ հանդեսներից մնացած իր տպավորությունները: «Հայրիկին ձեռքէն բռնած կ'երթայինք Պոլիս, Սիրքէնիէն շրմէն-տըֆէն՝⁴³ կը նստէինք, Ետի-Գուլէ դուրս կ'ելլէինք. Մ. Փրկիչի մատուրը կը մտնէինք, — գրում է նա, — յետոյ պարտէզը ասրբուած շքասեղանին կը մասնակցէինք, ու յակտենական ձէթով կանկառն ու խորոված միափ կտորը ծամելով՝ անհանդարտ աչքեր կը պտտցնէինք չորս դիմիս... Ու բաժականակերը կը սկսէին շքասեղանին վերին ծայրէն:

- Խօսողը ո՞վ է, հայրի՞կ...
- Խրիմեան Հայրիկն է, տղաս ...
- Այս մարդը ո՞վ է ...
- Մինաս Չերազն է, տղաս, մե՛ծ մարդ է, ազգասէ՛ր, խելացի՛ ...
- Ա՞ս ...
- Ոէժէոս Պէրպէրեանը ...
- Ա՞ս ...
- Եղիա Տէմիրճիպաշեանը ...

... Ու հոեսորդներու շարքը կ'երկարաձգուէր անվերջ ու հոյապանծ ... Ու մենք՝ յափշտակուած՝ մտիկ կ'ընէինք ազգին մտառորական առաջնորդներուն... Ի՞նչ հսկամեր կը թուէինս անոնք մեզի և ի՞նչ պատկառանք մը կար անոնց բոլորտիքը, զանոնք շրջապատող, անոնց շրմներէն կախուող ամբոխին վրայ: ... Մեծին ու մեծութեան յարգանքն ունէր մեր ժողովուրդը, ու արժանիքին ու գեղեցկութեան առջեւ հիացումի վսեմ ընդունակութիւնը»⁴⁴ (ընդգծումները մերն է.՝Պ. Դ.):

Թերեւս ավելորդ է որևէ բան ավելացնել այդ գնահատականին:

Եզրակացություն

Խրիմյան Հայրիկը ոչ միայն ժամանակի ազգային ու կրոնական նշանավոր գործիչներից էր, այլև համազգային մտածողության տեր անձնավորություն, ում համար ամենից կարևորն աշխարհասփյուռ հայության համախմբումն ու միասնականությունն էր՝ հանուն Հայրենի ժողովրդի և Հայրենիքի առջև ծառացած բարդ ու դժվարին խնդիրների լուծման: Այդ հարցում նա բարձր էր գնահատում Վենետիկի Միիթարյանների, մասնավորա-

⁴³ Յրանս՝ գնացք:

⁴⁴ «Դաշինք» (Զմիւռնիա), 1910, թիւ 247:

պես՝ Հայր Ղևոնդ Ալիշանի ծառայություններն ու վաստակը. այդ վերաբերմունքը փոխադարձ էր: Խրիմյան Հայրիկն օժտված էր նաև բացառիկ ստեղծագործական ձիրքով: Ժամանակի մեծահամբավ դեմքերից՝ գրող, հրապարակագիր, իմաստասեր, խմբագիր Եղիա Տեմիրճիպաշյանի համոզմամբ, նրա անհատականության մեծությունը չափելի էր ոչ միայն ազգային, այլև համաշխարհային մասշտաբների մեջ:

ՊԵՏՐՈՍ ԴԵՄԻՐՃՅԱՆ — բ. գ. դ., ՀՀ ԳԱԱ. Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի հայ նոր գրականության բաժնի ավագ գիտաշխատող, Հայաստանի գրողների միության վարչության քարտուղար: Գիտական հետաքրքրությունները՝ դասական և ժամանակակից գրականություն: Հեղինակ՝ է 3 մենագրության, բազմաթիվ հոդվածների: pdemirchyan@mail.ru

REFERENCE

- Alishane zhamanakakitsneri husherum, Yerevan, 1969 (In Armenian).
 “Araks” (S. Peterburg), 1887, girk A (In Armenian).
 Amboghdjakan yerker Khrimyan Hayriki, Niu Eork, 1929 (In Armenian).
 “Dashink” (Zmivrnia), 1910, tiv 247 (In Armenian).
 “Grakan yev Imastasirakan Sharzhum” (K. Polis), 1883, tetr E; 1884, tetr hingerord; 1885, tetr eoterord; tasnerord; metasanerord; erkotasnerord; 1886, tetr uterord; innerord; 1887, tetr vetserord (In Armenian).
 Khrimyan Hayrik. Yerker, Yerevan, 1992 (In Armenian).
 “Masis” (K. Polis), 1869, tiv 924; tiv 927 (In Armenian).
 “Nor keank” (K. Polis), 1879 (In Armenian).
 Oshakan Y. Hamapatker arevmtahay grakanutean, Antilias, 1956 (In Armenian).
 Raffi. Yerkeri zhoghovadsu tasnerku hatorov, h. 1, Yerevan, 1983 (In Armenian).
 Teodik. Amenun taretsoytse, K. Polis, 1916–1922 (In Armenian).
 Tumanyan Hovh. Yerkeri liakatar zhoghovadsu 10 hatorov, h. 5, Yerevan, 1994 (In Armenian).
 “Yerkragund” (K. Polis), 1886, tiv 4; tiv 5; tiv 6; tiv 7; tiv 8; 1887, tiv 5–6; 1888, tiv 6; tiv 11; 1985, tiv 9 (In Armenian).
 Zhamanakakitsnere Komitasi masin, Yerevan, 1960 (In Armenian).

ВИДНЫЕ ДЕЯТЕЛИ ВРЕМЕНИ О ХРИМЯНЕ АЙРИКЕ

ПЕТРОС ДЕМИРЧЯН

Р е з ю м е

Ключевые слова: Хrimyan Aйrik, Егия Темирчипашян, Отец Гевонд Алишан, Минас Чераз, Комитас, Ов. Туманян, патриарх, католикос, «Сирак и Самуил», «Райская семья», «Вангуйж», «Айгуйж».

Выдающийся национально-общественный, духовно-культурный деятель Католикос Всех Армян Хrimyan Aйrik (Мкртич А. Ванеци, 1820–1907) с самого начала своей деятельности снискал широкую известность в народе своим безупречным поведением, патриотическими поступками. Многие известные деятели писали в его адрес хвалебные и восторженные слова, отмечая интересные эпизоды и истории, связанные с Aйриком (Г. Алишан, Раффи, Е. Темирчипашян, М. Чераз, Комитас, Ов. Туманян и другие).

Хrimyan Aйrik был общенациональным мыслителем. Самым главным он считал сплочение и единство армян всего мира для решения сложных проблем, стоящих перед родным народом и Родиной. Он постоянно обращался к покинувшим родину армянам, уговаривая их вернуться, чтобы вместе обустраивать Армянский дом. Хrimyan Aйrik высоко оценивал заслуги мхитаристов Венеции, особенное уважение испытывал к Отцу Гевонду Алишану, и это отношение было взаимным.

К Хrimyanu Aйriku с высоким благоговением относился также один из самых известных деятелей того времени – писатель, публицист, философ, редактор Егия Темирчипашян, считая его не только одним из выдающихся национальных и религиозных деятелей своего времени, но и человеком, наделенным яркими творческими способностями, писательским талантом. По убеждению Егии Темирчипашяна, величие личности Хrimyanu Aйrika измеримо не только в национальном, но и в мировом масштабе.

Петрос Демирчян – д. филол. н., старший научный сотрудник отдела новой армянской литературы Института литературы им. М. Абегяна НАН РА, секретарь правления Союза писателей Армении. Научные интересы: классическая и современная литература. Автор 3 монографий, многочисленных литературоведческих и литературно-критических статей.
pdemirchyan@mail.ru

PROMINENT FIGURES OF THE TIME ABOUT KHRIMYAN HAYRIK

PETROS DEMIRCHYAN

S u m m a r y

Key words: *Khrimyan Hayrik, Yeghia Temirchipashyan, Ghevond Alishan, Minas Cheraz, Komitas, Hovh. Tumanyan, patriarch, catholicos, “Sirak and Samuel”, “Paradise Family”, “Vanguyzh”, “Ayguyzh”.*

An outstanding national, public, spiritual and cultural figure Catholicos of All Armenians Khrimyan Hayrik since 1893 (Mkrtich A. Vanetsi, 1820–1907), from the very beginning of his activity gained wide popularity among the people for his impeccable behavior, patriotic deeds. Many famous people wrote words of praise and admiration to him (G. Alishan, Raffi, Ye. Temirchipashyan, M. Cheraz, Komitas, Hovh. Tumanyan and others), noting interesting episodes and stories connected with Hayrik.

Khrimyan Hayrik was a nationwide thinker. For him, the most important thing was the rallying and unity of the Armenians of the whole world to solve the complex and difficult problems facing his native people and homeland. Therefore, every time he sent out invitations to all Armenians who had left their homeland, persuaded them to return in order to improve the Armenian house together.

Khrimyan Hayrik highly appreciated the merits of the Mkhitarists of Venice; he was especially fond of Father Ghevond Alishan, and this relationship was mutual.

Khrimyan Hayrik was also highly valued by one of the most famous figures of that time – writer, publicist, philosopher, editor Yeghia Temirchipashyan, not only as one of the outstanding national and religious figures of his time, but also endowed with bright creative abilities and writing talent. Unfortunately, his opinions have hardly been mentioned so far. According to Yeghia Temirchipashyan, the greatness of Khrimyan Hayrik's personality is measurable not only on a national but also on a global scale.

Petros Demirchyan – Doctor of Sciences in Philology. Senior Researcher at the Department of Modern Armenian Literature of the NAS RA Institute of Literature after M. Abegian, Executive Secretary at Writers' Union of Armenia. Scientific interests: classical and modern literature. Author of 3 monographs, numerous literary, literary-critical articles. pdemirchyan@mail.ru

ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ
«ԵՐԻՏԱՍԱՐԴ ՀԱՅԱՍՏԱՆ» ՊԱՐԲԵՐԱԿԱՆՈՒՄ
(1908–1914 թթ.)*

ԳԵՂԱՄ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Բանալի բառեր՝ «Երիտասարդ Հայաստան», Ստեփան Սապահ-Գյուլյան, արևմտահայություն, Թուրքիա, բռնապետություն, ազատագրական պայ-քար, սոցիալիզմ, հեղափոխական շարժում:

Նախաբան

XIX դարավերջին և XX դարասկզբին հայ քաղաքական կյանքի գլխավոր խնդիրն արևմտահայերի ազատագրումն էր թուրքական տիրապետությունից, որին ուղղված էին հայ ազգային-քաղաքական ուժերի հիմնական ջանքերը:

1908 թ. երիտթուրքական հեղաշրջումից հետո առաջացած քաղաքական իրազրությունը նոր խնդիրներ առաջարկեց նաև հայ ազգային-քաղաքական կյանքի ղեկավարությանը ստանձնած ուժերին: Ստեղծված իրավիճակում ազատագրական պայքարի նախորդ շրջանի վերյուծությունն ու վերաիմաստավորումը, ինչպես նաև պայքարի նոր ուղիների և միջոցների փնտրութեն իր արտահայտությունն էր գտել ու լայնորեն քննարկվում էր ժամանակի հայ քաղաքական մամուլի էջերում: 1908–1914 թթ. ընթացքում հայ ժողովրդի նկատմամբ թուրքական կառավարության վարած քաղաքականության, Հայկական Հարցին, սոցիալիզմի գաղափարախոսության ու քարոզչության, միջազգային սոցիալ-դեմոկրատական շարժման, ինչպես նաև հայ ազգային կյանքին առնչվող բազմաբնույթ հարցերն արձարձում էր նաև Սոցիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցության (ՄԴՀԿ) ԱՄՆ-ի օրգան «Երիտասարդ Հայաստան» պարբերականը:

Պարբերականի ընդհանուր բնութագիրը

Որպես շաբաթաթերթ պարբերականի հրատարակությունը սկսվել է 1903 թ. Բոստոնում, ապա՝ Նյու Յորքում (1906–1912 թթ.), Պրովիդենսում (1913, 1916–1917 թթ.), Փարիզում (1914 թ.), Չիկագոյում (1917–1923 թթ.), Բոստոնում (1923–1927 թթ.), այնուհետև՝ կրկին Նյու Յորքում՝ մինչև 1973 թ.:

Պարբերականի գլխավոր խմբագիրը հնչակյան կուսակցության հայտնի գործիչ, տեսաբան Ստեփան Սապահ-Գյուլյանն էր: Լինելով կուսակցության ԱՄՆ-ի շրջանի օրդանը՝ բնականաբար, պարբերականի նպա-

* Ներկայացվել է 11. IX. 2020 թ., գրախոսվել է 17. IX. 2020 թ., ընդունվել է տպագրության 29. I. 2021 թ.:

տակների շարքում առաջնային տեղ էր գրավում հնչակյան կուսակցության գաղափարների քարոզչությունը։ Թեպետ Սապահ-Գյուլյանը համոզված սոցիալիստ էր, և այս հանգամանքը լուրջ ազդեցություն ուներ պարբերականի ընդհանուր բովանդակության վրա, սակայն դրա հետ «Երիտասարդ Հայաստանի» 1903–1908 թթ. գործունեությունն ակնհայտորեն ցույց է տալիս, որ պարբերականի գլխավոր մտահոգությունն օսմանյան տիրապետությունից Արևմտյան Հայաստանի ազատագրությունն էր, որը շարունակում էր մնալ հայ ազգային-քաղաքական կյանքի գլխավոր խնդիրը։

Պարբերականն ուներ «Քաղաքական», «Գրական», «Կէնսագրական», «Նամականի», «Թղթակցություններ», «Ամերիկահայ կեանք» բաժինները։ «Քաղաքական» բաժնում լուսաբանվում են միջազգային ընթացիկ իրադարձությունները, «Ամերիկահայ կեանք» բաժնում ներկայացված են բարեգործական հանգանակությունների, հնչակյան հրապարակային ժողովների, ամերիկահայության ազգային, կրթական ու կրոնական խնդիրները։ Պարբերականի 1908 թ. համարների «Գրական» բաժնում տպագրվում է Վ. Վասակունու «Սարիրէ» վեպը, որում ներկայացված է տվյալ ժամանակաշրջանի թուրք իրականությունը, Կ. Պոլսի քաղաքային կյանքը, մարդկային փոխհարաբերությունները։

«Երիտասարդ Հայաստանի»՝ 1908 թ. բազմաթիվ համարներում կան հոդվածներ, հաղորդումներ հնչակյան կուսակցության 20-ամյակի առթիվ կազմակերպված ժողովների, միտինգների, հանդեսների վերաբերյալ։

Պարբերականի «Կէնսագրական» բաժնում առանձին ուշադրություն է դարձված երիտասարդ հնչակյանների գործունեությանը¹։ «Երիտասարդ Հայաստանին» թղթակցում էին հնչակյան կուսակցության մի շարք հայտնի գործիչներ, տեսաբաններ, որոնց շարքում էին՝ Տաշիրը (Սիմոն Հովյան), Գրիգոր Եղիկյանը, Սոկրատ խան Գեղոֆյանցը, Զակոր Արծրունին, Վարագուստը (Գրիգոր Անպարճյան), Արտեմիոսը (Հարություն Գասպարյան), Շ. Շահումյանը և ուրիշներ։ Շաբաթաթերթի՝ 1908 թ. հուլիսի 8-ի համարում Տաշիրը հանդես է գալիս «Նոր տարեշրջան» խմբագրական հոդվածով, ուր ձեւակերպում է ստեղծված պայմաններում «յեղափոխական-քաղաքական մամուլի գերը», որը, ըստ նրա, ազգային-ազատագրական ու սոցիալիստական գաղափարների սերմանումն է ժողովրդական մասսաների մեջ։ Նշված ուղղություններն էլ կազմում են Տաշիրի հոդվածների առանցքը։ Նա հանդես է գալիս նաև եվրոպական մեծ պետությունների վարած քաղաքականության վերլուծություններով²։ «Ուխտագրուժ բռնակալ» խմբագրական հոդվածում Տաշիրը քննադատում է Պարսկաստանի շահին, որը ուսական ցարի պաշտպանության տակ հանդես է գալիս երկրի իրական առաջադիմության դեմ³։ Դատապարտում է Ռուսաստանի Յըրդ պետական դումայի հարմարվողական, հաշտվողական գործելակերպ՝ այն համարե-

¹ «Երիտասարդ Հայաստան» (Նիւ-Եօրք), 08. I. 1908, 05. II. 1908, 18. III. 1908, 13. V. 1908:

² «Երիտասարդ Հայաստան», 24. VII. 1908:

³ «Երիտասարդ Հայաստան», 22. VII. 1908:

լով պարտվողական ու հետադիմական⁴: Տաշիրի ուշադրության կենտրոնում էր նաև եվրոպական սոցիալ-դեմոկրատների գործունեությունը⁵:

«Երիտասարդ Հայաստանը» լայն տեղ է հատկացրել սոցիալիզմի քարոզչությանը: Այս հարցերի լուսաբանմամբ աչքի է ընկնում հատկապես Սովորատ խան Գելոփյանցը: Նրա գրչին է պատկանում «Կապիտալիզմի չարեքները» հոդվածաշարը⁶: Գելոփյանցը ներկայացրել է ԱՄՆ-ի, Անգլիայի, Ֆրանսիայի գործադրությային շարժումները: Հեղինակն անդրադարձել է սոցիալիզմի գաղափարախոսության⁷, ինչպես նաև՝ եկեղեցու և սոցիալիզմի առնչության հարցերին: «Բաց ու գոյց», «Եկեղեցի և ընկերվարութիւն» հոդվածներում Գելոփյանցը գաղափարական բանավեճի մեջ է մտնում դաշնակցության հետ⁸: «Սոցիալիզմը և Թուրքիան» խմբագրական հոդվածում նա չափազանցության մեջ է ընկնում՝ գրելով, որ կապիտալիզմն արդեն մտել է այդ երկիրն ու այնտեղ դասակարգային պայքար գոյություն ունի, հետևաբար, պարարտ հող կա նաև սոցիալիստական գործունեության համար⁹: Ընդգծենք՝ այս տեսակետն էր պաշտպանում նաև գլխավոր խմբագիր Սապահ-Գյուլյանը, ով կապիտալիզմի գարգացման առումով թուրքիան համեմատում է Ռուսաստանի և այլ երկրների հետ¹⁰:

Հնչակյան հայտնի գործիչ Հակոբ Արծրունու հոդվածներում և թղթակցություններում առաջնային են ազգային-քաղաքական խնդիրները: Այս հարցերի շուրջ նա «Արձագանքներ» հոդվածաշարով բանավեճ է ծավալում «Երկրի ձայն», «Վտակ» պարբերականների հետ: Ընդհանրապես, «Երիտասարդ Հայաստանի» 1908 թ. համարները լի են «Մշակ», «Արձագանք», «Նոր դար», «Վտակ» պարբերականների հետ գաղափարական բանավեճներով: Արծրունին աչքի է ընկնում վաղամենիկ երիտասարդ հնչակյանների գործունեությանը նվիրված իր հաղորդումներով¹¹: Հայ քաղաքական կյանքի վերլուծություններին նվիրված իր հոդվածներում ընդգծվում է Արծրունու հակադաշնակցական դիրքորոշումը¹²:

Հայկական հարցին, ազատագրական պայքարի և հայ ազգային խնդիրներին նվիրված հոդվածներով պարբերականում հանդես են գալիս Շ. Շահումյանը, Բ. Վարազդատը, Արտեմիոսը:

«Երիտասարդ Հայաստանի» ակտիվ թղթակիցներից Գ. Եղիկյանն այս հարցերից զատ՝ իր «Մահմեդական աշխարհը» հոդվածաշարում արծարծել է իսլամի գաղափարների ազգեցության, մուսուլմանների առանձնահատկությունների, կենցաղի, ոչ մուսուլմանների հետ ունեցած փոխհարա-

⁴ «Երիտասարդ Հայաստան», 12. VIII. 1908:

⁵ «Երիտասարդ Հայաստան», 15. VII. 1908:

⁶ «Երիտասարդ Հայաստան», 08. XII. 1910, 14. XII. 1910, 21. XII. 1910, 28. XII. 1910:

⁷ «Երիտասարդ Հայաստան», 05. VII. 1911, 12. VII. 1911:

⁸ «Երիտասարդ Հայաստան», 07. IX. 1910, 14. IX. 1910:

⁹ «Երիտասարդ Հայաստան», 31. VIII. 1910:

¹⁰ «Հնչակ» (Փարիզ), 1907, № 9–10 (սեպտեմբեր–հեկտեմբեր), էջ 122:

¹¹ «Երիտասարդ Հայաստան», 08. I. 1908, 05. II. 1908, 18. III. 1908:

¹² «Երիտասարդ Հայաստան», 06. V. 1908, 13. V. 1908:

բերությունների հարցերը¹³: Լուսաբանել է նաև Թուրքիայի պատմությանն ու երիտթուրքական շարժմանն առնչվող հարցեր¹⁴:

Աղքային-քաղաքական խնդիրները պարբերականում

«Երիտասարդ Հայաստանի» 1908 թ. հունվարի 1-ի համարում «Անցնող տարին» խմբագրական հոդվածում՝ հանրագումարի բերելով 1907 թ. հայ հասարակական-քաղաքական կյանքի կարևոր իրադարձությունները, Շ. Շահումյանը գրում է, որ նոր տարին յուրատեսակ ինքնահաշվետվության օր է, երբ մարդիկ պարտավոր են իրենց հարց տալ, թե ի՞նչ են արել անցնող տարում, որպեսզի օգտակար լինեին իրենց ազգին: Առաջնորդող հոդվածն ուշադրություն է հրավիրում դեպի «իրական դժոխքը - դեպի Տաճկահայատան, որտեղից ողբի ձայները չեն կտրւում երբեք, այլ ընդհակառակ՝ տիրող բէմիմի վատիմար հալածանքն առաւել ճգմում է իրաւագուրկ հայ ժողովրդին»: Հոդվածագիրն առաջ է քաշում այն գաղափարը, որ հայ ժողովրդի՝ դեպի ազատություն տանող միակ ճանապարհը, միակ միջոցը նրա հավաքական ըմբռատությունն ու վճռական պայքարն է, և այդ ճանապարհին նրան չեն օգնելու «ոչ արտասահման պաղատանքները, ոչ գետնատարած աղօմքի մրմունջները», քանի որ դրանք երբեկցէ չեն օգնել. «Վրեմինդիր բազուկ, հատու սուսեր, սեղմ շարքեր ... ահա միակ իսկական ճանապարհը դեպի ազատութիւն»: Այս համատեքստում հոդվածագիրը «Մակեղոնիո երկունքը» խմբագրականում ողջունում է մակեղոնացիների և մյուս ժողովուրդների ազատագրական պայքարն օսմանյան բռնապետության դեմ¹⁵: Շահումյանը միիթարական չի համարում նաև արևելահայ իրականությունը՝ գրելով, որ ոռոսական ինքնակալությունը «բիւրօկրաստիան հալածանքի մտրակը ձեռքն առած անխնայ հարուածում է բոլոր նրանց, որոնք յեղափոխական են ճանաչւում»¹⁶: Ընդգծում է այն հանգամանքը, որ «այս տեսահիտից հալածանքի մրուրը քամողը, որպէս մարտնչող տարր, ներկայանում է հայութիւնը»¹⁷: Հայության հետ կապված մյուս նշանավոր իրադարձությունը «Պարսկաստանի յեղափոխական շարժումն է և ձեռք բերած անկատար սահմանադրութիւնը»¹⁸: Հոդվածագիրը գտնում էր, որ պարսկահպատակ հայությունը պետք է «համընթաց լինի» այդ շարժմանը, որպեսզի կարողանան օգտվել նաև ձեռք բերվելիք արտոնություններից: Կարևորվում է հնչակյանների մասնակցությունը, որոնց վրա «պարտականութիւն է ծանրանում աւելի մեծ չափով մասնակցութիւն ունենալու այդ դեմօկրատիկ շարժման մեջ»¹⁹: Հայ քաղաքական կյանքի մյուս կարևոր երևոյթը, որի վրա ուշադրություն է սևեռում խմբագրականը, «Համերաշխութեան» գաղափարն էր՝ հնչակյան կուսակցության կենտրոնն առա-

¹³ «Երիտասարդ Հայաստան», 27. VII. 1910, 31. VIII. 1910, 07. IX. 1910, 14. IX. 1910, 21. IX. 1910:

¹⁴ «Երիտասարդ Հայաստան», 25. I. 1911:

¹⁵ «Երիտասարդ Հայաստան», 13. V. 1908:

¹⁶ «Երիտասարդ Հայաստան», 01. I. 1908:

¹⁷ Նույն տեղում:

¹⁸ Նույն տեղում:

¹⁹ Նույն տեղում:

ջաղբեց ազգային կուսակցություններին: Հոդվածում քննադատության են ենթարկվում «Հայ ազգային կոնգրեսի» գաղափարը վաղաժամ համարող ուժերը (խոսքը վերաբերում է ՀՅԴ-ին): Առաջ քաշելով և պաշտպանելով «Ոյժը միւթեան մէջ է» կարգախոսը՝ խմբագրականը հույս է հայտնում, որ դա կարող է դառնալ հայության «նոր տարու նուերը»²⁰: Հոդվածում հարգանքի տուրք է մատուցվում հանգուցյալ կաթողիկոս Խրիմյան Հայրիկին և հույս հայտնվում, որ Հայոց նոր Հայրապետն իր նախորդի օրինակով «տոգորւած լինէր զուտ ժողովրդական գաղափարներով»²¹:

«Երիտասարդ Հայաստանն» անդրադառնում է 1907 թ. Եղիպտոսի Ալեքսանդրիա քաղաքում տեղի ունեցած հնչակյան հրապարակային ժողովում Մուրատի (Հ. Պոյաճյան) արտասանած ճառին, ուր հայտնի գործիչն անդրադարձել է Հայ ազատագրական պայքարի անցած շրջանի անհաջողությունների պատճառներին: Մուրատը նշում է, որ «բռնութեան դէմ գործնականապէս կուղոներուն թիւը շատ սահմանափակ եղաւ. և Հայ ժողովրդին մեծ մասը որք հոգով թոյլ գտնւեցան, խոհեմութեան քարոզ կարդալով» Ծառեցին կովող ուժերը և մեծ վնաս պատճառեցին գործին: Մյուս պատճառը պայքարի ելած ուժերի մեջ միասնականության բացայացությունն էր. «Կուսակցութեանց անհամաձայնութենէն և համերաշխ չգործելէն մեծ մասամբ օգտւեցաւ թշնամին և ատկէ յառաջացած անցեալ տիպուր գեպքերը ...»²²: Մուրատն իր ճառում կոչ է անում «Յեղափոխական գործէն քաշող չեղոք Հայրենակիցներին» ոտքի կանգնել և պաշտպանել իրենց իրավունքները, հեռու մնալ օտար երկրներ գաղթելուց, քանզի, իր իսկ բնորոշմամբ՝ «Հայուն հողը, տեղը, բնակարանը Հայաստանն է»²³: Զարգացնելով այս միտքը՝ «Յաղթանակը պատոյ իրաւունքի ժողովրդինն է» խմբագրականում Շահումյանը դատապարտում է «անասնական համբերատարութիւնը», որի հետևանքով Հայ ժողովրդի մի գգալի հատված, թողնելով «պապերի գերեզմանները» լքեց Հայրենի հողը, սկսեց «վատաքար բաղդ փնտուել օտար երկրներում»²⁴: Կարևորելով ազգային արժանապատվության հարցը՝ նա գրում է. «Պատիւ... Ի՞նչ կայ դրանից աւելի թանկ, աւելի բարձր և աւելի սուրբ, սակայն Հայ ժողովրդի դատապարտութեան արժանի անտարբերութեան շնորհիւ թէ՛ մարդկային և թէ՛ իր ընտանեկան այդ սրբութիւնը պղծուել է դարեր շարունակ ու անպատիծ կերպով»²⁵: Խմբագրական հոգվածում շեշտվում է այն միտքը, որ ազատ Հայրենիք ստեղծելու միակ ճանապարհը համընդհանուր գինված պայքարի ուղին է: Մեկ այլ խմբագրականում Շահումյանը պատասխանում է Հայության չեղոք հատվածի այն պնդմանը, թե իրը ժողովուրդն «աւելի բաղդաւոր» կիներ, եթե ազատագրական շարժում չծավալեր: «20 տարուց ի վեր պայքարում ենք այս համոզմունքի սխալականութեան դէմ», – գրում է հեղինակը: Հատ նրա, նման մտայնության կրողները չուզեցին ըմբռնել,

²⁰ Նույն տեղում:

²¹ Նույն տեղում:

²² «Երիտասարդ Հայաստան», 08. I. 1908:

²³ Նույն տեղում:

²⁴ «Երիտասարդ Հայաստան», 22. I. 1908:

²⁵ Նույն տեղում:

«մէ դամոկլեան սրի պէս տաճկահայ ժողովրդի գլխին կախուած է «օսմանեան ազգային քաղաքականութեան» արհաւիրքը», որի արդյունքում հայ ժողովրդին սպառնում էր իսլամացման վտանգը²⁶:

«Յետադարձ ուղղութիւն» խմբագրական հոդվածը «յեղափոխական գործունեութիւնը»²⁷ համարում է հայ ժողովրդի համար «միակ ուղին», իսկ բոլոր նրանց, ովքեր նպատակ ունեն շեղել նրան այդ ուղուց և զբաղեցնել «բացառապէս լէզալ գործերով», անվանում է «յետադարձ ուղղութեան պաշտպաններ», որոնց տեսակետը հայուրարում է ժամանակավորեպ ու վնասակար ընդհանուր գործին²⁸:

«Երիտասարդ Հայաստանը» տպագրում է Թավրիզի հնչակյանների կազմակերպած հանդեսում Արտեմիուսի արտասանած ճառը, որի եզրափակիչ մասում բանախոսը կոչ է անում կուսակիցներին «անվեհերությամբ մասնակցելու գալիք թէ՛ Ռուսաստանի և թէ՛ արիւնլւայ ՏաճկաՀայաստանի ապստամբութիւններին», կովել բռնակալների դեմ հանուն ճնշված ու հարատահարված հայ ժողովրդի²⁹: Ինչպես տեսնում ենք, բանախոսը ուռսական և թուրքական վարչակարգերը դիտարկում է նույն հարթության մեջ՝ կոչ անելով մասնակցել իշխանությունների դեմ բարձրացված ապստամբություններին:

Արտեմիուսի ճառը, որն ավարտվում է «Կորչի՛ն աշխարհի բոլոր բոնակալները», «Կորչի՛ Կարմիր սուլթանը», «Կեցցե՛ Միջազգային Սօցիալ-դեմօկրատիան», «Կեցցե՛ փրկարար Սօցիալիզմը», «Կեցցե՛ հնչակյան կուսակցութիւնը» կոչերով, տվյալ ժամանակաշրջանի հնչակյան տեսաբանների մտայնության ու գործելակերպի տիպիկ արտահայտությունն է: «Հեղափոխականությամբ» տոգորված հնչակյան գործիչներն անտեսում կամ աչքաթող են անում այն կարևոր հանդամանքը՝ դրա իրագործման ընթացքում անխուսափելիորեն տեղի կունենա հայության ազգային ուժերի պառակտում, որն էլ ավելի անիրատեսական կդարձնի արևմտահայության ձգտումը. այն է թուրքական տիրապետությունից ազատագրվելու հայության իրական գերիսնողիրը: Գաղափարական դուռալիզմը դարձավ կուսակցության պառակտման պատճառներից մելլո: Այս համատեքստում անդրադառնալով հնչակյան կուսակցության ներքին դրության հարցերին՝ «Արձագանքներ» վերլուծական հոդվածում Արծրունին սուր քննադատության է ենթարկում հնչակյան այն հատվածին, որոնք ձգտում են «ուրանալ տասնեակ տարիներով իրենց դաւանած սկզբունքներն ու գաղափարները, մէկ հարւածով դէն շպտել ... տանջված ժողովրդի սրբազն դասոր»³⁰:

Արձարծելով կուսակցության այս հատվածի մտայնությունը՝ Արծրունին հեգնանքով գրում է. «Զէ՞ որ Ռուսաստանի նոր կեանքը նրանց համար մօտնի սօցիալ-դեմօկրատիզմ է քարոզում, չէ՞ որ նրանց հայեացքով

²⁶ «Երիտասարդ Հայաստան», 05. II. 1908:

²⁷ Ժամանակի տերմինաբառնությամբ արևմտահայերի «յեղափոխական գործունեություն» ասելով՝ պետք է հասկանալ ազգային-ազատագրական պայքարը:

²⁸ «Երիտասարդ Հայաստան», 15. I. 1908:

²⁹ «Երիտասարդ Հայաստան», 22. I. 1908:

³⁰ «Երիտասարդ Հայաստան», 05. II. 1908:

ազգութիւնը դատարկ բան է... Զէ՞ որ մեր պարուները Մարքսից աւելի մարքսիստ ու Պապից աւելի կաթոլիկ են»³¹:

Նկատենք, որ հայ ազգային-քաղաքական կյանքում ապագա սոցիալաստական հասարակության մասին տարաբնույթ և աղոտ պատկերացումները, սոցիալիզմի գաղափարախոսության դոգմատիկ ընկալումն ու քարոզությունը պատմական իրականության անտեսման պայմաններում ծանր և անդառնալի հարված հասցրին հայ ազգային ուժերի միասնության ու համաձայնության և ազգային խնդիրների իրականացման գործին:

Հայ ժողովրդի ու, հատկապես, նրա արևմտահայ հատվածի սոցիալանտեսական վիճակի հարցերը լայնորեն լուսաբանվում են պարբերականի՝ «Նամականի» և «Թղթակցութիւններ» բաժիններում: Տպվում են ինչպես Արևմտյան Հայաստանի, այնպես էլ արտասահմանի տարբեր երկրների սոցիալ-տնտեսական ու քաղաքական իրավիճակի մասին հաղորդումներ: Դրանք կրում են «Նամակ Բաքվից», «Նամակ Սոփիայէն», «Նամակ Թավրիզէն» խորագրերը և այլն: Օրինակ՝ «Նամակ Գուղառտէն» հաղորդման մեջ խոսվում է Սև ծովի Կովկասյան ափերը գաղթած համշենահայերի ծանր տնտեսական դրության մասին, որոնց կեղեքում, շահագործում են «հողատէր անկուշտ կնեազները, վաշխառուները, ցարիզմի անկուշտ չինովիկները»: Հեղինակը (Գոռ-Իշխանիկ) ցավով նշում է, որ օտարներից առավել «կեղեքում են հայ չորբաճիները»³²:

Պարբերականի «Թղթակցութիւններ» բաժնում անփոփոխ տպագրված է «Տարոնցի» ծածկանունով թղթակցի «Նամակ Մշոյ դաշտէն» հաղորդումը, որում ներկայացված է Տարոն գավառի հայության իրական դրությունը, թուրք-քրիտական բռնությունների սաստկացումը Սասնո դեպքերից և հայդուկային շարժման վայրէջքից հետո ընկած ժամանակաշրջանում: Նամակը լի է ողբերգական շեշտագրումներով և ավելի շատ անելանելի վիճակից դուրս գալու աղերանք է հիշեցնում: Դրա հեղինակը փորձում է առաջ տանել այն միտքը, որ թուրք-քրիտական հալածանքների ուժնացումն ուղղակիորեն պայմանավորված էր հայ «յեղափոխականների» գործունեությամբ, որոնցից յուրաքանչյուրի հետ իրենք մեծ հույսեր էին կապել: Նշվում են Մ. Տամատյանի, Մուրատի, Սերոբի, Անդրանիկի անունները: Հեղինակն ի ցույց է գնում Տարոնի հայության հավաքական վերաբերմունքն ազատագրության գործին, վեր է հանում ոչ թե պայքարելու, այլ դաժան իրականության, դառը ճակատագրի հետ համակերպվելու, իրենց վրկությունն առանձին հայութկների կամ օտար միջամտության հետ կապելու հայ աշխատավորի մեջ իշխող ցավալի մտայնությունը³³:

Ուշագրավ է նամակագրի կողմից «յեղափոխականների» գործելակերպը բնորոշող այն վկայությունը, ըստ որի՝ վերջիններս զենք գնելու նպատակով գյուղացիներին համոզում էին կամ նույնիսկ ստիպում ծախելու իրենց անասունը, բայց շատ դեպքում թե «զենք ինչ եղաւ չէմք գիտէր»³⁴: Նամակի հեղինակը, մասնավորապես, գանգատվում է Անդրանիկից, սա-

³¹ Նույն տեղում:

³² Նույն տեղում:

³³ «Երիտասարդ Հայաստան», 06. V. 1908:

³⁴ Նույն տեղում:

կայն մեզ համար հասկանալի է դառնում այն հանգամանքը, որ, չբացառելով առանձին ծայրահեղ քայլերը, վերջինս իրեն բնորոշ մեթոդներով փորձել է հայ աշխատավորի գիտակցության մեջ մտցնել ամեն գնով զինվելու, իր տունը, ունեցվածքը, պատիվն իր ձեռքով պաշտպանելու գաղափարը³⁵:

Տարոնի հայության դեմ գործած քրդական վայրագությունների նկարագրությունն է տրված պարբերականի «Նամակ Մուշէն» թղթակցության մեջ³⁶:

Պարբերականը տպել է Ասօի (Տիգրան Օտյան) հոդվածը Ռւրմիա լճի մոտ գտնվող ասորաբնակ Մավանա գյուղի մասին, որը հերոսաբար դիմադրել է թուրք-քրդական հրոսակներին ու ոչնչացվել³⁷:

«Երիտասարդ Հայաստանի» ուշադրության կենտրոնում էին Պարսկաստանի ներքաղաքական իրավիճակին վերաբերող հարցերը³⁸: Պարսկական խնդրին է նվիրված նաև Ս. Հովյանի «Խորասանի նամականի» հոդվածը³⁹: «Նամակ Թավրիզէն» հաղորդման մեջ ներկայացվում է 1908 թ. Թավրիզի խառն ու վտանգավոր իրավիճակը՝ ամեն օր բախումներ, սպանություններ, կովկներ շահի և սահմանադրական շարժման կողմնակիցների միջև⁴⁰: Հեղինակն (Artemius) արծարծում է «Պարսկաստանը բաժան-բաժան անելու նենգաւոր Ալբիոնի-Անգլիայի, գիշատիչ ուսւ կառավարութեան և կարմիր գաղանի՝ սուլթան Համիտի գիտաւորութիւնների» հարցը⁴¹:

Շաբաթաթերթը մեծ տեղ է տալիս միջկուսակցական հարաբերություններին վերաբերող հարցերին: Պարբերականի բազմաթիվ հոդվածներում ու հաղորդումներում լուսաբանվում են միջկուսակցական համագործակցության, ինչպես նաև՝ միջկուսակցական պայքարի խնդրիները: Ընդհանուր առմամբ, «Երիտասարդ Հայաստան» արտահայտված Հակադաշնակցական ուղղություն ուներ: 1908 թ. գեկտեմբերի մի շարք համարներում կան արտաստված հոդվածներ «Իրավունք», «Երկի ձայն», «Մշակ», «Լուսաբեր» թերթերից, որոնցում դատապարտվում է թուրք-դաշնակցական համագործակցությունը՝ այն որակելով «ոչ միայն ցաւալի, այլև ամոթալի երևույթ»⁴²:

1908 թ. մարտի 4-ի համարի խմբագրական հոդվածում քննադատության է ենթարկվում դաշնակցությունը, որը, մերժելով Մուրատի առաջ քաշած ազգային կուսակցությունների համերաշխության գաղափարը, Փարիզում՝ համաձայնություն է կնքում երիտասարդ թուրքերի հետ սուլթանական կարգերը տապալելու հարցի շուրջ: «Ժէօն թիւրքերը լինելով համաօսման շարժման կուսակիցներ Հայկական վեց նահանգների ազատութեան իրավունքը չեն ճանաչում ...», — գրում է Շ. Շահումյանը:

³⁵ Նույն տեղում:

³⁶ «Երիտասարդ Հայաստան», 05. VII. 1911:

³⁷ «Երիտասարդ Հայաստան», 15. I. 1908:

³⁸ «Երիտասարդ Հայաստան», 19. II. 1908, 26. II. 1908:

³⁹ «Երիտասարդ Հայաստան», 01. IV. 1908:

⁴⁰ «Երիտասարդ Հայաստան», 08. I. 1908:

⁴¹ «Երիտասարդ Հայաստան», 29. I. 1908:

⁴² «Երիտասարդ Հայաստան», 19. II. 1908, 26. II. 1908, 04. III. 1908:

Հստ նրա, թուրք-դաշնակցական համերաշխությունը տապալում է հայկական նահանգների բարենորոգումների ծրագիրը և նրա փոխարեն առաջ է մղվում «Թիւրքիան նորագոյն պետութեան վերածելու նպատակը, մի կոչում՝ որ մենք (հայերը – Գ. Հ.) բնաւ չենք ստանձնած»:

1908 թ. մայիսի 20-ի խմբագրականում քննադատության է ենթարկվում Մարտելում հրատարակվող «Արմենիա» թերթի խմբագիր Մկրտիչ Փորթուգալյանը, որը երիտթուրք-դաշնակցության համագործակցությանը հնչակյանների գեմ լինելը պատճառաբանել է միջկուսակցական մրցակցությամբ։ Ցույց է տրվում, որ իրականում հնչակյաններն առաջնորդվում են ազգային շահով։

Պարբերականի համարներում կան վանից ստացված նամակներ, ուր նկարագրված են դաշնակցականների և արմենականների զինված բախման դեպքերը⁴³։ Մի կողմ թողնելով կուսակցական խնդիրները՝ պարբերականը հարգանքի տուրք է մատուցում և ցավում «ազնիւ ու համեստ անձնավորութեան, արմենականների անմոռաց պարագլուխ երվանդ Քեոսէանի (Սեպուհ) մահը»⁴⁴։ «Մշակյց» արտատպվում է «Արփիարյանի սպանութեան շուրջը» հոդվածը, ուր դատապարտում են այդ ոճրագործությունը։ Թեպետ նշվում է, որ հնչակյանների ու Արփիարյանի միջև լուրջ տարածայնություններ են եղել, սակայն ազգային գործիչների սպանությունը պարբերականը դատապարտում է⁴⁵։

«Ազնիվ պայքարը» հոդվածաշարով հնչակյան գործիչ, տեսաբան Սոկրատ խան Գելոֆյանցը բանավեճի մեջ է մտնում սահմանադրական-ռամկավարների հետ։ Նա առաջ է մղում և պաշտպանում դասակարգային պայքարի ու ընկերվարության գաղափարը և ճիշտ չի համարում հասարակության տարբեր խավերի համերաշխության ու ազգի իրավունքների համար համատեղ պայքարի սահմանադիր-ռամկավարների տեսակետը⁴⁶։

«Երիտասարդ Հայաստանի» քննադատության թիրախում էին նաև վերակազմյալ հնչակյանները, որոնց կազմից պարբերականն առանձնում էր հատկապես Ա. Արզույանին ու նրա համախոհներին, որոնք կազմում էին այդ կուսակցության արմատական թերը⁴⁷։

Միջկուսակցական հարաբերությունների համատեքստում պարբերականը նաև արծարծում է հայոց եկեղեցու ու ազգային կուսակցությունների փոխհարաբերությունների հարցը⁴⁸։

«Երիտասարդ Հայաստանի» արծարծած թեմաների շարքում առանցքային նշանակություն ունեն հայկական բարենորոգումներին և երիտթուրքերի շարժմանը վերաբերող հարցերը, որոնց լուսաբանմամբ աչքի է ընկնում Ստ. Սապահ-Գյուլյանը։ «Թուրք բռնապետութիւնը եւ Երիտասարդ թուրքերը» հոդվածաշարում անդրադառնալով երիտթուրքերի գաղափարախոսությանը, նրանց նպատակներին ու գործունեությանը՝ նա գրում է,

⁴³ «Երիտասարդ Հայաստան», 25. III. 1908, 15. IV. 1908:

⁴⁴ «Երիտասարդ Հայաստան», 15. IV. 1908:

⁴⁵ «Երիտասարդ Հայաստան», 18. III. 1908:

⁴⁶ «Երիտասարդ Հայաստան», 19. II. 1911, 22. II. 1911, 01. III. 1911:

⁴⁷ «Երիտասարդ Հայաստան», 31. VIII. 1910:

⁴⁸ «Երիտասարդ Հայաստան», 08. VII. 1908:

որ 1907թ. գեկտեմբերին Փարիզում կայացած Օսմանյան կայսրության ընդդիմաղիր ուժերի կոնգրեսի կազմակերպիչ «Միություն և առաջադիմություն» կուսակցության ներկայացուցիչները հրաժարվեցին ճանաչել կայսրությունում ապրող ժողովուրդների՝ հույների, ալբանացիների, մակեդոնացիների, արաբների, հայերի «միջազգայնօրէն ճանչցուած դատերի գոյութեան իրողութիւնը և իրաւունքը»⁴⁹: Հեղինակը գտնում է, որ դաշնակցականների մասնակցելը կոնգրեսի աշխատանքներին և համագործակցությունը իմթիհատի հետ հայ ժողովրդի համար որևէ զբական տեղաշարժ չի առաջացնելու և «Տաճկահայ դատը նորից առաջ կերթայ իր ինքնուրոյն ճանապարհովը ինչպես որ մինչև ցարդ»⁵⁰: Համեմատության համար Սապահ-Գյուլյանը բերում է ոռոսական բռնակալության դեմ ոտքի ելած քաղաքական ուժերի՝ Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության և ոռուս սահմանադրական-դեմոկրատական կուսակցության (կաղեստներ) օրինակները, որոնք նոր Ռուսաստանի ստեղծման ճանապարհին ընդունում էին երկրի բաղկացուցիչ ժողովուրդների ազգային-հավաքական գոյության ու տեղական ինքնավարության իրավունքը: Այդ կուսակցությունների հետ Ռուսաստանի տարբեր ժողովուրդների ազգային կուսակցությունների համագործակցությունը ցարիզմի դեմ պայքարում հողվածագիրը հասկանալի է համարում⁵¹:

Սապահ-Գյուլյանը գրում է, որ երիտթուրքերը հպատակ ժողովուրդներին առաջարկում են «գէնքը վայր դնել»՝ անորոշ և անստույգ խոստումներ տալով, սակայն հայ ժողովուրդը չի կարող հրաժարվել մեծ գոհողությունների գնով ձեռք բերված և միջազգայնորեն ճանաչված իր իրավունքից. մի իրավունք, որը «առվաճան Համիտը, ինքը բռնավորը ստիպւել է ճանաչել»⁵²: Հողվածում հեղինակը նշում է, որ երիտասարդ թուրքերը մինչև վերջ չճանաչեցին Հայկական խնդիրը և նրա դեմ պայքար մղեցին «Ծերունիներից» ոչ պակաս թափով: Հաստ նրանց թեովինի 61-րդ հոդվածը, Մայիսյան բարենորոգումների ծրագիրն օսմանյան պետության անկախությունը ուժնահարող գործողություններ էին, հետևաբար, նրանք մշտական հանդես են եկել այդ սկզբունքները պաշտպանող պետությունների դեմ⁵³: Սապահ-Գյուլյանը մերժում է երիտթուրքերի առաջ քաշած այն թեզը, թե 1890-ական թվականներին Հայկական կոտորածների միակ պատասխանատուն սուլթան Համիդն է: Նա Հայտարարում է, որ այդ կոտորածների «պատճառը և պատասխանատու ազգակը թրքական նացիօնալիզմն է եղած», ու այդ կոտորածների ընթացքում «իրենց բաժինը ունեցան և՛ թուրք զորքերը, և՛ ինքը թուրք ժողովուրդը»⁵⁴: Նրա համոզմամբ՝ երիտթուրքերը պարտավոր էին դա խոստովանել և ոչ թե ողջ պատասխանատվությունը դնել միայն սուլթանի վրա:

⁴⁹ «Երիտասարդ Հայաստան», 11. III. 1908:

⁵⁰ Նույն տեղում:

⁵¹ Նույն տեղում:

⁵² «Երիտասարդ Հայաստան», 18. III. 1908:

⁵³ «Երիտասարդ Հայաստան», 25. III. 1908:

⁵⁴ «Երիտասարդ Հայաստան», 29. IV. 1908:

Սապահ-Գյուլյանը հերքում է երիտթուրքերի այն հայտարարությունը, թե Օսմանյան կայսրության բոլոր ժողովուրդներն էլ նույն հալածանքներին են ենթարկվել ինչպես Հայերը և Հիմնավոր փաստերով (Հայերի հողերի ապօրինի զավթումներ, ազատ տեղաշարժի արգելք, բազմաթիվ հարկեր ու այլն) ի ցույց է դնում այդ հայտարարության հիմնազորկ լինելը։ Հողվածագիրը պարզաբանում է, որ, «Հեղափոխություն» ասելով, ըստ էության, երիտթուրքերը «պալատական դավադրութեամբ անձի փոփոխութիւն են հասկանում»։ Նրանց իրական էությունը ցույց տալու համար Սապահ-Գյուլյանը վկայակոչում է իմթիհատական օրգան «Մեշվերեթի» 1908 թ. հունվարի 1-ի համարը, որում թերթը իմթիհատի հետ չհամագործակցող ուժերին համարում է «ներքին թշնամի»⁵⁵։ Այս փաստարկներից հետո Սապահ-Գյուլյանը եղրակացնում է։

1) «Երիտասարդ թուրքերը» ձգտում են «խեղդել ինչպես ուրիշ նույնապես և Հայկական Դատը և սահմանադրութեան կիրառութեամբ իրականացնել թուրք նացիօնալիզմը և թուրք ազգային քաղաքականութիւնը՝ իր բոլոր հետևանքներով»։

2) «Իրենք յեղափոխականներ չեն և համագործակցութեան գաղափարը իրենց համար մի միջոց է ներքին շարժումների առաջն առնելու, որպեսզի արտաքին միջամտութիւն չլինի»։

3) ««Երիտասարդ թուրքերի» հետ համագործակցութեան մէջ կարելի է մտնել միայն այն ժամանակ, եթե իրենք օսմաննեան կայսրութեան ամբողջական վերանորոգման գաղափարը պաշտպանած ժամանակին՝ միատեղ կը պաշտպանեն և՝ ինքնավար Հայաստանի գաղափարը»։

4) «Նոր Թիւրքիայի շինութեան և վերանորոգութեան մէջ բոլոր ազգերը և դասակարգերը համահաւասար ձայն և իրաւունք պիտի ունենան ինչպես և նույնանման պարտականութիւններ»։ Եթե այս նախապայմանները չեն իրագործվելու երիտթուրքերի կողմից, ապա «մեզ համար չկայ ընդհանուր Թիւրքիայի վերանորոգութեան օսմաննեան համապետական խնդիր»։ Մեզ համար կա միայն Հայաստան և Հայկական խնդիր։ Քսան տարուայ թափած արիւնից յետոյ մենք չենք կարող ձեռք վեր առնել մեր իրաւունքներից և ընկնել ստուերների յետևից»⁵⁶։

Խոսելով երիտթուրքի հետ համագործակցության մասին «Համերաշխութիւնը ճեղքում է» խմբագրականում՝ Շահումյանը գրում է, որ երիտթուրքերն այդպես էլ չճանաչեցին Հայկական հարցի գոյությունը և նրա գեմ պայքար մղեցին «Հին թուրքերից ոչ պակաս թափով»։ Եվրոպական միջամտությունը բացառելու նպատակով Օսմանյան կայսրությունում գոյություն ունեցող Հայկական, Մակեդոնական, Արաբական, Ալբանական և այլ հարցերը ժխտելու դիրքորոշման որդեգրումը հողվածագիրը համարում է «մէօն թուրքերի հաւատոյ հանգանակը»⁵⁷։

Հեղինակը հավատ չի ներշնչում երիտթուրք-դաշնակցություն համագործակցությանը։ Հակադրվելով դաշնակցականների այն պնդումներին,

⁵⁵ Նույն տեղում։

⁵⁶ Նույն տեղում։

⁵⁷ «Երիտասարդ Հայաստան», 06. V. 1908:

թե համագործակցելով երիտթուրքերի հետ իրենք չեն հրաժարվել ո՛չ Հայկական հարցից և ո՛չ էլ եվրոպական միջամտությունից Շահումյանը վկայակոչում է երիտթուրքերի օրդան «Մեշվերեմի» խմբագիր Ահմեդ Ռոզայի խոսքերը, որը, պատասխանելով “L'Humanité” և “Pro Armenia” թերթերի այն հրապարակումներին, թե երիտթուրքերն «ընդունել են յեղափոխական ամէն միջոցները»՝ ընդգծել է իրենք մերժում են օտար պետությունների միջամտությունը և հեղափոխությունների այն բնույթն ու ընթացքը, որոնք տեղի ունեցան Ֆրանսիայում և Ռուսաստանում:

Խմբագրականը եզրակացնում է, որ, հակառակ դաշնակցականների բոլոր հավաստիացումներին, «Ժէօնթթուքօ-դաշնակցական» համերաշխությունն ապագա չունի, քանի որ հիմնված է «անվատահութեան ու կեղծիքի վրայ և չի վայելում ընդհանուր հայ ժողովրդի համակրութիւնը»⁵⁸: Ժամանակը ցույց տվեց այս եզրակացության հիմնավոր լինելը:

1908 թ. հուլիսին երիտթուրքական հեղաշրջումից հետո Թուրքիա վերադան սուլթանական վարչակարգին ընդդիմադիր շատ գործիչներ, այդ թվում հնչակյաններ: Օգոստոսի 16-ին հնչակյան պատվիրակները (Սապահ-Գյուլյան, Մուրատ, Հ. Ճանկյուլյան, Մ. Տամարյան) պաշտոնական այցելություն կատարեցին Կ. Պոլսի իթթիհաստական կոմիտեի կենտրոնատեղին, որտեղ նրանց ընդունեց գոկտոր երիտթուրքերի պարագլուխներից Բեհչաչդդին Շաքիրը⁵⁹: Հնչակյանները ողջունեցին երկրում հոչակ-ված Սահմանադրությունը և հույս հայտնեցին, որ այն հնարավորություն կրնձեռի խորհրդարանական պայքարով հետզհետե ընդլայնել գեմոլիքատական կարգերը: Թեսեատ հնչակյանները ողջունեցին օսմանյան Սահմանադրության վերահաստատումը՝ այն համարելով առաջադիմական, կարողացան դուրս գալ ընդհաստակից և անցնել լեզար գործունեության, այնուամենայնիվ շարունակում էին անվատահությամբ ու թերահավատորեն վերաբերվել երիտթուրքերի խոստումներին: Պատահական չէր հետեւյալ հանգամանքը. երբ Կ. Պոլսի վերադարձած Փարամազը, Ասօն և ուրիշ գործիչներ ձգտում էին կուսակցության կենտրոնը Փարիզից Կ. Պոլսի տեղափոխել, դրան գեմ է արտահայտվում Սապահ-Գյուլյանը: Նա մինչև վերջ համոզված մնաց «Թուրքի անհավատարմութեան, հայաջինջ քաղաքականութեան իր սկզբունքին և երբեք չէր ուզիլ, որ կեդրոնը փոխադրուեր Պոլս»⁶⁰:

«Թուրքական սահմանադրութեան առթիւ» խմբագրականում Սոկրատ Գելոֆյանցը վերլուծության է ենթարկում սուլթանի կողմից 1908 թ. հուլիսի 24-ին արած հայտարարությունն օսմանյան Սահմանադրության հոչակման մասին: Ո՞րն էր դրա շարժառիթը, ինչո՞ւ «երեսուն տարուց ի վեր, Միդհատի հետ գերեզման իջած Սահմանադրութիւնը» սուլթանը կրկին կյանքի է կոչում: Հողվածում ցույց է տրվում, որ դրա բուն պատճառը ոչ թե սուլթանի հանկարծահաս բարեհաճությունն է, այլ այն՝ նա

⁵⁸ Նույն տեղում:

⁵⁹ «Ազգ» (Բոստոն), 26. IX. 1908:

⁶⁰ Սապահ-Գիւլեան Բերուղ. Կենսագրութիւն Ստեփան Սապահ-Գիւլեանի, Նիւ-Եօրք, 1936, էջ 88:

տեղի է տվել «յեղափոխական գրոհի առաջ՝ պաշտպանելու համար օսմանեան բռնակալական գահի երերուն հիմքերը»⁶¹: Խմբագրականում մեկ այլ հանգամանք էլ է նշվում. Վիլհելմ կայսրն անհանգստանալով Ռուսաստանի, Անգլիայի և Ֆրանսիայի ռազմաքաղաքական մերձեցումից, Թուրքիայի վրա ունեցած իր ազգեցությունը պահպանելու, Թուրքիայում Գերմանիայի տնտեսական ու ռազմավարական շահերը պաշտպանելու մտայնությամբ՝ խորհուրդ է տվել սուլթանին՝ «Մակեդոնիան չտալու և եվրոպական միջամտութիւն չունենալու համար մի անգամ ևս հրապարակ նետէ Սահմանադրութեան լէշը», որի շուրջն առաջացած «տգեստ ու տղայական ամբոխի խրախճանքը» ժամանակ շահելու հնարավորություն կրնածեոի և կիսուընդուոի Մակեդոնիայի անջատումն ու եվրոպական միջամտությունը»⁶²:

Լինելով հնչակյան կուսակցության օրդան՝ «Երիտասարդ Հայաստանը», բնականաբար, պետք է արտահայտեր կուսակցության որդեգրած գործունեության նոր ուղղությունը: Այսինքն՝ պարբերականը տպագրում է Կ. Պղասում կայացած ՄԴՀԿ 6-րդ Ընդհանուր պատգամավորական ժողովի (1909 թ. Հուլիս) հայտարարությունը, որում ողջունելով օսմանյան Սահմանադրությունը՝ հայտարարում էր՝ կուսակցությունը հրաժարվում է ընդհատակյա գործունեությունից և «կանգնում գործունեութեան լէգալ հողի վրայ»: Ինչ վերաբերում էր Ռուսաստանին, ապա ժողովն որոշեց շարունակել նախկին անլեզալ գործունեությունը, մինչև «կը խորտակւին ներկայ միապետական-բռնապետական կարգերը ...»⁶³: Մինչ այդ հնչակյան կուսակցությունը հայերեն և թուրքերեն հայտարարություն տարածել էր, որում ողջունում էր «օսմանեան հայրենակիցները Խորհրդարանին բացման առթիւ»⁶⁴:

«Տաճկական թեղափոխութիւնը եւ մեծ պետութիւնները» հոդվածում Տաշիրը հույս է հայտնում, որ Երիտասարդ Թուրքերը չպետք է բավարարվեն ձեռք բերածով, այլ պետք է ընդարձակեն, ընդայնեն իրենց գործունեությունը խորհրդարանի գումարմամբ, մինչև որ կայսրության բոլոր ժողովուրդները նույն իրավունքներն ու արտանությունները, նույն քաղաքական ու զինվորական պարտականություններն ունենան, «քանի որ ազգութիւնների և ժողովուրդների ինքնաւարութեան խնդիր կա մեր տեսակետից»: Հոդվածագիրն իրավացիորեն կարծում է, որ այդ դեպքում եվրոպական մեծ պետությունների կողմից ազգային հարցերի շահարկումներին վերջ կտրվի: Տաշիրը ճիշտ էր նաև այն հարցում, որ ամեն մի մեծ պետություն «կամենում է խանգարել, որպեսզի որևէ ուղիւ Մեծ պետութիւն պարտած թիւրքիայի հաշւով առաւել ուժեղ չդառնայ»⁶⁵:

1909 թ. ապրիլին տեղի ունեցավ կիլիկիահայության սոսկալի կոտորածը, որին զոհ գնաց շուրջ 30 հազ. մարդ: Երիտթուրքերը ցույց տվեցին իրենց հրեշավոր էությունը: Կիլիկիահայության կոտորածների կապակցությամբ

⁶¹ «Երիտասարդ Հայաստան», 19. VIII. 1908:

⁶² Նույն տեղում:

⁶³ «Երիտասարդ Հայաստան», 12. I. 1910:

⁶⁴ «Երիտասարդ Հայաստան», 06. I. 1909:

⁶⁵ «Երիտասարդ Հայաստան», 02. IX. 1908:

«Նոր ջարդը» խմբագրականում Բ. Վարագողատը գրում է. «Հազիւ ինն ամիսներ էին անցած «Ազատութիւն, Հավասարութիւն և Եղայրութիւն» հրապուրիչ խորագլերու տակ Թիւրքիոյ մէջ ներկայացւած թատերգութեան վրայէն, ահա՝, անոր տիսուր դերակատարներէն կիսավայրենի թիւրքը վար առնելով դիմակը՝ բեմին վրայ դուրս կուգայ իր իսկական պատկերով»⁶⁶: Նա մատնանշում է այն հանգամանքը, որ օսմանյան Սահմանադրության հոչակումից հետո, հակառակ հայ ժողովրդի զինաթափ լինելու «փաշաների, պնակալեզների և բուրժուագիայի խնկարկումներ ու բարբաջանքներին», հնչակյանները շարունակեցին նրանց զինելու իրենց գործը՝ «կազմ ու պատրաստ գտնելու համար գալիք ընեաքսիոնէրական շարժումներու դէմ»: Հողվածում առաջ է մղվում մի կողմից կիլիկիահայության «նիւթական օգնութիւն հասցնելու» և մյուս կողմից՝ «ինքնապաշտպանութեան» անհետաճգելի գործը⁶⁷:

«Սուլթանին գահընկեցութիւնը» խմբագրական հողվածում Սոկրատ խան Գելոֆյանցը պահանջում է խատորեն պատմել կիլիկիահայության կոտորածի հեղինակներին, որի համար նա մեղադրում ու դատապարտում է և՝ սուլթանին, և՝ երիտթուրքերին: Վկայակոչելով երիտթուրքերի պարագուխներից Ակմեդ Ռոգայի՝ «եթե հայերդ հանգիստ չմնաք պիտի կոսորուիք» հայտարարությունը՝ հողվածի վերջում Գելոֆյանցը գրում է. «Եւ այս բոլորը հակառակ հայ տարրի անկեղծ ցանկութեան, որի միակ բաղձանքն է Թիւրքիան եւ իր Հայրենիքը տեսնել ինքնապարզացման շաւդին մէջ, առանց օտարի, առանց եւրոպայից եկած օգնութեան»⁶⁸:

Բալկանյան թերակղզու ժողովուրդների դեմ թուրքական կառավարության գործադրած բռնուվթյունների կապակցությամբ պարբերականի «Թիւրքիոյ տագնապը» հաղորդման մէջ ընդգծվում է այն հանգամանքը, որ «Ժէօն Թիւրքերը, որ այնքան հոչակ ստացեր էին իրենց «անկեղծութեան, ազատամտութեան և արդարասիրութեան» համար, հետզհետէ կը վարկաբեկւին իրենց որդեգրած ներկայ պժողալի սիստէմին համար»⁶⁹:

«Նօթեր նոր Թիւրքիոյ իրականութենէն» խմբագրականում Հմայակ Արամյանցը գրում է, որ հակառակ սահմանադրական Թուրքիայի իշխանությունների հավաստիացումներին, թե օսմանյան պետության քրիստոնյաների «ցարդ վայելած իրաւունքները պիտի մնան անձեռնմխելի, նոյն այդ վարչութիւնը գործնական կեանքի մէջ ամեն կերպ կաշխատի հակառակն ընել»: Նա փաստերով ցույց է տալիս, որ «Նոր Թիւրքիան հաւատարիմ հետապնդողն եղաւ համիտեան քաղաքականութեան»⁷⁰:

«Ազգային իրավունքներ եւ ոչ թէ առանձնաշնորհումներ» հողվածում Սապահ-Գյուլյանը հերքում է իշխանության այն մտայնությունը, թե հայ ժողովուրդը ձգտում է առանձնաշնորհումներ ստանալ և արտոնյալ դիրքում հայտնվել: Նա շեշտում է, որ «կարծեցյալ արտօնութիւնները, առանձնաշնորհումները ոչ այլ ինչ են, եթե ոչ ազգային անհրաժեշտ իրա-

⁶⁶ «Երիտասարդ Հայաստան», 28. IV. 1909:

⁶⁷ Նույն տեղում:

⁶⁸ «Երիտասարդ Հայաստան», 05. V. 1909:

⁶⁹ «Երիտասարդ Հայաստան», 19. I. 1910:

⁷⁰ «Երիտասարդ Հայաստան», 16. VI. 1909:

վունքներ», առանց որի հայ ժողովուրդը չի կարող գոյատևել, իրավունքներ, որոնք պետք է հարգել և ընդլայնել՝ «դա է պահանջում թիւրք պետութեան իրական շահը»։ Հոդվածագիրը գտնում է, որ սահմանադրական թուրքիայի ներքին անկայուն վիճակի հիմնական պատճառը ոչ թե հայերն են, այլ՝ «թուրքական նացիօնալիզմը»⁷¹:

«Երիտասարդ Հայաստան» անդրադառնում է նաև թուրքական կառավարության կազմած բարենորոգումների ծրագրին։ Սուլթանի հրովարտակով հաստատված ծրագիրը, որը պիտի ներկայացվեր օսմանյան խորհրդարանի քննարկմանը, պարբերականը «աչքակապութիւն» է համարում։ Անիմաստ է համարում նաև դրա կետերի մասին խոսելը, նրան գնահատական տալը։ Ընդգծվում է այն միտքը, որ այդ ծրագրով կառավարությունը նպատակ ուներ «այս անգամ ալ թաղել հայերու իրական դժգոհութիւնները եւ վերատին մոռացութեան ու խարկանքի մէջ ծրարել Հայկական հարցը»⁷²։ Ըստ պարբերականի՝ խնդիրը լավ ու վատ ծրագրերի կազմությունը չէ, այլ այն՝ «եթե գոյութիւն ունեցող օրենքները իրապէս գործադրուէին, ապա վաղուց վերացված կինեին հայ ժողովրդին գանգատներն ու դժգոհութիւնները» և պետությունն էլ քայլքայված ու կազմալուծված չէր լինի։ Գործող կառավարությունը վստահություն չի վայելում այն պատճառով, որ «հին մտայնութիւնն ու գործելակերպը կըտիրէ երկրին ու մասնաւրապէս պաշտոնեութեան մեջ»։ Այսպիսով, բարենորոգումների թուրքական ծրագիրը Սապահ-Գյուլյանը համարում է «թուրքական աչքակապութիւն», քանի որ այն գուրկ էր նաև եվրոպական վերահսկողությունից⁷³։

«Զարիքին կեղունը» խմբագրականն ավելորդ է համարում «Բարեկարգիչ յանձնախմբերու» կազմության գաղափարը, քանի որ կառավարության համար այն սոսկ ժամանակ շահելու, ըստ էության, խաբելու միջոց է, իսկ խաբելը խմբագրականի բնորոշմամբ՝ «Իթթիհատի համար քաղաքական առաքինութիւն դարձած է»⁷⁴։

Հնչակյանները հայկական նահանգներում բարենորոգումների ծրագրի իրականացման իրական երաշխիք էին համարում եվրոպական վերահսկողությունը։ Պարբերականի թղթակիցներ Ս. Հովյանն ու Ե. Սաֆարյանը թերահավատ էին բարենորոգումների ծրագրերի նկատմամբ և գտնում էին, որ դրանք գործնականում օգուտ չտալուց բացի՝ հայությանը նոր վտանգների առաջ կանգնեցրին⁷⁵։

«Երիտասարդ Հայաստանի» 1912 թ. օգոստոսի 10-ի համարի առաջնորդող հոդվածում առաջ է քաշված այն միտքը, ըստ որի, եթե թուրքիայում բարենորոգումների գաղափարը չի դառնալու պետական սկզբունք, ապա թուրքիայի ճնշված ժողովուրդները «միայն յեղափոխութիւնով և ապատամբութիւնով կրնան պարտադրել թուրք կառավարութեան տեղական բարենորոգումները»։

⁷¹ «Երիտասարդ Հայաստան», 12. IV. 1911:

⁷² «Երիտասարդ Հայաստան» (Փրովիդենս), 13. V. 1913:

⁷³ Նույն տեղում։

⁷⁴ «Երիտասարդ Հայաստան», 22. V. 1912:

⁷⁵ «Երիտասարդ Հայաստան» (Փարիզ), բացառիկ, 10. V. 1914:

1914 թ. հունվարի 26-ին Կ. Պոլսում կնքված ոռուս-թուրքական համաձայնագրի և հայկական բարենորոգումների նոր ծրագրի ընդունումից հետո «Հայաստանի իղձը» հոդվածում «Կայծունի» կեղծանունով թղթակիցը (Աբրահամ Բրուտյան) Վանից գրում էր, որ «ուժորմներու ծրագրի ստորագրութիւր շատ բացասական տրամադրութիւններ է լարած դէպի հայութիւնը»: «Գեավուր», «ուայա», «միլլեթ խայինի»⁷⁶ բառերը դարձեալ սկսած են մեծ թափով շրջան ընել»⁷⁷: Հոդվածագիրը գրում է, որ տեղական առաջնորդների սադրանքով թուրք և քուրդ բնակչության անունից բողոքի հեռագրեր են ուղարկվում «բարձր Դուանը ուժորմ չենք ուզում» բովանդակությամբ: Նշում է՝ Վասպուրականի հայությունը խիստ հոռեսեսորեն էր տրամադրված բարենորոգումների ծրագրի նկատմամբ, որովհետև բոլորն էլ համոզված էին՝ «ուժորմների անվան տակ թաքնված են այս կամ այն պետութեան շահերը»: Իր վիճակի բարեկավումը ժողովուրդը կապում է «օտար գրավման կամ ազգային կուսակցութիւնների կողմից յեղափոխական ուժեղ շարժման» հետ⁷⁸:

Սրա հետ ընդգծում է այն իրողությունը, ըստ որի «թուրք և քիւրտ խուժանը դարձեալ թալանի և կոտորածի ախորժակ կըսրէ չնորհիւ օրուայ կառավարութեան գաղտնի ագէնտներու: ... Ռուսական միջամտութեան վախն է միայն, որ կը սանձէ կատաղութիւններ և պատրւակ կըլլայ բաղխումներու»⁷⁹:

«Խոչեմութեան ասպետներին» հոդվածում հնչակյան գործիչ Աբրահամ Բրուտյանը XVI-XVII դդ. սկսած թուրքական իշխանությունների գործադրած հալածանքներն ի ցույց դնելով հնագանդության կոչ անողներին՝ հիմնավորում է հպատակ ժողովուրդների ազատագրական պայքարը⁸⁰:

Սոկրատ խան Գելոֆյանցը 1910 թ. գրում էր, որ իթթիհատի վարած հետադիմական քաղաքականությունը ստիպում է հայ ժողովրդին լրջորեն խորհել ինքնապաշտպանության անհրաժեշտության մասին⁸¹:

Իսկ 1913 թ. «Հայ ինքնապաշտպանութեան առթիւ» խմբագրականում Սապահ-Գյուլյանը գրում է. «Մեր յեղափոխական պատմութիւնը որոշակի ցույց է տալիս, որ կոտորածներ տեղի չունեցան կամ եղածներն էլ շատ մեծ ծավալ չստացան այն վայրերում, ուր ժողովուրդը զինուած էր և կանգնել էր ինքնապաշտպանութեան գծի վրայ»: Նույնիսկ հայերից ավելի բարվոք դրության մեջ գտնվող մուսուլման ժողովուրդները շարունակ զինվում են ժամանակակից ու կատարելագործված զենքերով: Հոդվածագիրն ընդգծում է, որ նրանք կարող են իրենց ունեցվածքը վաճառել, նույնիսկ պարտքի տակ ընկնել, որպեսզի «զէնքի կողմից մի ուրիշից յետ չմնան»: Ինչ վերաբերում է հայերին, ապա, ըստ հոդվածագրի, «հայը դրամ է փոխ տալիս մուսուլմանին, բայց զենք չունի»: Սապահ-Գյուլյանը

⁷⁶ Նշանակում է «դավաճան ժողովուրդ»:

⁷⁷ «Երիտասարդ Հայաստան», 10. V. 1914:

⁷⁸ Նույն տեղում:

⁷⁹ Նույն տեղում:

⁸⁰ Նույն տեղում:

⁸¹ «Երիտասարդ Հայաստան», 17. VIII. 1910:

եղբակացնում է. «Խարբուսիկ հույսերով չտարվինք, տակավին շա՛տ փոթորիկների պիտի հանդիպինք: ... Հային ուզում են սպաննել, ցանկանո՞ւմ է նա ապրել – ուրեմն պետք է զինուի, պետք է ինքնապաշտպանութեան ամուր հիմքերի վրա կանգնի, ինչ գնով էլ որ լինի»⁸²:

«Անխուսափելի պայքարը» խմբագրականում վերլուծելով իթթիհատի անցած ուղին՝ պարբերականի խմբագիրն առաջ է քաշում այն միտքը՝ անխուսափելի է թուրք ազգայնականությունը մարմնավորող ուժի՝ իթթիհատի ու հայության բախումը, և որ հայերը պետք է պատրաստ լինեն դրան: «Եվրոպայից վտարվող և Ասիայի մէջ ամփոփող Թիւրքիայի ճակատագիրը դարձեալ «Խտթիհատն» է, որ վարել պիտի ուզի: Նա պիտի գործի ազգայնական փրփուրը բերանին, օրհասական սաստկութեամբ: Պայքարը իթթիհատի և հայութեան միջև լինելու է անողոք ու վճռական, – գրում է Սապահ-Գյուլյանը, – և այդ պայքարն է որոշելու հայութեան ճակատագիրը»⁸³: Նա կոչ է անում «օտար ափերում հաստատված հայ գաղութներին» չեզոք, կրավորական դիրք չըռնել, այլ բոլոր հնարավոր միջոցներով սատարել հայոց ինքնապաշտպանության գործին⁸⁴:

Ավաղ, «Երիտասարդ Հայաստանի» մոռայլ կանխատեսումները շուտով իրականացան: 1914 թ. սկսված Առաջին համաշխարհային պատերազմը երիտթուրքական կառավարությունը դիտեց ամենահարմար պահը՝ իրագործելու Հայկական հարցի լուծման իր ոճրագործ ծրագիրը:

Եզրակացություն

Այսպիսով, 1908–1914 թթ. Սոցիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցության ԱՄՆ-ի օրգան «Երիտասարդ Հայաստան» շաբաթաթերթում տպագրված հոդվածների ու հաղորդումների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ պարբերականի ուշադրության կենտրոնում էին եվրոպական մեծ պետությունների քաղաքականության, միջազգային սոցիալ-դեմոկրատական շարժման, Պարսկաստանի սահմանադրական, Ռուսաստանի հեղափոխական շարժման, հայ ժողովրդի սոցիալ-տնտեսական դրության, հայ գաղթօջախների խնդիրներին ու միջկուսակցական հարաբերություններին վերաբերող հարցերը: Նկատելի է այն հանդամանքը, որ միջկուսակցական հարաբերությունների հարցերում պարբերականն աչքի է ընկնում իր հակագնակցական ուղղվածությամբ:

Արևմտահայության սոցիալ-տնտեսական ծանր դրությունն ի ցույց դնելուն մեկտեղ՝ պարբերականը հային իր հայրենիքում պահելու գաղափարի ջերմ կողմնակիցն ու քարոզիչն էր:

Երիտթուրքական հեղաշրջումից հետո հայության շրջանում առաջացած ոգեգործությունը կարճ ժամանակում իր տեղը զիջեց հիամաթափությանը: Արտահայտելով հնչակյան կուսակցության տեսակետը՝ պարբերականի հոդվածներում առաջ է քաշվում ազգային խնդիրների լուծման համար հույսը սեփական ուժերի վրա դնելու ու այս համատեքստում նաև ազգային-քա-

⁸² «Երիտասարդ Հայաստան», 27. V. 1913:

⁸³ «Երիտասարդ Հայաստան», 26. III. 1913:

⁸⁴ Նույն տեղում:

դաքական կուսակցությունների համախմբման գաղափարը։ Աչքի է զարնում այն, որ «Երիտասարդ Հայաստանի» ազգային-քաղաքական կյանքին վերաբերող հողվածներում կարմիր թելի պես անցնում է Արևմտյան Հայաստանի ինքնավարության ու արևմտահայության ինքնապաշտպանության նախապատրաստման գաղափարը։

«Երիտասարդ Հայաստան» պարբերականն իր մնայուն հետքն է թողել հայ ազատագրական շարժման, հասարակական-քաղաքական մտքի և հրապարակախոսության պատմության մեջ։

Գեղամ Հովհաննիսյան – պ. գ. թ., դոցենտ, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի նոր պատմության բաժնի ավագ գիտաշխատող, ՀԱԱՀ հասարակական գիտությունների ամբիոնի դասախոս։ Գիտական հետաքրքրությունները՝ հայ ազգային կուսակցությունների և հասարակական-քաղաքական մտքի պատմություն։ Հեղինակ է 2 մենագրության և շուրջ 30 հոդվածի։ gegham.hovhannisian@mail.ru

REFERENCES

- “Azg” (Boston), 26. IX. 1908 (In Armenian).
 “Hnchak” (Pariz), 1907, № 9–10 (september-hoktember) (In Armenian).
 Sapah-Giulean Beruz. Kensagrutivn Stepan Sapah-Giuleani, Niv-York, 1936 (In Armenian).
 “Yeritasard Hayastan” (New-York), 01. I. 1908; 08. I. 1908; 15. I. 1908; 22. I. 1908; 29. I. 1908; 05. II. 1908; 19. II. 1908; 26. II. 1908; 04. III. 1908; 11. III. 1908; 18. III. 1908; 25. III. 1908; 01. IV. 1908; 15. IV. 1908; 29. IV. 1908; 06. V. 1908; 13. V. 1908; 20. V. 1908; 08. VII. 1908; 15. VII. 1908; 22. VII. 1908; 24. VII. 1908; 12. VIII. 1908; 19. VIII. 1908; 02. IX. 1908; 06. I. 1909; 28. IV. 1909; 05. V. 1909; 16. VI. 1909; 12. I. 1910; 19. I. 1910; 27. VII. 1910; 17. VIII. 1910; 31. VIII. 1910; 07. IX. 1910; 14. IX. 1910; 08. XII. 1910; 14. XII. 1910; 21. XII. 1910; 28. XII. 1910; 25. I. 1911; 19. II. 1911; 22. II. 1911; 01. III. 1911; 12. IV. 1911; 05. VII. 1911; 12. VII. 1911; 22. V. 1912; 10. VIII. 1912 (In Armenian).
 “Yeritasard Hayastan” (Providens), 26. III. 1913; 13. V. 1913; 27. V. 1913 (In Armenian).
 “Yeritasard Hayastan” (Pariz), batsarik, 10. V. 1914 (In Armenian).

АРМЯНСКИЕ НАЦИОНАЛЬНО-ПОЛИТИЧЕСКИЕ ЗАДАЧИ В ПЕРИОДИЧЕСКОМ ИЗДАНИИ «ЕРИТАСАРД АЙАСТАН» (1908–1914 гг.)

ГЕГАМ ОГАННИСЯН

Р е з ю м е

Ключевые слова: «Еритасард Айастан», Степан Сапах-Гюлян, западные армяне, Турция, тирания, освободительная борьба, социализм, революционное движение.

В начале XX века главной задачей армянской национально-политической жизни было освобождение западных армян от турецкого ига. На ее осуществление были направлены усилия армянских национальных партий. После младотурецкого переворота в 1908 г. и принятия конституции в Османской империи перед армянскими политическими силами встала новая задача – выбор путей дальнейших действий для защиты прав армянского народа. Политика младотурецкого правительства, а также многие вопросы армянской национально-политической жизни широко обсуждались на страницах периодического издания Социал-демократической партии Гничак «Еритасард Айастан» («Молодая Армения»), которое являлось главным партийным органом на территории США. Издание еженедельника началось в 1903 г. в Бостоне, затем он издавался в Нью-Йорке (1906–1912 гг.), в Провиденсе (1913, 1916–1917 гг.), в Париже (1914 г.), в Чикаго (1917–1923 гг.), в Бостоне (1923–1927 гг.), затем вновь в Нью-Йорке, до 1973 г. В газете освещались вопросы армянских колоний, межпартийных отношений, а также проблемы, касающиеся истории и деятельности партии Гничак. Широко обсуждался вопрос реформ, намеченных для проведения в армянских областях Турции. В статьях о национально-политической жизни, печатавшихся в «Еритасард Айастан», превалирует идея автономии Западной Армении и подготовки самообороны западных армян. Периодическое издание оставило неизгладимый след в истории армянского освободительного движения, общественно-политической мысли и общественного дискурса.

Гегам Оганнисян – к. и. н., доцент, старший научный сотрудник Института истории НАН РА, преподаватель кафедры общественных наук АНАУ. Научные интересы: история армянских национальных партий и общественно-политической мысли. Автор 2 монографий и около 30 статей. gegham.hovhannisyan@mail.ru

ARMENIAN NATIONAL-POLITICAL ISSUES IN
“YERITASARD HAYASTAN” PERIODICAL
(1908–1914)

GEGHAM HOVHANNISYAN

S u m m a r y

Key words: “Yeritasard Hayastan”, Stepan Sapah-Gulian, Western Armenians, Turkey, tyranny, liberation struggle, socialism, revolutionary movement.

The main issue of the Armenian national-political life in the early 20th century towards which the efforts of Armenian national parties were directed was the liberation of the Western Armenians from the Turkish yoke. After the

Young Turkish coup in 1908 and the adoption of the Constitution in the Ottoman Empire, the Armenian political forces faced a new task – choosing ways of further actions to protect the rights of the Armenian people. The policy of the Young Turkish government, as well as many issues of the Armenian national-political life, were widely discussed in the pages of “Yeritasard Hayastan” (“Young Armenia”) periodical of the Hnchak Social Democratic Party which was the main party organ in the United States. The weekly started to be published in Boston in 1903, then in 1907–1912 in New York, in 1913 in Providence, in 1914 in Paris in Chicago (1917–1923), in Boston (1923–1927) then again in New-York up to 1973. The newspaper covered issues of the Armenian colony, inter-party relations, as well as issues related to the history and activities of the Hnchak party. The issue of reforms planned for carrying out in the Armenian regions of Turkey was widely discussed. In “Yeritasard Hayastan” (Young Armenia) periodical the idea of autonomy of Western Armenia and the preparation of self-defense of Western Armenians prevails in articles on national-political life. The periodical left an indelible mark on the history of the Armenian liberation movement, socio-political thought and public discourse.

*Gegham Hovhannisyan – Candidate of Sciences in History, Senior Researcher at the Department of New History of the NAS RA Institute of History, lecturer at the Chair of Social Sciences of National Agrarian University of Armenia. Scientific interests: history of Armenian national parties and national-political thought. Author of 2 monographs and about three dozen articles.
gegham.hovhannisian@mail.ru*

II

ԳՈՎԱԶԴՈՅ ՈՐՊԵՍ ՊԱՐՈՂԻԱ ԹԻՖԼԻՍԱՐԱՅ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՍՈՒՄՈՒՄ (XIX դ. 90-ական թվականներ – XX դարասկիզբ)*

ՏԱՐՈՆ ԴԱՆԻԵԼՅԱՆ, ՀԵՐՄԻՆԵ ԲԱԲՈՒՌՅԱՆ

Բանավի բառեր՝ «Խամբապալա», «Հայելի», «Տարապ», «Նոր-Դար», Հայ պարերական մամուլ, երգիծանք:

Նախաբան

XIX դարի 80-ական թվականներից թիֆլիսահայ իրականության մեջ գովազդը բավական մեծ տարածում էր ստացել և որպես սոցիալ-մշակութային երևույթ կայուն տեղ ուներ թիֆլիսեցու առօրյայում։ Գովազդների բովանդակությունն ու գովազդային գործունեության քննադատությունը ստանում էին տեսական սահմանումներ, որոնց մի մասը, ըստ էռթյան, հիմնված էր ուսւ և արևմտյան տեսաբանների, ոլորտի աշխատակիցների հայեցակարգերի վրա, մյուս մասն էլ ուղղված էր թիֆլիսյան իրականության գովազդային հաղորդակցության իմաստավորմանը։

Գովազդի կայացման փաստը վկայում է նաև այն հանգամանքը, որ տվյալ ժամանակաշրջանում գովազդի ձևաչափը հայկական պարբերականներում դառնում է արդիական որևէ խնդրի լուսաբանման համար գեղարվեստակապարակախոսական ժանրի արտահայտչամիջոց։ Այս երևույթը լայն կիրառություն էր գտել ուսական ու արևմտյան երկրներում հրատարակվող պարբերականներում, ինչպես նաև՝ արևմտահայ պարբերականների խմբագրությունների կողմից։ Օրինակ՝ 1862 թ. Զեյթունի ապստամբության օրերին Զմյուռնիայում հրատարակվող «Դիմակ» հանդեսը տպագրում է ««Արյունահեղ գերասանություն ի Զեյթուն»» վերնագրով երգիծական թատերագրը (№ 3, էջ 23), որտեղ արյունալի իրադարձությունների իսկական մեղավորին՝ «դրացի մարդասպաններին» է ակնարկում՝ նկատի ունենալով թուրքական բռնապետությունը»¹։

Հայ պարբերական մամուլը, հանրային կյանքի արտացոլման հայելի լինելուց բացի, ծիծաղի ու զվարթ տրամադրության ապահովման միջոց է ծառայել. «... այդ համեմունքը կարծես մի տեսակ հրապուրանք է ծառայել մամուլին՝ ընթերցող լայն շրջաններ ունենալու համար։ Նման բնույթի

* Ներկայացվել է 01. XII. 2020 թ., գրախոսվել է 09. XII. 2020 թ., ընդունվել է տպագրության 02. II. 2021 թ.։

¹ Հայ պարբերական մամուլի պատմություն XVIII–XIX դարեր, հ. 1, Գահիրէ, 2006, էջ 538։

նյութերն էլ զուրկ չեն հասարակական արժեքից»² և ուշագրավ են նաև հետազոտողների համար:

Գրական պարողիայի (նմանակման) տեսության հիմնադիրներից Յուլ Տինյանովն առանձնացնում է պարողիայի երկու տեսակ՝ բովանդակության ու ձեկի դրանց հիմքում դնելով գործառութային տարրերությունը³:

Լրագրային պարողիան դիտարկվում է որպես երգիծական փոքրածավալ ժանրային ձև, ինչպիսիք են՝ անեկդոտը, երգիծական բառարանն ու այբուբենը, երազահանը, գովազդը, հայտարարությունը և այլն⁴:

Պարբերական մամուլում երգիծական ժանրերն անկախ համակարգ են ու ըստ արտահայտչամիջոցների՝ բաժանվում են երկու խմբի՝ տեքստային և պատկերային: Տեքստային երգիծական ժանրերն իրենց հերթին կարող են լինել տեղեկատվական (երգիծական լուր, ուեպորտաժ, մեկնաբանություն) և գեղարվեստահրապարակախոսական (Փելիեսոն, պամֆլետ): Պատկերային երգիծական ժանրերի հիմքերն են ծաղրանկարը, երգիծական լուսանկարը, ֆոտոկոլաժը⁵:

Կարող ենք արձանագրել, որ սրանց մեծ մասը, անկախ ժանրային պատկանելությունից, համապատասխանում է ձեկի պարողիային: Դրանցում հայելային սկզբունքով օգտագործվում են լրագրային ու գովազդային ժանրային համակարգերը, որոնք զանգվածային հաղորդակցության միջոցների և տնտեսական հարաբերությունների զարգացման ընթացքում փոխազդեցության են ենթարկվում, փոխառում մեկը մյուսի կառույցներն ու գործառույթները⁶:

Սակայն երգիծանքի փոքր ժանրերի վերարտադրությունը տեղի է ունենում հարացուցային այլ տիրույթում, որտեղ ժանրակերտման հիմնական հատկանիշը իրականության գեղարվեստական արտացոլման ձևն է: այն թելադրվում է երգիծական տիպավորման հատուկ սկզբունքներով ու երգիծական պատկերի (կերպարի) յուրահատկությամբ: Երգիծական հաղորդանյութի մեջ գիտակցաբար խեղալիքուրվում է (լիտոպոս, գրոտեսկ) պատկերվող առարկայի կոմիկական քողարկված էլեկտրոնը: Հեղինակային վարքագիծը պայմանավորված է առարկայի նկատմամբ ունեցած միանշանակքնադատական և բացասական վերաբերմունքով, որին հակադրվում է նրա ունեցած դրական իդեալը⁷:

² Ա. Իշխանյան. XX դարի սկզբի հայ քաղաքական երգիծանքը: («Խաթարալա» հանդեսը), Երևան, 1972, էջ 196:

³ Ю. Тынянов. Поэтика. История литературы. Кино. М., 1977, с. 293–294.

⁴ М. Привалова. Из истории малых форм сатиры в русской журналистике XVIII–XIX веков. – Русская журналистика XVIII–XIX веков (из истории жанров). Л., 1969, с. 102.

⁵ Н. Зыкун. Сатирические жанры в жанровой палитре журналистики: обобщение современных научных подходов. – «Известия Южного федерального университета. Филологические науки» (Ростов-на-Дону), 2014, № 3, с. 205–206.

⁶ В. Ученова, Т. Грунберг, К. Конаныхин, М. Петрушко, С. Шомова. Реклама: палитра жанров. М., 2004, с. 59.

⁷ Н. Зыкун. Сатирические жанры журналистики: проблемы типологии. – «Вестник Томского государственного университета. Филология», 2015, № 1, с. 181–191.

Երգիծական ժանրերի առարկա են դառնում սոցիալական, քաղաքական, բարոյաէթիկական փաստերը, երևույթներն ու գործնժացները, որոնք պահանջում են բացահայտում, ծաղր, պարսպավանք⁸:

Անկախ նրանից՝ օգտագործվում է պարողիայի ձևը, թե բովանդակությունը, պարողիկ հնարքի կիրառումն ինքնին դառնում է միջտեքստայնության տեսակ, երբ «նոր գրվող ստեղծագործությունը անպայման ենթադրում է նախորդի գոյությունը»⁹, իսկ միջտեքստային կապերի աստիճանն ու ձևերը պայմանավորված են պարողիայի տեսակով և հեղինակի անհատական ոճով¹⁰:

Հողվածի նպատակն է ներկայացնել գովազդային պարողիայի թեմատիկ ընդգրկումները թիֆլիսահայ պարբերական մամուլում, իսկ խնդիրն է՝ դրանց միջոցով բացահայտել գովազդային պարողիայի ժանրակերտման առանձնահատկություններն ու տեսակները:

Գովազդային պարողիայի տեսակները

Ուսումնասիրել ենք 120 գովազդային պարողիա, այդ թվում՝ նաև ժանրին համապատասխանող ծաղրանկարներ՝ տպագրված «Խաթաբալա», «Հայելի», «Տարազ», «Նոր-Դար» պարբերականներում:

Նկատենք, որ գովազդային պարողիաները սկզբնական շրջանում տպագրվում էին «թերթ թերթի մեջ» ձևաչափով: Այսպես, 1890-ական թվականներից սկսած՝ «Նոր-Դար» լրագրում առանձին բաժնով տպագրվում էր «Հայելի», իսկ «Տարազ» ամսագրում՝ «Մոծակ» երգիծական բաժնու, որոնցում պարբերաբար օգտագործվում էին գովազդի նմանակումներ:

«Խաթաբալա» շաբաթաթերթի առաջին թողարկումներում գովազդային պարողիաները տպագրվում էին վերջին էջերում: Հետագայում դրանք սկսում են տպագրվել առաջին էջում, քանի որ վերջին էջերը տրամադրվում էին թերթի գովազդային բաժնին: Այնուհետև «Խաթաբալա»-ն նախորդների փորձի նման նոր խորագրերով բաժիններ է ստեղծում՝ «թերթ թերթի մեջ» ձևաչափով, և գովազդային պարողիաները տպագրվում են բաժիններում, որոնք տարբեր տարիների տարբեր անուններ են ունեցել՝ «Խումբ», «Զիբիլ», «Բիբառ», «Հոպիտ», «Օձ», «Շիլափլավ», «Հարիսա», «Գյուլ-Բահար» («Գարնանային վարդ»):

Գովազդային պարողիաները տպագրման հստակ պարբերականություն չունեին, այդուհանդերձ, գովազդի ու հայտարարության բովանդակային շերտերը բազմազան էին՝ քաղաքական, տնտեսական, մշակութային և այլն:

⁸ Л. Кроичи. Система журналистских жанров. – Основы творческой деятельности журналиста. СПб., 2000. – <http://evartist.narod.ru/text5/64.htm>

⁹ Փ. Քալանթարյան. Միջտեքստայնություն. – Գրականության տեսության արդի խնդիրներ, ուսումնական ձեռնարկ, Երևան, 2016, էջ 150:

¹⁰ Е. Кармалова. Пародия в рекламном дискурсе: к постановке проблемы. – Российская пиарология–2: тренды и драйверы: сборник научных трудов в честь профессора А. Д. Кривоносова. СПб., 2016, с. 31–33.

Ուսումնասիրված 120 հաղորդանյութերից բովանդակության գովազդային պարողիայի օրինակները 6-ն են, իսկ ձևի գովազդային պարողիայինը՝ 114-ը:

Բովանդակության գովազդային պարողիա

Բովանդակության գովազդային պարողիան հայ պարբերական մամուլում քանակական առումով անհամեմատ քիչ է հանդիպում: Ինչպես նշվեց, դրանք թվով 6-ն են, որոնց հիմքում ժամանակի «ոելլամային խաչագողության» օրինակների վարիացիաներն են:

«Ոելլամային խաչագողություն» հասկացությը 1900-ական թվականների սկզբին հայ պարբերական մամուլում շրջանառության մեջ դրեց թիֆլիսահայ տարբեր լրագրերի թղթակից Արտաշես Օհանջանյանը՝ մի քանի հոդվածներ տպագրելով ակնհայտ մոլորեցնող գովազդների մասին, որոնք «միամիտներին իրանց թակարդի մեջ գցելու՝ նրանց գրպանները դատարկելու»¹¹ համար տպագրվում էին Ուսումնական կայսրության տարածքում հրատարակվող գրեթե բոլոր լրագրերում:

Պարողիայի այս տեսակներում փոփոխության էր ենթարկվում ապրանքի անունը կամ ծառայության տեսակը՝ փոփարինվելով մտացածին առարկաներով կամ ծառայություններով, իսկ գովազդային հաղորդանյութի տեքստն ամբողջությամբ համապատասխանում էր մոլորեցնող և «անբարեխիղճ» գովազդների հաղորդանյութերին:

Բովանդակության գովազդային պարողիայի տեսակետից հումորի օբյեկտը լսարանն էր, քանի որ նրա դյուրահավատությունից օգտվելով՝ բազմաթիվ գովազդատուններ առաջարկում էին զանազան ապրանքներ ու ծառայություններ, որոնց գոյությունը շատ հեռու էր իրականությունից կամ կիրառության արդյունավետությունը ներկայացվում էր չափազանց ված: Օրինակ՝ «Գտել եմ ԲնուիթեԱՆ ՄԵԶ թագնուած այն մեծ գաղտնիքն, որի շնորհիւ կարելի է ամենաապուշ ընդունակ աշակերտներին ուղղել, որ բոլոր առարկաներից 5 թւանշան ստանան: Ունեմ բազմահազար շնորհակալութեան նամակներ ստացած: Սովորել ցանկացողներն թող շտապեն 7 հատ 7 կ. մարկաներ դրկելու»¹², կամ «Հնարել եմ մի ԱՊԱՐԱՏ, որի յարմար անունը դեռ չեմ գտել, այդ ապարատի շնորհիվ հասարակ հողից կարելի է պատրաստել միս, հաց, իւղ, պանիր, կարագ, գինի, մինչև անգամ Սմիրնովի օղի: Ունեմ ստացած բազմաթիւ շնորհակալութեան նամակներ Մոծակից, Գասպարից, Մարգարից, Օզգեալդից և այլն: Այդ բոլորն սովորելու համար բաւական է ուղարկել չորս հատ եօթը կոպ. մարկաներ, անմիջապես կուղարկւի ուղած ապարատը առաջին փոստով»¹³:

¹¹ Ա. Օհանջանեան. Զգուշացեք բելլամային խաչագողութիւններից.—«Եշակ» (Թիֆլիս), 30. XI. 1910:


¹² «Խաթաբալա» (Թիֆլիս), 23. VI. 1912:

¹³ Նույն տեղում:

Զեկի գովազդային պարողիա

Այս տեսակի նմանակումների թեմատիկ ընդգրկվածության և քանակական հարաբերակցությունն ունի հետևյալ պատկերը.

Ձևի գովազդային պարողիայի թեմատիկա



Մասնավոր հայտարարությունների հաղորդանյութի ձևի նմանակման միջոցով լրագրերը շեշտադրում էին հանրության մեջ առկա վնասակար երևույթները, ծաղրում այն արատները, որոնք տարածված էին թիֆլիսեցիների առօրյայում և հաճախ դառնում էին ասեկուեների նյութ (անառակություն, արտաամուսնական ծնունդներ և այլն): Օրինակ՝ «Յանկանում եմ ամուսնանալ հասակաւոր (մինչ 60 տ.), բայց հարուստ պարոնի հետ, ինչ ազգութեան կուգէ լինի – միւնոյն է: Ցանկալի է որ ունենա կոնդիտերսկայ կամ մօդինայի կրպակ: Կարող է շատ սիրուն էլ չլինել – այդ վնաս չունի: Ես 17 տարեկան եմ, սիրուն ու անուշիկ, ինչպէս մայիսի վարդը, հիւանդ չեմ ոչ դալկութեամբ, ոչ ..., սակայն աշխարհից այնքան էլ բէխաբար չեմ ... Ապրում եմ Շան թաղ, տ. № 13/Ա մանսարդայում»¹⁴, «Տիկին Բեմուրագեանը սիրեկանի հետ բանդելիւ նշանակած ժամանակ կորցրել է արտասահմանեան պուդրի կարօքան: Գտնողներին խօստանում է մեծ վարձատրութիւն»¹⁵:

Հասարակական-քաղաքական թեմատիկայի նյութերում ծաղրանքի առարկա էին դառնում քաղաքական կուսակցությունների, թիֆլիսի քաղաքային վարչության, հայկական բարեգործական ընկերությունների, ոստիկանական բռնություններին վերաբերող թեմաները: Օրինակ՝ «Անվտանգ մասսած ամեն հասակի և ազգի քաղաքացիների համար: Հարցնել ոստիկանատներում»¹⁶, «Սրանով պատիւ ունեմ յայտնելու կուսակցութիւնների ընկերապատիւ ներկայացուցիչներին, որ ես ստացել եմ ընտրողական թերթ որպէս իրաւատակը և որոշել եմ ծախել քուես: Որ կուսակցութիւնը որ աւել կվճարի, նրան քէ կը տամ: Քւէիս աճուրդը կը լինի 27-ին յունւարի, Երևանեան հրապարակում, «Փարոս» քիոսկի մօտ, 10 ըուբլուց սկսելով, ուստի խնդրում եմ չը ծուլանալ ներկայ գտնւելու»¹⁷:

¹⁴ «Խաթաբալա», 23. VII. 1911:

¹⁵ «Խաթաբալա», 09. VI. 1912:

¹⁶ «Խաթաբալա», 23. IX. 1906:

¹⁷ «Հայելի» (թիֆլիս), 26. I. 1907:

Որոշ պարողիաներ անդրադառնում էին ազգային խնդիրներին ու հայ ժողովրդի մոլորություններին, որոնք վերաբերում էին Օսմանյան կայսրությունում Հայկական հարցի դրական լուծմանը: Օրինակ՝ «ԲԱՐՁՐԱՀԱՍՏԱԿ ՄԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՂՈՒ ԵՒ ԱՄՊԵՏ ԶԱՆԱԶԱՆ ՕՐԴԻՆ ՆԵՐԻ առաջարկում է իր ձեռքն ու միտրը և գրպանն էլ հետը բողոր կուսակցութիւններին ձեռնտու պայմաններով սաստարելու դրանց ծրագրները, եթէ միայն պաշտպանեն իրա կաթողիկոսական թեկնածութիւնը: Դիմել՝ Թիֆլիզ «Վատակ»-ի խմբագրատուն՝ Բաքին վարդապետին կամ Էջմիածին՝ Մեսրովը վարդ. մագիստրոսին՝ յանձնելու Տեղակալ Սուլեյմանցին»¹⁸, «Հայոց ազգասէրների ակումբը սրանով պատիւ ունի յայտարարելու, որ մօտիկ ապագայում Տաճկահայքում ինքնավարութիւն է հաստատելու և առայժմ պահանջում են պաշտօնեաներ հետևեալ ոռնիկներով / ... / սահմանակալմարզպան ամէն մեկին 12000 հայկարամ (հայկադամը արծաթէ դրամ է և արժէ 3 բուք) պալատը իր պարագայքով ձրի / ... / Պայմանների համար դիմել տաճկաց սուլթանին մեր վեցիրի միջոցով»¹⁹:

Հոգևոր թեմատիկայի հաղորդանյութերում գովագդային նմանակումների են ենթարկվում անբարեխիղ հոգևորականները, որոնց գործունեությունը հակասում է նրանց կոչմանը: Օրինակ՝ «Խելագար, կով, անբան անասուն լիինի այն կօշկակարը, որ կկարդայ իստորե մեր յայտարարութիւնը և չշտապիլ օգտուել: Գայանեի 18 հազարանոց պաղվալներում բաց են արուել կաշուեղինի գործարան, մեր ապահներն են – շատ ընտիր պադոց պատրաստած Հաջի-Զաֆարի երեսի կաշուց իւր հաստութեամբ, պնդութեամբ ու դիմացկունութեամբ գերազանց Համբուրգի, ի՞նչ եմ ասում, նոյն իսկ Բիրմինհամի փողի կաշուց պատրաստած պադոչներից: Եթե Հաջի-Զաֆարի երեսի կաշին 3 տարի չդիմանայ, մենք պատրաստ ենք յետ տալ մեր ստացած փողը, կասկածողի հետ նոտարական պայման կարող ենք կնքել...»²⁰: Ինչպես նաև սուր ծաղրանքի են ենթարկվում ընտրությունները հոգևորականության շրջանում. օրինակ՝ «Իբրև ագիտատոր զանազան եկեղեցիներում թրև գալու ժամանակ կորցրել եմ մի քանի տպած անուանական թերթիկներ, ծաղկաքաղ նամակներ, պաշտոնական հրահանգներ: Գտնողին խնդրում ենք յանձնել մեզ, որի համար կատանայ առատ վարձատրութիւն: Ապագայ ընտրութիւնների համար շատ կարևորագոյն թղթեր են, քանի որ բոլոր օրինակները սպառուել են. խոնարհաբար խնդրում եմ գտնողին խնամքով պահել: Մեր հասցէն – Թիֆլիս՝ Սուրբ Նշան եկեղեցու գաւիթ»²¹:

Առողջապահական թեմատիկայի գովագդային պարողիաները մեծ թիվ չեն կազմում: Մեկ հայտարարության մեջ հետևյալ կերպ՝ «Հայ, Հարայ, Հայ, Երևանում հիւանդանոց է բացւել»²², ներկայացվում է նահանգային հիվանդանոցի բացման իրադարձությունը, երկուական գովազդ էլ համապատասխանաբար՝ բժիշկների մասնագիտական սիրողական մակարդակը և

¹⁸ «Խաթաբալա», 12. IV. 1908:

¹⁹ «Հայելի», 09. III. 1907:

²⁰ «Հայելի», 12. IV. 1907:

²¹ «Նոր-Դար» (Թիֆլիս), 04. IV. 1892:

²² «Տարբաղ» (Թիֆլիս), 03. III. 1891:

խոլերայի տարածումն ու դրա նկատմամբ պատկան մարմինների անտարբերությունը: Օրինակ՝ «Բժիշկ Մահ-Տեսեան – Բժշկում է ամեն տեսակի հիւանդութիւններ: Կարճ ժամանակում վերջ է տալիս ամենախիստ ցաւերին: Ընդունելութիւնը մինչև հիւանդի մահը»²³, «Խաթաբալիստներ բոլոր երկրների միացէք!!! ԽՕԼԵՐԸ ԳԱԼԻՍ է ԵՒ ԵԿԵԼ է: Այդ պատճառով հում ջուր մի խմեք, այլ գործածեցէք Սան-Ռաֆայել և Շամպայն (Եթե փող ունիք)…»²⁴:

Սոթքի պատմության և հուշարձանների ուսումնասիրությունները շարունակվեցին նաև XX դարում՝ Երվանդ Լալայանի ու Սեղրակ Բարխուդարյանի շնորհիվ: «Ազգագրական հանդեսի» համարներում Ե. Լալայանն անդրադառնում է Սոթք անվան ստուգաբանությանը, գյուղի տեղագրությանը, Մ. Աստվածածին եկեղեցուն և գերեզմանատան որոշ կոթողների հայտառ արձանագրություններին⁵: Նրա աշխատանքի կարևորությունը

³ Ա. Գրիգորյան. Պատմական Սոթքի վերաբերյալ միջնադարյան հայպատմիջների հիշատակությունները. – ՊԲՀ, 2020, № 2, էջ 186–206:

⁴ Դ. Ալիշան. Սիսական: Տեղագրութիւն Սիւնեաց աշխարհի, Վենետիկ, 1893, էջ 63–77, Մ. Սմբատեանց. Տեղագիր Գեղարքոնի ծովագարդ գաւառի, որ այժմ նոր Բայազիտ գաւառ, Վաղարշապատ, 1895, էջ 592–596, 619–627:

⁵ Ե. Լալայան. Սեւան. – «Ազգագրական հանդէս» (Թիֆլիս), 1910, գիրք XIX, № 1, էջ 25–27:

հատկապես այն է, որ նույն ոճով է նկարագրում գավառի բոլոր գյուղերը, այդ թվում՝ արևելյան լճեղերքի, որոնց պատմության վերաբերյալ տվյալներն առավել սակալ են⁶:

Սովորի հայկական մշակութային ենթաշերտի բացահայտման առումով առավել ամբողջական և հիմնավոր է Ա. Բարխուդարյանի «Դիվան հայ վիմագրության» շարքի Գեղարքունիքին նվիրված IV պրակը, որտեղ հեղինակը ներկայացրել է գյուղի միջնադարյան հուշարձանները, վերծանելի ինչպես նաև վերընթերցել ավելի քան երկու տասնյակ վիմագրեր⁷:

Իրենց ուսումնամիրություններում Սովորի միջնադարյան պատմությանը և, հատկապես, նշանավոր իշխանասոռհմերի պատմությանն են անդրադարձել նաև պատմաբաններ Աշոտ Հովհաննիսյանը, Բագրատ Ուլուբարյանը, Ալեքսան Հակոբյանը և ուղիղներ⁸:

XIX–XX դդ. Սովորի պատմական անցքերի վերաբերյալ մեծ արժեք ունեն պատմաբան Համլետ Հարությունյանի մենագրությունները⁹:

Սովորի քրիստոնեական հուշարձանների պահպանության ուղղությամբ ևս տարբեր տարիներին կատարվել են մի շարք աշխատանքներ: Հիշատակության են արժանի հատկապես Հայաստանի հնությունների պահպանության կոմիտեի՝ անխուսափելի կործանումից փրկելու համար 1926–1928 թթ. Ա. Աստվածածին եկեղեցում կատարված նորոգումները, ինչպես նաև Հնադարյան–թանգարանի հիմնումը¹⁰: Ցավոք թանգարանի և այնտեղ հավաքած եղակի նմուշների հետագա ճակատագիրը մեզ անհայտ է:

Հուշարձանապահպան Հաջորդ կարենոր գործը Պետական հուշարձանների պահպանության հայկական ընկերության կողմից Ա. Աստվածածին եկեղեցու մասնակի վերականգնումն էր 1986–1991 թթ.¹¹:

Ժողովրդագրական պատկերը

Սովորի ժողովրդագրության և դրանց տեղաշարժերի վերաբերյալ պահպանված տվյալները պայմանականորեն բաժանվում են հետեւյալ խմբերի:

- հայ միջնադարյան գրավոր սկզբնալրյուններ և վիմագրեր,
- XIX–XX դդ. տեղագրություններ,
- ցարական և խորհրդային մարդահամարներ,

⁶ Նույն տեղում:

⁷ Ա. Բարխուդարյան. Գեղարքունիք. – «Դիվան հայ վիմագրության», պր. IV, Երևան, 1973, էջ 328–333:

⁸ Ա. Յովհաննիսեան. Գեղամայ եւ Ծարայ մելիքների տոհմը. – «Բանքեր Հայաստանի գիտական ինստիտուտի», գիրք Ա. եւ Բ., 1921–1922, էջ 105–113, Բ. Ուլուբարյան. Խաչենի իշխանությունը X–XVI դարերում, Երևան, 1975, Ա. Յակոբեան. Արքայատոհմերն ու իշխանատօհմերը բուն Աղուանքում եւ Հայոց Արեւելից կողմանքում անտիկից մինչեւ Ժդ դար (պատմա–աղբիւրագիտական քննութիւն), Երևան, 2020:

⁹ Հ. Հարությունյան. Նոր Բայազետի գավառը 1828–1913 թթ., Երևան, 2008, նույնի Նոր Բայազետի գավառը 1914–1920 թթ., Երևան, 2012:

¹⁰ Ա. Քալանթար. Հայաստանի հնությունների պահպանության կոմիտե, Յերեվան, 1931, էջ 6:

¹¹ Վ. Հարությունյան. Ազգանվեր ջանքերի հանրագումարը, Երևան, 1999, էջ 25:

— Հնագիտական սկզբնաղբյուրներ:

Միջնադարյան գրավոր սկզբնաղբյուրների համաձայն՝ Սևանա լճի ողջ ավազանը, այդ թվում՝ Սոթքն ուներ միատարր հայ բնակչություն: Քաղաքական և մշակութային ազգեցություններն այստեղ առաջին հերթին Սյունիքի, ապա նաև Արցախի ու Արարատյան դաշտի կողմից էին: Թերեւս, պայմանավորված աշխարհագրական՝ սահմանային գոտում բարձր լեռնաշղթաների առկայության գործոնով, Սոթքում մշակութային և քաղաքական ազգեցություններն ամենաքիչը կարծես թե հյուսիսից ու արևելքից էին Ուտիքի կողմից: Միջնադարյան Սոթքն իրար հաջորդած հայկական միշտաք իշխանությունների կենտրոնն էր կամ ընկած էր դրանց ազգեցության գոտում¹²:

Սոթք գյուղից հայտնի են նաև շուրջ չորս տասնյակ հայատառ արձանագրություններ (Եկեղեցու որմերին, խաչքարերին ու տապանաքարերին), որոնց ուսումնասիրությունը որևէ կասկած չի թողնում միջնադարյան Սոթքի հայկական պատկանելության և հայահոծ բնակավայր լինելու հարցում¹³:

Ուշադրության է արժանի Սոթքի հնագույն անվան՝ Ծավուեքի ստուգաբանության շուրջ գիտական քննարկումը: Հենվելով Ուխտանես եպիսկոպոսի ու Միսիթար Այրիվանեցու՝ չափազանց հակիրճ և ոչ միանշանակ հաղորդումների վրա, որոշ հետազոտողներ այն կապում են ծավուեցի կոչված ինչ-որ էթնիկ կամ կրոնական խմբի անվան հետ, որոնք միջնադարում հայացել են կամ վերադարձել Հայ առաքելական եկեղեցու հավատքին¹⁴: Այս վարկածը, սակայն, չափազանց կասկածելի է, քանի որ Սոթքի վերաբերյալ միջնադարյան մյուս ավելի մանրամասն անդրադարձեր կատարող աղբյուրներում այդ մասին որևէ տվյալ չկա¹⁵:

XIX–XX դդ. հայկական տեղագրություններում արտացոլված են այն տվյալները, որոնք հայտնի են Արևելյան Հայաստանի ուշ միջնադարյան պատմությունից: Հատ դրանց, XVIII դ. Սոթքի տարածաշրջանը հայաթափվում է, իսկ XIX դ. սկզբին տեղի և շրջակա բնակավայրերում հաստատվում են թուրքական ու քրդական ծագում ունեցող տարրեր կիսաքռչվոր ցեղալիքներ:

Ժողովրդագրական նույն պատկերն են արտացոլում նաև ցարական ու խորհրդային մարդահամարները, որոնցում ներկայացված են տարրեր

¹² Ա. Յովհաննիս և աննա նշանի աշխատանք. աշխատանք, էջ 105–113, Բ. Ուլուբարյան.

Խաչենի իշխանությունը X–XVI դարերում, էջ 36–38, 47, 403–421:

¹³ Ա. Գրիգորյան. Նորահայտ վիմագրեր Սոթքի տարածաշրջանից. – Աեղքակ Բարիխուդարյան–120 (գիտական հոդվածների ժողովածու), Երևան, 2019, էջ 56–64:

¹⁴ Միթթար Այրիկի վանեցի. Պատմութիւն ժամանակագրական, Ս. Պետերբուրգ, 1867, էջ 65, Ուխտանէս և պիսկուպուս. – Մատենագիրք Հայոց, հ. ԺԵ, Ժ դար. Պատմագրութիւն, գիրք Բ, Երևան, 2011, էջ 441–443 (պատմության այս հատվածից պահպանվել է միայն վերնագիրը), Վ. Բաղման–յան. Հայ–ծագթերի ծագումը. – vanuhiblog.wordpress.com:

¹⁵ Ա. Գրիգորյան. Պատմական Սոթքի վերաբերյալ միջնադարյան հայ պատմիչների հիշատակությունները, էջ 186–206:

տարիներին Սովորի մահմեղական բնակչության հստակ թվաքանակը, սեռատարիքային կազմը և լրացուցիչ այլ մանրամասներ՝¹⁶:

Սովորի ժողովրդագրական պատկերն արտացոլվում է նաև հնագիտական սկզբնաշրջուրներում։ Հնագիտությունն օգնում է ոչ միայն տեսնելու միջնադարի տարբեր ժամանակահատվածներում տեղի ընդհանուր ժողովրդագրական պատկերը, այլ նաև մշակութային ազդեցությունները, բնակավայրի կառուցապատման ու քրիստոնեական լանդշաֆտի ձևավորման փուլերը։

Սովորի հնագիտական սկզբնաշրջուրներն ունեն ժամանակագրական մեծ ընդգրկում։ արտացոլում են բնակավայրի վաղ կամ նախապատմական, անտիկ-միջնադարյան և XIX–XX դդ. ժողովրդագրական պատկերները¹⁷:

Միջնադարյան Սովորի իշխանատոհմերը

Միջնադարյան Սովորի վերաբերյալ հիշատակությունները հիմնականում վերաբերվում են իրար հաջորդած իշխանական հզոր տոհմերի պատմությանը։ Հաշվի առնելով այդ տոհմերի դերն ու կշիռը միջնադարյան Հայաստանի քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքում՝ այն անքակտելիորեն կապված է հայ ժողովրդի պատմությանը։

Սկզբնաշրջուրներում հիշատակված Սովորի հնագույն իշխանատոհմը Շավինեացոց տոհմն է։ Ամենայն հավանականությամբ, նրանց իշխանությունը հիմնականում տարածվել է Սևանա լճի ավագանում և Արցախում, իսկ կենտրոնը եղել է Ծաւդ/Սաւդք ավանը։ Այս իշխանատոհմը հիշատակված է Հայաստանի 16 ընտիր իշխանական տների թվում, ովքեր Տրդատ թագավորի հրամանով Գրիգոր Լուսավորչին ուղեկցեցին դեպի Կեսարիա՝ քահանայապետ օծվելու¹⁸։ Ուշագրավ է Մովսես Խորենացու՝ Շավինեացոց տոհմի ծագումնաբանության վերաբերյալ վարկածը, ըստ որի՝ նրանք սերում էին Հայերի ծոռ Միսակի ժառանգներից¹⁹։ Երկի թե IV դ. կեսերին այս իշխանությունը թուլացել և տրոհվել է առանձին մանր իշխանությունների։

Շավինեացի տոհմի մասին տվյալներ կան «Զորանամակում», Ագաթանգեղոսի, Մովսես Խորենացու, Մովսես Կաղանկատվացու, Ստեփանոս Տարոնեցի Ասողիկի և Վարդան Վարդապետի պատմություններում²⁰։

Սովորում հիշատակվող հաջորդ իշխանությունը Սովորի տոհմն է՝ վկայված «Զորանամակում»։ Աս, որպես առանձին իշխանություն, թերևս, ձևավորվել է V դ.՝ միասնական Շավինեացոց-Սովորկենն նահանգի՝ Արցախ

¹⁶ Զ. Կորկոտյան. Խորհրդային Հայաստանի բնակչությունը վերջին հարյուրամյակում (1831–1931), Յերեվան, 1932, էջ 26–27, 110–111։

¹⁷ Դ. Միրիջանյան, Ա. Գրիգորյան. Միջնադարյան Սովոր նորագույն հնագիտական հետազոտությունների լույսի ներքո. – «Էջմիածին», 2018, № 3, էջ 87–102։

¹⁸ Բ. Ուլուբարյան. Պատմա-աշխարհագրական ճշգրտումներ. – «Բանբեր Երևանի համալսարանի», 1971, № 1, 176–186։

¹⁹ Մովսեսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, աշխատ. Մ. Աբեղեանի եւ Ս. Յուլիւսանի, Տիգրան, 1913, էջ 113։

²⁰ Ա. Գրիգորյան. Պատմական Սովորի վերաբերյալ միջնադարյան հայ պատմիչների հիշատակությունները, էջ 186–206։

ու Սյունիք առանձին նահանգների բաժանումից հետո և ներառվել Սյունիքի կազմում՝ որպես Սոթք գավառ²¹:

XIII դ. սկզբին Սոթքի տարածաշրջանում հաստատվում է Զաքարե և Իվանե Զաքարյանների գույր Դոփի ու Հասանի ամուսնությամբ ստեղծված Դոփյան իշխանական տոհմը: Դոփյանների տիրույթները տարածվում էին Վերին Խաչենում ու Սևանա լճի ավաղանում: Այս տոհմի ծագումնաբանության հարցում գիտության մեջ շրջանառվող վարկածներն իրարամերժ են և առայժմ հստակեցված չէ իշխանուհի Դոփի ամուսին Հասանի տոհմական պատկանելությունը: Դոփյան տոհմը միջնադարյան Հայաստանի նշանավոր իշխանություններից մեկն էր և գոյատեսք մինչև XV դ. կեսերը²²:

Տեղի հայկական վերջին հզոր իշխանասոսհմը Մելիք-Շահնազարյաններն էին (Հիշատակվում են նաև որպես Մելիք-Ռևուբեկյաններ): Նրանք համարվում էին Դոփյան իշխանական տան ուղիղ ժառանգները և Սոթքում իշխել են XVI-XVIII դդ.: Մելիք-Շահնազարյանները Հայաստանի առաջատար մելիքական տոհմն էին, և 1606 թ. Սոթք գավառ այցելած պարսից շահ Աբաս Առաջինը հստուկ հրովարտակով նրանց հոչակում է «Արարատյան մելիքների գահերեց»²³:

Մելիք-Շահնազարյանների ժառանգները XVII դ. սկզբին հաստատվում են նաև Արցախի կենտրոնական շրջաններում՝ հիմք դնելով Վարանդայի հզոր մելիքությանը²⁴:

Թեև կան հակընդդեմ կարծիքներ, բայց չի բացառվում, որ Սոթքի Մելիք-Շահնազարյաններից էր սերում նաև XVII դարասկզբին ձևավորված և շուրջ երկու դար գոյատեսած Ուկանապատի (Գարդմանի) նշանավոր մելիքությունը:

Սոթքում արտագաղթի առաջին ալիքը և Մելիք-Շահնազարյանների ճյուղերի տարածումն Արցախում և Ռուսիայում, կարծես թե, տեղի է ունենում XVII դ. սկզբին՝ պայմանավորված դեպի Սևանա լճի ավագան ջալալիների արշավանքունը²⁵:

Թեև XVIII դ. կեսերին նրանք լքում են Սևանա լճի ավագանի հայրենի եզերքները, սակայն, համաձայն պահպանված արխիվային տվյալների, XIX դարասկզբին նրանք վորձում էին գատավարական ճանապարհով պարսկական, ապա նաև ցարական իշխանություններից ստանալ իրենց կալվածքներն ու վերականգնել մելիքական իրավունքներն այդ տարածքների նկատմամբ: Այս հարցում ցարական իշխանությունը, ի տարբերություն պարսիկների,

²¹ Ա. Յակոբեան. նշվ. աշխ., էջ 175-176:

²² Գ. Կիրակոսյան. Դոփյան իշխանական տան ծագման հարցի շուրջ - Հեղաշ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1985, № 3, էջ 77-85:

²³ Ա. Յովհաննիս նիստական նշվ. աշխ., էջ 105-113, Հ. Ջամչեանց. Հայոց պատմություն (սկզբից մինչեւ 1784 թուականը), հ. Գ, Երևան, 1984, էջ 554-555:

²⁴ Ա. Մաղալյան. Արցախի մելիքությունները և մելիքական տները XVII-XIX դդ., Երևան, 2007, էջ 158-198:

²⁵ Առաքել Դաւրի Ժեցիկի. Գիրք պատմութեանց, աշխատասիրութեամբ Լ. Խանլարյանի, Երևան, 1990, էջ 106:

Հակված չէր աջակցել հայ իշխանական տան օրինական ժառանգներին, և արդյունքում այդ իրավունքները չի հաջողվում վերականգնել²⁶:

Հայ առաքելական եկեղեցին

Ինչպես վերը նշեցինք, տեղի իշխանները Գրիգոր Լուսավորչին դեսպի Կեսարիա քաղաք քահանայապետ ձեռնազրության ուղեկցողների շարքում էին, հետևաբար, սկսած IV դարից, քրիստոնեությունն այստեղ մուտք է գործում պաշտոնապես:

Գրավոր սկզբնաղբյուրներում Սոթքում հոգևոր բնույթի իրադարձության հաջորդ հիշատակությանը հանդիպում ենք Հովհան Մայրապոմեցու և Մովսես Դասխուրանցու աշխատություններում: Դրանցում ներկայացված են VI դարավերջին և VII դարավորին պատկերամարտություն աղանդի դեմ ծավալված իրադարձությունները: Սոթքը եղել է կրոնաքաղաքական այդ շարժման կենտրոններից մեկը, որտեղից քարոզիչներն անցել են նաև Արցախ: Հետագայում, սակայն, աղանդի հետևորդները ձերբակալվում են և հրաժարվում իրենց հայացքներից²⁷:

Հաջորդ հիշատակությունը վերաբերում է Ուխտանես Եպիսկոպոսի՝ X դարավերջին Ծավագեցոց գավառի հունադաշնան հայության կրկնամկրտության իրադարձությանը, որի աշխատանքը մեզ չի հասել, ուստի դրա բովանդակության վերաբերյալ վարկածներին չենք անդրադառնա:

Այդ իրադարձությունները ցույց են տալիս, որ միջնադարյան Սոթքը, թերևս, նաև ողջ գավառը, հավանաբար, իր աշխարհագրական մեկուսի, առանձնյակ դիրքի պատճառով, որոշակի պարարտ միջավայր է եղել կրոնաքաղաքական կենտրոնախույս տարբեր հոսանքների համար:

Նույն սկզբնաղբյուրներով, սակայն, հաստատվում է նաև այն, որ կենտրոնախույս և հերձվածական մղումները հաջողության չեն հասել ու Հայ առաքելական եկեղեցու իշխանությունն անսասան է մնացել ընդհուպ մինչև XVIII դ. Սոթքի հայաթափակումը:

Սոթքի եկեղեցու թեմական (Եպիսկոպոսական աթոռի) պատկանելության վերաբերյալ տվյալները սակավ են: Ըստ երևույթին, IV դարից սկսած՝ գավառի հոգևոր կիսարոնը Մաքենյաց վանքն էր՝ քրիստոնյա Հայաստանի հնագույն և նշանակալից միաբանություններից, գրչության կենտրոններից մեկը, իսկ Սոթքի եկեղեցին պատկանել է այդ վանքի վեճակին (Եպիսկոպոսական թեմին):²⁸

X դ. Սյունյաց մետրոպոլիտական աթոռին հաստատումից հետո Մաքենյաց վանքի եպիսկոպոսական թեմն ընդգրկվում է Սյունյաց մետրոպոլիտական աթոռի կազմում և այդ կարգավիճակով շարունակում մնալ մինչև XV դ. վերջը, երբ, քաղաքական հանգամանքներով պայմանավորված, Սյունյաց մետրոպոլիտական թեմին:

²⁶ Ք. Կոստիկյան. Գեղարքունիքի Մելիք-Շահնազարյանների պատմությունից.— Մերձավոր և միջին արևելքի երկրներ և ժողովուրդներ, XXIV, Երևան, 2005, էջ 303–329:

²⁷ Ա. Գրիգորյան. Պատմական Սոթքի վերաբերյալ միջնադարյան հայ պատմիչների հիշատակությունները, էջ 186–206:

²⁸ Ա. Ղազարոսյան. Մաքենիսի գրչության կենտրոնը.— «Էջմիածին», 2006, № 1, էջ 66–70:

յաց մետրոպոլիտությունը տկարանում է և վերածվում է անջատ եպիսկոպոսական աթոռի²⁹:

Աշխարհագրական դիրքով, տնտեսական կապերով և քաղաքական համայնքներով պայմանավորված՝ Սոթքի եկեղեցին, այն է՝ Մաքենյաց վանքի եպիսկոպոսական թեմը, Հաճախ կրել է Աղվանից կաթողիկոսության (XIV դարից Հաճախ հիշտակվում է նաև որպես Գանձասարի կաթողիկոսություն) ազդեցությունները։ Ամենայն հավանականությամբ, դրանք հատկապես ուժեղ են եղել IX–X դդ., երբ հզորացած Փառիսոսի ֆեոդալական թագավորությունն Աղվանից կաթողիկոսության կենտրոնը Բերդակուրից փոխազդում է Միափոր գավառի Խամշի վանքը (ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակի տարածաշրջան):

Աղվանից կաթողիկոսության ազդեցությունները մեծանում են նաև XV դ.՝ Հավանաբար, պայմանավորված Խաչենի իշխանության հետ Սոթք գավառի սերտ կապերով և Սյունյաց մետրոպոլիտության թուկացմամբ³⁰:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ XVI–XVIII դդ. Սևանա լճի հարավարևելյան ավագանը շարունակում էր ներառված մնալ Մաքենյաց վանքի վիճակում³¹:

XVIII դ. ողջ գավառի հետ լրվում է նաև Մաքենյաց վանքը։ XIX դ. երկրորդ կեսին նոր Բայազետի Հայությունը փորձեր է անում վերականգնել հոգևոր կյանքը Մաքենյաց վանքում, սակայն այդ ժամանակ Մաքենիս գյուղն արդեն բնակեցված էր թուրքախոս եկողոններով, ովքեր թույլ չեն տալիս վերաբացել վանքը³²:

1836 թ. ցարական իշխանության «Պոլոտենիե»-ի ընդունումից հետո Սևանի ավագանի հոգևոր կենտրոնները ներառվում են նորաստեղծ Երևանի թեմի մեջ։ Փաստացի, Սոթքի եկեղեցին չէր կազմում այդ թեմի մասը, քանի որ գյուղն արդեն բնակեցված էր մահմեղականներով, իսկ եկեղեցին չէր գործում³³։

Սոթքի եկեղեցին այժմ ներառված է Ամենայն Հայոց կաթողիկոսի 1996 թ. մայիսի 30-ի պաշտոնագրով ստեղծված Գեղարքունյաց թեմի կազմում, որի առաջնորդանիստը Գավառի Ս. Աստվածածին եկեղեցին է³⁴։

Հուշարձանները

Դրախտիկ գյուղից մինչև Մաքենյաց գետահովիտը ձգվող գավառի կենտրոն հանդիսացած իշխանանիստ Սոթքը, շրջակա բնակավայրերի հա-

²⁹ Ա. Վ. Պ. Դ. Մաքենյան. Էջեր Սյունյաց աթոռի պատմությունից, Ս. Էջմիածին, 1995, էջ 72–74։

³⁰ Թ. Հակոբյան, Ս. Մելիքք-Բախչյան, Հ. Բարսեղյան. Հայաստանի և Հարավից շրջանների տեղանունների բառարան, 1, Երևան, 1986, էջ 664, Քրիստոնյա Հայաստան հանրագիտարան, Երևան, 2002, էջ 42–44։

³¹ Սիմեոն Երևանցի. Ջամբռ, Երևան, 2003, էջ 395–396։

³² Ա. Ղազարոսյան. նշվ. աշխ., էջ 66–70։

³³ Քրիստոնյա Հայաստան հանրագիտարան, էջ 140–142։

³⁴ Կ. Մաթևոսյան. Հայաստանի թեմերը. պատմություն և արդիականություն. – «Էջմիածին», 1998, № 2–3, էջ 185–190, Քրիստոնյա Հայաստան հանրագիտարան, էջ 205։

մեմատությամբ, աչքի է ընկնում միջնադարյան հուշարձանների որոշակի խտությամբ, կառույցների և կոթողների կերտման բարձր վարպետությամբ:

Մյուս կողմից՝ Սովոր ակնհայտ ծայրագավառ է Սևանի արևմտյան ավազանի ու, հատկապես, Հայկական լեռնաշխարհի կենտրոնական շրջանների, մասնավորապես՝ Արարատյան դաշտի նկատմամբ, և մշակութային երեսույթներն այստեղ երեսն դրսեորվում են ժամանակագրորեն ավելի ուշ, աչքի են ընկնում առավել համեստությամբ ու պարզությամբ:

Սովոր հուշարձանների երկարամյա պեղումները ցույց են տվել, որ գյուղի և շրջակայքի հուշարձանները թվաքրվում են մոտ մ. թ. ա. III հազարամյակից մինչև մ. թ. XVIII դարը: Դրանք ամրոցներ են, բնակատեղիներ, դամբարաններ, եկեղեցիներ, գերեզմաններ, քարավանատուն և առանձին գտնված կոթողներ (հիմնականում խաչքարեր ու տապանաքարեր):

Միաժամանակ ուսումնասիրությունները ցույց են տվել, որ կա ակնհայտ հակասություն միջնադարյան գրավոր սկզբնադրյուրներում հիշատակված հոչակավոր քաղաքագյուղ/մայրաքաղաք³⁵ Սովոր ու միջնադարյան հուշարձանների և քրիստոնեական կոթողների այն համեստ ու աղքատիկ պատկերի միջն, որով այժմ ներկայանում է գյուղը:

Նշված հանգամանքի, թերևս, գլխավոր պատճառը XVIII դ. տեղի հայաթափումը և չուրջ երկու հարյուրամյակ մահմեդականներով բնակեցված լինելն է: Այս առումով Սովոր հետ զուգահեռներ կարելի է տանել Աղբեղանի տարածքում գտնվող Կուր գետի աջափնյա գավառների, Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի տարածքից դուրս մնացած պատմական Այունիքի և Արցախի գավառների, Նախիջևանի երբեմնի հարյուրավոր հայկական բնակավայրերի հետ, որոնցում հայկական հետքը ոչնչացված է մեծ ջանասիրությամբ:

Սովոր վերաբերյալ կան ուշագրավ տվյալներ այն մասին, որ XIX դ. կերին գյուղն իրենից ներկայացնում էր մեծ գյուղաքաղաքի ավերակները³⁶:

Այդտեղ պահպանված միջնադարյան հուշարձաններն են՝ Ա. Աստվածածին եկեղեցին, գերեզմանատունը, գերեզմանատունը վերածված ամրոցը, քարավանատունը, գյուղի տարբեր վայրերում հայտնաբերված կոթողները:

Ս. Աստվածածին եկեղեցի (նկ. 1, 2): Գտնվում է գյուղի կենտրոնում (աշխարհագրական կոորդինատները՝ N 40°12'0.19" E 45°51'54.29"): Չորս մույթերով եռանավ բազիլիկ կառույց է՝ զույգ ավանդատներով: Արևմտյան պատին պահպանվել է 1276 թ. շինարարական բնույթի արձանագրություն, որտեղ նշված է, որ Հասան իշխանի և իշխանուհի Մամքանի օգնությամբ Առաքելը շինեց եկեղեցին³⁷:

Եկեղեցու որմերին ագուցված խաչքարերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այնտեղ կան XVI–XVII դարակզբի արձանագիր խաչքարեր: Այդ համատեքստում եկեղեցու ներսում՝ հյուսիսային պատի մոտ, և կարծես թե իր նախնական տեղում գտնվող 1645 թ. արձանագիր տապանաքարի առկա-

³⁵ Հայերեն ձեռագրերի մեջ դարի հիշատակարաններ (1641–1660 թթ.), Հ. Գ. կազմ., Վ. Հակոբյան, Երևան, 1984, էջ 260–262:


³⁶ Ս. Զալալյանց. Ճանապարհորդություն ի մեծն Հայաստան, մաս Ա, Բ, Երևան, 2016, էջ 312:

³⁷ Ս. Բարխուդարյան. նշվ. աշխ., էջ 328–329:

յովթյունը թույլ է տալիս ենթադրել, որ եկեղեցու վերջին վերակառուցումը, ամենայն հավանականությամբ, տեղի է ունեցել XVII դ. առաջին կեսին:



Նկ. 1. Սոթքի Ս. Աստվածածին
եկեղեցին:



Նկ. 2. Սոթքի Ս. Աստվածածին
եկեղեցու հատակագիծը:

Եկեղեցու որմերին պահպանված շուրջ երկու տասնյակ արձանագրություններից բացի, չափազանց ուշագրավ են հայերեն «Թ» և «Ա» տառերի տեսքով վարպետանշաններ՝ համապատասխանաբար 12 և 8-ական օրինակներով:

Գերեզմանատուն (Նկ. 3): Գտնվում է եկեղեցուց 400 մ արևմուտք (աշխ. կոորդինատները՝ N 40°11'58.89" E 45°51'37.69"): Երբեմնի ընդարձակ գերեզմանատնից պահպանվել են XIII–XVII դդ. շուրջ երկու տասնյակ կոպտատաշ տապանաքարեր, խաչքարեր և պատվանդաններ՝ հիմնականում իրենց նախնական դիրքից տեղաշարժված և գյուղամիջյան ճանապարհի եզրին կուտակված³⁸:



Նկ. 3. Միջնադարյան գերեզմանոցի ընդհանուր տեսքը:

Ամրոց/գերեզմանատուն: Վաղ միջնադարյան ամրոցի ավերակները գտնվում են եկեղեցուց 200 մ հարավ-արևելք շուրջ 1,5 հա տարածք զբաղեցնող բլրի վրա (աշխ. կոորդինատները՝ N 40°11'53.26" E 45°51'59.39"): Պահպանվել են ամրոցի տարբեր հատվածների պարսպի հիմնապատերը և ներքին կառույցների որոշ մնացորդներ:

Պեղումները ցույց են տվել, որ ամրոցը մ. թ. I դարերում կարևոր կետ է եղել Մետաքսի մեծ ճանապարհի ճյուղերից մեկի՝ Դիլին-Պարտավ առևտորական ճանապարհի սովորյան հատվածում և վերահսկել այդ հատվածը: Ամրոցի ավերումից հետո՝ հավանաբար IV–VII դդ. միջակայքում, բլուրը վերածվել


³⁸ Նույն տեղում:

Է գերեզմանատան: Թեև բլրի վրա չեն պահպանվել գերեզմանական կոթողներ, սակայն 2014 և 2020 թթ. պեղումների ժամանակ բացվեցին քրիստոնեական դիրքով տասնյակ թաղումներ, որոնք ուղիղութածնային անալիզի արդյունքում ստացված տվյալներով թվագրվեցին հրմնականում $XV-XVII$ դդ.:

Շրջակայքի տեղազնության արդյունքում հայտնաբերվեցին մի քանի տապանաքարեր, որոնք, ամենայն հավանականությամբ, ծագում են բլրի տարածքից:

Պահպանվել է նաև 1970-ական թթ. արված գերեզմանատան վերջին կանգուն խաչքարի լուսնկարը, որի գտնվելու վայրն այժմ անհայտ ³⁹ (նկ. 4):

Ճանապարհային կայան (թերևս, քարավանատուն) (նկ. 5): Քարավանատան տպավորությունն թողնող ուղղանկյունաձև, $13,5 \times 9,5$ մ չափերով կառուցյալ գտնվում է Աղթքի ոսկու հանքի տարածքում՝ դյուլից 6 կմ հյուսիս (աշխ. կոորդինատները՝ $N 40^{\circ}13'19.64'' E 45^{\circ}57'39.80''$): Միանավ կառույցի մուտքն արևմտյան կողմից է, պատերը սրբատաշ են՝ կիսով չափ հողի մեջ թաղված, ծածկը՝ փլուզված: Շուրջը տարածվում են բազմաթիվ կառույցների հողածածկ ավերակներից բաղկացած ընդարձակ բնակատեղիի հետքերը:



Նկ. 4. Ամրոցի գերեզմանատան վերջին կանգուն խաչքարը XIII դ. (տե՛ս
L. Azarian, A. Manoukian.
Նշվ. աշխ., էջ 46):



Նկ. 5. Սոթքի քարավանատան ավերակները:

Մեծ հավանականությամբ, ի դեմս միջնադարում հայտնի Սոթքի լեռնանցքի անմիջապես դրանը կանգնած այս կառույցի և շրջակա ավերակների, գործ ունենք հայկական և արաբական սկզբնավեյտըներից հայտնի Սոթքի (Զառութիս) քարավանատան ու ճանապարհային կայան/առևտրավայրի հետ, որտեղ հանդրվանում էին Դվինից Պարտավ մեկնող և վերադարձող քարավանները: Վաղ միջնադարյան ժամանակներից գոյություն ունեցած կայանքարավանատունը, ըստ երևոյթին, շարունակել է այդ գործառույթն իրակա-

³⁹ Նույն տեղում, էջ 331, L. Azarian, A. Manoukian. Khatchkar, Documents of Armenian Architecture, 2. Milano, 1977, p. 46.

Նացնել ընդհուպ մինչև XX դ., իսկ այժմ ամբողջությամբ լքված է և մոռացության մատնված⁴⁰:

Խաչքար: Գտնվում է Հասանսու (Հասանի աղբյուր) թաղամասից 3 կմ հյուսիս: Բարձրությունը՝ 230 սմ (նկ. 6): Հաշվի առնելով խաչքարի հորինվածքային չափազանց մեծ նմանությունը Սոթքի ամրոց-գերեզմանատան խաչքարին, չբացառելով նաև, որ դրանք կարող էին նույն վարպետի գործերը լինել՝ կարելի է թվադրել XIII դարավերջով:



Նկ. 6. Խաչքար, XIII դ.:

Ընդհանրապես, Սոթքի տարածաշրջանը եղել է միջնադարյան Հայաստանի խաչքարագործական կարևոր կենտրոններից, որտեղ ձևավորվել էր, այսպես կոչված, Սոթք-Գեղարքունիքի դպրոցը: Խաչքարագործական այս դպրոցին բնորոշ է որպես հումք անդեպիտային և բազալտային ապարների ընարությունը, որով հարուստ են Գեղամա ու Վարդենիսի լեռները, խաչքարերի մոնումենտալությունը և հորինվածքի պարզությունը: Դպրոցը նաև ուշ միջնադարյան տապանաքարային արվեստի առաջատար կենտրոններից մեկն է: Բնորոշվում է աշխարհիկ թեմատիկայով պատկերաքանդակների առատությամբ և կատարողական բարձր արվեստով⁴¹:

Օրորոցած տապանաքարը: Գտնվում է Ս. Աստվածածին եկեղեցուց 10 մ արևմուտք (նկ. 7, 8): Առաջինը, որով աչքի է ընկնում տապանաքարը, այն է, որ, ըստ արձանագրության, առ դրված է եղել Մալաքի որդիներ Միհիթարի և Դուռասանի գերեզմանին: Այս իրողությունը միջնադարյան Հայաստանում երեմն հանդիպող այն գեպքերից է, երբ հարազատները միաժամանակ են մահացել որևէ պատահարից կամ զոհվել/անհետ կորել են կովում և նրանց հիշատակի համար մեկ տապանաքար է դրվել:

Տապանաքարը հետաքրքրական է նաև նրանով, որ հակառակ նիստին պատկերված է «ուսումնառության» տեսարան, որտեղ կերպարը ձեռքին ունի «այլբենարան»—պնակիտ՝ «Ա, Բ, Գ, Ե, Զ» գրությամբ, ինչը հայ


⁴⁰ Ս. Բարխուդարյան. նշվ. աշխ., էջ 8, Ա. Գրիգորյան. Նոր հետազոտություններ Սոթքում և Զառնթիս կայան-քարավանատան տեղադրության խնդիրը, Երևան, 2016, էջ 66–71:

⁴¹ Հմմտ. Հ. Պետրոսյան. Խաչքար. ծագումը, գործառութը, պատկերագրությունը, իմաստաքանությունը, Երևան, 2007:

միջնադարյան տապանաքարային պատկերագրության մեջ բացառիկ երևոյթ է⁴²:



Նկ. 7. Մխիթարի և Դուրասանի տապանաքարը, 1687 թ.:



Նկ. 8. «Ա. ԲԿ» և ՀԵ՝ պնակիտի գրչանկարը:

Տապանաքարը: Հայտնաբերվել է Վարդենիս-Մարտակերտ ճանապարհի շինարարական աշխատանքների ժամանակ՝ 2014 թ. (նկ. 9): Տապանաքարն աչքի է ընկնում հարուստ պատկերագրությամբ՝ քանդակված երեք նիստերին: Գլխավոր պատկերաքանդակը չափազանց մանրամասնորեն և ոեալիստրեն պատկերված որսի տեսարանն է:

Ուշագրավը սակայն այն է, որ տապանաքարի մյուս լայներեն նիստի պատկերաքանդակն ակնհայտորեն անավարտ տեսք ունի, իսկ կողային նիստերից մեկը հարթեցված է և դատարկ թողնված: Տապակորություն է, որ վարպետը սկսել, բայց ավարտին չի հասցրել աշխատանքը: Տապանաքարի պատկերագրական և ոճաբանական մանրամասների քննությունը թույլ է տալիս ենթադրել, որ, ամենայն հավանականությամբ, դա XVIII դ. աշխատանք է, իսկ անսավարտությունը պայմանավորված է Սոթքի հայ բնակչության արտագաղթով:

Տապանաքարը: Հայտնաբերվել է 2014 թ. գյուղապետարանի բակից շինարարական աշխատանքների ժամանակ (նկ. 10): Փոքրիկ տապանաքարն աչքի է ընկնում հաղթահանդեսի և կենդանամարտի տեսարաններ ներկայացնող պատկերաքանդակներով: Տապանաքարը եղծված է, լրջորեն վնասված են պատկերաքանդակները:

Ուշագրավ է կենդանամարտի տեսարան պատկերող քանդակի վերևի արաբատառ արձանագրությունը: Պահպանվել են արձանագրության միայն առաջին 3 տառերը «... Հ Լ», որ, կարծես թե, ընթերցվում են «ՄԱ.Զ ...», և կարող էր արական Մաջիդ անձնանունը լինել: Տապանաքարի պատկերագրությունն ակնհայտորեն ունի քրիստոնեական թեմատիկա և, ըստ երևոյթին, հայ վարպետի աշխատանք է, սակայն դժվար է մեկնաբանել արաբական գրի առկայությունը:

⁴² Ա. Գրիգորյան. Սոթք-1 ամրոցը և Դվին-Պարտավ առևտրական ճանապարհի սոթքան հատվածը, էջ 56-64:

Հաստ ամենայնի, տապանաքարը կարելի է թվագրել XVII–XVIII դդ., երբ Սոթքում հայկական իշխանությունը սկսել էր անկում ապրել, իսկ մահմեծականների ասպատակությունները դեպի Սոթք սկսել էին հաճախանալ:



Նկ. 9. Տապանաքար,
հավանաբար, XVIII դդ.:



Նկ. 10. Տապանաքար արաբատառ
արձանագրությամբ, հավանաբար,
XVII–XVIII դդ.:

Զրաղացքար: Սոթք գետի աջ ափին գտնվող միջնադարյան ջրաղացքարը, ենթադրվում է, որ եղել է գետափի այդ հատվածում գոյություն ունեցած միջնադարյան ջրաղացքարը (նկ. 11):

Սյան քարե խարիսխ: Հավանաբար եղել է տարածքում գոյություն ունեցած գլխատան սյուներից մեկի հիմնախարիսխը (նկ. 12):



Նկ. 11. Զրաղացքար:



Նկ. 12. Սյան քարե խարիսխ:

Սոթքից տեղափոխված խաչքարեր

Երբեմնի իշխանանիստ Սոթքը ցարական և խորհրդային ժամանակներում գրավել է հայկական մշակույթն ուսումնասիրողների ու այդ կողմերով ճանապարհորդած հոգևորականների ուշադրությունը, նրանց մղել ագրեսիվ մահմեղականներով բնակեցված տարածքից այդ կոթողներից որոշները տեղափոխվելու և այդ կերպ կորատից փրկելու քայլերի:

Տարբեր տարիների Սոթքից այլ վայրեր են տեղափոխվել մի շարք արժեքավոր գործեր:


Քառակող կոթող: Բարձրությունը՝ 272 սմ: Արձանագիր: 1628 թ.: Կերտվել է ի հիշատակ Պային: 1903 թ. առաջ հայտնի չէ, թե կոնկրետ երբ է ե. Լալայանը տեղափոխել Թիֆլիսի Կովկասյան թանգարան:⁴³

Քառակող կոթող: Բարձրությունը՝ 306 սմ: Արձանագիր: 1653 թ.: Կերտվել է ի հիշատակ Քամալին: Գտնվել է նախորդ կոթողի մոտ: Վերջինիս հետ ե. Լալայանը տեղափոխել Թիֆլիսի Կովկասյան թանգարան:

Քառակող կոթող: Բարձրությունը՝ 300 սմ: Արձանագիր: 1653 թ.: Կերտվել է ի հիշատակ տեղ Մելիքսեթի: Հեղինակը քարործ Զոհրապն է: Գտնվել է Սոթքի գերեզմանատանը: 1911 թ. Մելրոպ վարդապետ Տեր-Մովսիսյանը տեղափոխել է Էջմիածին:⁴⁴ (նկ. 13):



Նկ. 13. Քառակող կոթող,
1653 թ.: 1911 թ. Մոթքից
տեղափոխվել է Էջմիածին
(լուս.՝ Ա. Հարությունյանի):



Նկ. 14. Խաչքար, հավանաբար,
XVIII դ., Սոթքից
տեղափոխվել է Էջմիածին
(լուս.՝ Ա. Հարությունյանի):

Վերը նշված երեք կոթողները համարվում են ուշ միջնադարյան խաչքարային արվեստում բացառիկ տիպ և այլ տարածաշրջաններից հայտնի չեն:⁴⁵

Խաչքար: Հավանաբար, XVIII դ. սկիզբ: Սոթքում գտնվելու կոնկրետ վայրն անհայտ է, հետագայում տեղափոխվել է Էջմիածին (տեղափոխման վերաբերյալ մանրամասներ հայտնի չեն):⁴⁶ (նկ. 14): Անավարտ աշխատանք է: Խաչքարի վերին մասի պատկերաքանդակները կիսատ են մշակված, իսկ վերին ձափ կողմի ազատ հատվածում, ամենայն հավանականությամբ, պիտի լիներ հանգուցյալի դիմաքանդակը:

⁴³ Ե. Լալայեան. Նոր-Բայազէտի գաւառ կամ Գեղարքունիք: Տեղագրություն, Մազրայի գիւղ. հասարակություն. – «Ազգագրական հանդէս», գիրք XIX, № 1, էջ 21–30, Ս. Կարապետան Կովկասյան թանգարանի հայկական հավաքածուն, Երևան, 2004, էջ 78–81:

⁴⁴ Ա. Հարությունյան. Վաղարշապատ: Վանքերը և վիմական արձանագրությունները, Ս. Էջմիածին, 2016, էջ 114–115:

⁴⁵ Հ. Պետրոսյան. նշվ. աշխ., էջ 221:

⁴⁶ Տ. Արարատքանական Պողոսյան. Ս. Էջմիածին. թանգարան բացերկնքի տակ (պատկերագրություն), Ս. Էջմիածին, 2015, էջ 171:

Հիմնախաչից ներքև պատկերված է Սուրբ Ծննդյան և Տաճարին Հնծայրման տեսարան, որը բացառիկ երեսույթ է միջնադարյան խաչքարային պատկերաքանդակում: Խաչքարը, թերևս, կարելի է համարել XVIII դ. սկզբների գործ, իսկ անավարտությունը բացատրել Սովորի հայ բնակչության արտագաղթով⁴⁷:

Եզրակացություն

Բնակավայրի պատմության և հայկական հուշարձանների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ միջնադարյան Սովոր Սևանա լճի հարավարևելյան ավազանի մշակութային ու վարչաքաղաքական դիմավոր կենտրոնն էր, ինչպես նաև Արարատյան դաշտը՝ Կուրի ավազանին կապող ռազմավարական ճանապարհի կարևոր հանգրվան: Այս իշխանանիստն էր «Ծաւղէացոց իշխանության», Սովորի նախարարական տան, Դոփյան և Մելիք-Շահնազարյան իշխանների:

Սովորի Ս. Աստվածածին եկեղեցին պատկանում էր Հայ առաքելական եկեղեցու Մաքենյաց թեմին, որը Հայ առաքելական եկեղեցու հնագույն միաբանություններից մեկն էր:

Սովորի մշակութային և քաղաքական վերելքի գագաթնակետը XIII–XVII դարերն էին: XVII դարակեմից սկսվում է սրբնիք անկումը, իսկ XVIII դարում վերջնականապես լրվում:

Ավետիս Գրիգորյան – ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի Հայաստանի միջնադարյան հնագիտության բաժնի կրտսեր գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ միջնադարյան Հայաստանի հնագիտություն, XVIII–XX դդ. հայոց պատմություն: Հեղինակ է շուրջ 25 հոդվածի: grigoryan.avetis.9@gmail.com

REFERENCES

- Alishan Kh. Sisakan: Teghagrutiun Siuneats ashkharhi, Venetik, 1893 (In Armenian).
 Arakel Davrizhetsi. Girk patmuteants, ashkhatasirutyamb L. Khanlaryani, Yerevan, 1990 (In Armenian).
 Azarian L., Manoukian A. Khatchkar, Documents of Armenian Architecture, 2, Milano, 1977.
 Baghmanyan V. Hay-dsateri dsagume. – vanuhiblog.wordpress.com (In Armenian).
 Barkhudaryan S. Gegharkunik. – “Divan hay vimagrutyan”, pr. IV, Yerevan, 1973 (In Armenian).
 Chamcheants H. Hayots patmutiun (skzbits minchev 1784 tuakane), h. G, Yerevan, 1984 (In Armenian).
 Ghazarosyan A. Makenisi grchutyan kentrone. – “Edjmiadsin”, 2006, № 1 (In Armenian).
 Grigoryan A. Nor hetazotutyunner Sotkum yev Zautis kayan-karavanatan teghadrutyan khndire, Yerevan, 2016 (In Armenian).

⁴⁷ Հ. Պետրոսյան. Աշվ. աշխ., էջ 219–221:

- Grigoryan A. Norahayt vimagrer Sotki taradsashrdjanits. – Sedrak Barkhudaryan – 120 (gitakan hodvadsneri zhoghovadsu), Yerevan, 2019 (In Armenian).
- Grigoryan A. Sotk-1 amrotse yev Dvin-Partav arevtrakan janaparhi sotkyan hatvadse. – Hnagitutyan yev azgagrutyun instituti ashkhatutyunner, 3, Yerevan, 2019 (In Armenian).
- Grigoryan A. Patmakan Sotki veraberyal midjnadaryan hay patmichneri hishatakutyunnere. – PBH, 2020, № 2 (In Armenian).
- Hakobyan T., Melik-Bakhshyan S., Barseghyan H. Hayastani yev harakits shrdjanneri teghanunneri bararan, 1, Yerevan, 1986 (In Armenian).
- Hakobyan A., Mandalyan N., Hambardzumyan A., Podpomogova A. Shrjaka mijavayre yev bnakan pasharnere Hayastani Hanrapetutyunum 2019 tvakanin: Vijakagrakan zhoghovadsu, Yerevan, 2020 (In Armenian).
- Hayeren dzeragreri ZhE dari hishatakarakanner (1641– 1660 tt.), h. G, kazm. V. Hakobyan, Yerevan, 1984 (In Armenian).
- Harutyunyan A. Vagharpashpat. Vankere yev vimakan ardzanagrutyunnere, S. Edjmiadsin, 2016 (In Armenian).
- Harutyunyan H. Nor-Bayazeti gavare 1828–1913 tt., Yerevan, 2008 (In Armenian).
- Harutyunyan H. Nor-Bayazeti gavare 1914–1920 tt., Yerevan, 2012 (In Armenian).
- Harutyunyan V. Azganver djankeri hanragumare, Yerevan, 1999 (In Armenian).
- Jalalyants S. Janaparhordutyun i metsn Hayastan, mas A, B, Yerevan, 2016 (In Armenian).
- Kalantar A. Hayastani hnutyunneri pahpanutyanyan komite, Yerevan, 1931 (In Armenian).
- Karapetyan S. Kovkasyan tangarani haykakan havakadsun, Yerevan, 2004 (In Armenian).
- Karapetyan S. Hyusisayin Artsakh, Yerevan, 2004 (In Armenian).
- Kirakosyan G. Dopyan ishkhanakan tan dsagman hartsi shurdj. – HKhSH GA “Lraber hasarakakan gitutiunneri”, 1985, № 3 (In Armenian).
- Korkotyan Z. Khorhrdayin Hayastani bnakchutyune verdjin haryuramyakum (1831– 1931), Yerevan, 1932 (In Armenian).
- Kostikyan K. Gegharkunik Melik-Shahnazaryanneri patmutyunits. – Merdzavor yev mijin arevelki yerkner yev zhoghovurdner, XXIV, Yerevan, 2005 (In Armenian).
- Kristonya Hayastan hanragitaran, Yerevan, 2002 (In Armenian).
- Lalayean E. Nor-Bayazeti gavar kam Gegharkunik: Teghagruin, Mazrayi gyugh. hasarakutiun. – “Azgagrakan handes” (Tiflis), 1910, girk XIX, № 1 (In Armenian).
- Lalayean E. Sevan. – “Azgagrakan handes” (Tiflis), 1910, girk XIX, № 1 (In Armenian).
- Maghalyan A. Artsakhi melikutyunnere yev melikakan tnere XVII–XIX dd., Yerevan, 2007 (In Armenian).
- Matevosyan K. Hayastani temere. patmutyun yev ardiakanutyun. – “Edjmiadsin”, 1998, № 2– 3 (In Armenian).
- Miridjanyan D., Grigoryan A. Midjnadaryan Sotke noraguyn hnagitakan hetatzutyunneri luysi nerko. – “Edjmiadsin”, 2018, № 3 (In Armenian).
- Movsisi Khorenatsvoy Patmutiun Hayots, ashkhat. M. Abegheani yev S. Yrutiuneani, Tpghis, 1913 (In Armenian).
- Mkhitar Ayrivanetsi. Patmutiun zhamanakagrakan, S. Peterburg, 1867 (In Armenian).
- Mkrtychyan A. vrd. Edjer Syunyats atori patmutyunits, S. Edjmiadsin, 1995 (In Armenian).

- Petrosyan H. Khachkar. dsagume, gordsaruyte, patkeragrutyune, imastabanutyune, Yerevan, 2007 (In Armenian).
- T. Ararat kahana Poghosyan. S. Edjmiadsin. tangaran bats erknki tak (patkerazard ughetsuyts), S. Edjmiadsin, 2015 (In Armenian).
- Simeon Yerevantsi. Djambr, Yerevan, 2003 (In Armenian).
- Smbateants M. Teghagir Gegharkuni dsovazard gavari, vor ayzhm Nor-Bayazit gavar, Vagharsapat, 1895 (In Armenian).
- Stepannos Orbelean. Patmutiun nahangin Sisakan, Tiflis, 1910 (In Armenian).
- Ulubabyan B. Patma-ashkharhagrakan jshgrtumner. – “Banber Yerevani hamalsarani”, 1971, № 1 (In Armenian).
- Ulubabyan B. Khacheni ishkhanutyune X–XVI darerum, Yerevan, 1975 (In Armenian).
- Ukhtanes episkopos.– Matenagirk Hayots, h. ZhE, Zh dar. Patmagrutiun, girk B, Yerevan, 2011 (In Armenian).
- Yakobean A. Arkayatohmern u ishkhanatohmere bun Aghuankum yev Hayots Arevelits koghmanum antikits minchev ZhG dar (patma-aghbyuragitan knnutiun), Yerevan, 2020 (In Armenian).
- Yovhannisean A. Geghamay yev Dsaray melikneri tohme. – “Banber Hayastani gitakan instituti”, girk A. yev B., 1921–1922 (In Armenian).

КНЯЖЕСКАЯ РЕЗИДЕНЦИЯ СОТК: ИСТОРИЯ И ПАМЯТНИКИ

АВЕТИС ГРИГОРЯН

Р е з ю м е

Ключевые слова: Сотк, средневековые, культура, христианство, памятники, раскопки, крепость, церковь, хачкар, надпись, княжеский род.

Село Сотк находится на юго-востоке Гехаркуникской области Республики Армения. По версии историка Ст. Орбеляна, имя населенного пункта происходит от названия холодного ветра, дующего от горного перевала до Севана.

Об армянской принадлежности средневекового Сотка свидетельствуют не только около двух десятков армянских средневековых письменных первоисточников, но и исторические памятники в окрестностях села – церкви, хачкары, армянские надписи. Соткская церковь принадлежала епархии монастыря Макеняц Армянской апостольской церкви, который был одним из древнейших орденов армянской церкви.

Средневековый Сотк был главным культурным и административно-политическим центром юго-восточного бассейна озера Севан, важным участком стратегической дороги, связывающей Арагатскую долину с бассейном Куры. Это были княжеские дома Цавдеаци, Содаци, Дофян и Мелик-Шахназарян. Кульминацией культурного и политического подъема Сотка стали XII–XVII века.

Вследствие частых турецко-персидских войн и нашествий кочевников в XVIII веке в Сотке почти не остается армян. После перехода Восточной Армении под российское господство село заселяется в основном мусульманами, переселившимися сюда из разных провинций Елизаветпольской губернии, которые по государственному принуждению переходят к оседлому образу жизни. Исследования показывают, что мусульмане, обосновавшиеся в селе в XIX–XX вв., злостно уничтожали или повреждали армянские/христианские памятники, пытаясь стереть оттуда армянский след. Это однако, по большому счету, не удалось, поскольку армянская принадлежность села очевидна и сейчас.

Ավետիս Գրիգորյան – младший научный сотрудник отдела средневековой археологии Армении Института археологии и этнографии НАН РА. Научные интересы: археология средневековой Армении, история Армении XVIII–XX вв. Автор около 25 статей. grigoryan.avetis.9@gmail.com

PRINCE RESIDENCE SOTK: HISTORY AND MONUMENTS

AVETIS GRIGORYAN

Summary

Key words: *Sotk, Middle Ages, culture, Christianity, monuments, excavations, fortress, church, khachkar, inscription, princely family.*

Sotk village is located in the south-east of Gegharkunik province of the Republic of Armenia. According to Stepanos Orbelyan, the name of the settlement originates from the name of the cold wind blowing from the mountain pass to Sevan.

The Armenian identity of medieval Sotk is evidenced not only by about two dozen Armenian medieval written sources, but also by historical monuments in the vicinity of the village – churches, khachkars, Armenian inscriptions. The church of Sotk belonged to the Diocese of the Makenyats Monastery of the Armenian Apostolic Church, which was one of the oldest orders of the Armenian Church.

Medieval Sotk was the main cultural and administrative-political center of the southeastern basin of Lake Sevan, an important section of the strategic route connecting the Ararat valley with the Kur basin. These were the princely houses of Tsavdeatsi, Sodatsi, Dopyan and Melik-Shahnazaryan.

The culmination of the cultural and political upsurge of Sotk was the 12th-17th cc.

As a result of the frequent Turkish-Persian wars and the invasions of nomads in the 18th c., almost no Armenians remained in Sotk. Upon Eastern Armenia's passing under Russian domination, the village was populated mainly by Muslims

who moved here from different regions of the Elizavetpol province, who, by state compulsion, were moving to a sedentary lifestyle.

Studies show that Muslims who settled in the village in the 19th-20th cc. maliciously destroyed or damaged Armenian/Christian monuments, trying to erase the Armenian trace from there. However, this, by and large, did not succeed, since the Armenian identity of the village is obvious even now.

Avetis Grigoryan – Junior Researcher at the NAS RA Institute of Archaeology and Ethnography. Scientific interests: archaeology of medieval Armenia, history of the 18th-20th cc. Author of about 25 articles.

grigoryan.avetis.9@gmail.com

ՏԱԹԵՎԻ ՎԱՆՔԻ Ս. ՊՈՂՈՍ-ՊԵՏՐՈՍ ՏԱճարի
ՊԱՏԿԵՐԱՔԱՆԴԱԿՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՎԱՆԱԿԱՆ ՎԱՐՊԵՏԸ*

Ա.ՐՄԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Բանալի բառեր՝ Տաթևի վանք, Ս. Պողոս-Պետրոս տաճար, պատկերաքանդակ, Ստ. Օրբելյան, Ստ. Մնացականյան, դիմաքանդակ, վիշապօձ, խորշ, երեսակալ, իշխան, եղիա վարդպետ:

Նախաբան

Միջնադարյան Հայաստանի հոգևոր-մշակութային նշանավոր կենտրոններից է Տաթևի վանական համալիրը, որի գլխավոր՝ Ս. Պողոս-Պետրոս տաճարը կառուցվել է վանքի հնագույն՝ վաղմիջնադարյան խարխուկ եկեղեցու տեղում։ Պատմագիր՝ Ստեփանոս Օրբելյանի հաղորդմամբ՝ տաճարի կառուցման պատճառը Սյունյաց մետրոպոլիտ Հովհաննես եպիսկոպոսի տեսիլքն էր, համաձայն որի՝ երազում հրեշտակը քանից հրամայել է կառուցել նոր եկեղեցի նախանշելով նրա տեղն ու անունը՝ հին եկեղեցու տեղում, սուրբ առաքյալներ Պողոսի և Պետրոսի անվամբ։ «... ի տեսլեան հրաման առնու ի հրեշտակէ գհինն ի բաց դնել և նոր առնել սկիզբն շինուածոյ եկեղեցւոյն ... յանուն սուրբ և գլխաւոր առաքելոցն վիմին Պետրոսի և առաքելոյն Պողոսի»¹։ Տեսիլքի բովանդակությանն ականջալուր Սյունյաց երեկի իշխանները՝ Փիլիպպի որդի Աշոտ գահերեց իշխանը, իր կողակից Շուշան իշխանուհին, Գեղարքունյաց տեր Գրիգոր Սուփանը, իսկ Բաղրից Զագիկը, Տիրոջ հրամանից ոգևորված՝ առատ նվիրատվություններ են անում և «սկիզբն առնեն շինուածոյն, և արկանեն հիմն յ344 (895) թուականին Հայոց, ի թագաւորութեանն Սմբատայ Բագրատունւոյ խոստովանողի՝ որդւոյ Աշոտոյ թագաւորի, յիշխանութեան Ավենեաց Աշոտոյ՝ որդւոյ Փիլիպպի, ի կաթողիկոսութեանն Հայոց Տեառն Գէրգեայ Գառնեցւոյ, հրամանաւ և կամօք Աշոտոյ, ձեռամբ Տեառն Յովհաննիսի»²։ Այսպես, 11 տարի տեսող շինարարությունից հետո 906 թ., ավարտվում է վանքի գլխավոր ուղղանկյուն հատակագծով, անկյուններում ավանդատուն-խորաններով (թեև միահարկ, սակայն վերնահարկում թաղածածկ թաքատոցներով), մեկ գույր մույթերով գմբեթավոր եկեղեցու կառուցումը, ի նշանավորումն որի՝ տաճարի հարավային մուտքից³ ոչ հեռու կանգնեցվում է Ս. Երրորդությանը նվիրված ճոճկող գավազան-սյունը⁴։

* Ներկայացվել է 29. IX. 2020 թ., գրախոսվել է 07. X. 2020 թ., ընդունվել է տպագրության 29. I. 2021 թ.։

¹ Ստեփանոս Օրբէլեան. Պատմութիւն նահանգին Սիսական (այսուհետ՝ Ստ. Օրբէլեան), Թիֆլիս, 1910, էջ 222–223։


² Նույն աելում, էջ 224։

³ Այդ մուտքի դիմաց է թաղել XIV–XV դդ. նշանավոր աստվածաբան, հոգևոր գործիչ Ս. Գրիգոր Տաթևացին, որի գերեզմանին 1787 թ. թաղակապ փոքր դամբարան է կառուցվել, ուր կարելի է մտնել տաճարի ներսից։


⁴ Ստ. Օրբէլեան, էջ 225։

Տաճարի արտաքին քանդակային հարդարանքը

Ս. Պողոս-Պետրոս տաճարն արտաքին քանդակային հորինվածքի բազմագանությամբ առանձնապես աչքի չի ընկնում: Հյուսածո խաչերով, ինչպես նաև մարդակերպ (Փիգուրային) ու կենդանական պատկերաքանդակներով է հարդարված հովհարածև վեղարով պսակված գլանաձև թմբուկը, իսկ պատուհանների կամարակապ երեսակալները հիմնականում ներկայացված են բուսական զարդատարրերով: Հետաքրքրականն այն է, որ տաճարի արևելյան մեծաղիքը խորշերի, նաև հյուսիսային ու հարավային պատուհանների մեկական երեսակալները հարդարված են հանդիպակաց վիշապ-օձերի, իսկ կենտրոնում՝ դիմաքանդակների համարությամբ (հարավային պատուհանին միայն դիմաքանդակն է) (գրչանկ. 1-4):




Գրչանկ. 1



Գրչանկ. 2



Գրչանկ. 3



Գրչանկ. 4

Ս. Պողոս-Պետրոս տաճարի՝ վիշապ-օձերով և դիմաքանդակներով զուգակցված երեսակալները:

Տաճարի պատկերաքանդակներին, ի մասնավորի՝ հիշյալ դիմապատկերներին նախկինում հանդամանորեն անդրադարձել է ճարտարապետության դրկտոր Ստ. Մնացականյանը, նախ՝ Սյունյաց ճարտարապետության դպրոցին, այնուհետև՝ հայկական միջնադարյան աշխարհիկ պատկերաքանդակին նվիրված աշխատություններում⁵: Հեղինակը մանրամասն վերլուծել է ոչ միայն դիմապատկերների քանդակային-հորինվածքային լուծումները (օվալաձև դեմքեր՝ ուղիղ դիմագծերով, նշաճև աչքերով, ճակատներին՝ զարդարուն ժապավեններով, գալարուն մազերով), այլև նկատի


⁵ Արտատպված է՝ Ստ. Մնացականյան. Հայկական ճարտարապետության Սյունիքի դպրոցը, Երևան, 1960, էջ 205-207, նկ. 119-121:

⁶ Նույն տեղում, էջ 205-211, նույնի՝ Հայկական աշխարհիկ պատկերաքանդակը I-XIV դարերում, Երևան, 1976, էջ 14-19:

ունենալով լուսապսակների բացակայությունն ու վիշապ-օձերի համատեքստում հանդես գալը՝ դրանք վերագրել է տաճարի կառուցմանը նպաստած Այունյաց իշխաններին⁷: Այդպիսիք հայտնի են նաև Աղթամարի Ս. Խաչ եկեղեցու պատկերաքանդակներից (X դար), որտեղ հարավային ու Հյուսիսային խաչաթևերի քիվատակին տեղ են գտել երկու տասնյակից ավելի միաշար դիմաքանդակներ, որոնք, ըստ Ստ. Մնացականյանի, կտիտորական բնույթ ունեն և խորհրդանշում են այն անձանց, ովքեր օժանդակել են տաճարի շինարարությանը⁸:



Նկ. 1



Նկ. 2



Նկ. 3



Նկ. 4



Նկ. 5

Ս. Պողոս-Պետրոս տաճարի քանդակագարդ երեսակապներն
ու արևելյան պատի հարավային խորշի արոմաթի գլխաքանդակը
(լուս.՝ Հեղինակի, 2015 թ.):

Կտիտորներին խորհրդանշող միևնույն գաղափարն է նաև Տաթմեի Ս. Պողոս-Պետրոս տաճարի դիմաքանդակների գեպքում: Այսպես, ըստ Ստ. Մնացականյանի, տաճարի արևելյան զույգ խորշերի երեսակալների կենտրոնում պատկերված են աջից Այունյաց Աշոտ գահերեց իշխանի (որի դիմաքանդակի վերնամասում նաև նրբագեղ վարդյակ է քանդակված⁹), ձախից՝ Շուշան իշխանուհու, իսկ հյուսիսային և հարավային պատուհանների երեսակալներին՝ համապատասխանաբար Գրիգոր Սուլվան ու Զադիկ իշխանների դիմաքանդակները (նկ. 1-4): Արանցից բացի, բավական հողմահար-

⁷ Ստ. Մնացականյան. Հայկական ճարտարապետության Այունիքի դպրոցը, էջ 206-207:

⁸ Ստ. Մնացականյան. Աղթամար, Երևան, 1985, էջ 45:

⁹ Վարդյակի քանդակային-հորինվածքային լուծումներն անվանի հայագետ Անատոլի Յակոբսոնը զուգադրում է սիրիական մշակույթից հայտնի համանման օրինակների հետ, ըստ որոնց՝ թվագրում է V-VI դդ. (տե՛ս Ա. յակոբսոն. Ին истории Армянской средневековой архитектуры. III. Татевский монастырь.— «Советская археология», т. IX. М.-Л., 1947, с. 309):

ված մի գլխաքանդակ է պահպանված նաև արևելյան պատի հարավային խորշի տրոմպի սկզբնամասում¹⁰ (նկ. 5)՝ նման VII դարով թվագրվող Սիսականի, իսկ ավելի ուշ՝ Կումուլուրոյի (964 թ.), Իշխանի (X-XI դդ.) և այլ հուշարձաններից հայտնի խորշային գլխաքանդակներին (նկ. 6-8):



Ակ. 6



Ակ. 7



Ակ. 8

Գլխագանգակներ՝ եկեղեցիների արտաքին խորշերի տրոմպների սկզբնամասում.
Սիսավան (լուս.` Հեղինակի, 2017 թ.), Կումուրդո (լուս.` Դենիս Բելեցկու, 2012 թ.),
Իշխան (լուս.` Զարուհի Հակոբյանի, 2007 թ.):

Վերջերս արվեստագիտության թեկնածու Զ. Հակոբյանը, անդրադառնալով հայկական միջնադարյան քանդակային արվեստում հայտնի դիմակների ու դիմաքանդակների հորինվածքային լուծումներին, չի շրջանցել նաև Տաթևի Ս. Պողոս-Պետրոս տաճարի պատկերագանդակները և, թեպետ նախընտրել է զերծ մնալ վերջնական եղրահանգումներից, այդուհանդերձ, չնայած լուսապատճենի բացակայությանը, դրանք վերագրել է աստվածային էակների, որոնց ակունքները կարելի է տեսնել անտիկ մշակություն¹:

Այլ է արվեստաբան Լիլիթ Միքայելյանի տեսակետը, որը, հիմք ընդունելով իսլամական ու առաջավորապիտական արվեստում հայոնի համանման հորինվածքները, կարծում է՝ տաճարի արևելյան գույզ խորշերի երեսակալ-ներին տեղ են գտնել վիշապ-օձերով համալցված կանացի դիմաքանդակներ, որոնք կարող են մեկնաբանվել որպես արեգակի և լուսնի խորհրդանիշներ՝ հիմքում ունենալով հին հայկական տիեզերաբանական պատկերացումներում վիշապ-օձի՝ աշխարհները սահմանագատող ու պահպանիչ էակներ լինելու գործառույթները, իսկ հյուսիսային պատուհանի երեսակալին պատկերված տղամարդու դիմաքանդակը նա հակված է համարելու այլաբանական կերպար¹²: Այսինքն՝ նույնիսկ երկնային լուսատուների՝ արեգակի և

¹⁰ Առ. Մնացականյան. Հայկական ճարտարապետության Սյունիքի դպրոցը, էջ 206–208:

¹¹ 3. Акопян. Изображение масок в средневековой скульптуре Армении.– Актуальные проблемы теории и истории искусства, V. Сборник научных статей. СПб., 2015, с. 267.

¹² Լ. Միքայելյան. Վիշապօձի կերպարը Հայաստանի X-XIV դդ. քանդակում. պատկերագրությունը և խորհրդաբանական եզրերը քրիստոնեական

լուսնի գաղափարը կրելու դեպքում անգամ դրանք բնութագրվում են իրենց բնորոշ պահպանիչ էակներ լինելու խորհրդով:

Ասենք նաև՝ Draco բառը լատիներենից թարգմանաբար նշանակում է ինչպես վիշապ, այնպես էլ՝ օձ, որով էլ պայմանավորված՝ այս երկու կերպարները հաճախ զուգագրվում են միմյանց: Թեպես քրիստոնեական արվեստում այն առավելապես ասոցացվում է չարը մարմնավորող սատանայի հետ, այդուհանդերձ, նաև խորհրդանշում է պտղաբերությունը, իմաստությունն ու ուժը¹³: Օրինակ՝ Տաթևի պատկերաբանավակներում արտահայտված վիշապ-օձերին Ա. Յակոբանը բնութագրել է իբրև պահպանիչ ու հովանավորող էակների, որոնք հայկական ճարտարապետական հուշարձանների քանդակային հորինվածքում ի հայտ են եկել շատ ավելի վաղ և տարածում գտել միջնադարի վաղ և զարգացած շրջափուկերում (V-XIII դդ.):¹⁴ Հետագայում այդ խնդրին անդրադարձած Մտ. Մնացականյանը և կարծում է, որ միջնադարյան հայ քանդակագործության մեջ Տաթևի դեռևս IX դարավերջի կտիտորական դիմաքանդակներին կից պատկերված բաց երախներով վիշապ-օձերը կարծես չար ուժերից պահպանում են աստվածային հրամանով կատուցված տաճարի մեկենասներին¹⁵: Նկատենք, որ տաճարի արևելյան խորշերի երեսակալների՝ հանդիպակաց վիշապ-օձերը համակցված են շղթաների վերածված իրենց իսկ լեզուներով, որոնք ել գողավորություն կազմած՝ կրում են քննվող դիմաքանդակները:

Եղիա վարդպետի անվանակիր քանդակագարդ քարը

Նշված պատկերաբանավակների հորինվածքային վերլուծության շուրջ այսքան չէինք ծավալվի, եթե փաստագրած չլինեինք նույն Տաթևի վանքում պահպանված և ներկայումս տեղի նորաբաց թանգարանում ցուցադրված շինության արտաքին խորշի տրոմպի սկզբնամաս կոթողը (նկ. 9): Այն 0,62 x 0,35 x 0,50 մ չափերով, վերնամասում կամարակապ քանդակագարդ քար է, որն արտաքրուստ հարդարված է հովհարածև հենքին պատկերված դիմաքանդակով, իսկ կամարակապ հարթ եղբագոտին արձանագիր է: Այս ուշագրավ ճարտարապետական հարդարատարր-կոթողը վերջին տարիներին ընկած էր վանքի բակում՝ շինաքարերի ու քանդակագարդ այլ բեկորների մեջ և միայն 2019 թ., երբ վանքի հյուսիսային ու արևմտյան պարսպակից տնտեսական և օժանդակ նշանակության որոշ սրահներ նորոգվելուց հետո վերածվեցին թանգարանի, մշտական ցուցադրության համար արևմտյան կողմի սրահում իր արժանի տեղն ունե-

մշակույթի համատեքստում.—Վիշապը հեքիաթի և իրականության սահմանին (խմբ.՝ Ա. Բոբոխյան, Ա. Զիլբերտ, Պ. Հնիլա), Երևան, 2019, էջ 399:

¹³ Դ. Խոլլ. Словарь сюжетов и символов в искусстве, перевод с английского А. Майкапара. М., 1996, с. 224, 246.

¹⁴ Ա. յ կ օ ս օ ն. Նշվ. աշխ., էջ 311: Նկատենք, որ հայկական ուշմիջնադարյան քանդակային արվեստին ևս բնորոշ է վիշապ-օձի պատկերագրությունը. այդպիսիք հայտնի են Էջմիածնի Մայր տաճարի զանգակատան, Քանաքեռի Ա. Հակոբ եկեղեցու (XVII դ.) և մի շարք այլ հուշարձանների արտաքին հարդարատարրերից:

¹⁵ Մտ. Մնացականյան Պահպանիչ խորհրդանշանները միջնադարյան հայ քանդակագործության մեջ.—ՊԲՀ, 1970, № 3, էջ 191:

ցալ¹⁶: Զնայած, որ քարի եղբագոտու մասնակի կոտրվածքի հետևանքով արձանագրության որոշ տառեր ոչնչացվել են, այդուհանդերձ, պահպանված հատվածն ինքնին օգնում է վերականգնելու հիշատակված Եղիա (միգուցե նաև՝ Եղիշե) վարդպետի (ճարտարապետ, քարգործ վարպետ) անունը¹⁷:



Գրչամակ. 5



Նկ. 9

Խորշի տրոմպի սկզբնաքարը
(գրչամակ. և լուս.՝ Հեղինակի, 2020 թ.):

ԶԵՂԻՐԱՅ ՎԱՐԴԻՊԵՏ ՅԻՇԵՑՔ:

Նախ, ասենք, որ արձանագրության տառաձեւերի հնագրական առանձնահատկությունը նկատառելով՝ կոթողը կարելի է թվագրել առնվազն IX–X դդ.՝ դասելով Տաթևի վանքի վիմագրակիր վաղագույն կոթողների շարքը։ Թվագրման համար հիմք ենք ընդունել տաճարի արևմտյան պատի հարավային մասում պահպանված շինարարական գույգ վիմագրերի և համաքրիստոնեական Ս. Պանդալեոնի անվանակիր կոթողի արձանագրության հնագրական հատկանիշները¹⁸։

Բացառիկ երևույթ է վարդպետի անվան արձանագրումը խորշի տրոմպի եղբագոտուն, ինչը որոշակիացնում է նաև դիմաքանդակի պատկանելիության հարցը, որը ոչ այլ ոք է, եթե ոչ՝ միևնույն Եղիա վարդպետը։ Մեզանում սրա ավելի վաղ օրինակները Զվարթնոցի տաճարից հայտնի շինարար վարպետների բարձրաքանդակներն են՝ պահպանված տաճարի առա-

¹⁶ Վանքի նորաբաց թանգարանում ցուցադրվում են բակի խաչքարերից մեկ տասնյակից ավելի ուշագրավ օրինակներ, տնտեսական նշանակության շինություններին պատկանած քանդակագրադ փայտե գուներ, Տաթևում ընդօրինակված ձեռագրերի պատճեններ, պղնձե արձանագրի պնակների նմուշներ ու մշակութային այլ արժեքներ։ Թանգարանի ցուցանմուշների համակարգման գործը մեր խորհրդատվությամբ իրականացրել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի «Բնուքեն Սևակ» թանգարանի տնօրեն Տ. Սևակ քնն. Սարիբեկյանը։

¹⁷ Արձանագրությունը վերծանել ենք 2020 թ. օգոստոսին՝ Տաթևի վանքում և շրջակա հուշարձաններում իրականացրած վիմագրագիտական ուսումնասիրությունների ընթացքում։

¹⁸ Ա. Յարուբյուն և այլն. Ս. Պանդալեոնի (Պանտաղիոն) անուան յիշատակմամբ նորայայտ վիմագրի Տաթևի վանքից.՝ «Հայկագեան հայագիտական հանդէս» (Բէյրութ), 2017, հ. Լէ, էջ 557։

ջին հարկաբաժնի պատուհանների եռանկյունաձև հարթության վրա¹⁹ (նկ. 10): Որոշներն այժմ ցուցադրվում են Զվարթնոցի թանգարանում:

XIX դարի տեղագիր Մանուկ Միրախորյանի նկարագրության համաձայն՝ պարպետաց պատկերաքանդակների բացառիկությամբ աչքի է ընկ-



Նկ. 10. Յոհան Վարպետի
պատկերաքանդակը
(յուս.՝ Գեղինակի, 2017թ.):

զում են համալիրը նորոգողների՝ ուստա Շինուրի^(*) ու ընկերների, ինչպես նաև՝ ուստա Հակոբի (Յակուբ) անունները՝ թվագրված Հայոց ՈԼԸ (1589) և ՈՒՆԳ (1594) թվականներում⁽²⁾:

¹⁹ Բ. Առաքելյան. Հայկական պատկերաքանդակը IV–VII դարերում, Երևան, 1949, էջ 75, նկ. 57, հմմտ. Ս. Բարխոսության մասին հայ ճարտարապետներ և քարոզործ վարպետներ, Երևան, 1963, էջ 27–29, Ստ. Մնացականյան. Զվարթնոցը և նույնատիպ հուշարձանները, Երևան, 1971, էջ 129, նկ. 16:

²⁰ Նկարգրական ուղեւորութիւն ի հայաբնակ գաւառս Արեւելեան Տաճ-կաստանի, մասն Բ, տեղագրեց Մանուէլ Կ. Միքայիսորեան, Կ. Պոլիս, 1885, էջ 76–77:

²¹ Հ. Սուքիաս Եփրիկեան. Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, Հ. 2, Վենետիկ, 1907, էջ 386, Հ. Համազապապ Ուկեան. Վասպուրական-Վանի վանքերը, Հ. Գ. Վիեննա, 1947, էջ 788, Մ. Հարաբեյյան. Աղբակի Մ. Բարդուղիմեոս վանք.- Քրիստոնյա Հայաստան հանրագիտարան, Երևան, 2002, էջ 34:

²² Վիմագրերի՝ թվային լուսանկարների միջոցով արված մեր նախնական վերծանությունը հետևյալն է. շքամուտքի աջակողմյան պատին՝ «Ուսթայ Շին/ուր, ըն/կերօքն / յիշեցէք ի Ք(րիստո)ս, / զնորոգող սր. / եկ(ե)ղ(ե)ց(ու)ս, / թվ(ին) ՌԼԸ (1589)», ձախակողմյան պատին՝ «Ուսթայ / Յակուբ, / յիշեցէք ի Ք(րիստո)ս, / թվ(ին) ՌԽԳ (1594)», «Թվ(ին) ՌԽԴ (1595)»:

Այսքանով հանդերձ, Եղիա վարդպետի անվանակիր դիմաքանդակի գոյությունը Տաթևում չպետք է զարմանք հարուցի, առավել ևս, որ արձանագրության փաստագրումը, կարծես թե, հիմնավորում է նաև Սու. Մնացականյանի՝ ժամանակին առաջ քաշած թեղը, այն է դիմաքանդակ-ները լուսապատճեն չեն կրում, ինչը հուշում է դրանք խորհրդանշում են աշխարհիկ անձանց և, չնայած նրան, որ անվանական մակագրություններ չունեն, այդուհանդերձ, դրանց՝ կտիտորական նշանակությունները հանգամանքը կասկածից վեր է²³:



Գրչանկ. 6



Նկ. 11



Գրչանկ. 7



Նկ. 12

Ա. Բարդուղիմեոս առաքյալի վանքի վարպետաց պատկերաքանդակները
(գրչանկ՝ Հեղինակի, լուս.՝ Համլետ Հովսեփյանի, 2016 թ.):

Ինչ վերաբերում է տվյալ ժամանակաշրջանում գործած Եղիա վարդպետին, ապա հարկ է նշել, որ վիմագրագետ Սեղրակ Բարխուդարյանն իր հայունի աշխատության մեջ այդ անունով որևէ վարդպետ չի հիշատակում, փոխարենը վիմական ու մատենագրական սկզբնադրյուրների հիմամբ բավական համոզիչ բնութագրում է վարդպետ բառի գործածական նշանակությունը զարգացած միջնադարում, որը չաղերավելով վարդապետ բառի հետ՝ տրվում է վարպետ-ճարտարապետներին իրեն կոչում²⁴, որպիսիք հայունի են Գալճաղ վարդպետը՝ Գեղարդպավանքում, Վեցիկը՝ Կեչառիսում, Սիրանեսն ու Մոմիկը՝ Վայոց ձորում, Գաղանը՝ Նոր Վարագավանքում, Շահիկը՝ Եղվարդում և այլք: Այս հանդամանքը թույլ է տալիս ենթադրել, որ հիշատակված Եղիա վարդպետը, ամենայն հավանականությամբ, գլխավոր տաճարի եթե ոչ ճարտարապետը, ապա առնվազն պատկերաքանդակների հեղինակն է, քանի որ նորահայտ դիմաքանդակի պատկերագրությունն իր կատարողական արվեստով համանման է վերոնշյալ մյուս չորս պատկերաքանդակներին՝ օվալաձև դեմք, ընդգծված նշածեաչքեր, ճակատին՝ զարդարուն ժապավեն և այլն:

²³ Առ. Մնացականյան. Հայկական ճարտարապետության Այունիքի դպրոցը, էջ 206–208:

²⁴ Ա. Բարխուդարյան. նշվ. աշխ., էջ 18–25:

Ավելին, ինչպես վերը նշեցինք, տաճարի արևելյան խորշերից մեկում այսօր էլ նկատելի է հողմահարված գլխաքանդակ, ուստի դժվար չէ կուահել, որ նորահայտ կոթողը, ըստ ամենայնի, ագուցված է եղել հարևան խորշի տրոմպի սկզբնամասում, այսինքն՝ պատկանել է միևնույն Ս. Պողոս-Ղետրոս տաճարին²⁵: Այս տեսակետի օգտին է նաև այն, որ ներկայումս թանգարանում ցուցադրված կոթողն ու տաճարի արևելյան անգլիսաքանդակ խորշի տրոմպի սկզբնաքարը չափերով գրեթե նույնն են, ինչը թույլ է տալիս հավաստել՝ խնդրո առարկա կոթողը սկզբնապես տեղադրված է եղել հենց արևելյան պատի հյուսիսային խորշում (նկ. 13, 14): Իշարկե, չենք բացառում նաև այն վարկածը, որ տաճարի արևելյան պատր, բացի մեծադիր գույգ խորշերից, նախապես հարդարված է եղել ճակտոնային մասում արված ավելի փոքր ու բարձրադիր ևս մեկ խորշով, որտեղ էլ կարող էր ագուցված լինել Եղիա վարդպետի անվանակիր կոթողը: Արտաքուստ եռախորշ հորինվածքի լավագույն օրինակը VII դ. թվագրվող Գառնահովիստի Ս. Գևորգ տաճարն է²⁶:

Մատենագրությունից հայտնի է, որ Տաթևի վանքը բազմաթիվ երկրաշարժերի «ականատես» է եղել և երբեմն լուրջ վնասներ կրել: Դրանցից առավել ուժգինը Գանձակի 1138 թ. երկրաշարժն էր, որը, ըստ Ստ. Օրբելյանի, Հիմնահատակ է արել վանքը: «Եղել շարժն Գանձակայ ի 587 (1138) թուականին, և դողաց երկիր ի հիմաց, և զմբէթն մեծ եկեղեցւոյն ի Տաթև բոլորապոյր շրջեկաւն թռեաւ և անկաւ ի վերայ սուրբ Գրիգորոյն եւ գաւթին, որ ի դրանն կայր. և փլոյց առ հասարակ»²⁷: Հուշարձանախմբի կառույցները վերականգնվել են միայն XIII դ. վերջին տասնամյակներին: Այդ և հետագա ժամանակաշրջանում, ինչպես նկատել է նաև Վիմագրագետ Սուրեն Սաղումյանը, բազմաթիվ արձանագիր բեկորներ ու խաչքարեր օգտագործվել են տարբեր շինությունների շարպածքում կամ՝ որմերի լիցքի մեջ: Սրա ապացույցը 1931 թ. հերթական ուժին երկրաշարժից տասնամյակներ անց՝ 1970–1980-ական թվականներին Տաթևի վանքում իրականացված շինարարական աշխատանքներն են, երբ տեղի է Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու վերակառուցման ժամանակ, որմերի լիցքի թանձր

²⁵ Արտաքին զույգ խորշերով է հարդարված նաև վանքի Ս. Աստվածածին եկեղեցին (բացառությամբ արևմտյան պատի)՝ կառուցված 1087 թ. Սյունյաց Գրիգոր Եպիսկոպոսի նախաձեռնությամբ։ Տեղում խորշերի ուսումնասիրությունն ու չափագրումը թույլ է տալիս արձանագրել, որ խնդրո առարկա կողմողն այս եկեղեցուն պատկանել էք կարող։

²⁶ У. Մանուչարյան. Գաղնահռվիտ. Սբ. Գևորգ եկեղեցի, Երևան, 2020, էջ 8:

²⁷ Ստ. Օրբէլեան, էջ 340: Երկրաշարժերի տարեգրությունից պարզվում է, որ Տաթևում երկրաշարժեր են գրանցվել նաև 1308, 1406, 1668, 1931 թթ., սակայն սրանցից կործանարարը Գանձակի 1138 թ. երկրաշարժն էր [տե՛ս Լ. Բարսեղյան. Պատմագրական վկայությունները Հայկական լեռնաշխարհի երկրաշարժերի մասին (Հնագույն ժամանակներից մինչև XIX դարի սկիզբը), Երևան, 1995, էջ 55–56]: Այդ երկրաշարժի մասին տեղեկություններ է հաղորդում նաև պատմագիր Կիրակոս Գանձակեցին, որը երկրաշարժի տարեթիվ է նշում «Հայոց ՇՁԸ», այսինքն՝ 1139 թ. (տե՛ս Կիրակոս Գանձակեցի. Պատմութիւն Հայոց, աշխատ.՝ կ. Մելիք-Օհաննայանի, Երևան, 1961, էջ 117):

շերտից հանվել են 6 խաչքար (այդ թվում՝ արձանագիր) և այլ քանդակագործություններ՝²⁸։ Մեր կարծիքով, Եղիա վարդպետի անվանակիր քարը տեղահանվել է գեռևս 1138 թ. երկրաշարժի հետևանքով և օգտագործվել այլ շինությունների շարքածքում կամ նույնիսկ՝ լիցքի մեջ։ Ենթադրելի է, որ XIII դարավերջին՝ վանքում իրականացված շինարարական-բարեկարգման աշխատանքների ժամանակ, տաճարի արևելյան պատը մասնակի վերակառուցվել է, իսկ հյուսիսային խորշի տրոմաֆի սկզբնաքարը փոխարինվել է նորով՝ առանց գլխաքանդակի, հենքում հովհանքարը փոխարաձև քարով։



Նկ. 13

Նկ. 14

Եղիա վարդպետի անվանակիր քարի հավանական տեղը՝
Ս. Պողոս-Պետրոս տաճարի արևելյան պատի հյուսիսային խորշում
(լուս. Հեղինակի, 2020 թ.):

Արդ, իսկ ո՞ւմ կարող էր խորհրդանշել նույն արևելյան պատի հարավային խորշի տրոմաֆի սկզբնամասում պահպանված հողմահար գլխաքանդակը։ Կարծում ենք, որ եթե հետևելու լինենք Ստ. Մատաղականյանի՝ միանգամայն տրամաբանական թվացող վերլուծությանը, թե, իբր, պահպանված դիմաքանդակները խորհրդանշում են Ստ. Օրբելյանի հիշատակած չորս կտիտորներին՝ Աշոտ գահերեց իշխանին, Շուշան իշխանուհուն, Գրիգոր Սուփան և Զագիկ իշխաններին, իսկ խորշերի տրոմաֆին մեկին եղել է վարդպետ Եղիայի դիմաքանդակը՝ կից ստորագրությամբ, ապա մյուս խորշում էլ պետք է որ տաճարի կառուցման բուն նախաձեռնողի՝ Հովհաննես եպիսկոպոսի գլխաքանդակը՝ լիներ նման Սիսականի տաճարի հարավային պատի աջակողմյան խորչի տրոմաֆի լուսապսակակիր հոգեղորականի գլխաքանդակին (նկ. 6): Հովհաննես եպիսկոպոսի անվանակիր գեղաքանդակ խաչքարն ադուցված է Ս. Պողոս-Պետրոս տաճարի արևմտյան մուտքի վերնամասում՝ հետևյալ բովանդակությամբ. «Զտէր Յովանէս շինող սրբ Եկեղեցեացս, Տէր իմ յիշեա»²⁹: Վիմագրում եկեղեցի բառի հոգնակի թվով հիշատակումը կարելի է պայմանավորել տաճարի՝ մեկից ավելի խորաններ

²⁸ Ս. Սաղումյան. Նորահայտ վիմագրեր. – ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 2001, № 1, էջ 94, 96:

²⁹ Դիվան հայ վիմագրության, պր. II, Գորիսի, Սիսիանի և Ղափանի շրջաններ, կազմ.՝ Ս. Բարխուդարյան, Երևան, 1960, էջ 14, արձ. 3:

ունենալու հանգամանքով, որոնցում պատարագի մատուցման առանձին սեղաններ կային, որոնք հաճախ եկեղեցի էին կոչվում³⁰:

Ուսումնասիրողների այն տարակուսանքը, թե տաճարի արևմտյան պատին ևս պետք է որ դիմաքանդակներ եղած լինեին, որոնք ներկայումս քողարկվել են *XX* դարասկզբին կառուցված զանգակատան ետնամասում³¹, հնարավոր դարձավ որոշակիորեն հստակեցնել: Հարցն այն է, որ տաճարի արևմտյան մուտքի վերնամասի կամարակապ զույգ պատուհանների միջանկյալ հատվածում հստակ տեսանելի է բուսական հորինվածքներով հարդարված բավական լայն գոտին, իսկ ձախակողմյան պատուհանի երեսակալի հին քարերից մեկին նկատելի է փոքր-ինչ վնասված, բայց միաժամանակ պարզունակ մի դիմաքանդակ, որն օղակել է թվայցյալ վիշապ-օձը: Ենթադրելի է, որ նույնպիսին եղել է նաև աջակողմյան պատուհանի երեսակալին, որը ներկայումս փոխարինված է պարզունակ երեսակալով: Թե ի՞նչ խորհուրդ կարող էին կրել արևմտյան պատի դիմաքանդակները (համենայն դեպք դրանցից մեկը), առայժմ դժվար է ասել, քանի որ լիովին տեսանելի չեն: Հստակ է այն, որ դրանք ևս դիմաքանդակային արվեստին տիրապետող վարպետի ձեռակերտը պիտի լինեն, որոնք դարձյալ համադրվել են վիշապ-օձի արդեն իսկ Տաթևի դպրոցին բնորոշ պատկերագրությամբ:

Եզրակացություն

Ամփոփելով՝ արձանագրենք. Տաթևի վանքի թանգարանում ներկայումս ցուցադրված շինության արտաքին խորշը պսակող տրոմպի քանդակարդ սկզբնաքարը, ըստ ամենայնի, աղուցված է եղել վանքի գլխավոր Ս. Պողոս-Պետրոս տաճարի արևմելյան որմի հյուսիսային խորշում: Կոթողի նորահայտ արձանագրությունը պարզում է տաճարի ճարտարապետի կամ, որ ավելի տրամաբանական է, պատկերաքանդակների հավանական հեղինակի Եղիշա վարդպետի անունը, որի դիմաքանդակն էլ պահպանված է կոթողի կենտրոնում: Փաստելի է, որ այն իր գործառութային ու քանդակային արվեստի բացառիկությամբ *IX-X* դդ. հայկական քարարվեստի ինքնատիպ նմուշներից է, որի արձանագրությունը վավերացնում և համարում է հիշյալ ժամանակաշրջանի սակագի հայտնի *Մյունյաց ճարտարապետների* ու քարգործ վարպետների շարքը ևս մեկով:

Արսեն Հարությունյան – պ. գ. թ., ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի վիմագրության և Մ. Մաշտոցի ամսվ. Մատենադարանի ձեռագրագիտության բաժինների ավագ գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ հայկական վիմագրություն, միջնադարյան հնագիտություն, ձեռագրագիտություն և գրչության կենտրոնների ուսումնաականություն: Հեղինակ է 7 մենագրության (3-ի՝ համահեղինակ) և ավելի քան 70 հոդվածի: ars.vimragaget@gmail.com

³⁰ Այս մասին մանրամասն տե՛ս Ա. Հարությունյան, Հ. Հակոբյան. «Եկեղեցի» և «խորան» բառեզրերի նույնականության դրսեղորումը վիմագրերում. – «Տարեգիրք» (գիտական հոդվածների ժողովածու), Հ. ԺԱ, Երևան, 2016, էջ 87–96:

³¹ Ստ. Մացականյան. Հայկական աշխարհիկ պատկերաքանդակը *IX–XIV* դարերում, էջ 15, հմմտ. 3. Ակոպյան. Նշվ. աշխ., էջ 265:

REFERENCES

- Akopyan Z. Izobrazhenie masok v srednevekovoy skul'pture Armenii. – Aktual'nye problemy teorii i istorii iskusstva, V. Sbornik nauchnykh statey. SPb., 2015 (In Russian).
- Arakelyan B. Haykakan patkerakandake IV–VII darerum, Yerevan, 1949 (In Armenian).
- Barkhudaryan S. Mijnadaryan hay jartarapetner ev kargorts varpetner, Yerevan, 1963 (In Armenian).
- Barseghyan L. Patmagrakan vkayutyunnere Haykakan lernashkharhi erkrasharzheri masin (hnaguyn zhamanaknerits minchev XIX dari skizbe), Yerevan, 1995 (In Armenian).
- Divan hay vimagrutyan, pr. II, Gorisi, Sisiani ev Ghapani shrjanner, kazm.՝ S. Barkhudaryan, Yerevan, 1960 (In Armenian).
- Eprikean H. Sukias. Patkerazard bnashkharhik bararan, h. 2, Venetik, 1907 (In Armenian).
- Hasratyan M. Aghbaki S. Bardughimeos vank. – Kristonya Hayastan hanragitaran, Yerevan, 2002 (In Armenian).
- Harutyunyan A. S. Pandaleoni (Pantaghion) anuan yishatakmamb norayayt vimagir Tatevi vankits. – “Haykazyan hayagitakan handes” (Beyrut), 2017, h. LE (In Armenian).
- Harutyunyan A., Hakobyan H. “Ekeghetsi” ev “khoran” barezreri nuynakanutyun drsevorume vimagrерум. – “Taregirk” (gitakan hodvatsneri zhoghovatsu), h. ZhA, Yerevan, 2016 (In Armenian).
- Kirakos Gandzaketsi. Patmutivn Hayots, ashkhat.՝ K. Melik-Ohanjanyani, Yerevan, 1961 (In Armenian).
- Kholl Dzh. Slovar' syuzhetov i simvolov v iskusstve, perevod s angliyskogo A. Maykapara. M., 1996 (In Russian).
- Manucharyan A. Garnahovit. Sb. Gevorg, Yerevan, 2020 (In Armenian).
- Mikayelyan L. Vishap-odzi kerpare Hayastani X–XIV dd. kandakum. patkeragrutyune ev khorhrdabanakan ezcere kristoneakan mshakuyti hamatekstum. – Vishape hekiati ev irakanutyan sahmanin (khmb.՝ A. Bobokhyan, A. Jilbert, P. Hnila), Yerevan, 2019 (In Armenian).
- Mnatsakanyan St. Haykakan jartarapetyan Syunik dprotse, Yerevan, 1960 (In Armenian).
- Mnatsakanyan St. Pahpanich khorhrdanshannere mijnadaryan hay kandakagortsutyan mej. – PBH, 1970, № 3 (In Armenian).
- Mnatsakanyan St. Zvartnotse ev nuynatip hushardzannere, Yerevan, 1971 (In Armenian).
- Mnatsakanyan St. Haykakan ashkharhik patkerakandake IX–XIV darerum, Yerevan, 1976 (In Armenian).

- Mnatsakanyan St. Aghtamar, Yerevan, 1985 (In Armenian).
- Nkaragrakan ughevorutivn i hayabnak gavars Arevelean Tajkastani, masn B, teghagrats Manuel K. Mirakhorean, K. Polis, 1885 (In Armenian).
- Stepanos Orbelean. Patmutivn nahangin Sisakan, Tiflis, 1910 (In Armenian).
- Saghumyan S. Norahayt vimagrer. – HH GAA “Lraber hasarakakan gitutyunneri”, 2001, № 1 (In Armenian).
- Voskean H. Hamazasp. Vaspurakan–Vani vankere, h. G, Vienna, 1947 (In Armenian).
- Yakobson A. Iz istorii Armyanskoy srednevekovoy arkhitektury. III. Tatevskiy monastyr' – “Sovetskaya arkheologiya”, t. IX. M.–L., 1947 (In Russian).

СКУЛЬПТУРНЫЕ ИЗОБРАЖЕНИЯ ХРАМА СВ. ПАВЛА И ПЕТРА В ТАТЕВСКОМ МОНАСТЫРЕ И ИХ ПРЕДПОЛАГАЕМЫЙ МАСТЕР

АՐԵՍԻ ԱՐՈՒԹՅՈՆՅԱՆ

Р е з ю м е

Ключевые слова: Татевский монастырь, храм Св. Павла и Петра, скульптурное изображение, Ст. Орбелян, Ст. Мнацаканян, портретная скульптура, дракон-змей, ниша, бровка, князь, вардпет (мастер камня) Егия.

Татевский монастырь – один из известных духовно-культурных центров средневековой Армении. Его главный храм – храм Св. Павла и Петра (895–906) – был построен на месте раннесредневековой полуразрушенной церкви.

Восточные парные ниши храма Св. Павла и Петра Татевского монастыря, а также по одной из бровок северных и южных окон украшены портретными скульптурами ктиторов и рельефными изображениями драконов-змей, символизирующих их защиту (исключение – бровка южного окна). В новооткрытом музее при монастыре выставляется еще один памятник со схожим изображением, на рельефной арке которого сохранилось имя мастера (или архитектора) Егия. На основании палеографических признаков его можно датировать, по меньшей мере, IX–X веками.

Размеры этого памятника, а также скульптурно-композиционные решения свидетельствуют о том, что он является ровесником вышеназванных рельефных изображений Татева и, судя по всему, изначально был вставлен в основании конусообразного тромпа северной ниши восточной стены храма точно так же, как сохранившийся выветренный портретный рельеф на схожем участке соседней ниши. Согласно ново найденной памятной надписи, в Татеве работал один из известных мастеров того времени, бывший если не архитектором, то, по крайней мере, автором скульптурных изображений.

*Арсен Арутюнян – к. и. н., старший научный сотрудник отдела эпиграфики Института археологии и этнографии НАН РА и отдела кодикологии Матенадарана им. М. Маштоца. Научные интересы: армянская эпиграфика, средневековая археология, кодикология и изучение центров книгописания. Автор 7 монографий (3 – в соавторстве) и более чем 70 статей.
ars.vimragaget@gmail.com*

THE RELIEFS AND THEIR PROBABLE MASTER OF ST. PAUL-PETER TEMPLE OF TATEV MONASTERY

ARSEN HARUTYUNYAN

S u m m a r y

Key words: Tatev monastery, St. Paul-Peter temple, reliefs St. Orbelyan, St. Mnatsakanyan, sculptural portrait, dragon-snake, niche, cornice, prince, vardpet (stonemason), Yeghia.

Tatev monastery is one of the famous spiritual-cultural centers of medieval Armenia, the main St. Paul-Peter (895–906) temple of which was built on the site of an early medieval dilapidated church.

The cornices of the eastern twin niches of the temple, as well as one for each of the northern and southern windows of St. Paul-Peter temple of Tatev monastery, are decorated with ktitor sculptural portraits and with the reliefs of dragon-snakes (except for the southern cornice) symbolizing their protection. In the newly opened museum of the monastery, another monument with a similar sculptural portrait is exhibited, on the relief belt of which the name of stonemason Yeghia (or architect) is preserved. According to the paleography of the letter style, it dates back to at least the 9th–10th cc.

The size of the monument, as well as the sculptural-compositional solutions, prove that it is synchronous to the reliefs of Tatev, and apparently, it was originally placed in the front part of the conical squinch of the northern niche of the eastern wall of the temple, just like the wind-blown head sculpture preserved in the same part of the adjacent niche. According to the newly discovered inscription, one of the famous masters of the time acted in Tatev, who, if not the architect, is the author of the reliefs of the temple.

Arsen Harutyunyan – Candidate of Sciences in History, Senior Researcher at the Department of Epigraphy of the NAS RA Institute of Archaeology and Ethnography, the Department of Codicology of Mashtots Matenadaran. Scientific interests: Armenian epigraphy, medieval archaeology, codicology and writing centers. Author of 7 monographs (3 with co-authorship) and over 70 articles. ars.vimragaget@gmail.com

ԳՐԱԲԱՐԻ ԲԱՌԱՐԱՆՆԵՐՈՒՄ ԶԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐ ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՑՈՒ «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ» ԵՐԿՈՒՄ*

ՔՆԱՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՑԱՆ

Բանալի բառեր՝ գրաբարյան դարձվածքներ, դարձվածաբանական բառարան, բառապաշտը, բառարաններում չարձանագրված դարձվածքներ, կառուցվածքյին վերլուծություն, ձևաբանական դասակարգում, Ղազար Փարպեցի, «Պատմութիւն Հայոց»:

Նախաբան

Հայերենի դարձվածքների գիտական քննությունը շուրջ մեկ դարի պատմություն ունի: Դարձվածքների վերաբերյալ առաջին տեսական հարցերը տեղ են գտել Արևելյան Այտույանի, Մանուկ Աբեղյանի աշխատություններում¹, թեև տեսությունը և առանձին գիտակարգը ձևավորվել են ավելի ուշ՝ XX դ. կեսերին²: Պետք է նկատել, սակայն, որ լեզվի զարդացման տարրերը փուլերի դարձվածքները միաստեսակ ուշադրության և քննության չեն արժանացել: Լավագույնս ուսումնասիրված է արևելահայերենի դարձվածաբանությունը. դարձվածքները քննված են թե իբրև լեզվական համակարգի ինքնուրույն միավորներ, թե՝ օտար լեզուների դարձվածքների հետ զանազան համեմատություններով, և այս հետազոտությունները շարունակվում են: Իսկ գրաբարի և միջին հայերենի դարձվածքների վերաբերյալ նման բազմատեսակ և համակողմանի ուսումնասիրություններ չեն կատարվել, կարելի է ասել, մինչև XXI դարասկիզբ³: Ավելին, անգամ գրաբարի առանձին դարձվածաբանական բառարանը տպագրվել է 2012 թ., այնինչ արդի հայերենի դարձվածքների ստվարածավալ բառարաններ տպագրվել են 1975 թ.⁴ և 2011 թ.⁵ չհաշված բազմաթիվ ուսումնական դարձվածաբանական բառարանները:

* Ներկայացվել է 16. IX. 2020 թ.: ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի հայոց լեզվի պատմության ամբիոնի ասպիրանտ: Հոդվածը տպագրության է երաշխավորել գիտական ղեկավար, բ. գ. դ. Աննա Աբաջյանը (08. IX. 2020 թ.): Ընդունվել է տպագրության 29. I. 2021 թ.:

¹ Տե՛ս Ա. Այտընեան. Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի, Վիէննա, 1866, էջ 317–320, Մ. Աբեղյան. Երկեր, հ. Զ, Երևան, 1974, էջ 124–126:

² Տե՛ս Խ. Բագիկյան. Ժամանակակից հայերենի դարձվածային միավորները, Երևան, 1986, էջ 5:

³ Ի. Ղազարեան. Գրաբարի դարձուածաբանական բառարան (այսուհետ՝ ԳԴԲ), Երևան, 2012: Էջերը կնշվեն մեջբերումներին կից:

⁴ Ա. Սուքիկյան, Մ. Գալստյան. Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան (այսուհետ՝ ՀՀԴԲ), Երևան, 1975: Էջերը կնշվեն մեջբերումներին կից:

⁵ Պ. Բեդիրյան. Հայերեն դարձվածքների ընդարձակ բառարան (այսուհետ՝ ՀԴԲ), Երևան, 2011: Էջերը կնշվեն մեջբերումներին կից:

Սա, անշուշտ, չի նշանակում, որ գրաբարի և միջին հայերենի դարձվածքներն ամբողջովին մոռացվել կամ անտեսվել են. մինչև XXI դարասկիզբ գրաբարի դարձվածքների վերաբերյալ ուսումնասիրություններ ևս արվել են, իսկ արդի հայերենի դարձվածքանությանը նվիրված գրականության մեջ հաճախ բավական կարևոր անդրադարձներ և դիտարկումներ կան դրանց վերաբերյալ⁶: Սակայն այն համակարգային ու ամբողջական քննությունը, որը տեսնում էնք արևելահայերենի դարձվածքների համար, գրաբարի ու միջին հայերենի դարձվածքների պարագայում բացակայում է:

XXI դարասկզբից գրաբարի դարձվածքների քննության այս պատկերը փոխվում է. կատարվում են արդեն միայն գրաբարի դարձվածքներին, ընդհանրապես, կամ գրաբարյան այս կամ այն երկի դարձվածքներին, մասնավորապես, վերաբերող ուսումնասիրություններ, որոնցում ներկայացվում և քննվում են ինչպես գրաբարյան բառարաններում արձանագրված, այնպես էլ դեռևս չգրանցված դարձվածքներ: Բառարանային արձանագրում չունեցող դարձվածքներ կան նաև V դարի հայ մատենագրության մեջ՝ այդ թվում և Ղազար Փարպեցու «Պատմութիւն Հայոց» երկում: Դրանց արձանագրումը, արտահայտած իմաստի հշտումը, կառուցվածքային վերլուծությունը կարևոր է տեսականորեն պատմական բառագիտության, իսկ գործնականում՝ բառարանագրության համար:

Զարձանագրված դարձվածքները, դրանց կառուցվածքային քննությունը

Հետևելով հայ լեզվաբանության մեջ ընդունված ըմբռնմանը, ըստ որի դարձվածքը պատկերավոր հասկացություն արտահայտող, վերահիմաստավորված, վերաբարդրելի կայուն բառակապակցությունն է՝⁷ Ղազար Փարպեցու «Պատմութիւն Հայոց» երկի⁸ բառապաշարից կարելի է առանձնացնել նշված հատկանիշներին համապատասխան, սակայն բառարաններում⁹ չներկայացված 29 կապակցություն: Ընդ որում, եթե դարձվածքը

⁶ Տե՛ս Ա. Մարգարյան. Հայերենի հարադիր բայերը, Երևան, 1966, Պ. Բեդիրյան. Ժամանակակից հայերենի դարձվածքանություն, Երևան, 1973, Վ. Առաքելյան. Ակնարկներ հայոց գրական լեզվի պատմության, Երևան, 1981 և այլն:

⁷ Տե՛ս Խ. Բագիկյան. նշվ. աշխ., էջ 89: Հմմտ. Պ. Բեդիրյան. Ժամանակակից հայերենի դարձվածքանություն, Երևան, 1973, էջ 5, Գ. Զահուկյան, Էդ. Աղայան, Վ. Առաքելյան, Վ. Քոսյան. Հայոց լեզու, Երևան, 1980, էջ 47, Ա. Սուքիասյան. Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 2004, էջ 296:

⁸ Ղազար Փարպեցի. Պատմութիւն Հայոց (այսուհետ՝ ՂՓ). – Մատենագիրք հայոց, հ. Բ, Ե դար, Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 2201–2395: Էջերը կնշվեն մեջբերումներին կից:

⁹ Բառակապացությունները ստուգվել են գրաբարի հետևյալ բառարաններով՝ Գ. Աւետիքեան, Խ. Սիւրմէլեան, Մ. Աւգերեան. Նոր բառգիրք հայկագեան լեզուի (այսուհետ՝ ՆՀԲ), հ. Ա, Վենետիկ, 1836, հ. Բ, Վենետիկ, 1837, Մ. Աւգերեան, Գ. Ճէլալեան. Առձեռն բառարան հայկագեան լեզուի, Վենետիկ, 1865, Ո. Ղազարեան. Գրաբարի բառարան, հ. Ա–Բ, Երեւան, 2000, Ո. Ղազարեան, Հ. Աւետիսեան. Նորայտ բառեր գրաբարում, Երեւան, 2007, Լ. Հովհաննիսյան. Գրաբարի

բնորոշող այս հատկանիշներից պատկերավորությունը և վերաիմաստավորումն ինքնին հասկանալի են համատեքստից, ապա «վերարտադրելի» և «կայուն» լինելու հատկանիշները գրաբարի դարձվածքների դեպքում հնարավոր է որոշել միայն մատենագրության մեջ գործածության այլ օրինակներ մատնանշելով, քանի որ գրանք, իրեւ կայուն կապակցություններ, այլևս գոյություն չունեն մեր լեզվամտածողության մեջ: Պետք է նկատել, սակայն, որ գործածության այլ օրինակ գտնելը ներկայումս բավական բարդ ու ոչ լիարժեք գործընթաց՝ հաշվի առնելով գրաբարով ամբողջ մատենագրության ծավալները, միևնույն բառի ոչ բոլոր օրինակների ներկայացվածությունը բառարաններում և ոչ բոլոր երկերի համաբարեպաների գոյությունը:

Ուստի քննվող դարձվածքները բերվում են երկու խմբով՝ Ա. դարձվածքներ, որոնց համար հաջողվել է գտնել այլ երկում կիրառության օրինակ, և Բ., որոնց այլ կիրառություն չի հաջողվել գտնել։ Երկրորդ դեպքում դարձվածքը լինելու լրացուցիչ ապացույց է համարվում արդի հայերենում նույն կամ նմանատիպ կառույցի դարձվածք համարվելը և դարձվածքների մասին հայության առաջնային գործությունը։

11

1. ԱՆԿԱՆԵԼ ՅՈՒՏՈ – ոտքերն ընկնել, աղաչել. «... այլ պարտ էր փութով եւ երագ երագ անկանելի յոտադ արտասուաւք եւ աղաչելով ...» (ՂՓ, էջ 2389, 2289); Գործածված է նաև Եղիշեի «Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին» երկում՝ «Անկանէր ապաշխարութեամբ յոտս սուրբ եպիսկոպոսացն, եւ աղաչէր խաղապատելով՝ զի մի՛ մերժեալ ընկեացի առ ի նոցանէ» (Եղ, էջ 595); Արդի Հայերնում կա նույնիմաստ «ոտքերը ընկնել» ռապոձմածք (Հ1 ԴԲ, էջ 479):

2. ԶԱՆՈՒՆ ԳՐԵԼ (գրեալ պահել) ի ԴՊՐՈՒԹԵԱՆ ԿԵՆԱՅ – Հավերժ Հիշատակի արժանացնել. «... զորոց իւրաքանչիւր անուն վարձահատոյցն Քրիստոս գրեալ պահէ ի դպրութեան կենաց» (ՂՓ, Էջ 2269): Կա նաև Եղիշեի երկում՝ «... որք զանուանս իւրաքանչիւր ի դպրութիւն կենաց գրեգին ի նմին աւուր ի մեծ պատերազմին» (Եղ, Էջ 660):

3. ԴԱՐՁՈՒՅԱՆԵԼ ԶԵՐԵՍՍ – ՀԵՇԱՆԱԼ, ՄՈՌԱՋՈՎՄԺՅԱՆ ՄԱՏՆԵԼ, ՀԵՂ-
ՎԵԼ. «... դարձուցեալ զերեսս իւրեանց ի ճանապարհէն արդարութեան...»
(ՂՓ, էջ 2263, 2345): Կիրառված է Սեբեոսի «Պատմութիւն» երկում¹¹: «Իսկ
իբրեւ դարձոյց Բարձրեալն զերեսս իւր ի մէնջ եւ նայեցաւ ի մեզ խեթիւ
արեգակնն ...» (Սեբ, էջ 515): Արդի հայերենում կա «երես դարձնել
(մեսիս, մի ռանիս)» ռարձմածը (ՀՂ ԴԲ, էջ 207):

բառարան. Նոր հայկագյան բառարանում չվկայված բառեր, Երևան, 2010, Ո.
Ղազարեան. Գրաբարի դարձուածաբանական բառարան, Լ. Խաչատրեան.
Գրաբարի ուսումնական բառարան, Վենետիկ, 2016:

¹⁰ Եղիշէ. Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին (այսուհետ՝ Եղ). – Մատենագիրք Հայոց, հ. Ա, Ե դար, Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 521–764: Էջերը կնքեն մեջբերումներին կիզ:

¹¹ Սեբէստիան Պատմութիւն (այսուհետ՝ Սեբ).—Մատենագիրք Հայոց, հ. Դ, է դար, Անթիլիաս-Լիբանան, 2005, էջ 453–565: Եջերը կնշեն մեջբեռումներին կից:

4. ԵԼԱՆԵԼ Ի ԲԵՐԱՆՈՅ – ասել. «... զարմացեալ ... ընդ շնորհ աջողութեանն բանիցն, որ ելանէին ի բերանոյ նորա» (ՂՓ, Էջ 2367): Ունի նաև Եղիշեն՝ «Զիք այդր բան աւելի կամ պակաս, որ ոչ ի բերանոյ նորա ելեալ է» (Եղ, Էջ 753): Արդի հայերենում կա «բերանից դուրս գալ» (ասել, խոսել) դարձվածք (ՀՀ ԴԲ, Էջ 124):

5. ԶԱՆՁՆ ՏԱԼ – իրեն նվիրել, տալ մի բանի. «Այլ եւ որ սերտ սիրով եւս զանձն իւր այրն եւ ընտրեաց զլաւն» (ՂՓ, Էջ 2241): Կիրառված է Աստվածաշնչում «... այլ պաշտել եւ տալ զանձն իւր փրկանս փոխանակ բազմաց»¹²: Այս դարձվածքը կարող է կիրառվել նաև «զանձն տալ ի + հայցականով դրված անուն խոսքի մաս» ձևով, ինչպես՝ «տալ զանձինս ի նահատակութիւնս» (ՂՓ, Էջ 2201), «տալ զանձն ի գործ» (ՂՓ, Էջ 2215), «տալ զանձն յայսպիսի վաստակս» (ՂՓ, Էջ 2206), «տալ զանձն ի մահ» (ՂՓ, Էջ 2277) և այլն:

6. ԶԱՐԵՒ ՏԵՍԱՆԵԼ – ապրել. «... եւ նոքա կեան եւ զարեւ տեսանեն ...» (ՂՓ, Էջ 2283): Օգտագործել է Եղիշեն՝ «Զի՞ պիտոյ է մեզ բնաւ կեանք անցաւոր աշխարհիս, եւ կամ ընդէ՞ր տեսանեմք զարեւ յետ մերոց սիրելեաց» (Եղ, Էջ 664): Արդի հայերենում ևս կա «արև տեսնել» (կյանք տեսնել) դարձվածք (ՀՀ ԴԲ, Էջ 87):

7. ԶԲԱՆՆ ԱՌՆԵԼ – մեկի խոսքը, ցանկացածը անել. «Բայց եթէ զիս հարցնէք, եւ զբանն իմ առնէք ...» (ՂՓ, Էջ 2314): Եզնիկ Կողբացին ունի՝ «... եւ հուր եւ հողմք եւ մրրիկք որ առնեն զբան նորա»¹³: Արդի հայերենում կա «խոսքը անել» (իր կամ մեկի խոսքը, ցանկացածը կատարել) դարձվածք (ՀՀ ԴԲ, Էջ 290):

8. Ի ՄԻԾՍ ԱՍԵԼ – ինքն իրեն մտածել. «... զոր յիմ միտս այսպէս ասէի, թէ լոկ Գրիչոն միայն ...» (ՂՓ, Էջ 2352): Փ. Բուղանդը «Պատմութիւն Հայոց» երկում ունի «ասել ընդ միտս»՝ «... մարդպետն Դղակ, մեծապէս խնդացեալ ասէր ընդ միտս իւր ...»¹⁴: Արդի հայերենում կա «մտքում ասել» (ինքն իրեն ասել, խորհել) (ՀՀ ԴԲ, Էջ 445):

9. ԼՍԵԼ (հիմ) ԱԿԱՆՁԱՒՔ – անձամբ լսել, իմանալ. «... կամիմք, զի ինքն տեսէց իւրովք աչաւք, եւ ինքն լուիցէ իւրովք ականջաւք» (ՂՓ, Էջ 2355): Եղիշեն ևս գործածել է՝ «... եւ ականջաւք իւրեանց լուան զչարչարանս վշտից սիրելեաց իւրեանց» (Եղ, Էջ 761): Արդի հայերենում կա «ականջով լսել» նույնիմաստ դարձվածք (ՀՀ ԴԲ, Էջ 11): Ղ. Փարպեցին երկում կիրառել է նաև «այլոյ ականջաւք լսել» կապակցությունը («... եւ կամի տեսանել այլոյ աչաւք եւ լսել այլոյ ականջաւք՝ ծանր է ծառայութիւնն այն») (ՂՓ, Էջ 2331) «ուրիշի միջոցով լսել, տեղեկանալ» իմաստով: Քանի որ գործածության այլ օրինակ չի հաջողվել գտնել, չի կարելի պնդել, որ այն դարձվածք է գուցե Ղ. Փարպեցին ուղղակի համարանությամբ կիրառել է:

¹² Աստուածաշունչ մատեան Հին եւ Նոր կտակարանաց, Վենէտիկ, 1805, Էջ 677:

¹³ Եզնիկ Կողբացի. Եղծ աղանդոց. – Մատենագիրք հայոց, հ. Ա, Եղար, Էջ 484:

¹⁴ Փաւստոս Բուղանդ. Պատմութիւն Հայոց. – Մատենագիրք հայոց, հ. Ա, Եղար, Էջ 386:

10. ԽԱԽՍԵԼ ԻԻՐՈՎ ԲԵՐԱՆՈՎ – անձամբ ասել. «... եւ ինքն խաւսցի իւրով բերանով ...» (ՂՓ, էջ 2355): Ղեռնդ երեց վարդապետն իր երկում¹⁵ կիրառել է նույնիմաստ «պատմել իւր բերանով»՝ «... յաղթութիւնն իսմայելի զօրացաւ. եւ կործանեցաք զքաղաքս։ Զայս բերանով իւրով, ասի, պատմել զինքենէ» (Ղ, էջ 758): Արդի հայերենում կա «իր բերանով խոսել» դարձվածք (ՀՀ ԴԲ, էջ 255):

11. ԽՆՈՒԼ ԲԵՐԱՆ – մեկին լոեցնել, թույլ չտալ խոսել. «... սակայն եւ այնպէս խնուկ զբերանս չարախսաւացն ոչ կարէր» (ՂՓ, էջ 2312), «... եւ զմշնամեացն բերանս ի բանսարկութենէ խնուկ ոչ կարէի» (ՂՓ, էջ 2332): Կիրառել է նաև Եղիշեն՝ «Եւ անդէն շիջանէր ի բազմաբոց բորբոքմանէն. քանզի խցաւ բերան չար խրատուացն, որ անդադար յորդորէին զնա ի գործ դառնութեան» (Եղ, էջ 615): Արդի հայերենում կա համարժեք «բերանը փակել» դարձվածք (ՀՀ ԴԲ, էջ 121):

12. ՅԱԿԱՆՁԱ ՀԱՍԱՆԵԼ – ականջին հասնել, լսել, իմանալ. «Այլ մանաւանդ յորժամ յականջս կանանց եւս եհաս բան արանցն իւրեանց ...» (ՂՓ, էջ 2336, 2349): Կա Ղեռնդ երեցի երկում. «... բարձրացեալ բողոք աշխարհիս հասանէր յականջս իշխանին իսմայելի ...» (Ղ, էջ 757): Արդի հայերենում կա նույնիմաստ «ականջին հասնել» դարձվածք (ՀՀ ԴԲ, էջ 9):

13. Ո՞ԳԻՏԱՅ – ո՞Վ գիտի, հայտնի չէ, ոչ ոք չգիտի. «Բայց վասն Հոնացն ո՞վ գիտաց, հաւանի՞ն գալ թէ ոչ» (ՂՓ, էջ 2314): Գործածված է նաև Աստվածաշնչում՝ «Ո՞ գիտաց զմիտս Տեառն, եւ ո՞ Եղեւ նմա խորհրդակից ...»¹⁶: Արդի հայերենում կա «ո՞վ գիտի» նույնիմաստ դարձվածք (ՀՀ ԴԲ, էջ 472):

14. ՎԱՂ ԵՒ ԿԱՄ ԱՆԱԳԱՆ – վաղ թե ուշ. «... վաղ եւ կամ անագան զերծանել ի մահուանէ ...» (ՂՓ, էջ 2254): Գործածել է Ագաթանգեղոսը «Պատմութիւն Հայոցում»՝ «... զի եթէ վաղ եթէ անագան, սակայն քակտի հնացեալ մարմինն ...»¹⁷: Արդի հայերենում կա «վաղ թէ ուշ» (Երբ էլ որ լինի, երբեկցե) դարձվածք (ՀՀ ԴԲ, էջ 543):

15. ՏԵՍԱՆԵԼ (ԻԻՐՈՎՔ) ԱԶԱԻՔ – անձամբ տեսնել. «... կամիմք, զի ինքն տեսցի իւրովք աչաւք, եւ ինքն լուկցէ իւրովք ականջաւք» (ՂՓ, էջ 2355): Այս կապակցությունը կիրառել է նաև Եղիշեն՝ «տեսաք աչաւք մերովք» (Եղ, էջ 634), «ձերոյին աչաւքդ տեսէք» (Եղ, էջ 711), «աչաւք իմովք տեսի» (Եղ, էջ 721) և այլն: Արդի հայերենում կա նույնիմաստ «աչքով տեսնել» (անձամբ տեսնել) դարձվածք (ՀՀ ԴԲ, էջ 57): Ղ. Փարակեցին գործածել է նաև «այլոյ աչաւք տեսանել» (ՂՓ, էջ 2355) կապակցությունը, որի այլ օրինակ չհաջողվեց գտնել: Արդի հայերենում թեև կա «ուրիշ աչք(եր)ով նայել» դարձվածք, բայց տարբեր իմաստով՝ «1. քննադատական, անկողմնակալ, անաչառ վերաբերմունք ունենալ, 2. օտարի նման,

¹⁵ Ղ Եւոնդ Երէց. Պատմաբանութիւն Ղեռնդեայ մեծի վարդապետի հայոց, որ յաղագս երեւելոյն Մահմետի եւ զկնի նորին, թէ որպէս եւ կամ որով աւրինակաւ տիրեցին տիեզերաց, եւս առաւել թէ հայոց ազգիս (այսուհետ՝ Ղ). – Մատենագիրք հայոց, հ. Զ, Անթիլիաս-Լիբանան, 2007, էջ 735–854: Էջերը կնշվեն մեջբերումներին կից:

¹⁶ Աստվածաշնչ մատեան Հին եւ Նոր կտակարանաց, էջ 513:

¹⁷ Ագաթանգեղոս. Պատմութիւն Հայոց. – Մատենագիրք հայոց, հ. Բ, Եղարք, էջ 1364:

անտարբեր վերաբերվել» (ՀՀ ԴԲ, էջ 575), այնինչ Ղ. Փարպեցու բնագրում այն հակադրված է «իր աչքով տեսնել» դարձվածքին:

Բ.

1. ԱՅԼՈՅ ԲԵՐԱՆՈՎ ԽԱՒՍԵԼ – ուրիշի միջոցով ասել. «... եւ մի՛ այլոյ աչաւք տեսցէ եւ այլոյ ականջաւք լուիցէ եւ այլովք հանապաղ գիտացէ զմարդ ...» (ՂՓ, էջ 2355): Արդի հայերենում կա նույնիմաստ «(մեկի) բերանով խոսել» դարձվածք (ՀՀ ԴԲ, էջ 126):

2. ԱՌՆԵԼ ԳԼՈՒԽ ԳՈՐԾՈՅՑՄ – գործը գլուխ բերել. «... նա իշխէ առնել զլուխ Հայոց գործոյս» (ՂՓ, էջ 2348): Ժամանակակից հայերենում կա համարժեք, բայց որոշակի փոփոխությամբ «գործը գլուխ բերել» դարձվածք (ՀՀ ԴԲ, էջ 174):

3. ԱՌՆՈՒԻԼ ԶՀԱՄՆ – լավն ու վատը փորձել. «... որ եղեալ առ յապա երեւեցաւ բազմաց, եւ ճաշակեալ առին գհամ եւ զարմացան» (ՂՓ, էջ 2338): Արդի հայերենում կա նույնիմաստ «համը առնել» դարձվածք (ՀՀ ԴԲ, էջ 341):

4. ԱՐԿԱՆԵԼ ԶԱՆՁՆ ԸՆԴ ՄԵՂՕՔ – մեղքի մեջ գցել. «... ընդէ՞ր առ նախանձ արկանիցեն զանձինս ընդ անապաշնար մեղօք ...» (ՂՓ, էջ 2383): Արդի հայերենում կա «մեղքի մեջ գցել» (ՀՀ ԴԲ, էջ 422):

5. ԵԼԱՆԵԼ Ի ՄՏԱՅ – մտքից ելնել, մոռացվել, հիշողությունից ելնել. «... թուի թէ երկիւղ գործոյն չելանէ ի մտաց» (ՂՓ, էջ 2352): Ընդ որում, թեև դրաբարի դարձվածաբանական բառարանում կա «ի մտաց ելանել» դարձվածք (ԳԴԲ, էջ 129), սակայն այն ունի այլ իմաստ՝ «խելքը կորցնել, ցնորմել»: Արդի հայերենում կա նույնիմաստ «մտքից ելնել, ընկնել» դարձվածք (ՀՀ ԴԲ, էջ 444):

6. ԶՅՈՅՑՄ ԴՆԵԼ (զոք) – հույսը դնել մեկի վրա, ապավինել. «... բայց զյոյս մեր ոչ ի Հոռոմս եղեալ է եւ ոչ ի Հոռոս ...» (ՂՓ, էջ 2314): Արդի հայերենում կա «հույսը դնել (մեկի, մի բանի վրա)» դարձվածք (ՀՀ ԴԲ, էջ 373):

7. ԸՆԴ ԶԵԽԱՄԲ ՈՒՆԵԼ – տրամադրության տակ ունենալ, ձեռքի տակ ունենալ. «... եւ հնագանդեցուցեալ ընդ ձեռամբ իւրեանց ունին» (ՂՓ, էջ 2312): Արդի հայերենում կա «ձեռքի տակ ունենալ» (ՀՀ ԴԲ, էջ 390):

8. ԸՄՏ ԿՇՈՒԵԼՈՅ ԱԿԱՆ – աչքի չափով. «... ոչ գոյ ի նոսա, ըստ կշուելոյ ական, աւելի քան զչորս հազար արանց» (ՂՓ, էջ 2345): Արդի հայերենում կա «աչքի չափով» դարձվածք (ՀՀ ԴԲ, էջ 52):

9. ԿՈՐՈՒՍԱՆԵՄ Ի ՄԻՋՈՅ – ոչնչացնել. «... առ ոչինչ համարիմ զայնչափ ի ձէնջ աւգուստ եւ զլաստակս, այլ կնաւ եւ որդւովք եւ ազգաւ կորուսանեմ ի միջոյ» (ՂՓ, էջ 2246): Գրաբարի դարձվածաբանական բառարանում կա «բառնալ ի միջոյ» (մեջտեղից վերացնել, ոչնչացնել) դարձվածք (ԳԴԲ, էջ 53), իսկ «կորուսանեմ» և «բառնամ» բայերը հոմանիշներ են¹⁸: Արդի հայերենում կա դարձվածք է համարվում «մեջտեղից վերացնել» կապակցությունը (ՀՀ ԴԲ, էջ 424):

¹⁸ Տե՛ս Ռ. Ղազարեան. Գրաբարի հոմանիշների բառարան, Անթիլիաս-Լիբանան, 2006, էջ 390:

10. ԶԳԵԼ ԶՈՐՈԳԱՅԹ – դավ նյութել մեկի դեմ. «... որ թերեւս ըստ հոգեղին բնութեանն տեսեալ զառ ի ծածուկ ձգեալ զորոգայթ թշնամեացն ...» (ՂՓ, էջ 2388): Արդի հայերենում կա «որոգայթ լարել» (դավ նյութել մեկի դեմ) դարձվածք (ՀՂԴԲ, էջ 486):

11. ՄՏԱՆԵԼ ԸՆԴ ԳԵՏԻՆ – ամաչել, ամոթից գետինը մտնել. «Եւ բայց թէ ապա եւ որ նոցա իսկ նման մարդ էր, որ ձեր խարող հացկատակաց ջոկն էր՝ եւ ոչ կորացեալ մտանէր ընդ գետին ...» (ՂՓ, էջ 2361): Արդի հայերենում կա նույնիմաստ «գետինը մտնել» դարձվածք (ՀՂԴԲ, էջ 135):

12. (Ա.ԶԱՒՔ) ՈՒՂԻՂ ՀԱՅԻԼ – անկողմնակալ լինել, ճիշտ դատել. «... աչառք ուղիղ հայէին ընդ իս» (ՂՓ, էջ 2332), «... ընդ իս չհայէիք ուղիղ» (ՂՓ, էջ 2332): Արդի հայերենում կան «շիտակ նայել» (ՀՂԸԲ, էջ 1001) և «ծուռ աչքով նայել» (ՀՂԴԲ, էջ 307) դարձվածքներ:

13. ՎՃԱՐԵԼ ԶՈԳԻՆ – մահանալ. «Որոյ դառնակոռոչ չարալլուկ հեծմամբ յաւուրս սակաւս վճարեալ զոգին՝ սատակէր անխոստովան ...» (ՂՓ, էջ 2346): Արդի հայերենում կա «Հոգին տալ, ավանդել» դարձվածք (ՀՂԴԲ, էջ 364):

14. ՏԱԼ ՓԱՌՈՍ ԱՍՏՈՒԾՈՅ – շնորհակալ լինել Աստծուց. «Եւ թագաւորին լուեալ զայս եւ խնդալից եղեալ՝ եստ փառս Աստուծոյ ...» (ՂՓ, էջ 2213, 2285, 2291, 2304, 2319, 2336, 2343, 2356): Արդի հայերենում ևս կա «փառք տալ Աստծուն» դարձվածք (ՀՂԴԲ, էջ 577):

Դ. Փարպեցու երկում կիրառված «յոյս ունիլ»-ը (ՂՓ, էջ 2271), «չնորհէլ թողովթիւն մեղաց»-ը (ՂՓ, էջ 2259), «յեստ տանիլ»-ը (հետ տանել, հետ քաշել) (ՂՓ, էջ 2333) դարձվածք չենք համարում, թեև ՀՂԴԲ-ում իբրև դարձվածք են ներկայացված «հույս ունենալ» (ՀՂԴԲ, էջ 374), «մեղքերի թողովթյուն տալ» (ՀՂԴԲ, էջ 421), «հետ տանել» (ՀՂԴԲ, էջ 357) համարժեք կապակցությունները: Կարծում ենք, այս միավորները վերահիմաստավորված չեն, այլ կայուն կապակցություն կամ հարադրություն են:

Այսպիսով, առանձնացրել ենք զրաբարի բառարաններում չարձանագրված 29 դարձվածք: Դրանց գերակշիռ մասը, ըստ խոսքիմասային պատկանելության, բայական է, 2-ը՝ մակրայական («ըստ կշռելոյ ական», «վաղ եւ կամ անագան»), 1-ը՝ եղանակավորող («ո՞ գիտաց»):

Հստ կառուցվածքային-կաղապարային դասակարգման՝ եղանակավորող դարձվածքը երկրադարձիչ է, պատկանում է զերանուն+բայ կաղապարին: Մակրայական դարձվածքները երկանդամ են՝ բայ+գոյական և ածական+ածական կաղապարներով: Բայական դարձվածքները երկրադարձիչ¹⁹ և բազմաբաղադրիչ են: Երկրադարձիչները ներկայացնում են հետեւյալ պատկերը՝

ա. բայ+գոյական – 10 դարձվածք. «անկանել յոտս», «առնուլ զհամն», «դարձուցանել զերեսս», «ելանել ի բերանոյ», «ելանել ի մտաց», «խնուլ

¹⁹ Երկրադարձիչ ենք համարում 2 լիարժեք անդամից կազմված (այդ թվում՝ նախդիր կամ նախադրություն ունեցող) դարձվածքները:

բերան», «կորուսանել ի միջոյ»²⁰, «ձգել զորոգայթ», «մտանել ընդ գետին», «վճարել զոգին»:

բ. գոյական+բայ – 6 դարձվածք. «զանձն տալ», «զարեւ տեսանել», «զբանն առնել», «ընդ ձեռամբ ունել», «ի միտս ասել», «յականջս հասանել»:

Բազմաբաղադրիչներից մեկը քառանդամ է՝ «զանուն գրել ի դպրութիւն կենաց» (գոյական+բայ+գոյական+գոյական), մյուսները՝ եռանդամ հետևյալ կաղապարներով՝

ա. բայ+դերանուն/գոյական²¹+գոյական – 3 դարձվածք. «խաւսել (իւրով) բերանով», «լսել (իւր) ականջաւք», «տեսանել (իւրով) աչաւք»:

բ. բայ+գոյական+գոյական – 3 դարձվածք. «առնել գլուխ գործոյս», «արկանել զանձն ընդ մեղօք», «տալ փառս Աստուծոյ»:

գ. գոյական+բայ+դերանուն/գոյական – 1 դարձվածք. «զյոյս դնել զոք»:

դ. (գոյական)+մակրայ+բայ – 1 դարձվածք. «(աչաւք) ուղիղ հայիլ»:

ե. ածական+գոյական+բայ – 1 դարձվածք. «այլոյ բերանով խոսել»:

Եզրակացություն

Այսպիսով, Ղազար Փարպեցու «Պատմութիւն Հայոց» երկի բառապաշտի մանրամասն վերլուծությունից և գրաբարյան բառարաններով ստուգումներից հետո կարելի է փաստել, որ երկում կիրառված դարձվածքներից 29-ը ներկայացված չեն բառարաններում: Դրանց դարձվածքը լինելն ապացուցվում է սահմանող հատկանիշներով՝ կառուցվածքային (բառակապակցություններ) և իմաստային (վերաբիմաստավորում), իսկ այլ երկերից բերված կիրառությունների օրինակները ցույց են տալիս այդ բառակապակցությունների կայուն ու պատրաստի լինելու հանգամանքը: Արդի հայերնի դարձվածքների հետ համեմատությունից պարզ է դառնում, որ դիտարկվող 29 դարձվածքից 26-ը ժամանակակից հայերենում ունեն գրեթե նույն կազմությամբ համարեքներ, ինչը ևս այդ կապակցությունները դարձվածք համարելու լրացուցիչ ապացույց է:

Կառուցվածքային վերլուծությունից երկում է, որ այս դարձվածքները համապատասխանում են գրաբարի բառակապակցության օրինաչափություններին, որևէ առանձնահատկություն կամ շեղում չունեն: Դրանք հիմնականում երկբաղադրիչ և եռաբաղադրիչ կառուցյներ են՝ անվանողական բնույթի, որոնց անդամները գտնվում են ստորագրասական հարաբերության մեջ: Ձևաբանական տեսակետից միանգամայն օրինաչափ է մեծ մասի (26 դարձվածք) բայական լինելու հանգամանքը, ինչը բնորոշ է ինչպես գրաբարի, այնպես էլ արդի հայերենի դարձվածքարանությանը՝ պայմանավորված հայերենում բայ խոսքի մասի ունեցած առանձնահատուկ դերով ու նշանակությամբ: Հաշվի առնելով այս ամենը՝ կարելի է եզրակացնել, որ կապակցությունները գրաբարյան լիարժեք դարձվածքներ են

²⁰ «Ի միջոյ» բառը գոյական է, թեև ինչպես ՆՀԲ-ն էլ նշում է, շփոթվում է մակրայի կամ նախադրության հետ՝ «Ի ՄԻՋՈՅ. բացառ. միշտ է անուն, թէ եւ մկ. կամ նախադր. կարծեացի» (ՆՀԲ, հ. Բ, էջ 259):

²¹ Քանի որ որոշ դարձվածքներ ունեն կամընտիր անդամ, կաղապարում ներկայացնում ենք բոլոր հնարավոր խոսքի մասերը, որոնցով կարող է հանդես դալ այդ անդամը: Դարձվածքի կամընտիր (Փակուլտատիվ) անդամների մասին տե՛ս Պ. Բեդիրյան. ժամանակակից հայերենի դարձվածքարանություն, էջ 93–99:

և կարող են գրանցվել գրաբարի բառապաշարի հարստությունը ներկայացնող բառարաններում:

Քնար Հարությունյան –Մ. Մաշտոցի անվ. Մատենադարանի ձեռագրադիտության բաժնի կրտսեր գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ ձեռագիր մատյաններ, հայերեն մատյանների նկարագրություն-ուսումնակիրություն, V դ. Հայ մատենագրություն, գրաբարի բառապաշար, դարձվածանություն: Համահեղինակ է 1 գրքի և 3 ձեռագրացուցակի, հեղինակ՝ 11 Հոդվածի: knarbanaser@gmail.com

REFERENCES

- Abeghyan M. Yerker, h. Z, Yerevan, 1974 (In Armenian).
- Agatangehos. Patmutivn hayots. – Matenagirk hayots, h. B, E dar, Antilias-Libanan, 2003 (In Grabar).
- Arakelyan V. Aknarkner hayots grakan lezvi patmutyan, Yerevan, 1981 (In Armenian).
- Arakelyan V. Aknarkner hayots grakan lezvi patmutyan, Yerevan, 1981 (In Armenian).
- Astuadsashunch matean Hin ev Nor ktakaranats, Venetik, 1805 (In Armenian).
- Avetikean G. Sivrmeelean Kh., Avgerean M. Nor bargirk haykazean lezui, h. A, Venetik, 1836, h. B, Venetik, 1837 (In Grabar).
- Avgerean M., Jelalean G. Ardzern bararan haykaznean lezui, Venetik, 1865 (In Grabar).
- Aytenean A. Knakan kerakanutivn ashkharabar kam ardi hayeren lezui, Vienna, 1866 (In Armenian).
- Badikyan Kh. Jamanakakits hayereni dardzvadzayin miavornere, Yerevan, 1986 (In Armenian).
- Bediryan P. Hayeren dardzvadzkneri endardzak bararan, Yerevan, 2011 (In Armenian).
- Bediryan P. Jamanakakits hayereni dardzvadzabanutyun, Yerevan, 1973 (In Armenian).
- Eghishe. Vasn Vardanay ev hayots paterazmin. – Matenagirk hayots, h. A, E dar, Antilias-Libanan, 2003 (In Grabar).
- Eznik Koghbatsi. Eghdz aghandots. – Matenagirk hayots, h. A, E dar, Antilias-Libanan, 2003 (In Grabar).
- Ghazarean R., Avetisean H. Norayayt barer grabarum, Yerevan, 2007 (In Grabar).
- Ghazarean R. Grabari bararan, h. A-B, Yerevan, 2000 (In Grabar).
- Ghazaryan R. Grabari dardzuadzabanakan bararan, Yerevan, 2012 (In Grabar).
- Ghazarean R. Grabari homanishneri bararan, Antilias-Libanan, 2006 (In Armenian).
- Ghazar Pharpetsi. Patmutivn hayots. – Matenagirk hayots, h. B, E dar, Antilias-Libanan, 2003 (In Grabar).
- Ghevond Yerec. Patmabanutivn Ghevondeay medsi vardapeti hayots, vor yaghags ereveloyn Mahmeti ev zkni norin, te vorpes ev kam vorov avrinakav tiretsin tiezerats, evs aravel te hayots azgis. – Matenagirk hayots, h. Z, Antilias-Libanan, 2007 (In Grabar).
- Hovhannisean L. Grabari bararan. Nor haykazyan bararanum chvkayvats barer, Yerevan, 2010 (In Grabar).

- Jahukyan G., Aghayan Ed., Arakelyan V., Kosyan V. Hayots lezu, Yerevan, 1980
(In Armenian).
- Khachatryan L. Grabari usumnakan bararan, Venetik, 2016 (In Armenian).
- Margaryan A. Hayereni haradir bayere, Yerevan, 1966 (In Armenian).
- Pavstos Buzand. Patmutyun hayots. – Matenagirk hayots, h. A, E dar, Antilias-Libanan, 2003 (In Grabar).
- Sebeos. Patmutivn. – Matenagirk hayots, h. D, E dar, Antilias-Libanan, 2005 (In Grabar).
- Sukiasyan A., Galstyan S. Hayots lezvi dardzvadzabanakan bararan, Yerevan, 1975
(In Armenian).
- Sukiasyan A. Jamanakakits hayots lezu, Yerevan, 2004 (In Armenian).

**ФРАЗЕОЛОГИЗМЫ В ТРУДЕ «ИСТОРИЯ АРМЕНИИ»
ЛАЗАРЯ ПАРПЕЦИ, НЕ ПРЕДСТАВЛЕННЫЕ В
СЛОВАРЯХ ДРЕВНЕАРМЯНСКОГО ЯЗЫКА**

КНАР АРУТИОНЯН

Р е з ю м е

Ключевые слова: древнеармянские фразеологизмы, фразеологический словарь, лексика, фразеологизмы, не вошедшие в словари, структурный анализ, морфологическая классификация, Лазарь Парпеци, «История Армении».

Изучение древнеармянских фразеологизмов имеет относительно небольшую историю, и некоторые вопросы еще не решены окончательно. Один из них – вопрос фразеологизмов, не представленных в словарях. Исследование лексики труда «История Армении» историка V века Лазаря Парпеци выявило 29 новых фразеологизмов, не вошедших ни в фразеологический, ни в другие словари древнеармянского языка. Однако их семантический, структурный и морфологический анализ, а также аналоги в современном армянском языке дают основание считать эти единицы полноценными фразеологизмами, частью лексики, которые должны войти в словари. Например: «անկանել յոտս» («падать в ноги»), «դարձուցանել զերես» («повернуться спиной»), «ո՞վ գիտաց» («кто его знает») и т. д.

В основном эти фразеологизмы глагольные: «խնուր բերան» («затыкать рот»), «մտանել ընդ գետին» («провалиться сквозь землю»), «յափանջ հասնել» («доходить до ушей») и т. д.; по структуре двухкомпонентные: «ընդ ձեռամբ ունել» («держать в руках»), «վճարել զոգին» («отдать богу душу») и трехкомпонентные: «զյոյս դնել զոք» («полагаться на кого-либо»), «տեսնել իւրովք աչաւք» («увидеть своими глазами»).

Таким образом, после детального анализа этих 29 единиц, находя для многих из них примеры в других древнеармянских текстах и сравнивая с аналогичными единицами в современном армянском языке, можно утверждать, что они являются фразеологизмами.

Кнар Арутюнян – младший научный сотрудник отдела кодикологии Матенадарана им. М. Маштоца, аспирантка кафедры истории армянского языка факультета армянской филологии ЕГУ. Научные интересы: рукописи, описание-изучение армянских рукописей, армянская литература V века, лексика грабара, фразеология. Соавтор 1 книги и 3 каталогов рукописей, автор 11 статей. knarbanaser@gmail.com

IDIOMS IN THE “HISTORY OF ARMENIA” BY GHAZAR PARPETSİ NOT RECORDED IN THE DICTIONARIES OF OLD ARMENIAN

KNAR HARUTYUNYAN

Summary

Key words: Old Armenian (Grabar) idioms, dictionary of idioms, vocabulary, idioms not recorded in the dictionaries, structural analysis, morphological classification, Ghazar Parpetsi, “History of Armenia”.

The study of Old Armenian (Grabar) idioms has got a comparatively short history, so there are some questions which have not been solved conclusively. One of them is the problem of the idioms not recorded in the dictionaries. The study of the vocabulary of “History of Armenia” by the 5th century historian Ghazar Parphetsi revealed 29 new idioms not included in either the phraseological or other dictionaries of the Old Armenian language. However, the semantic, structural and morphological analysis of these units and their analogues in Modern Armenian give opportunity to consider them as full-fledged idioms, part of the vocabulary that should be included in the dictionaries, such as “անկանել յոտս”, “դարձուցանել զերես”, “ո՞վ գիտաց”, etc.

In general, these idioms are verbal (“խնուլ բերան”, “մտանել ընդ գետին”, “յականջև հասանել”, etc.). According to the structural features, most of them are two-component (“ընդ ձեռամբ ունել”, “վճարել զոգին”) and tree-component units (“զյոյս դնել զոք”, “տեսանել իւրովք աշաւք”).

Thus, after detailed analysis of these 29 units, finding examples for many of them in the various texts of Old Armenian and comparing with similar units of Modern Armenian, it can be argued that they are idioms.

Knar Harutyunyan – Junior Researcher at the Department of Codicology of Matenadaran named after M. Mashtots, PhD student at the Chair of Armenian language history of the YSU faculty of Armenian philology. Scientific interests: manuscripts, describing and studying of Armenian manuscripts, Armenian literature of the 5th century, the lexicon of Grabar, idioms. Coauthor of 1 book and 3 catalogues of manuscripts, author of 11 articles.

knarbanaser@gmail.com

ՀՆԴՎՐՈՊԱԿԱՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԻ ՎԵՐԶԱՉԱՆԳ
ԶԱՅՆԱՎՈՐՆԵՐԻ ԶԵՎԱԲԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻճԱԿԸ
ՀԻՆ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ *

ՍԱՐԳԻՍ ԱՎԵՏՅԱՆ

Բանալի բառեր՝ հնդեվրոպական անվանական հիմքերի վերջահանգ ձայնավորներ, թեք հիմքակազմիչ մասնիկներ, թեք հոլովներ, անվանական հոլովում, հոլովական վերջավորություններ, հին հայերեն, միջին հայերեն, վերջընթեր վանկ, ուժգնության շեշտ, ձևաբանական վերլուծության սկզբունքներ, ուղղական, հայցական:

Նախաբան

Հայտնի է, որ նախագրային հայերենում վերջընթերվանկային ուժգնության շեշտը հանգեցրել է վերջնավանկային ձայնավորի թուլացման՝ ձայնորդահանգ փակ վանկերի դեպքում, և անկման՝ մնացած դեպքերում, թեև այդ գործընթացի որոշ մանրամասներ վիճահարույց են¹: Եվ քանի որ դեռևս վերջընթեր շեշտի առկայության ժամանակ թեք հոլովները եզակի ուղղականի համեմատությամբ ընդհանուր առմամբ մեկ վանկով ավելի էին², ուստի շեշտահաշորդ վանկերի թուլացման և/կամ սղման արդյունքում հայերենում ձևավորվել է վերջնավանկային շարժական շեշտ. Հմմտ. եղ. ուղղ. *դո՛ւստիր > հ. հայ. դո՛ւստը, եղ. սեռ. *դուստե՛րոհ > *դուստե՛ր > հ. հայ. դատե՛ր, եղ. ուղղ. *մարդոհ > հ. հայ. մա՛րդ, եղ. սեռ. *մարդո՛յո > հ. հայ. մարդո՛յ և այլն: Միևնույն ժամանակ շեշտահաշորդ վերջնավանկերի թուլացումը և/կամ սղումը նաև ձևաբանական կարելոր հետևանք է ունեցել. սկզբնական թեքույթներն ու հիմքի վերջահանգ ձայնավորները եզակի ուղղականում և հայցականում ընկել են՝ հանգեցնելով այդ երկու հոլովների նույնաձևացմանը, բայց պահպանվել են թեք հոլովներում, այնպես, որ եզակի ուղղական-հայցականը հին հայերենում իբրև ուղիղ հոլովական հիմքը ու ելակետային ձև է ծառայում թեք հոլովական հիմք(եր)ի և մնացած

* Ներկայացվել է 21. XI. 2020 թ., գրախոսվել է 11. I. 2021 թ., ընդունվել է տպագրության 05. III. 2021 թ.:

¹ *Sé*'u A. Meillet. Esquisse d'une grammaire comparée de l'arménien classique (*այսուհետ՝* Esquisse...), 2nde éd. Vienne, 1936, pp. 55–59, R. Godel. An Introduction to the Study of Classical Armenian. Wiesbaden, 1975, pp. 99–106: Բայց հմմտ. գ. ջ ա ռ ւ կ յ ա ն. Հին հայերենի հոլովման սիստեմը և նրա ծագումը, երևան, 1959, էջ 150–159:

² Դա մասամբ հայերենում նախալեզվան սկզբնական դրության օրինաչափ հնչյունական գարգացման, մասամբ էլ համարանական-ձևաբանական փոփոխությունների արդյունք էր (հմմտ. J. Matzinger. Untersuchungen zum altarmenischen Nomen: Die Flexion des Substantivs. Dettelbach, 2005, S. 85–145):

Հոլովների կազմության համար: Ըստ այդմ՝ Հնդեվրոպական անվանական հիմքերի վերջահանգ ծայնավորները, որոնք սկզբնապես հանդես էին գալիս բոլոր Հոլովներում, չին հայերենում, ըստ Էռվիան, թեք Հիմքակազմիչ մասնիկների դեր են կատարում: Սակայն, ինչպես ստորև կտեսնենք, այդ ծայնավորների հինհայերենյան ձևաբանական կարգավիճակի վերաբերյալ հայերենագիտության մեջ միասնականություն գոյություն չունի:

Առկա տեսակետների քննական վերլուծություն

Հայ քերականագետներն ավանդաբար տարբերակում են երկու տիպի հոլովական մասնիկներ՝ հոլովիչներ և հոլովակերտներ: Հոլովիչները (ա, ե, ի, ո, ու) հոլովումների տարբերիչներ են, որոնցով որոշվում է բառերի հոլովական տիպը, իսկ հոլովակերտներն առանձին հոլովակների կազմիչներ են: Հոլովիչն ավելանում է եզակի ուղղականի ձևին կամ վերջից, կամ վերջահանգ երկու բաղաձայնի (բաղաձայնի և ձայնորդի) միջև: Ուստի, ըստ հոլովիչի դիրքի, առանձնացնում են արտաքին (վերջադրական, վերջամասնիկավոր) և ներքին (ներդրական, միջմասնիկավոր) հոլովումներ: Բացի այդ, տարբերակում են նաև պարզ և խառն հոլովումներ կախված այն բանից արդյոք տվյալ հոլովիչն անփոփոխ պահպանվում է ողջ հարացույցում, թե եզակի գործիականում և հոգնակի թվի թեք հոլովներում հերթագայվում է մեկ այլ հոլովիչի հետ³: Սակայն հոլովակազմության ավանդական նկարագրությունից կարելի է տեսնել, որ հոլովիչները դիտվում են ոչ միայն իբրև հոլովական տիպերի տարբերիչներ, այլև՝ եզակի սեռական-տրականի կազմիչներ: Այսպես, նշվում է, որ եզակի սեռականը և տրականը հիմնականում կազմվում են առանց հոլովակերտի՝ եզակի ուղղականի ձևին հոլովիչի ավելացմամբ: Մյուս կողմից՝ հոգնակի ուղղականը և հայցականը կազմվում են առանց հոլովիչի՝ համապատասխանաբար ։ ք և ։ ս հոլովակերտների ավելացմամբ, իսկ մի շարք հոլովներ էլ (օր. եզակի և հոգնակի գործիականը, հոգնակի սեռական-տրական-բացառականը) կազմվում են միաժամանակ հոլովիչի ու հոլովակերտի մասնակցությամբ⁴: Այդ պարագայում կարող է տպավորություն ստեղծվել, թե հոլովիչները և հոլովակերտները հոլովաձևների կազմության հարցում գրեթե նույնպիսի ձևաբանական դեր ունեն: Այսինքն՝ որոշ հոլովներ կազմվում են միայն հոլովիչով (հմմտ. եղ. սեռ-տր. բան-ի), ուրիշները՝ միայն հոլովակերտով (հմմտ. հոգ. ուղղ. բան-ք, հոգ. հայց. բան-ս), իսկ որոշ հոլովներ էլ բնութագրվում են թե՛ հոլովիչի և թե՛ հոլովակերտի առկայությամբ (հմմտ. եղ. գործ. բան-ի-ւ, հոգ. սեռ-տր-բաց. բան-ի-ց): Բայց այդ տրամաբանությամբ այնքան էլ պարզ չէ, թե հոլովակազմիչ դերը ինչպես է բաշխվում հոլովիչի և հոլովակերտի միջև վերջիններիս միաժամանակյա առկայության դեպքում: Արդ, թեև հայ քերականա-

³ Տե՛ս Ա. Աբրահամյան. Գրաբարի ձեռնարկ, Երևան, 1976, էջ 17–24, Հ. Ավետիսյան, Ռ. Ղազարյան. Գրաբարի ձեռնարկ, Երևան, 2007, էջ 47–51: Հմմտ. նաև Ա. Բագրատունի. Հայերէն քերականութիւն ի պէտո զարգացելոց, Վենետիկ, 1852, էջ 8:

⁴ Հմմտ. Ա. Բագրատունի. նշվ. աշխ., էջ 8, Ա. Աբրահամյան. նշվ. աշխ., էջ 19–24, Հ. Ավետիսյան, Ռ. Ղազարյան. նշվ. աշխ., էջ 48–51:

գիտության մեջ երկու տիպի հոլովական մասնիկներ են տարբերակվում, բայց լիովին չի հստակեցվում հոլովիչների ձևաբանական կարգավիճակը հոլովակազմության հարցում:

Գ. Զահուկյանի և է. Թումանյանի տեսակետները զգալիորեն տարբերվում են հայ ավանդական քերականագիտական մոտեցումից: Գ. Զահուկյանը հին հայերենի համար տարբերակում է ձայնավորահանգ հիմքով և ձայնորդահանգ հիմքով հոլովումներ: Հետևաբար նա ընդունում է, որ հնդեվրոպական անվանական հիմքերի վերջահանգ ձայնավորները հին հայերենում շարունակում են հիմքակազմիչ մասնիկների դեր կատարել՝ չնայած որ դրանք ընկել են ուղիղ հոլովներում (ուղղականում և հայցականում): Այսինքն՝ «ձայնավորահիմք հոլովումները բնութագրվում են ուղիղ հոլովներում զրո հիմքակազմ տարրով և թեք հոլովներում՝ ձայնավոր հիմքակազմ տարրով»⁵: Բայց միևնույն ժամանակ անվանի լեզվաբանը գտնում է, որ «սեռական-տրականի հիմքակազմ ձայնավորները փաստորեն գիտակցվում են նաև որպես վերջավորություններ»⁶: Է. Թումանյանը ևս հոլովիչները դիտում է իբրև հիմքային (թեմատիկ) ձայնավորներ, որոնք բառային հիմքից քերականական կամ բառափոխական հիմք են կազմում, իսկ վերջինիս ավելանում են համապատասխան (հիմնականում թեք հոլովների) թեքույթները: Ըստ այդմ նա հիմքային ձայնավորները հետևողականորեն առանձնացնում է բուն հոլովական վերջավորություններից՝ Այդուհանդերձ, է. Թումանյանը դուրս չի դայիս ավանդական ներդրական կամ միջմանիկավոր և վերջադրական կամ վերջամաննիկավոր եզրույթների ընդհանուր տրամաբանության շրջանակից: Ուստի թե՛ ձայնավորական և թե՛ բաղաձայնական հոլովական տիպերը ձևաբանական վերլուծության է ենթարկում նույն կերպ՝ երկու դեպքում էլ առանձնացնելով հիմքային ձայնավորներ (օրինակ՝ եղ. սեռ.-տր. գետ-ո-յ, անձ-ի-ն, դստ-ե-ր, հոդ. սեռ.-տր. գետ-ո-ց, գուսան-ա-ց, անձ-ա-ն-ց և այլն), և նշում, որ ձայնավորական և բաղաձայնական տիպերը համաժամանակյա տեսանկյունից միմյանցից տարբերվում են հիմքային ձայնավորի տեղակայման դիրքով⁸: Բայց նկատենք, որ ձայնավորական հոլովական տիպերի դեպքում հիմքակազմությունն իրականացվում է մասնիկավորմամբ, իսկ բաղաձայնական հոլովական տիպերի դեպքում՝ ներքին թեքմամբ: Մյուս կողմից՝ հայտնի է, որ

⁵ Գ. Զահուկյան. նշվ. աշխ., էջ 76:

⁶ Նույն տեղում, էջ 164: Հմմտ. նաև էջ 87:

⁷ Տե՛ս Յ. Գ. Դրевнеарմենական լեզվաբառարարական հայության մասին (Երևան, 1971, ս. 177–201).

⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 177–180, նաև՝ էջ 189–191: Պ. Կահան ևս հին հայերենի ձայնավորական և բաղաձայնական հոլովական տիպերը հավասարապես հասույթային ձևաբանական վերլուծության է ենթարկում: Սակայն վերջինս ելնում է այլ տեսանկյունից և, բացի այդ, հետևողական չէ՝ հիմքային ձայնավորները մասամբ դիտելով որպես հոլովական տիպերը որոշող դասային ցուցիչներ (հմմտ. հոդ. սեռ.-տր.-բաց. ազգ-ա-ց, մաս-ա-ն-ց, հոդ. գործ. ազգ-ա-ւ-ք, մաս-ա-մ-բ-ք և այլն), մասամբ էլ՝ որպես հոլովական վերջավորություններ (հմմտ. եղ. սեռ.-տր.-ներգ. ազգ-ի, մաս-ի-ն և այլն) [տե՛ս P. Caha. Classical Armenian declension. – Nordlyd, 2009, Vol. 36 (Special issue on Nanosyntax.), pp. 92–93, 101–106]:

ներքին թեքումը, ի տարբերություն մասնիկավորման, չի կարող հատույթային (սեգմենտային) ձևաբանական վերլուծության ենթարկվել, քանի որ ներքին թեքման հերթագայվող ձայնավորը հիմքի անբաժան մասն է կազմում⁹:

Ստորև ներկայացվող եվրոպացի հայերենագետները հին հայերենի հոլովման համակարգը դիտարկելիս սովորաբար առանձին հոլովիչ ձայնավորներ չեն տարբերակում՝ դրանք համարելով կամ հիմքի, կամ էլ վերջավորությունների բաղկացուցիչ մաս: Ընդ որում՝ հաճախ հենց նույն հեղինակի մոտ որոշակի անհետևողականություն կամ երկվություն է նկատվում: Այսպես, Ա. Մեյեն հին հայերենի հոլովական վերջավորությունները նկարագրելիս նշում է միայն բուն վերջավորությունները (-ք, -ս, -ւ/-թ, -ց, -ւք և այլն)՝ առանց հիմքային ձայնավորների, իսկ բերվող հարացույցային օրինակներում վերջավորությունները հիմքից չի առանձնացնում¹⁰: Բայց միևնույն ժամանակ նա գտնում է, որ երբեմնի հիմքային ձայնավորները հին հայերենում այլևս չեն դիտակցվում որպես այդպիսին և վերջավորությունների բաղկացուցիչ մասն են կազմում: Ուստի իր մեկ այլ աշխատության մեջ Ա. Մեյեն հիմքային ձայնավորները բուն վերջավորությունների հետ որպես մեկ միասնական ձևաբանական տարր առանձնացնում է հոլովական հիմքից՝ -ոյ, -ով և այլն¹¹: Հ. Յենսենը նույնպես, ըստ էության, հիմքային ձայնավորը և բուն վերջավորությունը համաժամանակայա տեսանկյունից դիտում է որպես մեկ միասնական ձևաբանական տարր, իսկ հարացույցային օրինակներում վերջավորությունները բառահիմքից չի առանձնացնում¹²: Զ. Քլեկտոնը իբրև հոլովական ցուցիչներ առանձնացնում է բուն վերջավորությունները (եղ. գործ.-ա/-վ/-ե, հոգ. գործ. -ակ/-ակ/-եկ, հոգ. ուղղ. -է, հոգ. սեռ.-տր.-բաց. -է և այլն) և նշում, որ գործիականի և հոգնակի սեռական-տրական-բացառականի հոլովական ցուցիչներին նախորդում է ա (ա), ի (ի), օ (ո) կամ օՎ (ու) հիմքային ձայնավորը, բայց մյուս կողմից՝ գործիական հոլովի կազմության կցական բնույթը յի (ձի) բառի օրինակով լուսաբանելիս եղ. գործ. յի-օՎ (ձի-ով) և հոգ. գործ. յի-օՎ-է (ձի-ով-ք) ձևերում գործիական հոլովի ցուցիչ է համարում օՎ (ով)-ը, այսինքն՝ վերջավորությունը հիմքային ձայնավորի հետ միասին¹³: Ուստի այդ պարագայում այնքան էլ պարզ չէ՝ արդյոք նա բուն վերջավորություններին նախորդող ա (ա), ի (ի), օ (ո), օՎ (ու) ձայնավորները իբրև հիմքային ձայնավորներ բնորոշելիս ենում է տարածամանակյա՞ն, թե՞ հին հայերենի համաժամանակայա տեսանկյունից: Նույնպիսի անորոշություն և երկվություն է առկա նաև Յ. Քլայնի մոտ: Վերջինս նշում է, որ վերոշիցյալ բոլոր չորս ձայնավորական

⁹ Տե՛ս M. Aronoff, K. Fudeman. What is Morphology?, 2nd ed. Wiley-Blackwell, 2011, pp. 16–17, 49–54.

¹⁰ Տե՛ս A. Meillet. Altarmenisches Elementarbuch. Heidelberg, 1913, S. 44–50.

¹¹ Տե՛ս A. Meillet. Esquisse..., p. 68, նաև՝ էջ 66-ի հարացույցային օրինակները:

¹² Տե՛ս H. Jensen. Altarmenische Grammatik. Heidelberg, 1959, S. 48 ff.

¹³ Տե՛ս J. P. T. Clarkson. Classical Armenian. The Ancient Languages of Asia Minor. Cambridge University Press, 2008, Ch. 11, pp. 130–132.

կամ անփոփոխ հիմքով հոլովական տիպերի եղակի ու հոգնակի գործիականում և հոգնակի սեռական-տրական-բացառականում բուն վերջավորությունից առաջ հանդես է գալիս հիմքային ձայնավորը, մյուս կողմից՝ ընդունում է, որ նախագրային հայերենում հիմքային վանկերը (stem syllables) վերաքերականացվել են՝ դառնալով հոլովական վերջավորություններ¹⁴: Յ. Մացինգերը ևս հետևողական չէ հոլովաձևերի համաժամանակա ձևաբանական վերլուծության և հնդեվրոպական հիմքային ձայնավորների հայերենում հիմքային հայերենյան կարգավիճակի նկարագրման հարցում¹⁵: Իսկ Ռ. Գողելի կարծիքով, երբեմնի հիմքային ձայնավորները, որոնք հին հայերենում հանդես են գալիս միայն թեք հոլովներում, վերախմատավորվել և վերջավորությունների բաղկացուցիչ մասն են կազմում: Ուստի նա հետևողականորեն ձայնավորական կամ անփոփոխ հիմքով հոլովական տիպերի հիմքային ձայնավորները բուն վերջավորությունների հետ որպես մեկ միասնական ձևաբանական տարր առանձնացնում է հոլովական հիմքից¹⁶: Այդուհանդերձ, Ռ. Գողելն անհետևողականություն է ցուցաբերում հոլովական հիմքերը նկարագրելիս. Նա ձայնավորական հոլովական տիպերի հարացույցում առանձնացնում է մեկ ընդհանուր և անփոփոխ հոլովական հիմք, որը ձևով համընկնում է եղակի ուղղական-հայցականին, մինչդեռ բաղաձայնական հոլովական տիպերի դեպքում նշում է, որ հարացույցային ձևերը կազմվում են տարբեր հիմքերից, և համապատասխանաբար հիմքային տարբերակներ է առանձնացնում¹⁷:

Մի նոր մեկնաբանության փորձ

Կարծում ենք՝ ձևաբանական վերլուծության ընդհանուր սկզբունքներց¹⁸ ենելով՝ անհրաժեշտ է մեկից ավելի հոլովական հիմքեր (ուղիղ և թեք հիմքային տարբերակներ) ընդունել հին հայերենի թե՛ բաղաձայնական և թե՛ ձայնավորական հոլովական տիպերի համար (տե՛ս ստորև)¹⁹: Նշենք, որ բազմահիմքություն է բնորոշ է աշխարհի մի շարք լեզուների հոլովական համակարգերին: Հատկապես դադստանյան լեզուներն աչքի են ընկնում բազմահիմքության և հոլովական հարացույցների կազմության տարատիպօրինաչափություններով: Ընդ որում՝ որպես բացարձակ կամ ուղղական հորով հանդես եկող ուղիղ հիմքին հակադրող թեք հիմքերը մասամբ գոր-

¹⁴ Տե՛ս J. Klein. Classical Armenian Morphology. Morphologies of Asia and Africa, Vol. 1. Winona Lake, Indiana, 2007, Ch. 37, pp. 1052–1053.

¹⁵ Հմմտ. J. Matzinger. Նշվ. աշխ., էջ 12, 14, 21:

¹⁶ Տե՛ս R. Godel. Նշվ. աշխ., էջ 93, նաև էջ 28–30-ի հոլովական հարացույցները:

¹⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 28–32:

¹⁸ Տե՛ս E. A. Nida. Morphology: The Descriptive Analysis of Words, 2nd ed., Ann Arbor. University of Michigan Press, 1949, M. Aronoff, K. Fudeman. Նշվ. աշխ., էջ 12–22:

¹⁹ Հմմտ. նաև B. A. Плунгян, Кс. П. Семёнова. К типологии древнеармянской именной парадигматики: Instr. Pl. – «Вопросы языкоznания», 2016, № 5, с. 110–111; М. Е. Алексеев. Сравнительно-историческая морфология нахско-дагестанских языков. Категории имени. М., 2003, с. 34.

ծառում են միայն բուն հոլովական հիմքի արժեքով, մասսամբ էլ ձևով համընկնում են այս կամ այն հոլովին (սովորաբար էրգատիվին կամ սեռականին), այսինքն՝ թեք հիմքերը երկակի (հոլովական հիմքի և հոլովաձևի) դեր են կատարում։ Թեք հիմքերը հիմնականում կազմվում են ուղիղ հիմքին մասնիկների ավելացմամբ, երբեմն էլ՝ ուղիղ հիմքի ձևահնչութային հերթագայությամբ։ Իսկ թեք հոլովները ընդհանուր առմամբ կազմվում են թեք հիմք(եր)ից, բայց մասսամբ էլ՝ անմիջականորեն ուղիղ հիմքից²⁰։

Հստ այդմ՝ հին հայերենի հոլովական հարացույցները կարելի է ընդհանրացված բնութագրել հետևյալ կերպ։ Զայնավորական հիմքով պարզ հոլովումներին բնորոշ է երկու (մեկ ուղիղ և մեկ թեք), իսկ խառն հոլովումներին՝ երեք (մեկ ուղիղ և երկու թեք) հիմքային տարրերակ։ Հմմտ. մի կողմից՝ եղ. ուղղ.-հայց. բան-օ, հոգ. ուղղ. բան-ք, հոգ. հայց. բան-ս, եղ. սեռ.-տր. բան-ի-օ, եղ. գործ. բան-ի-ւ, հոգ. սեռ.-տր.-բաց. բան-ի-ց, հոգ. գործ. բան-ի-ւ-ք, եղ. ուղղ.-հայց. գետ-օ, հոգ. ուղղ. գետ-ք, հոգ. հայց. գետ-ս, եղ. սեռ.-տր. գետ-ո-յ, եղ. գործ. գետ-ո-վ, հոգ. սեռ.-տր.-բաց. գետ-ո-ց, հոգ. գործ. գետ-ո-վ-ք ևն (ուղիղ բան-, գետ-և թեք բան-ի-, գետ-ո-հիմքերով), մյուս կողմից՝ եղ. ուղղ.-հայց. քաղաք-օ, հոգ. ուղղ. քաղաք-ք, հոգ. հայց. քաղաք-ս, եղ. սեռ.-տր. քաղաք-ի-օ, եղ. գործ. քաղաք-աւ, հոգ. սեռ.-տր.-բաց. քաղաք-ա-ց, հոգ. գործ. քաղաք-աւ-ք և այլն (ուղիղ քաղաք-և թեք քաղաք-ի-), քաղաք-աւ հիմքերով։ Թեև քաղաք-ի-թեք հիմքը փաստացիորեն հանդես է գալիս միայն եղակի սեռական-տրականում, այդուհանդերձ, ի-ն դարձյալ պետք է դիտել իրեւ հիմքակազմիչ մասնիկ, այլ ոչ թե եղակի սեռական-տրականի վերջավորություն։ Կարծում ենք՝ այդօրինակ ձևաբանական վերլուծությունն արդարացված է երկու առումով։ Նախ՝ որոշ հոլովական տիպերի դեպքում եղակի սեռական-տրականը մյուս թեք հոլովների նման հիմքակազմիչ մասնիկից հետո հասուկ հոլովական վերջավորություն ունի (Հմմտ. եղ. սեռ.-տր. գետ-ո-յ)²¹։ Եվ ապա՝ հոլովական տարրեր տիպերի ձևաբանական վերլուծությունը ցույց է տալիս, որ հին հայերենի հոլովակազմության ընդհանուր սկզբունքի համաձայն՝ ձայնավորական հիմքով հոլովական տիպերի եղակի սեռական-տրականը, եղակի ու հոգնակի գործիականը և հոգնակի սեռական-տրական-բացառականը, որպես կանոն, բնութագրվում են ուղիղ հիմքին անմիջականորեն ավելացող թեք հիմքակազմիչ ձայնավորի առկայությամբ (իսկ վերջինիս հաջորդում են բուն վերջավորություններ, երևան, 1982, էջ 64)։

²⁰ Տե՛ս M. Daniel and D. Ganenkov. Case Marking in Daghestanian: Limits of Elaboration, In: A. Malchukov, A. Spencer (eds.)— The Oxford Handbook of Case. Oxford University Press, 2008, Ch. 46, pp. 668–685, M. E. Алексеев. Նշվ. աշխ., էջ 30–82։

²¹ Բառակերջի յ-ն, որը նախագրային հայերենում ընկել էր ի և ու ձայնավորներին հաջորդող դիրքում (իսկ այց հետո յ-ի առկայության հարցում հին ձեռագրերում հաճախ տատանումներ են նկատվում), ո-ին հաջորդող դիրքում դեռ օրինաչափ կերպով պահպանվում է դասական հայերենում՝ V դ. գրաբարում (տե՛ս A. Meillet. Esquisse..., p. 57), և համեմատաբար ավելի ուշ (VI–VII դդ.) է ո-ից հետո ևս յ-ի անկում արձանագրվում (տե՛ս Հ. Մուրագյան. Հայոց լեզվի պատմական քերականություն, հ. I. Հնչյունաբանություն, Երևան, 1982, էջ 64)։

յունները, այդ թվում՝ զրոյական): Հստ այդմ՝ թե՛ եղ. սեռ-տր. բան-ի-օ և թե՛ եղ. սեռ-տր. քաղաք-ի-օ ձևերում գործ ունենք միւնույն հիմքակազմիչ դրամասնիկի հետ, իսկ եղակի սեռական-տրականի իմաստը երկու դեպքում էլ արտահայտվում է զրոյական վերջավորությամբ: Ինչ վերաբերում է բաղաձայնական հիմքով հոլովական տիպերին, վերջիններա դրամորում են երկու (դուստր-/դաստեր-), երեք (անձն-/անձին-/անձան-, ձուկն-/ձկան-/ձկուն-) և չորս (հարսն-/հարսին-/հարսան-/հարսուն-): Հիմքային տարբերակ: Ի դեպ, հին հայերենում հոլովական տարբեր տիպերի առկայությունը պայմանավորված է ոչ այնքան հոլովական վերջավորությունների բազմազանությամբ, որքան հոլովական հիմքերի կազմության և հիմքային տարբերակների փոխհարաբերության տարատիպ օրինաչափություններով²²:

Ինչպես արդեն նշվեց, ձևաբանական վերլուծության գիտական սկզբունքները պահանջում են հին հայերենի ձայնավորական հոլովական տիպերի հիմքային ձայնավորները դիտել իբրև թեք հիմքակազմիչ մասնիկներ (այդ թվում՝ եղ. սեռ-տր. սրտ-ի-օ, քաղաք-ի-օ, ծով-ու-օ և նման ձևերում): Այլուհանդերձ, այդ ձայնավորների բացակայությունը ոչ միայն եղակի ուղղական-հայցականում, այլև որոշ թեք հոլովներում (հմմտ. եղ. բաց. սրտ-է, ծով-է, քաղաք-է, եղ. ներգ. հն-ում, առաջն-ում և այլն) նկատելիորեն խախտում էր նրանց՝ իբրև հիմքակազմիչ մասնիկների կարգավիճակը՝ նպաստելով խոսողների կողմից այդ ձայնավորների և բուն վերջավորությունների կապակցությունների որպես միասնական կազմիչներ գիտակցվելուն: Եվ արդեն միջին հայերենում նախկին հիմքակազմիչ ձայնավորները լիովին հոլովական վերջավորությունների կարգավիճակ են ձեռք բերում մասսամբ ինքնուրույնաբար, մասսամբ էլ՝ բուն վերջավորություններին ձուլմամբ: Ի տարբերություն հին հայերենի, որտեղ հիմքակազմիչ ձայնավորները հետևողականորեն հանդես էին գալիս գրեթե բոլոր թեք հոլովներում, միջին հայերենում այդ դրությունը խախտվում է գործիականի ուղ (մասսամբ էլ՝ բացառականի է) վերջավորության ընդհանրացմամբ: Արդ, հաճախ «հոլովման ընթացքում յուրաքանչյուր հոլով հանդես է բերում վերջավորության միայն իրեն հասուլ ձայնավորում ...: Ստեղծվում է մի այնպիսի վիճակ, երբ հոլովումների դասակարգումը ըստ առանձին տիպերի հնարավոր է միայն սեռական-տրական հոլովաձևերի հիման վրա»²³: Ըստ որում՝ հիմքակազմիչ ձայնավորների վերածվելը հոլովական ցուցիչների և, մյուս կողմից, ներքին թեքման սահմանափակումը (սկզբնապես բաղաձայնական հոլովական տիպին պատկանող բազմաթիվ բառերի՝ ձայնավորական հոլովական տիպին անցմամբ²⁴) իրենց հերթին հանգեցնում են նախկին հոլովական հիմքային տարբերակների մեծ մասի վերացմանը և ներհարացույցային բազմահիմքության սահմանափակմանը, որն արդի հայերենում առկա է միայն որոշ հոլովական տիպերի դեպքում. օրինակ՝ օր-օրվան- (հմմտ. եղ. բաց. օր-վան-ից, օր-ից, եղ. գործ. օր-ով, հոգ. սեռ-տր. օր-

²² Տե՛ս Թ. Գ. Դ պահանջ. Նշվ. աշխ., էջ 177–179:

²³ Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, հ. 2, Երևան, 1975, էջ 8:

²⁴ Հմմտ. նույն տեղում, էջ 16:

եր-ի), հայր-հոր- (հմմտ. եղ. բաց. հոր-ից, եզ. գործ. հոր-ով, հոգ. ուղղ. հայր-եր, հոգ. սեռ-առ. հայր-եր-ի), ընկեր-ընկեր-ոջ- (հմմտ. եղ. բաց. ընկեր-ոջ-ից, եղ. գործ. ընկեր-ոջ-ով, հոգ. սեռ-առ. ընկեր-ներ-ի և այլն):

Եզրակացություն

Այսպիսով՝ կատարված քննության արդյունքները կարող ենք ամփոփել հետևյալ կերպ: Նախադրային հայերենում շեշտահաջորդ վերջնավանկերի սղման գործընթացում հիմքի վերջահանգ ձայնավորները եզակի ուղղականում և հայցականում ընկել են բուն թեքույթների հետ միասին, բայց պահպանվել են թեք հորովներում (մասսամբ օրինաչափ հնչյունական զարգացման, մասսամբ էլ համարանական-ձևաբանական փոփոխությունների շնորհիվ), այնպես որ եզակի ուղղական-հայցականը հին հայերենում իրու ուղիղ հորովական հիմք և ելակետային ձև է ծառայում թեք հորովական հիմք(եր)ի և մնացած հորովների կազմության համար: Այդ ամենի հետևանքով հնդեվրոպական անվանական հիմքերի վերջահանգ ձայնավորները, որոնք սկզբնապես հանդես էին գալիս բոլոր հորովներում, հին հայերենում վերախմատավորվել և դարձել են թեք հիմքակազմիչ մասնիկներ: Բայց այն հանդամանքը, որ հիմքակազմիչ ձայնավորները հին հայերենում բացակայում էին ոչ միայն եզակի ուղղական-հայցականում, այլև որոշ թեք հորովներում, անխուսափելիորեն պետք է նպաստեր խոսողների կողմից այդ ձայնավորների ու բուն վերջավորությունների կապակցությունների իրու միասնական կազմիչներ գիտակցվելուն: Եվ արդեն միջին հայերենում նախկին հիմքակազմիչ ձայնավորները լիովին հորովական վերջավորությունների կարգավիճակ են ձեռք բերել մասսամբ ինքնուրույնաբար, մասսամբ էլ՝ բուն վերջավորություններին ձուլմամբ: Ընդ որում՝ հիմքակազմիչ ձայնավորների վերածվելը հորովական ցուցիչների հանգեցրել է նախկին հորովական հիմքային տարբերակների մեծ մասի վերացմանը և ներհարացույցային բազմահիմքության խստ սահմանափակմանը:

Սարգիս Ավետյան – բ. գ. թ., ԵՊՀ ընդհանուր լեզվաբանության ամբիոնի դոցենտ: Գիտական հետաքրքրությունները՝ հնդեվրոպական լեզվաբանություն, լեզվաբանական տիպաբանություն, հին հայերեն, հայոց լեզվի պատմություն, հայերենի բարբառներ: Հեղինակ է 1 մենագրության և շուրջ 30 հոդվածի: sargisavetyan@ysu.am

REFERENCES

- Abrahamyan A. Grabari dzernak, Yerevan, 1976 (In Armenian).
 Avetisyan H, Ghazaryan R. Grabari dzernak, Yerevan, 2007 (In Armenian).
 Alekseev M. E. Sravnitel'no-istoricheskaya morfologiya nakhsko-dagestanskikh jazykov. Kategorii imeni. M., 2003 (In Russian).
 Aknarkner midjin grakan heyereni patmutyan, h. 2, Yerevan, 1975 (In Armenian).
 Bagratuni A. Hayeren kerakanutiun i pets zargatselots, Venetik, 1852 (In Armenian).
 Djahukyan G. Hin hayereni holovman sisteme yev nra dsagume, Yerevan, 1959 (In Armenian).

Muradyan H. Hayots lezvi patmakan kerakanutyun, h. I, Hnchyunabanutyun, Yerevan, 1982 (In Armenian).

Plungyan V. A., Semenova Ks. P. K tipologii drevnearmyanskoi imennoy paradigmatici: Instr. Pl. – “Voprosy yazykoznanija”, 2016, № 5 (In Russian).

Tumanyan E. G. Drevnearmyanskii yazyk. M., 1971 (In Russian).

**МОРФОЛОГИЧЕСКИЙ СТАТУС КОНЕЧНЫХ ГЛАСНЫХ
ИНДОЕВРОПЕЙСКИХ ИМЕННЫХ ОСНОВ
В ДРЕВНЕАРМЯНСКОМ ЯЗЫКЕ**

САРГИС АВЕТЯН

Р е з ю м е

Ключевые слова: конечные гласные индоевропейских именных основ, показатели косвенных основ, косвенные падежи, именное склонение, падежные окончания, древнеармянский язык, среднеармянский язык, предпоследний слог, динамическое (силовое) ударение, принципы морфологического анализа, номинатив, аккузатив.

Морфологический статус конечных гласных индоевропейских именных основ в древнеармянском языке характеризуется и интерпретируется разными исследователями по-разному. Данные вокалические элементы следует считать показателями косвенных основ в древнеармянском именном склонении согласно принципам морфологического анализа. Иначе говоря, установление динамического (силового) ударения в додревнеармянский период на предпоследнем слоге, вызвавшее выпадение последующих гласных, имело также важное морфологическое последствие: в результате выпадения конечных гласных индоевропейских именных основ в номинативе и аккузативе и их сохранения в косвенных падежах (отчасти обусловленного аналогическими изменениями), эти вокалические элементы стали выполнять функцию показателей косвенных основ. Конечно, отсутствие последних не только в номинативе и аккузативе, но также в некоторых косвенных падежах (ср. ablativ ед. ч. *որտ-է*, *ծով-է*, *քաղաք-է*, локатив ед. ч. *հն-ում*, *առջն-ում* и т. д.) могло способствовать восприятию этих гласных говорящими в качестве падежных окончаний или неотъемлемой части окончаний. На самом деле, в среднеармянском языке эти вокалические элементы в конце концов слились с собственными окончаниями или превратились в падежные окончания самостоятельно.

*Саргис Аветян – к. филол. н., доцент кафедры общего языкознания ЕГУ.
Научные интересы: индоевропейское языкознание, лингвистическая типо-*

логия, древнеармянский язык, история армянского языка, армянские диалекты. Автор 1 монографии и около 30 статей. sargisavetyan@ysu.am

THE MORPHOLOGICAL STATUS OF THE STEM-FINAL VOWELS
OF INDO-EUROPEAN NOMINAL STEMS IN
OLD ARMENIAN

SARGIS AVETYAN

Summary

Key words: the stem-final vowels of Indo-European nominal stems, oblique-stem markers, oblique cases, penultimate syllable, intensity accent, Old Armenian, Middle Armenian, the principles of morphological analysis, nominal declension, case endings, nominative, accusative.

The morphological status of the stem-final vowels of Indo-European nominal stems in Old Armenian is characterized and interpreted differently by different scholars. According to the principles of morphological analysis, the vocalic elements should be regarded as oblique-stem markers in Old Armenian nominal declension. To put it another way, the fixation of an intensity accent on the prehistoric penultimate syllable in Armenian, which entailed the dropping of the posttonic vocalic elements, had an important morphological consequence as well: the stem-final vowels of Indo-European nominal stems were lost in the nominative and accusative, while having been retained in the oblique cases (partly due to analogical changes); as a result, the vocalic elements took on the function of oblique-stem markers. Of course, the absence of the latter not only in the nominative and accusative but also in some oblique cases (cf. abl. sing. *սրտ-է*, *ծով-է*, *քաղաք-է*, loc. sing. *հն-ում*, *առաջն-ում* etc.), could contribute to the vocalic elements being conceived of as case endings or an inseparable part of endings by speakers. As a matter of fact, the vocalic elements eventually merged with the endings proper or they became case endings on their own in Middle Armenian.

Sargis Avetyan – Candidate of Sciences in Philology, Associate Professor of the YSU Chair of General Linguistics. Scientific interests: Indo-European Linguistics, Linguistic Typology, Old Armenian, History of the Armenian language, Armenian dialects. Author of 1 monograph and more than 30 articles.

sargisavetyan@ysu.am

ԴՎԻՆ ԱՄՐՈՑ-ՄՐԲԱՎԱՅՐԻ ՄՇՏՏՋԵՍԱԿԱՍ ԽՈՐՃՈՒՐԴ*

ԳԱՅԱՆԵ ՔՈՉԱՐՅԱՆ

Բանալի բառեր՝ Դվին բազմաշերտ հնավայր, ավանդապահ սրբավայր, աշխարհայեցողական ըմբռնումներ, կրոնական սինկրետիզմ, Տիր-Ապոլոն-Միթրա լուսակիր եռյակ, Սբ. Գրիգոր Լուսավորիչ, մշտնջենական խորհուրդ, լույսի պաշտամունք:

Նախարան

Դվին բազմաշերտ հնավայրում սրբավայրի գոյության տևականությունը (առնվազն մ. թ. ա. I հազարամյակից սկսած, գրեթե անընդմեջ, ներառյալ մ. թ. V դարում կաթողիկանիստ լինելու իրողությունը) վկայող հնագիտական նյութը հնավորություն է ընձեռում հետամուտ լինել աշխարհընկալման զարգացման ընթացքի, դրա փուլերի և շրջադարձային հանգրվանների բացահայտմանը: Հնագիտական նյութի պարունակած տեղեկատվությունը հիմնականում դիտվել է բուն նյութի «ինքնաբացահայտման», բայց ոչ աշխարհայեցողական ըմբռնումների զարգացման ուղին ուրվագծելու համար, անտեսվել է աշխարհընկալման զարգացման հայեցակարգային հնարավոր փուլերի վերծանման անհրաժեշտությունը: Գրավոր սկզբնայրյունների, դիցաբանության, աղդագրական և հնագիտական նյութի համեմատական վերլուծությամբ հնարավոր է դառնում վերծանել բնապաշտական հավատալիքների ավանդականության դրամորումը Դվին բազմաշերտ հնավայրում, վերականգնել աշխարհընկալման զաղափարական հաջորդական զարգացման ընթացքը և բացահայտել ամրոց-սրբավայրի պաշտամունքային խորհուրդը:

Տիր/Տիւր-Լուսավոր Երկինք պաշտամունքային առնչություններ

Վաղարշապատ-Արտաշատ ճանապարհին «Բուն պողոտային» հարող Դվին բազմաշերտ ավանդապահ ամրոց-սրբավայրը և Ագաթանգեղոսի վկայությամբ նույն տիրույթում գտնվող Տիր աստծուն ձոնված «Երազամույն տեղեր» պատգամախոսարան-սրբավայրը կազմել են կրոնապաշտամունքային մեկ ամբողջություն¹: Դուին-Դըւին-Դվին տեղանվան հնդեկրոպական նախալեզվի (Հնիկ) *d^[h]eu-նիմքից ծագած լինելու փաստն² ինքնին հուշում է քննվող համալիրի պաշտամունքային հենքի ակունքները փնտրել հնդեկրոպական նախամշակույթի շերտերում:

* Ներկայացվել է 25. II. 2021 թ., գրախոսվել է 02. III. 2021 թ., ընդունվել է տպագրության 29. III. 2021 թ.:

¹ Տե՛ս Գ. Քոչարյան. Դվին ամրոց-սրբավայրը Հայոց դարձի նախօրեին. – Հայոց սրբերը և սրբավայրերը (ակունքները, տիպերը, պաշտամունքը), Երևան, 2001, էջ 289–296, նույնի Դվինի կենտրոնական թաղամասի անտիկ շերտի բնութագիրը. – ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 2019, № 1, էջ 293–303:

² Գ. Գ. Քոչարյան. Դվին տեղանվան վաղեմության հարցը. – ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 2000, № 2, էջ 132–138:

Հայ իրականության մեջ պահպանված տվյալների համեմատական վերլուծությունը՝ հնդեվրոպական նախամշակույթի համատեքստում, բավարար հիմք է տալիս համարելու և ամբողջացնելու Ագաթանգեղոսի հիշատակած Տիր/Տիւր աստվածության դիցաբանական կերպարը³:

Հնդեվրոպական մշակույթը կրող ժողովուրդների դիցաբանության լայնածավալ տիրույթում հայ. Տիր/Տիւր և դիցանվան, և դիցաբանական կերպարի գուգահեռների վկայված լինելու իրողությունը հավաստում է, որ դրանք բխում են նույն մշակութային ընդհանրությունից: Գրավոր աղբյուրների և ազգագրական տվյալների համեմատական վերլուծությամբ հայ. Տիր/Տիւր աստվածությունը ներկայանում է տիեզերքի ուղղաձիգ բաժանման երեք ոլորտներում միաժամանակ՝ երկինք-երկիր-անդրաշխարհ: Տիր/Տիւր աստվածության վերականգնված եռաստիճան կերպարի մեջ հատակորեն դրսեռորդում է հնդեվրոպական դիցաբանների գերագույն աստվածներին բնորոշ լուսավոր երկնքի, հմայական զորության, ռազմի, ամպուպի, արգասալորության-պատղերերության, նախնիների պաշտամունքի հատկանիշների համատեղում⁴:

Լեզվական հնագույն շերտին վերագրվող (*Հնի *dei-«փայլել, շողալ, լուսավորել, երևալ»* արմատի **dir-*, **dir-* ձևերից բխող) Տիր/Տիւր դիցանվան ստուգաբանութամբ բացահայտվում է այն կրող աստվածության առնչությունը լուսավոր երկնքի պաշտամունքի հետ⁵:

Համեմատերով վիշապամարտի վերակաղմնված հնդեվրոպական համրնդհանուր առասպելը⁶ Հայկական Տավրոս լեռնաշղթայում Տիրի կատար՝ Տիրինկատար, Կոսուր-Զագրոշյան լեռնաշղթայում Տիրկան երկնաքեր գագաթները, Արագածի լեռնազանգվածում Տիրինկատար բարձունքը կարող ենք արժնորեն՝ որպես Տիր ամպրոպային վիշապամարտիկ-աստծու նվիրական հանդրվան-կացարաններ՝, որտեղից Տիրն առաքում էր շանթ ու որոտ և

³ Տե՛ս Ա. գ. աթանգեղ դաշտ Պատմութիւն Հայոց (այսուհետ՝ Ա. գ. աթանգեղ քառական բնագիրը Գ. Տեր-Մկրտչյանի և Ա. Կանայանցի, աշխարհաբար թարգմ. և ծանօթ. Ա. Ն. Տեր-Ղեռնդյանի, Երևան, 1983, էջ 436–438 (778, 779 ձլ):

⁴ Տիրի վերականգնված դիցաբանական կերպարի մասին մանրամասն տե՛ս Գ. Գ. Քոչարյան. Տիր/Տիւր աստվածությունը «Հայոց մեծաց» մերնդաշարքում. – ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 2005, № 1, էջ 132–141:

⁵ Տե՛ս Է. Ա. գ. աթան. Ակնարկներ հայոց սոմարների պատմության, Երևան, 1986, էջ 61, Գ. Բ. Ջահուկյան. Լեզվական նոր տվյալներ հայոց նախքրիստոնեական կրոնի և հավատալիքների մասին. – ՊԲՀ, 1992, № 1, էջ 15, Ժ. Ճյուզիլ. Վերховные боги индоевропейцев. М., 1986, с. 145–146, 155.

⁶ Տե՛ս В. В. Иванов, В. Н. Топоров. Исследования в области славянских древностей. М., 1974.

⁷ Հստ ավանդության՝ Հայկական Տավրոսի Տիրինկատար լեռնագագաթթին է գտնվում Տիր աստծու մեհյանը (տե՛ս Ա. Ղանալանյան. Ավանդապատում, Երևան, 1969, էջ 74): Տիր-լեռ-ջուր առասպելաբանական հարաբերակցությունն ակնհայտ է Արագածի նորահայտ Տիրինկատարի՝ վիշապ քարակոթողների «բարձրագիր ծիսական միջավայրում» (մանրամասն տե՛ս Ա. Բոբոխյան, Ա. Ջիլիբերտ, Պ. Հնիլա. Վիշապաբարերի հնագիտություն. – Վիշապ քարակոթողները, Երևան, 2015, էջ 277–281 և այլն):

Հեղում փրկարար անձրևներ⁸: Որոտ-կայծակ-ամպրոպ-հորդառատ անձրև քառային իրավիճակին հաջորդում է բնության կենսական ուժերի վերականգնումն ավետող՝ լուսավոր երկնքում Տիրի կապած ծիածանը՝ Տիրական գոտին⁹ որպես զարթոնքի երաշխիք:

Ագաթանգեղոսի ներկայացրած գաղափարական պայքարի այլաբանական դրվագում հիշատակված Տիրի տաճարի քրմական զորքի շքեղ սպառազինությունը (մկոնդ=վահան, ուռն=մուրճ, նիզակ, նետ-աղեղ և քարեր) Տիր աստծու զենք-ծանուցանիշներն են և խորհրդանշում են երկնքի, ամպրոպային շանթառաք աստվածներին բնորոշ հատկանիշներ¹⁰:

«Տիր դնել»՝ «Երաշտից չվախեցող, երաշտի դեմ պայքարող» վաղեմի շարացան նվիրագործված համակարգի¹¹ հովանավոր-աստված Տիրը երաշտ մարմնավորող վիշապի դեմ հավերժ մարտնչող վիշապամարտիկցուն է¹²: Այսեղ ցուլը Տիր աստվածության երկրային մարմնավորումն է, նրա ծանուցանիշը: Ցուլ-եղջյուրներ-լուսին-երկինք և «Տիր դնել»-լուծ-լուծ (մոլորակ)-երկինք իմաստաբանական շարքերն ու գութաներգերում հիշատակվող լծանունների աստեղային (արևտուն, աստղտուն, Կշեռք և այլն) խումբն ակնհայտորեն համադրելի են և բխում են առասպելաբանական ըմբռնողության նույն ակունքից՝ Տիր-երկինք առնչությունից:

Երբեմնի աշխարհընկալման աստեղային պատկերացումներից ժառանգված տվյալների համադրումները՝

– Մերկուրի մոլորակի՝ հայոց մեջ «Լուծ, Փայլածու» անուններով կոչված լինելը,

– նույն մոլորակի՝ միջին իրաներենում Տիր աստծու անունով կոչված լինելը¹³,

– Փայլածու և Տիր բառերի՝ ծագումնաբանորեն նույն հնդեվրոպական *dei- «փայլել» արմատից բխած լինելը՝

Հայկական Փայլածու

Հնդեվրոպական *dei- «փայլել» <իրանական Տիր >Մերկուրի դրսեորում են իմաստաբանական փոխադարձ կապ:

⁸ Տիր-վիշապամարտիկ-ցուլ գործառույթը վերականգնվում է «Զագրոշ» ավանդության տիեզերաստեղծ արարչագործության վաղնջական նկարագրի համեմատական վերլուծությամբ (Ա. Ղ. անալ անյան. նշվ. աշխ., էջ 23, տե՛ս նաև Գ. Գ. Քոչարյան. Տիր/Տիւր աստվածությունը «Հայոց մեծաց» սերնդաշարքում, էջ 137):

Տիածան=«Տիրկան կամ Տիրական գօտի, թերևս Տիր դից ընծայուած» (տե՛ս Ղ. Ալիշան. Հին հավատք կամ հեթանոսական կրոնք հայոց, Վենետիկ, 1895, էջ 119):

¹⁰ Ագաթանգեղոս, էջ 436 (779 ձԼ), մանրամասն տե՛ս նաև Գ. Գ. Քոչարյան. Տիր/Տիւր աստվածությունը «Հայոց մեծաց» սերնդաշարքում, էջ 130–131:

¹¹ Տիր գիցանունով կոչված «տիր դնել» անջրդի հողերի յուրացման վաղեմի միջոց-շարացան համակարգի մասին մանրամասն տե՛ս Վ. Հ. Բողոքան. Երկրագործական մշակույթը Հայաստանում, Երևան, 1972, էջ 251–265, 465–484:

¹² Ա. Ղ. անալ անյան. նշվ. աշխ., էջ 23, Գ. Գ. Քոչարյան. Տիր/Տիւր աստվածությունը «Հայոց մեծաց» սերնդաշարքում, էջ 137:

¹³ Ղ. Ալիշան. նշվ. աշխ., էջ 109–110, տե՛ս նաև L. A. Campbel. Mithraic iconography and ideology. Leiden, 1968, p. 14.

Եթե սրան հավելենք կրոնական սինկրետիզմի շրջանում հայոց մեջ Ապոլոնին և Հերմեսին Տիրի հետ նույնացնելու¹⁴ հանգամանքը և հելենիստական եգիպտոսում Մերկուրի մոլորակի՝ “Ծովածու” (= «Փայլող, Շողացող»), նաև «Ապոլոնի աստղ»=«Հերմեսի աստղ» կոչվելու¹⁵ պարագան, ապա այստեղ ակնհայտ է դառնում դիցաբանական կապ ևս: Մեզանում նաև Լուծ կոչվող սույն մոլորակի՝ միայն արևածագից առաջ և մայրամուտից հետո երկնակամարում հայտնվելը սահմանազատում է երկրագործի աշխատանքային օրվա տիրույթի սկիզբն ու ավարտը, ինչը հավաստում է առնչությունը երկրագործության հովանավոր աստվածության հետ¹⁶:

Հնագիտական նյութի պատկերագրության խորհրդապաշտական ենթատեքստը¹⁷

Դվին ամբող-սրբավայրի մ. թ. ա. III հազարամյակի¹⁸ և հատկապես մ. թ. ա. I հազարամյակի սկզբի շերտերում ու դամբարանադաշտում հայո-

¹⁴ Հելինխատական շրջանում Տիրք համարվել է Ապոլոն և Հերմես աստվածներին. մանրամասն տես Ս. Հարությունյան. Հայ առասպելաբանություն, Բեյրութ, 2000, էջ 156–158, 405–408:

¹⁵ Б. Ван-дер-Варден. Пробуждающаяся наука: рождение астрономии. М., 1991, с. 194, 198.

¹⁶ Մերկուրի մղորդակը «Հին ու նոր ազգային կոչմամբ» Լուծ ապա՝ Փայլածու անուններով է հայտնի (տե՛ս Ղ. Ալիշ ան. նշվ. աշխ., էջ 109): Հստ մեզ՝ «Փայլածու» անունը, ամենայն հավանականությամբ, նախորդել է «Լուծ» անվանը, քանի որ բրիչային երկրագործությանը հաջորդած շրջանում միայն հնարավոր էր լուծ ունենալ, ապա և «Լուծ» կոչել երկրագործության հովանակոր աստծուն վերագրվող մղորդակը:

¹⁸ Վաղբըրոնց զեղապայան հուշարձաններում ծիսական արարողությունների համընդհանուր սրբատեղի առկայության իրողությունից ելնելով՝ հնարավոր է Դիմինում ևս ենթադրել առկա ընտանեկան սրբարաններից (օջախներ, թուչնազարդ հենակներ և այլն) զատ, այդորինակ համընդհանուր սրբատեղի գոյություն (հմմտ. Մոփրաբլուր, Հառիճ, Ջրահովիտ, Շենգավիթ և այլն. տե՛ս Կ. Խ. Կյանքը և աշխատանքը՝ 41–42, է. Վ. Խանզադյան). Ջրահովիտի պեղումների արդյունքները՝ Հայաստանի հանրապետությունում 1989–1990 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջանի գեկուցումների

Նաբերված Հնագիտական նյութի (մեկ տասնյակ սրբարաններ, պատկերազարդ կավե զոհարաններ, ծիսական խեցանոթներ, կուռքեր, նախնիների պաշտամունքին առնչվող մահարձաններ) համեմատական վերլուծությամբ բացահայտված ժամանակի բնապաշտական աշխարհայեցողության պատկերը բազմաթիվ համեմատելի եղբեր ունի վերականգնված Տիրի պաշտամունքի նկարագրի հետ: Ըստ Հնդեվրոպական առասպելաբանական տուտեմական-աստեղային պատկերացումների՝ առկա նյութի պատկերագրության խորհրդանշան-գաղափարագրերը՝ ոճավորված կենդանիների (ցուլ, խոյ, այծ, եղջերու, շուն, թոչուն, օձ, ձուկ և այլն) իմաստաբանական շարքերը համակցված երկնային լուսատուների, սրբացված լեռների, երկնային ու երկրային ջրերի հետ, իրենց ենթատեքստում արտացոլում են ամպրոպակայծակնային տարերք, արգասապեր անձրևներ, նույնանում ամենալայն առումներով արագասապորության-պտղաբերության գաղափարի հետ: Տիեզերաբանական եռաստիճան ըմբռնումների այս խորհրդապաշտական դրսեղություններում առասպելաբանական բնույթի ստորեկրյայք-երկիր-երկինք, ծնունդ-մահ-վերածնունդ պարբերաշրջանի իմաստային կապը վերականգնվում է երկնային լուսատուների լուսնի կրկնվող փուլային և արևի պարբերական շրջապտույտների հայեցակարգով պայմանավորված: Նման աշխարհնկալման մեջ՝ կյանքի հարատեսության և դրա անընդմեջ նորոգման ըմբռնումներում ակնհայտ է դառնում լուսավոր երկնքի առանցքային դերն իր բնածին, կենսական լույսի պաշտամունքի գաղափարով:

Տիր-Ապոլոն-Միթրա լուսակիր եռյակը

Տիր աստվածության մասին Ագաթանգեղոսի հայտնածր վերաբերում է Հայոց դարձի նախօրեին, այսինքն՝ մ. թ. I դարերին, երբ Տիրը, ժամանակի ընթացքում գերազույն աստվածների սերնդափոխությամբ պայմանավորված, վաղուց արդեն զիջել էր գերագույն աստծու իր դերը¹⁹: Գրողի՝ մեռյալների հոգիներն անդրաշխարհ ուղղելով, վաղնջական քտոնիկ գործառույթով հանդերձ Տիրը պահպանել էր ամենամնայունն ու կարեղը իմացական լույսի՝ ուսման և դպրության, ավանդական գուշակ-երազահանի, ճակատագիր որոշող-տնօրինողի, բազում շնորհներ պարզեղող-հովանավորողի հատկանիշները:

Հելլենիստական ժամանակաշրջանին բնորոշ կրոնական սինկրետիկ խառնաշշփոթում՝ փոքրասիական հնագույն ծագում ունեցող լույսի աստվածություն «Լույ-Եւնի» (= «Լուսածին»), «Փօթօչ» (= «Լուսափայլ») հունական Ապոլոնը²⁰ նույնացվեց Տիրի հետ: Փոքր Ասիայից Հայոց աշխարհ բերված (նաև՝ Արմավիր-Սոսյաց անտառ, ապա Բագարան-Ծննդոց անտառ

¹⁹ Թեզիսներ, Երևան, 1991, էջ 11–12, Հ. Ս ի մ ո ն յ ա ն. Շենգավիթ. շարքային բնակավայր, թե՝ վաղ քաղաք.- «Հուշարձան» (Երևան), 2013, հ. 8, էջ 20–34:

²⁰ Դիցարանում՝ Տիր աստվածության ունեցած տեղի, դերի և հատկանիշների կրած աստիճանական փոփոխության ընթացքի մասին մանրամասն տես՝ Գ. Գ. Քոչարյան. Տիր/Տիւր աստվածությունը «Հայոց մեծաց» սերնդաշարքում, էջ 139–141:

²¹ Г е р о д о т. История в девяти книгах, пер. и примеч. Г. А. Стратановского. Л., 1972, I, 91, IV, 35, 155; տես՝ նաև А. Ф. Лосев. Античная мифология в ее историческом развитии. М., 1957, с. 270, 297.

պաշտամունքային համալիրներում կանգնեցված) Ապոլոնի պղնձաձույլ, ոսկեզօծ արձանն Արտաշես Առաջինը (մ.թ.ա. 180–160 թթ.) փոխադրեց և կանգնեցրեց նորակերտ Արտաշատ մայրաքաղաքից գուրս «Հուպի ի ճանապարհն»²¹, որտեղ վաղուց ի վեր կար Տիրի և Ապոլոնի դիցաբանական կերպարներն ընդհանրացնող (լույսի ու բնության տարերքի, ճակատագիր տնօրինողի, արհեստներ և արվեստներ հովանավոր-շնորհներ պարգևողի, աստվածների կամքը հայտնող-պատգամախոսի) հատկանիշներով պաշտամունքի հայրենի հնավանդ սրբավայր, նվիրական պուրակներ, պաշտվող ծառեր, այն է՝ «Երազամույն տեղերն» իր կաղնուուտ-պատգամախոսարաններով և Տիրի տաճարով²²: Նման դիցանվեր անտառ-պուրակներով էին հոչակամ Ապոլոնի փոքրասիական պատգամախոսարան-սրբավայրերը՝ Դրդեմեն՝ Միկետի մոտ, Կարոսը՝ Կոլոփոնի մոտ, Պատարան Լյուկիայում և այլուր²³: Պատգամախոս Ապոլոնի փոխառնչությունը հատկապես կաղնուուտների պաշտամունքի հետ վկայում է նրա հայտնի «Դրիմա» (=«Կաղնու»)²⁴ մականունը:

Հարկ է նշել, որ IV դ. 30-ականներին Խոսրով Կոտակը, այս նվիրական կաղնուուտներն ընդգրկելով, հիմնեց իր լայնատարած անտառները և սրանցից մեկը կոչեց «Տաճար մայրի»=«Կաղնու տաճար», որը բնապաշտական հնավանդ աշխարհայեցողության ակնհայտ դրսեորում էր²⁵:

Բազմաշերտ Դվին ամրոց-սրբավայրի տևական գոյության ընթացքում ուրվագծվում է ևս մի ժամանակահատված՝ մ.թ. II դ. 60-ական թվականները, երբ Հայաստանը բռնազավթած հռոմեացիները երկրի հռոմեականացման նպատակով տեղի ավանդապահ սրբավայրերում արմատավորում էին կրոնական գաղափարախոսություն ու մշակույթը²⁶: Հռոմեական բանակի Դվինում հիմնած բենեֆիցիարիուսների ուղեցույցուղեկալ պահակակետը (statio) տեղի սրբավայրի հետ կազմում էր մի ամբողջություն, որտեղ և դրվել է կայսերական շրջանին բնորոշ՝ Միթրայի՝ ցլի հետ մենամարտի տեսարանի բարձրաքանդակ-խորհրդապատկերներով բազալտե զոհասեղան²⁷:

²¹ Մովսես Խորենացի. Հայոց պատմություն, թարգմ., ներած. և ծանոթ. Ստ. Մալխասյանի, Երևան, 1990, II, ԺԲ, Խ, Խթ:

²² Հայկական Տիր/Տիրը տիեզերական ծառ=կաղնի-սրբազնն ծառ դիցաբանական ընկալումների մասին տես Գ. Քոչարյան. Դվին ամրոց-սրբավայրը Հայոց դարձի նախօրեին, էջ 291–293, հին հնդեվրոպական ավանդույթներում կաղնուուտ-պատգամախոսարանների վերաբերյալ նույնի՝ «Տաճար մայրի» կաղնետունկ անտառապուրակ.-«Հանդէս ամսօրեայ» (Վիեննա-Երևան), 2004, թիւ 1–12, էջ 415–428:

²³ Տե՛ս Պավսանի. Описание Эллады или путешествие по Греции во II веке по р. Х. СПб., 1887–1889, VII, 2, 6, 3, 1, 5, 11, 21, 11–13 և այլն:

²⁴ Ա. Փօսեւ. Նշվ. աշխ., էջ 273:

²⁵ Մանրամասն տե՛ս Գ. Քոչարյան. «Տաճար մայրի» կաղնետունկ անտառապուրակ, էջ 417–418:

²⁶ Գ. Քոչարյան. Դվինը վաղ Արշակունյաց շրջանում (Ուրվագծման փորձ).– ՊԲՀ, 2002, № 3, էջ 212:

²⁷ Արևմտյան միթրայիզմին բնորոշ պատկերագրությամբ կերտված զոհասեղանի խորհրդապատկերների՝ Միթրա-արե-ագուավ-ցուլ-կարիճ իմաստարանական շղթայի մասին տես նույն տեղում, էջ 208–209 (հմմտ. Միդոնի մ.թ. II դ. երկրորդ կեսի և հատկապես Հռոմի ոչ ուշ, քան 172 թ. բարձրաքանդակնե-

Հռոմեական պաշտոնական դիցարանի «ռոմանականացված» արևելյան աստվածությունների՝ Կիբելեի, Սերապիսի, Իսիդայի և այլոց թվում առանձնանում է «Հավերժական», «Անհաղթ» դիցամարտիկ “Sol Invictus” (= «Արևանապարտելի») Միթրա-Միհրի պաշտամունքը: Միթրան ազատարար մարտիկ էր, մահկանացուների ուղեկից, աջակից և օգնական, միշտ չարի դեմ պայքարող, ճշմարտության, լույսի ու արդարության հովանավոր և պաշտպան: Միթրան փրկիչ էր: Հայոց Արենեակի և երկնային լույսի աստված Արեգ-Միհրն ունեցել է արևային, ուազմի, երկրային բարիքների արարչագործության, փրկչաբանական գործառույթներ, որոնց հիշատակները պահպանվել են «Սասնա ծոեր» հերոսավեափ Հնագույն շերտերում Միհր[<]Մհեր՝ Մեծ Մհեր և Փոքր Մհեր առասպելագիցաբանական կերպարներում²⁸:

Դիմին սրբավայրում զուգամիտում են Տիրի և Միթրա-Միհրի երկնային լույսի, ուազմի, բարիքների արարջի պաշտամունքային հատկանիշները: Իրավամբ, համեմատելի են՝ արդասավորության-պտղաբերության հայոց հովանավոր-աստծու Տիրի²⁹ և նոր բեղմնավոր կյանք կերտող հռոմեական Միթրայի³⁰ արարչական գործառույթները: Սրանից զատ, հելլենիստական ժամանակներից ի վեր՝ հայոց կրոնապաշտամունքային միջավայրում հայունի էին Տիր-Ապոլոն և Ապոլոն-Միթրա³¹ համազրությունները, ուստի նման պարագայում միանգամայն օրինաչափ էր Տիր-Ապոլոն-Միթրա լուսակիր, լուսահորդ եռյակի համատեղումը Երազամույն տեղեր-Դիվին հինավորյա սրբավայրում:

Հայոց հոգենոր երգերում, մասնավորապես՝ շարականներում առկա լուսերգության և լուսապաշտության հարուստ ու բազմազան մոտիվներում, ակնհայտ են միհրապաշտության հիշատակներ՝

Սրբավայրի հետագա զարդացման ուղեգիծը

Հայոց դարձից հետո IV դարի այս նույն սրբավայրում կառուցվեց Սբ. Գրիգոր Լուսավորիչ կաթողիկե եկեղեցին՝ կործանված հեթանոսական

ըր. տե՛ս L. A. Campbell. Նշվ. աշխ., էջ 25–28, աղ. V, 75, XV, 650, նաև՝ Գ. Քոչարյան. Անտիկ Դիմինը ամրոց-սրբավայրից արքայանիստ քաղաք-«Բանբեր Հայագիտության», 2014, № 1, էջ 33–34):

²⁸ Մանրամասն տե՛ս Սասնա ծոեր (աշխատ.՝ Ս. Հարությունյանի), Երևան, 1977, էջ 636–639, նաև նույնի՝ Հին Հայոց հավատալիքները, կրոնը, պաշտամունքն ու դիցարանը, Երևան, 2001, էջ 38–41, Ա. Պետրոսյան. Արմանական էպոս և միֆոլոգիա: истоки, миф и история. Ереван, 2002, с. 98–99, 131 և այլն:

²⁹ Գ. Գ. Քոչարյան. Տիր/Տիւր աստվածությունը «Հայոց մեծաց» սերնդաշարքում, էջ 132–134:

³⁰ Համ դիցարանական ափանության՝ Միթրայի դաշունահարած ցլի ողնուղեղից ժայթքում է ցորենի համկը, արյունից՝ գինին և երկրային այլ բարիքներ (F. Cumont. Die Mysterien des Mithra. Leipzig, 1911, S. 120–122):

³¹ Ապոլոն-Միթրա դիցարանական զույգը մեզանում տե՛ս Ս. Կրկշարյան. Հին Հայաստանի և Փոքր Ասիայի քաղաքների պատմության դրագներ, Երևան, 1970, էջ 136–137, Գ. Տիրազյան. Вопросы преемственности официального культа в античной Армении.– «Вестник общественных наук» АН АрмССР, 1985, № 10, с. 58–61.

³² Մ. Աբեղյան. Երկեր, հ. Գ, Երևան, 1968, էջ 555–559:

տաճարի քարերով³³: Տեղի ընտրությամ հարցում, անկասկած, վճռորոշ դեր է խաղացել այս սրբավայրի լուսածին, լուսատեղ աստվածային զորության դրսերումների ընդհանրությունը՝ Լուսավորչին վերագրվող հիմնական հատկանիշների հետ: Ի սկզբանե լուսավոր երկնքի անսքող, երևելի՝ լույս կրող Տիր/Տիւր աստվածությունը Հայոց դարձի նախօրեին մնում էր Հոգու-մտքի աստվածային իմաստությամբ սքողված, աներեւույթ լույսի կրողն ու տարածողը: Այս հանգամանքը հնարավոր դարձրեց աստվածային պատգամների լույսով մարդկանց հոգիները լուսավորողի հիշատակը հավերժացնող Սուրբ Գրիգոր կաթողիկե եկեղեցին նույն Երազամույն տեղեր-Դիմին սրբավայրում (բացառված չէ, ճիշտ Տիրի տաճարի տեղում) հիմնելը: Ընդ որում, վաղքրիստոնեական եկեղեցու հիմնապատերի շարժածքում հայտնաբերվել են կրկնակի օգտագործված մեծ թվով սրբատաշ քարեր և ճարտարապետական տարրեր:

Եղբակացություն

Հնդեվրոպական մշակութային տիրույթում Հնի *d[հ]eտ- = «քնակավայր բարձունքի վրա» իմաստային բանաձևին համապատասխանող տեղանունների լայնատարած ցանցում առանձնանում է Դուխն-Դրւին-Դիմին տեղանվանը լիովին համարժեք կելտական Լուգունում (Լացւանստ=Լուգի ամրոց)՝ «ամրոց-սրբավայր բարձունքի վրա» ենթախումբը³⁴: Լուգունում տեղանվան Լուգ (գալ. Լաց, իուկ. Լաց «փայլող») բաղադրիչը համակելտական՝ լույսի և բոլոր արհեստների հովանավոր աստվածության դիցանունն է³⁵: «Գիտակ», «Իմաստուն» Լուգն իր հատկանիշներով նույնանում է հայկական Տիր (լույսի, դպրության, գիտության և արվեստի) աստծու դիցաբանական կերպարի հետ: Այսպիսով, հնդեվրոպական դիցաբանության աստվածությունների կերպարային աղերսների համեմատական վերլուծությամբ՝ Տիր-Դուխն և Լացւանստ տեղանունների ենթատեքստում բացահայտվում են լույս-տեսանելի ու լույս-իմացական պաշտամունքային-գաղափարական ընդհանրություններ:

Աշխարհնկալման ընդլայնմանը համընթաց փոխվում էին հավատալիքների ծիսական դրսերումները, հավելվում նոր պատումներ, հին աստվածներին վերագրվում նոր հատկանիշներ, տրվում նոր անուններ, նույնացվում օտարամուտ աստվածությունների հետ, ավելին՝ նոյնիսկ փոխա-

³³ 1950-ականներին Կարո Ղաֆաղարյանը նախնական դիտարկումներով եղբակացրել է, որ Սուրբ Գրիգոր կաթողիկե եկեղեցին սկզբնապես կառուցված է եղել դեռևս հեթանոսության շրջանում իբրև մեհյան և Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հայտարարվելուց հետո վերածվել է եկեղեցու (մանրամասն տե՛ս Կ. Ղաֆաղարյան. Դիմին քաղաքը և նրա պեղումները, հ. 1, Երևան, 1952, էջ 88–95): Խնդիրն այժմ էլ հետազոտության ենթացքում է:

³⁴ Լացւանստ=Լուգի ամրոց՝ ա) այժմ՝ Լիոն, հնավայրը՝ Սոն գետի ափին, բ) հնավայր Գարոն գետի վերին հոսանքում (Ֆրանսիա) և գ) այժմ՝ Լեյդեն, Հոլենդիա գելտայում (Նիդերլանդներ): Դնո, մասնաւոր բաղադրիչը կազմված տեղանունների և «ամրոց-սրբավայր բարձունքի վրա» ենթախմբի մասին մանրամասն տե՛ս Գ. Գ. Քոչարյան. Դիմին տեղանվան վաղեմության հարցը, էջ 132–138:

³⁵ Ирландские саги, пер. и comment. А. А. Смирнова. Л., 1929, с. 39.

ըինվում նոր հավատքի՝ միաստվածության սրբերով, սակայն սրանք բոլորն էլ վերաբերում են արտաքին երևութական կողմին, մինչդեռ սրբավայրին վերագրվող զորության ավանդույթը տևականորեն մնայուն է:

Ո՞րն է դեռևս հազարամյակների խորքում Դիլին բազմաշերտ սրբավայրին վերագրված աստվածային զորության այն հիմնական գաղափարը, այն «խորին խորհուրդը», որ շարունակական է աշխարհայեցողության բնականոն և նույնիսկ բեկումնային զարգացման ընթացքի պարագայում անդամ։ Դիլին սրբավայրի գոյատեսումը պայմանավորված է լույսի պաշտամունքով՝ նախ լույսի կենսական, ապա և հոգևոր պահանջի անհրաժեշտությամբ, լույս՝ որպես այդպիսին ընկալելուց մինչև միտքն ու հոգին լույսով սնելու անհրաժեշտության մշտնջենականությամբ՝ ժամանակի տևական հոլովութիւնով։

Ի վերջո, Դիլին սրբավայրի գոյատեսումը պայմանավորված է մարդու աշխարհընկալման զարգացման ընթացքում լույսի պաշտամունքի անընդմեջ պահպանողական տևականությամբ։

Գայանե Քոչարյան – պ. գ. թ., ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Հին Հայատանի Հնագիտության բաժնի ավագ գիտաշխատող։ Գիտական Հետաքրրությունները՝ Դիլինը անտիկ ժամանակաշրջանում, պատմահնագիտական Հետազոտություններ, նյութական և հոգևոր մշակութային գործընթացների մեկնություններ։ Համահեղինակ է 1 գրքի, Հեղինակ՝ 1 մենագրության և շուրջ 50 հոգվածի։ vruyr 2001@yahoo.com

REFERENCES

- Abeghyan M. Erker, h. G, Yerevan, 1968 (In Armenian).
- Agatangeghay Patmutivn Hayots, knnakan bnagire G. Ter-Mkrtyani yev S. Kanayantsi, ashkharhabar targm. yev dzanot. A. N. Ter-Ghevondyan, Yerevan, 1983 (In Armenian).
- Aghayan E. Aknarkner hayots tomarneri patmutyan, Yerevan, 1986 (In Armenian).
- Alishan Gh. Hin havatk kam hetanosakan kronk hayots, Venetik, 1895 (In Armenian).
- Areshyan G. E. Indoevropeskiy siuzhet v mifologii naseleniya mezhdurech'ya Kury i Araksa II tysyacheletiya do n. e. – “Vestnik drevney istorii”, 1988, № 4 (In Russian).
- Bdoyan V. H. Yerkragortsakan mshakuyte Hayastanum, Yerevan, 1972 (In Armenian).
- Bobokhyan A., Djilibert A., Hnila P. Vishapakareri hnagitutyun. – Vishap karakotokgnere, Yerevan, 2015 (In Armenian).
- Campbell L. A. Mithraic iconography and ideology. Leiden, 1968.
- Cumont Fr. Die Mysterien des Mithra. Leipzig, 1911.
- Diumezil' Zh. Verkhovnye bogi indoeuropeytsev. M., 1986 (In Russian).
- Djahukyan G. B. Lezvakan nor tvyalner hayots nakhakristoneakan kroni yev havatalikneri masin. – PBH, 1992, № 1 (In Armenian).

- Gerodot. Istorija v devyati knigakh, per. i prumech. G. A. Stratanovskogo. L., 1972 (In Russian).
- Ghafadaryan K. Dvin kaghake yev nra peghumnere, h. 1, Yerevan, 1952 (In Armenian).
- Ghanalanyan A. Avandapatum, Yerevan, 1969 (In Armenian).
- Harutyunyan S. Hay araspelabanutyun, Beirut, 2000 (In Armenian).
- Harutyunyan S. Hin hayots havataliknere, krone, pashtamunkn u ditsarane, Yerevan, 2001 (In Armenian).
- Irlandske sagi, per. i kommentarii A. A. Smirnova. L., 1929 (In Russian).
- Ivanov V. V., Toporov V. N. Issledovaniya v oblasti slavyanskikh drevnostey. M., 1974 (In Russian).
- Kalantaryan A., Piliposyan A. Dvini glanadzev patvandannere. – Hanrapetakan gitakan nstashrdjan nvirvats 1990–1994 tt. azgagrakan yev banagitakan hetazotutiunneri ardiunknerin, Yerevan, 1995 (In Armenian).
- Khanzadyan E. V. Djrahovti peghumneri ardyunknere. – Hayastani hanrapetutyunum 1989–1990 tt. dashtayin hnagitakan ashkhatkankneri ardyunknerin nvirvats gitakan nstashrdjani zekutsumneri tezisner, Yerevan, 1991 (In Armenian).
- Kocharyan G. G. Artahaytchamidjotsneri vojabanakan verludsutyamb tvagrmam pordz. –Ashtanak, B, Yerevan, 1998 (In Armenian).
- Kocharyan G. G. Dvin teghanvan vaghemutyan hartse. – HH GAA “Lraber hasarakakan gitutiunneri”, 2000, № 2 (In Armenian).
- Kocharyan G. Dvin amrots-srbavayre Hayots dardzi nakhorein. – Hayots srbere yev srbabayrere, Yerevan, 2001 (In Armenian).
- Kocharyan G. Dvine vagh Arshakunyats shrdjanum. – (Urvagdsman pordz). –PBH, 2002, № 3 (In Armenian).
- Kocharyan G. “Tajar mayri” kaghnetunk antarapurak. – “Handes amsoreay” (Vienna–Yerevan), 2004, tiv 1–12 (In Armenian).
- Kocharyan G. G. Tir/Tivr astvadsutyune “Hayots medsats” serndasharkum. – HH GAA “Lraber hasarakakan gitutiunneri”, 2005, № 1 (In Armenian).
- Kocharyan G. G. Dvini mahardzani patkeragrutyune teghekatu vaveragir. – “Nor azgagrakan handes” (Yerevan), A, 2005 (In Armenian).
- Kocharyan G. Antik Dvine amrots-srbavayrits arkayanist kaghak. – “Banber hayagtitutian”, 2014, № 1 (In Armenian).
- Kocharyan G. Dvini kentronakan taghamasi antik sherti bnutagire. – HH GAA “Lraber hasarakakan gitutiunneri”, 2019, № 1 (In Armenian).
- Krkiasharyan S. M. Hin Hayastani yev Pokr Asiayi kaghakneri patmutian drvagner, Yerevan, 1970 (In Armenian).
- Kushnareva K. Kh. Drevneyshie pamyatniki Dvina. Yerevan, 1977 (In Russian).
- Losev A. F. Antichnaya mifologiya v ee istoricheskem razvitiu. M., 1957 (In Russian).
- Martirosyan H. A. Hayastani nakhnadaryan nshanagrere yev nrants urarta–haykakan krknaknere, Yerevan, 1973 (In Armenian).
- Movses Khorenatsi. Hayots patmutiun, targm. nerads. yev dsanot. St. Malkhasyan, Yerevan, 1990 (In Armenian).

- Pavsanij. Opisanie Ellady ili puteshestvie po Gretsii vo II veke po r. Kh. SPb., 1887–1889 (In Russian).
- Petrosyan A. Armyanskiy epos i mifologiya: istoki, mif i istoriya. Yerevan, 2002 (In Russian).
- Sasna dsrer (ashkhat.' S. Harutyunyan), Yerevan, 1977 (In Armenian).
- Simonyan H. Shengavit. sharkain bnakavayr, te vagh kaghak? – “Hushardzan” (Yerevan), 2013, h. 8 (In Armenian).
- Tiratsyan G. Voprosy preemstvennosti ofitsial'nogo kul'ta v antichnoy Armenii. – “Vestnik obshchestvennykh nauk” AN ArmSSR, 1985, № 10 (In Russian).
- Van-der-Varden B. Probuzhdayushchayasya nauka: rozhdenie astronomii. M., 1991 (In Russian).

ВЕЧНЫЙ ЗАВЕТ КРЕПОСТИ-СВЯТИЛИЩА ДВИН

ГАЯНЭ КОЧАРЯН

Р е з ю м е

Ключевые слова: многослойное городище Двин, традиционное святилище, мироуспокаивающие восприятия, религиозный синкретизм, светоносная триада Тир-Аполлон-Митра, Св. Григорий Просветитель, вечный завет, культ света.

Сравнительный анализ результатов исследования письменных и археологических источников, а также сопоставление данных мифологии и этнографии выявляют культовый завет крепости-святилища Двин. Находящееся у магистральной дороги Вагаршапат–Арташат многослойное традиционное святилище Двин и прорицалище-оракул Еразамуйн (по свидетельству историка V века Агатангелоса, посвященное богу Тиру) выступают в виде взаимосвязанного культового комплекса. В античный период, в условиях религиозного синкретизма, здесь наблюдается кульп покровителей света в виде почитаемой светоносной триады Тир-Аполлон-Митра. Это обстоятельство позволяет предположить, что в IV в. н. э. в Двине Кафедральный собор духовного просветителя христианства Св. Григория (Лусаворич) был воздвигнут на месте языческого храма Тира. То есть, наглядно проявляется кульп наущенного, а также духовного света как вечный завет – идеальная основа продолжительного течения времени существования святилища Двин. Следует подчеркнуть, что в кладках фундамента раннехристианского собора Св. Григория Просветителя зафиксировано множество гладко тесаных камней и античных архитектурных элементов вторичного использования.

Гаянэ Кочарян – к. и. н., старший научный сотрудник отдела археологии Древней Армении Института археологии и этнографии НАН РА. Научные

интересы: *Двин в античный период, историко-археологические исследования, выявление материальных и духовных культурных процессов. Соавтор 1 книги, автор 1 монографии и около 50 статей.* vruyr2001@yahoo.com

THE ETERNAL SACRAMENT OF DVIN FORTRESS-SANCTUARY

GAYANE KOCHARYAN

S u m m a r y

Key words: multilayer site Dvin, traditional sanctuary, world-view perceptions, religious syncretization, luminous triad Tir-Apollo-Mithra, St. Gregory the Illuminator, eternal sacrament, cult of light.

The comparative analysis of the results of investigations based on archaeological and written sources, as well as the new data of mythology and ethnography enable to reveal the cultic sacrament of fortress-sanctuary Dvin. Near the main route Vagharsapat–Artashat the multilayer traditional sanctuary Dvin and the oracle Yerazamuyn (according to Agatangeghos – the historian of the 5th c., – god Tir was worshipped here at the 3rd century BC) were interconnected as a complete cultic complex. In this sanctuary during the Classical period in the actual process of syncretization the cult of the guardian deities of light was manifested in the image of the luminous triad Tir-Apollo-Mithra. This circumstance permit us to suggest, that in the 4th century AD the Cathedral of the spiritual illuminator of Christianity St. Gregory (Lusavorich) was erected in Dvin at the site of the pagan temple of Tir. Thus, the cult of vital, then also of spiritual light is manifested most obviously as the enternal sacrament – ideological basis of continous existence of the sanctuary Dvin. It should be emphasized, that the double use of fine massive stones and the presence of Classical architectural elements is attested in the foundations of Cathedral St. Gregory the Illuminator.

Gayane Kocharyan – Candidate of Sciences in History, Senior Researcher at the Department of Archaeology of Ancient Armenia of the NAS RA Institute of Archaeology and Ethnography. Scientific interests: Dvin of the Classical period, historical and archaeological investigations, research of the material and spiritual cultural processes. Author of 1 monograph, co-author of 1 book and about 50 articles. vruyr 2001@yahoo.com

«Ք. Ա. VII Դ. ճԳՆԱԺԱՄ»-Ը ԵՎ
ՄԱՐԱԿԱՍ ՏԵՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԽՆԴԻՐԸ*

ԵՐՎԱՆԴ ԳՐԵԿՅԱՆ

Բանալի բառեր՝ մարական տերություն, իրանական բարձրավանդակ, Ասորեստան, Ուրարտու, Հնամիջավայր, կլիմայական փոփոխություններ, ճգնաժամ, էթնիկական տեղաշարժեր, ապաբնակեցում:

Նախաբան

Անտիկ շրջանի պատմագիրները Մարաստանը համարում էին ընդարձակ սահմաններով մի թագավորություն, որի արքաներն իշխում էին Հայիս գետից արևելք ընկած «ողջ Ասիա»-յին¹: Մարաստանի ծնունդը նրանք կապում էին Դեյոկեսի անվան հետ և ներկայացնում Փ. ա. VII–VI դդ. իշխած մար արքաների մի ամբողջ ցանկ: Նրանցից Փրաորտեսը՝ Դեյոկեսի որդին, անգամ հավակնում էր ասորեստանյան տարածքներին, իսկ Կյուաքսարեսը՝ Փրաորտեսի որդին, վճռական դեր խաղաց Ասորեստանի կործանման գործում²: Պատմագիրների հաղորդած այս ու այլ տեղեկությունները, ընդունվելով աներկբա, դրվեցին պատմագիտության հիմքում, և ծնվեց աշխարհակալ մարական տերությունը³:

Մինչդեռ այժմ ակնհայտ հակասություններ են առկա անտիկ պատմագրության տվյալների և սեպագիր ու Հնագիտական աղբյուրների միջև, իսկ խնդրի շուրջ քննարկումները շարունակվում են արդեն մի քանի տասնամյակ⁴: Հողվածում փորձ է արվում Առաջավոր Ասիայի հնամի-

* Ներկայացվել է 13. I. 2021 թ., գրախոսվել է 27. I. 2021 թ., ընդունվել է տպագրության 07. IV. 2021 թ.: Հետազոտությունն իրականացվել է ՀՀ գիտության կոմիտեի տրամադրած ֆինանսական աջակցությամբ 20TTSH-005 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

¹ Հերոդոտոս. Պատմություն ինը գրքից, թարգմ. բնագր. և ծանոթ.՝ Ա. Կրկյաշարյանի, Երևան, 1986, էջ 56–57 (Գիրք I, 130):

² Նույն տեղում, էջ 45–47 (Գիրք I, 102–103, 106):

³ Տե՛ս, օրինակ, Ի. Մ. Դյակոնով. История Мидии от древнейших времен до конца IV века до н. э. М.–Л., 1956; I. M. D i a k o n o f f. Media. – The Cambridge History of Iran, vol. 2: The Median and Achaemenian Periods, edited by I. Gershevitch. Cambridge, 1985, pp. 36–148; И. Н. М е д в е д с к а я. Древний Иран накануне империи (IX–VI вв. до н. э.). История Мидийского царства. СПб., 2010. Մարաստանի պատմության համար ամփոփ տե՛ս նաև Ե. Հ. Գրեկյան. Հին Իրան. Մարաստան. – Հայաստանի հարակից երկրների պատմություն, հ. I. Հին շրջան, գլխավոր խմբագիր՝ Ռ. Ա. Սաֆրաստյան, պատասխանատու խմբագիր՝ Ա. Վ. Քոսյան, Երևան, 2013, էջ 261–282:

⁴ Մարաստանի պատմության խնդրահարույց հարցերի քննարկումների համար տե՛ս և Հմմտ., մասնավորապես, H. Sancisi-Weerdenburg. Was there ever a Median Empire?. – Achaemenid History III: Method and Theory

ջավայրը համադրել գրավոր և հնագիտական աղբյուրներով ուրվագծվող միջավայրի հետ մեկ անդամ ևս քննարկելով մարական տերության գոյության հարցը Ք. ա. VII–VI դդ.:

«Ք. ա. VII դ. ճգնաժամ»-ը. աղբյուրագիտական վկայություններ թեև նորասորեստանյան արքաների արձանագրություններն առանձնապես չեն խոսում տնտեսական խնդիրներից, սակայն, պահպանված տվյալները, այնուամենայնիվ, վկայում են Ասորեստանում ի հայտ եկած դժվարությունների մասին։ Մասնավորապես, արդեն Ք. ա. VII դ. սկզբներից ասորեստանյան աղբյուրներում հաճախակի է դառնում ջրի խնդիր արծարծումը։ Այդ առումով առանձնանում են ասորեստանյան արքա Ախուսերիրի (Ք. ա. 705–681 թթ.) թողած արձանագրությունները, որոնք արքայի իրականացրած հսկայածավալ հիդրշինարարական աշխատանքները բացատրում են բնակչության ունեցած ջրի խիստ կարիքով։ Դա տարօդի-

(Proceedings of the London 1985 Achaemenid History Workshop), edited by A. Kuhrt, H. Sancisi-Weerdenburg. Leiden, 1988, pp. 197–212; Continuity of Empire (?). Assyria, Media, Persia (History of the Ancient Near East, Monographs – V), editor-in-chief F. M. Fales. Padova, 2003; C. Tuplin. Medes in Media, Mesopotamia, and Anatolia: Empire, Hegemony, Domination or Illusion?. – “Ancient West & East” (Leiden – Boston), 2004, vol. 3/2, pp. 223–251; B. Genito. The Archaeology of the Median Period: An Outline and a Research Perspective. – “Iranica Antiqua” (Leiden), 2005, vol. 40, pp. 315–340; S. R a z m j o u. In Search of the Lost Median Art. – նույն տեղում, էջ 271–314; J. Curtis. Iron Age Iran and the Transition to the Achaemenid Period. – Birth of the Persian Empire, vol. I, edited by V. S. Curtis and S. Stewart. London, 2005, pp. 118–123; M. Waters. Media and Its Discontents. – “Journal of the American Oriental Society” (Boston), 2005, vol. 125, pp. 517–533; Նույն տեղում՝ Notes on the Medes and Their “Empire” from Her 25.25 to Hdt 1.134. – A Common Cultural Heritage. Studies on Mesopotamia and the Biblical World in Honor of Barry L. Eichler, edited by G. Frame, E. Leichty, K. Sonik, J. H. Tigay, S. Tinney. Maryland, 2011, pp. 243–253; R. Rollinger. Das medische Königtum und die medische Suprematie im sechsten Jahrhundert v. Chr. – Concepts of Kingship in Antiquity. Proceedings of the European Science Foundation Exploratory Workshop, held in Padova, November 28th – December 1st, 2007 (History of Ancient Near East, Monographs – XI), edited by G. B. Lanfranchi, R. Rollinger. Padova, 2010, pp. 63–85; Նույն տեղում՝ The Medes of the 7th and 6th c. BCE: A Short-Term Empire or Rather a Short-Term Confederacy?. – Short-Term Empires in World History, edited by R. Rollinger, J. Degen, M. Gehler. Wiesbaden, 2020, pp. 189–213; D. Stronach. The Territorial Limits of Ancient Media: an Architectural Perspective. – Stories of Long Ago: Festschrift für Michael D. Roaf (Alter Orient und Altes Testament, Bd. 397), edited by H. Baker, K. Kaniuth and A. Otto. Münster, 2012, pp. 667–684; W. Ball. The End of Nūshījān. – նույն տեղում, էջ 11–23, K. Radner. Assyria and the Medes. – The Oxford Handbook of Ancient Iran, edited by D. T. Potts. Oxford, 2013, pp. 453–454.

⁵ Տե՛ս, օրինակ, A. K. Grayson, J. Novotny. The Royal Inscriptions of Sennacherib, King of Assyria (704–681 BC). Part 2 (Royal Inscriptions of the Neo-Assyrian Period 3/2). Winona Lake, 2014, p. 313 (no. 233, 5b–7).

նակ է թվում, եթե հաշվի առնենք, որ ասորեստանյան միջնաշխարհն ընկած է բնական տեղումների այնպիսի նշագծում (տարեկան մոտ 400 մմ), որը թույլ է տալիս զբաղվելու երկրագործությամբ՝ առանց արհեստական ոռոգման դիմելու⁶: Ասորեստանյան արքան ստիպված էր կառուցել ու անցկացնել ջրանցքների, ամբարտակների և թունելների բարդ համակարգ՝ մայրաքաղաք Նինվե ջուր հասցնելով շուրջ 150 կմ հեռավորությունից: Արևաշխերի իշխանության շրջանում քյահրիզների, շաղուժների և տեխնիկական այլ «նորարարություններ»-ի հայտ գալը ևս վկայում է երկրում ջրի խնդրի գոյության մասին: Առանց շաղուժների կիրառության, օրինակ, հնարավոր չէր ջուր հայթայժել խորը հունով հոսող Տիգրիս գետից, ինչի անհրաժեշտությունը նախկինում չէր զգացվում⁷:

Այս շրջանով թվագրվող գուշակային բնույթի տեքստերի թվում հաճախ են հանդիպում սպասվելիք բերքի մասին հարցումները: Դրանցից մեկում, օրինակ, ասվում է. «Եթե Արուսյակն անհետանա արևմուտքում Աբ (V) ամսին՝ առաջին օրից մինչև 30-րդ օրը, – անձրեներ կտեղան, երկրի բերքն առատ կլինի»⁸:

Նման բնույթի տասնյակ գուշակությունների հուսադրող պատասխաններին հակառակ՝ որոշ տեքստեր ուղղակի վկայում են երկրում տիրող երաշտի, բերքի կորստի, սովի և համաճարակների մասին⁹: Ասորեստանյան արքա Աշուրբանիպալին (Ք. ա. 669–630 թթ), Ք. ա. 657 թ. ուղղված Աշշուր աստծո գլխավոր տաճարի քուրմ և աստղագետ Ակկուլանուի մի զեկույցում նկարագրվում է. «Եվ կապված անձրևների հետ, որոնք այնքան քիչ էին այս տարի, որ որևէ բերք չհավաքվեց, ...»¹⁰:

Տարօրինակ չէ, որ Ք. ա. VII դ. կեսերին գարու համար անսովոր բարձր գներ են նշվում ասորեստանյան աղբյուրներում¹¹: Մասնավորապես,

⁶ A. M. Bagg. Irrigation in Northern Mesopotamia: Water for the Assyrian Capitals (12th–7th centuries B. C.). – “Irrigation and Drainage Systems” (Berlin – Heidelberg), 2000, vol. 14, pp. 303–304, Fig. 2.

⁷ A. Tamburri. Water Technology in Ancient Mesopotamia. – Ancient Water Technologies, Dordrecht – Heidelberg – London – New York, 2010, pp. 36–38. Տե՛ս և հմտ. նաև՝ Ch. A. Burney. Urartian Irrigation Works. – “Anatolian Studies” (London), 1972, vol. 22, p. 181; S. Dalle. Water Management in Assyria from the Ninth to the Seventh Centuries BC. – “ARAM” (Leuven), 2001–2002, vol. 14, pp. 444–453.

⁸ H. Hungen. Astrological Reports to Assyrian Kings (State Archives of Assyria 8). Helsinki, 1992, p. 56 (no. 96, 1–2).

⁹ A. K. Grayson. The Chronology of the Reign of Ashurbanipal. – “Zeitschrift für Assyriologie und Vorderasiatischer Archäologie” (Berlin – New York), 1980, Bd. 70, S. 234; A. W. Schneider, S. F. Adalı. “No Harvest was Reaped”: Demographic and Climatic Factors in the Decline of the Neo-Assyrian Empire. – “Climatic Change”, 2014, vol. 127/3–4: 435; Առև. նի՛ Further Evidence for a “Late Assyrian Dry Phase” in the Near East during the Mid-to-Late Seventh Century BC?. – “Iraq” (London), vol. 78, pp. 166–168.

¹⁰ Տե՛ս S. Parpolo. Letters from Assyrian and Babylonian Scholars (State Archives of Assyria 10). Helsinki, 1993, p. 77 (no. 100, r. 1–2).

¹¹ Տեքստային հղումների և մեկնաբանության մասին տե՛ս K. Delele. Getreidekursangaben in neuassyrischen Rechtsurkunden. – “Orientalia” NS

առևտրական մի քանի գործարքներից հայտնի է դառնում, որ մեկ սիկդ արծաթը համարժեք էր ընդամենը 10–20 լ գարու այն դեպքում, երբ այդ նույն գումարով նախկինում հնարավոր էր գնել մեկ իշաբեռ (մոտ 180 լ) գարի մայրաքաղաքում և դրա կրկնակին՝ դաշտամերձ գյուղերում¹²: Այլ կերպ ասած՝ գարու գներն աճել էին 18–36 անգամ: Ուշագրավ է, որ սովորաբար ասորեստանյան հպոնիմների կառավարման տարիներով թվագրվող տեքստերը երբեմն թվագրվում են «գոյություն չունեցող տարրով», այսինքն՝ տվյալ տարրում բերք չի եղել: Նման տեքստերը վերաբերում են հատկապես Ք. ա. VII դ. երկրորդ կեսին¹³: Կարիքը բնակչությանը ստիպում էր փոխառությամբ հացահատիկ վերցնել պալատի կամ տաճարների շտեմարաններից՝ բնամթերքով հավելավճար տալու պայմանով: Ընդ որում, հավելավճարը հասնում էր 20–50, երբեմն նաև՝ 100 տոկոսի, նույնքան էլ կազմում էր պարտավորությունները ժամանակին չկատարելու դեպքում սահմանված տուգանքը¹⁴:

Ասորեստանում առեղծված իրավիճակն այս տեսանկյունից դիտարկելիս ամենակին տարօրինակ չի թվում համաժամանակյա տեքստերի հաղորդած անուղղակի տեղեկությունները՝ հասարակ բնակչության շրջանում մահացության աճի մասին¹⁵: Ասորեստանյան ընտանիքների անդամների թիվը միջինում նվազում է մոտ քառասուն տոկոսով (միջինում 4.36 անձ Մինախերիքի օրոք և ընդամենը 2.79 անձ Սինախերիքի իշխանությունից հետո), իսկ ընտանիքների կեսից ավելին ունեին նվազագույն կազմ՝ երկու կամ երեք անդամ¹⁶: Ստեղծված տնտեսական ծանր կացությունը պատճառ է դառնում, որ մարդիկ զանգվածաբար փախչեն երկրագործական շրջաններից: Ընդ որում, մարդկանց զանգվածները ձգտել են հեռանալ դեպի նախալեռնային կամ լեռնային գոտիներ, մասնավորապես՝ դեպի Շուքրիա (Սասունի լեռներ)¹⁷: Աշխատուժի պակասը լրացնելու համար իշխանությունները ստիպված էին երկրագործական աշխատանքներում օգտագործելու անգամ պալատի հետ կազմած տնտեսական անձնակազմը¹⁸: Այդուհանդեմ, երկրագործական հողերի միայն կեսն է հնարավոր եղել մշակել¹⁹:

(Roma), 1964, vol. 33/2–3, pp. 260–261; I. Eph‘al. The City Besieged. Siege and Its Manifestations in the Ancient Near East (Culture and History of the Ancient Near East 36). Leiden – Boston, 2009, pp. 124–127.

¹² K. Radner. Hired Labor in the Neo-Assyrian Empire. – Labor in the Ancient World, edited by P. Steinkeller and M. Hudson. Dresden, 2015, p. 334.

¹³ I. Eph‘al. The City Besieged. Siege and Its Manifestations in the Ancient Near East (Culture and History of the Ancient Near East 36), pp. 126–127, n. 34.

¹⁴ Մանրամասն տե՛ս S. Ponchica. Neo-Assyrian Corn-Loans: Preliminary Notes. – “State Archives of Assyria Bulletin” (Helsinki), 1990, vol. 4/1, pp. 39–60.

¹⁵ G. Galil. The Lower Stratum Families in the Neo-Assyrian Period (Culture and History of the Ancient Near East 27). Leiden, 2007, p. 352.

¹⁶ Նույն տեղում, էջ 346, աղ. 33–34:

¹⁷ Տե՛ս, օրինակ, E. Leichty. The Royal Inscriptions of Esarhaddon, King of Assyria (680–669 BC) (The Royal Inscriptions of the Neo-Assyrian Period 4). Winona Lake, Indiana, 2011, pp. 79–80 (no. 33, Obv.? ii 3).

¹⁸ Տե՛ս, օրինակ, F. M. Fales, J. N. Postgate. Imperial Administrative Records. Part II: Provincial and Military Administration (State Archives of Assyria 11). Helsinki, 1995, pp. 122–127 (nos. 201 I: 32, 41–42, 202 II: 16’–17’).

¹⁹ G. Galil. Նշվ. աշխ., էջ 348:

Տնտեսական ճգնաժամը հաղթահարելու համար Ասորեստանը փորձում է նոր նվաճումների միջոցով մուտք ապահովել հացով առաս շրջաններ։ Դրան էին միտված, մասնավորապես, դեպի Եգիպտոս ձեռնարկված երկու արշավանքները Ք. ա. 674 և 671 թթ., որոնցից երկրորդը, ի վերջո, ավարտվեց Ստորին Եգիպտոսի նվաճումով²⁰։ Ասորեստանյան փախառականներին վերադարձնելու պատրվակով Շուբրիա ձեռնարկված արշավանքը և երկրի նվաճումը Ք. ա. 672 թ., ամենայն հավանականությամբ, կարելի է դիտարկել այս քաղաքականության համատեքստում²¹։

Այս դարաշրջանում Ասորեստանում նկատվում է քաղաքական անկայունության աճ, որի առաջին դրսևորումը Մինախերիքի սպանությունն էր իր ավագ որդիների կողմից և մոտ վեց ամիս տևած քաղաքացիական պատերազմը²²։ Մինախերիքին հաջորդած Ասսարհադոնը (Ք. ա. 680–669 թթ.) մտահոգված էր թե՛ իր և թե՛ գահաժառանդ արքայազնի՝ Աշուրբանհպալի ապագա իշխանության ամրությամբ²³։ Ասորեստանյան արքան փորձում էր հասնել անգամ մանր ցեղապետների լոյալությանը՝ իր և ապագա արքայի հանդեպ։ Այդ մասին կարելի է դատել պայմանականորեն «Հավաստարմության երդում» անվանվող պայմանագրերից, որոնք կնքել են, մի կողմից, ասորեստանյան արքայի և գահաժառանդի, մյուս կողմից՝ տարբեր համայնքների առաջնորդների ու ասորեստանյան բարձրաստիճան պաշտոնյաների միջև²⁴։ Այդուհանդերձ ասորեստանյան արքունիքը չխուսափեց քաղաքական ցնցումներից։ որոշ աղբյուրներ հաղորդում են արքայի դեմ ծրագրված դավադրության մասին²⁵։ Դրա արդյունքի մասին է վկայում բարելոնյան տարեգրության բացառիկ տեղեկությունը՝ Ք. ա. 670 թ. Աս-

²⁰ *Տե՛ս, օրինակ*, I. Eph'a1. Esarhaddon, Egypt, and Shubria: Politics and Propaganda. – “Journal of Cuneiform Studies” (New Haven), 2005, vol. 57, pp. 99–111.

²¹ *Հմմու*. T. Dezsö. Šubria and the Assyrian Empire. – “Acta Antiqua Academiae Scientiarum Hungaricae” (Budapest), 2006, vol. 46, pp. 35–36.

²² J.-J. Glassner. Mesopotamian Chronicles (Writings from the Ancient World 19). Atlanta, 2004, pp. 198–201 (no. 16, ll. 34–35); E. Frahm. The Neo-Assyrian Period (ca. 1000–609 BCE). – A Companion to Assyria, edited by E. Frahm. Malden, MA – Oxford, 2017, p. 186.

²³ I. Starr. Queries to the Sungod. Divination and Politics in Sargonid Assyria (State Archives of Assyria 4). Helsinki, 1990, pp. 148–157 (nos. 139–148).

²⁴ *Համապատասխանաբար տե՛ս* S. Parpolo, K. Watanaabe. Neo-Assyrian Treaties and Loyalty Oaths (State Archives of Assyria 2). Helsinki, 1988, pp. XXIX–XXXI, 28–59 (nos. 6–7); S. Ponchia. The Neo-Assyrian *Adē* Protocol and the Administration of the Empire. – From Source to History: Studies on Ancient Near Eastern Worlds and Beyond, Dedicated to Giovanni Battista Lanfranchi on the Occasion of His 65th Birthday on June 23, 2014 (Alter Orient und Altes Testament 412), edited by S. Gaspa, A. Greco, D. M. Bonacossi, S. Ponchia, R. Rollinger. Münster, 2014, pp. 501–525; J. Lautinger. Essarhaddon’s Succession Treaty at Tell Tayinat: Text and Commentary. – “Journal of Cuneiform Studies” (New Haven) 2012, vol. 64, pp. 87–123.

²⁵ K. Radner. The Trials of Esarhaddon: The Conspiracy of 670 BC. – Assur und sein Umland. Im Andenken an die ersten Ausgräber von Assur (Isimu 6), edited by P. Miglus, J. M. Cordoba. Madrid, 2003, pp. 172–176; E. Frahm. Նշ. աշխ., էջ 187–188:

սարհաղղոնի հրամանով վերնախավի մեծաթիվ անդամների մահապատճի ենթարկելու մասին²⁶: Նրա մահից անմիջապես հետո Նակիայի՝ մայր թագուհու կամքով նորընծա արքա Աշշուրբանապալին հավատարմության երդում տվեցին իր եղբայրները, արքայական ընտանիքի մյուս անդամները և «բոլոր ասորեստանցիները բարձր թե ցածր»²⁷: Գնայած դրան՝ Ք. ա. 650-ականների վերջերը նշանավորվեցին ասորեստանյան արքայի դեմ նոր, բացահայտ ելույթներով²⁸: Դա կարող էր պայմանավորված լինել տնտեսական վատթարացող իրավիճակով: Թե՛ ասորեստանյան, և թե՛ համաժամանակյա բարելոնյան տեքստերը, ինչպես վերը նշվեց, հայտնում են երկրում տիրող երաշտի ու սովոր մասին: Ակասձ՝ Ք. ա. մոտ 630 թ. Ասորեստանին համակած ճգնաժամն արտահայտվեց արդեն քաղաքացիական պատերազմի տեսքով և մի պահ Ասորեստանի տարբեր հատվածներում իշխում էին մի քանի արքաներ՝ չհաշված նրանց, ովքեր հավակնում էին իշխելու: Եվս երկու տասնամյակ անց ասորեստանյան տերությունը դադարում է գոյություն ունենալ²⁹:

Ասորեստանում տիրող ծանր կացությունը բացահայտվում է նաև հնագիտական պեղումների արդյունքում: Պարզվում է, որ կայսրության անկումից որոշ ժամանակ առաջ դեռևս Սին-շարբա-իշկունի օրոք (Ք. ա. 626–612 թթ.), ասորեստանյան իշխանությունները լրացուցիչ ամրացրել են Աշուրի, Նինվեի և Կալխուի պարիսպները, նեղացվել ու ամրակայվել են դարպանները³⁰: Միաժամանակ, սկսել են կուտակել միթերքի հավելյալ պաշտրներ՝ հացահատիկն ամբարելով անգամ դրա համար չնախատեսված վայրերում, օրինակ, Աշուրի Հին Պալատի սրահներում կամ Անու-Աղադ ասովածությունների տաճարում: Հետոաքրքիր է, որ Աշշուրում հայտնաբերված հացահատիկը բավարար էր կերակրելու քաղաքի բնակչությանը մոտ մեկ ամիս³¹: Միաժամանակ, նկատելի է, որ շրջակա բնակչությունը տեղաշարժվել է մայրաքաղաքներ և վարչական խոշոր կենտրոններ՝ թերևս, որպես ապահով վայրեր³²:

²⁶ J.-J. Glassner. Նշվ. աշխ., էջ 202–203 (№ 16, լ. 29):

²⁷ S. Parpolo, K. Watanabe. Նշվ. աշխ., էջ 62–64 (№ 8):

²⁸ A. K. Grayson. The Chronology of the Reign of Ashurbanipal, pp. 233–234.

²⁹ Ասորեստանի պատմության վերջին տարիների մասին ամփոփ տե՛ս E. Frahm. Նշվ. աշխ., էջ 190–193:

³⁰ Համապատասխանաբար տե՛ս D. Pickworth. Excavations at Nineveh: The Halzi Gate. – “Iraq” (London), 2005, vol. 67/1, pp. 298–300, fig. 3, 8, 27; D. B. Stronach, S. Lumsden. UC Berkeley’s excavations at Nineveh. – “Biblical Archaeologist” (New Haven), 1992, vol. 55, pp. 231–232; J. Read. Nineveh (Nineveh). – “Reallexikon der Assyriologie und Vorderasiatischen Archäologie” (Berlin – Leipzig – New York), 2000, Bd. 9/5–6, 401–402, fig. 4; J. Oates, D. Oates. Nimrud: An Assyrian Imperial City Revealed. London, 2001, pp. 148–152, fig. 94.

³¹ P. A. Madius. Die letzten Tage von Assur und die Zeit danach. – “Isimu” (Madrid), 2000 (2003), vol. 3, S. 88–89.

³² Տե՛ս, օրինակ, J. Oates, D. Oates. Նշվ. աշխ., էջ 64–65, D. Stronach. Excavations at Nineveh, 1987. – “Sumer” (Baghdad), 1989–1990, vol. 46, pp. 107–108; J. Mac Ginnis, T. Matney. Archaeology at the Frontiers: Excavating a

Խնդրո առարկա շրջանում ճգնաժամի ակնհայտ, ասորեստանյանի հետ միանգամայն համադրելի վկայությունների ենք հանդիպում նաև Ուրարտուում։ Դրա նախանշանները երևում են դեռևս Ք. ա. VIII դ. վերջ – VII դ. սկիզբ ընկած շրջանում, երբ ուրարտական պետությունը կանգնած էր ջրի պակասի հարուցած խնդիրների առջև։ Դրա հաղթահարմանն ուղղված հիդրոշինարարության վկայությունն են ուրարտական սեպագիր աղբյուրների տեղեկությունները ջրամբարներ կառուցելու մասին։ Ընդ որում, հնագիտորեն վկայված ջրամբարների առնվազն 4/5-րդ մասը կառուցվել է Ք. ա. VIII դարի վերջ – VII դարում, այդ թվում՝ ուրարտական ամենախոչոր երկու ջրամբարները «Մերդան Բողագր»-ն և «Քեշիշ գյոլ»-ը։ Անցկացվում է տասնյակ կմ ձգվող նոր ջրանցքների հսկայական ցանց։ Ի դեպ, այս ժամանակահատվածին են վերաբերում ուրարտական այն արձանագրությունները, որոնցում մեծաքանակ գոհաբերություններ են սահմանվում աստվածների ու լեռների համար՝ ակնկալելով տեղումներ և լիաջուր ջրանցք³³։ Ինչպես երևում է, հին քաղաքները կորցնում են իրենց նշանակությունը, իսկ վարչակազմները փոխադրվում են մատչելի ջրի աղբյուրներին մոտ ընկած տարածքներում հիմնադրված ռազմավարչական նոր կենտրոններ։ Երկրագործության մեջ աճում է երաշտադիմացկուն մշակաբույսերի դերը (ինչպիսին էր, մասնավորապես, կորեկը)։ Պետությունը ջանքեր է գործադրում՝ հացահատիկի լրացուցիչ պաշարներ կրտսակելու։ Դրանով հանդերձ, պարզ է դառնում, որ տերության կործանման նախօրեին պետական շտեմարաններն ու մառանները հիմնականում դատարկ էին, իսկ, հատկապես, հասարակ բնակչությունը տառապել է սովոր և հիվանդություններից³⁴։

Ինչպես Ասորեստանում, Ուրարտուում ևս ականատես ենք լինում մի իրավիճակի, որը բնութագրվում է քաղաքական անկայունությամբ և ռազմական հաջողությունների աղոտ հեռանկարով։ Ուրարտական իշխանության թուլության ակնհայտ վկայություն են այս շրջանում ձեռնարկված պաշտպանական հապշտապ միջոցառումները՝ քաղաքների պարիսպների լրացուցիչ ամրացումներն ու ամրոցներին կից ձեւավորված «արտաքին քաղաքներ»-ի պարապապատման աշխատանքները, որոնք, ի դեպ, մնում են անավարտ, փակվում և փոքրացվում են դարպանները, նկատվում է մեծ քանակությամբ բնակչության ու ընտանի կենդանիների հարկադրված տեղաշարժ դեպի ռազմավարչական կենտրոններ։ Ուրարտուում քաղաքական

Provincial Capital of the Assyrian Empire. – “Journal of Assyrian Academic Studies”, 2009, vol. 23/1, pp. 15–16; P. A. Miglus. Նշվ. աշխ., էջ 90–92 և այլն։

³³ Մանրամասն տե՛ս Y. H. Grekyan. When the Gods Leave People (The climatological hypothesis of the collapse of the Urartian state). – The Black & the White. Studies on History, Archaeology, Mythology and Philology in Honor of Armen Petrosyan on the Occasion of His 65th Birthday. – “Aramazd: Armenian Journal of Near Eastern Studies”, vol. 8/1–2, edited by A. Kosyan, Y. Grekyan, A. Bobokhyan. Yerevan, 2014, pp. 57–94; Ե. Հ. Գրեկյան. Կիմայական փոփոխությունները և Ուրարտական պետության անկումը. – ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 2019, № 2, էջ 35–51։

³⁴ Ե. Հ. Գրեկյան. Կիմայական փոփոխությունները և ուրարտական պետության անկումը, էջ 45–46։

անկայունության դրամորում էր Ռուսա Արգիշտիրդու (Ք. ա. մոտ 680–640-ական թթ.) իշխանության վերջում տեղի ունեցած քաղաքացիական պատերազմը: Դրան զոհ գնաց արքայի հիմնադրած ուրարտական ամենախոշոր կենտրոններից մեկը «Ռուսայի փոքր քաղաք»-ը՝ հյուսիսարևմտյան Իրանում (Բաստամի ուրարտական ամրոցը Կարս Զիա Հեղ-դինի հովտում), որը, ինչպես կարծում են, դրավիել և կործանվել է դեռևս Ռուսայի կենդանության օրոք³⁵: Ինչոր ժամանակ անց այս ամենին հաջորդում է ուրարտական մյուս խոշոր կենտրոնների կործանումն ու տերության անկումը³⁶:

Առաջավոր Ասիայի հնամիջավայրը Ք. ա. VII դարում

Մասնագիտական գրականության մեջ քիչ է ուշադրություն դարձվել քննարկվող դարաշրջանում թե՛ Ասորեատանում, և թե՛, առավել ևս, Ուրարտուում դիտարկվող ներքին ճգնաժամերի բացահայտմանը, և միայն վերջին տարիներին է արծարծվել այս երկրների տնտեսության փլուզմանն ու պետական կառույցների կազմաքանդմանը հանգեցրած գործնթացներում կլիմայական փոփոխությունների հնարավոր դերակատարության հարցը³⁷:

Այսօր արդեն առկա հնակլիմայաբանական և հնաջրագրական ուսումնասիրությունները վկայում են, որ Ք. ա. VII դ. տարածաշրջանն ապրել է իր պատմության չորային, առավել երկարատև փուլերից մեկը: Երաշտը պայմանավորող հիմնական գործոնը, ամենայն հավանականությամբ, արևի ակտիվության նվազումն էր՝ հանգեցնելով երկրագնդի միջին ջերմաստիճանի անկմանը և ծովերի ջրերի ջերմաստիճանի նվազմանը: Դրա արդյունքում խախտվում է օվկիանոսային հոսանքների շրջանառությունը, նվազում է գողորշիացման մակարդակը, ինչն ուղղակի անդրադառնում է տեղումների քանակի վրա, ինչպես նաև հանգեցնում դրանց գոտիականության տեղաշարժերի: Համեմատաբար ցուրտ և չորային պայմանների հաստատումն ուղեկցվում է սառցադաշտերի մակերեսի աճով, ստորգետնյա

³⁵ S. Kroell. Urartus Untergang in anderer Sicht. – “Istanbuler Mitteilungen” (Berlin), 1984, Bd. 34, S. 170; W. Kleiss. Azerbaijan, II – Archaeology. – Encyclopaedia Iranica, edited by E. Yarshater. London – New York, 1989, vol. III, p. 217; P. E. Zimansky. The Kingdom of Urartu in Eastern Anatolia. – Civilizations of the Ancient Near East, edited by J. M. Sasson. New York, 1995, vol. 2, p. 1141.

³⁶ Մանրամասն տե՛ս Y. H. Grekyan. When the Arrows are Depleted (Towards the Fall of the Urartian Empire). – “Aramazd: Armenian Journal of Near Eastern Studies” (Yerevan), 2009, vol. 4/2, pp. 98–126.

³⁷ Y. H. Grekyan. When the Gods Leave People, pp. 57–94; Նույնի՝ կլիմայական փոփոխությունները և ուրարտական պետության անկումը, էջ 35–51, A. W. Schneider, S. F. Adalı. “No Harvest was Reaped”, pp. 435–446; Նույնի՝ Further Evidence for a “Late Assyrian Dry Phase”, pp. 159–174; A. Sinhal, G. Kathayat, H. Weiss, H. Li, H. Cheng, J. Reuter, A. W. Schneider, M. Berkelhammer, S. F. Adalı, L. D. Stott, R. L. Edwards. Role of Climate in the Rise and Fall of the Neo-Assyrian Empire. – “Science Advances” (Washington, DC), vol. 5, 2019, pp. 1–10.

ջրերի մակարդակի բարձրացմամբ ու ճահճացման երևոյթներով, լճերի մակերեսի աճով և այլն³⁸:

Տարածաշրջանի կիմայի վրա ազգող մեկ այլ գործոն է Հյուսիսառլանտյան տատանում անունը ստացած երևոյթը: Այն կարգավորում է Ասլանտյան օվկիանոսի վրա մինոլորտային ճնշման տատանումների արդյունքում ձևավորվող օդային հոսանքների ուղղությունն ու հզորությունը³⁹: Հյուսիսառլանտյան տատանման ազդեցությունը մեծ է նաև Միջագետքը սնուցող ջրի հիմնական աղբյուրների՝ Հայկական լեռնաշխարհից սկիզբ առնող Եփրատ ու Տիգրիս գետերի տարեկան հոսքի ծավալների վրա և կարող է կազմել մինչև 40 տոկոս՝ հանգեցնելով ինչպես սակավաջրությանը, այնպես էլ անսովոր վարարումների⁴⁰:

Հնակիմայաբանական ուսումնասիրությունները մեզ հետաքրքրող դարաշրջանի՝ Ք. ա. VII–VI դդ. համար դիտարկում են Միջերկրական և Հո-

³⁸ O. M. Raspopov, O. I. Shumilov, V. A. Dergachev, B. van Geel, N.-A. Mörner, J. van der Plicht, H. Renssen. Abrupt Climate Change around 2700–2800 Years BP as an Example of Existence of 2400 Year Periodicity in Solar Activity and Solar Variability. – Proceedings of the 1st Solar and Space Weather Euroconference, 25–29 September 2000 (Santa Cruz de Tenerife, Tenerife, Spain), edited by A. Wilson. Noordwijk, 2000, pp. 513–515; V. A. Dergachev, O. M. Raspopov, B. van Geel, G. I. Zaitseva. The “Sterno-Etrusia” Geomagnetic Excursion around 2700 BP and Changes of Solar Activity, Cosmic Ray Intensity, and Climate. – “Radiocarbon” (Cambridge), 2004, vol. 46/2, pp. 661–681; S. B. Kroonenberg, G. M. Abdurakhmanov, E. N. Badyukova, K. van der Borg, A. Kalashnikov, N. S. Kasimov, G. I. Rychagov, A. A. Svitoch, H. B. Vonhof, F. R. Wesselingh. Solar-Forced 2600 BP and Little Ice Age Highstands of the Caspian Sea. – “Quaternary International”, 2007, vol. 173–174, pp. 137–143; B. L. Drake. The Influence of Climatic Change on the Late Bronze Age Collapse and the Greek Dark Ages. – “Journal of Archaeological Science” (Amsterdam), 2012, vol. 30, p. 1867, Fig. 3–4; A. A. Kakroodi, S. A. G. Leroy, S. B. Kroonenberg, H. A. K. Lahijani, H. Alimohammadian, I. Boomer, A. Goorabi. Late Pleistocene and Holocene Sea-Level Change and Coastal Paleoenvironment Evolution along the Iranian Caspian Shore. – “Marine Geology”, 2015, vol. 361, p. 123.

³⁹ S. B. Kroonenberg, G. M. Abdurakhmanov, E. N. Badyukova, K. van der Borg, A. Kalashnikov, N. S. Kasimov, G. I. Rychagov, A. A. Svitoch, H. B. Vonhof, F. R. Wesselingh. Եշվ. աշխ., էջ 138, H. Weiss. Megadrought, Collapse, and Resilience in Late 3rd Millennium BC Mesopotamia. – 2200 BC – A Climatic Breakdown as a Cause for the Collapse of the Old World? (7th Archaeological Conference of Central Germany, October 23–26, 2014 in Halle [Saale]) (Tagungen des Landesmuseums für Vorgeschichte Halle 12), edited by H. Meller, H. W. Arz, R. Jung, and R. Risch. Halle-Saale, 2015, p. 36; A. W. Schneider, S. F. Adalı. Further Evidence for a “Late Assyrian Dry Phase” in the Near East during the Mid-to-Late Seventh Century BC?, p. 160.

⁴⁰ H. M. Cullen, P. B. deMenocal. North Atlantic Influence on Tigris-Euphrates Streamflow. – “International Journal of Climatology” (Hoboken, NJ), 2000, vol. 20, pp. 853, 861.

նիական ծովերի ջրերի ջերմաստիճանի անկում⁴¹, իսկ Միջերկրականի ջրերի ջերմաստիճանի 2–3 աստիճանով նվազելու դեպքում Մերձավոր Արևելքում տեղումները նվազում են մինչև 50 տոկոսով։ Կիմայի չորացում է նկատվում արևելամիջերկրածովյան ավազանում և Փոքր Ասիայում՝ սկսած Ք. ա. 700 թ., ինչն իր գագաթնակետին է հասնում Ք. ա. VII դ. կեսերին⁴²։ Հյուսիսային Իրաքում՝ Սուլեյմանիե քաղաքի մոտ գտնվող Քունա Բաքարանձավի՝ վերջին շրջանի ուսումնասիրությունները վկայում են, որ Ք. ա. VII դ. Միջագետքը գտնվել է տեսական՝ շուրջ 60 տարի տեսած երաշտի տիրապետության տակ⁴³։ Իրանական բարձրավանդակի ներքին շրջանների համար թեև տվյալները սուլ են, սակայն, այնուամենայնիվ, փաստված է, որ այստեղ ևս կիմայի չորացում է նկատվում նախկինում բավական խոնավ եղանակային պայմանների համեմատությամբ⁴⁴։ Այս առումով ուշագրավ է՝ կասպից ծովի ջրերը, որոնք գտնվում են համաշխարհային օվկիանոսի մակարդակից մոտ –27.4 մ ցածր (2014 թ. դրությամբ⁴⁵), պատմական շրջանում իր առավելագույն բարձրությանն են հասել երկու անգամ՝ Ք. ա. VII դ. կեսերին և Ք. հ. XIV դ. վերջ – XV դ. սկզբներին։ Այդ փուլերում կասպիցի մակարդակը գտնվել է համապատասխանաբար –22⁴⁶

⁴¹ B. L. Drake. Նշվ. աշխ., էջ 1867, նկ. 3:

⁴² Համապատասխանաբար տե՛ս D. Psomadiadis, E. Dotsika, K. Albanakis, B. Ghalab, C. Hillaire-Marcel. Speleothem Record of Climatic Changes in the Northern Aegean Region (Greece) from the Bronze Age to the Collapse of the Roman Empire. – “Palaeogeography, Palaeoclimatology, Palaeoecology”, 2018, vol. 489, pp. 280–281; D. Langgut, I. Finkelstein, Th. Litt. Climate and the Late Bronze Collapse: New Evidence from the Southern Levant. – “Tel Aviv” (Tel Aviv), 2013, vol. 40/2, p. 161; C. Kuzucuoğlu, W. Dörfler, S. Kunesch, F. Gouipille. Mid- to Late-Holocene Climate Change in Central Turkey: The Tecer Lake Record. – “The Holocene”, vol. 21/1, 2011, 183–185; A. W. Schneider, S. F. Adalı. “No Harvest was Reaped”, pp. 436–437; Նույնի՝ Further Evidence for a “Late Assyrian Dry Phase” in the Near East during the Mid-to-Late Seventh Century BC?, pp. 161–165, 168–174, Tab. 2.

⁴³ A. Sinhal, G. Kathayat, H. Weiss, H. Li, H. Cheng, J. Reuter, A. W. Schneider, M. Berkelhammer, S. F. Adalı, L. D. Stott, R. L. Edwards. Նշվ. աշխ., էջ 1–10:

⁴⁴ A. W. Schneider, S. F. Adalı. “No Harvest was Reaped”, p. 437; T. Talebi, E. Ramezani, M. Djamali, H. A. K. Lahijani, A. Naginezhad, K. Alizadeh, V. Andrieu-Ponel. The Late-Holocene Climate Change, Vegetation Dynamics, Lake-Level Changes and Anthropogenic Impacts in the Lake Urmia Region, NW Iran. – “Quaternary International”, 2016, vol. 408, p. 49.

⁴⁵ S. Haghani, S. A. G. Leroy, F. P. Wesselingh, N. L. Rose. Rapid Evolution of Coastal Lagoons in Response to Human Interference under Rapid Sea Level Change: A South Caspian Sea Case Study. – “Quaternary International”, 2016, vol. 408, p. 94, fig. 1.

⁴⁶ A. A. Kakroodi, S. B. Kroonenberg, R. M. Hoogendoorn, H. Mohammad Khani, M. Yamani, M. R. Ghassemi, H. A. K. Lahijani. Rapid Holocene Sea-Level Changes along the Iranian Caspian Coast. – “Quaternary International”, 2012, vol. 263, p. 102; A. A. Kakroodi, S. B. Kroonenberg, A.

և-21.4մ⁴⁷ բարձրության վրա, այսինքն՝ մոտ 5.5 – 6 մ-ով ավելի բարձր, քան այժմ է: Վերջին դեպքում ջրերի բարձր մակարդակը համապատասխանում է, այսպես կոչված, «Փոքր Սառցապատման դարաշրջան»-ի հետ (XIV–XIX դդ.)⁴⁸, ինչը հուշում է, որ համանման կիմայական պայմաններում է տեղի ունեցել Կասպիցի մակարդակի բարձրացումը Ք. ա. VII դարում: Նկատենք, որ Կասպիցի մակերեսից գոլորշիացման նվազումն ուղեկցվել է ծովը սնուցող հիմնական աղբյուրի՝ Վոլգա գետի բերած ջրի ծավալների աճով (այն ապահովում է Կասպից ծով մուտք գործող ջրի 80 տոկոսից ավելին)⁴⁹, իսկ Վոլգայի վերին ավազանում, գերիշոնավությամբ պայմանավորված, բնակավայրերը լքվում են Ք. ա. VI դարում⁵⁰:

Էթնիկական տեղաշարժեր

Պատմության ընթացքում տեղ գտած էթնիկական տեղաշարժերը համընկնում են կիմայական փոփոխությունների հետ և սովորաբար փոխկապակցված էին: Հին Առաջավոր Ասիայի պատմության մեջ վկայված նման դրվագներից է կուտիների արշավանքը դեպի Աքքադ և Աքքադի թագավորության կործանումը Ք. ա. մոտ 2200 թ. սահմաններում: Այն համընկնում է, այսպես կոչված, «4.2–3.9 կա իրադարձության» հետ (կիմայի կտրուկ չորացումը կամ «գերերաշտ»ը): Այլ օրինակներից են կի-

Naderi Beni, A. Noehgar. Short – and Long-Term Development of the Miankaleh Spit, Southeast Caspian Sea, Iran. – “Journal of Coastal Research”, 2014, vol. 30/6, pp. 1236–1242.

⁴⁷ S. B. Kroonenberg, G. M. Abdurakhmanov, E. N. Badyukova, K. van der Borg, A. Kalashnikov, N. S. Kasimov, G. I. Rychagov, A. A. Svitoch, H. B. Vonhof, F. R. Wesselingh. Նշ. աշխ., էջ 138, 142–142, A. Naderi Beni, H. Lahijani, R. Mousavi Harami, K. Arpe, S. A. G. Leroy, N. Marriner, M. Berberian, V. Andrieu-Ponel, M. Djamali, A. Mahboubi, P. J. Reimer. Caspian Sea-Level Changes during the Last Millennium: Historical and Geological Evidence from the South Caspian Sea. – “Climate of the Past” (Göttingen), 2013, vol. 9, 1645, Tab. 3; S. Haghani, S. A. G. Leroy, S. Khdir, K. Kabiri, A. Naderi Beni, H. A. K. Lahijani. An Early ‘Little Ice Age’ Brackish Water Invasion along the South Coast of the Caspian Sea (Sediment of Langarud Wetland) and Its Wider Impacts on Environment and People. – “The Holocene”, 2016, vol. 26/1, p. 13.

⁴⁸ Naderi Beni, H. Lahijani, R. Mousavi Harami, K. Arpe, S. A. G. Leroy, N. Marriner, M. Berberian, V. Andrieu-Ponel, M. Djamali, A. Mahboubi, P. J. Reimer. Նշ. աշխ., էջ 1647, S. Haghani, S. A. G. Leroy, S. Khdir, K. Kabiri, A. Naderi Beni, H. A. K. Lahijani. Նշ. աշխ., էջ 3–16:

⁴⁹ S. B. Kroonenberg, G. M. Abdurakhmanov, E. N. Badyukova, K. van der Borg, A. Kalashnikov, N. S. Kasimov, G. I. Rychagov, A. A. Svitoch, H. B. Vonhof, F. R. Wesselingh. Նշ. աշխ., էջ 138, 142:

⁵⁰ V. A. Dergachev, O. M. Raspopov, B. van Geel, G. I. Zaitseva. Նշ. աշխ., էջ 670:

⁵¹ H. Weiss. Megadrought, Collapse, and Resilience in Late 3rd Millennium BC Mesopotamia, pp. 35–52; Եռւյնի՝ Seventeen Kings Who Lived in Tents. –

մայական փոփոխություններով պայմանավորված Ք. ա. XII դ. մերձավորացնելյան ճգնաժամը, որը հանգեցրեց բնակչության զանգվածային տեղաշարժերի՝ ի դեմս «Ծովի ժողովուրդներ»-ի, որոնք արևմտամիջերկրածովյան ավազանի կղզիներից և Բալկանյան թերակղզու հարավից տեղաշարժել են դեպի Փոքր Ասիա ու Լևանտ՝ հասնելով մինչև Եգիպտոս⁵²:

Ք. ա. VII դ. ևս տեղ են գտել էթնիկական զանգվածային տեղաշարժեր, ինչպիսիք են փոյտգացիների և, հավանաբար, փոքրասիական այլ ժողովուրդների շարժը դեպի արևելք՝ վերինեփրատյան ավազանի ու Հայկական լեռնաշխարհի ուղղությամբ⁵³, կիմմերական ցեղերի արշավանքները դեպի Հայկական լեռնաշխարհ դեռևս Ք. ա. VIII դ. վերջերին⁵⁴: Ք. ա. VII դ. առաջին քառորդին տարածաշրջան են մուտք գործում սկյութները⁵⁵: Բնակչության շարժունակության աճ և արտագաղթ՝ է արձանագրվում էգեյան ծովի ավագանում, որը պատճության մեջ հայտնի է «Հունական մեծ գաղութացում» անունով, իսկ գաղութացման ամենամեծ ծավալներն արձանագրվել են Ք. ա. VII դարում⁵⁶:

Ապաբնակեցում

Կիմմայի չորացումը, տեղումների քանակի կտրուկ անկումն ու տեսական երաշտը ուղղութիւն երկրագործության վրա հիմնված հինարևելյան պետությունների համար ունեցել են աղետալի հետևանքներ: Օրինակ՝ վերը նշված

The Late Third Millennium in the Ancient Near East: Chronology, C14, and Climate Change (Papers from the Oriental Institute Seminar “The Early/Middle Bronze Age Transition in the Ancient Near East: Chronology, C14, and Climate Change” Held at the Oriental Institute of the University of Chicago, 7–8 March 2014) (Oriental Institute Seminars 11), edited by F. Höflmayer. Chicago, 2017, pp. 131–162; H. M. Cullen, P. B. de Menocal, S. Hemming, G. Hemming, F. H. Brown, T. Guilderson, F. Sirocko. Climate Change and the Collapse of the Akkadian Empire: Evidence from the Deep Sea. – “Geology” (Boulder, CO), 2000, vol. 28/4, pp. 379–382.

⁵² Ա. Վ. Քոսյան. Մ. թ. XII դարի մերձավորացնելյան ճգնաժամը և Հայկական լեռնաշխարհը, Երևան, 1999, էջ 92 և հաջորդիվ, A. Yasur-Landau. The Philistines and Aegean Migration at the End of the Late Bronze Age. Cambridge, 2010.

⁵³ Ա. Վ. Քոսյան. Արամ Նահապետը Կապադովկիայում (Մի վարկածի առթիվ). – ՊԲՀ, 1999, № 1, էջ 256–257, Ո. Ցականյան. Էթնոքաղաքական տեղաշարժերը Մերձավոր Արևելքում և Հայկական լեռնաշխարհում մ. թ. ա. VII–VI դդ., Երևան, 2018, էջ 129–130:

⁵⁴ Տեքստային վկայությունների համար տե՛ս A. I. Ivantchik. Les Cimmériens au Proche-Orient (Orbis Biblicus et Orientalis 125). Fribourg Suisse – Göttingen, 1993, p. 125.

⁵⁵ Տե՛ս, օրինակ, Ի. Մ. Դյաконов. Киммерийцы и скифы на Древнем Востоке. – «Российская археология» (Москва), 1994, № 1, с. 108–116.

⁵⁶ A. J. Graham. The Colonial Expansion of Greece. – “The Cambridge Ancient History” (Second Edition), III/3. The Expansion of the Greek World, Eighth to Sixth Centuries B.C., edited by J. Boardman, N. G. L. Hammond. Cambridge, 1982, pp. 160–162.

«գերերաշտ»-ից հետո հյուսիսային Սիրիայում՝ Խաբուր գետի ավազանում գտնվող, աքքաղական տիրապետության ժամանակ ծաղկում ապրող բնակավայրերի ավելի քան 87 տոկոսը լքվում է: Ավելին, Ք. ա. 3-րդ – 2-րդ հազարամյակների սահմանագլխին այդ ողջ գոտին ըստ էության դառնում է անմարդաբնակ⁵⁷:

Այդ նույն երևույթը նկատվում է նաև Հայկական լեռնաշխարհում ու Միջազգետքում: Հնագիտական հետազոտությունները վկայում են, որ Ք. ա. VII դ. վերջերին Ասորեստանի հիմնական երկրագործական գոտիներում ընկած բնակավայրերի ճնշող մասն արդեն անբնակ էր: Մասնավորապես, Եփրատի վտակներ Խաբուր և Բաղիս գետերի ավազանում գտնվող բնակավայրերի թիվը հետասրեստանյան շրջանում նվազում է ավելի քան 84 տոկոսվ⁵⁸: Տիգրիսի և Մեծ Զարի միջազգետքում ընկած բնակավայրերի քանակը նվազում է շուրջ 70 տոկոսով⁵⁹: Ասորեստանյան միջնաշխարհը, կորցնելով իր բնակչության մեծ մասը, ըստ էության, վերածվում է Բաբելոնյան տերության ծայրագավառով⁶⁰:

Ապաբնակեցվում են Հայկական լեռնաշխարհ՝ ուրարտական տիրապետության տակ գտնվող հիմնական երկրագործական գոտիները⁶¹: Օրինակ՝ մերձուրման ավազանի ուրարտական՝ երբեմնի ծաղկուն տարածքներում ընկած ամրոցների և բնակատեղիների ճնշող մասը՝ շուրջ 85 տոկոսը, լքվում է, իսկ գոյատևած բնակավայրերը ցույց են տալիս հետագա, բավական թուցիկ բնակության հետքեր⁶²:

⁵⁷ H. Weiss. Megadrought, Collapse, and Resilience in Late 3rd Millennium BC Mesopotamia, pp. 42–46; Առևտնի՝ Seventeen Kings Who Lived in Tents, pp. 139–144, Tab. 6.1, fig. 6.6–6.7.

⁵⁸ J. A. Ur, T. J. Wilkinson. Settlement and Economic Landscapes of Tell Beydar and Its Hinterland. – Beydar Studies 1 (Subartu 21), edited by M. Lebeau, A. Suleiman. Turnhout, 2008, p. 309; R. Koliński. The Post-Assyrian Period in the Eastern Assyria. – Awīlum ša la mašē – man who cannot be forgotten. Studies in Honor of Prof. Stefan Zawadzki Presented on the Occasion of his 70th Birthday (Alter Orient und Altes Testament 463), edited by R. Koliński, J. Prostko-Prostyński, W. Tyborowski. Münster, 2018, pp. 106–107.

⁵⁹ R. Koliński. Նշվ. աշխ., էջ 101–103, 105–106, աղ. 3–4:

⁶⁰ A. Kuhrt. The Assyrian Heartland in the Achaemenid Period. – Dans les pas des Dix-Mille: peuples et pays du Proche-Orient vu par un Grec (Pallas 43), edited by P. Briant. Toulouse, 1995, pp. 239–254; J. Curtis. The Assyrian Heartland in the Period 612–539 BC. – Continuity of Empire (?). Assyria, Media, Persia (History of the Ancient Near East, Monographs – V), edited by F. M. Fales. Padova, 2003, pp. 157–167; E. Frahm. Նշվ. աշխ., էջ 193–194:

⁶¹ Y. H. Grekyan. When the Gods Leave People, pp. 73–75.

⁶² M. van Loon. Revue article of S. Kroll, Keramik urartäischer Festungen in Iran. Berlin, 1976. – “Bibliotheca Orientalis” (Leiden), 1979, vol. 36/5–6, p. 370; S. Kroll. Prehistoric Settlement Patterns in the Maku and Khoy: Regions of Iranian Western Azerbaijan. – Proceedings of the International Symposium on Iranian Archaeology: Northwestern Region, edited by M. Azarnoush. Tehran, 2004, p. 47.

«Ք. ա. VII դ. ճգնաժամ»-ը և մարական աշխարհը. գուգահեռներ

Ասորեստանի ծավալումը դեպի Իրանական բարձրավանդակ իրականացվեց Թիգլաթ-պաղասար III (Ք. ա. 744–727 թթ.) և Սարգոն II (Ք. ա. 722–705 թթ.) արքաների գահակալության շրջանում⁶³: Մինախերիքի օրոք ասորեստանյան տիրապետության սահմանադիմն արևելքում անցնում էր ներկայիս Սանանդավիրց (Իրանի Գուրդիստան նահանգ) գետի Կանգավար (Քերմանշահի նահանգ), Նահավանդ (Համադանի նահանգ), Խորամաբադ (Լուրիստանի նահանգ) և Դեհորան (Խամի նահանգ) ձգվող գծով⁶⁴: Ընդհանուր առմամբ՝ նվաճված տարածքներում ասորեստանցիները կազմավորեցին առնվազն հինգ «մարական» նահանգներ: Դրանք են՝ Պարսուա(շ)ը, Կիշեստեն, Բիթ-Խամբանը, Կար-Կաշին (կամ Բիթ-Կարին) և Խարխսարը⁶⁵:

Ասորեստանյան տիրապետությունը հնարավորություն տվեց մարերին լայնորեն ներգրավվել տերության թե՛ տնտեսական, թե՛ սազմական, և թե՛ անգամ քաղաքական կյանքում: Մարերի ձեռքն անցավ Ասորեստանի արևելյան առևտորում միջնորդի գերը⁶⁶: Ասորեստանյան աղբյուրներում հիշվում են ծագումով մար առևտրականներ և արհեստավորներ⁶⁷, հետաքրքիր է, որ «Մար» անձնանունը կրող անձինք են հանդես գալիս ասորեստանյան տարաբերությունում տեքստերում՝ որպես, օրինակ, գործարքի վկա, վարկառու, զինվորական կամ պաշտոնյա⁶⁸: Մարերի գերը մեծացավ բանակում⁶⁹, նրանցից էր կազմված արքայացնի թիկնազորը, հնարավոր է՝ նաև պալատի պահակազորն ընդհանրապես⁷⁰: Ասորեստանցիների մոտ ծառայող մարերի մասին են հաղորդում նաև հույն պատմիչները⁷¹:

⁶³ I. M. Diakonoff. Նշվ. աշխ., էջ 76–80, K. Radner. An Assyrian View on the Medes. – Continuity of Empire (?): Assyria, Media, Persia (History of the Ancient Near East, Monographs – V), edited by F. M. Fales. Padova, 2003, pp. 44–57; И. Н. Медведская. Նշվ. աշխ., էջ 126–129:

⁶⁴ S. Parpola, M. Porter. The Helsinki Atlas of the Near East in the Neo-Assyrian Period. Helsinki, 2001, Map 11–12.

⁶⁵ Եվս երկու նահանգների՝ Սապարդայի և Մադայայի գոյությունը Ասորեստանի կազմում վիճելի է: Տե՛ս և հմմտ. I. M. Diakonoff. Նշվ. աշխ., էջ 83, K. Radner. An Assyrian View on the Medes, p. 57, Tab. 7; Նույնի՝ Provinz. C. Assyrien. – “Reallexikon der Assyriologie und Vorderasiatischen Archäologie”, (Berlin – Leipzig – New York), 2006, Bd. 11/1–2, p. 57.

⁶⁶ K. Radner. An Assyrian View on the Medes, pp. 51–52.

⁶⁷ Նույն տեղում, էջ 62, Նույնի՝ Assyria and the Medes, p. 448.

⁶⁸ K. Åkerman, H. D. Baker. Mādāiu. – The Prosopography of the Neo-Assyrian Empire, vol. 2.II, edited by H. D. Baker. Helsinki, 2001, pp. 673–674.

⁶⁹ G. B. Lanfranchi. Esarhaddon, Assyria and Media. – “State Archives of Assyria Bulletin” (Helsinki), 1998, vol. 12/2, pp. 107–108; Նույնի՝ The Assyrian Expansion in the Zagros and the Local Ruling Elites. – Continuity of Empire (?). Assyria, Media, Persia (History of the Ancient Near East, Monographs – V), edited by F. M. Fales. Padova, 2003, pp. 79–80.

⁷⁰ M. Liverani. The Medes at Esarhaddon’s Court. – “Journal of Cuneiform Studies” (New Haven), 1995, vol. 47, pp. 60–62; G. B. Lanfranchi. Esarhaddon, Assyria and Media, p. 105.

⁷¹ Հղումները գրականությամբ հանդերձ տե՛ս G. B. Lanfranchi. The Assyrian Expansion in the Zagros and the Local Ruling Elites, p. 118.

Ասորեստանյան իշխանությունների և մարերի միջև հաստատված անդորրը երկար չտևեց: Կեռևս Սարգոն II-ի իշխանության վերջին շրջանում և Մինախերիթի օրոք Ասորեստանի մարական նահանգներում նկատվող լարվածությունն իր գագաթնակետին հասավ Ասսարհաղուսի իշխանության տարիներին: Ասորեստանի հետ կապված մար առաջնորդները ստիպված էին իրենց իշխանությունը պահել՝ հենվելով ասորեստանյան ռազմական ուժի վրա: Այդ առաջնորդներին իրենց իսկ հայրենակիցները վտարել էին, սակայն, ասորեստանյան նահանգապետների գորքերով նրանք վերահաստատվել էին հարազատ «երկրներում», իսկ հակառակորդները՝ գերպել: Պահպանվել են համանման այլ վկայություններ՝⁷²: Թե ի՞նչն էր առաջնորդների դեմ մարերի ըմբոստության պատճառը, աղբյուրները չեն հայտնում:

Ժամանակի ընթացքում ասորեստանյան միջամտություններն անդամ դարձան անօգուտ: Ինչ-որ մի պահ ասորեստանյան տիրապետությունը մարական նահանգներում այլևս ամրոցների պարիսպների շրջագծից դուրս չեր տարածվում: Դրան հետեւ մար առաջնորդներ կաշտարիտի, Դուսաննիի և Մամիտիարշուի գլխավորած ապստամբությունը (այսպես կոչված, «մարական մեծ ապստամբություն»-ը): Կարճ ժամանակամիջոցում Ասորեստանը կորցրեց մարական նահանգները, ասորեստանյան գորքերի պատասխան արշավանքներն ավարտվում էին անարդյունք: Ասորեստանյան արքունիքը ստիպված էր բանակցությունների գնալ մարերի հետ՝⁷³ և Ք. ա. 672 թ. սահմաններում անջատ հաշտություն կնքել որոշ առաջնորդների հետ՝⁷⁴: Այդ նույն շրջանով թվագրվող գեկուցագրերից մեկում նշվում է Ասորեստանին Հյուսիսից արևելք սահմանակցող չորս երկրների ամրությունների դեմ հսկողություն սահմանելու մասին: Այդ երկրներն էին՝ Ուրարտուն, Խուբուչկան, Մանան և Մարաստանը՝⁷⁵: Այդպիսով, Ք. ա. 672/671 թ. համարվում է «անկախ» Մարաստանի գոյության սկիզբը՝⁷⁶:

Որքան էլ տարօրինակ թվա, սակայն, «անկախ» Մարաստանի գոյությունը որևէ կերպ չի արտացոլվում ո՛չ համաժամանակյա գրավոր (սեպագիր) և ո՛չ էլ հնագիտական աղբյուրներում: Ք. ա. մոտ 670 թ. հետո՝ ընդհուպ մինչև Ք. ա. 615 թ., մարերը հազվագետ են հիշատակվում ասորեստանյան տեքստերում՝⁷⁷, իսկ հնագիտական աղբյուրները վկայում են, որ

⁷² Մանրամասն տե՛ս I. M. Diakonoff. Նշվ. աշխ., էջ 103–104, K. Radner. An Assyrian View on the Medes, pp. 58–59.

⁷³ Կաշտարիտի հետ տարիող բանակցությունների համար տե՛ս I. Starr. Նշվ. աշխ., էջ 61–64 (№ 56–57):

⁷⁴ Ապստամբության մասին առավել մանրամասն տե՛ս I. M. Diakonoff. Նշվ. աշխ., էջ 101–108:

⁷⁵ M. Luukko, G. Van Buylaere. The Political Correspondence of Esarhaddon (State Archives of Assyria 16). Helsinki, 2002, pp. 128–129 (no. 148).

⁷⁶ Տե՛ս, օրինակ, Է. Ա. Գրանտովսկի. Իրան և իրանցիներ մասնաւոր հարաբերություններ մասին պատմություններ. – Մ., 1998, с. 139, 174–175; И. Н. Медведская. Նշվ. աշխ., էջ 132–137:

⁷⁷ Առաջին աղբյուրը ենթադրաբար Ք. ա. 660–652 թթ. վերաբերող և ասորեստանյան աշխարհակալության սահմանները ներկայացնող տեքստ է, որտեղ նշված է նաև Մարաստանը: Տե՛ս F. M. Fales, J. N. Postgate. Նշվ. աշխ., էջ xiv, 4 (no. 1): Քննարկումների համար տե՛ս և հմմտ. K. Radner. An Assyrian View on the Medes, p. 57 and n. 54, 62–63. Մյուս աղբյուրը Ք. ա. 660 թ. Մանայի դեմ ասորեստանյան արշավանքի նկարագրությունն է, որտեղ տեղեկություններ կան, հավանաբար, Մանայի դաշնակից մարական մի

մարական աշխարհը ստիպված էր կիսել այն նույն ճակատագիրը, որը վիճակված էր Ասորեստանին և Ուրարտուին:

Իրանական բարձրավանդակում հայտնաբերվել են շուրջ մեկ տասնյակ մարական հուշարձաններ: Դրանք գերազանցապես պալատական/տաճարային տիպի համալիրներ են՝ ըստ երեսույթին, կրակի պաշտամունքին նվիրված սրբարան(ներ)ով և սյունազարդ սրբահներով: Ք. ա. VII դ. առաջին կեսի ինչ-որ շրջանում կարծես փոխվում է այդ կենտրոնների գործառույթը. տաճարներին և դահլիճներին կից կառուցվում են մթերքի պաշարներ կուտակելու համար նախատեսված շինություններ՝ ամբարներ ու մթերանոցներ (վկայված է Թեփե Նուշ-ի Զանում, Գողին Թեփեում, Գունեսփանում, Թեփե Օզբաքիում, Մուշ Թեփեում⁷⁸): Այնուհետև աշխատանքներ են տարվում ամրացնելու բաց, ամրություններից զուրկ այդ կենտրոնները՝ դրանք շրջապատելով պարիսպներով (Թեփե Նուշ-ի Զան, Գողին Թեփե, Գունեսփան, Թեփե Օզբաքի⁷⁹, Թերևս, նաև՝ Թեփե Յալֆան⁸⁰), ինչը խոսում է քաղաքական անկայունության մասին: Մարական խոշոր կենտրոններից Բարս Զան

քանի ցեղերի հպատակեցնելու և դրանց առաջնորդներին գերելու մասին: Մանրամասն տե՛ս I. M. Diakonoff. Նշվ. աշխ., Էջ 116: Ասորեստանյան արքունի դիվանում պահպանված երկու անձնանունները (^mparamu[...], ^muaksatar) հրատարակիչները համարում են մարական՝ դրանցում տեսնելով Փրառտեսի և Կյուաքարեսի անունները: Տե՛ս M. Luukko, G. Van Buylaere. Նշվ. աշխ., Էջ 12 (№ 15): Այդ համադրությունները թեև վիճելի են, բայց, համեսնայն դեպք, դրանցից Ուակսատարը կապված էր մարական աշխարհի հետ և հիշատակվում է այլ նամակներում ևս: Տե՛ս, օրինակ, A. Fuchs, S. Parpolo. The Correspondence of Sargon II. Part III. Letters from Babylonia and the Eastern Provinces (State Archives of Assyria 15). Helsinki, 2001, pp. 68–69 (no. 101). Նկատենք, որ Կյուաքարեսի անունը բարելորյան տեքստերում տրվում էր Ումաքիթար Ճևով (^mumakištar) [տե՛ս J.-J. Glassner. Նշվ. աշխ., Էջ 220–221 (№ 22, տող 29)]:

⁷⁸ Համապատասխանաբար տե՛ս D. S tr o n a c h, M. R o a f. Nush-i Jan I. The Major Building of the Median Settlement. London – Leuven – Paris – Dudley, MA, 2007, pp. 142–143, 206–207, fig. 11.4; H. G o p n i k. The Median Citadel of Godin Period II. – On the High Road: The History of Godin Tepe, Iran (Bibliotheca Iranica: Archaeology, Art and Architecture Series, I), edited by H. Gopnik, M. S. Rothman. Toronto, 2011, p. 310, Fig. 7.7; R. N a s e r i, M. M a l e k z a d e h, A. N a s e r i. Günespān: A Late Iron Age Site in the Median Heartland. – “Iranica Antiqua” (Leiden), 2016, vol. 51, pp. 109, 112, Plate 18a-b, 21; M. Azarnoush, B. Helwing. Recent Archaeological Research in Iran – Prehistory to Iron Age. – “Archäologische Mitteilungen aus Iran und Turan” (Berlin), 2005, Bd. 37, p. 222; Y. M o h a m m a d i f a r, M. R. S a r r a f , A. M o t a r j e m. A Preliminary Report on Four Seasons of Excavations at Moush Tepe, Hamedan, Iran. – “Iranica Antiqua” (Leiden), 2015, vol. 50, p. 240.

⁷⁹ Համապատասխանաբար տե՛ս D. S tr o n a c h, M. R o a f. Նշվ. աշխ., Էջ 131, 134–137, նկ. 5.1–3, 5; H. G o p n i k. Նշվ. աշխ., Էջ 311, նկ. 7.7, R. Naseri, M. Malekzadeh, A. Naseri. Նշվ. աշխ., Էջ 110, 112:

⁸⁰ T. Almasi, A. Motarjem, K. Mollazadeh. Tepe Yalfan: A Newly-Found Iron Age III site on the Hamedan Plain. – “International Journal of the Society of Iranian Archaeologists” (Tehran), 2017, vol. 3/6, p. 70.

Թեփեի կործանումը Ք. ա. VII դ. առաջին կեսի ինչ-որ շրջանում⁸¹ կարող էր լինել այդ անկայունության դրակորումը: Այստեղ տեղին է հիշել Ք. ա. 668 թ. վերաբերող ասորեստանյան արքա Աշուրբանհպալի թողած վկայությունը՝ իրանական բարձրավանդակի հարավ-արևմուտքում ընկած էլամում տիրող սովի և մեծաքանակ բնակչության վախուստի մասին⁸²:

Հաջորդ վկայությունը վերաբերում է դեպի մարական կենտրոններ բնակչության շարժերին: Մարական գրեթե բոլոր խոշոր կենտրոնները, ակնհայտորեն, ստիպված են եղել ընդունել հավելյալ բնակչություն, այդ թվում՝ Թեփե Նուշ-ի Զանը, Բարս Զան Թեփեն և Գողին Թեփեն⁸³: Այդ կենտրոնների կոթողային կառուցյները (օրինակ՝ Թեփե Նուշ-ի Զանի սյունազրդ դահլիճը) վեր են ածվում նորեկների կացարանների՝ սյուների միջև հապշտապ և անկանոն շարվածքով կառուցված պատերով բաժանելով դահլիճի ներքին տարածքն ու այն հարմարեցնելով մեծաթիվ մարդկանց բնակության համար:⁸⁴

Ուշագրավ է, որ ինչ-որ ժամանակ անց մարական կենտրոններում ապաստանած բնակչությունը ստիպված է լինում հեռանալ այդ տարածքներից՝ հսկայական ջանքեր գործադրելով ողջ հուշարձանը կոնսերվացնելու համար: Դրանց մուտքերը փակվում են, տաճարները և սրահները լցվում են հսկայական քանակությամբ հողով ու քարով, ապա ծածկվում հում աղյուսի մի քանի շերտով (Թեփե Նուշ-ի Զան, Մուշ Թեփե, Զար Բոլաղ, Կալ'եհ Սանդի):⁸⁵

Փաստորեն, ասորեստանյան տիրապետության շրջանում ծաղկում ապրող մարական կենտրոններն ու տաճարները «անկախ» Մարաստանի գոյության շրջանում՝ Ք. ա. VII դ. կեսերից, լքվում են, իսկ բնակչությունը՝ հեռանում: Թեփե Նուշ-ի Զանը, օրինակ, լքվում է Ք. ա. VII դ. երկրորդ կես – Ք. ա. VI դ. սկիզբը ընկած շրջանում⁸⁶, Գողին Թեփեն՝ Ք. ա. VII դ. կեսերին (Ք. ա. մոտ 650 թ.)⁸⁷: Ընդ որում, դրանց մեծ մասը լքվել է խաղաղ կերպով

⁸¹ C. Goff. Excavations at Baba Jan: The Pottery and Metal from Levels III and II. – “Iran” (London), 1978, vol. 16, p. 41.

⁸² J. Novotny, J. Jeffers. The Royal Inscriptions of Ashurbanipal (668–631 BC), Aššur-etel-ilāni (630–627 BC), and Sîn-šarri-iškun (626–612 BC), Kings of Assyria. Part 1 (The Royal Inscriptions of the Neo-Assyrian Period 5/1). University Park, MD, 2018 (no. 3 iv 17–20).

⁸³ Համապատասխանաբար տե՛ս D. Stronach, M. Roaf. Նշվ. աշխ., էջ 177–180, 209, նկ. 9.1, 11.7, C. Goff. Excavations at Baba Jan: The Architecture of the East Mound, Levels II and III. – “Iran” (London), 1977, vol. 15, pp. 105, 127–135; H. Gopnik. Նշվ. աշխ., էջ 314–315, նկ. 7.18:

⁸⁴ D. Stronach, M. Roaf. Նշվ. աշխ., էջ 158, 178:

⁸⁵ Համապատասխանաբար տե՛ս նույն տեղում, էջ 88–90, 171–176, 208–209, նկ. 11.6, Y. Mohammadifar, M. R. Sarraf, A. Motarjem. Նշվ. աշխ., էջ 235–238, M. Azarnoush, B. Helwing. Նշվ. աշխ., էջ 226, M. Malekzadeh, S. Saedyan, R. Naseri. Zar Bolagh: A Late Iron Age Site in Central Iran. – “Iranica Antiqua” (Leiden), 2014, vol. 49, pp. 164–165.

⁸⁶ D. Stronach, M. Roaf. Նշվ. աշխ., էջ 217:

⁸⁷ H. Gopnik. Նշվ. աշխ., էջ 344–347, աղ. 7.1–2:

ԵՊԱԿԱԳՈՎԹՅՈՒՆ

Այսպիսով, Ք. ա. VII դ. Հայկական լեռնաշխարհում և Միջագետքում
դիտարկվող երեսույթները, ըստ էության, նույնությամբ կրկնվում են նաև
Իրանական բարձրավանդակում։ Այսուղ ասորեստանյան տիրապետության
տապալումից հետո չի նկատվում մարերի կողմից ասորեստանյան կա-
ռույցների ժառանգործության որևէ փաստ, ասորեստանյան կառավարման
համակարգի փոխարինում մարականով և, ընդհանրապես, տարածքային
կառավարում ենթադրող համակարգի գոյության որևէ վկայություն (քա-
ղաքներ կամ մշտական բնակավայրեր, ամրոց-ամրությունների շղթա, հա-
զարդարկցության համակարգ, պալատական ու տաճարային կառույցներ,
արքունի դիվան ու այլն)⁹¹։ Այդ նույնը վերաբերում է նաև Իրանական
բարձրավանդակից դուրս՝ ավանդաբար մարական տերության սահմանների
մեջ ներառվող տարածքներին՝ ակսած կենտրոնական Փոքր Ասիայից մինչև
Աֆղանստան⁹²։

⁸⁸ ζωδιαպատասխանաբար տե՛ս D. Stronach, M. Roaf. Եշվ. աշխ., էջ 158, 178, նկ. 5.1-3, 5, H. Gopnik. Եշվ. աշխ., էջ 346-347, R. Naseri, M. Malekzadeh, A. Naseri. Եշվ. աշխ., էջ 112-113:

⁸⁹ M. Roaf. The Median Dark Age. – Continuity of Empire (?). Assyria, Media, Persia (History of the Ancient Near East, Monographs – V), edited by F. M. Fales. Padova, 2003, pp. 17–19. *Տեսակ և գմբեթ*. D. Stronach. Independent Media: Archaeological Notes from the Homeland. – Ենուն տեղութ, էջ 242–245:

⁹⁰ M. Liverani. The Rise and Fall of Media. – Continuity of Empire (?). Assyria, Media, Persia (History of the Ancient Near East, Monographs – V), edited by F. M. Fales. Padova, 2003, pp. 2–3 and n. 6; D. Stronach, M. Roaf. *Աշխարհության տարբերակները. Հայաստան, մ.թ.ա. 212-213*.
⁹¹ Y. Mohammadifar, A. Norouzi, A. Sharifi. Preliminary Report of the 16th Season of Excavations at Tepe Hegmataneh, Hamedan. – “Iranian Journal of Archaeological Studies” (Zahedan), 2012, vol. 2/2, pp. 13, 34–35.

⁹¹ H. Sancisi - Weerdenburg, *Uyq. wyu.*, 58 197-212:

⁹² R. Rollinger. The Western Expansion of the Median “Empire”. A Re-Examination. – Continuity of Empire (?). Assyria, Media, Persia (History of the Ancient Near East, Monographs – V), edited by F. M. Fales. Padova, 2003, pp. 305–319; Ἰννετζ ἥ ἡ Kerkenes Dağ and the Median “Empire”. – Ἰννετζ ὑπεροχημ, 52 321–326, Ἰννετζ ἥ ἡ The Medes of the 7th and 6th c. BCE, pp. 195, 199–200.

Նման պայմաններում անբովանդակ է հնչում մարական կայուն, կենտրոնացված պետության ձևավորման մասին կարծիքը՝ կառավարման իր ինստիտուտներով, իշխող արքայատոհմով և տարածքային ընդարձակ տիրապետությամբ⁹³: Փոխարենը՝ մարական միջնաշխարհում տեսնում ենք ճգնաժամի ակնհայտ դրսեորումներ՝ տնտեսական ու քաղաքական անկայունություն, ձևավորված միջցեղային/տարածքային համակարգի և կապերի վլուզում, էթնիկական տեղաշարժեր, բնակավայրերի լքում և ապաբնակեցում: Այդ գործընթացները սովորաբար հանդիպում են հին Առաջավոր Ասիայի պատմության դրամատիկ փուլերում և, որպես կանոն, պայմանավորված են կիմայական փոփոխություններով⁹⁴: Մարական տերության կազմավորումը մի շրջանում, երբ գործ ունենք բնական ոչ նպաստավոր միջավայրի հետ, խիստ կասկածելի է թվում:

Մարական տերության գործության հարցը երեսէ չի քննարկվել հայագիտության մեջ այն դեպքում, երբ թե՛ անտիկ, և թե՛ վաղմիջնադարյան հայ պատմիչները Հայաստանի պատմության մի ամբողջ դար սերտորեն կապակցել են մարերի հետ: Մարաստանի մասին այս նոր պատկերը, ըստ էության, բացառում է Հայկական լեռնաշխարհում մարական տիրապետության որևէ հնարավորություն կամ, առնվազն, մղում է զգուշորեն մոտենալու Հայաստանում մարական գերիշխանության խնդիրն՝ ստիպելով վերարժեվորել հայ-մարական փոխհարաբերությունների մասին մեզ հասած հաղորդումները: Հայաստանի Ք. ա. VII–VI դր. պատմության «մարական» կամ «անցումային» (իմա՞ Հետուրարտական – մինչաքեմենյան կամ վաղերպահական) շրջանը համանալու խնդիրը, կարծում ենք, դեռևս լուծված չէ:

Երվանդ Գրեկյան – պ. գ. դ., ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Հայաստանի վար Հնագիտության բաժնի առաջատար գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները Բիայնիլի-Ռուարտուի, Հայկական լեռնաշխարհի պետական այլ կազմավորումների և հին Առաջավոր Ասիայի երկրների պատմություն ու պատմական աշխարհագրություն, սոցիալ-տնտեսական հարաբերություններ, Հոգևոր մշակույթ, Հնագիտություն և Հնամիջավայր: Հեղինակ է 2 կոլեկտիվ մենագրության և 80 հոդվածի: ervandgr@yahoo.com

⁹³ Արդի գիտական դրականության մեջ շրջանառվող մարերի, այսպես կոչված, «քոչվորական պետության» տեսությունը, որը շուտով վերածվելու էր «քոչվորական տերության» մշտական արշավանքների սպառնալիքով պայմանավորված տարածքային պարզունակ «տիրապետությամբ», առավել հիմնավոր է թվում, տե՛ս M. Liverani. The Rise and Fall of Media, pp. 7–9; Ch. Tuplin. Նշ. աշխ., էջ 242–243, M. Waters. Notes on the Medes and Their “Empire” from Her 25. 25. to Hdt 1.134, p. 50; R. Rollinger. The Medes of the 7th and 6th c. BCE, pp. 189–213.

⁹⁴ S. R i e h l. A Cross-Disciplinary Investigation of Cause-and-Effect for the Dependence of Agro-Production on Climate Change in the Ancient Near East. – Knochen pflastern ihren Weg Festschrift für Margarethe und Hans-Peter Uerpmann (BioArchaeologica 5), edited by R. de Beauclair, S. Müntzel, H. Napierala. Rahden/Westf., 2009, 217–226, fig. 1.

REFERENCES

- Åkerman K., Baker H. D. Mādāiu. – The Prosopography of the Neo-Assyrian Empire, vol. 2.II, edited by H. D. Baker. Helsinki, 2001.
- Almasi T., Motarjem A., Mollazadeh K. Tepe Yalfan: A Newly-Found Iron Age III site on the Hamedan Plain. – “International Journal of the Society of Iranian Archaeologists” (Tehran), 2017, vol. 3/6.
- Azarnoush M., Helwing B. Recent Archaeological Research in Iran – Prehistory to Iron Age. – “Archäologische Mitteilungen aus Iran und Turan” (Berlin), 2005, Bd. 37.
- Bagg A. M. Irrigation in Northern Mesopotamia: Water for the Assyrian Capitals (12th–7th centuries B.C.). – “Irrigation and Drainage Systems” (Berlin – Heidelberg), 2000, vol. 14.
- Ball W. The End of Nūshījān. – Stories of Long Ago: Festschrift für Michael D. Roaf (Alter Orient und Altes Testament, Bd. 397), edited by H. Baker, K. Kaniuth and A. Otto. Münster, 2012.
- Burney Ch. A. Urartian Irrigation Works. – “Anatolian Studies” (London), 1972, vol. 22.
- Cullen H. M., deMenocal P. B. North Atlantic Influence on Tigris-Euphrates Streamflow. – “International Journal of Climatology” (Hoboken, NJ), 2000, vol. 20.
- Cullen H. M., deMenocal P. B., Hemming S., Hemming G., Brown F. H., Guilderson T., Sirocko F. Climate Change and the Collapse of the Akkadian Empire: Evidence from the Deep Sea. – “Geology” (Boulder, CO), 2000, vol. 28/4.
- Curtis J. The Assyrian Heartland in the Period 612–539 BC. – Continuity of Empire (?). Assyria, Media, Persia (History of the Ancient Near East, Monographs – V), edited by F. M. Fales. Padova, 2003.
- Curtis J. Iron Age Iran and the Transition to the Achaemenid Period. – Birth of the Persian Empire, vol. I, edited by V. S. Curtis and S. Stewart. London, 2005.
- Dalley S. Water Management in Assyria from the Ninth to the Seventh Centuries BC. – ARAM (Leuven), 2001–2002, vol. 14.
- Deller K. Getreidekursangaben in neuassyrischen Rechtsurkunden. – “Orientalia” NS (Roma), 1964, vol. 33/2–3.
- Dergachev V. A., Raspovov O. M., van Geel B., Zaitseva G. I. The “Sterno-Etruscia” Geomagnetic Excursion around 2700 BP and Changes of Solar Activity, Cosmic Ray Intensity, and Climate. – “Radiocarbon” (Cambridge), 2004, vol. 46/2.
- Dezső T. Šubria and the Assyrian Empire. – “Acta Antiqua Academiae Scientiarum Hungaricae” (Budapest), 2006, vol. 46.
- D’iakonov I. M. Istoriya Midii ot drevneyshikh vremen do kontsa IV v. do n.e. M.– L., 1956 (In Russian).
- Diakonoff I. M. Media. – The Cambridge History of Iran, vol. 2: The Median and Achaemenian Periods, edited by I. Gershevitch. Cambridge, 1985.
- D’iakonov I. M. Kimmeriytsy i skify na Drevнем Vostoke. – “Rossiyskaya arkheologiya”, 1994, № 1 (In Russian).
- Drake B. L. The Influence of Climatic Change on the Late Bronze Age Collapse and the Greek Dark Ages. – “Journal of Archaeological Science” (Amsterdam), 2012, vol. 30.
- Eph’al I. Esarhaddon, Egypt, and Shubria: Politics and Propaganda. – “Journal of Cuneiform Studies” (New Haven), 2005, vol. 57.

- Eph'al I. The City Besieged. Siege and Its Manifestations in the Ancient Near East (Culture and History of the Ancient Near East 36). Leiden – Boston, 2009.
- Fales F. M. (Ed.-in-Chief). Continuity of Empire (?). Assyria, Media, Persia (History of the Ancient Near East, Monographs – V). Padova, 2003.
- Fales F. M., Postgate J. N. Imperial Administrative Records. Part II: Provincial and Military Administration (State Archives of Assyria 11). Helsinki, 1995.
- Frahm E. The Neo-Assyrian Period (ca. 1000-609 BCE). – A Companion to Assyria, edited by E. Frahm. Malden, MA – Oxford, 2017.
- Fuchs A., Parpola S. The Correspondence of Sargon II. Part III. Letters from Babylonia and the Eastern Provinces (State Archives of Assyria 15). Helsinki, 2001.
- Galil G. The Lower Stratum Families in the Neo-Assyrian Period (Culture and History of the Ancient Near East 27). Leiden, 2007.
- Genito B. The Archaeology of the Median Period: An Outline and a Research Perspective. – “Iranica Antiqua” (Leiden), 2005, vol. 40.
- Glassner J.-J. Mesopotamian Chronicles (Writings from the Ancient World 19). Atlanta, 2004.
- Goff C. Excavations at Baba Jan: The Architecture of the East Mound, Levels II and III. – “Iran” (London), 1977, vol. 15.
- Goff C. Excavations at Baba Jan: The Pottery and Metal from Levels III and II. – “Iran” (London), 1978, vol. 16.
- Gopnik H. The Median Citadel of Godin Period II. – On the High Road: The History of Godin Tepe, Iran (Bibliotheca Iranica: Archaeology, Art and Architecture Series, I), edited by H. Gopnik, M. S. Rothman. Toronto, 2011.
- Graham A. J.. The Colonial Expansion of Greece. – The Cambridge Ancient History” (Second Edition), III/3. The Expansion of the Greek World, Eight to Sixth Centuries B.C., edited by J. Boardman, N. G. L. Hammond. Cambridge, 1982.
- Grantovskiy E. A. Iran i iranctsy do Akhemenidov. M., 1998 (In Russian).
- Grayson A. K. The Chronology of the Reign of Ashurbanipal. – “Zeitschrift für Assyriologie und Vorderasiatischer Archäologie” (Berlin – New York), 1980, Bd. 70.
- Grayson A. K., Novotny J. The Royal Inscriptions of Sennacherib, King of Assyria (704-681 BC). Part 2 (Royal Inscriptions of the Neo-Assyrian Period 3/2). Winona Lake, 2014.
- Grekyan Y. H. When the Arrows are Depleted (Towards the Fall of the Urartian Empire). – “Aramazd: Armenian Journal of Near Eastern Studies” (Yerevan), 2009, vol. 4/2.
- Grekyan Y. H. When the Gods Leave People (The climatological hypothesis of the collapse of the Urartian state). – The Black & the White. Studies on History, Archaeology, Mythology and Philology in Honor of Armen Petrosyan on the Occasion of His 65th Birthday. – “Aramazd: Armenian Journal of Near Eastern Studies 8/1–2”, edited by A. Kosyan, Y. Grekyan, A. Bobokhyan (Yerevan), 2014.
- Grekyan Y. H. Hin Iran. Marastan. – Hayastani harakits erkrneri patmutyun, h. I. Hin shrjan, glkhavor khmbagir` R. A. Safrastyan, patashhanatu khmbagir` A.V. Kosyan, Yerevan, 2013 (In Armenian).
- Grekyan Y. H. Klimayakan popokhutyunnere yev Urartakan petutyan ankume. – HH GAA “Lraber hasarakakan gitutyunneri”, 2019, № 2 (In Armenian).
- Haghani S., Leroy S. A. G., Wesselingh F. P., Rose N. L. Rapid Evaluation of Coastal Lagoons in Response to Human Interference under Rapid Sea Level Change: A South Caspian Sea Case Study. – “Quaternary International”, 2016, vol. 408.

- Haghani S., Leroy S. A. G., Khdir S., Kabiri K., Naderi Beni A., Lahijani H. A. K. An Early ‘Little Ice Age’ Brackish Water Invasion along the South Coast of the Caspian Sea (Sediment of Langarud Wetland) and Its Wider Impacts on Environment and People. – “The Holocene”, 2016, vol. 26/1.
- Herodotos. Patmutyun ine grki, targm. bnagr. yev dsanot. S. Krkyasharyani, Yerevan, 1986 (In Armenian).
- Hunger H. Astrological Reports to Assyrian Kings (State Archives of Assyria 8). Helsinki, 1992.
- Ivantchik A. I. Les Cimmériens au Proche-Orient (Orbis Biblicus et Orientalis 125). Fribourg Suisse – Göttingen, 1993.
- Kakroodi A. A., Kroonenberg S. B., Hoogendoorn R. M., Mohammad Khani H., Yamani M., Ghassemi M. R., Lahijani H. A. K. Rapid Holocene Sea-Level Changes along the Iranian Caspian Coast. – “Quaternary International”, 2012, vol. 263.
- Kakroodi A. A., Kroonenberg S. B., Naderi Beni A., Noehgar A. Short- and Long-Term Development of the Miankaleh Spit, Southeast Caspian Sea, Iran. – “Journal of Coastal Research”, 2014, vol. 30/6.
- Kakroodi A. A., Leroy S. A. G., Kroonenberg S. B., Lahijani H. A. K., Alimohammadian H., Boomer I., Goorabi A. Late Pleistocene and Holocene Sea-Level Change and Coastal Paleoenvironment Evolution along the Iranian Caspian Shore. – “Marine Geology”, 2015, vol. 361.
- Kleiss W. Azerbaijan, II – Archaeology. – Encyclopaedia Iranica, edited by E. Yarshater (London – New York), 1989, vol. III.
- Koliński R. The Post-Assyrian Period in the Eastern Assyria. – Awīlum ša la mašē – man who cannot be forgotten. Studies in Honor of Prof. Stefan Zawadzki Presented on the Occasion of his 70th Birthday (Alter Orient und Altes Testament 463), edited by R. Koliński, J. Prostko-Prostyński, W. Tyborowski. Münster, 2018.
- Kosyan A. V. M. t. a. XII dari merdzavorarevelyan jgnazame yev Haykakan lernashkharhe, Yerevan, 1999 (In Armenian).
- Kosyan A. V. Aram Nahapete Kapadovkiayum (Mi varkadsi artiv). – PBH, 1999, № 1 (In Armenian).
- Kroll S. Urartus Untergang in anderer Sicht. – “Istanbuler Mitteilungen” (Berlin), 1984, Bd. 34.
- Kroll S. Prehistoric Settlement Patterns in the Maku and Khoy: Regions of Iranian Western Azarbaijan. – Proceedings of the International Symposium on Iranian Archaeology: Northwestern Region, edited by M. Azarnoush (Tehran), 2004.
- Kroonenberg S. B., Abdurakhmanov G. M., Badyukova E. N., van der Borg K., Kalashnikov A., Kasimov N. S., Rychagov G. I., Svitoch A. A., Vonhof H. B., Wesselingh F. R. Solar-Forced 2600 BP and Little Ice Age Highstands of the Caspian Sea. – “Quaternary International”, 2007, vol. 173–174.
- Kuhrt A. The Assyrian Heartland in the Achaemenid Period. – Dans les pas des Dix-Mille: peuples et pays du Proche-Orient vu par un Grec (Pallas 43), edited by P. Briant. Toulouse, 1995.
- Kuzucuoğlu C., Dörfler W., Kunesch S., Gouipple F. Mid- to Late-Holocene Climate Change in Central Turkey: The Tecer Lake Record. – “The Holocene”, vol. 21/1, 2011.
- Langgut D., Finkelstein I., Litt Th. Climate and the Late Bronze Collapse: New Evidence from the Southern Levant. – “Tel Aviv” (Tel Aviv), 2013, vol. 40/2.
- Lanfranchi G. B. Esarhaddon, Assyria and Media. – “State Archives of Assyria Bulletin” (Helsinki), 1998, vol. 12/2.

- Lanfranchi G. B. The Assyrian Expansion in the Zagros and the Local Ruling Elites. – Continuity of Empire (?). Assyria, Media, Persia (History of the Ancient Near East, Monographs – V), edited by F. M. Fales. Padova, 2003.
- Lauinger J. Esarhaddon's Succession Treaty at Tell Tayinat: Text and Commentary. – “Journal of Cuneiform Studies” (New Haven), 2012, vol. 64.
- Leichty E. The Royal Inscriptions of Esarhaddon, King of Assyria (680-669 BC) (The Royal Inscriptions of the Neo-Assyrian Period 4). Winona Lake, Indiana, 2011.
- Liverani M. The Medes at Esarhaddon's Court. – “Journal of Cuneiform Studies” (New Haven), 1995, vol. 47.
- Liverani M. The Rise and Fall of Media. – Continuity of Empire (?). Assyria, Media, Persia (History of the Ancient Near East, Monographs – V), edited by F. M. Fales. Padova, 2003.
- Luukko M., Van Buylaere G. The Political Correspondence of Esarhaddon (State Archives of Assyria 16). Helsinki, 2002.
- Mac Ginnis J., Matney T. Archaeology at the Frontiers: Excavating a Provincial Capital of the Assyrian Empire. – “Journal of Assyrian Academic Studies”, 2009, vol. 23/1.
- Malekzadeh M., Saeedyan S., Naseri R. Zar Bolagh: A Late Iron Age Site in Central Iran. – “Iranica Antiqua” (Leiden), 2014, vol. 49.
- Medvedskaya I. N. Drevniy Iran nakanune imperiy (IX–VI vv. do n.e.). Iстория Мидийского царства. SPb., 2010 (In Russian).
- Miglus P. A. Die letzten Tage von Assur und die Zeit danach. “Isimu” (Madrid), 2000 (2003), vol. 3.
- Mohammadifar Y., Norouzi A., Sharifi A. Preliminary Report of the 16th Season of Excavations at Tepe Hegmataneh, Hamedan. – “Iranian Journal of Archaeological Studies” (Zahedan), 2012, vol. 2/2.
- Mohammadifar Y., Sarraf M. R., Motarjem A. A Preliminary Report on Four Seasons of Excavations at Moush Tepe, Hamedan, Iran. – “Iranica Antiqua” (Leiden), 2015, vol. 50.
- Naderi Beni A., Lahijani H., Mousavi Harami R., Arpe K., Leroy S. A. G., Marriner N., Berberian M., Andrieu-Ponel V., Djamali M., Mahboubi A., Reimer P. J. Caspian Sea-Level Changes during the Last Millennium: Historical and Geological Evidence from the South Caspian Sea. – “Climate of the Past” (Göttingen), 2013, vol. 9.
- Naseri R., Malekzadeh M., Naseri A. Günespān: A Late Iron Age Site in the Median Heartland. – “Iranica Antiqua” (Leiden), 2016, vol. 51.
- Novotny J., Jeffers J. The Royal Inscriptions of Ashurbanipal (668–631 BC), Aššur-etel-ilāni (630–627 BC), and Sîn-šarra-iškun (626–612 BC), Kings of Assyria. Part 1 (The Royal Inscriptions of the Neo-Assyrian Period 5/1). University Park, MD, 2018.
- Oates J., Oates D. Nimrud: An Assyrian Imperial City Revealed. London, 2001.
- Parpola S. Letters from Assyrian and Babylonian Scholars (State Archives of Assyria 10). Helsinki, 1993.
- Parpola S., Porter M. The Helsinki Atlas of the Near East in the Neo-Assyrian Period. Helsinki, 2001.
- Parpola S., Watanabe K. Neo-Assyrian Treaties and Loyalty Oaths (State Archives of Assyria 2). Helsinki, 1988.
- Pickworth D. Excavations at Nineveh: The Halzi Gate. – “Iraq” (London), 2005, vol. 67/1.
- Ponchia S. Neo-Assyrian Corn-Loans: Preliminary Notes. – “State Archives of Assyria Bulletin” (Helsinki), 1990, vol. 4/1.

- Ponchia S. The Neo-Assyrian *Adē* Protocol and the Administration of the Empire. – From Source to History: Studies on Ancient Near Eastern Worlds and Beyond, Dedicated to Giovanni Battista Lanfranchi on the Occasion of His 65th Birthday on June 23, 2014 (Alter Orient und Altes Testament 412), edited by S. Gaspa, A. Greco, D. M. Bonacossi, S. Ponchia, R. Rollinger. Münster, 2014.
- Psomiadis D., Dotsika E., Albanakis K., Ghalab B., Hillaire-Marcel C. Speleothem Record of Climatic Changes in the Northern Aegean Region (Greece) from the Bronze Age to the Collapse of the Roman Empire. – “Palaeogeography, Palaeoclimatology, Palaeoecology”, 2018, vol. 489.
- Radner K. The Trials of Esarhaddon: The Conspiracy of 670 BC. – Assur und sein Umland. Im Andenken an die ersten Ausgräber von Assur (Isim 6), edited by P. Miglus, J. M. Cordoba. Madrid, 2003.
- Radner K. An Assyrian View on the Medes. – Continuity of Empire (?): Assyria, Media, Persia (History of the Ancient Near East, Monograph 5), edited by F. M. Fales. Padua, 2003.
- Radner K. Provinz. C. Assyrien. – “Reallexikon der Assyriologie und Vorderasiatischen Archäologie” (Berlin – Leipzig – New York), 2006, Bd. 11/1–2.
- Radner K. Assyria and the Medes. – The Oxford Handbook of Ancient Iran, edited by D. T. Potts. Oxford, 2013.
- Radner K. Hired Labor in the Neo-Assyrian Empire. – Labor in the Ancient World, edited by P. Steinkeller and M. Hudson. Dresden, 2015.
- Raspopov O. M., Shumilov O. I., Dergachev V. A., van Geel B., Mörner N.-A., van der Plicht J., Renssen H. Abrupt Climate Change around 2700–2800 Years BP as an Example of Existence of 2400 Year Periodicity in Solar Activity and Solar Variability. – Proceedings of the 1st Solar and Space Weather Euroconference, 25–29 September 2000, Santa Cruz de Tenerife, Tenerife, Spain, edited by A. Wilson. Noordwijk, 2000.
- Razmjou S. In Search of the Lost Median Art. – “Iranica Antiqua” (Leiden), 2005, vol. 40.
- Reade J. Nineveh (Nineveh). – “Reallexikon der Assyriologie und Vorderasiatischen Archäologie” (Berlin – Leipzig – New York), 2000, Bd. 9/5–6.
- Riehl S. A Cross-Disciplinary Investigation of Cause-and-Effect for the Dependence of Agro-Production on Climate Change in the Ancient Near East. – Knochen pflastern ihren Weg Festschrift für Margarethe und Hans-Peter Uerpmann (BioArchaeologica 5), edited by R. de Beauclair, S. Müntzel, H. Napierala. Rahden/Westf., 2009.
- Roaf M. The Median Dark Age. – Continuity of Empire (?). Assyria, Media, Persia (History of the Ancient Near East, Monographs – V), edited by F. M. Fales. Padova, 2003.
- Rollinger R. The Western Expansion of the Median “Empire”. A Re-Examination. – Continuity of Empire (?). Assyria, Media, Persia (History of the Ancient Near East, Monographs – V), edited by F. M. Fales. Padova, 2003.
- Rollinger R. Kerkenes Dağ and the Median “Empire”. – Continuity of Empire (?). Assyria, Media, Persia (History of the Ancient Near East, Monographs – V), edited by F. M. Fales. Padova, 2003.
- Rollinger R. Das medische Königtum und die medische Suprematie im sechsten Jahrhundert v. Chr. – Concepts of Kingship in Antiquity. Proceedings of the European Science Foundation Exploratory Workshop, held in Padova, November 28th – December 1st, 2007 (History of Ancient Near East / Monographs – XI), edited by G. B. Lanfranchi, R. Rollinger. Padova, 2010.

- Rollinger R. The Medes of the 7th and 6th c. BCE: A Short-Term Empire or Rather a Short-Term Confederacy?. – *Short-Term Empires in World History*, edited by R. Rollinger, J. Degen, M. Gehler. Wiesbaden, 2020.
- Sancisi-Weerdenburg H. Was there ever a Median Empire?. – *Achaemenid History III: Method and Theory (Proceedings of the London 1985 Achaemenid History Workshop)*, edited by A. Kuhrt, H. Sancisi-Weerdenburg. Leiden, 1988.
- Schneider A. W., Adali S. F. “No Harvest was Reaped”: Demographic and Climatic Factors in the Decline of the Neo-Assyrian Empire. – “Climatic Change”, 2014, vol. 127/3–4.
- Schneider A. W., Adali S. F. Further Evidence for a “Late Assyrian Dry Phase” in the Near East during the Mid-to-Late Seventh Century BC?. – “Iraq” (London), vol. 78.
- Sinha1 A., Kathayat G., Weiss H., Li H., Cheng H., Reuter J., Schneider A. W., Berkelhammer M., Adali S. F., Stott L. D., Edwards R. L. Role of Climate in the Rise and Fall of the Neo-Assyrian Empire. – “Science Advances”, (Washington), DC, vol. 5, 2019.
- Starr I. Queries to the Sungod. Divination and Politics in Sargonid Assyria (State Archives of Assyria 4). Helsinki, 1990.
- Stronach D. Independent Media: Archaeological Notes from the Homeland. – Continuity of Empire (?). *Assyria, Media, Persia (History of the Ancient Near East, Monographs – V)*, edited by F. M. Fales. Padova, 2003.
- Stronach D. Excavations at Nineveh, 1987. – “Sumer” (Baghdad), 1989–1990, vol. 46.
- Stronach D. The Territorial Limits of Ancient Media: an Architectural Perspective. – Stories of Long Ago: *Festschrift für Michael D. Roaf (Alter Orient und Altes Testament, Bd. 397)*, edited by H. Baker, K. Kaniuth and A. Otto. Münster, 2012.
- Stronach D. B., Lumsden S. UC Berkeley’s excavations at Nineveh. – “Biblical Archaeologist” (New Haven), 1992, vol. 55.
- Stronach D., Roaf M. Nush-i Jan I. The Major Building of the Median Settlement. London – Leuven – Paris – Dudley, MA, 2007.
- Talebi T., Ramezani E., Djamali M., Lahijani H. A. K., Naqinezhad A., Alizadeh K., Andrieu-Ponel V. The Late-Holocene Climate Change, Vegetation Dynamics, Lake-Level Changes and Anthropogenic Impacts in the Lake Urmia Region, NW Iran. – “Quaternary International”, 2016, vol. 408.
- Tamburro A. Water Technology in Ancient Mesopotamia. – *Ancient Water Technologies*. Dordrecht – Heidelberg – London – New York, 2010.
- Tsakanyan R. *Etnokaghakan teghasharzhere Merdzavor Arevelkum yev Haykakan lernashkharhum m. t. a. VII–VI dd.*, Yerevan, 2018 (In Armenian).
- Tuplin C. Medes in Media, Mesopotamia, and Anatolia: Empire, Hegemony, Domination or Illusion?. – “Ancient West & East” (Leiden – Boston), 2004, vol. 3/2.
- Ur J. A., Wilkinson T. J. Settlement and Economic Landscapes of Tell Beydar and Its Hinterland. – *Beydar Studies 1* (Subartu 21), edited by M. Lebeau, A. Suleiman. Turnhout, 2008.
- van Loon M. Revue article of S. Kroll, Keramik urartäischer Festungen in Iran. Berlin, 1976. – “Bibliotheca Orientalis” (Leiden), 1979, vol. 36/5–6.
- Waters M. Media and Its Discontents. – “Journal of the American Oriental Society” (Boston), 2005, vol. 125.
- Waters M. Notes on the Medes and Their “Empire” from Her 25.25 to Hdt 1.134. – A Common Cultural Heritage. *Studies on Mesopotamia and the Biblical World in Honor of Barry L. Eichler*, edited by G. Frame, E. Leichty, K. Sonik, J. H. Tigay, S. Tinney. Maryland, 2011.

- Weiss H. Megadrought, Collapse, and Resilience in Late 3rd Millennium BC Mesopotamia. – 2200 BC – A Climatic Breakdown as a Cause for the Collapse of the Old World? (7th Archaeological Conference of Central Germany, October 23–26, 2014 in Halle [Saale]) (Tagungen des Landesmuseums für Vorgeschichte Halle 12), edited by H. Meller, H. W. Arz, R. Jung, and R. Risch. Halle-Saale, 2015.
- Weiss H. Seventeen Kings Who Lived in Tents. – The Late Third Millennium in the Ancient Near East: Chronology, C14, and Climate Change (Papers from the Oriental Institute Seminar ‘The Early/Middle Bronze Age Transition in the Ancient Near East: Chronology, C14, and Climate Change’ Held at the Oriental Institute of the University of Chicago, 7–8 March 2014) (Oriental Institute Seminars 11), edited by F. Höflmayer. Chicago, 2017.
- Yasur-Landau A. The Philistines and Aegean Migration at the End of the Late Bronze Age. Cambridge, 2010.
- Zimansky P. E. The Kingdom of Urartu in Eastern Anatolia. – Civilizations of the Ancient Near East, edited by J. M. Sasson. New York, 1995, vol. 2.

«КРИЗИС VII В. ДО Н. Э.» И ПРОБЛЕМА ОБРАЗОВАНИЯ МИДИЙСКОЙ ДЕРЖАВЫ

ЕРВАНД ГРЕКЯН

Р е з ю м е

Ключевые слова: мидийская держава, Иранское нагорье, Ассирия, Урарту, палеосреда, климатические изменения, кризис, этнические передвижения, депопуляция.

VII в. до н. э. считается периодом образования и подъема мидийской державы. Между тем именно в этот период на Армянском нагорье и на территории Месопотамии наблюдаются экономический кризис, политическая нестабильность, этнические передвижения, упадок военной мощи, вражеские нашествия и, в конце концов, распад старых государственных структур и депопуляция. Эти явления обычно встречаются на драматических этапах истории древней Передней Азии и, как правило, обусловлены проблемами, вызванными климатическими изменениями.

Сопоставление новых данных по палеосреде и климату Передней Азии VII в. до н. э. с письменными и археологическими источниками данного периода показывает, что вышеуказанные кризисные явления имели место и на Иранском нагорье. Следовательно, образование мидийской державы на том этапе, когда имеем дело с неблагоприятной окружающей средой, кажется весьма сомнительным.

Ерванд Грекян – д. и. н., ведущий научный сотрудник отдела ранней археологии Армении Института археологии и этнографии НАН РА. Научные интересы: история и историческая география, социально-экономические отношения, духовная культура, археология и палеосреда Ближнего

Уарту, других государственных образований Армянского нагорья и стран древней Передней Азии. Автор 2 коллективных монографий и 80 статей. ervandgr@yahoo.com

“THE CRISIS OF THE 7TH CENTURY BC” AND THE PROBLEM OF FORMATION OF THE MEDIAN EMPIRE

YERVAND GREKYAN

S u m m a r y

Key words: Median Empire, Iranian Plateau, Assyria, Urartu, palaeoenvironment, climate changes, crisis, ethnic migrations, depopulation.

The 7th c. BC is considered as the period of formation and rise of the Median Empire. Meantime, economic crises, political instability, ethnic migrations, decline in military power, foreign invasions and, eventually, collapse of ancient state structures and depopulation were observed in the Armenian Highland and in Mesopotamia in the same period. These phenomena have usually occurred in the dramatic periods of the history of ancient Near East and, as a rule, were conditioned by climate change-related problems.

The comparison of the new data on paleoenvironment and climate of the Near East in the 7th c. BC with the written and archaeological sources of that period, points out that the crisis phenomena described above have also occurred in the Iranian Plateau. Accordingly, the formation of the Median Empire in the period, when we deal with unfavourable environment, seems quite doubtful.

Yervand Grekyan – Doctor of Sciences in History, Leading Researcher at the Departement of Early Archaeology of Armenia of the NAS RA, Institute of Archaeology and Ethnography. Scientific interests: history and historical geography, social and economic history, spiritual culture, archaeology and palaeoenvironment of Biainili-Urartu, other state formations of the Armenian Highland and the countries of ancient Near East. Author of 2 collective monographs and 80 articles. ervandgr@yahoo.com

ԴԱՎԻԹ ԱՆԱՍՈՒԽԻ «ԿԱՐՍԻ ԱՆԿՈՒԽԸ»
ՎԵՐՍԱԳՐՈՎ ՀՈԴՎԱԾԸ

Ավելի քան 100 տարի առաջ՝ 1920 թ. հոկտեմբերի 30-ին, տեղի ունեցալ հայոց նորագույն պատմության մուայլ ու ամոթալի իրադարձություններից մեկը՝ Հայաստանի համար ռազմավարական ու տնտեսական խոշոր նշանակություն ունեցող Կարս բերդաքաղաքն առանց դիմադրության հանձնվեց ժողովրդին:

Մի քանի խոսքով վերհիշենք Կարսի պատմությունը: Բերդը հիշատակվում է IX դ., թեև հիմնադրվել է ավելի վաղ: Եղել է Կարսի թագավորության կենտրոնը: Ընկել է սելջուկ-թուրքերի, մոնղոլների, Լենլիմեմուրի, Օսմանյան թուրքիայի տիրապետության տակ: 1828 և 1856 թթ. ոռւսական գորքերը գրավել են Կարսը: 1877 թ. նոյեմբերի 6-ին գեներալ Հ. Լազարեի ոռւսական գորախումբը թուրքերից կրկին գրավել է բերդաքաղաքը: այն դարձել է Կարսի մարզի կենտրոնը: Հայ բնակչությունը մշտապես մեծամասնություն է կազմել (ապրել են թուրքեր, ոռւսներ, ասորիներ), ունեցել է երեք եկեղեցի, գործել են արական և օրիորդաց դպրոցներ, հրատարակվել են շաբաթաթերթեր ու օրաթերթեր: Կային գործարաններ (մասնավորապես՝ գարեջրի, օճառի, կրի, աղյուսի, հանքային ջրերի լցման), խճուղիներով և երկաթուղով կապված էր Ալեքսանդրապոլի (Դյումրի), Սարիղամիշի հետ: Ռուսաստանում 1917 թ. փետրվարյան հեղափոխությունից հետո՝ մարտին, Կարսում ստեղծվել է զինվորների պատգամավորների խորհուրդ: Անդրկովկայան սեյմի վրացի ղեկավար Ակակի Զիսենկելու ստորև հեռագրային դավադիր հրահանգով գեներալ թ. Նազարեգյանի ղեկավարած Հայկական կորպուսը 1918 թ. ապրիլի 12-ին թողել է քաղաքը, և դիմադրության չհանդիպելով՝ թուրքական զորքը մտել է Կարս: Բնակչությունը կողովով եղանակով ու կոտորվել է:

Հայաստանի առաջին Հանրապետության օրոք՝ 1919 թ. ապրիլին, հայկական բանակը վերագրավել է Կարսը: Ինչպես վերը նշվեց, 1920 թ. հոկտեմբերի 30-ին թուրքական բանակը դարձյալ չհանդիպելով՝ դիմադրության՝ մտել է բերդաքաղաք: 1921 թ. մարտի 16-ին Մոսկվայի խորհրդավորության «Բարեկամության և եղբայրության» պայմանագրով Կարսը հանձնվել է թուրքիային¹:

Կարսի 1920 թ. անկման մասին կա հուշագրական ու պատմագիտական ահուելի գրականություն, վեր են հանվել, լուսաբանվել, հանդամանորեն վերլուծվել դրա տարաբնույթ պատճառները: Մեր նպատակը չէ այսուղ անդրադառնալ դրանց²:

¹ Վերոգրյալի մասին մասնավորապես տե՛ս «Հայկական համառոտ հանրագիտարան», հ. 2, Երևան, 1995, էջ 641–649:

² Այդ մասին մանրամասն տե՛ս Գ. Ե ա զ ը ճ ե ա ն. Կարսի 1920 թ. անկման խորքային պատճառները, Երևան, 2007, Հայոց պատմություն, հ. IV, գիրք առաջին: Նորագույն ժամանակաշրջան (1918–1945 թթ.), Երևան, 2010, էջ 262–263,

Ստորև ներկայացվող «Կարսի անկումը» վերնագրով հոդվածը պատկանում է խնդրո առարկա իրադարձության ժամանակակիցի՝ հասարակական-քաղաքական անվանի գործիչ, պատմաբան-տնտեսագետ, փիլիսոփիա-սոցիոլոգ, հրապարակագիր-խմբագիր, գրականագետ, միով բանիվ հայագետ Դավիթ Անանունի (1880–1943)³ գրչին, ով դեպքերից ընդամենը մի քանի շաբաթ անց իր՝ խորագնին, սառը, զգաստ դատողություններով լի մտորումները, կոչ-Հորդորը հրապարակել է Երևանում լույս տեսնող «Հայաստանի կոռպարագիա» երկշաբաթերթում (№ 21–22, նոյեմբեր, 1920, էջ 859–861): Որքան մեզ հայտնի է, հոդվածն առայսօր շրջանառության մեջ չի դրվել: Ծանոթանալով չափազանց ուշագրավ, բովանդակալից այս նյութին՝ ընթերցողը, կարծում եմ, կհանգի մերօրյա խառնակ իրականության հետ առնչվող, արդիական հնչեղություն և բազում գուգահեռներ ունեցող հետևողությունների: Ինչպես ասում են՝ պատմական իրադարձությունները կրկնվելու սովորություն ունեն:

ԱՆՈՒՇԱՎԱՆ ԶԱՔԱՐՅԱՆ

ԿԱՐՍԻ ԱՆԿՈՒՄԸ

Կարսը ընկավ։ Մի անգամ էլ հաղթանակեց թուրքի տոհմական բնազդը։ Մի անգամ էլ պարտվեց հայի պառակտուն քաղաքակրթությունը։ Կարսը ընկավ ոչ թե թուրքի թվական ու տեխնիկական գերազանցության շնորհիվ։ Ոչ։ Կարսը ընկավ, որովհետև թուրքը մեզ գերազանցեց իր ոգու կորովով, իր ցեղային շաղկապի ամրությամբ։ Նա շաղակատող խուժանի չնմանվեց։ Նրա մեջ լուցին անհատական ու խմբակցական ձայները։ Նա ձուլվեց մի կարծր մարմնի մեջ և իր ճիրանների մեջ առավ հայկական ամրոցը։ Թուրքը իմացավ, թե ինչի է ձգտում, ինչի համար է կուլում։ Հայն էր, որ չիմացավ, թե ինչ է պաշտպանում և ինչ մատնում թշնամու ձեռքը։ Գիտակցության լույսը չողողեց նրա մաղձուռ հոգին։ Յերային բնազդը չերմություն չմատակարարեց նրա կծկված սրտին։ Եվ նա հանձնեց իր վահանը թշնամուն։ Հանձնեց, ինչպես այդ արել էր դարեր առաջ։ Հանձնեց, որ ստորանա և նվաստացման մեջ քրքրե իր մարմինն ու հոգին։ Նորից մազցի աղատության բարձունքը, նորից վերապրե իր պատմության մուայլ էջերից մեկը, պատմության, որ հիշեցնում է անսկիզբ ու անվախճան քայլարան։

Վ. Ա. Հարությունյան. Կարսի հանձնումը: Զինվորական գավադրության վարկածը.— «Վէմ» համահայկական հանդես (Երևան), 2018, էջ 278–330, նույնին՝ Առաջին Հանրապետությունն. Կարսի վերջնախաղը, Երևան, 2018:

³ Դ. Անանունի մասին մանրամասն տե՛ս Հ. Գրիգորյան, Վ. Հակոբյանը. Ուրվագծեր Դավիթ Անանունի կյանքի ու գործունեության. – «Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես (Երևան), 2019, № 2, էջ 108–128, Ա. Զաքարյան։ Դավիթ Անանուն. մարդը և գործը (ծննդյան 140-ամյակի առթիվ). – ՊԲՀ, 2020, № 1, էջ 90–127, Վ. Հակոբյան։ Դավիթ Անանուն, Երևան, 2020։

Կարսը ընկավ, որովհետև մենք ուսում էինք, շրջում, բազմանում, բայց չունեինք մեր սրբության սեղանը։ Ո՞ւ է սրբազան դող առաջացնող հայկական տաճարը։ Հայրենիքն է այն, ա՞զգը, սոցիալական որևէ բարդ կնճի՞ո։ Ոչ ոք պատասխան չի կարող տալ։ Որովհետև հայր գարեր շարունակ մատնված է բուաական կյանքի և նոր էր միայն իր համար ընտրում առաջնորդ աստղ։ Իր հոգին ազնվացնող խանձարուրի մոտ է նստել մեր ժողովուրդը։ Եվ ահա, բորբնիների պես, դեպի մեր աստղամանուկի խանձարուրը իրանց արյունոտ թաթերն են մեկնում դարավոր նեղիչները։ Նրանք դարանամուտ ատամ են շրիկացնում և թունոտ լորձունք թափում բոլոր անկյուններից։

Աչա Ռուսաստանը, որ ընդարձացրել է մեր ողնաշար Ղարաբաղը, Զանգեզուրը, Գողթանը և Ղազախը։ Կարո՞ղ ես գործի կանչել լեռների ու անտառների կտրիճներին։ Պայքարողների պահեստ ունիս, բայց նրանք մնացել են կառչած իրանց բնակավայրին և չեն կարող օգնության գալ նեղվող կենտրոնին։

Աչա Լուին ու Ախալքալաքը, որոնք մատնվել են կաթվածի, որովհետև մեր հարևանը ընչաքաղ է և սուր ախորժակի տեր։

Աչա Ելրոպական մեծ պետությունները, որոնք մեր հայրենիքը և մեր արյունը դարձրել են մանր դրամանիշ, որով փակում են իրանց խոշոր հաշիվները։

Այս բոլորը տեսնում է թուրքը։ Տեսնում է և ճանկերը մեկնում մեր հարությունը անձնափորող խանձարուրը, դեպի մեր Անկախությունը։

Թուրքը հաջողություն տոնեց, նա Կարս մտավ, որովհետև ինքը իրան կոչված է համարում իշխանություն անելու։ Նա ընտելացել է իշխողի կոչման։ Իշխողը և ուզմիկ է։ Նա գիտե, թե ինչ է նվաճում, ինչ պաշտպանում կամ ինչ կորցնում։

Հայր ձախորդության հանդիպեց, որովհետև նրա ինքնիշխանության զգացումը դեռ խանձարուրի մեջ է, որովհետև նա ինքն իրան մի մոլորակ է համարում, որ պիտի ուղեկցի օտար լուսավորներին։ Երբ նրա միտքն ու հոգին կմաշեն ակնկալության նվաստացնող շրջանը, երբ նրա հոգին կնվաճե լուսավոր դառնալու փառամիրությունը, այն ժամանակ նա կունենա իր ուխտի տապանակը, որի համար և կիմանա ծառանալ թշնամու դեմ։

Այսօր հաջողությունների ու ձախորդությունների մեջ ենք նվաճում մեր ուխտի տապանակը – Հայրենիքն ու Անկախությունը։ Կարսի անկումը ծանր հարված է մեր ազգային ինքնասիրության։ Սակայն այդ հարվածը չպիտի վհատեցնե մեր հոգին։ Այդպես է նայում թշնամին իր արածի վրա։ Իր հարվածով նա կամենում է փոշիացնել մեզ և այդ փոշին տրորել իր երկաթե կրունկներով։ Մենք պիտի ցույց տանք, որ թշնամու հարվածը կարող է փոշիացման փոխարեն կարծրացնել մեր մարմինը, կոել դիմադրական նոր կորով։

Թո՞ղ լռե հայի մեջ մռայլ ինքնածվատման արհեստը։ Թո՞ղ բութ խոնարհության փոխարեն նրա մեջ ծառս լինի պայծառ ըմբռատացումը։ Թո՞ղ գերագույն գեղեցկություն համարվի մահը հանուրի առաջ և հանուրի բարօրության համար և մենք կհաղթենք։

Կարսը ընկավ, որովհետև թշնամին իր գոյության իմաստը տեսնում է թուրքիայի հզորության ու հարատեսության մեջ։ Այստեղ անհատը, քաղա-

քացին մոռացավ իրան, ամբողջովին ստորադասեց իր եսը հայրենիքի պահանջներին և իր համարձակությամբ փառավորեց նրա անունը:

Կարսը պիտի նվաճվի մեր ձեռքով այն օրը, երբ հայի հայրենասիրական առաքինությունները գերազանցեն թուրքի նման բարեմասնությունները: Այդ ուղղությամբ հոգնություն պիտի կրե մեր միտքը, նոր մղումներ ստանա մեր կամքը:

Կարսը կնվաճվի այն օրը, երբ ինքներս կնվաճենք մեզ, այսինքն կդառնանք մի կարծր մարմին, որ մահ է նյութում այն բոլոր երախներին, որոնք մեզ կանելու ձգտումներ են ցույց տալիս:

Ամփոփենք մեր տարերքը կազմակերպված պայքարի մեջ: Հրաժարվենք բռւսական գոյությունից: Առաջնորդող աստղը Հայրենիքն ու Անկախությունն է: Բարձրացրու, Հայ մարդ, աչքդ դեպի այդ լուսատուն և անուժ դարձրու այն բոլոր բռունցքները, որ կամենում են հափշտակել նրա ճառագլխների ջերմությունը:

Դ. Անանուն

ՍԵՆ ԱՐԵՎԱՏՅԱՆ. Պատմություն: Փիլիսոփայություն: Մշակույթ, երևան, «Եվրոպինտ», 2018, 432 էջ*:

СЕН АРЕВАТЯН. История. Философия. Культура. Ереван, «Европrint», 2018, с. 432.

Բանալի բառեր՝ Սեն Արևատյան, Եղնիկ Կողբացի, Դավիթ Անհաղթ, Հովհան Որոտնեցի, Գրիգոր Տաթևացի, Գլածոր, Վիլիսոփայություն, Հայրենասիրություն, նորավառոնականություն, Համալսարան:

2018թ. վերջին ՀՀ ԳԱԱ-ի փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտը և «Մատենադարան» Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտը միացյալ հրատարակել են ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, Մատենադարանի երկարամյա տնօրեն Սեն Արևատյանի փիլիսոփայական գիտական ժառանգության հատընտիրը՝ ոռուսերեն ու հայերեն գործերից բաղկացած: Հատորի վերջում դրված է գիտնականի երկերի մատենագիտությունը՝ 1953թվականից մինչև 2016թվականը:



Գիրքը բաղկացած է 432 էջից և ունի ոռուսերենով գրված առաջաբան՝ «Ակադեմիկոս Ս. Արևատյանի գիտական ժառանգությունը և նրա արդիական նշանակությունը» խորագրով: Առաջաբանի հեղինակն անվանի գիտնական, փիլ. գ. դ., պրոֆ. Կառլեն Միրումյանն է, որը ոչ միայն Ս. Արևատյանի գիտական ժառանգության քաջ գիտակն է, այլև համահեղինակ է նրա որոշ աշխատությունների:

Գրքում, որը կոչվում է «Պատմություն: Փիլիսոփայություն: Մշակույթ», Ս. Արևատյանի գործերը դասավորված են ժամանակագրական կարգով, որպեսզի երևան նշանավոր փիլիսոփայի գիտական մտքի առաջընթացը: Առաջաբանի հեղինակն իրավացիորեն նկատում է, թե գիտնականի տեսական որոշ գործերում կարելի է գտնել խորհրդային շրջանի իշխող գաղափարախոսության հետքերը, սակայն այս հանգամանքը բնավ չի ստվերում նրա թողած գիտական ժառանգության մնայուն արժեքը: Արևատյանը ստեղծել է հիմնարար ու ելակետային գործեր, որոնք ճանապարհ են Հարթել հայ միջնադարյան փիլիսոփայությունը հետազոտող հետագա գիտնականների համար: Նա իր բազմացյուղ գիտական աշխատություններում փայլուն ձեռվ միավորել է պատմաբանի, փիլիսոփայի, աղբյուրագետի, բնագրագետի ու թարգմանչի տաղանդը (Էջ 7):

* Ներկայացվել է 12. II. 2021թ., ընդունվել է տպագրության 10. III. 2021թ.:

Ա. Արևշատյանի թարգմանչական եղակի տաղանդի շնորհիվ հայ միջնադարյան ինքնուրույն և թարգմանական փիլիսոփայական մտքի փայլուն ներկայացուցիչների՝ եղնիկ Կողբացու, Դավիթ Անհաղթի, Գրիգոր Տամէւացու, Հերմես Եռամեծի և հայ միջնադարյան փիլիսոփայական միտքը ձևավորած այլ մեծ մտածողների աշխատությունները գրաբարից կատարած թարգմանություններով լույս են տեսել ոռուերենով և այն էլ ոչ մեկ անգամ։ Խուսերենով են լույս տեսել Մոսկվայում Հրատարակվող տարբեր Հեղինակավոր հանրագիտարաններում տպագրված բազում հոդվածներ՝ նվիրված Հովհան Որոտնեցուն, Մատթեոս Զուղայեցուն, Մեսրոպ Մաշտոցին, Միհիթար Գոշին, Դավիթ Անհաղթին, Մատենադարանին և ուրիշների։ Բազմաթիվ են գիտնականի հոդվածները՝ տպագրված Հայկական սովետական հանրագիտարանի տարբեր հատորներում։ Դրանցից են՝ Արիստոտելին, Բարդուղիմեսոս Բոլոնիացուն, Գրիգոր Մագիստրոսին, Գրիգոր Տամէւացուն, Եղնիկ Կողբացուն, Հակոբ Քոնեցուն, Հովհան Ուկեբերանին, Հովհան Ֆիդանցային, Նիկողայոս Լյուբացուն, Պարույր Հայկազնին, Պլատոնին, նոմինալիզմին և ռեալիզմին, Պլոտինին, Պյութագորասին, Պրոկլես Կոստանդնուպոլսիցուն, Պոնցիոսին, Պրոկլ Դիագոլիսոսին, Պորֆիրիոսին նվիրված հոդվածները, որոնք նշանավորում էին գիտական փաստերի առավել քան ճշգրտություն։

Իր թարգմանական բեղուն աշխատանքում Արևշատյանը երբեմն հեղինակից է դարձել կնոջ՝ բ. գ. դ. Քնարիկ Տեր-Դավթյանին, որը նույնպես մեծ ծառայություն ունի հատկապես հայ վարքագրությունները ոռուերեն թարգմանելու այնքան կարևոր գործում։ Նրանց համատեղ վերջին թարգմանական գործն Ագամիանգեղոսի «Հայոց պատմությունն» էր (անգլ.՝ Ա. Դավթյան, Ա. Արևշատյան, Երևան, 2004)։

Ս. Արևշատյանի առանձին աշխատություններ լույս են տեսել Գերմանիայում, Իտալիայում, Ֆրանսիայում, ԱՄՆ-ում։ Նրա ոռուերեն թարգմանական գործի պասկներից մեկն էլ 2011-ին Երևանում լույս տեսած Գրիգոր Լուսավորչի «Յաճախապատում ճառերն» են («Մոնուական պատմություններ» հայության պատմությունների համար պատմություններ» առաջնային պատմությունների համար)։

Զմոռանանք նաև այն իմաստալից դասախոսությունները, որոնք Արևշատյանը վարում էր Մոսկվայի «Կյուլտուրա» («Մշակույթ») հեռուստաալիքով՝ ոռուալեղու ներկայացնելով Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի միջնադարյան գանձերը՝ հայ մտքի հանճարը հասանելի դարձնելով աշխարհին։

Գրախոսավոր գրքի հայերեն հատվածում հատկապես արդիական հնչողություն ունի «Մովսես Խորենացին ազգային ինքնիշխանության մասին» հոդվածը։ Գիտնականը շեշտում է «Հայոց պատմության» այն հատվածները, որոնք Պատմահայրը գրել է դարերի համար՝ մեզ ու հետագա սերունդներին հղելով չմոռացվող պատգամներ։ Խոսելով Հայկան Արամի մասին՝ Պատմահայրն ասում է. «Սա աշխատասեր և հայրենասեր մարդ լինելով լավ էր համարում հայրենիքի համար մեռնել, քան տեսնել, թե ինչպես օտարացեղ ազգեր ոտնակոխ են անում իր հայրենիքի սահմանները, և օտարները տիրում են իր արյունակից հարազատների վրա» (Էջ 408)։

Փիլիսոփան Հին կտակարանից հիշեցնում է Մովսես Խորենացու այն կարևոր գիտարկումը, որով Երեմիա մարդարեն հաստատում է, թե իր ապրած ժամանակներում հայերն արդեն պետականություն ունեին և կարող էին իրենց զինված ուժերով օգնել իսրայելցիներին. «Հրաման տուր, – ասում է նա, – Արարատյան թագավորությանը և Ասքանազյան գնդին» (Էջ 409):

Խորենացին հայ առաջնորդներին ու ազգին պատգամում է բոնությանը պատասխանել բոնությամբ և հերոսական պայքար մղել հանուն սեփական անկախ պետականության, կերտել հայագիր հզոր ու անձնազոհ զորավար, ինչպես Մակաբեն էր, և ունենալ սեփական թագավորությունը վերականգնող Զորաբարել (Էջ 417):

Մեծարժեք է «Արիստոտելը և հայ փիլիսոփայությունը» ուսումնասիրությունը, որից պարզ երևում է, որ Արևշատյանը ծանոթ է Արիստոտելի փիլիսոփայական ողջ ժառանգությանը և հայ փիլիսոփայական մտքի դարավոր ընթացքի մեջ այդ հանճարեղ ու չնացող իմաստունի թողած ազգեցությանը: Հիշենք հույն փիլիսոփայի «Եթիկա» աշխատությունից մի միտք, որն ասված է բոլոր ժամանակների ու բոլոր ազգերի համար. «Արժանավոր մարդ լինել նշանակում է օտարական լինել առաքինություններով: Եվ նա, ով մտածում է գործել հասարակական ու քաղաքական կյանքում, պետք է լինի առաքինի իրավունքի մարդ»¹:

Արիստոտելի բարոյագիտական, քաղաքական, գրականագիտական մտքերն արդեն առաջնային էին ոսկեդարի հայ փիլիսոփայական մտքի համար. դրանք ջանադիր ձևով թարգմանվում էին, յուրացվում, մեկնաբանվում: Վերոհիշյալ հոդվածով Արևշատյանն առաջինը մեզանում ընդհանուր գծերով ուրվագծել է Արիստոտելի փիլիսոփայության կատարած գերը՝ ողջ հայ միջնադարյան իմաստափրական մտքի ձևավորման ու հասունացման խնդրում: Աթենքի, Կոստանդնուպոլիսի, Աղեքսանդրիայի գիտական դպրոցներում ուսանած հայ մտավորականներն արդեն V դ. վերջում և VI-ի սկզբում հայերեն են թարգմանում Արիստոտելի «Օրգանոնի» հինգ գրքերից երկուարությունը՝ «Ստորոգութիւնք» և «Յաղագս մեկնութեան» երկերը (Էջ 392): Դրանք համաշխարհային գրականության մեջ համարվում են Արիստոտելի երկերի հնագույն ու ծագրիտ թարգմանություններից (նույն տեղում):

Հանդամանալի ներկայացվում է Դավիթ Անհաղթի փիլիսոփայական մտքի վրա Արիստոտելի ուսմունքի թողած վիմխարի ազդեցությունը: Գիտնականը պարզել է արդեն VI դարում հայ փիլիսոփաներին ծանոթ էին Արիստոտելի ուսմունքի ավելի մեծ քանակի աշխատություններ (Էջ 395): Դա հատկապես երևում է Դավիթ Անհաղթի գործերից, որը հաճախ հիշատակում է Արիստոտելի «Յաղագս հոգուոյ», «Յաղագս անձին», «Յաղագս բուսոց և տնկոց», «Կենդանեաց պատմութիւն», «Յաղագս ծովոց և գետոց և աղբերց», «Յաղագս շարժմանց և պատառմանց», «Յաղագս երկնից» և այլ աշխատություններ: Արևշատյանը Դավիթ Անհաղթի փիլիսոփայությունը գնահատում է որպես նեոպլատոնականացված արիստոտելականություն (Էջ 397):

¹ Аристотель. Сочинения в четырех томах, т. 4. М., 1984, с. 296.

Անանիա Շիրակացին ևս VII դարում իր երկրակենտրոն համակարգը, օդերևութաբանական ու աստղաբաշխական բազմաթիվ գաղափարներ քաղել է Արիստոտել-Պտղոմեոսի ուսմունքներից (էջ 398):

Արիստոտելի ուսմունքի տարբեր դրսեւրումները տեսնում ենք Գրիգոր Մագիստրոսի և Հովհաննես Սարկավագ Իմաստասերի գործերում: Արիստոտելը կոչ էր անում արվեստագետներին հետեւել բնությանը, նմանվել նրան, ձգտել արվեստի գործերում հասնել բնության կատարելությանը (էջ 399): Հին հունական գրականության մասնագետ պրոֆեսոր Առաքել Առաքելյանը ևս Հովհաննես Իմաստասերի «Բան իմաստութեան ...» քերթվածի առումով ունի նույն նույն նկատումը. «Արվեստի արիստոտելյան այս ըմբռնումը Հովհաննես Իմաստասերի կողմից բխում է բնության, որպես օբյեկտիվ, ինքնին գոյող իրականության վրա հայելու փիլիսոփայական նրա կոնցեպցիայից»²:

Հստ Արեշատյանի՝ Արիստոտելի աշխատություններն ուղեցույց են եղել XVII դարի հայ մշակույթի վերելքի այնպիսի գործիչների համար, ինչպիսիք էին Սիմեոն Զուղայեցին և Ստեփանոս Լեհացին (էջ 401): Ստ. Լեհացին թարգմանել է Արիստոտելի «Մետաֆիզիկան», գրել գրա մեկնությունը, հետո էլ թարգմանել Արիստոտելի՝ շատ կարեւոր «Հոգու մասին» աշխատությունը, որի թարգմանությունը, ցավոք, չի պահպանվել:

Հայերենով է Արեշատյանի «Նոմինալիզմի առաջացումն ու զարգացումը միջնադարյան Հայաստանում» մեծարժեք ուսումնասիրությունը: Նկատենք, որ Դավիթ Անհաղթի փիլիսոփայական հայացքներին նվիրված տարաբնույթ հետազոտություններում Արեշատյանը շեշտված ձեռվ և բազում օրինակներով փաստում է հայ փիլիսոփայի՝ Արիստոտելի ուսմունքին հետևորդ լինելը, ինչպես նաև Գրիգոր Տաթևացուն նվիրված աշխատություններում խոսում է նրա փիլիսոփայության նոմինալիստական ուղղվածության մասին: Սակայն վերոնշյալ և այս հողվածում երեւոյթները դիտարկվում են առավել մեծ ընդգրկումներով՝ նրանում ներառելով այլ միջնադարյան հայ փիլիսոփաների հայացքներում եղած նույն երեւոյթի դիտարկումները:

Նոմինալիստական փիլիսոփայության փաստեր Արեշատյանը մատնացույց է անում Դավիթ Անհաղթի, Անանիա Շիրակացու, Հովհաննես Սարկավագ Իմաստասերի գործերում: Սարկավագը հայտարարում է. «Առանց փորձի կարծիքն հաւատարմանալ ոչ կարացեն, և փորձն՝ հաստատուն և աներկաց» (նույն տեղում): Կարեւորը մերօրյա գիտնականի՝ Ս. Արեշատյանի եղածանգումն է. «Փորձի նշանակության և զգայական ճանաչման դերի նման բարձր գնահատական միջնադարի պայմաններում մենք հանդիպում ենք առաջին անգամ: Արևմտանելրոպական փիլիսոփայության մեջ միայն մեկ և կես դար հետո նման միտք է արտահայտվել անգլիական խորոշությունում մտածող ու բնագետ Ռոջեր Բեկոնի կողմից (էջ 347):

² Ա. Գ. Առաքելյան. Հայ ժողովրդի մտավոր մշակույթի զարգացման պատմություն (I դ. մ.թ.ա. – XIV դ.), Երևան, 1959, էջ 332:

Հայկական փիլիսոփայական մտքի նոմինալիստական ուղղության առաջին խոչոր ներկայացուցիչ է համարվում Կիլիկյան Հայաստանի քաղաքական գործիչ, պատմիչ և փիլիսոփա Վահրամ Բաբունին (Էջ 348):

Հովհան Որոտնեցու և Գրիգոր Տաթևացու փիլիսոփայական հայացքներում էլ կան նոմինալիզմի դրսելորումներ. «Որոտնեցու իմացարանության և տրամաբանության հիմքը սենառուալիզմն է: Նա առանձնապես շեշտում է զգայարանների դերը իմացության գործընթացում: Իմացությունը, ըստ Որոտնեցու, սկսվում է զգացումներից և զգայական փորձից» (Էջ 356): Նոմինալիզմի Որոտնեցու տեսակետները մեծ դեր են կատարել Տաթևի փիլիսոփայական դպրոցի գաղափարական զարգացման մեջ: Դրանով Տաթևի ու Գլածորի համարաբաններում զարգացել են իմացարանությունը, տրամաբանության և բնագիտության էմպիրիկ-սենսուալիստական ընկալումները (Էջ 359):

Արևշատյանի կարծիքով՝ հայ փիլիսոփաների նոմինալիստական մտածողությունը նպաստել է ազգային եկեղեցու ինքնության պահպանմանը, որը ազգապահպանիչ հզոր երեսույթ է դարձել:

Գրիգոր Տաթևացին իր աշխատություններում բանականության գովքն է անում և այն անվանում է միակ ճշմարիտ և անկաշառ դատավոր (Էջ 362): Տաթևացու մտքի առաջադեմ խիզախումը Արևշատյանը բնորոշում է հետևյալ ձևով. «Միջնադարյան հայ մտածողի հանճարեղ կոահումը ուղղագնացության դերի մասին մարդու կյանքի և մտավոր գործունեության համար բացառիկ հետաքրքրություն է ներկայացնում ոչ միայն փիլիսոփայական մտքի, այլ նաև առհասարակ գիտության պատմության ասպարեզում» (Էջ 366):

Գրքի մեծագույն մասը ուսւալեզու է և վերաբերում է ակադեմիկոսի գիտական կյանքում երկակատև ուսումնասիրությունների կիզակետ դարձած փիլիսոփաների՝ Գրիգոր Տաթևացու և Դավիթ Անհաղթի կյանքի ու նրանց թողած փիլիսոփայական ժառանգության մանրակիրկիտ քննությանը:

Գրիգոր Տաթևացին և նրա հիմնած Տաթևի համարաբանը XIV դ. վերջին ու XV-ի սկզբին այնքան մեծ հետք են թողել հայ ազգի հոգևոր կյանքում, որ, ինչպես վկայում է Նիկողայոս Աղոնցը, 1787 թ. Տաթևի եպիսկոպոս Հովհակիմի օրերին «Բունակոթ գյուղի մի քանի անձեր շինել են իրենց ծախքով մի դամբարան Գրիգոր Տաթևացու գերեզմանի վրա»³: Ովքեր մեր օրերում տեսել են այդ դամբարանը, որը կից է վանքին, կվկայեն վերջինիս ճարտարապետական բարձր արվեստի մասին:

Տաթևացին ոչ միայն հզոր մտքի տեր փիլիսոփա էր, այլև իսկական քաղաքացին էր իր երկրի: Նա հատուկ ուսումնասիրություն է գրել ընդդեմ մահմեղական կրոնի, որը կոչվում է «Ընդդեմ տաճկաց»: Ֆրեղերիկ Մակերերն 1933-ին Տաթևացու այս երկը թարգմանել է Փրանսերեն՝ խորագրելով «Խալամը հայ գրականության մեջ՝ ըստ Գր. Տաթևացու»: Փրանսիացի հայագետի Տաթևացու բնագրի հետազոտությունն ու դրա թարգմանությունը այսօր էլ չեն կորցրել իրենց արդիականությունը, որովհետեւ, ցավոք, այսօր

³ Ե. Ա դ ո ն ց. Երկեր, հ. Ա, Երևան, 2006, Էջ 550–551:

տարբեր ժողովուրդների միջև դեռ ընթանում է արյունալի պայքար, որի հիմքում ընկած են տարբեր կրոններ ունեցող երկրների շահերը⁴:

Արևշատյանը մանրամասն և Հիմնավոր ներկայացրել է Գրիգոր Տաթևացու փիլիսոփայական ուսմունքի առաջադեմ կողմերը, որոնք համամարդկային նշանակություն ունեն:

Այս հիմնալի գրքի 145-ից մինչև 215 էջը նվիրված է XIV դ. Հայաստանի փիլիսոփայական դպրոցներին՝ Հիմք ունենալով Գլաձոր-Տաթևի համալսարանների փիլիսոփայական կրթական մակարդակը՝ ըստ ուսուցանվող առարկաների բովանդակության: Հետազոտողը լիովին օգտագործել է նախորդ ուսումնասիրողների՝ Վ. Զարյանի, Մ. Զամշյանի, Լ. Խաչիկյանի, Մ. Օրմանյանի հետազոտությունների ելակետերն ու փաստերը:

Գրքում առանձին բաժին է նվիրված Գլաձորի համալսարանին (էջ 281–338), որից երեսում են Արևշատյանի մանրախույզ հետազոտության շնորհիվ գիտական շրջանառության մեջ դրված հետաքրքիր փաստեր: Գլաձորի համալսարանի առաջին շրջանավարտներից է եղել պատմիչ, բանաստեղծ, Սյունիքի հոգևոր թեմի առաջնորդ Ստեփանոս Օրբելյանը: Գլաձորի համալսարանը սերտ կապերի մեջ է եղել Հայաստանի հեղինակավոր այլ դպրոցների հետ: Դրանցից էին Խորվիրապի դպրոցը, որի ղեկավարն էր Վարդան Արևելցին և Վերին Նորավանքի դպրոցը՝ ըաբունապետ Դավիթի գլխավորությամբ: Գիտնականը համառոտ բնութագրականներով ներկայացնում է նշանավոր դպրոցների ցանկը՝ կանգ առնելով նշանավոր շրջանավարտների վրա: Գլաձորի համալսարանի փառավոր դեմքերից էին մանրանկարիչ Թորոս Տարոնացին, տաղանդապոր ճարտարապետ, քանդակագործ, մանրանկարիչ, գրիչ Մոմիկը:

Գլաձորի և Տաթևի համալսարանները թողել են մշակութային մեծ ժառանգություն: Բավական է հիշել Ստեփանոս Օրբելյանի «Սյունիքի պատմությունը», թովմա Մեծոփեցու Լենկ թեմուրի արշավանքները ներկայացնող երկը: Միջնադարի հայ գեղարվեստական գրականությունը հարստացրել են Ստեփանոս Օրբելյանի «Ողբը», Առաքել Սյունեցու «Աղամգիրքը»: Որպես եղրակացություն Արևշատյանը գրում է. «Տաթևացու ու նրա ուսուցչի՝ Հովհան Որոտնեցու գործունեությունը չէր սահմանափակվում միայն գիտությամբ: Նրանք Եսայի Նչեցու և Ստեփանոս Օրբելյանի օրինակով իրենց գիտելիքներն ու եռանդը ուղղում էին երկրի առաջ ծառացած հասարակական-քաղաքական խնդիրների լուծմանը, կաթողիկությունը Հայաստանում տարածելու փորձերի դեմ: Պակաս չէր նաև երկու գիտնականների ծառայությունը՝ մանկավարժության բնագավառում: Աճեցնելով հարյուրավոր աշակերտներ, նրանք հայրենիքի համար ծանր ժամանք բարձրացրին ուսման ջահը, տարածելով լուսավորությունը Հայաստանի բոլոր կողմերը, որպեսզի թույլ չտան նվաճողների իշխանության տակ մարի երկրի ինքնատիպ հոգևոր մշակույթը» (էջ 337):

Գրքի մենագրական հատվածներից մեկը նվիրված է Դավիթ Անհաղթին, որը մշտապես եղել է գիտնականի հետաքրքրությունների կիզակետում:

⁴ Այս մասին տե՛ս Ա. Դուռուիսան յանակ. Ֆրեդերիկ Մակերը հայագետ, Երևան, 2011, էջ 46–53:

Այդ հատվածը խորագրված է «Դավիթ Անհաղթը հին Հայաստանի նշանավորագույն փիլիսոփա»:

Գրքում քննված են Դավիթ Անհաղթի ինքնուրույն և մեկնողական գործերը: Մեծարժեք է հատկապես մենագրության VII գլուխը՝ Դավիթի գիտական ժառանգության ճակատագիրը ներկայացնող:

Դավիթի նորավասոնական ուղղվածություն ունեցող սինկրետիկ փիլիսոփայությունը հսկայական ազդեցություն է թողել հետագայի հայ իմաստասիրական մտքի վրա: Բնագիտական փիլիսոփայական ամենանշանավոր ներկայացուցիչը VII դարում դարձավ Անանիա Շիրակացին, որը կրում էր Անհաղթի ուսմունքի ազդեցությունը:

Ե՞ւ Շիրակացու, և՛ Անհաղթի գիտական ժառանգության հրամայական շրջանառության մեջ գնողն ու տարածողը Գրիգոր Մագիստրոսն էր. դա պարզ երևում է նրա մի քանի թղթերից: Այդ երևույթի հաջորդական փոխանցողը դարձավ Հովհաննես Սարկավագ Իմաստասերը: Դավիթի աշխատությունները հին ժամանակներում արդեն ազդել են արաբական փիլիսոփայական մտքի վրա: Դա երևում է IX դ. արաբ մտածող Ալ Կինդիի գործերում, ինչպես նաև արաբ բժշկակետ Ալիցենայի աշխատություններում: Իրավացիորեն Արևշատյաննը շեշտում է, թե Դավիթի փիլիսոփայությունը բյուզանդական մշակույթի միջոցով առավել մեծ տարածում է ունեցել դեպի Եվրոպա, ալավոնական երկրներ, Վրաստան:

Երկար կարելի է գրել Ա. Արևշատյանի հետմահու հրատարակված այս մեծարժեք հասորի մասին: Կարեւորն այն է, որ այսօրվա ու հետագայի հետազոտողն այս գրքից ճշգրտորեն կիմանա, թե ինչպիսին է եղել ողջ միջնադարյան Հայաստանի պատմությունը, փիլիսոփայությունը և մշակույթը:


ԱԵԼԻՏԱ. ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ

Բ. Գ. Դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ. թղթակից անդամ, Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ Հայ Հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ: Գիտական հետաքրքրությունները՝ հին և միջնադարյան Հայ գրականություն, բանահյուսություն, ժամանակակից Հայ գրականություն, Հայագիտություն, գրական կապեր: Հեղինակ է 33 գրքի և շուրջ 650 հոդվածի: aelita.dolukhanyan@gmail.com

ՆԻԿՈԼԱՅ ՀՈՎՐԱՍՆԻՍՅԱՆ. Հայոց պատմության անընդմեջ շղթան դարերի խորքից մինչև XXI դարի սկիզբ (պատմաբան-միջազգայնագետի դիտարկումներ), Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2020, 428 էջ*:

Բանալի բառեր՝ Նիկոլայ Հովհաննիսյան, միջազգայնագետ, արաբագիտություն, Լեռնային Ղարաբաղ, հայ ժողովուրդ, արմենոցիդ, պատմություն:

Լույս է տեսել գիտության վաստակավոր գործիչ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ականավոր



արաբագիտ-պատմաբան, միջազգայնագետ, արտասահմանյան բազմաթիվ ակադեմիաների և գիտական ընկերությունների անդամ Նիկոլայ Հովհաննիսյանի «Հայոց պատմության անընդմեջ շղթան դարերի խորքից մինչև XXI դարի սկիզբ (պատմաբան-միջազգայնագետի դիտարկումներ)» հորագրով աշխատությունը:

Շուրջ հարյուր մենագրությունների ու գիտական բարձրարժեք բազմաթիվ ուսումնասիրությունների հեղինակ Ն. Հովհաննիսյանը գիտական հանրության դատին է ներկայացրել հայագիտական ինքնատիպ և ֆունդամենտալ մի աշխատություն, որը լույս է սփռում հայ ժողովրդի պատմության գանազան հանգրվանների՝ հատկապես պետականության վերականգնման և հետանկախության շրջանի ուազմաքաղաքական իրադարձությունների վրա:

Լինելով Հայաստանում արաբագիտության դպրոցի հիմնադիր՝ պրոֆ. Ն. Հովհաննիսյանի անձնական ջանքերով գիտական այդ ուղղությունը մեզանում ոչ միայն աննախադեպ զարգացում ապրեց, այլև՝ բարձրացվեց համաշխարհային նոր մակարդակի վրա: Ականավոր գիտնականի, արևելագետ-միջազգայնագետի՝ արաբական երկրների պատմությանը, միջազգային և տարածաշրջանային հարաբերություններին, քաղաքական իսլամին, հայ-արաբական, այդ թվում՝ միջանական հարաբերություններին ու այլևայլ հիմնախնդիրներին նվիրված ծանրակշիռ մենագրությունները և ուսումնասիրությունները, հիրավի, արժանի ներդրում են համաշխարհային արաբագիտության զարգացման գործում: Պատահական չէ, որ Ն. Հովհաննիսյանի բազմաթիվ գործեր թարգմանվել են աշխարհի տասնյակ լեզուներով, որոնք փառք ու պատիվ և միջազգային ճանաչում են բերել ոչ միայն իրեն, այլև՝ հայ արաբագիտության դպրոցին:

* Ներկայացվել է 17. I. 2021 թ., ընդունվել է տպագրության 11. II. 2021 թ.:

Արաբագիտական բազմապրոֆիլ ուսումնասիրությունների շարքում, անկասկած, վաստակաշատ գիտնականի խոշորագույն ձեռքբերում է հանդիսանում նրա արաբական երկրների լիակատար պատմությանը նվիրված գիտական բացառիկ նշանակություն ունեցող քառահատոր ակադեմիական մեծածավալ աշխատությունը, որի նմանը գրեթե չի ունեցել համաշխարհային արաբագիտությունը¹:

Տասնյակ տարիների գիտամշակութային, հասարակական և քաղաքական գործունեությանը զուգահեռ՝ Ն. Հովհաննիսյանի գիտական հետաքրքրությունների տեսադաշտից գուրս չեն մնացել այնպիսի թեմաներ, ինչպիսիք են էթնո-քաղաքական հակամարտությունների, այդ թվում՝ Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրները, որոնց վերաբերյալ նա միջազգային գիտական հանրության սեղանին է գրել միջազգայնագետների ու քաղաքագետների կողմից բարձր գնահատված մենագրություններ:

ՀՀ անկախությունից հետո, զուտ արաբագիտական թեմաներին զուգահեռ, մեծանուն գիտնականը ձեռնամուխ եղավ Հայոց ցեղասպանության հայեցակարգային հիմնախնդիրների մշակմանը և խորքային լուսաբանմանը։ Այդ մասին հեղինակի հրատարակություններից բավական է նշել նրա՝ բազմապահանային «Հայոց ցեղասպանություն. Հայասպանությունը որպես ամենագենոցիդային գենոցիո» մենագրությունը, որը, բացի հայերենից, լույս է տեսել աշխարհի 12 լեզուներով², ինչով էլ նա մեծ ավանդ ունեցավ Հայոց ցեղասպանության գիտական վերլուծման և հանրահռչակման շնորհակալ գործում։

Իր արաբագիտական և, ընդհանրապես, արևելագիտական ուսումնասիրությունները վաստակաշատ գիտնականը հաճախ շաղկապել է հայժողովի պատմության առանցքային հիմնախնդիրների հետ։ Ահավասիկ, իր բովանդակությամբ ու հարցադրումներով, քննարկիվող բազմաբնույթ հիմնախնդրով նման նպատակ է հետապնդում Ն. Հովհաննիսյանի «Հայոց պատմության անընդմեջ շղթան դարերի խորքից մինչև XXI դարի սկիզբ (պատմաբան-միջազգայնագետի դիտարկումներ)» վերնագրով հիմնարար և արմեքավոր նոր մենագրությունը։ Այն, մեր խորին համոզմամբ, արևելագետ-գիտնականի երկար ու ծիգ տարիների քրտնաջան պրատումների և գիտական բեղուն գործունեության արգասիքն է։ Պատմական լայն կտավի վրա նա Հայաստանը դիտարկում է որպես կարևոր գործոն Մերձավոր ու Միջին Արևելքի երկրների և ժողովուրդների հազարամյա պատմության հոլովույթում՝ ընդգծելով Հայ ժողովրդի առաջատար գերը տարբեր երկրների պետական, քաղաքական ու տնտեսական կյանքում, ինչպես նաև կառավարման համակարգում։ Այդ առումով աշխատությունը ձեռք է բերում Հույժ գիտական նշանակություն, որտեղ խիստ կարևորվում է տարածաշրջանում Հայ էթնոսի կենսունակ գործոն հանդիսանալու խնդիրը։ Հեղինակի կարծիքով՝ պատմության ընթացքում Հայաստանը քանից հարկադրված է եղել լուծել իր գործոն լինելու հարցը, որն առաջին հերթին

¹ Ն. Հովհաննիսյան. Արաբական երկրների պատմություն, հ. I–IV, Երևան, 2003–2007:

² N. Hovhannisyan. The Armenian Genocide. Armenocide – The Most Genocidal Genocide. Yerevan, 2009.

կապված է անկախ պետություն լինելու հանգամանքի հետ: Այդ առումով էլ նա կոչ է անում Հայաստանի պատմությունը հնագույն շրջանից մինչև երրորդ հանրապետության ժամանակաշրջանը դիտարկել որպես մեկ շղթա՝ իր տարաբնույթ օղակներով հանդերձ, ու այդ իրողություններից քննարկել նրա միջազգային գործոն լինելու հարցը և հայոց տեղը համաշխարհային պատմության մեջ:

Պրոֆ. Ն. Հովհաննիսյանի ներկայացվող աշխատությունը, իրավամբ, հեղինակի՝ հայ ժողովրդի պատմական անցյալի, անցած ճանապարհի և ներկայի վերաբերյալ նրա խոհերի ամփոփումն է, ինչը պատմական կտրվածքով ընդգրկում է հիմնահարցերի լայն շրջանակ: Կանգ առնելով հայ ժողովրդի պատմական զարգացման առավել դրամատիկ փուլերի վրա՝ նա փորձ է արել ցույց տալ պատմահաշխարհագրական բավականաշափ բարդ միջավայրում գոյատեսած ու ռազմաքաղաքական փոթորկալից ուղի անցած հայ ժողովրդի գոյատեսելու ֆենոմենը:

Աշխատությունում, որը բաղկացած է երեք մասից, քննարկման առարկա են դարձել երբեմն իրարից տարբեր հարցադրումները, որոնք, այդուամենայնիվ, լրացնում են իրար և տրամաբանորեն հանդիսանում միմյանց շարունակությունը: Հեղինակը ջանում է ցույց տալ, որ չնայած ողջ պատմության ընթացքում անցնելով բազմաթիվ փորձությունների բովով և դիմակայելով ժամանակների սարսափելի արհավիրքներին՝ հայ ժողովուրդը արժանապատկրեն շարունակեց իր երթը պատմության քառուղիներում՝ դառնալով, ինչպես իրավացիորեն նշում է նա, «պետութենաստեղծ ազգ», որին, ի տարբերություն հնագույն շատ ազգերի, հաջողվեց ոչ միայն պահպանել իր ինքնությունը, ազգային նկարագիրը, այլև՝ կերտել սեփական պետականությունը:

Աշխատության առաջին մասում Ն. Հովհաննիսյանը, ընդհանուր գծերով պատմական ուշագրավ էքսկուրսներ կատարելով, հետաքրքիր փաստեր է արձանագրում Հայաստանում ռազմաքաղաքական իրողությունների, ժամանակի գերտերությունների հետ նրա ունեցած փոխհարաբերությունների, ինչպես նաև տարբեր երկներում հայոց դերի, Հայաստանի բաժանման, Հայկական հարցի, ուռւմ-թուրքական հարաբերությունների, առաջին և խորհրդային Հայաստանների ու հանգուցային բազմաթիվ այլ հարցերի մասին: Այնուհետև հեղինակն ուսումնասիրության երկրորդ և երրորդ մասերը նվիրել է 1991 թ. Հայաստանի անկախությանն ու նրա հետ աղերսվող տարաբնույթ հարցերին՝ հայաստանյան և տարածաշրջանային նոր իրողություններին, հաճախ շրջանառության մեջ դնելով պաշտոնական տարբեր փաստաթղթեր ու գեկույցներ, ինչպես նաև օտարազգի պետական պաշտոնյաների և հասարակական գործիչների նկատառումներն ու կարծիքները՝ կապված Հայաստանի և նրա շուրջ ծավալվող բուռն գարգացումների հետ: Ահա այս հարցերի վերաբերյալ էլ պրոֆ. Ն. Հովհաննիսյանն ընթերցողի դաստին է հանձնել արտասահմանյան գիտական և քաղաքական բազմաթիվ գործիչների հետ ունեցած անձնական հանդիպումների ու քննարկումների նյութերը, որոնք, չափազանց արժեքավոր լինելով, նոր լույս են սփռում մերօրյա Հայաստանի՝ մանավանդ նրա առաջին բարդ շրջանի զարգացումների վրա:

Բացի այդ, աշխատությունում զգալի տեղ են զբաղեցնում հեղինակի նամակներն ու զեկուցագրերը՝ ուղղված Հայաստանի քաղաքական բարձր ղեկավարությանը՝ երկրի ներքին ու արտաքին քաղաքական տարրեր ու լրտների մասին, որոնք առավել ընդգծում են նրա մտահոգությունները հայոց պետականության ապագայի նկատմամբ։ Այս կտրվածքով առանձնակի ուշադրության են արժանի նաև մենագրությունում զետեղված պրոֆ. Ն. Հովհաննիսյանի՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտության վերաբերյալ մտորումներն ու միջազգային գիտական կոնֆերանսներում հնչեցրած նկատառումները, ինչպես նաև Հայաստանի ղեկավարությանը հասցեագրված զեկուցագրերն ու առաջարկությունները։

Աշխատության վերջում հավուր պատշաճի ներկայացվել է Հայոց մեծ եղեռնագործությունն Օսմանյան կայսրությունում։ Այս խնդիրը մեծանուն գիտնականի համար ունի սկզբունքային նշանակություն, որին էլ գիտական իր գործունեության ընթացքում, ինչպես նշեցինք, նա նվիրել է արժեքավոր ուսումնասիրություններ։ «Մեծ Եղեռն-Գենոցիդ-Արմենոցիդ։ Հայոց ցեղասպանությունը ցեղասպանագիտության հայեցակարգային համակարգում» խորագրով բաժնում գիտնականը խորը վերլուծության է ենթարկում Հայ ժողովրդի պատմության, թերևս, ամենագմնդակ այդ ժամանակաշրջանն իր՝ մեզ հայտնի հետևանքներով։ Պատահական չէ, որ հեղինակի ջանքերի շնորհիվ միջազգային լայն տարածում ստացավ «Արմենոցիդ» եզրը, որպես «Հայասպանության» հոմանիշ։

Ինչպես աշխատության ողջ շարադրանքը, այնպես էլ Հայոց ցեղասպանությանը նվիրված հատվածն ընթերցողին համոզիչ ու հիմնավոր պատկերացում է տալիս հիմնախնդրի պատմության, պատճառների, հետևանքների, թուրքական մխտղական քաղաքականության և այլնի մասին։

Ամփոփելով՝ նշենք. մեծանուն գիտնական նիկոլայ Հովհաննիսյանի ներկայացվող աշխատությունը լուրջ ներդրում է Հայագիտության մեջ, կառուցված է աղբյուրագիտական ու փաստագրական հարուստ հենքի վրա, ունի կուռ շարադրանք, գիտական ծանրակշիռ գործ է և ընթերցվում է մեծ հետաքրքրությամբ։

ԱՐՑԱԿ ՓՈԼԱԴՅԱՆ,
ԱՐՄԵՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ

Արշակ Փոլադյան – պ. գ. դ., Մարոկկոյի Թագավորությունում և Թունիսի Հանրապետությունում ՀՀ դեսպան (նստավայրը՝ Երևան), դիվանագիտական աստիճան՝ ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան։ Հեղինակ է արևելագիտական ու Հայագիտական 18 մենագրության և տասնյակ գիտական հոդվածի։
a.poladian@mfa.am

Արմեն Մելքոնյան – պ. գ. թ., ՀՀ ԱԳՆ Միջին Արևելքի և Աֆրիկայի վարչության պետ, դիվանագիտական աստիճան՝ ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան։ Հեղինակ է շուրջ մեկ տասնյակ գիտական հոդվածի։
a.melkonian@mfa.am

ՀՈՎՐԱՍՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ. ՀԱՆՐԱՊԻՏԱՐԱՆ, ԵՐԿԱՆ, «Տիգրան Մեծ» հրատ., 2020, 1224 էջ*:

Բանալի բառեր՝ համրագիտարան, գրականություն, գրականագիտություն, թումանյանագիտություն, ստեղծագործություն, գրական ժանրեր, հրապարակվածքներ, հասարակական գործունեություն, հայ-թաթարական բախումներ:

«Հայկական հանրագիտարան. հրատարակությունը» լույս է ընծայել «Հովհաննես Թումանյան. հանրագիտարանը», որը մեզանում առաջին գրական հանրագիտարանն է, նաև՝ հոբելյանական՝ նվիրված Ամենայն հայոց բանաստեղծի ծննդյան 150-ամյակին:



Հանրագիտարանը բանաստեղծի գրական ժառանգությունը, թումանյանագիտության հիմնական նվաճումները, թումանյանի հայ և համաշխարհային գրականության հետ առնչությունները, հայ մշակույթում նրա ստեղծագործությունների տարատեսակ դրամորումները, բանաստեղծի բազմաբեղուն ազգային-հասարակական գործունեությունները պատմությունն ամփոփող համապարփակ հրատարակություն է:

Գիրքը բացվում է բ. գ. դ. Ազատ Եղիազարյանի «Հովհաննես Թումանյանը բանաստեղծ» և բ. գ. դ. Սուսաննա Հովհաննիսյանի «Թումանյան մարդը և քաղաքացին» ծավալուն հոդվածներով: Առաջինում խոսվում է Թումանյան-բանաստեղծի անցած գրական ճանապարհի և այն ջինջ ու անարատ ակունքների մասին, որոնք նրան դարձրին բանաստեղծ: «Թումանյանը որպես մարդ ու բանաստեղծ ձևավորվել է ... աստվածային շուայության մեջ» (Էջ 7), – գրում է Ա. Եղիազարյանը՝ նկատի ունենալով ծննդավայրի մասին Թումանյանի հետեւյալ գրատումը. «Լոռու գեղեցիկ բնությունը, անմահական օդը, զրնգուն աղբյուրների ջուրը, լեռնային գյուղական կյանքի ազատությունը, էն հավասարությունը, որ կար հին գյուղական կյանքում, ամենքս էլ մի տեսակ էինք ապրում, ուտում, խմում ու իրար հետո»¹: Թումանյանի ստեղծագործության ընդհանուր նկարագրում գրականագետը կարևորում է այն հանգամանքը, որ, ի տարբերություն XIX դարի հայ գրականության մեջ աչքի ընկնող իրողության, բանաստեղծի հերօսների ողբերգության մեջ սոցիալական խնդիրներն ու փողը ոչ մի դեր չէին կատարում: Խսկ անդրագառնալով այն խնդրին, թե

* Ներկայացվել է 15. II. 2021 թ., ընդունվել է տպագրության 10. III. 2021 թ.:

¹ Հովհաննես Թումանյան. Երկերի լիակատար ժողովածու տաս հատուրով, հ. 8, Երևան, 1997, էջ 427–428:

ինչո՞ւ Գիքորը կործանվեց, արձանագրում է. «Որովհետև այդ միջավայրը, որտեղ ընկել էր գյուղացի երեխան, շատ տարբեր էր նրա հայրենի գյուղից. այնտեղ մարդիկ անկեղծ էին, իրարից գաղտնիքներ չունեին, մարդկային ջերմություն կար» (Էջ 9–10): «Թումանյանի ստեղծագործության առանցքը մարդն է» (Էջ 10), – ընդգծում է Ա. Եղիազարյանը, որին բանաստեղծն առավել խորությամբ անդրադարձել է «Թմբկաբերդի առումը» պոեմում: Այստեղ նա ոչ թե պատասխան, այլ հարց, մտածելու թեմա է տալիս՝ ինչի՞ է ունակ մարդը, այն մարդը, ով կարող է այսքան լավ գործեր անել:

Գրականագետն այնուհետև անդրագառնում է Թումանյանի աշխարհ-զգացողությանը՝ «Տիեզերքն ամբողջ հայրենիք ու տուն», մահվան նրա զգացողությանը, որոնք նրան տարբերում են և՛ հայ, և՛ Արևելքի հեղինակ-ներից: Հոդվածում անդրադարձ կա նաև Թումանյանի հրապարակախոսությանը, գիտական ուսումնասիրություններին, հասարակական-քաղաքական և այլ բնույթի գործերի:

Ս. Հովհաննիսյանի հոդվածի նյութը Թումանյան – մարդն է, քաղաքացին, մարդկային հարաբերությունները, ամենահաս բնավորությունը: «Բանաստեղծն արտաքնապես վայելչակազմ ու բավական բարձրահասակ էր, նիհար, ուներ լայն ու բաց, ազնվություն արտահայտող սպիտակ ճակատ, ուղիղ դիմագծեր ու քիթ (ոմանց ընկալմամբ՝ հասակի հետ ներդաշնակվող արծվի քիթ), ու ու խիտ գանգուր մազեր» (Էջ 16): Կենդանի զրույցի սիրահար էր: «... Եթե նա հայտնի անմարդաբնակ կղզում, իր համար քարից կամ ծառից զրուցակից կստեղծի»², – սա Թումանյանի Աշխեն դստեր վկայությունն է:

Հանրահայտ էր բանաստեղծի անսահման լավատեսությունը՝ վատը լավ եմ տեսել ես, որի պատճառը բանաստեղծի բնատուր բարությունն էր, նրա հավատը մարդու ուժերի ու հնարավորությունների նկատմամբ:

Թումանյանը հայտնի էր չափազանցության հասնող իր հյուրասիրությամբ: «Թումանյանը պարզապես հյուրամոլ էր»³, – գրել է Դերենիկ Դեմիրճյանը, իսկ Ավետիք Իսահակյանը նկատել է, որ բանաստեղծը «... շոայլ էր ամեն բանի մեջ՝ սիրո, քեֆի, զավակ ունենալու, առհասարակ ամեն բանի մեջ»⁴:

Թումանյանն ամեն միջոց գործադրել է ազգերի, ընկերների, գրողների, ընտանիքի անդամների և բոլոր մերձավորների միջև խաղաղություն հաստատելու համար: Անուրանալի է նրա հաշտարար գործունեությունը մասնավորապես հայ-թաթարական ընդհարումների (1905–1906) և հայ-վրացական պատերազմի (գեկտեմբեր, 1918) շրջանում:

Հայտնի է բանաստեղծն առանձնահատուկ սեր ուներ քեֆի և ուրախության նկատմամբ, որը նրա կենասիլիսառիքայության արտահայտություններից էր. Թումանյան – անհատականության ամենավառ դրսերումներից: Նա ասում էր. «Գոհ եղիր, ուրախ, զվարթ, սիրտող ուրախ պահիր, որ ամենադժվար բանն է կյանքում»⁵: Ուրախ, խոսքաշեն բնավորությունը,

² Ա. Թումանյան. Թումանյանի զավակներ, Երևան, 2011, Էջ 114:

³ Դ. Դեմիրճյան. Երկերի լիակատար ժողովածու, հ. 8, Երևան, 1960, Էջ 182:

⁴ Ա. Իսահակյան. Երկերի ժողովածու, հ. 5, Երևան, Էջ 287:

⁵ Ն. Թումանյան. Հուշեր և զրույցներ, Երևան, 1969, Էջ 83:

առակներով ու հումորով համեմված իմաստուն կենացները, նրա ներկայությունը լույս ու ջերմություն էին սփռում շրջապատի վրա: Եվ բոլորովին պատահական չէր, որ նա Ամենայն հայոց բանաստեղծ պատվանվան հետ, ըստ արժանագույն, կրում էր նաև Ամենայն հայոց թամադա, Ամենայն հայոց որբերի հայրիկ և էլի այլ պատվանուններ:

Գրքում առանձին հոդվածներով ներկայացված են Թումանյանի գրական ժառանգության բոլոր ժանրերը, որոնց հետևում են տվյալ ժանրի առանձին ստեղծագործությունների մասին համառոտ հոդվածներ: Ծավալուն հոդվածներ կան բանաստեղծի ստեղծագործության առանձնահատկությունների, ինչպես նաև արվեստում (երաժշտություն, կերպարվեստ, քանդակագործություն, թատրոն, կինո և այլն) նրա ստեղծագործությունների արտացոլման մասին: Նկատենք՝ հոդվածների հիմնական մասը պատրաստել են հանրությանը հայտնի թումանյանագետները, և նրանք, ովքեր այս կամ այն կերպ առնչվել են Թումանյանի ստեղծագործությանն ու գիտական գործունեությանը:

Հանրագիտարանը կազմված է հետևյալ խոչոր թեմատիկ բաժիններից (լսորագրերից): 1. «Թումանյանի նախնիները, հայրական օջախը, ընտանիքը», 2. «Մերձավոր շրջապատը», 3. «Ուսումնառությունը», 4. «Աշխատանքային գործունեությունը», 5. «Գրական ժառանգությունը՝ բանաստեղծություններ, բալլարդներ, լեգենդներ, պոեմներ, քայլակներ, պատմվածքներ, հեքիաթներ», 6. «Թումանյանի ստեղծագործությունների գրական առանձնահատկությունները», 7. «Թումանյանի ազգային-հասարակական գործունեություննոր», 8. «Թումանյանը Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին», 9. «Թումանյանը՝ ժողովուրդների բարեկամության ջատագով», 10. «Թումանյանը խորհրդային իշխանության տարիներին», 11. «Թումանյանը և հայ մշակույթը», 12. «Գրական-կրթամշակութային հաստատություններ, ընկերություններ և այլ կազմակերպություններ», 13. «Պարբերականներ», 14. «Անձնանուններ», 15. «Տեղանուններ»:

Գրքում հանգամանորեն ներկայացված է Թումանյանի ազգային-հասարակական գործունեությունը, որը բանաստեղծի կյանքի կարևոր բաղադրիչն է: Այն սկսվում է 1905—1906-ի հայ-թաղթարական ընդհարումներին նրա մասնակցությունից, ափառտվում՝ ՀՕԿ-ի նախագահի պաշտոնում Կ. Պոլիս այցելությամբ՝ 1921-ի հոկտեմբերին:

1905-ի նոյեմբերի 22-ին՝ տարածաշրջանում ընդհանուր ռազմական դրություն հայտարարվելուց հետո, Թումանյանն իր երեխաներին վերցրել ու տեղափոխվել է Լոռի՝ համոզված լինելով, որ հայ-թուրք խառը բնակչությամբ այդ գավառում խառնակություններ են լինելու, և ինքն այնտեղ շատ պետք կդա: Սակայն նրա գործն այնտեղ եղավ ոչ թե հայերին զինելն ու թուրքերի վրա հարձակման նախապատրաստելը, այլ սպիտակ դրոշը ձեռքին՝ ձիավորների փոքր խմբով անցավ բնակավայրից բնակավայր, թուրքերի քոչավայրից քոչավայր և նրանց բացատրեց դա իրենց կոփիլը չէ, այլ իշխանությունների կազմակերպած սաղբանք, և որի դեմն առնելու նպատակով ինքը փորձեց զսպել բազմաթիվ տաքլուխների ու հազարավոր կյանքեր փրկեց:

Տարօրինակ պիտի լիներ, եթե թումանյանի այդ խաղաղարար գործունեությունը ծուռ հայելու մեջ չներկայացվեր, և նա չհայտնվեր պահնորդական (ժանդարմերիա) ծառայության տեսադաշտում։ Հայթաթարական ընդհարումների հողի վրա թլավեց, այսպես կոչված, «Դաշնակցության գործը», և բոլոր ձերքակալվածներին, այդ թվում՝ թումանյանին, մեղադրանք ներկայացվեց դաշնակցական լինելու ու ազգամիջյան թշնամանք հրահրելու համար։ Այդ գործի շրջանակներում թումանյանին կալանավորել են 2 անգամ. առաջինը՝ 1908-ի դեկտեմբերի 23-ի լույս 24-ի գիշերը. ավագ որդու՝ Մուշեղի հետ նրան տարել են Մետեխի բանտ, որտեղ մնացել է 5.5 ամիս, երկրորդը՝ 1911-ի հոկտեմբերի 31-ի գիշերը։ Նախ նա Մետեխի բանտում, ապա Սանկտ Պետերբուրգի կալանավայրում մնացել է մինչև 1912-ի մարտի 20-ը, երբ ավարտվել է «Դաշնակցության գործով» դատավարությունը։

Առաջին համաշխարհային պատերազմի լուրը թումանյանը ստացավ թիֆլիսի շրջակայքում գտնվող Զաղվերի ամառանոցում։ «Ամենքս կլանված ենք պատերազմով։ Ամենքս դարձել ենք ուզմագետ, իհարկե ես ոչ մի կամած չունեմ մեր հաղթանակի վրա արևմուտքում …» (էջ 214), – գրել է իր մտերիմ ընկեր-բարերար Փիլիպոս Վարդագաղյանին։

Ոտսական գենքի հաղթանակի համոզված ակնկալիքով՝ բանսատեղծը եռանդով մասնակցեց հայկական կամավորական ջոկատների կազմավորմանը, այդ նպատակով հասավ մինչև Բաքու և հայերին հորդորեց միանալ կամավորականներին։ Ապա Գևորգ Ե կաթողիկոսի հանձնարարությամբ 1914-ի նոյեմբերին եփակուպուներ Մեսրոպ Տեր-Մովսիսյանի, Խորեն Մուրագելյանի, Շիրվանգաղեի, Ներսիսյան դպրոցի տեսուչ Հովսեփ Խունունցի ու Թիֆլիսի Հոգևոր Հովիլի Տեր Նիկոլի հետ մեկնեց ուզմաճակատի գիծ՝ ոռուսական բանակի հրամկազմի շրջանում հայկական կամավորական ջոկատների մասին ոչ բարենպաստ վերաբերմունքի պատճառները պարզելու և հարթելու նպատակով։

Այնուհետև՝ 1915-ի հունիսի 6–25-ը, եղավ Վանում ու ապրեց Վանի հերոսամարտի առաջացրած համընդհանուր խանդավառություն՝ Մեծ եղեռնի այն ահասարսուռ օրերին։ Բայց իրադարձություններն արագ գլխիվայր շրջվեցին. ոռուսական զորքն անակնկալ հետ քաշվեց, և Վասպուրականի հայությունը կոտորածի սպառնալիքի տակ ստիպված եղավ գաղթել Արևելյան Հայաստան։ Էջմիածինն այդ օրերին անձանաչելի էր՝ հարյուրհազար բարդոր գաղթականներով ու որբերով։

Այդ ժամանակ թումանյանը էջմիածնում էր՝ դատեր՝ Նվարդի հետ։ Ստեղծված իրավիճակում շատերը չկիմացան, թումանյանը ոչ միայն դիմակայեց, այլև նրա ջանքերով այնտեղ բացվեցին Հիվանդանոցներ՝ 500 մահմակալով և որքանոց՝ 3.000 որքի համար։ Բանսատեղծն այնքան գուրգուրանքով էր վերաբերվում այդ բախտահալած որբերին, որոնք նրան անվանեցին «Հայրիկ», որը հետագայում վերածվեց «Ամենայն Հայոց որբերի հայրիկ» պատվանվան։ Հայտնի էր, որ որբերի ու գաղթականների հետ կապված մի դիմակալով նա ընդհարվել է կաթողիկոս Գևորգ Ե-ի հետ. տեղատարափ անձրեւց գաղթականներին պատապարելու համար, կաթողիկոսի կամքին հակառակ, բացել տվեց նորակառույց վեհարանի դուռը։ Զայրա-

ցած կաթողիկոսի այն կշտամբանքին, թե՝ «Դուք գիտե՞ք, որ ես Ամենայն հայոց կաթողիկոսն եմ», բանաստեղծը պատասխանել է. «Իսկ դուք գիտե՞ք, որ ես չեմ Ամենայն հայոց բանաստեղծն եմ»:

1915 թ. սեպտեմբերի կեսերին ուժասպառ Թումանյանը վերադարձավ Թիֆլիս. շատ չանցած՝ սկսվեց նրա անձնական ողբերգության շրջանը: Սեպտեմբերի 17-ին սոտացավ եղբոր՝ Ռուսումի սպանության լուրը. 2 օրով մեկնեց Դավիթ: «Այնտեղից վերադարձավ բոլորովին փոխված, — գրել է նվարդը, — մոտ 2 ամիս մնաց հրվանդ պառկած: Տիսուր էր, ոչ ոքի չէր ընդունում, ոչինչ նրան չէր հանգստացնում»⁶: 1916-ի հունիսի 23-ին սոտացավ ոռուսական բանակում ծառայող կրտսեր եղբոր՝ Արտաշեսի Բաթումի մոտերքում զոհվելու գույժը:

Իսկ 1918-ի մարտին՝ Վանի վերջին գաղթի օրերին, զոհվեց Թումանյանի Արտավագդ որդին, որն անսակելի ողբերգություն էր բանաստեղծի համար: Այդ լուրը նա կարդաց գեկտեմբերի 3-ին «Նոր հորիզոն» թերթում. դա նրա կյանքի ամենաողբերգական օրն էր: «Կարդաց ..., բոթը շանթեց հայրիկին, թերթը ձեռքին հեկեկում էր, ծանր, շատ ծանր տեսարան էր. Արտիկի սպանությունը նրա մեջքը կոտրեց»⁷, — սա դարձյալ նվարդի գրառումն է:

Այդ տարիներին Թումանյանի կենսագրության միակ լուսավոր էջը, թերեւս, զորավար Անդրանիկի հետ հանդիպումներն էին, երբ վերջինս ուազմական գործողությունների դադարներին ուազմաճակատից գալիս էր Թիֆլիս՝ բուժվելու: Զարմանալի մի մտերմություն էր ստեղծվել նրանց միջև: Անդրանիկը կարծես եկել էր նրա ավագ ընկերոջ՝ Ղազարոս Աղայանին փոխարինելու: Օրերով խոսում էին ժողովրդի դարդ ու ցալից և, հատկապես, արևմտահայ գաղթականության ճակատագրից: Հայտնի է, որ 1918-ի մայիսի 22-ին թուրքերի հարձակումից նահանջող զորավարի զորաշոկատին Թումանյանը Զալալօղիում դիմավորեց և առաջարկեց քաշվել Դավիթ՝ թուրքերի շրջափակման մեջ չհայտնվելու համար:

Ղարաքիլսայի արյունալի անկումից հետո, որի պաշտպանությանը, ինչպես գիտենք, Անդրանիկը չմասնակցեց, բանաստեղծը հորդորեց նրան՝ որքան հնարավոր է շուտ հեռանալ Լոռիկ: Զորավարը ոչ միայն այդտեղից, այլև հանգամանքների բերումով ստիպված եղավ հեռանալ նաև 10.000 քառ. կմ տարածքով անկախ հոչակված Հայաստանի Հանրապետությունից:

Հետագայում (հունիսի 24-ին), երբ 1918 թ. Ազգային խորհրդի նիստերից մեկում քննարկվում էին Ղարաքիլսայի անկման պատճառները, Թումանյանը, այնուամենայնիվ, իր գծողությունը հայտնեց զորավարից. «Եթե Անդրանիկը ժամանակին Դիվլի գագաթը բռներ, թերևս Ղարաքիլսայի կոիվը այդ վախճանը չունենար»⁸: Իսկ Ազգային խորհրդի և Անդրկովկաստան կոմիսարիատի այդ օրերի գործունեությունը նա գնահատեց որպես «ապիկարության համար ոճրագործություն»:

⁶ Ն. Թումանյան. նշվ. աշխ., 1969, էջ 130:

⁷ Ա. Թումանյան. Նամակներ, 2013, էջ 15:

⁸ Գ. Մախմուրյան. Հովհ. Թումանյանի ելույթները Հայոց ազգային խորհրդի և Ալեքսանդրապոլի արտակարգ խորհրդակցության նիստերում (1918 թ. ապրիլ – հուլիս). – ՊԲՀ, 2014, № 3, էջ 247:

⁹ Հույն տեղում, էջ 239:

Հայաստանի առաջին Հանրապետության տարիներին թումանյանի հասարակական գործունեությունը մի նոր որակ ստացավ. Թիֆլիսում գործող հայրենակցական միությունները միավորելով՝ նա ստեղծեց Հայոց հայրենակցական միությունների միությունը (նախագահ ընտրվեց ինքը, քարտուղար՝ Համազասպ Համբարձումյանը), որը զբաղվում էր տարածաշրջանում սփռված հայության հատվածների ամենատարբեր խնդիրներով: Այնքան շատ էր անելիքը, որ մի անգամ Համազասպին ասաց. «Մենք (միությունը) ինչո՞վ պետություն չենք՝ պետություն ենք պետության մեջ» (էջ 700): Քանի որ թումանյանը մտերիմ հարաբերություններ ուներ Հայաստանի առաջին երկու վարչապետների՝ Հովհաննես Քաջազնունու և Ալեքսանդր Խատիսյանի հետ, նրանց գրում էր իրենց խնդիրների մասին և պահանջում դրանց որևէ լուծում տալ: Այդ միության կարևոր գործերից մեկն այն եղավ, որ կազմավորեց Առաջին աշխարհամարտում հայերի կրած վնասների գնահատման Քննիչ հանձնաժողով, որի պատրաստած տեղեկանքը (իհարկե, ոչ ամբողջական) ներկայացվեց Փարիզի խաղաղության վեհաժողովին:

Թումանյանը հույս ուներ, որ Հայաստանում խորհրդային իշխանության հաստատումով կվերջանան հայ ծողովրդի տառապանքները, և գրողները, նաև ինքը, կզբաղվեն իրենց գործով: Բայց հանգամանքներն այնպես կտրուկ փոխվեցին, որ երկրում 1921-ի փետրվարին բռնկվեց եղբայրասպան պատերազմ, և թումանյանը ստիպված էր գալ Երևան՝ այդ անմիտ պատերազմին վերջ տալու համար: Երևանում միակ բանը, որ կարողացավ անել, այն էր՝ նա Թիֆլիս՝ Սերգո Օրջոնիկիձեին տեղեկացրեց, թե դա ոչ թե Դաշնակցության սարքած խուզություն է, ինչպես նախապես հաղորդել էին, այլ համաժողովրդական ընդդում, որն սկսել էր գյուղացիությունը: Եվ պետք է անհապաղ ձեռնարկեն բոլոր միջոցները՝ դրան վերջ տալու:

Վերջին ծառայությունը, որ թումանյանը մատուցեց արդեն նորաստեղծ խորհրդային իշխանության օրոք, եղավ նրա համաձայնությունը Հայաստանի օգնության կոմիտեի նախագահ ընտրվելու և մեկնելու Կ. Պոլիս՝ այնտեղ համապատասխան կառույց ստեղծելու ու նորաստեղծ պետությանն օգնելու համար: Այսուղից նա վերադարձավ հիվանդ և, ըստ էության, այլև չկարողացավ զբաղվել ակտիվ գործունեությամբ:

Մշակութային և դաստիարակչական առումով շատ կարևոր է հանրագիտարանի «Թումանյանը և հայ մշակույթը» բաժինը, որտեղ ներկայացված են բանաստեղծի ստեղծագործությունների հիման վրա ստեղծված գործեր՝ օպերաներ, սիմֆոնիկ ստեղծագործություններ, երգեր, թատերական ներկայացումներ, կինոնկարներ, մուլտֆիլմեր, կերպարվեստի ու քանդակագործության նմուշներ և այլն: Հատկապես ծավալուն անդրադարձ կա «Անուշ» և «Ալմաստ» օպերաներին, որոնք, ըստ էության, հայ ազգային ու դասական օպերաների հիմնասայուններն են:

«Անձնանուններ» բաժնում ներկայացված են թումանյանի բոլոր ժամանակակիցները, որոնք հարաբերվել են նրա հետ կամ ձևավորել են այն միջավայրը, որտեղ ապրել և ստեղծագործել է բանաստեղծը: Այս բաժնում ներառված են ժամանակի գրեթե բոլոր երևելի դեմքերը (շուրջ 500): Ղազարոս Աղայան, Ավետիք Խաչակրյան, Կոմիտաս, Խրիմյան Հայրիկ, Լևոն

Շանթ, Վահան Տերյան, Դերենիկ Դեմիրճյան, Նիկոլ Աղբալյան, Լեո, Հովհաննես Քաջագնունի, Ալեքսանդր Խատիսյան, Ալեքսանդր Մյասնիկյան, Մարտիրոս Սարյան, Հրաչյա Աճառյան, Մանուկ Աբեղյան, Վիկտոր Համբարձումյան, Ալեքսանդր Սպենդիարյան, Ազատ Մանուկյան, Դանիել Ղազարյան, Ռոմանոս Մելիքյան և շատ ուրիշներ, նաև նրա բոլոր գրական նախորդները, որոնց թումանյանն անդրադարձել է տարբեր առիթներով, բոլոր թումանյանագետները և այն գրականագետներն ու գրողները, թարգմանիչները, մշակութային գործիչները, որոնք նկատելի ավանդ ունեն բանաստեղծի մասին ստեղծված գրականության ու արվեստի գործերում:

Հանրագիտարանն ունի նաև հարուստ պատկերագրում, նրանում տեղ են գտել բանաստեղծի ու նրա ընտանիքի անդամների բազմաթիվ լուսանկարներ, տարբեր փաստաթղթերի լուսապատճեններ, ժողովածուների առաջին հրատարակությունների կազմերի պատկերներ, տարբեր հանդեսներում տպագրված գործերի էջանկարներ, հանրագիտարանում ներկայացված անձանց դիմանկարներ, նաև թումանյանի տոհմածառը՝ կազմված և՝ բանաստեղծի, և՝ հանրագիտարանի նախաձեռնողներից ու մի շարք հոդվածների հեղինակ՝ լուսահոդի Գառնիկ Շախնյանի ձեռքով:

Գրքում ներկայացված են գրական-մշակութային բոլոր այն հաստատությունները, որոնց հետ աշխատել է բանաստեղծը, բոլոր պարբերականներն ու այն վայրերը, որոնք այս կամ այն կերպ առնչվում են բանաստեղծի անվան հետ, հոբելյանական միջոցառումները՝ սկսած նրա ծննդյան 50-ամյակից, և բազմաթիվ այլ հոդվածներ, որոնք լուսաբանում են նրա գրական ժառանգության ու գործունեության մի շարք ուշագրակ էջեր:

Այս ոչ սովորական հանրագիտարանից օգտվելը փոքրիշատե դյուրացնելու համար գրքի վերջում տրված են թումանյանի գործերի, անձնանունների, տեղանունների և պարբերականների ցուցիչներ:

Այսպիսով հանրագիտարանը համաժողովրդական սիրո նվիրումի արտահայտություն է: Հուսանք, որ այն օգտակար կլինի նաև մասնագետներին, դպրոցականներին, ուսանողներին ու սովորական ընթերցողին և կրառնասեղանի գիրք Ամենայն հայոց բանաստեղծի կյանքի ու ստեղծագործությունների մասին:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՅՎԱԶՅԱՆ

Ք. գ. դ., «Հայկական հանրագիտարան հրատարակչության» գլխավոր խմբագիր-տնօրեն: Գիտական հետաքրլությունները հայկական քիմիական անվանակարգության հարցեր: Հեղինակ է 1 մենագրության, 6 գեղարվեստական գրքի և շուրջ 100 հոդվածի: encyclop@sci.am

ԳԵՂԱՍ ՀՈՎՐԱՆՆԻՍՅԱՍ. Արփիար Արփիարյան. Հասարակական-քաղաքական հայացքներն ու գործունեությունը, Երևան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2019, 265 էջ*:


Բանալի բառեր՝ Ա. Արփիարյան, Արևմտյան Հայաստան, Վան, «Արարատեան ընկերութիւն», Ա. Չոպանյան, Մ. Տամատյան, Մ. Չերազ, Մ. Խըմյան, Գ. Սրվանձտյանց, Մ. Փոլթուգալյան, «Արևելք»:

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտը «Մեսրոպ արք. Աշճեան մատենաշարով» հրատարակել է ինստիտուտի ավագ գիտաշխատող, պ. գ. թ. Գեղամ Հովհաննիսյանի «Արփիար Արփիարյան. Հասարակական-քաղաքական հայացքներն ու գործունեությունը» ուսումնավորությունը (խմբագիր՝ պ. գ. գ., պրոֆ. Սուրեն Սարգսյան): XIX դարավերջի և XX դարասակզբի հայ ազատագրական շարժման նշանավոր գործիչ, գրող, հրապարակախոս Արփիար Արփիարյանը (1851–1908) հայ մտավորականության այն փայլուն գործիչներից էր, ով խորը հետք է թողել ոչ միայն գրական, այլև հասարակական ու քաղաքական ընազավառում: Նա պատկանում է Խ. Աբովյանի, Մ. Նալբանդյանի, Շաֆֆու, Մ. Խրիմյանի և Ժամանակի նշանավոր այլ գործիչների այն սերնդին, որոնք խոչոր դեր են ունեցել հայ հասարակական և քաղաքական կյանքում: Ուստի պատահական չէ, որ Ա. Արփիարյանի գործունեությանն անդամարձել են մի շարք հետազոտողներ, ովքեր լուսաբանել են նրա գործունեության տարբեր ասպարեզները, իսկ Գ. Հովհաննիսյանի սույն աշխատությունը յուրօրինակ ամփոփումն է Ա. Արփիարյանի հասարակական և քաղաքական գործունեությանը:

Գրախոսվող հետազոտությունը բաղկացած է առաջաբանից, չորս գլխից, վերջաբանից, օգտագործված աղբյուրների ու գրականության ցանկից, անդըլերեն և ռուսերեն ամփոփումներից ու հավելվածից:

Առաջին գլխի՝ «Արփիար Արփիարյանի լուսավորական գործունեությունը» երկու ենթագլուխներում Գ. Հովհաննիսյանը նախ լուսաբանում է XIX դարավերջի քառորդում Արևմտյան Հայաստանի սոցիալ-տնտեսական կացությունը, իսկ երկրորդը նվիրված է Ա. Արփիարյանի կրթամշակութային գործունեությանը:

Ա. Արփիարյանն իր լուսավորչական գործունեությունը սկսում է 1864 թ., երբ ուսանում էր Կ. Պոլսի Թարգմանչաց վարժարանում: 1876 թ. ապրիլին համակիրների հետ հիմնադրում է «Արարատյան ընկերութիւնը», որի առե-



* Ներկայացվել է 02. II. 2020 թ., ընդունվել է տպագրության 19. II. 2021 թ.:

նապեստ է ընտրվում Մկրտիչ Փորթուգալյանը, իսկ ատենադպիր՝ Ա. Արփիարյանը: Ընկերությունն իր առջև խնդիր էր դրել կրթության տարածման միջոցով նախ գավառահայության, ապա՝ քաղաքային բնակչության շրջանում սերմանել ազգային ինքնազիտակցություն, որի վերջնական նպատակը օսմանյան տիրապետության տակ տառապող արևմտահայության մեջ ինքնապաշտպանության գաղափարի ներդրումն ու իրագործումն էր: Ընկերությունը, ի թիվս այլ խնդիրների, կարևոր էր համարում հայ կանանց ու աղջիկներին կրթություն տալը: Հարկ է նշել, որ 1878 թ. Բեռլինի վեհաժողովը խորը հիասթափություն առաջացրեց հայության շրջանում, այնուամենայնիվ, հայ մտավորականության մի հատված չընկճից, այլ շարունակեց լուսավորության և ազատագրական գաղափարների քարոզչությունը, որը կատարվում էր լույս տեսնող «Արևելք» թերթում տպագրված հոդվածների ու նյութերի միջոցով: Նման մի խողովակ դարձավ նաև Թիֆլիսում հրատարակվող «Մշակ»ը, որի էջերում Ա. Արփիարյանը հանդես էր գալիս հրապարակախոսական հոդվածներով:

«Արևելք» թերթի նպատակներից մեկն արևելահայության հետ կապերի ամրապնդումն էր, ուստի 1884 թ. ապրիլին Ա. Արփիարյանը թերթի վարչական խորհրդի կողմից գործուղվում է Կովկաս, որի պատրիվակը՝ Ամենայն Հայոց կաթողիկոսի ընտրություններն էին: Մայլախն, որպես Բաղեշի ներկայացուցիչ, նա ընտրվում է Կ. Պոլսի Ազգային ժողովի պատգամավոր: «Արևելք»-ի վարչական խորհրդի որոշ անդամներին դուք չէին գալիս Ա. Արփիարյանի ազգային պահպանողականների գեմ ուղղված հոդվածները, ուստի նա սոհաված է ինում տեղափոխվել Կ. Պոլսում հրատարակվող «Մասիս» թերթի խմբագրություն¹:

Ա. Արփիարյանի համոզմամբ՝ «քաղաքը պետք է պատրաստեր» մտավորականների, որոնք հաստատվելով գավառներում պետք է նպաստեին գյուղական բնակչության կրթական մակարդակի որոշակի բարձրացմանը, որը և պետք է լիներ գրավական ազատագրական շարժման համար կազմեր պատրաստելու համար: Առավել հայահոծ նահանգի կենտրոն Վանում դպրոց հիմնելու նրա գաղափարը պաշտպանություն է գտնում Մ. Փորթուգալյանի և Խրիմյան Հայրիկի մոտ, որը կնպաստեր ոչ միան Վասպուրականի, այլև ողջ Արևմտյան Հայաստանի կրթության զարգացմանը: Այդ հաստատությունը դարձավ Վանի «Կեղրոնական վարժարանը», սակայն օսմանյան իշխանություններն այն վտանգավոր համարելով՝ 1885 թ. փակեցին:

Ա. Արփիարյանը գիտակցում էր, որ հայկական դպրոցներում պետք է ներդնել դասավանդման նոր մեթոդներ, մեծ տեղ տալ հայրենասեր ուսուցիչներին՝ անկախ նրանց դասավանդած առարկաներից: Ինչպես ժամանակի երևելի գործիչները, այնպես էլ նա համոզված էր, որ ազատագրական

¹ 1880-ական թվականներին «Արևելքը» հասարակության մի մասի կողմից որակվում էր իբրև «ռամկին անհպելի և ազնվական դասերու խորհրդակից». տե՛ս Լ. Գ. Մուրագյան. Արփիար Արփիարյանը քննադատ և գրականության պատմաբան. – ՀՍԽՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1990, № 2, էջ 30:

պայքարի կարևոր գրավականներից է կրթությունը, իսկ Հայ Առաքելական եկեղեցին նպաստում է ազգային ինքնագիտակցության պահպանմանը:

1890 թ. Ա. Արփիարյանը Գումա-Գափուի ցույցին մասնակցելու համար մի շաբաթ մասնակիցների հետ ձերբակալվում է, և բանտից ազատվում միայն 1891 թ. ակզենում: Ա. Արփիարյանի հասարակական գործունեության մեջ մեծ տեղ էր գրավում հայության սանհիւրաքանչիգիենիկ կրթությունը: Իր հորդանակությամբ էր առողջապահական բնույթի տարբեր հիմնախնդիրները: Այս և այլ նպատակներով օգտագործում էր հաստկապես «Հայրենիք» օրաթերթը, որի խմբագրապետի պաշտոնը ստանձնեց 1891 թ. հունվարին: Իմիջիալոց, 1892 թ. Ա. Արփիարյանն այդ օրաթերթում հայ հասարակության պատության մեջ առաջին անգամ հիշատակեց երիտասարդ սարկավագ Սողոմոնի (Կոմիտաս) երաժիշտ-բանահավաքի անունը²:

1894–1896 թթ. Համբոյյան կոտորածների ժամանակ Ա. Արփիարյանը նախընտրում է Կ. Պոլսից հեռանալ արտասահման: Լոնդոնում հիմնում և խմբագրում է «Նոր կյանք» հանդեսը, Վենետիկում՝ «Հայ հանդես» ամսագիրը, իսկ Կահիրեաում խմբագրում է «Եփրակ» պարբերականն ու «Լուսաբեր» եռօրյա թերթը³:

Ա. Արփիարյան իր գիտակից գործունեության ողջ ընթացքում աշխատում էր հասնել համազգային միասնության, վերջ տալ անվերջ տարածայնություններին և թշնամանքներին։ Իր ստեղծագործություններում «Երազի մը գինը», «Կատակ մը», «Դատապարտյալը» և այլն հանդես էր գալիս համերաշխության ու միասնության քարոզներով, սոցիալական արդարության կոչերով։

Ա. Արփիհարյանը պարզողոց տեսնում էր արևմտահայության ունեղրկումն ու շերտավորումը, սակայն նա դեմ էր դասակարգավային պայքարին, քանի որ հայը՝ թե՛ հարուստ և թե՛ աղքատ, գտնվում էր օսմանյան դժնդակ տիրապետության տակ:

Մենագրության երկրորդ գլխավում «Արփիար Արփիարյանի հասարակական հայացքներն ու գործունեությունը», Գ. Հովհաննիսյանն անդրադառնում է Ա. Արփիարյանի կողմից Հայ Առաքելական եկեղեցու բացառիկ գերի գնահատմանը, որը հնարավորություն է տալիս պահպանել ազգային ինքնազիտակցությունը՝ միաժամանակ քննադրատեղով այն հոգևորականներին, որոնք տգետ են ու շահամոլ: Մտավորականի աչքից չեն վրիփում միարիներական գործունեություն ծավալած տարբեր անձնավորություններ, որոնք «Կերթան, կմտնեն ժողովրդին մէջ, անոր նիւթական կեանքին վերաբերեալ շատ մը գործերու կը միջամտեն և անով կը սիրաշահին անոնց սիրտը» (Էջ 67): Հարկ ենք համարում նշել, որ կաթողիկ և բողոքական քարոզիչների թիկունքում կանգնած էին ելլուպտական, ապա նաև ամերիկյան կառավարությունները, որոնց գիլանագիտական ներկայացուցչությունները ստիպում են օսմանյան իշխանություններին միախոներներին արտոնություններ տրամադրել ու չմիջամտել նրանց ձեռնարկումներին:

² Նույն տեղում, էջ 34:

³ Ա. Արքիլիարյան. Երկեր (կազմ՝ Ս. Գ. Սահակյան, առաջ.՝ Հ. Մարգարյան), Երևան, 1987, էջ VI:

Արևմտահայության ազգապահպանության խնդրում բացառիկ դեր ունեին ազգային մարմինները, հատկապես՝ Կ. Պոլսի Ազգային ժողովը։ Ա. Արփիարյանն անընդհատ պատգամավորներին կոչ էր անում վերջ տալ ներքին երկապառակրություններին, համախմբել աշխարհիկ ու հոգեւոր ուժերը։ 1894 թ. մայիսին ընտրվելով Ազգային ժողովի երեսիոխան՝ նա իր ելույթներում առաջադրել էր մի շարք հիմնահարցեր, որոնք հնարավորություն կտան համախմբել արևմտահայությանը։ Ա. Արփիարյանը խառորեն քննադասում էր Ազգային ժողովի պահպանողական երեսիոխաններին, որոնք փորձում էին համաձայնության եղրեր գտնել կառավարության և սովորական Աբդուլ Համիդ II-ի հետ։ Նրա համոզմամբ՝ Ազգային ժողովը պետք է զբաղվի գործնական հիմնախնդիրներով, որոնցից առաջնահերթը հայկական բարեփոխումներն են, որոնց իրականացման համար անհրաժեշտ է մշակել մտածված ազգային քաղաքականություն։

Կարելի է ենթադրել, որ վերը նշված հիմնահարցի լուծման համար Ա. Արփիարյանը կարևոր էր համարում «աքսորեալ մեծ եկեղեցականի» (Էջ 88)՝ Մ. Խրիմյանի Ամենայն Հայոց կաթողիկոս ընտրվելը։

Հետազոտության երրորդ գլխում «Արփիար Արփիարյանը և արևմտահայերի ազատագրության խնդիրը», Գ. Հովհաննիսյանը, վերլուծելով Ա. Արփիարյանի «Մշակ»-ում հրապարակված հողվածները, գալիս է այն եղբակացության, որ Բեռլինի վեհաժողովից հետո էլ ամելի սաստկացան արևմտահայերի կեղեքումները։ Նման քաղաքականությունը նպատակ ուներ հարկադրել արևմտահայերին կամ լրել հայրենիքը, կամ էլ ի չիք դարձնել նրանց կողմից հայկակառավարական, այսինքն՝ ազգային-ազատագրական որևէ նկրտում։ Ինչպես նշում է Ա. Արփիարյանը, «Օրեցօր բարեկարգութեանց հարցը աւելի հետադիմութիւն կը նէ, քան առաջադիմութիւն» (Էջ 100)։ Դրա վկայություններից մեկն է օսմանյան մամուլը, որոնք լի էին հակահայ հողվածներով, փառաբանվում և խրախուսվում էին քուրդ ցեղապետները, նրանց սաղրում հայերի դեմ։ Այս ամենին ավելանում է օսմանյան գրաքննությունը։ Իր հերթին կառավարությունը սկսեց մահմեդականների բնակեցնել հայկական նահանգներում, որով նպատակ ուներ պակասեցնել հայերի թիվը։

Ինքնին հասկանալի է, որ եվրոպական տերությունները, գլխավորապես՝ Մեծ Բրիտանիան, սովորական շահարի համար։ Արևմտահայության մի մասը սին հույսեր էր տածում, որ քրիստոնյա պետությունները կպաշտպանեն, սակայն հետագա գործողություններն ապացուցեցին հակառակը։ Ա. Արփիարյանն իր հողվածներում ի ցույց էր դնում Մեծ Բրիտանիայի ընդգծված թուրքամետ քաղաքականությունը, սակայն հույսեր էր կապում Ռուսաստանի հետ։ Նրա համոզմամբ, այնուամենայնիվ, ոռուսական տիրապետությունն ավելի նախընտրելի էր օսմանյանից՝ համեմատելով երկու կայսրությունների տիրապետության տակ գտնվող հայերի դրությունը։

Անդրադառնալով Ռուսաստանյան առաջին հեղափոխությանը՝ Ա. Արփիարյանը գտնում էր՝ արևելահայերը չպետք է մասնակցեն ինքնակալության դեմ ուղղված ելույթներին, որից միայն կտումնեն։ Իր հողվածներում կոչ էր անում լինել իրատես և հեռու մնալ հակակառավարական գործողությունները։

յուններից, քանի որ դա իշխանություններին առկիթ կտա ձեռնարկել հակահայ քայլեր (Էջ 122–123): Ինչպես նշում է Գ. Հովհաննիսյանը, «... թեև Արփիարյանի գաղափարական շրջադարձի վրա ոռուսական առաջին հեղափոխությունը նկատելի ազդեցություն ունեցավ, սակայն չի կարելի այն պայմանագրել միմիայն հեղափոխության գործոնով» (Էջ 128):

Ա. Արփիարյանը, վերլուծելով ստեղծված իրավիճակը, հանգում է այն եղբակացության, որ հայությունն իր ազատությունը կարող է ձեռք բերել միայն սեփական ուժերով: Փաստորեն, նա նախընտրում է զինված պայքարի ուղին և, որպես ցայտուն օրինակ, մատնանշում է Զեյթունի հերոսական պայքարը, որը հանգեցրեց նրան՝ «Զեյթուն իրեն ինքնաւարութիւնը ունեցավ, ամուր լեռներ, քանի մը հրացան և քիչ մը արիւն շատ աւելի արդյունաւոր եղան քան վեհաժողովներ, անթիվ բողոքներ, կառավարութեանց միջամտութիւններ» (Էջ 130): Արփիարյանի համոզմամբ՝ միայն համաժողովրդական ապատամբությամբ կարելի է հասնել հաղթանակի, սակայն միաժամանակ գիտակցում էր, որ արևմտահայության զգալի մասը չունի պայքարի փորձ և գործողությունների ծրագիր: Առանձին-առանձին գործող հայդուկային խմբերն ի զորու չեն հասնել արևմտահայության ազատագրությանը: Միաժամանակ նա սիսալ է համարում անհատական ահաբեկչության մարտավարությունը՝ ի նկատի ունենալով 1905 թ. հունիսի 21-ի Աբդուլ Համիդ Ռ-ի դեմ կազմակերպված մահափորձը: Նա գրում է. «Ինչդիրը անձի վրա չէ, այլ դրութեան, հիմնովին փոփոխութեան» (Էջ 140):

Ա. Արփիարյանը համամիտ էր ազատագրական շարժման նշանավոր գործիչ, Հնչակյան կուսակցության անդամ Համբարձում Պոյաճյանի (Մեծն Մուրաս) կոչին, որով առաջարկում էր իր կուսակցուներին և ՀՅԴ-ին միավորվել համազգային նպատակների համար (Էջ 143–144): Ինչպես նշում է Գ. Հովհաննիսյանը, «ի դեմս Մուրասի Արփիարյանը տեսնում էր այն անհատականությանը, որը իր «բարոյականովը արժանաւոր է ազգին քուեն ստանալու», և որը կարող է դառնալ նոր համընդհանուր շարժման կազմակերպիչն ու առաջնորդը» (Էջ 144): Ա. Արփիարյանի համոզմամբ՝ անհրաժեշտ է վերջ տալ ազգային կուսակցությունների՝ Հնչակյան և ՀՅԴ առճակատումներին, որը ձեռնոտու է միմիայն օամանյան ու ոռուսական իշխանություններին: Ըստ նրա՝ առավել միասնականը և համախմբվածը ՀՅԴ-ն է, և Հնչակյանները պետք է միանան դաշնակցությանը, այլ ոչ թե՝ հակառակը (Էջ 148): Ցավոք, Հնարավոր չեղավ ոչ միայն հասնել երկու կուսակցությունների միավորմանը, այլև դադարեցնել նրանց միջև եղած խորը հակամարտությունները: Անհրաժեշտ է նշել, որ նշված ժամանակահատվածում Հնչակյանները խորը ճգնաժամ էին ապրում. 1905 թ. սեպտեմբերին տեղի ունեցած Հնչակյորդ համագումարում կուսակցություննից հեռացան Ա. Նազարենի, Ռ. Խանազատը և այլք: Համանման երևոյթ տեղի ունեցավ 1906 թ. հունիսին վերակազմյալ Հնչակյանների համագումարում:

Ա. Արփիարյանը կոչ էր անում ազգային կուսակցություններին կազմել միասնական ինքնապաշտպանության ծրագիր, քանի որ օրեցօր սրվում էր Օսմանյան կայսրության և Ռուսաստանի հարաբերությունները, որոնք կարող էին վերածվել լայնածավալ պատերազմի: Ա. Արփիարյանի կարծիքով՝

թուրքերը պատերազմի առիթն անպայման կօգտագործեն հայերի հետ վերջնականապես հաշվեհարդար տեսնելու համար (էջ 149):

Ա. Արփիարյանը կարևոր է համարում համագործակցությունը օսմանահպատակ ազգային փոքրամասնությունների՝ հույների և քրդերի հետ: Ինքնին հասկանալի է, որ օսմանյան իշխանությունները ցանկացած պատրիակ էին գտնում, որպեսզի սեպ խրեն երեք ժողովուրդների միջև:

Մեր կարծիքով, ինչոր տեղ հնարավոր էր համագործակցություն հայերի և հույների միջև, բայց ոչ՝ քրդերի հետ: Ի վերջո, նույն տեսակետն է հայտնում Ա. Արփիարյանը: Նա գրում է. «... զինակցութիւնն մը միշտ դաշնակիցներու հաւասարութիւն կը ենթապիչ, իսկ մահմեդական սիրայոժար հանձն կը առնէ տուրքերու անտանելի ծանրութիւնը, քան թե թեմեացում մը, որու գինը պիտի ըլլայ Քրիստոնեին հետ հավասարութիւն» (էջ 152–153): Միայն մի բան է զարմանալի: Ինչո՞ւ է նշանավոր մտավորականի տեսադաշտից վրիպել ասորիների հետ համագործակցության հարցը:

Գ. Հովհաննիսյանը հետազոտությունում ներկայացնում է Ա. Արփիարյանի մտորումները երիտթուրքերի հետ համագործակցյան մասին: 1896 թ. Փարիզում նա անձամբ մասնակցել է երիտթուրքերի հետ տարվող բանակցություններին: Երկու կուսակցությունների միջև համագործակցության համաձայնություն չկնքվեց, քանի որ երիտթուրքերը պահանջում էին հրաժարվել բարենորոգումներից: Ինչպես նշում է աշխատության հեղինակը, 1907 թ. երիտթուրք ղեկավարներից՝ Ա. Հմել Ռոզա բեյի հանդիպումից հետո Ա. Արփիարյանը եկավ այն եղրակացության, որ նրանք ավելի վտանգավոր են և ավելի մեծ չարիքներ կարող են բերել հայության դիմին, քան Աբրու Համիլտոն (էջ 156):

Մենագրության չորրորդ գլխում «Արփիար Արփիարյանի կուսակցական գործունեությունը», լուսաբանվում է Ա. Արփիարյանի կուսակցական գործունեությունը: 1895 թ. նա անդամակցում է Հնչակյան կուսակցությանը, որն էլ ավելի մեծացրեց այդ քաղաքական կազմակերպության ազդեցությունը: Նա առաջին հերթին դեմ արտահայտվեց հնչակյանների ծրագրում ամրագրված սոցիալիզմի գաղափարին գտնելով «... նախ պետք է Հայաստանը ազատել օսմանեան լուծէն, ապա երբ գէթ Բուլգարիայի վիճակին⁴ ազատ Հայաստան կունենանք, այն ժամանակ կրնանք սօցիալիզմի մասին խօրհիլ» (էջ 158): Բացի այդ, վիճաբանություն է առաջանում Կ. Պոլսի հնչակյան կազմակերպության խորհրդի կազմի վերաբերյալ: Ա. Արփիարյանն ու ընկերները չեին ցանկանում բավարարվել որպես ֆինանսավես օժանդակողներ, այլ ցանկանում էին գործուն մասնակցություն ունենալ կուսակցության ներքին գործերին և ղեկավար դեր ունենալ (էջ 159): Հավատարիմ իր որդեգրած քաղաքական գծին՝ Ա. Արփիարյանը Տրավիզում փորձում է տեղի հնչակյաններին համոզել, որ նպատակահարմար է կուսակցության ծրագրից հանել սոցիալիզմի մասին դրույթը, սակայն՝ ապարդյուն:

Հավանաբար, կուսակցության մեջ իր ազդեցությունը մեծացնելու և ավելի մեծ հեղինակություն ձեռք բերելու նպատակով Ա. Արփիարյանը,

⁴ 1878–1908 թթ: Բուլղարիան վասալական կախման մեջ է գտնվել Օսմանյան կայսրությունից:

գալով Երևան, Ռ. Խանազատին առաջարկում է իր բնույթով արկածախնդիր ծրագիր, որի նպատակը Կ. Պոլսի գրավումն էր: Ինքնին հասկանալի է, որ դա կարող էր հանգեցներ հայության համար աղետալի հետևանքների (Էջ 160): Կրկին սրվեցին Ա. Արփիարյանի և կուսակցության հարաբերությունները:

Շուտով տարածայնություններ առաջացան նաև Դաշնակցության հետ: Ա. Արփիարյանը քննադատում էր ՀՅԴ-ին սովորականի հասցեին սպառնալիք-ների համար, որին գումարվեցին նաև այլ հարցեր: Իրավիճակն այն աւտիճան սրվեց, որ 1895 թ. գեկտեմբերի 25-ին դաշնակցականները նրա դեմ մահափորձ կազմակերպեցին, սակայն միայն վիրաբորեցին:

Հնչակյան կուսակցությունում գնալով աճում է գժգոհությունը կուսակցության դեկավարությունից: Կուսակցականների շրջանում տեղեկություններ են տարածվում, թե, իբր, Ա. Արփիարյանը դավաճան է, դրամաշորթ և այլն (Էջ 165): Գ. Հովհաննիսյանի կործիքով՝ այս ամենն օգտագործվում է Կ. Պոլսի ՀՅԴ կոմիտեի կողմից Ա. Արփիարյանին զրապարտելու ու չեղոքացնելու համար (Էջ 166): Քանի որ Օամանյան կայսրությունում մնալը դառնում է վտանգավոր, նա հեռանում է Լոնդոն և այնտեղ հիմնում «Մարտ» թերթը (1897 թ.) և «Նոր կյանք» երկաբաթյա հանդեսը (1898), որոնք դառնում են վերակազմայների պաշտոնաթերթերը:

1896 թ. սկզբին Լոնդոնում հնչակյան կուսակցության աչքի ընկնող անդամները հանդես են գալիս Ավետիսի և Մարտ Նազարելյանների կողմից առաջադրված ռազմավարական գործողությունների դեմ, որոնց հետևանքով գրգռում էին թուրքերին ու նոր ջարդերի առիթ տալիս (Էջ 167):

1896 թ. սեպտեմբերին Լոնդոնում հրավիրվում է Հնչակյան կուսակցության ընդհանուր պատգամավորական ժողով, որտեղ Ա. Արփիարյանը, Մ. Տամայանը, Լ. Մկրտչյանն ու այլք առաջարկում են հրաժարվել սոցիալիզմի գաղափարից, սակայն Նազարելյան ամուսինները և նրանց կողմնակիցները շարունակում էին պաշտպանել որդեգրած ռազմավարությունն, ու կուսակցությունից հեռացվում են աչքի ընկնող մի շարք գործիչներ (Էջ 174): Վերջիններս հիմնում են նոր կենտրոնական վարչություն և 1898 թ. հոկտեմբերի 9–11 Ալեքսանդրիայում կայացած երկրորդ պատգամավորական ժողովում նորաստեղծ կուսակցությունն անվանում են Վերակազմյալ և որոշում են կենտրոնանալ բացառապես արևմտահայության ազատազրության խնդրի վրա (Էջ 175): Վերակազմյաներն իրենց մասնաճյուղերը հիմնեցին ԱՄԸ-ում, Կիլիկիայում, Բուլղարիայում, Կ. Պոլսում և այլ վայրերում: Միաժամանակ քայլեր ձեռնարկվեցին ՀՅԴ-ին միանալու համար, որը, սակայն, տեղի չունեցավ, քանի որ Դաշնակցությունը պահանջում էր Ա. Արփիարյանին հեռացնել կուսակցությունից՝ հիմնվելով այն կեղծ տեղեկատվության վրա, թե, իբր, նա դավաճան է (Էջ 178–179):

ՀՅԴ-ն անողոք պայքար սկսեց Ա. Արփիարյանի դեմ և 1899 թ. «Դրոշակ»-ի հավելվածում նա «հայտարարվեց որպես դավաճան և թուրքական ոստիկանության լրտես» (Էջ 180): Նշենք, որ այս ապատեղեկատվությունը հերքվել է ժամանակի նշանավոր գործիչների, այդ թվում՝ Արշակ Չոպանյանի, Երվանդ Օտյանի, Վահան Թեքեյանի և այլոց կողմից (Էջ 189, 200): Վերը նշված մեղաղբանքները պատճառ դարձան, որպեսզի Ա. Արփիարյանը 1901 թ. հունվարի 15-ին լրի Հնչակյան կուսակցության շարքերը, սակայն

շարունակեց իր գաղափարական պայքարն ընդդիմադիրների հետ։ Այս ամենի արդյունքում՝ 1903 թ. փետրվարի 15-ին Վենետիկում Ա. Արփիարյանի դեմ կատարվեց երկրորդ մահափորձը։ Նա դարձյալ վիրավորվեց։ Խտալական ոստիկանությանը տված ցուցմունքում Ա. Արփիարյանը հայտարարեց, որ «իր դեմ կատարուած մահափորձը հավանորեն Աբգուլ Համիդի կողմէն սարքուած էր» (Էջ 210)։

1905 թ. Ա. Արփիարյանը հաստատվում է Կահիրեռում և ստանձնում «Լուսաբեր» թերթի խմբագրի պաշտոնը։ 1908 թ. փետրվարի 12-ին նրա դեմ կազմակերպված մահափորձի արդյունքում նա սպանվեց։ Փետրվարի 14-ին տեղի ունեցավ նրա հուղարկավորությունը։ Մարդասպանը, ով ձերբակալվեց, իրեն անվանեց Պետրոս Հյուսնյան, սակայն պարզվեց, որ նրա իրական անունը՝ Հովսեփ Ալիփունարյան է։ Նյու Յորքից Հետաքննության ընթացքում հայտնի դարձավ, որ նա չի էլ ճանաչել Ա. Արփիարյանին, միայն իրեն հայտնել են՝ նա դավաճան է, իսկ հանձնարարությունը ստացել է ոմն Ալեքսան Արգույանից, «Ազատ բեմ» թերթի խմբագրի Լևոն Լարենցից և նույն թերթի տնօրեն Զարեհ Գոչյանից (Էջ 219–221)։ Մ. Փորթուգալյանի բնորոշմամբ այս քաղաքական սպանությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ «թուրքի հացին եղ քսել» (Էջ 220)։

Հարկ ենք համարում նշել, որ Գ. Հովհաննիսյանի կողմից կատարվել է լայնածավալ հետազոտական աշխատանք, որով ամփոփվել է հայ ազգային-ազատագրական շարժման ականավոր դեմքերից մեկի՝ Ա. Արփիարյանի հրապարակախոսական, հասարակական և կուսակցական գործունեությունը։

Գ. Հովհաննիսյանի ուսումնասիրության հետ կապված ունենք մի շարք նկատառումներ։

1. օգտագործվում է «քաղաքական կուսակցություններ» եղրույթը, որը, մեր կարծիքով, ճիշտ չէ,

2. աշխատությունը չունի անձնանունների և տեղանունների անվանացանկ,

3. հստակեցված չէ Ա. Արփիարյանի սպանությունն անհատների, թե կուսակցության կազմակերպածն էր,

4. օգտագործված չէ Հ. Աւագ Հաննան Արփիար Արփիարեանի սպանությունը, Գահիրէ, 2018, ուսումնասիրությունը։

ՌՈՒԲԵՆ ՍԱՀԱԿՅԱՆ

Պ. դ. դ., ՀՀ ԳԱԱ, պատմության ինստիտուտի առաջատար գիտաշխատող, նոր պատմության բաժնի վարիչ, ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ու Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի դասախոս։ Գիտական հետաքրքրությունները՝ Առաջին համաշխարհային պատերազմի ռուս-ֆուրքական ռազմաճակատ, կամավորական շարժում, Հայոց ցեղասպանություն, ինքնապաշտպանական մարտեր, Հայկական ոստիկանության պատմություն։ Հեղինակ է 6 մենագրության և շուրջ 200 հոդվածի։
rubensahakyan58@gmail.com

ԷՍԹԵՐ ԽԵՄՉՅԱՆ. Տավուշի բանահյուսական ժառանգությունը,
Երևան, ՀԱԻ Հրատ., 2020, 232 էջ*:

Բանալի բառեր՝ Ե. Խեմչյան, Տավուշի բանահյուսություն, ժառանգություն, բանահավաքչության պատմություն, ժամար, ավանդական կայուն բարնաձևեր, նախաբան, բանասաց:

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտական
խորհրդի որոշմամբ Հրատարակված «Տավուշի բանահյուսական ժառան-



գությունը» մենագրությունը վերջին հարյուր-
ամյակի ընթացքում պատմազգագրական վերո-
հիշյալ տարածքում գրառված վիպական, քնար-
րական և ասույթաբանական բազմաժանր ու մե-
ծաքանակ նյութերի բանագիտական քննությունն է: Էսթեր Խեմչյանը իր նախորդների (Քաջ-
բերունի, Խաչատուր Շահնազարյան, Մաթևոս
Մուրադյան, Վարդան Տեր-Ղարությունյանց, Գե-
ղամ Թարգերդյան, Նիկոլ Սարգսյան, Սարգիս
Խարայելյան, Արագ Կարապետյան, Վերմինե
Մվազյան, Արտաշես Նազինյան) և իր Հավաքա-
ծուների հիման վրա կատարել է բանագիտական
ինքնատիպ ուսումնասիրություն, որն իր տեսա-
կի մեջ առաջինն է հայ բանագիտության պատմության մեջ:

Հայաստանի Հանրապետության և պատմական Հայաստանի յուրա-
քանչյուր տարածաշրջան, առանձնանալով բանահյուսական երկացանկի ու
ժամրային կազմի ինքնատիպությամբ, ուրույն և կարևոր նշանակություն
ունի ազգային բանահյուսական ժառանգության ամբողջացման ու համա-
կողմանի ուսումնասիրության համար: Այս առումով բ. գ. թ., բանագետ է.
Խեմչյանի աշխատությունը կարևոր ներդրում է հայ բանագիտության մեջ:

Հետազոտությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից՝ համապատասխան ենթաբաժիններով, եռակեզու (Հայերեն, ռուսերեն, անգլերեն) ամ-
փոփումներից, օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկերից, հավելվածից, ուր աղյուսակների տեսքով տրվում են Տավուշի գյուղերի
բնակչության կազմն (XIX դարավերջ) ու մարզի բանահյուսական նյութերի
պատկերն ըստ III փուլերի (XX դարի 50-ական թվականներից մինչև դարա-
վերջ) բանահավաքների՝ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի
բանահյուսական արխիվում պահպող հավաքածուների:

Աշխատության ներածականում ներկայացվում է ուսումնասիրության
արդիականությունը, նպատակն ու իննդիրները, դրանց իրականացման տե-
սական և մեթոդաբանական հիմքերը:

* Ներկայացվել է 24. I. 2021 թ., ընդունվել է տպագրության 03. III. 2021 թ.:

Առաջին գլուխը՝ «Բանահավաքչության պատմությունն ու բանասացները Տավուշում», ունի չորս ենթագլուխ («Պատմական ակնարկ», «Բանահավաքչությունը Տավուշի մարզի տարածքում», «Տավուշի բանասացները», «Արևմտահայ եկամուտ բանահայուսական նյութերի տեղայնացումը Տավուշում»), որի պատմաբանակիրական ակնարկում, փաստառատ նյութերով և ճշգրիտ հիմնավորումներով ներկայացվում է ուսումնասիրվող տարածաշրջանի պատմությունն ու բնակչության տեղաշարժերի, հայաթափման և վերաբնակեցման գործնիքացների ընդհանուր պատկերը։ Անդրադարձ է կատարվում մարզի տարածքում իրականացված բանահավաքչական աշխատանքներին, բանասացներին և բանահայուսական նյութի պահպանումն ու փոխանցումն ապահովող օջախներին։

Դիտարկումները հեղինակին բերել են այն եղրակացության, որ Տավուշի մարզի տարածքում XVIII դարավերջից մինչև XX դարասկիզբը ձևավորվել են ազգաբնակչության երեք հիմնական շերտեր. տեղաբնակներ, վերաբնակներ Արցախից ու Արարատյան դաշտից և ցեղասպանության հետևանքով 1915–1920 թվականներին գաղթած արևմտահայեր։ Այս եռաշերտ հանրությունն էլ կրողն ու տարածողն է եղել տարածաշրջանի նյութական ու հոգևոր-մշակութային արժեքների։

«Բանահավաքչությունը Տավուշի մարզի տարածքում» ենթագլխում դիտարկվում են մարզի բանահայուսական արժեքների զարգացման, կենցաղավարման, վերացման բնականոն ընթացքն ու փոխանցված, պահպանված և շրջանառվող նյութերի ժամանակակից վիճակը։ Տավուշի բանահավաքչության պատմությունը բաժանվում է երեք փուլերի՝ XIX դարավերջի գրառումներ (բանահավաքներ՝ Քաջըերունի, Խաչատրյան, Մաթևոս Մուրադյան, Վահան Տեր-Հարությունյանց), XX դարի 20–50-ական թվականների գրառումներ (բանահավաքներ՝ Գեղամ Թարվերդյան, Նիկոլ Սարգսյան, Սարգիս Խորայելյան) և XX դարի 50-ական թվականներից մինչև դարավերջի գրառումներ (բանագետ-բանահավաքներ՝ Արտաշես Նազինյան, Արագ Կարապետյան, Վերմինե Սվայլյան, Էսթեր Խեմչյան, Սերգեյ Վարդանյանի՝ 1978 թ. նախաձեռնած պատանեկան բանահավաքչական շարժման մասնակից տավուշի դպրոցականներ և այլք)։

Առաջին գլխի երրորդ՝ «Տավուշի բանասացները» ենթագլխում հեղինակը կարևորում է ավանդապահ բանասացների դերը բանահայուսական ժառանգության պահպանման և վերարտադրման գործում հատկանշելով ասացողական ավանդույթները հաջորդ սերունդներին փոխանցելու նրանց ջանքերը։

Ուշագրավ է Հայաստանի արևմտյան ու արևելյան հատվածների բանահայուսական նյութերի փոխագլեցությունների և փոխներթափանցումների խնդիրը, որին բանագետն անդրադառնում է «Արևմտահայ եկամուտ բանահայուսական նյութերի տեղայնացումը Տավուշում» ենթագլխում։ Եկվոր և տավուշցի բանասացները երկուստեք օգտվել են միմյանց երկացանկերից, փոփոխություններ կատարել դիպաշարերում, ընդորինակել ասացողական նրություններ և այլն։

Մենագրության երկրորդ՝ «Տավուշի վիպական բանահայությունը» ծավալուն գլուխը բաղկացած է վեց ենթագլուխներից («Տավուշի հրաշապա-

տում «Հեքիաթները», «Արևելքի պատմավիպական կերպարները Տավուշի բանահյուսության մեջ», «Կենդանական հեքիաթ», «Ավանդական կայուն բանաձևերը Տավուշի հեքիաթներում», «Զրույցի ժանրը Տավուշի բանահյուսության մեջ», «Զգարճախոսություն»), որտեղ հանդամանալից քննության են առնված Տավուշի բանահյուսական ժառանգության ժանրային կազմն ու առանձին ժանրային դրսերումները։ Անդրադառնալով վիպական բանահյուսության՝ հեղինակն առանձնացրել է մարզի բանահյուսական ավանդույթում տարածված և ակտիվորեն կենցաղավարած ժանրն իր հիմնական տեսակներով՝ հրաշապատում, իրապատում ու կենդանական հեքիաթներ։ Ընդգծվել են Տավուշի հեքիաթներին բնորոշ բանահյուսական հնարանքներն ու ժանրակազմ հատկանիշները։ Քննության են արժանացել մարզի բանահյուսական ժառանգության մեջ ուրույն տեղ զբաղեցնող և տարածում գտած եկամուտ սյուժեները, մասնավորապես՝ արևելյան թեմատիկայով առվարաքանակ նյութերը, որոնց հերոսներն արևելյան ժողովուրդների բանավոր ավանդույթից փոխառնված պատմավիպական կերպարներ են (Սողոմոն Իմաստուն, Ալեքսանդր Մակերոնացի, Դանանդա Բահլուլ, Խիկար Իմաստունի, Լոխման Հեքիմ, Լենկ Թեմուր, Շահ Աբաս, Նաղիր Շահ)։

Մեծարժեք է «Ավանդական կայուն բանաձևերը Տավուշի հեքիաթներում» ենթագլուխը, որը հեքիաթներում մշտապես անփոփոխ կրկնվող լեզվադարձվածային կայուն կաղապարների և դրանց տարատեսակների առաջին քննախույզ վերլուծությունն է հայ բանագիտության պատմության մեջ։ Ուսումնասիրության շրջանակներում է հեմչյանը հանդամանորեն քննության է ենթարկել Տավուշի հեքիաթների ավանդական կայուն բանաձևերի բոլոր տեսակների (սկսվածքային, միջնամասային, եղրափակիչ) կիրառման ձևերն ու գործառույթները՝ բացահայտելով այդ կաղապարների հեքիաթային ժամանակի և տեղի ծագումնաբանությունն ու սնուցման աղբյուրները։ Տավուշի սկսվածքային, միջնամասային և եղրափակիչ բանաձևերի քննությունն ու դասակարգումը, ըստ կիրառության, հնարավորություն են տվել հեղինակին պնդելու, որ դրանք, տեղական ինքնատիպ առանձին դրսերումներով հանդերձ, նույնական են պատմաազգագրական հարեւան շրջանների հեքիաթային բանաձևերին և հանդես են եկել տեղական խոսվածքի լեզվամիջոցների, բառամթերքի ու ասույթաբանական տեսակների առատ օգտագործմամբ, որը հնարավորություն է տվել ստեղծել տարբերակների բազմազանություն։ Ուսումնասիրելով Տավուշի հեքիաթների բանաձևաստեղծման առանձնահատկություններն ու ավանդական արտահայտչամիջոցները՝ հեղինակը դիտարկում է նաև հեքիաթից տարանձատված չափածո նախարանները և դրանց տեղական դրսերումները՝ գրառված իբրև առանձին ինքնուրույն միավորներ։

«Զրույցի ժանրը Տավուշի բանահյուսության մեջ» և «Զգարճախոսություն» ենթագլուխներում նշվում են մարզի վիպական բանահյուսության մեջ կենցաղավարող զրույցների երկու տիպ (ավանդական և իրապատում զրույցներ), իսկ տափուշյան զգարճախոսություններն, ըստ գիխափոր գործող անձի, ստորաբաժանվում են երեք հիմնական խմբի՝ անվանակիր, անանուն, բնակավայրի անունով տարբերակվող։

Աշխատանքի երրորդ՝ «Տավուշի քնարական և ասույթաբանական բառնահյուսությունը» գլխում, որն ունի երկու ենթագլուխ («Քնարական բառնահյուսություն», «Ասույթաբանական բանահյուսություն»), ներկայացվում են Տավուշի բանահյուսության քնարական ու ասույթաբանական ժանրերը, դրանց ծագումնաբանությունը, սկզբնավորման և զարգացման նախապատմությունը, առանձին տեսակների տարրածվածությունն ու դրանորման տեղական առանձնահատկությունները։ Քնարական բանահյուսության առանձին տեսակներից քննության են առնված սիրերգեր, ծիսական, աշխատանքային, հայրենասիրական, ռազմի և զինվորի, օրորոցային ու մանկական, աշուղական, տեղական ստեղծագործողների երգեր, ինչպես նաև խաղիկներ ու հիշատակներ։

Մարզի ավանդական երգային մշակույթը ստորաբաժանված է երկու խմբի՝ ա) Հնագույն ժամանակներում ստեղծված և ողջ կանքում ժողովրդին ուղեկցած ավանդական երգեր, բ) Նորագույն ժամանակներում (XX դար) ստեղծված հեղինակային ու տեղական ստեղծագործողների երգեր, որոնք շարունակում էին ժողովրդական երգի ավանդույթիները։

Ասույթաբանական ժանրերից դիտարկվում են տավուշյան ասացվածքների և առանձների, անեծքների ու օրհնանք-բարեմաղթանքների, հմայական աղոթքների և հանելուկների տարրատեսակությունն ու ինքնատիպությունը։ Ասույթաբանական բանահյուսության ամենատարածված և կենսունակ ժանրերից հեղինակն առանձնացնում է առած-ասացվածքները, որոնք, փոքր ծավալի մեջ խտացնելով ժողովրդի կենցաղի, պատմության, սոցիալական հարաբերությունների, հոգեբանության ու մտածելակերպի դրակուլումները, ձեռք են բերում ճանաչողական նշանակություն և արտացոլում պատմապատճենական տարրածքի բուսական և կենդանական աշխարհները, կենցաղը, սովորույթները, սոցիալ-տնտեսական հարաբերություններն ու կոնկրետ անձանց հետ առնչվող իրադարձությունները։

Հեղինակն անդրադարձել է Տավուշում ցայսօր ակտիվություն կենցաղավարող անեծքի, աղոթքի, օրհնանքի և բարեմաղթությունների ժանրերին՝ քննելով մարզում նկատվող ավանդական որոշ անեծքների տեղայնացման երևույթը, անեծքներին հակագող պատասխան բանաձևերն ու հմայական աղոթքներին ուղեկցող հմայագործման ծեսերը։

Նկատենք, որ աշխատության մեջ բանահյուսական ժանրերի ուսումնասիրությունը հավասար հիմունքներով չի կատարվել։ Քնարական և ասույթաբանական ժանրերն ավելի հպանցիկ են քննվել, հետևաբար, ցանկալի կլիներ տեսնել բարդատեսակների խորաքնին վերլուծությունը։

Քանի որ մենագրության շրջանակներում առաջին անգամ բանագիտական հետազոտության են ենթարկվել հայ ժողովրդական հեքիաթների ավանդական կայուն բանաձևերն իրենց բոլոր տարրատեսակներով, ինչն աննախադեպ է հայ բանագիտության պատմության մեջ, ուստի, կարծում ենք, շահեկան կլինի հետագայում գիրքը տպագրել նաև օտար լեզվով։ Հայ բանահյուսության ժանրային և բանաձևային համակարգերով հետաքրքրվող ու համապարփակ տեղեկություններ փնտրող օտարախոս բանագետների, ընթերցողների համար։

«Տավուշի բանահյուսական ժառանգությունը» մենագրության հեղինակ է. Խեմչյանը, լավագույնս տիրապետելով տարածաշրջանի անցյալում և ներկայում գրառված բանահյուսական ժառանգությանը, տեսական ուսումնասիրության միջոցով վեր է հանել մարզի հարուստ բանահյուսության առանձնահատկությունները և տեղական նրբերանգներն ու կարևորել դրանց տեղը համահայկական բանահյուսական ժառանգության մեջ:


ԼՈՒՍԻՆԵ ՀԱՅՐԻՑԱՆ

Բ. Գ. Թ., ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագլության ինստիտուտի բանահյուսության տեսության և պատմության բաժնի գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ բանավոր և գրքային ավանդույթների բազմազան կապեր, գրականություն-բանահյուսություն փոխազդեցություններ, հայժողովրդական հեքիաթների ծիսահավատպիքային տարրեր: Հեղինակ է 15 հոդվածի: hayriyan.1976@mail.ru

**ԴՈԿՏՈՐ ԳԵՎՈՐԳ ԱԲԳԱՐՅԱՆԸ ԵՎ ՆՐԱ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ
ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ
(Ծննդյան 100-ամյակի առթիվ)***

2020 թ. լրացակ բանասեր, պատմաբան, ձեռագրագետ, աղբյուրագետ, ժարդանակիչ, բ. գ. դ., ԽՍՀՄ, ապա Հայաստանի գրողների միության անդամ, Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի հնագույն աշխատող Գևորգ Վարագի (Վահանի) Աբգարյանի ծննդյան 100-ամյակը:

Գ. Աբգարյանը ծնվել է 1920 թ. սեպտեմբերի 14-ին Ալեքսանդրապոլի գավառի (ներկայումս՝ Շիրակի մարզ) Հոռոմ գյուղում։ 1937 թ. ավարտել է Լենինականի № 50 երկաթուղային միջնակարգ դպրոցը և նույն տարում ընդունվել Երևանի պետական համալսարանի (ԵՊՀ) պատմության ֆակուլտետը։ 1940 թ. նա աշխատել է Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի բնագրերի ուսումնասիրման և հրատարակման բաժնում, որն այն ժամանակ գործում էր Հանրային գրադարանի շենքում։



21 տարեկան Գևորգը 1941 թ. 5-րդ կուրսից գորակոչվել է ուսագմաճակատ։ 1941 թ. օգոստոսից մինչև 1942 թ. հունվարը ստվորել ու ավարտել է Բաքվի հետևակային ուսումնարանը, ստացել լեյտենանտի կոչում և ականանետային վաշտի հրամանատարի տեղակալի պաշտոնով ուղարկվել ծառայության 263-րդ հրաձգային դիվիզիա։ 1942 թ. սեպտեմբերին «Կրասնի Կավազ» հածանավով շատ հայրենակիցների հետ օգնության է մեկնել Գելենջիկի սեծովյան ափը և նավաստիների գորամասի հետ մասնակցել թշնամու դեմ մղվող կատաղի մարտերին¹։

1942 թ. Հոկտեմբերին Գևորգը վիրավորվել է ոտքից և գերի ընկել։ Ինչպես ինքն է գրել հետագայում՝ «բեկորները խճճվեցին բազում կիոմետրեր չափած ոտքիս կոշտ մկանների մեջ և չկարողացան այլևս այնտեղից դուրս գալ։ ... Ընկերներ ենք դարձել։ Բայց, իհարկե, ես չեմ վստահում այսպիսի ընկերությանը»²։ Մինչև 1945 թ. ապրիլը եղել է Գերմանիայում և Փաշիստական համակենտրոնացման ճամբարում կրել ուղղմագերու դառն ճակատագիրը։ Գերության հոգեկան ու ֆիզիկական տաժանքի մեջ ցոլաց հույսի

* Ներկայացվել է 03. III. 2021 թ., ընդունվել է տպագրության 29. III. 2021 թ.։

¹ Փ. Ենգոյան. Երևանի համալսարանը Մեծ Հայրենականի տարիներին, Երևան, 1975, էջ 84–85, Մ. Գրիգորյան. Մուսաները չլուցին, Երևան, 1989, էջ 233։

² Գ. Աբգարյան. Մայրս վեց անգամ գնաց կայարան. – «Գրական թերթ» (Երևան), 10. XI. 1961։

մի նշույլ՝ գերմանական հայագիտության պատկերը։ Իր հարուստ համալսարանական գիտելիքներով, բայց գյուղական դպրոցի անպաճույժ գերմաներենով, բախտի բերմամբ Գևորգը շահեց գերմանացի սպա, երիտասարդ հայագետ Ռուդֆ Ալեքսանդրի Մայերի համակրանքը, ով լավ տեղյակ էր գերմանացի նշանավոր հայագետների գործերին։ Ինչպես Գևորգն էր պատմում հետագայում, երկուսով կազմեցին գերմաներեն-հայերեն բառարան, որը ոչնչացավ տպարանում 1945 թ. ոմբակոծման ժամանակ։ Ահա թե որտեղից է գալիս գերմանական հայագիտության նկատմամբ այն նախասփրությունը, որը նրա առջև բացեց մի ուրիշ՝ ավելի բարձր գերմանիա։

1945 թ. ապրիլին «... դաշնակից պետությունների բանակները ազատագրեցին նաև մեր ճամբարը, զրում է Գ. Աբգարյանը, - ինձ բախտ վիճակից վերաբառնալ մերոնց մոտ և ծառայել 93-րդ դիվիզիայում ... Ե՛, վկանում անցածը որ լրիվ պատմեմ, մազերդ կծերմակեն»³։

Դրանից հետո նա զորացրվել է և շարունակել իր կիսատ թողած կրթությունը համալսարանում։ 1946-ին ավարտելով ԵՊՀ-ի պատմության ֆակուլտետը՝ ընդունվել է Գիտությունների ակադեմիայի գրականության ինստիտուտի ասպիրանտուրան։ Այստեղ նրա գիտական ղեկավարն էր անվանի բանահյուսագետ Կարապետ Մելիք-Օհանջանյանը, որը 1915–1917 թթ. եղել էր Գերմանիայում և որպես ազատ ունկնդիր սովորել Բեռլինի համալսարանում, եղել գերմանացի հայագետ, Բեռլինի համալսարանի հայագիտական ամբիոնի հիմնադիր Յոզեֆ Մարկվարտի ուսանողը։

Ստալինյան վարչակարգը ռազմագերիներին դիտում էր իբրև հայրենիքի դաշտաճաններ և հաղթական պատերազմին հաջորդած համատարած աքսորի ժամանակ՝ 1947 թ. Հոկտեմբերի 18-ին, Գևորգն անակնկալ ձերբակալվում է։ Հայրենական պատերազմին վեց զավակ ուղարկած ծնողները փոխանակ պատվի արժանանալու՝ հատկապես զոհված զավակների համար, մինչև ցմրուր ճաշակեցին դառը ճակատագիրը։ «Մայրս վեց անգամ գնաց կայարան և վեց որդի ուղարկեց պատերազմ։ Դրանից հետո նա և՛ մայր էր, և՛ տան տղամարդը»⁴։ Իսկ հայրը՝ Վարագը (Վահան), Գևորգի ձերբակալման օրերին վախճանվեց։

Ոչ գերությունից փախուստը, ո՛չ երեք հարազատ եղբայրների կորուստը, ո՛չ հոր մահը 1947 թ. չփրկեցին Գևորգին աքսորից։ Երևանում ձերբակալված Գևորգին հարցաքննելու ժամանակ քննիչը, իբր, անփութորեն, գրասեղանին էր դրել Արթիկի շրջանային լրագիրը, որի բացված էջի վրա գրված էր նրա հոր մահվան հայտարարությունը։ Եվ աս արված էր նրան հոգեպես կոտրելու և ցուցմունք կորցելու դիտավորությամբ։ Ի վերուստ սահմանված հրահանգով, առանց դատավարության, նա դատապարտվեց 10 տարվա ազատազրկման, որից 8 տարին անցկացրեց Վոլգա գետի ափին գտնվող Գորկի քաղաքի մոտ Սուխորեզվողնոյե (չոր-ջրագուրկ) կոչված կալանավայրում։ Շատերը չէին դիմանում աքսորի տաժանակիր պայմաններին։ Գևորգը դիմացավ շնորհիվ իր համալսարանական ընկերուհի՝ Ալի-

³ Ա. Գրիգորյան. նշվ. աշխ., էջ 233:

⁴ Գ. Աբգարյան. Մայրս վեց անգամ գնաց կայարան, Գ. Աբգարյան. Մայ. – «Известия» (М.), 28. II. 1962.

Նա Սեղբոսյանի հոգատարության, որի անձնվիրությունը և դժվարին պայմաններում ներքին գործերի խիստ հակողությամբ թույլատրված նրա այցելությունները հոգեկան կորով էին հաղորդում սիրելի անձնավորությանը։ Հաղթահարելով բազմաթիվ խոշջնդուներ, այդ թվում նաև ընտանեկան՝ Ալինան, ով սովորել էր Մոսկվայի ասպիրանտուրայում և արդեն ֆրանսերեն լեզվի դասախոս էր ԵՊՀ-ում, այդ 8 տարիների ընթացքում 12 անգամ այցելեց Գևորգին՝ տաք չորեր և անհրաժեշտ պարեն հասցնելով նրան։ Նույնիսկ ներքին գործերի աշխատողները զարմանում էին քնքուշ ձայնով և փիսրուն կազմվածքով այդ աղջկա տոկունության և արիության վրա։ Տողերիս գրողի հետ մտերմիկ զրուցելիս Գևորգը երբեմն հիշում էր այդ ծանր տարիները։ Մի անգամ, երբ տարել էին ծառահատման թե բեռնաթափման, մնացել էր գերանի տակ ու աջ կողմի երկու-երեք կողովակրերը կոտրվել էին և անկեղծանալով՝ ասաց, թե այդ օրերին Ալինան անակնկալ այցելության էր եկել ու ինքը ստիպված էր «Ճիդ կերպարանքով (իր բառերն են), մի կերպ ցավերը զավելով գնալ տեսակցության, որպեսզի նա չզգա իր հետ պատահածը»։ Աղջկա արիությունն այդչափ ոգեշնչող էր ...

Իր գիտական մակարդակով Գ. Աբգարյանն առանձնանում և հարգանք էր վայելում աքսորականների մոտ, որոնք հարսնացուին ճանապարհելիս ուղեկցում էին նրան կալանավայրի վտանգավոր տեղանքներում, որտեղ ուժեղ էր իրավազանցների ազդեցությունը։ Հատկապես հաշվի առնելով նրա լատիներենի խմացությունը՝ կալանավայրի բժշկական անձնակազմը հաճախ խնդրում էր վերծանել բուժաշխատողներին հատուկ անընթեռնելի ձեռագրով դրված դեղատոմսերը և թարգմանել ռուսերեն։ Կալանավայրում Աբգարյանը մտերմացավ էստոնացի գիտնական, թարգմանիչ Բորիս Կաբուրի հետ, որը հետագայում հիշում է՝ «Սասունցի Դավիթ» հայկական էպոսը էստոներեն թարգմանելու «մտադրության և ոգեշնչման համար պարտական է Գ. Աբգարյանին»⁵։

Ստալինի մահից և Բերիայի գնդակահարումից հետո Գ. Աբգարյանը 1955 թ. մարտի 19-ին ժամկետից շուրջ ազատվեց կալանքից, ու տարիների փորձությամբ թրծված հավատարմությունը պսակվեց երջանիկ զույգի ամուսնությամբ, որից ծնվեցին Արմենուհին (1955 թ.), Անահիտը (1957 թ.) և Վահագնը (1958 թ.): Սակայն Ալինան, դեռևս երիտասարդ, անակնկալ հիվանդացավ և, դժբախտաբար, 1963 թ. 40 տարեկան հասակում կնքեց մահկանացուն՝ թողնելով փոքրահասակ երեխաներին։ Ճակատագրի այս նոր հարվածը Գ. Աբգարյանը ստիպված էր մի քանի տարի միայնակ հաղթահարել, մինչև որ 1968 թ. ամուսնացավ իր ուսանողական ընկերուհի էմի՞ա Գասպարյանի հետ, ով նրա հետ կիսեց երեխաների խնամքի, դաստիարակության և կրթության հոգար։

Գ. Աբգարյանի գիտական գործունեությունը սկսվեց գիտական հայտնագործությամբ։ 1946 թ. ԵՊՀ-ում իր ավարտական դիպլոմային աշխատանքում ցույց տվեց, որ Մաղաքիա Աբեղային կամ Վարդան Արևելցուն վերագրվող «Պատմություն վասն ազգին նետողաց» ձեռագիր մատյանն

⁵ Sassuuni Davith. Armeenia keelest tõlkinud Boris Kabur. Tallin, 1975, l. 178.

իրականում պատկանում է XIII դ. պատմիչ Գրիգոր Ակներցուն, և վերջինիս անվամբ էլ մոնղոլական արշավանքներին վերաբերող այդ երկը թարգմանվել է անգլերեն, թուրքերեն ու վրացերեն:

Այս ընթացքում ճարտարապետ Մարկ Գրիգորյանի նախագծով կառուցվեց Մատենադարանի հոյակապ շենքը Մաշտոցի պողոտայի հյուսիսային ծայրում՝ դեպի Երևան նայող բլրի վրա: Մատենադարանը նորակառույց շենք է փոխադրվել 1959 թ., իսկ 1962-ին՝ կոչվել Մեսրոպ Մաշտոցի անվան: 1954–1982 թթ. Մատենադարանի հիմնադիր տնօրինն է եղել ակադեմիկոս Լևոն Խաչիկյանը, որի ջանքերով հաստատությունը կարճ ժամանակամիջոցում ձեռք բերեց միջազգային ճանաչում: Նրա հանձնարարությամբ՝ նորակառույց Մատենադարանի շենքի և ձեռագիր գանձերի մասին «Մատենադարան» գիրքը՝ 126 էջ ծավալով, գրեց Գ. Աբգարյանը բազմալեզու ընթերցողների համար՝ հայերեն, ուսւառեն և անգլերեն՝ 1962 թ., իսկ լեզերեն՝ 1965 թ.:

1954 թ. Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի գիտությունների ակադեմիաների իսկական անդամ, Քեմբրիջի (Անգլիա) համալսարանի պրոֆեսոր Վ. Ֆ. Մինորսկին նամակով Հայաստանի գիտնականների ուշադրությանը ներկայացրեց Յո. Մարկվարտի “Die Provinz Parskahajk” գերմաներեն աշխատության հեղինակային ձեռագիրը⁶: Այդ հետազոտությամբ վերջինս նպատակ էր դրել վերականգնել Պարսկահայքի տեղագրությունը և դրա գրաված տարածքը ճշգրտելու համար օգտագործել էր բազմաթիվ սկզբնաղբյուրներ հին ու նոր լեզուներով (հայերեն, հունարեն, արաբերեն, լատիներեն, ասորերեն, պարսկերեն, պահլավերեն, հին երրայերեն և այլն), ինչպես և հայ, գերմանացի, ֆրանսիացի, անգլիացի ու այլ հեղինակների ավելիքան 100 հետազոտություն: Արդյունքում Մարկվարտը բացահայտեց բազմաթիվ նոր տվյալներ հայ ժողովրդի պատմության, մատենագրության և ընդհանուր բանասիրության բնագավառում:

1960–1961 թթ. հետևելով Մինորսկու ուշագրավ առաջարկին՝ Աբգարյանն առաջինը ձեռնարկեց Մարկվարտի եղակի ուսումնասիրության հետազոտումը՝ նվիրված Մեծ Հայքի Աշխարհացույցի 7-րդ նահանգ Պարսկահայքին⁷: Նախկին ուղղագերու ձախավեր ճակատագիրն ուղեկցել է նույ-

⁶ 1946 թվին, երբ Խորհրդային Միության դեկադարությունն արդեն հարց էր բարձրացրել Փաշխատական Գերմանիայի դաշնակից Թուրքիայի առաջ՝ վերադարձնելու հայ ժողովրդից խված պատմական հողերը, Վ. Ֆ. Մինորսկին հանդես էր եկել քաղաքական հայտարարությամբ, որում դաստիարակում էր Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարար Էռնեստ Բեկնին Թուրքիայի վարչապետ Սարաջօղլուի հայտարարությունը պաշտպանելու համար՝ իր Կարսի և Արդահանի տարածաշրջանում հայեր գոյություն չեն ունեցել: Հիշեցնելով Հիսլերի խոսքերը, թե «ո՞վ է այսօր հիշում հայերի կոտորածի մասին» Մինորսկին մատնանշում էր՝ մարդկության հիշողությունը այնքան էլ կարճ չէ և նա հիշում է, թե ինչպես վարդեցին երիտթուրքերը հայերի հետ:

⁷ Գ. Ա. բարյան. Հ. Մարկվարտի «Պարսկահայք նահանգը» անտիպ ուսումնասիրությունը. – ՊԲՀ, 1961, № 1, էջ 180–184, Յո. Մարկվարտ. Պարսկահայք նահանգը. – նույն տեղում, էջ 185–207, 1961, № 2, էջ 212–244 (գերմա-

Նիսկ անվանի գիտնական Գ. Աբգարյանին: Իր կենսագրության վերը բերված հանգամանքների հետևանքով հնարավորություն չունենալով անձամբ թղթատել Մարկվարտի գիտական արխիվը, որը պահպառված է Խոտակայում՝ Հռոմի “Pontificio instituto Biblico” (այսինքն՝ պապական) գրադարանում՝ Գ. Աբգարյանը ստիպված էր այդ անտիպ ժառանգությունը ուսումնասիրել Մ. Մաշտոցի անվան Մատենադարանում՝ Հռոմից ստացված ոչ կատարյալ լուսապատճենների միջոցով, այն ժամանակվա խոշորացնող պարզագույն հարմարանքով, որն անհարմարություններ էր պատճառում գիտնականընթերցողին: Նա ստիպված էր տող առ տող հաղթահարել դժվարընթեռնելի գերմաներեն ձեռագիրի լուսատիպը, միաժամանակ վերծանել ձեռագրում սփուրված հունարեն, ասորերեն ու արաբերեն վկայությունները՝ վերականգնելով անընթեռնելի տեղիներն անհրաժեշտ ծանոթագրումներով: Շուտով անտիպ աշխատության հայերեն թարգմանությունը ներկայացրեց հայ ու օտար գիտական շրջանների դատին: Այդ թարգմանության և կատարված հետազոտության արձագանքն այնքան մեծ էր, որ 1966 թ. Մարկվարտի «Պարսկահայք նահանգը» աշխատությունը լույս տեսավ ֆրանսերեն, և դրա թարգմանության համար բնագիր ծառայեց Գ. Աբգարյանի հայերեն թարգմանությունը⁸. մի փաստ, որը հազվագյուտ է գիտական թարգմանությունների պատմության մեջ:

Դեռ 2005 թ. սեպտեմբերի 6-ին, երբ Գերմանիայից հրավիրված հյուրերի մասնակցությամբ և Մատենադարանի տնօրեն Սեն Արեշատյանի նախագահությամբ ետմահու հանդիսավոր նշվեց Մատենադարանի հնարնակ դոկտոր Գ. Աբգարյանի ծննդյան 85-ամյակը, իմ ելույթում նրա ժառանգների ուշագրությունը հրավիրեցի այն կարևոր փաստի վրա, որ, բացի Մարկվարտի «Պարսկահայք նահանգի» հայերեն թարգմանությունից, Աբգարյանը վերծանել ու ճշգրտել է նույնի գերմաներեն բնագիրը և, փաստորեն, այն լրիվ պատրաստ է գերմաներեն լեզվով հրատարակության, որով սերտորեն իրար են կապվում գերմանացի ու հայ երկու խոշոր հայագետների անունները:

Գ. Աբգարյանը մեկ անգամ չէ, որ գիտական շրջանների ուշագրությանն է արժանացը գերմանացի հայագետների անտիպ մեծարժեք գործերը: Այդպիսին է գերմանացի լեզվաբան Յոզեֆ Կարստի (1871–1962) «Միջին հայերենի բառարանը», որի մասին նա հանդես եկավ ԵՊՀ-ի «Բանբեր»-ում 1995-ին⁹: Այսուղ չեմ կարող չընդգծել Մատենադարանի ղեկավարության բարյացկամ, կասեի՝ նրբանկատ վերաբերմունքը, որը ի հիշատակ Գ. Աբգարյանի՝ Կարստի անտիպ «Միջին հայերենի բառարանի» վերծանումը և քննությունը վատահեց Գ. Աբգարյանի դեռևս սկսնակ որդուն՝ Վահագն

ներեն անտիպ բնագիրը թարգմանեց, ծանոթագրեց և պատրաստեց հրատարակության Գ. Վ. Աբգարյանը):

⁸ Introduction à la Province de Parskahayk^c. Une etude inédite de J. Markwart; La Province de Parskahayk^c /Գ. Աբգարյանի «Հ. Մարկվարտի «Պարսկահայք նահանգը» անտիպ ուսումնասիրությունը» աշխատության ֆրանսերեն թարգմանությունը]. – “Revue des Études Arméniennes (Nouvelle Série)”. Paris, 1966, T. III, pp. 245–314.

⁹ «Բանբեր Երևանի համալսարանի», 1995, թիվ 2, էջ 183–186:

Աբգարյանին, որն այս ընթացքում իր լեզվական գիտելիքներով լիովին արդարացրեց այդ վստահությունը:

1912 թ. հայ ժողովուրդը նշեց Հայոց գրերի գյուտի 1500-ամյա հոբելյանը: Այդ նշանավոր տարելիցի առթիվ Յո. Մարկվարտը Վիեննայի «Հանդես ամսօրյա»-ում հանդես եկավ Հիմնարար ուսումնասիրությամբ՝ իր հարգանքի տուրքը մատուցելով հայ ժողովրդի գրի և դպրության հանճարին: Այդ հետազոտության Հիմնադրույթներով երիտասարդ եռանդուն գիտնականը զեկուցում էր կարգացել դեռևս 1902-ին Համբուրգում կայացած Միջազգային կոնքրեսում, որի համար 1904-ին արժանացավ Մուկվայի Լազարյան ճեմարանի մրցանակին:

1962 թ.՝ Մաշտոցյան հոբելյանից ընդամենը կես դար անց, նշվեց Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակը: Եվ ահա գերմանացի մեծ հայագետին փոխադարձ հարգանք մատուցելով և, կարծես, նրան Մաշտոցյան հոբելյանին մասնակից դարձնելու համար՝ Գ. Աբգարյանը վերստին թարգմանեց Հայոց այբուբենին նվիրված Մարկվարտի աշխատությունը «Հայոց այբուբենի ծագումը և ս. Մաշտոցի կենսագրությունը» վերնագրով¹⁰:

Յո. Մարկվարտի նկատմամբ Գ. Աբգարյանի հրացմունքն առանձնակի ուժով դրաւորվեց գերմանացի մեծ հայագետի ծննդյան 100-ամյա հոբելյանին նվիրած հոդվածում¹¹ գրված գիտնականի ու բելետրիստի յուրատեսակ փայլուն ոճով, որը ինձ ուղեկցում է 1965 թվականից և տպավորված է հիշողությանս մեջ այնպես, որ Գ. Աբգարյանի ծննդյան 100-ամյակի առթուղով սույն անդրադարձը գրելիս կարիք չունելի կրկին թարմացնելու հիշողությանս մեջ նույնիսկ մանրամասները: Դրանց մեջ խորաքանդակի պես դրոշմված էր այն ժամանակվա գերմանական ռայխի թրքամոլության և գերմանական գիտական մտքի վեհության հակառակությունը, որն արտահայտված է Գերմանիայի և Թուրքիայի ռազմական դաշնությամբ ու գերմանացի հայագետների գիտական բարձր գաղափարներով: Այս ֆոնի վրա էլ ցուցադրվում է գերմանացի մեծ հայագետ Մարկվարտի հայագիտական բազմաբեղուն ժառանգությունը, որի մեջ ցայտուն դրսեսորվել է հայ ժողովրդի ստեղծած բազմադարյան դպրության ու մշակույթի խորամուխ ընկալումը և բարձր դրվագանքը:

Թվում էր, թե Մարկվարտի “Die Provinz Parskahajk” աշխատության հայեն թարգմանությունը, վերծանումն ու բազմակողմանի քննությունը ավելի քան բավարար պետք է լիներ արդեն քառասուն անց բազմափորձ գիտնականի համար՝ թեկնածուական դիսերտացիայի հայց ներկայացնելու: Բայց Գ. Աբգարյանն այդ ասպարեզն ընտրել էր մի ավելի մեծ գիտական սիրանքի համար, և դրանից երկու տարի անց նա պաշտպանության ներկայացրեց հայ մատենագրության մի ավելի պրոբեմատիկ պատմական երկի թեմա՝ «Սեբեռափ պատմությունը և Անանունի առեղծվածը»: 1965 թ. Մատենագրանի գիտական խորհուրդն այդ դիսերտացիայի համար նրան շնորհեց ոչ թե թեկնածուի, այլ միանգամից դոկտորի գիտական աստիճան,

¹⁰ «Մեսրոպ Մաշտոց» հոդվածների ժողովածու, Երևան, 1962, էջ 117–180:

¹¹ Գ. Աբգարյան. Յոզեֆ Մարկվարտ (ծննդյան 100-ամյակի առթիվ). – ՊԲՀ, 1965, № 2, էջ 149–156:

ինչը հազվագյուտ երևույթ է, և դա հաջողությամբ հաստատվեց նաև ՍՍՀՄ Բարձրագույն որակավորման հանձնաժողովի որոշմամբ։ Այն լույս տեսավ առանձին գրքով՝ նույն վերնագրով 1965 թ. Գիտությունների ակադեմիայի հրատարակչության կողմից 252 էջ ծավալով։ Բուն «Պատմություն Սեբեոսի» մատյանը՝ հարուստ ծանոթագրություններով և բազմալեզու հեղինակների մանրամասն քննության վկայակոչումներով, դոկտոր Գ. Աբգարյանը հրատարակեց 1979 թ. (466 էջ ծավալով)։

Գ. Աբգարյանի աշխատությունները նվիրված են հայ միջնադարյան գրականությանը, ձեռագրագիտությանը, հայ-հունական, հայ-վրացական, հայ-պատկանական, հայ-գրանահական, հայ-գերմանական մատենագրական աղերսներին, եվրոպական հայագիտության պատմությանը։ Աբգարյանը գերմաններնից հայերեն է թարգմանել Յո. Մարկվարտի, Հանս Վալտեր Պոլի, Լինոս Բենակիսի ու այլոց հայագիտական ուսումնասիրությունները, լուսաբանել է միջին գերմաններնում արծարծված հայկական թեմաները։ Նա սկեռուն հետաքրքրություն էր տածում եվրոպական հայագիտության նշանավոր գերմանի և, հատկապես, գերմանացի հայագետների ուսումնասիրություններին։ Լայնախոհ գիտնականի տեսադաշտում էին XX դ. Հայոց Մեծ եղեռնի մասին գերմանացի Հեղինակների գրական երկերն ու հրապարակումները՝ ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան քառասուն օրը» պատմավեսպը¹²։

Գ. Աբգարյանը կազմել է «Հայկական աղբյուրները Աբխազիայի և աբխազների մասին» ուսուերեն ծողովածուն։ Առանձին հոդվածներ է նվիրել բազմաթիվ հին ու նոր գրողների և բանաստեղծների՝ Խորենացի, Նարեկացի, Լամբրոնացի, Թշուրանցի, Կարապետ Վիազոյ, Աբովյան, Շափփի, Իսահակյան¹³, Վարուժան, Վերֆել, Խեչումյան ու ամերիկյան հայագետներին և հայագիտության պատմությանը նվիրված հոդվածների շարքը։ 1975–1976 թթ. Աբգարյանը ԵՊՀ-ում դասավանդել է հայ թարգմանական մատենագրության պատմություն։

Գերմանուհի Գաբրիելե Վինկերը (ծնվ. 1940 թ.) Գերմանական հայագիտության ներկայումս գործող նշանավոր գերմանից է. Հոռմում, Մյունիսենում, Օքսֆորդում ուսումնասիրել է հայերեն, վրացերեն, ասորերեն, զատիերեն, եթովպերեն։ 1986 թ. նա մասնակցեց Երևանում կայացած անդրանիկ

¹² Գ. Աբգարյան. Պրոֆ. Հանս Վալտեր Պոլ (Քյոլն), Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան քառասուն օրը» (թարգմ. գերմաններնից Գ. Աբգարյանի)։ – ՊԲՀ, 1973, № 2, էջ 105–112, նույնի Դանիել Վարուժան և Ֆրանց Վերֆել։ – «Գրական թերթ», 01. VI. 1984, նույնի թաղված գանգերի ղողանջը (ֆրանց Վերֆելի մասին)։ – «Առվետական Հայաստան», 1985, № 4, էջ 28–31, նույնի Ալմա Մահլեր-Վերֆել։ «Իմ կյանքը» (ֆրանց Վերֆելի կնոջ մասին)։ – «Հայրենիքի ձայն», 18. VI. 1986, նույնի ֆրանց Վերֆելի փրկած մի երգ։ – «Հայրենիքի ձայն», 26. IX. 1990, նույնի Ծննդյան ճրագալույց երեկոն։ Մեծ մարդասերը, հայ ժողովրդի մեծ բարեկամը (ֆրանց Վերֆելի մասին)։ – «Հայրենիքի ձայն», 10. VI. 1991։

¹³ Գ. Աբգարյան. Խասհակյանագիտությունը 1984-ին (Ա. Մուշեղյանի «Ավետիք Խասհակյան՝ վաղ տարիներ» մենագրության մասին)։ – «Գրական թերթ», 30. XI. 1984։

Միջազգային հայագիտական սիմպոզիումին: 1994 թ. Հռոմում գերմաներեն հրատարակեց «Կորյունի՝ Մեսրոպ Մաշտոցի կենսագրությունը – թարգմանություն և մեկնաբանում» վերնագրով ստվարածավալ և մանրախույզ աշխատությունը¹⁴:

Վինլերի այս գիրքը նույնպես չվրիպեց Գ. Աբգարյանի ուշադրությունից և նա դրան նվիրեց երկու հոդված՝ «Գերմանական մաշտոցագիտության նոր նվաճումը»¹⁵, ապա և «Մաշտոցի Վարքը». Գերմաներէն թարգմանութիւնը և կորիւնագիտական այլ խնդիրներ»¹⁶: Կարելի է մի ամբողջ հոդված գրել միայն այս գրքի քննության ու բարձրացրած հարցերի վերաբերյալ, սակայն չապառել դոկտոր Աբգարյանի սուլք դիտողականության ու դիպուկ գնահատականների այն արտառոց ջանքը և ազնիվ մղումը, որով հայ գիտնականը ձգուում է հայ ընթերցողին իխվին հասցնել գերմանուհի հայագետի տքնածան պրատումները¹⁷:

Կորյունի նախորդ երեք թարգմանությունները, որոնք լույս են տեսել 1841-ին Տյուբինգենում, 1927-ին՝ Մյունիսենում և 1963-ին՝ Դյուսելդորֆում, կատարված են թերի գրաբար տեքստերից, մինչդեռ Վինլերի թարգմանությունը հիմքում ունի Մ. Աբեղյանի 1941 թ. քննական հրատարակությունը՝ իր ծանոթագրումներով: Ամբողջական տեքստը և մանրակրկիտ ծանոթագրումները հնարավորություն են տվել գերմանուհի թարգմանչին անհամեմատ ծավալուն ու բազմակողմանի քննությամբ բացահայտել և գերմանացի հայագետներին ու մասնագետ ընթերցողներին մատուցել IV–V դդ. Հայ մեծ լուսավորիչ, Հայ գրերի գյուտի և Հայոց այբուբենի մեծ երախտավոր Մեսրոպ Մաշտոցի կանքն ու գրաստեղ գործունեությունը:

Մ. Աբեղյանի հրատարակությունը Գ. Աբգարյանի գնահատմամբ «մեկնաբանությունների լիակատարությամբ ունի հանրագիտարանային արժեք: Մաշտոցագիտական որոշ խնդիրներ այնտեղ ներկայացված են նոր լույսի տակ: Դրանցից է նաև Մեսրոպ Մաշտոցի և Մոպատևստիայի եպիսկոպոս Թեոդորոսի կապերի խնդիրը: Թեոդորոսը Անտիոքում քահանա¹⁸ եղած տարիներին գրել է պարսից մոգերի դեմ մի գրվածք, ուղղված ծագումով հայաստանցի քորեպիսկոպոս Մաստուքիոսին: Ալիշանը գետևս 1901 թ. «Հայապատում» Մաստուքիոսին կոչում է Մաշտոց: Նրան հետևել են Ն. Աղոնցը և շատ ուրիշներ: Ն. Ակինյանը ենթադրել է, թե Մաշտոցը 380-ական թվականներին կրթություն է ստացել Անտիոքում, Լիբանիոսի դպրոցում և այդ ընթացքում ծանոթ է եղել Թեոդորոսին: Վերջինիս քահանա (պրեբիտեր) լինելու և մոգերի դեմ գրելու մասին տեղեկությունը մասնագետները քաղել են Փոտ պատղիարքի «Մատնադարան» կամ «Բիւլամատեան»

¹⁴ Winkler Gabriele. Koriwns Biographie des Mesrop Maštoc'. Übersetzung und Kommentar, Orientalia Christiana Analecta 245. Rom, 1994.

¹⁵ Գ. Աբգարյան. Գերմանական մաշտոցագիտության նոր նվաճումը. – «Հայաստան», 18. V. 1995:

¹⁶ Տե՛ս «Հանդէս ամսօրեայ» (Վիեննա), 1996, թիվ 1–12, էջ 454–473:

¹⁷ Մանրամասն տե՛ս Գ. Աբգարյան. Գերմանական մաշտոցագիտության նոր նվաճումը:

¹⁸ «Քահանա» տիտղոսը Գ. Վինլերի գերմաներեն տեքստում առկա է presbyter ձևով, որը, ըստ իս, պետք է հայերեն թարգմանել «երէց»:

Հաստորից: Սակայն 1959 թ. Փարիզում հրատարակված «Մատենադարանում», որը Փոտի երկի քննական բնագիրն է, թեոդորոսի անվան դիմաց բացակայում է «պրեսբիտեր» (քահանա) տիտղոսը։ Սույն նորությունը «Մաշտոցի վարքի» գերմաներեն թարգմանությունում բերված է ցույց տալու համար, որ Մաշտոցին և Մոպառեստացուն միմյանց հետ կապելու նպատակով վկայակոչված «պրեսբիտեր» տիտղոսը դադարում է հաստատ կովան հանդիսանալուց։

... Ընդհանրապես տիկին Գաբրիելե Վինկերի մենագրությունում ուսումնասիրված են գրերի գյուտի ժամանակաշրջանին առնչվող պատմական կարևոր իրադարձությունները, նորովի են վերլուծված գրավոր հուշարձանները, բացահայտված են նոր իրողություններ։ Այս առումով մենագրությունն ունի պատմագիտական լուրջ արժեք և չպետք է վրիպի մասնագետների ուշադրությունից»¹⁹։

Ինքնին հասկանալի է, որ Հայոց գրերի գյուտին վերաբերող գերմաներեն հրատարակության մեջ պետք է շոշափվեր նաև Մ. Մաշտոցի ստեղծած վրաց գրերի խնդիրը։ «Գ. Վինկերը համոզված է, — գրում է Գ. Աբգարյանը, — որ վրացերենը պաշտօնական լեզու է ընդունվել միայն քրիստոնեություն ընդունելուց հետո։ Հաստ այսմ էլ հավանական է համարում, որ վրացական գրերը նույնապես ստեղծվել են միենույն առիթով։ Այս համոզմունքից հետո, թվում է, թե պետք է հաջորդեր Մաշտոցի հեղինակության ընդունումը։ Սակայն հարգարժան հեղինակը գրում է. «Հայկական և վրացական այրութենների մի ուշագրավ համեմատություն է մեզ մատուցում Պատարիձեն»²⁰։ Վերջինս իր գերմաներեն հոդվածով փորձ է անում գտնել գծագրական ընդհանրություններ հայկական որոշ տառերի և, իբր, վաղուց գոյություն ունեցած վրացական գրերի միջև։ Սա դիվանագիտական քայլ է, որով կողմնակիրեն գլխի է գցվում, թե հայկական այրութենը ստեղծվել է վրացականից հետո և վրացականի օգտագործմամբ։ Եթե մինչ այդ վրացագետները բավարարվում էին միայն Մաշտոցի վաստակը ժխտելով, ապա այժմ «ապացուցում են»՝ Մաշտոցն ինքն է հայկական այրութենը ստեղծելիս օգտվել վրացական տառերից։ Սակայն մասնագետներին քաջ հայտնի է, որ գծագրական առնչությունների հիման վրա այրութենների ժամանակագրական հերթականությունը որոշել հնարավոր է միայն այն գեպքում, եթե ստույգ հայտնի է երկու այրութենի ստեղծման ժամանակը։ Այսպես՝ գծագրական յուրաքանչյուր ուսումնասիրություն նմանվում է 6 և 9 թվանշաններով խաղին։ Եթե Յ-ը գլխիվայր շրջենք՝ կդառնա 9։

Բելգիացի արևելագետ Պ. Պետերսն արդեն նկատել է, որ վրացագետներին հուզում է ոչ այնքան իրենց այրութենին օտար ծագում վերագրելը (նրանք գերադասում են վրացական տառերը բխեցնել հեռավոր ու մեռած փյունիկյան կամ արամեական գրություններից և ոչ թե որկիցների կենդանի այրութենից), որքան «այն որ լուսավորությունը ծագել է Հայաստանից»։ Իսկ սա նշանակում է, որ հարցը քննվում է ազգային արժանապատ-

¹⁹ Գ. Աբգարյան. «Մաշտոցի Վարքը». գերմաներէն թարգմանությունը և կորիւնագիտական այլ խնդիրներ։

²⁰ Գ. Աբգարյան. Գերմանական մաշտոցագիտության նոր նվաճումը։

վության դիրքերից: Նման պայմաններում ճշմարտությունը բացատրելու առաքելությունը մնում է օտար գիտնականներին, որոնք հայ-վրացական շահագրգուռություններից պետք է որ հեռու կանգնեն և ուսումնասիրությունը վարեն անկողմնակայի քննությամբ»²¹:

«Գուլիկելմոս Պատելը 1538թ. Ֆրանսիայում և Թեոդոր Ամբրոսիոսը 1539թ. Խոախիայում իրենց աշխատություններում տպագրել են Հայկական տառերի նմուշներ, – զրում է Գ. Աբգարյանը: – Սրանք մինչև այժմ համարվում էին ամենավաղ տպագրությունները: Սակայն վերջերս մեզ վիճակից պարզել, որ Մեսրոպ Մաշտոցի ասեղծած այլուրենի տպագրության հայրենիքը Գերմանիան է, և որ այլուրենը տպագրվել է առաջին անգամ գետում 1486թ.»²³: Եվրոպական տպագրության մեծ հայտնագործող Գուտենբերգի մահից 18 տարի անց Մայնցում Բերնհարդ ֆոն Բրայդենբերգի «Ուխտագնացություն դեպի Ավետյաց երկիր» ուղեգորության հետ տպագրվել է Ժամանակի նշանավոր հողանդացի Նկարիչներից Ռենեվիխի ձեռքով գծված մեսրոպյան փայտափորագիր հայերեն այլուրեն՝ վերևում զրոշմված հայերեն անուններով: «Մարդկությունն ակնածանքով է հարգում Գուտենբերգի հիշատակը, – շարունակում է Գ. Աբգարյանը, – Գրքեր տպագրելիս ոչ ոք չի նեղվում այն փաստից, որ Գուտենբերգը գերմանացի է: Երախտագիտությունը բարձրագույն առաքինություն է»²⁴:

1996 թ. տողերիս հեղինակը պաշտպանեց դոկտորական ատենախոս սովորուն «Վ դարի Հայ մատենագրության ժամանակագրական խնդիրներ» թեմայով հեղինակների և նրանց երկերի դասակարգումը նոր տեսանկյունից: Պաշտոնական ընդդիմախոսներն էին ԳԱ փոխնախագահ Գագիկ Սարգսյանը, Մ. Մաշտոցի անվան Մատենադարանից դոկտոր Գևորգ Աբգարյանը և ԵՊՀ-ից դոկտոր Պողոս Խաչատրյանը: Պաշտպանությունը նշանակված էր նոյեմբերի 1-ին ժ. 12-ին: Գիտեի, որ դոկտոր Աբգարյանն անկողնային հիվանդ է, ուստի նախօրդ օրը երեկոյան զանգեցի իրեն՝ տեղեկա-

21 ՆՈՒԻՆ ՄԵՇՈՐԵՄ:

²² 1990-ական թվերին տղղերիս գրողը նոր տեսանկյունից է բացահայտել Մաշտոցի գործունեությունը՝ ցույց տալով, որ նա հեթանոս դպրապետների աշխատովթյունների հիման վրա վերականգնել է հին Հայոց այբուբենը և նշանագրերը. տե՛ս Ա. Մ ա շ ե գ յ ա ն. Արմանական բառեր և առաջնային բառեր. Երևան, 2006, էջ 79–98:

²³Գ. Աբգար և անդամները պատճենահանձնության նոր նվաճումը:

²⁴ Նույն տեղում:

նալու առողջության մասին: Նա պատասխանեց, որ, ցավոք, չի կարող ներկայանալ պաշտպանությանը, բարձր է գնահատում իմ աշխատանքը և ի սրտե հաջողություն մաղթեց ինձ: Միայն խնդրեց փոխանցել Գրականության ինստիտուտի տնօրեն ակադեմիկոս Էդ. Ջրբաշյանին, որ ընդդիմախոսի իր կարծիքը հանձնարարվի կարդալ միայն Հին գրականության բաժնի գիտաշխատող, գոկոր Արշալույս Ղազինյանին: Նրա այս խնդրանքից, համարական թե նա ինչպիսի հարգանք էր տածում վերջինիս նկատմամբ իրեւ մարդու և գիտնականի, և նույնիսկ քառորդ դար անց նրա ցանկությունը չեմ մոռանում:

Դոկտոր Գևորգ Աբգարյանը վախճանվեց 1998 թ. մայիսի 15-ին 78 տարեկան հասակում: Ստորև բերվող իմ բանաստեղծությունն այդ տիսոր առիթով տպագրվեց Գիտությունների ակադեմիայի «Գիտություն» թերթում 1998 թ. Հունիսին № 12-ի 4-րդ հատում:

ԴՈԿՏՈՐ ԳԵՎՈՐԳ ԱԲԳԱՐՅԱՆԻՆ

Մեր կյանքում միայն նա է վեհ մնում,
Ով նախընտրում է վեհը թեթևից.
Մարդ կա, որ պատվի ետքից է գնում,
Մարդ կա՝ պատիվն է գնում ետելից:

Դու՝ սիրոտ բարի բացած բոլորին,
Տքնեցիր անդուլ, ոդու ցնծումով.
Դու հակվում էիր մագաղաթներին
Հին գրչի նման՝ մոմով ու ծոմով:

Կոփվ, գերություն, գնդան ու աքսոր
Անկարող եղան քո միտքը սանձել,
Եվ հեռանալով թողնում ես այսօր
Հին մատյաններին համարժեք դանձեր:

ԱԼԲԵՐՏ ՄՈՒՇԵՂՅԱՆ

Բ. Գ. դ., ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվ. գրականության ինստիտուտի հայ հին մատենագրության բաժնի առաջատար գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ հայ-գերմանական գրավան առնչություններ, հայ հին գրականություն, թարգմանչություն, ուրարտական արձանագրությունների նոր վերծանումներ և Հին Արևելքի լեզուներում նախամաշտոցյան հայերեն բազմաթիվ բառերի բացահայտումներ: Հեղինակ է 3 գրքի և 150-ից ավելի հոդվածի: albert.musheghyan@yandex.com

ՄԵՐ ՀՈԲԵԼՅԱՐՆԵՐԸ ՀԱՌԻ ՅՈԲԻԼՅԱՐԸ

ԱՍՄԱՑՈՐԴ ՆՎԻՐՈՒՄ ՄԵՐ ԺՈՂՈՎՐԴԻՆ ՈՒ ՀԱՅՐԵՆԻՔԻՆ
(Ակադեմիկոս Աշոտ Աղասու Մելքոնյանի
ծննդյան 60-ամյակի առթիվ)

Ակադեմիկոս Աշոտ Աղասու Մելքոնյանի կյանքն անխզելիորեն կապված է ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի և պատմության ինստիտուտի հետ, ուր սկսելով աշխատել՝ տարիների ընթացքում հասել է տնօրենի պատասխանատու պաշտոնին: Ա. Մելքոնյանի գործն անմնացորդ նվիրում է հարազատ ժողովրդի պատմության լուսաբանմանը, պատմագիտությանը և ընդհանրապես հայագիտության գարգացմանը: Հանրապետության հասարակայնությունը և Սփյուռքը նրան ճանաչում են որպես ականավոր գիտնականի, գիտության և կրթության ոլորտի փորձառու մասնագետի, ուղղամիտ մարդու և խիստական քաղաքացու:

Աշոտ Մելքոնյանը պատկանում է այն գործիչների թվին, ովքեր ընտրելով իրենց մասնագիտությունը, գիտական գործունեության ամբողջ ընթացքում, տասնամյակների անխոնջ աշխատանքով ծանրակշիռ ներդրում են ունեցել գիտության գարգացման գործում և դրանով իսկ խոշոր ծառայություն մատուցել հայագիտությանը, հետևապես՝ Հայրենիքին:

Ա. Մելքոնյանի և պատմության ինստիտուտի աշխատակազմի անդուչ ջանքերով կյանքի կոչվեց արտակարգ պատասխանատու ու արժեքավոր այնպիսի գործ, ինչպիսին «Հայոց պատմություն» ակադեմիական նոր բազմահատորյակի հրատարակությունն է:

Լայնահուն է ակադեմիկոս Ա. Մելքոնյանի գիտական հետաքրքրությունների շրջանակը, այն ընդգրկում է Արևմտյան Հայաստանը, Հայկական Հարցը, Հայոց ցեղասպանությունը, Զավակարի պատմությունը, Հայ-վրացական հարաբերությունները, պատմական ժողովրդագրության հիմնահարցերը, Հայոց պետականության պատմությունը և այլն: Ա. Մելքոնյանը գիտաքաղաքական կարևորագույն նշանակություն ունեցող Հայաստանի նահանգների վարչատարածքային և ժողովրդագրական գործընթացների ուսումնասիրության նախաձեռնողներից է: Նրա ղեկավարությամբ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործել է թեմատիկ խումբ: Նրա ուղղորդմամբ էլ այդ ուղղությամբ աշխատանքները լայն ծավալ ընդունեցին՝ ընդգրկվելով արդի գիտական շրջանառության մեջ:

Ակադեմիկոս Ա. Մելքոնյանը 18 գրքի և 450-ից ավելի գիտական հոդվածների հեղինակ է: Նրա գիտական խմբագրությամբ լույս են տեսել տասնյակ աշխատություններ, ժողովածուներ, դպրոցական դասագրքեր և բուհական ձեռնարկներ: Բազմիցս մասնակցել է հանրապետական և միջազգային գիտական հեղինակավոր խորհրդաժողովների, 4 տասնյակից ավելի երկրնե-

րում հանդես է եկել ելույթներով և դասախոսություններով, ինչի շնորհիվ մեծ ճանաչում է ստացել ոչ միայն հայության, այլև արտասահմանի մասնագետ-պատմաբանների շրջանում:

Հայրենի երկրի և արմատների հանդեպ պաշտամունքի հասնող Աշոտ Մելքոնյանի սերն էլ հենց պայմանավորել են մասնագիտական բնագավառում նրա խորությունը: Դրա վառ ապացույցը հայրենի երգումին և Զավախքին նվիրված բազում հոդվածներն ու գրքերն են: Գիտական հասարակայնությունը հետաքրքրությամբ և արժելորումով ընդունեց «Երգում. Երգումի նահանգի հայ ազգաբնակչությունը 19-րդ դարի առաջին երեսնամյակին» (այս գիրքը և Արևմտյան Հայաստանի գավառներին ու բնակավայրերին նվիրված Ա. Մելքոնյանի մոտ 30 հոդվածներն արժանացել են «Հայաստան» համահայկական հիմնադրամի գլխավոր մրցանակին՝ «Երիտասարդ գիտնական–94» անվանակարգով) և «Զավախքը 19-րդ դարում և 20-րդ դարի առաջին քառորդին» (արժանացել է «Գուրգեն Մելիքյանի Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների» հիմնադրամի դրամաշնորհին և Թեքեյան մշակութային միության «Հայկաշեն Ուզունյան» մրցանակին) մենագրությունները: Ընդգծենք, որ այդ գրքերը յուրահասուլ նշանակություն ունեցան վարչատարածքային և ժողովրդագրական գործընթացների ուսումնասիրության մեթոդաբանության մշակման հարցում: Պատմական ժողովրդագրությունն Աշոտ Մելքոնյանի տարերքն է, ուսումնասիրության հիմնաքարը, և այդ ասպարեզում ոչ մի մասնագետ անտարբեր չի կարող անցնել նրա աշխատությունների կողքով:

Աշոտ Մելքոնյանը բեղմնավոր գործունեություն է ծավալում իբրև ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն: Նրա շնորհիվ սոցիալ-տնտեսական աննպաստ պայմաններում հնարավոր եղավ պահպանել ինստիտուտի գիտական ներուժը, ստեղծել աշխատանքային բարենպաստ միջավայր: Զգալի է նաև նրա ներդրումը գիտական երիտասարդ կազմերի պատրաստման ասպարեզում: Նրա զեկավարությամբ պաշտպանվել է 14 թեկնածուական ատենախոսություն, որոնք նվիրված են եղել Հայաստանի պատմական ժողովրդագրության, ցեղասպանության և այլ թեմաներին:

Աշոտ Մելքոնյանը գիխավորում է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտական և պատմության ինստիտուտում գործող 004 Հայոց պատմության մասնագիտական խորհուրդները, անդամակցում է ԵՊՀ-ի, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի, Երևան քաղաքի պատմության թանգարանի գիտական խորհուրդներին, հանդիսանում է նաև մի շարք գիտական հանդեսների՝ «Հայոց պատմության հարցեր» (խմբագիր), «Պատմաբանասիրական հանդես» (խմբագրական խորհրդի նախագահ), «Լրաբեր հասարակական գիտությունների», «Բանբեր հայագիտության», «Վէմ», «Կանթեղ», «Բանբեր Հայաստանի արխիվների», «Վետնիկ համապատասխան պատմական կազմերի անդամ»:

Ա. Մելքոնյանի զեկավարության տարիներին ինստիտուտն արձանագրել է լուրջ ձեռքբերումներ. ակտիվացրել գործակցությունն ինչպես Սփյուռքի մեր հայրենակիցների, այնպես էլ արտասահմանյան գիտական շրջանակների հետ:

Ողջունելի և օրինակելի է գիտությունը հասարակական-քաղաքական գործունեությանը շաղկապելու նրա մեծ հմտությունը։ Գիտությանը զուգահեռ, Ա. Մելքոնյանը մտահոգված է մեր երկրի հոգսերով, իրականացրել և իրականացնում է հասարակական-քաղաքական արդյունավետ գործունեություն։

Գնահատելի է Ա. Մելքոնյանի նախաձեռնությունը Մուղնիի դալրոցն անվանի Հոգևորական Մեսրոպ արք. Աշճյանի անվամբ կոչելու և Արքագանի արձանը տեղադրելու գործում։ Նրա շնորհիվ ինստիտուտում հիմնվեցին Մեսրոպ արք. Աշճյան կենտրոնը, գրադարանը, նաև տպարանը, ուր «Մեսրոպ արք. Աշճյան մատենաշարում» տպագրվում են ինստիտուտի գիտաշխատողների աշխատությունները։

Վաստակաշատ գործիչը Հայրենիքում և Սփյուռքում վաղուց ճանաչում է ձեռք բերել ոչ միայն որպես նշանավոր պատմաբան, լրջախոհ գիտնական, գիտության բանիքուն կազմակերպիչ, այլև ազնիվ քաղաքացի, մեր ժողովի ու հանրապետության հոգսերին մշտապես ականջալուր հայ մարդ։

Մեր հանրապետության քաղաքացիները քաջածանոթ են նաև հայթուրքական հարաբերությունների և նախաստորագրված արձանագրությունների վերաբերյալ նրա դիրքորոշմանը։ Քաղաքացիական արիության ու սեփական հավատամքին անդավաճան մնալու վառ օրինակ է ՀՀ Ազգային ժողովում «Նախաստորագրված արձանագրությունները և Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման գործընթացը» թեմայով խորհրդարանական լուսմներին նրա ելույթը։

Ա. Մելքոնյանի նկարագրին բնորոշ հատկանիշներից են ազնվությունը, շխտակությունը, սկզբունքայնությունը։ Հայրենասիրության յուրահատուկ դրսեղումներ են 1997 թվականից նրա ուխտագնացություններն Արևմտյան Հայաստան և Կիլիկիա, որոնք վարակիչ եղան շատերի համար։ Ուխտագնացությունների գագաթնակետը հանդիսացավ նրա վերելքը «Հայոց անմահության խորհուրդ» Սուրբ Արարատ լեռը։

Անհնարին է շրջանցել ակադեմիկոս Աշոտ Մելքոնյանի գործունեության մեջ այնպիսի մի կարևոր բնագավառ, որպիսին կրթական կյանքում նրա ունեցած մեծ ավանդն է։ Նրա ղեկավարությամբ ծնվեցին դալրոցական նոր դասագրքեր, որոնցում Հայոց պատմության շատ վիճահարույց խնդիրներ ստացան իրենց Հայեցակարգային լուծումները։ Տասնամյակներ շարունակ դասավանդելով ԳԱԱ մագիստրատուրայում, Միխիթար Հերացու անվան բժշկական (2004–2006 թթ. Համատեղության կարգով հասարակական գիտությունների ամբիոնի վարիչ), Երևանի պետական համալսարանում և Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանում՝ Ա. Մելքոնյանը զգալի նպաստ բերեց երիտասարդությանը կրթելու, հայրենասիրական ոգով դաստիարակելու այնքան անհրաժեշտ գործին։

2010 թ. ՀՀ պաշտպանության նախարարին կից հասարակական խորհրդի նախաձեռնած «Պատմության և մշակույթի էջեր» ծրագրի շրջանակներում հանրապետության այլ գիտնականների, մտավորականների հետ նա հայրենասիրական դասախոսություններ է կարդացել Հայոց բանակում՝ նպաստելով անձնակազմի ուղմահայրենասիրական ոգու բարձրացմանը։

Հստա արժանվույն է գնահատվել մեր թանկագին հոբելյարի վաստակը: Նա Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի ակադեմիկոս է, Հանրաճանաչ՝ Հայրենական և արտերկրի Հայագիտական շրջաններում, Հայրենիքում և Սփյուռքում՝ նաև իր հասարակական-քաղաքական անդադրում գործունեությամբ: Նա պարգևատրվել է բազմաթիվ մրցանակներով, Հայաստանի և Արցախի հանրապետությունների կառավարական բարձր պարգևներով, ի թիվս որոնց՝ Երևանի բժշկական համալսարանի «Ոսկե» (2005 թ.), «Ակսել Բակունց» (2011 թ.), «Ֆրիտյոֆ Նանսեն» ոսկե (2010 թ.), ԵՊՀ-ի ոսկե (2011 թ.), «Մանկավարժական համալսարան» ոսկե (2011 թ.), ՀՀ ՊՆ «Գարեգին Նժեկչ» (2011 թ.), ՀՀ ՊՆ «Անդրանիկ Օզանյան» (2013 թ.), «ԼՂՀ ազգային-ազատագրական պարքարի 25-ամյակի առթիվ» (2013 թ.), «Արդիշտի Առաջին» (2015 թ.), «Վաչագան Բարեպաշտ» (2018 թ.) հուշամեդալներով և մեդալներով: Պատմագիտության բնագավառում ձեռք բերած ակնառու հաջողությունների համար Ա. Մելքոնյանին շնորհվել է «Մովսես Խորենացի» (2003 թ.), Հայոց ցեղասպանության 90-ամյա տարելիցի միջոցառումներին ակտիվորեն մասնակցելու համար՝ ՀՀ վարչապետի (2005 թ.) մեդալները:

Սիրելի Աշոտ Աղասու

Զերմորեն շնորհավորում ենք Ձեզ՝ ծննդյան 60-ամյա հոբելյանի առիթով, մաղթում երկար տարիների կյանք, քաջառողջություն, արևշատություն, երջանկություն, իղձերի իրականացում, գիտամանկավարժական ու հասարակական հետազա արգասարեր գործունեություն, անսպառ եռանդու բեղուն գրիչ՝ ի փառս հայրենական գիտության զարգացման, հայրենիքսիությունը գիտակրթական կապերի հետազա սերտածման, անմնացորդ նվիրում մեր ժողովրդին ու Հայրենիքին:

ՀՀ ԳԱԱ. ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ,
ՀՀ ԳԱԱ. ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍՏՐԱԿԱԿԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

«Գիտություն», փետրվար, № 2, 2021 թ.


Խմբագրության կողմից

Հանդեսի խմբագրական խորհրդի հետ ի սրտե շնորհավորում ենք անվանի գիտնականին, նրան մաղթում քաջառողջություն և գիտավարչական ասպարեզում նորանոր ձեռքբերումներ, բազմաթիվ աշխատություններ՝ ի մարմնավորումն իր գիտական անսպառ մտահղացումների ու երիտասարդական եռանդի:

ՄԵՐ ՀՈԲԵԼՅԱՐՆԵՐԸ ՀԱՌԻ ՅՈԲԻԼՅԱՐԸ

ՊԵՏՐՈՍ ԲԵԴԻՐՅԱՆ. ՀԱՅԵՐԵՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՆՎԻՐՅԱԼԸ
(Ծննդյան 90-ամյակի առթիվ)*

Լեզվաբան, բ. գ. դ., պրոֆ. Պետրոս Սարգսի Բեդիրյանը ծնվել է 1931 թ.
ապրիլի 7-ին Սիրիայի Հայկական Հարավաքում: Հայրենադարձվել է 1947 թվականին: Հայրենիքում փայլուն ավարտել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետը, ապա՝ ասպիրանտուրան և 1955 թից անցել դասխոսական աշխատանքի: Տասնամյակներ շարունակ եղել է հարազատ բուհի, Ս. Էջմիածնի Գևորգյան հոգևոր ճեմարանի և Վազգենյան հոգևոր դպրանոցի դասախոս, դասավանդել ժամանակակից հայոց լեզու, գրաբար, ընդհանուր լեզվաբանություն, հատուկ դասընթացներ: Նա ազնիվ է, սկզբունքային, միրված ու գնահատված:



Գիտական գործունեության սկիզբը եղել է 1955 թվականը: Երիտասարդ գիտնականը համարձակորեն մուտք գործեց լեզվաբանության ամենադժվար բաժիններից մեկի՝ ստուգաբանության ոլորտը և Հայաստանի գիտական պարբերականներում («Տեղեկագիր հասարակական գիտությունների», «Պատմա-բանասիրական հանդես»), Միլանի ակադեմիական 2 տարեգրքերում (Փրանսերեն), նաև անգլերեն մի հոդվածում (արժանացել է Հայաստանում իրանի գեսպանության մրցանակին) հաջորդաբար ներկայացրել է իր ստուգաբանությունները, դրանց անդրադարձել «Հայերենագիտական հոդվածներ և նորմեր» ժողովածուում (Երևան, 2012): Պ. Բեդիրյանը ստուգաբանել է 60 արմատ ու բառ՝ հնդեվրոպական արմատներ, ինչպես և փոխառություններ արաբերենից, պարսկերենից ու այլ լեզուներից: Դրանցից են՝ հաւաք, կնճիթ, ծափ, ձեղուն, ոլոռն, նուագ, օժանդակ, կութ, մատն «ըլուր», խալոկ, խառար կամ խալար, ախրիզան «ծաղիկներ են», ասլի «արմատ կապած բույս», հազիմաթ «մի տեսակ վհուկ», խնդակել «նեղել», կիզ «խորոված», շարաբոյր «գրակի վրա դցելու կանացի քող», խորչ կամ խորչակ, հեց «անվի շրջանակը», հեծան, ճիւղ, ճիւլ և այլն:

Մենագրություններում՝ «Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն» (Երևան, 1973), «Ժամանակակից հայերենի ոչ փոխաբերական կայուն բառակապակցությունները» (Երևան, 1990), «Ակնարկներ ժամանակակից հայերենի դարձվածաբանության» (Երևան, 2007) հոդվածներում և «Հայերեն դարձվածքների ընդարձակ բառաբանում» (Երևան, 2011) Պ. Բեդիրյանը շարադրել է հայերենի դարձվածաբանության ինքնատիպ տեսություն: Հակադրվելով ընդհանուր դարձվածաբանության մեջ

* Ներկայացվել է 15. II. 2021 թ., ընդունվել է տպագրության 26. II. 2021 թ.:

արմատավորված այն կարծիքին, թե կայուն կապակցությունները կաղապարելի չեն՝ նա ապացուցել է, որ այդպիսի բառակապակցությունների, այդ թվում դարձվածքների (իդիոմ) կաղապարներ էլ գոյություն ունեն (և ոչ միայն հայերենում). այս իմաստով արժեվորվել է լեզվաբանի ներդրումը ընդհանուր դարձվածքաբանության ու լեզվաբանության մեջ առհասարակի: Հմուտ դարձվածքաբանը նկարագրել է 315 կաղապար, դրանցից մի քանիսը՝ ուստերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն գուգահեռներով:

Գրաբարի հմուտ դասախոս Պ. Բեղիրյանն ինքնուսույցի սկզբունքով ստեղծեց «Լեզու նախնեաց» գրաբարի դասագիրքը նախ՝ արևմտահայերեն (Բեյրութ, 1972, Նիկոսիա, 1989), ապա՝ արևելահայերեն՝ հոգևոր կրթական հաստատությունների համար (Ս. Էջմիածին, 1997, 2000, 2006):

Հայերեն գիտահանրամատչելի գրականության լավագույն նմուշներից է Պ. Բեղիրյանի «Բառերի խորհրդավոր աշխարհից» գիրքը (Երևան, 1985, 1989, գրքի նոր տարբերակը լույս է տեսել 2003-ին «Բառերի խորհրդավոր աշխարհում» վերնագրով): Այս գրքում ամփոփված 200-ից ավելի գրույցները կարծես գեղարվեստական վոքրիկ ստեղծագործություններ են՝ բառերի իսկապես խորհրդավոր աշխարհի բազում գանձերի մասին: Հեղինակն ընթեցողին, որ աշակերտ է, ուսանող, ուսուցիչ ու դասախոս, պարզապես հետաքրքրասեր մարդ, քայլ առ քայլ առաջնորդում է բառերի գանձարանում: Եվ քանի որ բառի ընկալման նուրբ զգացողություն ունի, հայերեն բառերի «կենսագրությունն» ըստ ամենայնի գիտի, հայերեն և օտար բառերի խորքային, շատերին ոչ նկատելի կապեր է տեսնում և մատուցում պարզ ու հյութեղ լեզվով, արդեն քանի՛ սերունդ գիրքը կարդում է մեծագույն հաճույքով՝ մոռանալով, որ այն նվիրված է լեզվաբանության ամենալժվար, բայց հետաքրքրական բաժնին՝ ստուգաբանությանը: Հարյուրավոր բառերի և դարձվածքների ծագումը, անցած ուղին, իմաստային ընդգրկումն ու կազմությունը, ոճական արժեքը, այլակեզու (հին հունարեն, լատիներեն, պարսկերեն, արաբերեն, ուստերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն) գուգահեռները գիտականորեն ճիշտ և համոզիչ են՝ շարադրված գրավիչ, աշխախտ ու սրամիտ:

Դպրոցին սերտորեն կապված գիտականն իր գործունեության ընթացքում նաև մեթոդական խնդիրների է անդրադարձել: Հայերենի ուսուցիչներին է ուղղված «Մայրենի ուսուցման հարցեր» (Երևան, 1982) հոդվածների ժողովածուն:

Մանկավարժ-գիտնականին մշտապես հետաքրքրել են ժամանակակից հայերենի գործնական խնդիրները, խոսքի մշակույթի հարցերը: Դրանց են նվիրված Պ. Բեղիրյանի զույգ աշխատանքները՝ արևմտահայերենի համար՝ «Եկէք Ճիշդ Խօսինք Ու Գրենք» (Բոստոն, 1993) օժանդակ ձեռնարկը և արևելահայերենի համար՝ «Հայ լեզուն և մեր խոսքը» (Երևան, 1999, 2007) արևելահայերենի խոսքի գործնական ուղեցույցը: Առաջին գիրքը արևմտահայերենի ուսուցիչների «շտապ օգնությունն է», իսկ երկրորդը շատ ու շատ ուսուցիչների, դասախոսների, լրագրողների, խմբագիրների սեղանի գիրքը, վատահելի աղբյուր, որի շնորհիվ կարելի է կողմնորոշվել լեզվական տարատեսակ հարցերի մեջ, որոնք առնչվում են բառերի արտասանության, բառերի ու բառաձերի գործածության, կապակցություն-

ներ, նախադասություններ, խոսք կառուցելու ոճական և տրամաբանական դժվարություններին:

Բազմաթիվ են Պ. Բեղիրյանի և իր համահեղինակությամբ ստեղծված դասագրքերը, ուսումնական ու ուսումնաօժանդակ ձեռնարկները: Դրանցից են՝ Սփյուռքի դպրոցների համար՝ «Հայ գրականութիւն. Ը տարի» դասագիրքը (Երևան, 1979, 1984, համահեղինակներ՝ Ս. Տարոնցի, Պ. Մարգարյան), «Հայաստան Աշխարհ» և Սփյուռքի հայերենի ուսուցիչների համար՝ «Զրոյցներ Արևմտահայերէնի Դասաւանդութեան Վերաբերեալ» (Կահիրե, 2006), հայաստանցի դպրոցականների համար՝ «Հայոց լեզվից 50 հարցարան» (Երևան, 1992, համահեղինակներ՝ Լ. Խաչատրյան, Պ. Գյուրջինյան) ձեռնարկը՝ մեզանում առաջին փորձը, ուսուսիսու հայերի համար՝ «Սահմանադրություն և պատմություն» (Երևան, 2004, 2006) և այլն: Նշենք, որ ուսուցման խնդիրներով մշտակես զբաղված գիտնական-մանկավարժը տարբեր տարիներին հայրենիքից գործուղվել է Սփյուռք (ԱՄՆ, Կանադա, Եգիպտոս, Արգենտինա, Ուրուգվայ)՝ հայերենի ուսուցիչներին մեթոդական օգնություն ցույց տալու նպատակով:

Պ. Բեղիրյան-լեզվաբանի գիտական արտադրանքի մեջ տեսակարար մեծ կշիռ ունեն բառարանները:

Հմուտ դարձվածաբանի բառարանագրական գործունեությունը սկսվել է դարձվածաբանական բառարանով: Նրա «Դարձվածաբանական բացատրական բառարանը» (Երևան, 1971), որ թեև դպրոցական, համառոտ է, բայց առաջին դարձվածաբանական բառարանն է մեզանում:

Տասնամյակներ անց Պ. Բեղիրյանն ավարտեց իր կյանքի գործը՝ հայերենի դարձվածաբանական կոթողային բառարանը՝ «Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարանը» (Երևան, 2011): Ստվարածավալ (բաղկացած՝ 1.404 մեծադիր էջերից): Սա անվանի դարձվածաբանի և բառարանագրի կեսդարյա տքնածան ու բարեխիղճ աշխատանքի արգասիքն է: Բառարանը ներկայացնում է հայերեն 25.310 դարձվածք: Արանք, այսպես կոչված, բուն դարձվածքներն են, այն կայուն բառակապակցությունները, որոնք վերաիմաստավորված են, օժտված փոխաբերական-այլաբերական իմաստով (բնականաբար, սրանցից դուրս են առած-ասացվածքները և միագաղաթ դարձվածքները, որոնց միայն մեկ բաղադրիչն է յուրահատուկ իմաստ ձեռք բերած լինում):

Բառարանային միավորներ են դարձել արևելահայերեն ու արևմտահայերեն գրական, խոսակցական, բարբառային դարձվածքները՝ իրենց տարատեսակ տարբերակներով, բնագրային համապատասխան օրինակներով (բարբառայինների մի մասը միայն՝ բանավոր խոսքից): Դարձվածային՝ հսկայական նյութը հեղինակը քաղել է հարյուրավոր սկզբնաղբյուրներից գրական ստեղծագործություններից (Սայաթ-Նովայից, Նաղաշ Հովհաննից, Խաչատրյալ Աբովյանից մինչև մեր օրերը, այդ թվում՝ թարգմանական), հայրենի և սփյուռքյան մամուլից, հեռուստատեսությունից ու ռադիոյից: Եվ հայկական դարձվածանու այդ հսկայածավալ նյութը կարող է հիմք դառնալ լեզվաբանական տարբեր հետազոտությունների:

Հեղինակն այսուհետև հրատարակեց այս բառարանի համեմատաբար սեղմ տարբերակը՝ «Հայերեն դարձվածքների բացատրական բառարանը»

(Երևան, 2012), որի պարունակած նյութը՝ 7.052 միավոր, նախատեսված է արդեն զանգվածային օգտագործման համար՝ ի տարբերություն նախորդի:

Հայ բառարանագրության մեջ նոր խոսք է «Հայերեն շրջասությունների բառարանը» (Ա. Էջմիածին, 2002, Երևան, 2006): Մեղանում առաջին անգամ մեկ բառարանում մեկտեղվել են արդի հայերենի (արևելահայերեն և արևմտահայերեն) 2.000-ից ավելի շրջասություններ, որոնք երկար տարիների ընթացքում հեղինակը քաղել է մեծաթիվ աղբյուրներից ու ներկայացրել բնագրային նմուշներով: Բառարանը գիտածանչողական մեծ արժեք ունի: Շրջասական կապակցությունների և բառերի միջոցով ներկայացվում են աշխարհը, Հայաստանը, այլևայլ առարկաներ, անձեր, գործողություններ ու այլն, ինչպես՝ կանաչ աշխարհամաս, կենդուրուների երկիր, հինգերորդ աշխարհամաս – Ավստրալիա, մեծ քանաքեռոցի – և. Աբովյան, Հայաստանի լեռների սրնգահար – Համաստեղ, հայկական մենշեն – լոշտակ, սպիտակ պատանք հագնել – ձյունով ծածկվել և այլն: Հեղինակը մատնանշում է տարբերակներ, ինչպես՝ Աղամի հագուստով / Աղամի ու Եվայի հագուստով / զգեստով – բոլորովին մերկ, տալիս համեմատելի միավորներ, ինչպես՝ Աղամի / Եվայի մերկությամբ, բազմաթիվ շրջասությունների պարագայում նշվել են մեկից ավելի իմաստներ, ինչպես՝ հյուսիսային Վենետիկ (1. Ամստերդամ, 2. Պետերբուրգ, 3. Ստոկհոլմ, 4. Բրյուգե) և այլն:

Հիմնարար աշխատանք է Պ. Բեղիրյանի «Հայերեն թեավոր խոսքեր» բառարանը (Երևան, 2007), որ լեզվամշակությային և խմացական հակայական տեղեկատվություն է պարունակում: Այն ընդգրկում է հայերեն գրավոր (հազվադեպ՝ նաև բանագոր) խոսքում հանդիպող 2.265 թեավոր խոսքեր: Բառարանում տրվում են, այսպես կոչված, «միջազգային» թեավոր խոսքերի՝ ուսուերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն համարմեքները: Բնագրային նմուշներով ներկայացվող այդ խոսքերը (զրանք մեծապես նպաստում են իմաստի ընկալմանը) առավելաբար ծագել են Աստվածաշնչից, Հունակումեական դիցաբանությունից, պատմական հանրահայտ իրադարձություններից, համաշխարհային (հիմնականում ելլորպական) գրականության գոհարներից: Բառարանի թեավոր խոսքերի զգալի մասը հայկական ծագում ունի: Դրանք գալիս են մեր գրականությունից, բանահյուսությունից, պատմությունից, երբեմն՝ նաև ֆիլմերից: Այսպես՝ Հիմի Էլլունաք (Ը. Պատկանյան) «Էլլի՝ հանդուրմենք. ինչքա՞ն լուռ մնանք», Նրբացուցիչ (մելմացուցիչ) դեպք հանցանաց (Զ. Պարոնյան) «մեղքը, հանցանքը, զանցանքը փոքրինչ արդարացնող, մեղմացնող հանգամանք» (Հեղնական), սիրուհու չափ տենչալի, մահվան չափ անդիմադրելի (Նար-Դու) «չափազանց զորավոր ապրում, պահանջ և այլն», ուղեղային մորմոք (Եղ. Չարենց) «թյուր դատողություն, հիվանդ երևակայություն» և այլն:

Թեավոր խոսքերը ներկայացնում են հայերենի տարբեր գոյավիճակներ և զբանություններ՝ գրաբար (Ծանի՛ր զքեկ «առաջին հերթին ինքդ քե՛զ ճանաչիր, քո հնարավորությունները, ծագումը ...», Հունձք բազում են, եւ մշակք սակաւ «ասպարեզում գործ շատ կա, բայց նվիրված աշխատողներ՝ քիչ» և այլն), արևելահայերեն (տառապանքս փորձ ունի, ամեն մեռնողի

երանի տալ և այլն), արևմտահայերեն (Հովվերգության ճյուղին կպատկանի «անիրական, խոսքի նյութի հետ կապ չունեցող բան է» և այլն), խոսակցական լեզու ու բարբառ (Նաջարյանը փոշմանել ա «կատակով կամ հեղնանքով ասվում է մեկի մտափոխության, մի գործից ետք քաշվելու մասին», մի մուշտի [բռունցքի հարված] եմ տվել «ի՞նչ մեծ հարված եմ հասցրել որ» և այլն):

Կառուցվածքային առումով թևավոր խոսքերը բառեր են (կովախնձոր «կովի, գժոտության պատճառ, առիթ», Գոբսեկ «ծայրաստիճան Ժատ մարդ» և այլն), բառակապակցություններ (Ալբակամի գառ «զոհաբերվելու պատրաստ էակ» և այլն) ու նախադասություններ (Համսիբալը դարպանների մոտ է «մտալու մեծ վտանգ է սպառնում» և այլն), որոնք վերաիմաստավորված են և պատրաստի ներմուծվում են խոսքի մեջ:

Հայերենի թևավոր խոսքերի բառարանից հետո լույս տեսավ՝ հաջորդը՝ «Սուլրբրային թևավոր խոսքեր» բառարանը (Երևան, 2016), որն ընդգրկում է 528 միավոր՝ ոռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն համարժեքներով։ Սուլրբրային թևավոր խոսքերի մեջ առանձնանում են այնպիսիք, որոնց սուլրբրային ծագումն առաջին խսկ հայացքից զգալի է՝ ահեղ դաստատան, աղքատ Ղազարոս, աճեցնե՛ք և բազմացնե՛ք, ամեն բան իր ժամանակն ունի, այր և կի՞ն՝ մեկ մարմին, անառակ որդի և այլն, և նրանք, որոնց աստվածաշնչյան ծագումն «անզեն աչքով» չի երևում, ինչպես՝ ամբողջ սրտով, անմեղ գառնուկ, աչքի լույսի պես պահել, առանց դեմքին (ու դիրքին) նայելու, արևի (լուսնի) տակ ոչինչ նոր չէ և այլն։ Դրանց մի մասը մինչև օրս գրաբարով է մասացել մեր խոսքի մեջ, ինչպես՝ ակն ընդ ական, ատամն ընդ ատաման, ձայն բարբառոյ յանապատի և այլն։

Գրեթե յուրաքանչյուր թևավոր խոսքի համար բերվում է նրա գործածությունը հայ դասական և ժամանակակից արևելահայ ու արևմտահայ գրականության, ինչպես նաև մամուլի լեզվում, մատնանշվում ու ներկայացվում է Ասովածաշնչի այն հատվածը, որից անմիջականորեն կամ որոշ փոփոխությամբ (կառուցվածքային կամ իմաստային) ծագում է տվյալ խոսքը։

Պ. Բեղիբրյանը ստեղծել է ոչ միայն միալեզվյան, այլև երկեզրվյան ու եռալեզվյան բառարաններ։ Առաջինը «Ռուս-Հայերեն, հայ-ռուսերեն բառարանն» է (Երևան, 1987, ապա՝ 1988, Դ. Անմեղիկյանի և Զ. Ղարիբյանի համահեղինակությամբ), որը կազմված է գործնական սկզբունքով և պարունակում է առաջին բամնում 20.000 բառ և դարձվածք և շուրջ 25.000 երկրորդ բամնում։ Հետազայտվ լույս տեսավ՝ հեղինակային նույն խմբի «Հայ-ռուսերեն գործնական բառարանը» (Երևան, 2010), որն ընդգրկում է այսօրվա հայերենի գործուն բառագանձը։

«Հայերէն-Անգլերէն, Անգլերէն-Հայերէն Գործնական Բառարանը» (Երևան, 2010) անգլիախոս արևմտահայերի ու արևելահայերի համար է։ Այն ընդգրկում է արևմտահայերեն ու արևելահայերեն համարժեք բառագանձ (հայերեն-անգլերեն բամնում 8.000 բառ և դարձվածյային արտահայտություն, անգլերեն-հայերեն բամնում 6.000-ից ավելի միավոր) և իբրև այդպիսին՝ առաջինն է իր տեսակի մեջ։ Բառարանը կազմվել է հայերենը որպես երկրորդ լեզու սովորեցնելու մեթոդներին հետևելով։

Հմուտ բառարանագրի համահեղինակությամբ (Վ. Հայկազյանի, Վ. Ավագյանի հետ) ստեղծվել է «Երկրագործական հայերեն-անգլերեն-ռուսերեն բառարանը» (Երևան, 2016, պարունակում է մոտ 140.000 բառ, 10.000 գլխաբառ), որը մեզանում առաջինն է իր տեսակով՝ ունի գիտագործնական կարևոր նշանակություն:

Բառարանագրական ուշագրավ աշխատանքներից է «Բառերի ընտրությունը» վերնագրով լույս տեսած հոմանիշների գործնական-ռուսումնական բառարանը (Երևան, 2017), որը պարունակում է 4.900 հոմանշային շարք՝ բնագրային նմուշներով, իմաստային նրբությունների և կիրառության յուրահատկությունների մատնանշումով, որոնք օգտագործողին հնարավորություն կտան խոսքի համար անհրաժեշտ ամենահարմար հոմանիշն ընտրելու: Հոմանշային շարքերում հոմանիշի կողքին հարկ եղած դեպքում նշել են նրա իմաստային կամ գործածության տարբերությունները: Օրինակ՝ հոմանշային շարքում՝ անուրջ (քաղցր երազ) – տեսիլք (երևակայելի երազ) – մղձավանշ (ծանր՝ վատ երազ) և այլն: Հոմանիշների տարբերակման հարցում կարեռվել են ոչ միայն նրբիմաստները, այլ հոմանիշների կիրառությունը: Օրինակ՝ կանգնեցնել-ը և կասեցնել-ը իմաստով չեն զանազանվում, սակայն որոշակիորեն տարբերվում են իրենց գործածությամբ. կանգնեցնել-ն ընդհանուր գործածություն ունի, մինչդեռ կասեցնել-ը կապակցելիության յուրահատկություններ է դրսերում. կասեցնում են ընթացքը, վտանգը, առաջխաղաղումը, հարձակումը (մարտի դաշտում ու մարզադաշտում), օրենքի գործադրումը և այլն:

Վաստակաշատ հայերենագետի հաջորդ աշխատանքը «Հայերեն բառերի ու արտահայտությունների թեմատիկ բառարան-գանձարանն» (Երևան, 2019), որը պարունակում է 299 թեմա: Այս տեսակի բառարաններ (թեզառություններ) անգլերենի, ֆրանսերենի համար ստեղծվել են XIX դ. կեսերից, հայերենի համար դրա կարիքը վաղուց եր զգացվում: Բառարանն օգտակար կինի նրանց համար, ովքեր խոսք շարադրելիս փնտրում են տվյալ թեմային առնչվող անհրաժեշտ բառը կամ արտահայտությունը, կամ դժվարանում են այս կամ այն միավորն ընտրելիս: Օրինակ՝ ազատություն գլխաբառով ներքո տրված են գոյականներ՝ ազատում, փրկություն (վտանգից, կախումից), ինքնիշխանություն, անկախություն, ազատագրություն և այլն, ածականներ՝ քաղաքավան (ազատություն), անձնական, ազատ, ինքնիշխան, ազատագրավան, բայեր՝ ազատել, փրկել (նեղ տեղից, վտանգից, կախումից), ազատագրել (երկիրը, ժողովրդին), ազատություն տալ (գործելու ...) և այլն:

Բառարանագրական նոր աշխատանքներից է «Հայերեն-ռուսերեն-անգլերեն պատկերարանը» (Երևան, 2020)՝ պատկերներով բացատրական բառարանը, որը պարունակում է 4.490 բառ ու կապակցություն, և որի գլխավոր նպատակը մատչելի՝ ամենից ավելի գործածական նվազագույն բառապաշար ներկայացնելն է: Ի դեպ, «Հայերեն» անվանվածի ներքո այստեղ ևս ընկալվում են արևելահայերենն ու արևմտահայերենը հավասարապես: Բառարանում բառերը ներկայացված են թեմատիկ հիմունքով՝ սկսելով «Մեր մարմինը» թեմայից մինչև «Եկեղեցի»: Նյութերը դասավորված են տրամաբանական հաջորդականությամբ, ըստ առօրյա կյանքում իրենց գործածության կարեռության աստիճանի: Պատկերներով բացատրվածնե-

ըից բացի՝ տրվում են թեմային առնչվող բառեր, բառակապակցություններ և արտահայտություններ, իսկ էջի ներքեւում՝ դրանց խոսքային կիրառության նմուշներ (առավելաբար երկխոսության ձևով): Այդպես է, քանի որ բառարանի առաջին հասցեատերը սովորողներն են, ինչպես նաև նրանց ուսուցիչներն ու ծնողները: Իր կառուցվածքի շնորհիվ պատկերաբանը ձեռք է բերում լեզվի ինքնուսույցի արժեք:

Հիշատակելի է Պ. Բեղիրյանի մասնակցությունը Հայ մատենագիրների համաբարբառների կազմման աշխատանքներին. գրաբարագետ լեզվաբանը կազմել է Ղեռնդ Մեծ Պատմիչի «Պատմութիւն» երկի համաբարբառը (Երևան, 1978):

Պետրոս Բեղիրյանի դիմանկարն ամբողջացնող մեր խոսքի ավարտին նշենք, որ գիտնական-դասախոսի գիտամանկավարժական աշխատանքը գնահատվել է: Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական ինստիտուտի, Գևորգյան Հոգևոր ճեմարանի, Վազգենյան Հոգևոր դպրանոցի և Կիպրոսի Մելքոնյան վարժարանի երկարամյա դասախոսն արժանացել է ՀՀ վաստակավոր մանկավարժի կոչման, պարգևատրվել «Պատվո նշան» (1986), Սուրբ Էջմիածնի «Ս. Սահակ-Ս. Մեսրոպ» (2004) շքանշամներով, «Աշխատանքային արխության համար» (1970) և «Խ. Աբովյան» (1981) մեդալներով: Ամենամեծ գնահատականը, իհարկե, ազնիվ, սկզբունքային դասախոսի և գիտնականի հազարավոր սաների ջերմ վերաբերմունքն ու ակնածանքն է: Նաև բոլոր այն մարդկանց գնահատանքը, որոնք օգտվում են գիտնական մանկավարժի գրաբարի դասագրքերից, արևելահայերեն ու արևմտահայերեն խոսքի ուղեցույցներից, բազմաթիվ բառարաններից:

Մեր ժամանակի ամենաբեղմնավոր հայերենագետն այսօր էլ շարունակում է մեղվաշան աշխատել:

ԴԱՎԻԹ ԳՅՈՒՐՃԻՆՅԱՆ

Բ. Գ. թ., դոցենտ, ՀՀ լեզվի կոմիտեի նախագահ: Գիտական հետաքրքրությունները՝ հայոց լեզվի բառակազմություն և բառակազմական իմաստաբանություն, բառարանագրություն և բառարանագրություն, խոսքարվեստ, արդի հայերենի ուսուցման հարցեր: Հեղինակ (և համահեղինակ) է դպրոցական և համալսարանական դասագրքերի ու ձեռնարկների, ուսումնական և մեթոդական գրքերի, բառարանների և 80 հոդվածի: gyurjidav@mail.ru

ԱՐԱՄ ՔՈՍՅԱՆ

(Ծննդյան 65-ամյակի առթիվ)*

Պ. գ. դ., պրոֆ. Արամ Քոսյանը 65 տարեկան է: Ծնվել է 1956 թ. մայիսի 18-ին Երևանում, անվանի բանասեր Վաղարշակ Քոսյանի ընտանիքում:

1977 թ. ավարտել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի պատմա-աշխարհագրական ֆակուլտետի պատմության և հասարակագիտության բաժինը: Ա. Քոսյանի, որպես գիտնականի, կայացման ճանապարհին կարևորագույն նշանակություն է ունեցել 1981–1982 թթ., երբ նա որպես փորձնակ-հետազոտող ուսանել է ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի պավոնագիտության և բարկանագիտության ինստիտուտում (գիտական դեկան՝ բ. գ. դ., պրոֆ. Վյաչեսլավ Իվանով): Այնուհետև՝ 1978 թ., աշխատանքի է անցել Հայաստանի գիտությունների ակադեմիայի արևելագիտության ինստիտուտում, որտեղ աշխատում է առայօր: Ինստիտուտի առաջին տնօրեն, ակադեմիկոս Գագիկ Սարգսյանի նախաձեռնությամբ ստեղծված Սեպագիր քաղաքակրթությունների բաժնում Ա. Քոսյանը ստանձնում է Հայաստանում խեթագիտության զարգացման և այդ ուղղությամբ նոր մասնագետների պատրաստման պատասխանատու ու կարևոր գործը:

1994–1995 թթ. Ա. Քոսյանը “W. Fulbright Foundation” դրամաշնորհի շրջանակներում հետազոտություններ է անցկացրել Քիվվենդի պետական համալսարանում (ԱՄՆ), իսկ 2000–2002 թթ.՝ Գերմանիայի Վյուզբրուգեի համալսարանի Արևելյան բանասիրության ինստիտուտում “Alexander von Humboldt Stiftung”-ի ծրագրով:

Գիտական հետաքրքրություններից զատ՝ Ա. Քոսյանը, ունենալով դեկանական պարման ու կազմակերպման ձիրք և ունակություններ, զբաղեցրել է մի շարք պատասխանատու պաշտոններ. 1995–2001 թթ.՝ Արևելագիտության ինստիտուտի փոխտնօրեն, 2002–2007 թթ.՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության Գիտության և հետքուհական կրթության վարչության պետ, այնուհետև՝ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Գիտական կենտրոնի տնօրեն: 2011 թվականից նա պլիսավորում է ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի Հին Արևելքի բաժնի աշխատանքները:

1987 թ. Ա. Քոսյանը ստացել է պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան (ատենախոսության թեմա՝ «Մ. թ. ա. XII–VIII դդ. Փոքր Ասիայի և Հարակից շրջանների լույսական պետությունները»), իսկ

* Ներկայացվել է 11. III. 2021 թ., ընդունվել է տպագրության 23. III. 2021 թ.:

1997թ. պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճան (ատենախոսության թեմա՝ «Մ.թ.ա. XIII դարի մերձավորարևելյան ճգնաժամը և Հայկական լեռնաշխարհը»), այնուհետև՝ 2012թ. Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի Համաշխարհային պատմության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի պրոֆեսորի կոչում:

Ա. Քոսյանի անվան հետ է կապված Հայաստանում արևելագիտության կարևորագույն ուղղություններից մեկի՝ խեթագիտության զարգացումը: Խոսելով ներկա փուլի մասին՝ անհնարին է պատկերացնել Հայկական խեթագիտության զարգացումն առանց ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի Հին Արևելքի բաժնի գործունեության, որտեղ իր կարևոր դերակատարումն ունի բաժնի վարիչ Ա. Քոսյանը: Նրա աշխատանքներն աչքի են ընկնում Հայկական լեռնաշխարհի քաղաքական միավորներին վերաբերող սեպագիր աղբյուրների համակողմանի վերլուծությամբ¹: Դրանք առանձ-

¹ Տե՛ս Կ изучению склонения в иероглифическом лувийском. – «Древний Восток», 1988, 5, с. 181–186; Էթնիկական տեղաշարժերը Փոքր Ասիայում և Հայկական լեռնաշխարհում. – ՊԲՀ, 1991, № 1, էջ 65–78; Лувийские царства Малой Азии и прилегающих областей в XII–VIII вв. до н. э. Ереван, 1994; Խոսլվան (Ծոփքը) մ. թ. ա. XIII–XII դարերում. – ՊԲՀ, 1997, № 1, էջ 177–192, Խեթական տերությունը և Ասիխիյավան (Տրոյական պատերազմը), Երևան, 1997, Հին Առաջավոր Ասիայի և Եգիեյան ծովի պավանի պատմության պարբերացման շուրջ. – «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ» (այսուհետ ՄՄԱԵԺ), 1998, № XVII, էջ 124–140, Տուն Թորգոմյայ, Երևան, 1998, Խոսլվան և Գորդիոնը մ. թ. ա. XII–X դարերում. – ՊԲՀ, 1998, № 3, էջ 117–124, Մ. թ. ա. XIII դարի մերձավորարևելյան ճգնաժամը և Հայկական լեռնաշխարհը, Երևան, 1999, Ասորեստանը և Հայկական լեռնաշխարհի երկրները մ. թ. ա. XIII դարի երկրորդ կեսին. – ՊԲՀ, 1999, № 2–3, էջ 222–231, Խեթական պետությունը և Հայկական լեռնաշխարհի երկրները մ. թ. ա. XV դարում. – ՊԲՀ, 2000, № 3, էջ 161–174, Նոր նյութեր Խեթական տերության և Հայկական լեռնաշխարհի երկրների փոխհարաբերությունների մասին. – ՄՄԱԵԺ, 2001, № XX, էջ 233–245, Անի-Կամախը խեթական դարաշրջանում. – ՊԲՀ, 2002, № 3, էջ 225–241, Նոր տեղանուններ խեթական սեպագիր տեքստերում. – ՄՄԱԵԺ, 2003, № XXII, էջ 252–264, Խեթական KUB XXVI 62 սեպագիր տեքստը և Վերին Եփրատի ավագանի պատմական աշխարհագրության խնդիրները. – ՄՄԱԵԺ, 2004, № XXIII, էջ 472–484, Մուլսիլիս II-ի Հայաստական արշավանքները. – ՊԲՀ, 2004, № 2, էջ 197–204, Հայաստական աստվածները. – ՄՄԱԵԺ, 2005, № XXIV, էջ 444–457, Հայաստան և Ազգին, Շնորհ ի վերուստ. առասպել, ծես և պատմություն, Երևան, 2008, էջ 263–291, Arnuwandas I in the East “Aramazd: Armenian Journal of the Near Eastern Studies” (այսուհետ՝ AJNES), 2006, I, pp. 72–97; On the Ethnic Background of Isuwa. – AJNES, 2009, IV/2, pp. 85–97; Towards the Hittite Eastern Periphery. – AJNES, 2011, VI/2, pp. 87–94; Վանից մինչև Եփրատ (Հայոց պետականության ակունքներում). – Հայկագունիներ. առասպել և պատմություն, 2012, էջ 24–27, Առաջավոր Ասիայի շրջակա միջավայրը և Հայկական լեռնաշխարհը (վաղ և միջին բրոնզեդար), Հին Արևելք, 1, 2014, էջ 144–165, Հայոց վաղ պետականության պատմության մի խնդրի շուրջ. – «Բանքեր

նանում են նաև նորահայտ սկզբնաղբյուրների օգտագործմամբ, Հայկական լեռնաշխարհի երկրների հետ Խաթթիի հարաբերությունների նորովի մեկնաբանություններով։ Հատկապես կարևոր է ընդգծել նրա՝ 2004 թ. լույս ընծայած «Հայկական լեռնաշխարհի տեղանունները» (ըստ խեթական սեպագիր աղբյուրների)՝ մենագրությունը։ Ուսումնասիրության մեջ ներկայացվում են խեթական տեքստերում վկայված այն բոլոր տեղանունները, որոնք գտնվել են ինչպես բուն Հայաստանում և Խոռվայրում, այնպես էլ Հայկական լեռնաշխարհի այլ շրջաններում և խեթա-հայաստական ու խեթախոռվական շփման գոտում։ Տրվել են նոր տեղանուններ, որոնք ի հայտ են եկել նոր սկզբնաղբյուրների ուսումնասիրման արդյունքում։ Ճշգրտվել են նաև հայտնի տեղանունների մի մասի ընթերցումները և դրանց առնչակցությունը Հայաստային և Խոռվայրին։ Լինելով հայտնի արևելագետներ Վ. Իվանովի, Ի. Դյակոնովի աշակերտը՝ նա իր փորձն ու գիտելիքները անմնացրդ փոխանցել և շարունակում է փոխանցել երիտասարդ սերնդի ներկայացուցիչներին՝ Ռ. Ղազարյան, Ռ. Ցականյան, Հ. Հմայակյան, Մ. Խանզադյան, Լ. Պետրոսյան և այլք։

Հարկ է նշել, որ աշխատանքները Հայաստանի և Հարակից երկրների պատմության համար առանցքային նշանակություն ունեցող խեթական

Հայագիտության» (Հայագիտական միջազգային հանդես) (Երևան), 2014, 1, էջ 5–25. To the East of Hatti. – In: Essays in Honour of Veli Sevin. A Life Immersed in Archaeology (ed.A.Özfirat). Istanbul, 2014, pp. 277–282. Rulers of Hayasa. Hukkana. – In: Kosyan Aram, Grekyan Yervand, Bobokhyan Arsen (eds.), The Black & the White. Studies on History, Archaeology, Mythology and Philology in Honor of Armen Petrosyan in Occasion of His 65th Birthday. – AJNES, vol. VIII, Issues 1–2, 2013 [2014]. Yerevan, pp. 128–134; Les Aryens au Pahhuwa. – “Societas Anatolica. Bulletin”, 2015, № 3, pp. 53–63; Between Euphrates and Lake Van (on the Location of Hayasa and Azzi). – “International Symposium on East Anatolia–South Caucasus Cultures”, vol. I. Cambridge, 2015, pp. 271–276; **Հայաստանի արքաները**. – «Բանքեր Հայագիտության», 2016, № 1, էջ 95–124, A Note on Hittite Toponymy: the Case of Pittiyariga. “Papers dedicated to the 65th birthday of Gregory Areshyan”. Oxford, 2016, pp. 251–254; **Հայկական լեռնաշխարհը մ.թ.ա. XV դարի խեթական սեպագիր աղբյուրներում** (աղբյուրների տեսություն), Երևան, № XXXI, Երևան, 2018, էջ 11–18, The plain of Erznka in the II–I millenniums BC. – “Fundamental Armenology” (Yerevan), № I, 2018, pp. 49–68; **Եփրատյան կոնտակտային գոտու Հյուսիսային դարպասը**, Երգնկայի դաշտը. – Երևան, Պատմամշակությային ժառանգություն, № IV, 2018, էջ 214–235, First Haykides and the “House of Torgom” (an overview of tradition and new prospects). – “Fundamental Armenology”, 2019, № 2, pp. 46–62; Upper Euphrates Political Geography Reconsidered. “Over the Mountains and Far Away. Studies in Near Eastern History and Archaeology Presented to Mirjo Salvini on the Occasion of his 80th Birthday”. Oxford, 2019, pp. 312–316; Евфратская контактная зона во II тысячелетии до н. э. (на примере Исузы). – **ՄՄԱԵԺ**, 2020, № XXXIII(1), էջ 95–110, **Բնակիմայական իրավիճակը Հայկական լեռնաշխարհում վաղ հոլոցենում**. – **ՄՄԱԵԺ**, № XXXIII (2), 2020, էջ 56–73, Ecology and civilization of the Armenian highland. – “Fundamental Armenology”, 2020, № 1, pp. 23–38.

սկզբնաղբյուրների ուսումնասիրման ուղղությամբ շարունակական բնույթի են կրում։ Բացի ամենամյա հրատարակություններից՝ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի Հին Արևելքի բաժնի աշխատակիցները, Ա. Քոսյանի գլխավորությամբ, նախաձեռնել են մի կարևոր գործ ևս՝ «Խեթական սեպագրական աղբյուրները Հայկական լեռնաշխարհի մասին» շարքը²:

Առանձնահատուկ պետք է նշել նաև, որ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտը 2013 թ. գիտական հանրությանը ներկայացրեց կարևորագույն մի աշխատություն՝ «Հայաստանի հարակից երկրների պատմություն» քառահատորյալի առաջին հատորը (պատասխանատու խմբագիր Ա. Քոսյան), որտեղ, առանձին գլուխներով, ժամանակակից խեթագիտության ձեռքբերումների հիման վրա Ա. Քոսյանը տվել է նաև Փոքր Ասիայի հինգչանի, Խեթական տերության ու Լույսիական պետությունների պատմությունը:

Վերոհիշյալ բազմաբեղուն գործունեությունը անվանի գիտնականը զուգակցել է գիտակազմակերպական, գիտախմբագրական և մանկավարժական գործունեությանը: Նրա համահեղինակությամբ են հրատարակվել մի շարք բուհական և դպրոցական դասագրքեր ու ձեռնարկներ: Նա գիտական մի շարք ժողովածուների խմբագրական խորհրդի անդամ կամ դիսավոր խմբագիր է («Արամազդ», «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», «Հին Արևելք», «Հինարար Հայագիտություն» և այլն):

Հանրագումարի բերելով՝ կարող ենք փաստել, որ մեծանուն գիտնականի բազմավաստակ գործունեության շնորհիվ խեթագիտությունը Հայաստանում արևելագիտության ու սեպագրագիտության կայացած ուղղություններից մեկն է: Այն դեպի ապագան միտված գիտական ուղղություն է և ժամանակի ընթացքում նորանոր նյութեր կտրամադրի, որոնք նոր լույս կտիռեն Հայկական լեռնաշխարհի ու Հարավից տարածաշրջանների հին շրջանի պատմության, ինքի, մշակույթի և այլ հարցերի վրա:

ՀՀ ԳԱԱ արեւլագիտության ինստիտուտի ողջ աշխատակազմը, չնորհավորելով Արամ Քոյսյանի ծննդյան 65-ամյակի կապակցությամբ, ցանկանում է, որ նա իր տաղանդը և մասնագիտական հմտությունները գեռ երկար տարիներ ծառայեցնի գիտության գարգաղմանը:

ՀՀ ԳԱԱ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

**ՀՅ ԳՎԱ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԱԴՐԲԵԶԱՆԻ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՏԱԿ
ԱՆՑԱԾ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ
ՊԱՐՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍԻՆ**

Արցախի դեմ սանձագերծված ռազմական գործողությունների դադարեցման վերաբերյալ Հայաստանի, Աղրբեջանի և Ռուսաստանի ղեկավարների նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարությանը հաջորդող այս ամիսներին Աղրբեջանի բարձրագույն ղեկավարության գործելառնը, սոցցանցերում և միջազգային հարթակներում տիրաժավորվող կեղծիքն ու ռազմատենչ հոկտորաբանությունը կասկած չեն թողնում, որ Աղրբեջանի ներկայիս ղեկավարությունն ամեն ինչ անելու է տարածաշրջանում խաղաղություն հաստատելու ջանքերը վիճեցնելու և Արցախի հայաթափելու համար:

Տարիներ շարունակ հայերին և հայկականությունը մերժող ատելության խոսքի շնորհիվ այսօր արդեն հայաստյացությունն աղրբեջանական հանրության ինքնության կարևոր բաղադրիչի է վերածվել:

Վերջին հարյուրամյակում տարածաշրջանի բնիկ ժողովուրդների ուժացման, էթնիկ գտումների, պարբերաբար կրկնվող զանգվածային կոստորածների պրակտիկաներում «հաջողություններ գրանցած» Աղրբեջանի ղեկավարությունը տարածաշրջանի պատմության կեղծման, հայոց մշակութային ժառանգության ոչնչացման կամ «ալբանականացման» քաղաքականությունն այս օրերին դարձրել է ազգային նպատակ: Իշխամ Ալիկի մասնակցությամբ Շուշին ամբողջ թյուրքական աշխարհի մշակութային մայրաքաղաք հոչակելու հիմնազորի առաջարկի քննարկումները, Արցախի հայկական եկեղեցիները ոչնչացնելու մասին Աղրբեջանի ճարտարապետների ասոցիացիայի նախագահի հայտարարությունը, Դաղիկանքում ուղի Խափիկ Դանաքարիին սպասավոր նշանակելու և թատերականացված «ծիսական» արարողությունների ցուցադրությունը, Արցախում 300 «աղվանական» եկեղեցիների մասին լրատվածիցոցներով սարդիչ հայտարարությունն այդ քաղաքականության կենսագործման ակնհայտ վկայություններն են: Հայկական մշակութային ժառանգության ոչնչացման, օտարման քաղաքականությունը միջազգային հանրությանը ներկայացվում է, որպես աղվանական ժողովրդի կողնական իրավունքի վերականգնման քայլ այդ նպատակի համար օգտագործելով Աղրբեջանում քաղաքական պատանդի կարգավիճակով գոյատևող ուղի ժողովրդի ներկայացուցիչներին: Ներկայումս ամեն գնով փորձ է արվում կյանքի կոչել նորահնար «ուղիական» եկեղեցու նախագիծը: Այն դարձել է հայամերժ ազգային նպատակի, պատմության կեղծման կարևոր գործիք: Աղրբեջանական իշխանություններն առիթը բաց չեն թողնում հայտարարելու, որ իրեն «Աղվանից» եկեղեցու իրավահաջորդ «ուղիական» եկեղեցին իրավունք ունի տնօրինելու Արցախում, պատմական Ռւտիքում, անգամ ներկայիս թուրքիայի տարածքում գտնվող և աղրբեջանական աճպարար պատմաբանների կողմից աղվանական հոչակված եկեղեցիները:

Գիտական առումով որևէ քննադասության չղիմացող և քաղաքական առումով բարոյականության հետ նվազագույն աղերս չունեցող նման գործելակերպի ողջ զազրելիությունն ավելի հստակ է դառնում, երբ հետադարձ հայցը ենք նետում աղվանից եկեղեցու պատմությանը և ուղի ժողովրդի անցած պատմական ուղղուն:

Պատմական փաստերը վկայում են, որ Աղվանից եկեղեցին պատմության ողջ ընթացքում սերտորեն կապված է եղել Հայոց եկեղեցուն, առաքելական քարոզության շրջանից հետո վերահաստատվել է Գրիգոր Լուսավորչի թոռան՝ Գրիգորիսի կողմից 330–332 թթ. և հետագա պատմության ողջ ընթացքում «ի հոգևոր» մաս է կազմել Հայոց եկեղեցու նվիրապետական համակարգի:

Աղվանից եկեղեցու առաջնորդները ձեռնադրվել են Հայոց եկեղեցու կաթողիկոսների կողմից, կամ, երբեմն՝ նրանց համաձայնությամբ:

Զարգացած միջնադարում Աղվանից եկեղեցին ամբողջապես հայկականանում է, երբ XV դ. սկզբից Գանձասար է փոխադրվում կաթողիկոսական աթոռը, «Աղվանից կաթողիկոս» կապակցությունը մնում է որպես անցյալից ավանդված պատվո անուն:

Աղբեկջանի հսկողության տակ անցած տարածքներում հայկական մշակութային ժառանգության օբյեկտների ոչնչացման և վանդալիզմի դեպքերը կոծելու համար Աղբեկջանի առաջին դեմքի մակարդակով հայտարարություններ են տարածվում, որ հայերն իրեւ թե ոչնչացրել են Արցախի տարածքում գտնվող 67 մզկիթներից 64-ը: Այս հայտարարությունն ակնհայտ սուստ է և քաղաքական ենթատեքստ ունի: Բավական է նշել, որ Աղբեկջանի կառավարության 1988 թ. հաստատված և պետական պահպանության տակ առնված պատմության և մշակույթի հուշարձանների ցանկի համաձայն Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի տարածքում և հարեւան շրջաններում արձանագրված է 27 մզկիթ: Այս ցանկում արձանագրված է, որ Լեռնային Ղարաբաղում իրեւ թե 282 հուշարձան կա: Այսօր Լեռնային Ղարաբաղի սահմաններում հաշվառված և գրանցված շուրջ 3900 հուշարձան կա, այդ թվում՝ 241 վանք ու եկեղեցի: Դաշտային հետազոտական աշխատանքների շնորհիվ հիմնովին թարմացվել է նաև Քարվաճառի ու Քաշաթաղի հուշարձանների ցանկը: Վկայագրվել և գրանցվել է շուրջ 750 հուշարձան, այդ թվում՝ 53 վանք ու եկեղեցի: Այս տվյալներն ինքնին ցույց են տալիս, որ փաստերի կեղծումը Աղբեկջանի պետական քաղաքականության կարևոր մասն է կազմել տասնյակ տարիներ:

Աղցախի դեմ սանձազերծված ուազմական գործողություններից հետո այս հուշարձանների զգալի մասն Աղբեկջանի վերահսկողության տակ են անցել և վաղ թե ուշ նախիջևանի տարածքի հայկական մշակութային ժառանգության ճակատագրին են արժանանալու՝ ավերվելու են, կամ, լավագույն դեպքում, անվանափոխվելու և «աղվանականացվելու են»:

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան գտնում է, որ Աղբեկջանի վերահսկողության տակ անցած տարածքներում հայկական մշակութային ժառանգության պահպանությունը և անխաթարության ապահովումը տարածաշրջանում կայուն խաղաղություն հաստատելու, հումանիտար ճգնա-

ժամը հաղթահարելու առանցքային պայմաններից մեկն է և անհետաձգելի լուծում է պահանջում:

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան առանձնապես գնահատում է Դադիվանքի պահպանության ոռուսական խաղաղապահների հանձնառությունը և գտնում, որ այդ հանձնառության շրջանակները պետք է ընդլայնվեն՝ պատմամշակութային հուշարձաններում վանդալիզմի և ավերումների դեպքերը հնարավորինս բացառելու համար:

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան բարձր է գնահատում Եվրոպական խորհրդարանի այս տարվա հունվարի 20-ին ընդունված «Ընդհանուր արտաքին և անվտանգային քաղաքականություն» (CFSP) գեկույցը՝ բանաձևում Հեռնային Ղարաբաղում հայ բնակչության անվտանգության ապահովման, հայկական մշակութային ժառանգության պահպանման, իրենց նախկին բնակության վայրեր տեղահանված անձանց և փախստականների անվտանգ վերադարձի, ռազմագերիների և զոհվածների մարմինների՝ առանց հապաղելու փոխանակման անհրաժեշտության վերաբերյալ դրույթների ամրագրումը և հույս հայտնում, որ կմշակվեն գործուն մեխանիզմներ դրանց լուծման համար:

Առանձնակի կարևորելով ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 2017 թ. մարտի 24-ի նստաշրջանում ընդունված թիվ 2347 բանաձևում ամրագրված դրույթներն առ այն, որ «մշակութային ժառանգության ապօրինի ոչնչացումը, թալանը և մշակութային արժեքների մաքսանենգությունը զինված բախումների, այդ թվում՝ ահաբեկչական խմբավորումների կողմից, և, այս համատեքսում, պատմական արմատների ու մշակութային բազմազանության ժիաման փորձերը կարող են թեժացնել և սրել հակամարտությունները, խոչընդոտել հետհակամարտական ազգային հաշտեցումը, այս կերպ խաթարելով տուժած երկրների անվտանգությունը, կայունությունը, սոցիալական, տնտեսական և մշակութային զարգացումը», ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան դիմում է Մինսկի խմբի համանախագահող երկրների ղեկավարներին՝ խնդրելով օժանդակել Միավորված ազգերի կրթական, գիտական և մշակութային կազմակերպությանը (UNESCO)՝ ռազմական գործողությունների տարածքում մշակութային ժառանգության վիճակը գնահատելու մշտադիտարկում իրականացնելու համար: Միաժամանակ կոչ ենք անում մշակութային արժեքների պաշտպանության հարցերով գրադվող միջազգային կառույցներին՝ Թանգարանների միջազգային խորհրդին (ICOM), Հուշարձանների և տեսարժան վայրերի պահպանման միջազգային խորհրդին (ICOMOS), Հակամարտության գոտիներում ժառանգության պաշտպանության հարցերով միջազգային այլանսին գործուն քայլերով օժանդակել և իրախոսել UNESCO-ին այս նախաձեռնությունը կյանքի կոչելու համար:

ՀՀ ԳԱԱ. ՏԵՂԵԿԱՑՎԱԿԱՆ-ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԳԱԱ ՆԱԽԱԳԱՅ ՌԱԴԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
«ԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿՈՐՈՒՄՆ ՎԵԼԱՑՆԵԼՆ
ԱՎԵԼԻ ԿՍՊԱՍՏԵՐ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ,
ՔԱՆ ՆՈՐ ՕՐԵՆՔ ՄՇԱԿԵԼԸ»

Սույն թվականի փետրվարի 15-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում տեղի ունեցավ «Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրինագծի վերաբերյալ քննարկում ՀՀ ԳԱԱ նախագահության անդամների և ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի (ԿԳՄՍ) նախարար Վահրամ Դումանյանի, գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայոցյանի և նախարարի խորհրդական Սամվել Կարաբեկյանի մասնակցությամբ։

ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանն իր ելույթում նշեց. «Գիտության մասին այլպիսի օրենքի անհրաժեշտություն այսօր չկա, որովհետեւ կա արդեն գործող երկու օրենք՝ «Գիտական և գիտատեխնիկական քաղաքականության մասին» ՀՀ օրենք, մյուսը՝ «Գիտությունների ազգային ակադեմիայի մասին» ՀՀ օրենք։ Եթե այդ երկու օրենքներում կան խնդիրներ, որոնք չեն նպաստում գիտության զարգացմանը, կարելի է առաջին հերթին այդ օրենքներում փոփոխություններ մտցնել»։

Նա նշեց, որ եթե հնարավոր լիներ գիտության ֆինանսավորումն ավելացնել, դա ավելի կնպաստեր գիտության զարգացմանը, քան օրենք մշակելը։ «1991 թ. մինչև հիմա Հայաստանում գիտության ֆինանսավորում չի եղել։ Չնչին ֆինանսական միջոցներով հնարավոր է եղել պահպանել գիտական կազմակերպությունների գոյությունը», – ասաց Ռադիկ Մարտիրոսյանը։

Չնայած սուղ ֆինանսավորմանը՝ ՀՀ ԳԱԱ 12 կազմակերպություն ընդգրկված է գիտական ամսագրերի, գրքերի և գիտաժողովների աշխատանքներին հղում կատարող տվյալների ամենամեծ շտեմարան *Scopus*-ի լատ գիտական նվաճումների դասակարգած աշխարհի 8800 գիտական կազմակերպությունների ցանկում։

Ռադիկ Մարտիրոսյանը նշեց, որ, ըստ օրինագծի հիմնավորման, ակադեմիական ինստիտուտներն ինքնուրույն չեն, ազատ չեն իրենց կառավարման համակարգում։ «ԳԱԱ ինստիտուտների կողեկտիվներում անցկացվեցին քննարկումներ և փակ գաղտնի քվեարկություն։ Արդյունքում մասնակիցների 90 տոկոսը դեմ եղան ակադեմիայի համակարգից դուրս գալուն։ Վաստ է, որ այդ օրենքը գրելուց ակադեմիայի համակարգից մարդ չի մասնակցել», – ասաց Ռադիկ Մարտիրոսյանը։

«Գիտությունը զարգանում է ի շնորհիվ գիտական արդյունքների քննարկման, ծրագրերի կազմման, ընդհանուր գաղափարախոսության զարգացման ձևով։ Ակադեմիայի բրենդը նրանում է, որ նա նպաստում է գի-

տության գարգացմանը իր կառուցվածքով, իր ինստիտուտներով։ ԳԱԱ բաժանմունքները ցանց են, որոնց շրջանակում քննարկվում են գիտական հարցերը», — ասաց ՀՀ ԳԱԱ նախագահը։ Նա նշեց, որ օրինագծում բացակայում է «ակադեմիա» հասկացությունը։ Նա, մասնավորապես, առաջարկեց օրինագծի 26-րդ հոդվածը ձևակերպել հետեւյալ կերպ։ «ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան պետության կողմից հիմնադրած ոչ առևտրային գիտական կազմակերպություն է, որն ունի պետության կողմից սահմանված կարգով խորհրդատվություն տրամադրելու և հանրապետության հիմնարար հետազոտությունները համակարգելու իրավասություն»։

Ի պատասխան ԿԳՄՍ նախարար Վահրամ Դումանյանն ասաց. «Այս տեղ սկզբունքային չեշտ կա։ Սա սկզբունքային միտք էր։ Սա փլում է օրինագծի ամբողջ տրամաբանությունը»։

ԳԱԱ-ի մյուս առաջարկն է 26-րդ հոդվածում ավելացնել 3-րդ կետ, որ ակադեմիան կարող է ստեղծել գիտական համագործակցային ցանցեր գիտատեխնիկական կամ նորարարական խնդիրների համատեղ լուծմանն աջակցելու նպատակով՝ իրականացնելով այդ կազմակերպությունների գիտամեթոդական ղեկավարում։ «Եթե կազմակերպության ֆինանսավական, վարչական կառավարումն իրականացվելու է լիազոր մարմնի՝ նախարարության կողմից, ապա գիտամեթոդականը, գիտական հիմնարար ծրագրերը, նրանց արդյունքների, հաշվետվությունների գիտական քննարկումներն իրականացվեն ակադեմիական համակարգում»։ ասաց Ռադիկ Մարտիրոսյանը։

Մյուս առաջարկն է հրաժարվել մեկ գիտական աստիճանի անցնելու դրույթից, պահպանել ասպիրանտուրայի ինստիտուտը գիտական կազմակերպություններում, որպես հիմնական օղակ, երիտասարդությանը գիտության մեջ ներգրավելու համար։

Մյուսը Բարձրագույն որակավորման հանձնաժողովի՝ ԲՈՀ-ի հարցն էր։ «Մենք համաձայն չենք, որ ԲՈՀ-ն է վերացվում։ Մեր գիտության համար մենք առաջնահերթ պետք է ունենանք պետական լիազորված կառույց, որը վերահսկի այդ գործընթացը»։ ասաց Ռադիկ Մարտիրոսյանը։

ԿԳՄՍ նախարար Վահրամ Դումանյանն ասաց. «Պետք է իրատես լինենք և հասկանանք, որ մենք այսօր գտնվում ենք տնտեսական և հասարակական բոլորովին այլ իրավիճակում։ Խորհրդային Միությունն իր անսահման գինանսական ռեսուրսներով վաղուց այլևս չկա։

Ես գտնում եմ, որ բարձրագույն կրթությունն ու գիտությունը միմյանցից անջատելը նպատակահարմար չէ։ Այս երկու համակարգերը պետք է դիտարկել որպես մեկ ամբողջություն, և պետք է կարգավորումը տալ միասնական օրենքով։ Ես համամիտ եմ, որ օրենքի նախագծում պետք է ամրագրել ֆինանսավորման կոնկրետ ծավալ՝ հաշվի առնելով գիտության շահը և պետության հնարավորությունները»։

Ելույթներով ու հարցադրումներով հանդես եկան ՀՀ ԳԱԱ փոխնախագահ, ակադեմիկոս Յուրի Շուքուրյանը, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսներ Եղուարդ Ղազարյանը, Լենսեր Աղալովյանը, Աշոտ Սալյանը, Յուրի Սուվարյանը, Գևորգ Պողոսյանը, Լևոն Թավաղյանը, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամներ Ռու-

բեն Հարությունյանը, Արաեն Հախումյանը, ՀՀ ԳԱԱ սիյուռքի բաժնի պետ, Փ. մ. գոկտոր, պրոֆեսոր Վանյա Բարսեղյանը:

ԿԳՄՍ նախարար Վահրամ Դումանյանը նշեց, որ ներկայացված որոշ առաջարկներ, մասնավորապես, ակադեմիային գիտական կազմակերպությունների գիտամեթոդական ղեկավարում իրականացնելու գործառույթ վերապահելու և այդպիսով հիմնարար հետազոտությունների համակարգում իրականացնելու, ինչպես նաև օրինագծում ֆինանսավորման հստակ ցուցանիշներ (առաջարկ է եղել ՀՆԱ-ի 4 տոկոսը) ամրագրելու առաջարկները կքննարկվեն «Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենքի նախագծի երկրորդ ընթերցման ժամանակ։

ՀՀ ԳԱԱ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ-ՎԵՐԱԽԾԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՔԱՆԱՐԿԱՎԱՆ ԱՌԱՑՔՈՒՄ ՄՈՍԿՈՎՅԱՆ 100-ԱՄՅԱ ՊԱՅՄԱՆԱԳԻՐՆ ԷՐ

Մարտի 18-ին ՀՀ ԳԱԱ նախագահության նիստերի դահլիճում տեղի ունեցավ ԳԱԱ պատմության ինստիտուտի և Խաչատրու Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի (ՀՊՄՀ) «Հայաստանը 1920–1991 թթ.-ին» գիտական լաբորատորիայի կազմակերպած կող սեղանը՝ նվիրված 1921 թ. մարտի 16-ին Մոսկվայում Ռուսաստանի Սոցիալական Ֆեդերատիվ Խորհրդային Հանրապետության և Թուրքիայի Ազգային մեծ ժողովի ներկայացուցիչների միջև սոորագրված պայմանագրի 100-ամյակին:

Ինչպես գիտենք, 1920 թ. դեկտեմբերի 2-ին Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի միջև կնքված հաշտության պայմանագրով ավարտվեց Հայ-Թուրքական պատերազմը: Ըստ Ալեքսանդրապոլի պայմանագրի, Թուրքիայի պարտադրանքով Հայաստանը հրաժարվում էր Սևրի դաշնագրից: Պայմանագրով Թուրքիային էին անցնում Կարսի մարզը և Սուրմալուի գավառը: Սուրմալուի գավառը երբեք չէր եղել Թուրքիայի կազմում: Նախիջևանի մարզը նույնպես անցավ Թուրքիայի հովանու տակ և շուտով հանձնվեց Ադրբեյջանին: Հայ-Թուրքական պետական սահմանը դարձան Ախուրյան և Արաքս գետերը:

1921 թ. մարտի 16-ին Մոսկվայում կնքված պայմանագրի համաձայն Թուրքիայի հյուսիսարևելյան (ՀՍՀ-ի հետ) սահմանն անցնում էր Ախուրյան ու Արաքս գետերի հունով՝ թուրքական կողմում թողնելով Կարսի մարզը և Սուրմալուի գավառը: Նախիջևանի մարզը դառնում էր ինքնակար տարածք՝ Ադրբեյջանի խնամակալության ներքո, որը չէր գիծվելու երրորդ պետության, ինչը Հայաստանի դեմ էր ուղղված: Մոսկվայի պայմանագրով Խորհրդային Հայաստանի տարածքը կազմում էր 29 հազար քառակուսի կիլոմետր, որը նախատեսում էր ավելի մեծ տարածք, քան Ալեքսանդրապոլի պայմանագրիր:

Կող սեղանի կազմակերպիչները վերոհիշյալ խնդրի շուրջ քննարկումներին մասնակցելու էին հրավիրել Հայ անվանի գիտնականների, ակադեմիկոսների, դոկտոր-պրոֆեսորների, ՌԴ-ից հրավիրված բանախոսների՝ «Միջազգային վերլուծություն» ամսագրի գլխավոր խմբագիր Սերգեյ Մարկեղոնովին, պատմական գիտությունների դոկտոր Ալեքսանդր Կոիլովին, հետխորհրդային հետազոտությունների փորձագետ Վաղիմ Մովսանովին, Ուրալի Դաշնային համալսարանի «Պատմության ֆակուլտետ» դեպարտամենտի տնօրեն Ալեքսանդր Պալկինին, Ուրալի Դաշնային համալսարանի Ռուսաստանի պատմության ամբիոնի վարիչ Սերգեյ Սոկոլովին:

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն, ակադեմիկոս Աշոտ Մելքոնյանը ողջունեց Մոսկվայի պայմանագրի 100-ամյակին նվիրված կող սեղանի մասնակիցներին և ասաց, որ այս օրերին գիտական ժողովներ են

կազմակերպվում, անց են կացվում գիտական քննարկումներ, այդ թեմայով ստեղծվել է գիտական լուրջ գրականություն:

«Գիտնականները տարբեր մոտեցումներ են հանդես բերել քննարկող թեմայի շուրջ, որը բավականին զգայուն թեմա է հայերի համար, և այսօր կուգեինք լսել մեր ոռու գործընկերների՝ պատմաբանների և քաղաքագետների կարծիքը», – ասաց պատմաբանը: Նա ընդհանուր գծերով ներկայացրեց Մոսկվայի պայմանագրի վավերացման նախապատմությունը, թե ինչպես Աղրբեջանի խորհրդայնացումից հետո Ռուսաստանի բոլեկիլյան կուսակցությունը քեմալական Թուրքիայի հետ բարեկամացավ, և վերջինս ստացավ Խորհրդային Ռուսաստանի աջակցությունը՝ հայկական տարածքների կորուստների հաշվին: Ռուսաստանի և Թուրքիայի միջև բարեկամությունը հաստատվեց 1921 թվականի մարտի 21-ի մոսկովյան պայմանագրով:

Համանախագահողի կարծիքով ԽՍՀՄ-ի փլուզումից հետո Ռուսաստանը կարող էր նոր մոտեցում ցուցաբերել այս պայմանագրի շուրջ: Ցավոք, այսօր էլ հայտնի է ՌԴ պաշտոնական շրջանակների մոտեցումները այս պայմանագրին, դա նաև հասկանալի դարձավ, եթե Ռուսաստանի դեսպանը Անկարայում 100-ամյա պայմանագրիը համարեց «բարեկամական»:

Պատմաբանն անդրադարձավ երկու պետությունների շահերին, որոնք հանդեցրին նման պայմանագրի ստեղծման հանգուցալուծմանը, ապա հարցուզեց ոռու գործընկերներին՝ արդյո՞ք 2021 թվականի նոյեմբերի 9-ի եռակողմ համաձայնությունը կապ ուներ մոսկովյան պայմանագրի հետ:

ՀՊՄՀ ռեկտոր, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ռուբեն Միրզախանյանը ցավով նշեց, որ այս օրերին մոսկովյան պայմանագրի շուրջ բազմաթիվ քննարկումներ են տեղի ունենում, որոնք չեն պարունակում մասնագիտական մոտեցումներ: Այդ տեսանկյունից նա նշեց, որ առաջատար մասնագետների մասնակցությամբ ներկա կլոր սեղանի շուրջ քննարկումը բացառիկ իրադարձություն է:

Խոսելով մոսկովյան պայմանագրի մասին՝ Ի. Միրզախանյանը հիշեցրեց Զիշերինի, Մոլոտովի մոտեցումները, որոնցով հրապարակայնորեն բարձրաձայնվել է պայմանագրի անարդարացի լինելու մասին:

«Այսօր հավաքվել ենք միասին վերլուծելու պատմական այդ փաստը, և մենք ևս պարտավոր ենք բարձրաձայնել պատմական անարդարության մասին, ասել ողջ ճշմարտությունը», – ընդգծեց ռեկտորը՝ շեշտելով, որ նման մակարդակով արված հայտարարությունները չեն կարող պատահականություն լինել: Միմյանց դեմ 13 պատերազմ վարած երկրների Ռուսաստանի և Թուրքիայի մասին խոսելիս, պետք է հիմնվել պատմական ճշմարտության վրա:

Համանախագահողը մի շարք հարցադրումներ արեց, միաժամանակ ընդգծեց, որ կա մի մեծ պատմական ճշմարտություն՝ յուրաքանչյուր պետություն ներկայացնում է իր շահերն ու հետաքրքրությունները, և որ պետք է ազգային-պետական շահերը համընկնեն: Կարևորելով գործընկերների վերլուծությունները՝ նա ոռու պատմաբաններին ու քաղաքագետներին հրավիրեց անկեղծ երկխոսության:

Քննարկվող խնդրի շուրջ իր տեսակետներն արտահայտեց Մոսկվայի «Միջազգային վերլուծություն» ամսագրի գլխավոր խմբագիր Սերգեյ Մար-

կեղոնովը: Նա թեման համարեց արդիական՝ ասելով, որ պետք է գտնել անցյալի այնպիսի փաստեր, որոնց միջոցով կարելի է հասնել խնդրի մերօրյա լուծմանը:

Նա կարծում է, որ պատմական անցյալում պետք չէ փնտրել պետությունների վարքագերի մողելներ և փորձել ներկան ընկալել դրանց լույսի ներքո. «Զի կարելի դատել 1921 թվականի մասին 2021 թվականի դիրքերից: Դաշնակիցները պետք է կարողանան անկեղծ խոսել միմյանց հետ, և բնական է, որ դաշնակիցների միջև ևս պետք է լինեն ճշգրտման ենթակա հարցեր ու հակասություններ: Հատկանշական է, որ Հայաստանի և Ռուսաստանի գիտական հանրության ներկայացուցիչների կողմից Մոսկվայի պայմանագիրն ընկալվում է միանգամայն տարբեր կերպ: Եվ աս բնական է, քանի որ համեմատելի չէ այդ պատմական իրադարձության ազդեցությունը Հայաստանի և Ռուսաստանի պատմական հիշողության վրա»:

«Մոսկվայի և Կարսի պայմանագրերի մասին խոսելիս պետք է հաշվի առնել, որ Անդրկովկասում գոյություն ունեին որոշակի ազգային պետությունների նախագծեր, որոնք տապալվեցին, իսկ այդ տապալմանը հաջորդեց խորհրդայնացումը: Պետք է հաշվի առնել, որ Մոսկվայի պայմանագրին նախորդել է Հայ-թուրքական պատերազմը, որի ընթացքում թուրքերին հաջողվել էր Հայտնվել Ալեքսանդրապոլում, և միայն այդ պայմանագրից հետո թուրքական զորքերը հետ քաշվեցին քաղաքից», — ասաց Մարկեղոնովը՝ հավելելով, որ պատմական իրադարձության մասին խոսելիս պետք է հաշվի առնել ստեղծված իրավիճակի ընդհանուր դիալեկտիկան, որպեսզի չհանգենք պատմության հատվածային ընկալմանը:

ԳԱԱ ակադեմիկոս Ռուբեն Սաֆրաստյանն ասաց, որ պայմանագիրը մինչ օրս գիտական վեճերի տեղիք է տալիս և հարցին անդրադարձակ թուրքական դիվանագիտության մոտեցումների տեսանկյունից: «Հայկական հարցը չուժից հօգուտ Հայաստանի և Հայերի, որովհետև այստեղ վճռորոշ եղավ Ստալինի դերը, այնինչ Ռուսաստանը կարող էր ավելի կոշտ լինել թուրքիայի հանդեպ», — հավելեց Ռ. Սաֆրաստյանը:

Պատմական գիտությունների գոկսոր, պրոֆեսոր Կարեն Խաչառյանն ընդգեց, որ Մոսկվայի պայմանագրին անհամեմատելի է դրանից 2,5 ամիս առաջ կնքված Ալեքսանդրապոլի պայմանագրի հետ, քանզի Մոսկվայի պայմանագրով երաշխավորվում էր Հայաստանի ինքնուրույնությունը, իսկ Ալեքսանդրապոլի պայմանագրով Հայաստանը թուրքիայի վասալություն էր դառնում ճանապարհների վերահսկողությունն ամբողջությամբ հայտնվում էր թուրքական կողմի հովանու ներքո:

Մոսկվային հաջորդող Կարսի պայմանագրով բացառվում էր Աղբեջանին հանձնված Նախիջևանի նկատմամբ երրորդ երկրի հավակնությունները, ասել է թե բացառվեց թուրքիայի ազդեցությունը նախիջևանի, հետևաբար, նաև Հարավային Կովկասի վրա, և այն դուրս մղվեց տարածաշրջանից՝ դիրքերը զիջելով Ռուսաստանին: Ցավոք, այսօր, Աղբեջանի թողտվությամբ, թուրքիան որոշակի ռազմական և տնտեսական ներկայություն ունի նախիջևանում, որը պետք է անհանգստացնի Ռուսաստանին:

«Ժամանակի համատեքստում պետք է հասկանալ կատարված իրադարձությունների ընդհանուր տրամաբանությունը», — ասաց պատմական գի-

տությունների դոկտոր Ալեքսանդր Կոփլովը, հորդորեց 100-ամյա պատմական իրողությանը սթափի հայացքով նայել և գնահատականներ տալիս նկատի ունենալ ժամանակի հասարակական և քաղաքական իրողությունները:

Հետխորհրդային հետազոտությունների փորձագետ Վաղիմ Մուխանովն ու իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր Վոլոդյա Հովհաննիսյանը խոսեցին պայմանագրի իրավական կողմերի մասին: Նրանք շեշտեցին, որ կան հնարավորություններ՝ միջազգայնորեն լուծելու պայմանագրի չեղարկման հարցը:


